ELIB.AM

Էլեկտրոնային Գրադարան

WILLIAM SAROYAN

SELECTED WORKS

IN FOUR BOOKS
BOOK TWO

PLAYS

STORIES

YEREVAN "SOVETAKAN GROGH" 1987

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ
ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՊԻԵՍՆԵՐ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԵՐԵՎԱՆ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» 1987

ԳՄԴ 84.7 ԱՄՆ
Ս 281

Կազմեց և խմբագրեց՝
ՆԱՏԱԼՅԱ ԳՈՆՉԱՐԸ

Սարոյան Վ.
Ս 281 Ընտիր երկեր։ 4 հատորով/Վիլյամ Սարոյան.— Եր.։ Սովետ. գրող, 1987.
Հ. 2։ Պիեսներ/[Կազմ. և խմբ.՝ Ն. Գոնչար, թարգմ.՝ Խ. Դաշտենց, Զ. Բոյաջյան և ուրիշ.].— 1987.— 400 էջ.
Հատորում տեղ են գտել Վիլյամ Սարոյանի ընտիր պիեսները, որոնցից երկուսը՝ «Հերստոնած մի գնա» և «Տարեկանի արտում», սովետական ընթերցողին են ներկայացվում առաջին անգամ։
Ներկայացված են նաև մի շարք պատմվածքներ «Իմ անուշ փոքրիկ» (1944 թ.) ժողովածուից և «Թրեյսիի վագրը» վիպակը։

Ս $\frac{4703000000\ (159)}{705\ (01)\ 87}$ 87 «Տ» ԳՄԴ 84.7 ԱՄՆ

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1987



ՊԻԵՄՆԵՐ

Նրան,
Ով սրտով անեղծ է,
Ով կյանքում բանաստեղծ է,
Բարձրին ու ցածրին, ում կյանքը երգ է,—
Եվ ծերին մանուկ, և մանկանն անվիշտ,
Ով սրտով լեռներում է միշտ։

Ռոբերտ Բըրնս

ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է

Իմ սիրտը լեռներում է, այստեղ ծանր եմ շնչում,
Իմ սիրտը լեռներում է, ուր քարայծն է թռչում,
Վայրի վիթ է որսում և հալածում այծյամ,
Իմ սիրտը լեռներում է, ուր էլ որ ես գնամ։

Մնաս բարով, Սկովդիա. մնաս բարով, Հյուսիս,
Դու վեհ ծննդավայր խիզախ ժողովրդիս,
Ուր էլ թափառեմ ես ու դեգերեմ տրտում,
Դուք կմնաք հավետ իմ կարոտած սրտում։

Մնաք բարով լեռներ՝ ձյունոտ ու լուսապանջ,
Մնաք բարով կիրճեր և հովիտներ կանաչ,
Մնաք բարով մթին թավ անտառներ քարվեծ,
Մնաք բարով գետեր և թնդացող ջրվեժ։

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Ջոնի
Բեն Ալեքսանդր— *բանաստեղծ, Ջոնիի Հայրը*
Ջոնիի տատը
Ջասպեր Մեք-Գրեգոր— *Մի մարդ, որի սիրտը լեռներում է*
Պարոն Կոսակ— *նպարավաճառը*
Խաբեր— *նրա սիրունիկ դուստրը*
Ռուֆ Էպլի— *ատաղձագործը*
Ֆիլիպ Կարմայքլ— *մի երիտասարդ՝ ծերանոցից*
Հենրի— *առավոտյան թերթերն առաքողը*
Պարոն Վիլի— *փոստատարը*
Պարոն Քանինգըմ— *տները վարձու տվող-գործակալ*
Երիտասարդ ամուսինը, կինը և նրանց երեխան
Լավ բարեկամներ և հարևաններ
Մի շուն

Վայրը՝

Մի տուն Կալիֆոռնիայի Ֆրեզնո քաղաքի Սան Բենիտո փողոցի վրա։ Պարոն Կոսակի նպարեղենի խանութը։

Ժամանակը՝

1934 թվականի օգոստոս և նոյեմբեր ամիսները։

Մի հին սպիտակ, խարխուլ փայտաշեն տուն Կալիֆոռնիայի Ֆրեզնո քաղաքի Սան Բենիտո փողոցի վրա: Առաջը գավիթ ունի: Շրջապատում ուրիշ տներ չկան: Դժգույն ամայություն և կարմիր երկինք— ահա ամբողջը: 1914 թվականի օգոստոսյան օրերից մեկն է, իրիկնադեմ: Արևը թեքվում է մուտքին:

Ինենամյա Ջոնին, որ արտաքուստ դժվար է ասել, թե քանի տարեկան է, շարժուն և ճարպիկ, նստել է գավիթի աստիճաններին, աշխարհից վերացած, սուզված բարձր ու նվիրական երազների մեջ: Հեռվում մի գնացք է սուլում տխրագին կանչերով: Լարված ուշադրությամբ լսում է Ջոնին, գլուխը նավի նման պես մի կողմի վրա, ճգնելով ճանկանալ այդ կանչերի իմաստը և միաժամանակ ըմբռնել ամեն ինչ իր շրջապատում: Նրան այդ բանը չի հաջողվում, և երբ կանչերը դադարում են, նա հանդարտվում է: Տասնչորսամյա մի տղա, հեծանիվ հստակ, պաղպաղակ ուտելով և շալակին լրագրերի կապոցներ՝ լուռ անցնում է հանապարհի եզրով, մոռացած թե իր ուսերի ծանրությունը, թե հեծանիվը, որին նստած է, ամբողջապես կլանված պաղպաղակ վայելելու մեծագույն հաճույքով ու երանությամբ: Ջոնին ցատկում է տեղից և ձեռքով է անում տղային, իր մանկական հոգու ամբողջ բարությամբ ժպտում է նրան, սակայն անուշադրության է մատնվում: Նորից նստում է իր տեղը և ականջ դնում զվարթաձայն, բայց և բարկացած մի թռչնակի, որը ուժգին, սակայն անիմաստ զեղգեղանքից հետո թռչում հեռանում է:

Տանից լսվում է Ջոնիի հոր մթագին ձայնը՝ իր հորինած բանաստեղծությունը արտասանելիս:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ջանձրալի օրը լռիկ սահում է վշտոտ, վիրավոր սրտի միջով, և...* (Դառնագին դադար): *Եվ...* (Արագորեն): *Ջանձրալի օրը լռիկ սահում է վշտոտ, վիրավոր սրտի միջով և...* (Դադար): *Ջեղավ։* (Մոնչոց է հանում և սկսում նորից): *Ողբագին, դողդոջ օրը գայթում է լքված, մենավոր խեղճ սրտի միջով։*

Ներսում բարկությամբ դեն է շպրտվում մի ինչ-որ սեղան կամ աթոռ Տնֆոց, լռություն:

Ջոնին լսում է: Նա վեր է կենում և փորձում է գլխի վրա կանգնել, ձախողում է.. նորից է փորձում, ձախողում է, նորից է փորձում և հաջողվում է: Գլխի

վրա կանգնած միջոցին նա լսում է աշխարհի ամենահմայիչ և ամենաճիարտաճ նվագը՝ շեփորով մենանվագ. «Իմ սիրտը լեռներում է» երգի մեղեդին է:

Շեփորահարը, մի շատ ծեր մարդ, մենանվագն ավարտում է տան առաջ: Տղան ոտքելով վազում է դեպի ծերունին, ապշած, հիացած և շփոթահար:

ՋՈՆԻ— *Հրաշալի է։ Էլի եմ ուզում լսել։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Երիտասարդ, կարո՞ղ ես մի բաժակ ջուր բերել մի ծերունկի, որի սիրտը այստեղ չէ, այլ լեռներում։*

ՋՈՆԻ— *Ո՞ր լեռներում։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Շոտլանդական լեռներում։ Չէ՞ որ ես ջուր ուզեցի։*

ՋՈՆԻ— *Ի՞նչ է անում ձեր սիրտը շոտլանդական լեռներում։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Իմ սիրտը թախծում է այնտեղ։ Կարո՞ղ ես մի բաժակ պաղ ջուր բերել։*

ՋՈՆԻ— *Ձեր մա՞յրը որտեղ է։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Մի բան ճնարելով մանկան համար): *Իմ մայրը Տալսայում է, Օկլահոմա նահանգում, բայց նրա սիրտը այնտեղ չէ։*

ՋՈՆԻ— *Որտե՞ղ է նրա սիրտը։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Բարձրաձայն): *Շոտլանդական լեռներում։* (Մեղմ)։ *Ես սաստիկ ծարավ եմ, երիտասարդ։*

ՋՈՆԻ— *Այդ ինչպե՞ս է, որ ձեր ընտանիքի անդամները իրենց սրտերը միշտ լեռներում են թողնում։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Շեֆսպիրյան ոճով): *Մենք այդպես ենք։ Այսօր այստեղ ենք, վաղը՝ չկանք։*

ՋՈՆԻ— (Մեկուսի): *Այսօր այստեղ ենք, վաղը չկա՞նք։* (Մեք-Գրեգորին): *Այդ ո՞նց պետք է հասկանալ։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Փիլիսոփայորեն): *Այս րոպեին ողջ ենք, հաջորդին՝ մեռած։*

ՋՈՆԻ— *Իսկ ձեր մոր մայրը որտե՞ղ է։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Մի բան ճնարելով, բայց բարկացած): *Վերմոնտում է, Ուայթ Ռիվր կոչվող մի փոքրիկ քաղաքում, բայց նրա սիրտը այնտեղ չէ։*

ՋՈՆԻ— *Նրա խեղճ թորշոմած սիրտը նույնպե՞ս լեռներում է։*

ՄԵՔ ԳՐԵԳՈՐ— *Հենց այնտեղ է, լեռներում։ Տղաս, ես ծարավից մեռնում եմ։*

Տանից դուրս է գալիս Ջոնիի հայրը, կատաղած, կարծես վանդակից նոր պրծած լինի, և որդու վրա մռնչում է վագրի նման, որ նոր է արթնացել աճեղ տեսիլներից։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ջոնի, ի՞նչ ես կպել էդ խեղճ ծերունուց։ Մի սափոր ջուր բեր նրան, քանի դեռ չի ընկել մեռել։ Էդպե՞ս եմ ես քեզ կըրթել, սատանան տանի։*

ՋՈՆԻ— *Ճամփորդ մարդ է, ուզում եմ հարցուփորձ անել։ Ինչ է, չի՞ կարելի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ջուր հասցրու ծերունուն, սատանան տանի։ Ի՞նչ ես ցցվել մնացել։ Ջուր տուր նրան, ասում եմ, քանի դեռ չի ընկել մեռել։*

ՋՈՆԻ— *Ինքդ նրան ջուր տուր։ Ոչինչ չես անում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ինչպե՞ս, ոչինչ չեմ անում։ Դու գիտես, Ջոնի, որ ես հենց հիմա էլ մտքումս մի նոր բանաստեղծություն եմ գրում։*

ՋՈՆԻ— *Ի՞նչ իմանամ։ Պարզապես կանգնած ես գավթում՝ թևերդ քըշտած։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Բարկացած)։ *Դու այդ պարտավոր ես իմանալ։* (Գոռալով)։ *Դու իմ որդին ես։* (Զարմանքով)։ *Դու որ չիմանաս, ո՞վ պիտի իմանա։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Զվարթ)։ *Բարի երեկո։ Ձեր որդին ինձ պատմում էր, թե որքան մաքուր ու զով է եղանակը այս կողմերում։*

ՋՈՆԻ— (Շփոթված, բայց հասկանալու փափագով՝ մեկուսի)։ *Սուրբ Մովսես, ես եղանակի մասին բան չասացի։ Որտեղի՞ց է հնարում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Արիստոկրատական մեծաշքությամբ)։ *Բարև ձեզ։ Չէի՞ք կամենա ներս մտնել և մի փոքր հանգստանալ։ Մեզ համար պատիվ կլիներ ձեզ սեղանակից ունենալ մեր ընթրիքին։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Առանց ավելորդ ձևականության)։ *Պարոն, ես քաղցից մեռնում եմ։ Անմիջապես կգամ։* (Ուզում է մտնել, Ջոնին առաջը կտրելով նայում է նրան)։

ՋՈՆԻ— (Երազողի պես)։ *Կարո՞ղ եք նվագել «Կենացս խմիր քո աչքերով» երգը։ Թե իմանաք որքան եմ ուզում այդ երգը լսել շեփորի վրա։ Իմ սիրած երգն է։ Աշխարհում դրանից լավ երգ չկա։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Առանց պատրանքի)։ *Տղաս, երբ դու հասնես իմ տարիքին, կիմանաս, որ երգերը կարևոր չեն, կարևորը հացն է։*

ՋՈՆԻ— (Սրտանց)։ *Մեկ է՝ շատ կուզեի, որ նվագեք այդ երգը։*

(Մեք-Գրեգորը գնում է դեպի գավիթը և սեղմում է Ջոնիի հոր ձեռքը)։

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Բազմանշանակալից)։ *Իմ անունը Ջասպերը Մեք-Գրեգոր է։ Ես դերասան եմ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Բերկրալից)։ *Մեծապես ուրախ եմ ձեզ հետ ծանո-*

թանալուս համար։ (Ինչպես արքան է հրամայում): *Ջոնի, մի սափոր ջուր բեր պարոն Մեք-Գրեգորի համար։*

Ջոնին վազում է տան հետև:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Ծարավից մեռնելով, հոգոց հանելով, բայց, այնուամենայնիվ, ասելով ճշմարտությունը): *Հիանալի տղա է։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Կարծես սովորական մի բան ասի): *Ինձ նման հանճար է։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Հոգնած մռնչալով): *Դուք նրան շատ եք սիրում, չէ՞։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Ուրախացած, որ ապրում է): *Մենք միևնույն մարդն ենք։ Նա իմ շունչն ու հոգին է։ Նկատեցի՞ք ինչ ժիրն է։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Ուրախացած, որ տակավին ողջ է): *Նկատեցի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Հպարտությամբ և բարկությամբ): *Ինքս էլ եմ այդպես, միայն թե ավելի մեծ եմ և նվազ պայծառամիտ։*

Ջոնին վազելով բերում է մի սափոր ջուր և մեկնում է պարոն Մեք-Գրեգորին: Մերունին հետ է գցում ուսերը, բարձրացնում է գլուխը, ռունգերը լայնանում են: Նա խռնչում է, աչքերը լայն բացված են. սափորը մոտեցնելով շուրթերին՝ մի երկար ումպով խմում է ամբողջ ջուրը, իսկ Ջոնին և հայրը ապշած ու հիացած դիտում են այդ տեսարանը: Մերունին խոր շունչ է քաշում, հայում է շուրջը, ապա դեպի երկինք և ապա Սան Բենիտո փողոցի ծայրը, ուր երեկոյան արևը արդեն մայր է մտնում:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Մտախոհ, տրտմագին, ուժասպառ, ցածրաձայն): *Երբվի որ իմ տունը մի հինգ հազար մղոն հեռու լինի էստեղից։ Բան կա՞ ուտելու, գոնե մի կտոր հաց ու պանիր, որ իմ մարմինն ու շունչը իրար կպած մնան։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Իսկը Նապոլեոնը): *Ջոնի, վազիր նպարավաճառի մոտ և մի ֆրանսիական հաց ու մի ֆունտ պանիր բեր։*

ՋՈՆԻ (Օրհասական ձայնով): *Տուր փողը։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Բանաստեղծորեն, հպարտությամբ): *Դու գիտես, որ ես մի պենս էլ չունեմ, Ջոնի։ Պարոն Կոսակին ասա թող ապառիկ տա։*

ՋՈՆԻ (Հնազանդ որդի, բայց դժկամ): *Չի տա։ Առանց այդ էլ հոգնել է մեզ ապառիկ տալուց։ Ասում է, որ մենք չենք աշխատում և երբեք չենք մարում մեր հաշվեգրերը։ Մենք նրան պարտք ենք քառասուն սենթ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Անհամբեր, գրգռված): *Գնա և մեր վիճակը բացատրիր նրան։ Դու գիտես, որ դա քո պարտականությունն է։*

ՋՈՆԻ (Պաշտպանելով իր իրավունքները): *Նա բացատրություն չի*

ուզում։ Ասում է, որ լսել անգամ չի կամենա։ Նա իր քառասուն սենթն է ուզում։ Ուրիշ ոչինչ։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Նապոլեոն)։ *Գնա մոտը և համոզիր, որ հաց տա ու մի ֆունտ պանիր։* (Քնքշորեն, խնդրանքով, փաղաքշական)։ *Էդ գործը գլուխ բեր, Ջոնի։ Դու կարող ես։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Անհամբեր և բաղցած)։ *Գնա, տղաս, ու պարոն Կոսակին ասա, թող քեզ հաց տա ու մի ֆունտ պանիր։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Գնա, Ջոնի։ Դու դեռ երբեք դատարկ չես հեռացել այդ խանութից, միշտ մի բան բերում ես։ Տասը բոպե ժամանակ եմ տալիս։ Կվերադառնաս արքայավայել ուտելիքով։* (Իր զվարճությանն համար)։ *Կամ առնվազն դուքսին վայել...*

ՋՈՆԻ— *Չգիտեմ։ Պարոն Կոսակն ասում է, որ մենք նրան հիմարի տեղ ենք դրել։ Նա ուզում է իմանալ, թե դու ինչ աշխատանք ես անում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Մոլեգին)։ *Դու էլ գնա և պատմիր։* (Հերոս)։ *Ես թաքցնելու ոչինչ չունեմ։ Ես բանաստեղծություն եմ գրում զոր ու գիշեր։*

ՋՈՆԻ— (Վերջապես տեղի տալով)։ *Լավ, բայց չեմ կարծում, որ դա ազդի նրա վրա։ Նա ասում է, որ դու շարունակ նստած ես տանը և աշխատանք չես փնտրում։ Նա ասում է, որ դու ծույլ ու պարապ մարդ ես։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Գոռալով)։ *Գնա նրա մոտ, Ջոնի, և ասա այդ մեծասիրտ սլովակին, որ ինքը խենթ է։ Շտապիր այնտեղ և ասա այդ իմաստուն, այդ բարեկիրթ ու փառավոր մարդուն, որ քո հայրը մեր ժամանակի չճանաչված ամենամեծ բանաստեղծներից մեկն է։*

ՋՈՆԻ— *Նրա ի՞նչ հոգն է, պա, բայց ես կգնամ։ Կաշխատեմ ամեն ինչ անել։ Տանը բոլորովի՞ն բան չունենք։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Ողբերգորեն, գոչելով)։ *Միայն բոված եգիպտացորեն։* (Մեք-Գրեգորին)։ *Այս վերջին չորս օրը միայն բոված եգիպտացորեն ենք կերել։ Ջոնի, եթե ուզում ես, որ ես իմ պոեմն ավարտեմ, գնա և հաց ու պանիր ճարիր։*

ՋՈՆԻ— *Կաշխատեմ մի բան բերել։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Շատ չուշանաս, Ջոնի։ Ես հինգ հազար մղոն հեռու եմ իմ տնից։*

ՋՈՆԻ— *Վազելով կգնամ, պարոն Մեք-Գրեգոր։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Ի զվարճություն ասածն)։ *Թե ճանապարհին հանկարծ փող գտնես, հիշիր՝ հավասար կբաժանենք։*

ՋՈՆԻ— (Կատակից ուրախացած)։ *Շատ լավ, պա։*

Ջոնին դուրս է վազում փողոց։

Պարոն Կոսակի նպարեղենի խանութը։ Կոսակը մնած է բեռը գլխի տակ ծալած։ Ջոնին թափով ներս է մտնում։ Կոսակը բարձրացնում է գլուխը։ Նա մի սիրունատես, բարեկիրթ, ծանրաբարո մարդ է, մեծ, խարտյաշ, հնաձև բեղերով։ Ցնցում է գլուխը՝ չանալով զարթնել։

ՋՈՆԻ— (Դիվանագիտորեն)։ *Պարոն Կոսակ, եթե դուք ընկնեիք Չինաստան և աշխարհում ոչ բարեկամ ունենայիք և ոչ էլ փող, չէի՞ք հուսա, որ որևէ մեկը ձեզ մի ֆունտ բրինձ տար։*

ԿՈՍԱԿ— *Ուզածդ ի՞նչ է։*

ՋՈՆԻ— *Հենց էնպես, ուզում եմ մի քիչ խոսել։ Դուք ուրախ կլինեիք, եթե արիական ցեղի անդամներից մեկնումեկը ձեզ մի փոքր օգնություն ցույց տար, չէ՞, պարոն Կոսակ։*

ԿՈՍԱԿ— *Ինչքա՞ն փող ունես։*

ՋՈՆԻ— *Խոսքս փողի մասին չի, պարոն Կոսակ։ Չինաստանում լինելու մասին է։*

ԿՈՍԱԿ— *Ինչ որ չեմ տեսել, չգիտեմ։*

ՋՈՆԻ— *Ձեզ ինչպե՞ս կզգայիք Չինաստանում, այդ վիճակի մեջ, պարոն Կոսակ։*

ԿՈՍԱԿ— *Չգիտեմ, Ջոնի։ Ես ի՞նչ գործ ունեմ Չինաստանում։*

ՋՈՆԻ— *Ասենք թե այցելել եք այդ երկիրը։ Քաղցած եք և հինգ հազար մղոն տանից հեռու և աշխարհում ոչ մի բարեկամ էլ չունեք։ Բա կլինե՞ր, պարոն Կոսակ, որ բոլորը մերժեին ձեզ նույնիսկ մի ֆունտ բրինձ տալ։*

ԿՈՍԱԿ— *Երևի չէր լինի, բայց ոչ դու ես Չինաստանում, Ջոնի, ոչ էլ քո հայրը։ Դու էլ, հայրդ էլ պետք է տանից դուրս գաք և ի վերջո մի օր աշխատեք։ Լավ է՝ հենց հիմիկվանից սկսեք։ Ես ձեզ այլևս նպարեղեն չեմ տա, որովհետև գիտեմ, որ չեք կարող վճարել։*

ՋՈՆԻ— *Պարոն Կոսակ, դուք ինձ սխալ եք հասկանում։ Սա 1914 թիվն է, և ոչ թե 1913-ը։ Իմ խոսքը նպարեղենի մասին չէ։ Ես խոսում եմ Չինաստանում ձեզ շրջապատող կռապաշտ մարդկանց մասին, որոնք թույլ են տալիս, որ դուք սովից մեռնեք։*

ԿՈՍԱԿ— *Սա Չինաստանը չէ։ Այստեղ պետք է գործ գտնես ու ապրուստդ ապահովես։ Ամերիկայում ամեն մարդ պետք է աշխատի։*

ՋՈՆԻ— *Պարոն Կոսակ, ենթադրենք թե ձեզ հարկավոր է հաց և մի ֆունտ պանիր, որ սովից չմեռնեք։ Դուք կքաշվեի՞ք այդ բաները խնդրել մի քրիստոնյա միսիոներից։*

ԿՈՍԱԿ— *Այո, կքաշվեի։ Ես կամաչեի խնդրել։*

ՋՈՆԻ— *Նույնի՞սկ, եթե գիտենայիք, որ կվերադարձնեք երկու հաց և*

երկու ֆունտ պանիր նրա տված մեկ հացի և մեկ ֆունտ պանրի փոխարեն։ Նույնիսկ ա՞յդ դեպքում, պարոն Կոսակ։

ԿՈՍԱԿ— Նույնիսկ այդ դեպքում։

ՋՈՆԻ— Այդ արդեն չեղավ, պարոն Կոսակ։ Դա պարտվողի խոսք է և դուք այդ գիտեք։ Ուրեմն դուք պարզապես սովից կմահանաք Չինաստանում, պարոն Կոսակ։

ԿՈՍԱԿ— Հոգ չէ, թե կմահանամ։ Դու և քո հայրը պարտավոր եք վճարել հացի և պանրի համար։ Ինչո՞ւ հայրդ մի աշխատանք չի գտնում։

ՋՈՆԻ— (Անմիջապես փոխում է գրոհի ձևը՝ մտքի փոխարեն դիմում է զգացմունքին)։ Ինչպե՞ս եք, պարոն Կոսակ։

ԿՈՍԱԿ— Ես լավ եմ, Ջոնի։ Դու ինչպե՞ս ես։

ՋՈՆԻ— Ավելի լավ լինել հնարավոր չի, պարոն Կոսակ։ Երեխաներն ինչպե՞ս են։

ԿՈՍԱԿ— Բոլորն էլ լավ են, Ջոնի։ Ստեփանը արդեն սկսել է քայլել։

ՋՈՆԻ— Հրաշալի է։ Անջելա՞ն ինչպես է։

ԿՈՍԱԿ— Անջելան սկսում է երգել։ Քո տատիկն ինչպե՞ս է։

ՋՈՆԻ— Տատիկս լավ է։ Նա էլ երգելու փորձեր է անում։ Ասում է, որ ավելի լավ է օպերայի երգչուհի լինել, քան թե Անգլիայի թագուհի։ Ձեր կինը՝ տիկին Մարթան, ինչպե՞ս է։

ԿՈՍԱԿ— Օհ, հրաշալի։

ՋՈՆԻ— Ինչքան ուրախ եմ, որ ձեր տանն ամեն ինչ լավ է։ Ստեփանը մի օր մեծ մարդ է դառնալու, ես գիտեմ։

ԿՈՍԱԿ— Հույս ունեմ։ Ես նրան կուղարկեմ քոլեջ և կհոգամ, որ բոլոր հնարավորություններն ունենա ուսում առնելու, մի բան, որից ես զուրկ մնացի։ Չեմ ուզում, որ նա էլ ամբողջ կյանքում դժվարություններ քաշի։

ՋՈՆԻ— Ես մեծ հավատ ունեմ Ստեփանի հանդեպ, պարոն Կոսակ։

ԿՈՍԱԿ— Ի՞նչ ես ուզում, Ջոնի, և ինչքա՞ն փող ունես։

ՋՈՆԻ— Պարոն Կոսակ, ես էստեղ չեմ եկել որևէ բան գնելու։ Դուք գիտեք, որ ես սիրում եմ մեկ-մեկ էսպես հանգիստ փիլիսոփայել ձեզ հետ։ (Արագորեն, աղաչական)։ Խնդրում եմ մի ֆրանսիական հաց տաք և մի ֆունտ պանիր։

ԿՈՍԱԿ— Դու պետք է կանխիկ վճարես, Ջոնի։

ՋՈՆԻ— Իսկ ենթե՞ը։ Ինչպե՞ս է ենթերը, ձեր սիրունիկ դուստրը։

ԿՈՍԱԿ— Լավ է, Ջոնի, բայց դու պետք է կանխիկ վճարես։ Դու և քո հայրը այս երկրի ամենավատ քաղաքացիներն եք։

ՋՈՆԻ— *Ուրախ եմ, որ եսթերը լավ է, պարոն Կոսակ։ Այսօր մեզ հյուր է եկել Ջասպերը Մեք-Գրեգորը։ Մեծ դերասան է։*

ԿՈՍԱԿ— *Երբեք անունը լսած չկամ։*

ՋՈՆԻ— *Մի շիշ էլ գարեջուր տվեք, պարոն Մեք-Գրեգորի համար։*

ԿՈՍԱԿ— *Ես քեզ գարեջուր չեմ կարող տալ։*

ՋՈՆԻ— *Կարող եք, համոզված եմ։*

ԿՈՍԱԿ— *Չեմ կարող։ Մի ֆրանսիական հաց կտամ ու մի ֆունտ պանիր, ուրիշ ոչինչ։ Հայրդ որ գործ է անում, ի՞նչ գործ է անում, Ջոնի։*

ՋՈՆԻ— *Հայրս բանաստեղծություններ է գրում, պարոն Կոսակ։ Միայն այդ գործով է զբաղված։ Նա աշխարհի ամենամեծ բանաստեղծներից մեկն է։*

ԿՈՍԱԿ— *Երբևէ փող ստանո՞ւմ է։*

ՋՈՆԻ— *Նա փող երբեք չի ստանում։ Հորս արածը ոնց որ ձեր թխած կարկանդակները, որ ինքներդ ուտել չեք կարող։*

ԿՈՍԱԿ— *Ես չեմ սիրում այդ տեսակ աշխատանք։ Ինչո՞ւ քո հայրը չի աշխատում այնպես, ինչպես բոլորը, Ջոնի։*

ՋՈՆԻ— *Նա ավելի դժվար աշխատանք է անում, քան մյուսները։ Իմ հայրը կրկնակի ծանր աշխատանք է տանում, քան միջին մարդը։*

Պարոն Կոսակը Ջոնիին տալիս է մեկ ֆրանսիական հաց և մի ֆունտ պանիր։

ԿՈՍԱԿ— *Իմացիր, այժմ դուք ինձ պարտք եք ուզիղ հիսունհինգ սենթ, Ջոնի։ Այս անգամ մի բան տվեցի, բայց այլևս չեմ տա։*

ՋՈՆԻ— (Շեմքին)։ *Եսթերին ասեք, որ ես իրեն սիրում եմ։*

Ջոնին խանութից վազում է դուրս։ Պարոն Կոսակը ընկնում է մի ճանճի հետևից, ճանճը փախչում է, նորից է հետապնդում, ճանճը դարձյալ փախչում է, նա ճանճին հետապնդում է խանութով մեկ, ամբողջ ուժով հարվածելով պանիրին, այդ ձևով արտահայտելով իր բողոքը աշխարհի դեմ։

Նույն տունը։ Ջոնիի հայրը և ծերունին նայում են վողոցն ի վար՝ ակնկալելով, որ Ջոնին կվերադառնա ուտելիքով։ Նրա տատը կանգնած է գավթում, նույնպես անհամբերությամբ սպասելով ուտելիքի։

ՄԵՔ ԳՐԵԳՈՐ— *Կարծես թե ուտելիք է բերում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Հպարտությամբ)։ *Անկասկած։* (Նա ձեռքով է անում գավթում կանգնած պառավին, որը ներս է վազում սեղանը պատրաստելու։ Ջոնին վազում է դեպի իր հայրը և Մեք-Գրեգորը)։ *Ես գիտեի, որ դատարկ չես դառնա։*

ՄԵՔ ԳՐԵԳՈՐ— *Ես նմանապես։*

ՋՈՆԻ— *Պարոն Կոսակն ասաց, որ մենք պարտք ենք իրեն ուղիղ հիսուն-հինգ սենթ։ Ասաց, որ այլևս մեզ ապառիկ ոչ մի բան չի տա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Այդ իր կարծիքն է։ Ինչի՞ մասին խոսեցիր։*

ՋՈՆԻ— *Սկզբում խոսեցի Չինաստանում սովամահ լինելու մասին։ Հետո հարցուփորձ արի, թե ինչպես է նրա ընտանիքը։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Է, ինչպե՞ս են բոլորը։*

ՋՈՆԻ— *Հրաշալի։ Բայց փող չգտա։ Նույնիսկ մի պենսանոց։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Օ, ոչինչ։ Փողը դեռ ամեն ինչ չէ։*

Նրանք մտնում են տուն։

Հյուրասենյակ։ Բոլորը նստած են սեղանի շուրջ։ Ընթրիքը վերջացած է։ Մեք-Գրեգորը էստեղ-էնտեղ մի փշրանք է գտնում և գցում բերանը։ Նա դեսուդեն է նայում, տեսնի՝ էլ բան չկա՞ ուտելու։

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Այդ վերևի կանաչ ամա՞նը, Ջոնի, ի՞նչ կա մեջը։*

ՋՈՆԻ— *Քարե գնդիկներ։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Այդ դարակը, Ջոնի, ուտելու բան կա՞ մեջը։*

ՋՈՆԻ— *Ծղրիդներ։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Անկյունում դրված այդ մեծ անոթը, Ջոնի, որևէ անուշահամ բան կա՞ մեջը։*

ՋՈՆԻ— *Մեջը մի լորտու է։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Ինչ մեծ ախորժակով մի պատառ խաշած լորտու կուտեի, Ջոնի։*

ՋՈՆԻ— (Կենդանիներին պաշտպանելով)։ *Չի կարելի, պարոն Մեք-Գրեգոր։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Իսկ ինչո՞ւ չի կարելի, Ջոնի։ Ինչո՞ւ չէ, տղաս։ Ես լսել եմ, որ Բորնեոյի բնիկները օձ և մորեխ են ուտում։ Տանը քանի՞ հատ չաղլիկ մորեխ ունես։ Մի վեց հատ կունենա՞ս...*

ՋՈՆԻ— *Ընդամենը չորս հատ ունեմ։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Շուտ արա, տղաս, մորեխներին բեր։ Ուտելուց հետո ես քեզ համար կնվագեմ քո սիրած երգը։ Ահավոր քաղցած եմ, Ջոնի։*

ՋՈՆԻ— *Ես էլ շատ քաղցած եմ, բայց ոչ ոքի թույլ չեմ տա սպանել անմեղ արարածներին։ Նրանք էլ մարդկանց պես իրավունք ունեն ապրելու։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Մեք-Գրեգորին)։ *Գուցե մի բա՞ն նվագեք։ Կարծում եմ տղաս շատ կուրախանա։*

ՋՈՆԻ— (Ցատկելով ոտքի)։ *Նվագեք, պարոն Մեք-Գրեգոր։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Շատ լավ, Ջոնի։ Հա՜ց։ Հա՜ց։ Աստված իմ, որքա՜ն վայրագորեն է հացը մաքառում սրտի հետ։*

Մեք-Գրեգորը վեր է կենում և ոկսում է շեփորել։ Հետզհետե նրա շեփորը ավելի բարձրագոչ է հնչում, ավելի գեղեցիկ և ողբագին, քան հնչել է որևէ շեփոր աշխարհում։ Տասնեռաք հարևաններ հավաքվում են դռան առաջ և ծափահարում են, երբ նա ավարտում է նվագը։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Նվագով հիացած)։ *Ես ուզում եմ ձեզ ներկայացնել ժողովրդին։*

Նրանք դուրս են գալիս զավիթ։

Նույն տունը, բազմությունը նայում է զավթում կանգնած Ջոնիի հորը, Մեք-Գրեգորին և Ջոնիին։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ազնիվ հարևաններ և բարեկամներ, ահավասիկ ձեր առաջ կանգնած է Ջասպերը Մեք-Գրեգորը, մեր ժամանակի շեքսպիրյան ամենամեծ դերասանը։* (Դադար)։ *Այդ իմ կարծիքն է։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Որպես դերասան)։ *Ես հիշում եմ իմ առաջին ելույթը Լոնդոնում 1851 թվականին. կարծես երեկ լիներ։ Տասնչորսամյա մի տղա էի Գլազգոյի աղքատ թաղամասերից։ Իմ անդրանիկ դերը՝ սուրհանդակ էր մի թատերգության մեջ, որի անունը, դժբախտաբար, մոռացել եմ։ Խոսքեր չունեի, իսկ շարժում՝ ինչքան կուզեք. շարունակ վազում էի մի սպայից մյուսը, սիրահարից՝ իր սիրուհուն և նորից դեպի հետ. ու այսպես անվերջ։*

ՌՈՒԻՖ ԷՊԼԻ— (Ափսոսանքով ընդմիջելով այդ մեծ ճառը)։ *Մի ուրիշ բան էլ չե՞ք նվագի, պարոն Մեք-Գրեգոր։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Դուք տանը հավկիթ ունե՞ք։*

ՌՈՒԻՖ ԷՊԼԻ— *Իհարկե ունեմ։ Մի տասներկու հատ ունեմ տանը։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Նեղություն չէ՞ արդյոք ձեզ համար գնալ և այդ տասներկու հավկիթներից մեկը բերել այստեղ։ Երբ վերադառնաք, ես մի այնպիսի երգ կնվագեմ, որ ձեր սիրտը թրթռա հրճվանքից ու վշտից։*

ՌՈՒԻՖ ԷՊԼԻ— *Գնացի՜։* (Գնում է)։

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Դիմելով բազմությանը)։ *Իմ բարեկամներ, հաճույքով կուզենայի ձեզ համար մի նոր երգ նվագել այս ոսկեփող շեփորով, բայց երկար ժամանակ է՝ ինչ հեռացել եմ տանից և սաստիկ հոգնած եմ։ Եթե բարի գտնվեք ամեն մեկդ ձեր տունը գնալ և շտապով մի-մի պատառ ուտելիք բերել, ապա ես, հպարտությամբ ոգեպնդվելով, ձեզ համար կնվագեմ մի երգ, որը հիմնովին կփոխի յուրաքանչյուրիդ կյանքի ընթացքը, մղելով այն դեպի լավը։*

Մարդիկ ցրվում են: Վերջին գնացողը լինում է Եսթեր Կոսակը, որը լսում է ամբողջ ճառը և ապա վազում է տուն: Մեք-Գրեգորը, Ջոնիի հայրը և Ջոնին նստում են աստիճաններին և լուռ սպասում: Գնացողները մեկ առ մեկ վերադառնում են՝ ուտելիք բերելով Մեք-Գրեգորի համար. ձու, երշիկ, մի փունջ կանաչ սոխ, երկու տեսակ պանիր, կարագ, երկու տեսակ հաց, խաշած կարտոֆիլ, բարմ պուդինգ, մի սեխ, թեյ և ուրիշ շատ բաներ:

Շնորհակալ եմ, բարեկամներս, շնորհակալ եմ:

Նա կանգնում է ճանդիսավոր դիրքով, սպասելով կատարյալ լռության, շրջում է իրեն, կատաղորեն նայում է շուրջը, շեփորը մոտեցնում է շուրթերին, սակայն մի պահ զգվում է Եսթեր Կոսակի պատճառով, որը ձեռքին մի սրբուկ բռնած, շտապ-շտապ, ափմուկով գալիս միանում է բոլորին: Երբ տիրում է լռություն, նա նվագում է «Իմ սիրտը լեռներում է» երգը: Մարդիկ արտասվում են, ծունկի են իջնում, երգում են խմբով և ապա հեռանում: Մեք-Գրեգորը ճանդիսավորությամբ դիմում է հորը և որդուն:

Պարոն, եթե ձեզ համար նեղություն չէ, ես կուզենայի միառժամանակ ձեր տանը ապրել:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Ուրախացած և զարմացած): *Պարոն, իմ տունը ձեր տունն է:* (Մտնում են ներս):

Նույն սենյակը: Անցել է տասնութ օր: Մեք-Գրեգորը ննջած է հատակին, մեջքի վրա պառկած: Ջոնին կամացուկ գնում-գալիս է, մեկ սրան, մեկ նրան նայում: Նրա հայրը, սեղանի առաջ նստած, բանաստեղծություն է գրում: Տատը նոնաքոռում նստած նոնվում է: Դուռը բախում են: Բոլորը, բացի Մեք-Գրեգորից, վեր թռչելով վազում են դեպի դուռը:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Դռան մոտ): *Ո՞վ է:*

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— *Ես դերասան Մեք-Գրեգորին եմ փնտրում:*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ի՞նչ եք ուզում:*

ՋՈՆԻ— *Ասա թող ներս գա, պա:*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Դե իհարկե: Ներողություն: Ներս համեցեք, խնդրեմ:*

Ներս է մտնում մի երիտասարդ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— *Իմ անունը Ֆիլիպ Կարմայքլ է՝ ծերանոցից: Ինձ ուղարկել են, որ պարոն Մեք-Գրեգորին տուն տանեմ:*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Արթնանալով և հատակին նստելով): *Տո՞ւն: Ո՞վ տվեց այդ անունը:* (Գոռալով): *Ես հինգ հազար մղոն հեռացել եմ տնից, միշտ հեռու եմ եղել և միշտ կլինեմ: Այս երիտասարդը ո՞վ է:*

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— *Պարոն Մեք-Գրեգոր, ես Ֆիլիպ Կարմայքլն եմ՝ ծերանոցից: Ինձ ուղարկեցին, որ ձեզ տուն բերեմ: Երկու շաբաթից մենք*

պետք է ցուցադրենք մեր տաքեկան ներկայացումը։ Ձեր կարիքն են զգում գլխավոր դերի համար։

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Վեր բարձրանալով Ջոնիի և նրա ճոր օգնությամբ): *Այդ ի՞նչ տեսակ դեր է։ Ես երիտասարդ արկածային դերեր վաղուց է, որ չեմ կարողանում խաղալ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ— *Դուք պետք է էիր Աբքա խաղաք, պարոն Մեք-Գրեգոր։ Հրաշալի դեր է ձեզ համար։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Ուրպես բեմի կանչն առած դերասան): *Մնաք բարով, իմ թանկագին բարեկամներ։* (Վերադառնում է գավիթից): *Կյանքիս և ոչ մի պահին այցելածս ոչ մի վայրում երբեք և ոչ մի տեղ ես պատիվ ու հաճույք չեմ ունեցել հաղորդակից լինելու ձեզ նման վսեմ, անարատ և բերկրալի հոգիների հետ։*

Սերունին և երիտասարդը գնում են: Մի պահ լռություն է տիրում՝ ցավով և մենությամբ լի:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Քաղցած, բարձրաձայն): *Ջոնի, գնա պարոն Կոսակի խանութը և մի քիչ բան բեր ուտելու։ Դու ձևը գիտես, Ջոնի։ Գնա մի որևէ բան ճարիր։*

ՋՈՆԻ— (Քաղցած, բարկացած և բարձրաձայն): *Մենք պարոն Կոսակին պարտք ենք ութսունհինգ սենթ։ Նա մեզ այլևս ոչ մի բան չի տա առանց փողի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Մոտը գնա, Ջոնի։ Քեզ կհաջողվի այդ հիանալի սլովակից մի քիչ ուտելիք ստանալ մեզ համար։*

ՋՈՆԻ— (Հուսահատորեն): *Էհ, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Զարմացած, գոռալով): *Ի՞նչ։ Դու՝ իմ որդին, և այդպես հուսալքվա՞ծ։ Հառա՜ջ։ Ես այդ ձևով եմ մաքառել անգութ աշխարհի դեմ, երբ դու դեռ ծնված չէիր։ Քո ծնունդից հետո մենք միասին ենք մաքառել և պիտի մաքառենք մինչև վերջ։ Մարդիկ բանաստեղծություն սիրում են, բայց չեն հասկանում, ահա ամբողջ ցավը։ Ոչ մի բան չի կարող մեզ կասեցնել, Ջոնի։ Գնա այդ խանութը և մեզ համար ուտելիք ճարիր։*

ՋՈՆԻ— *Շատ լավ, պա։ Կաշխատեմ։* (Վազում է դեպի շեմը):

Նույն տունը: Վրան այժմ մի մեծ ցուցանակ կա՝ «Տրվում է վարձով»:

1914 թվականի նոյեմբեր ամսի առաջին օրերից մեկը, արշալույսից առաջ: Մառալուտ ձմեռ է: Բարձր երկնքում կռնչալով դեպի հարավ է չվում սագերի մի երամ: Ջոնին նստած է գավիթի աստիճաններին, ձեռքը կզակին: Նա առնում է սագերի ձայնը, ցատկում է ոտքի և նայում է երկինք՝ տեսնի նրանց երամը: Սագերի կանչը հետզհետե նվազում է և ապա մարում: Ջոնին վերադառնում է

և նստում աստիճաններին) Արևը ծագելիս, մի մեծ շքեղ ժպիտ ողողում է նրա դեմքը: Նա աչքի ծայրով նայում է առավոտյան լույսին, կարծես դա իր թանկագին խաղընկերը լինի, որի հետ իրար շատ լավ են հասկանում: Որքան լույսը առատանում է, այնքան այդ խաղը Ջոնիի և արևի միջև գնալով զարգանում է, ինչպես մի երաժշտական թեմա, և Ջոնին, ուժի կանգնելով, դեմքը դարձնում է լույսին: Նա թևերը բարձրացնում է, մեծ ճանդիսավորությամբ մի քանի անգամ գլուխկոնծի է տալիս, ապա տեղից պոկվում է, վազում տան շուրջը և վերադառնում մյուս կողմով՝ նամարյա պարելով:

Ոչ ճեռվում անցնում է մի բեռնատար գնացք, գետինը ցնցելով:

Առավոտյան լույսը շատանում է:

Սուլելով անց է կենում լրագրեր առաքող տղան: Գավառական փոքրիկ քաղաքի ցրիչ է, մոտ տասներեք տարեկան: Իր աշխատանքը կատարած մարդու լուրջ և ինքնուրույն տեսք ունի: Նրա լրագրերի տոպրակները դատարկ են: Գիշերն անցել է: Օրավարձը վաստակված է: Լրագրերը ցրված են ընթերցողների դռներին: Աշխարհի վրա բացվել է նոր օր: Երկու ժամ, դեռ լույսը չբացված, տղան շրջել է քաղաքի մութ փողոցներով: Այն երգը, որ նա սուլում է, մեղմ է և իմաստալի: Նա ինքն է ճնարել այդ երգը, լուսաբացի երգը:

ՋՈՆԻ— (Աստիճաններից ներքև վազելով): *Հելլո՜:*

ՏՂԱՆ— (Կանգնելով): *Հելլո՜:*

ՋՈՆԻ— *Դա ի՞նչ երգ է:*

ՏՂԱՆ— *Ո՞րը:*

ՋՈՆԻ— *Որ սուլում էիր:*

ՏՂԱՆ— *Մի՞թե սուլում էի:*

ՋՈՆԻ— *Իհարկե: Չգիտեի՞ր:*

ՏՂԱՆ— *Դե, ես միշտ էլ սուլում եմ:*

ՋՈՆԻ— *Մի բան սուլում էիր: Ի՞նչ էր:*

ՏՂԱՆ— *Չգիտեմ:*

ՋՈՆԻ— *Երանի ես էլ կարողանայի սուլել:*

ՏՂԱՆ— *Ամեն մարդ էլ կարող է սուլել:*

ՋՈՆԻ— *Ես չեմ կարող: Ինչպե՞ս ես անում:*

ՏՂԱՆ— *Ցույց տալու բան չի: Ուղղակի սուլիր:*

ՋՈՆԻ— *Ո՞նց:*

ՏՂԱՆ— *Այ, էսպես:* (Հանպատրաստից մի բան ճնարելով սուլում է ամենայն ճարտարությամբ):

ՋՈՆԻ— (Հիացած): *Երանի ես էլ կարողանայի էդպես սուլել:*

ՏՂԱՆ— (Իրեն շոյված զգալով, փափագելով ավելի ուժեղ տպավորություն գործել): *Դատարկ բան էր: Հապա սա լսիր:*

Նույն եղանակին ևս մի քանի շեշտ ու երանգ է ավելացնում:

ՋՈՆԻ— *Կարո՞ղ ես ինձ սովորեցնել:*

ՏՂԱՆ— *Սուլելը չեն սովորեցնում։ Պարզապես սուլիր։ Սա էլ մի ուրիշ ձև է։* (Նա սուլում է մի փոքրիկ եղանակ, նման լրագրավաճառ տղաների ականջ ծակող սուլոցին, բայց մի քիչ ավելի մեղմ)։

ՋՈՆԻ— (Փորձելով սուլել)։ *Սրա՞ պես։*

ՏՂԱՆ— *Դա սկիզբն է։ Էդպես շարունակիր ու քիչ հետո բերանդ կգտնի իր ձևը և ինքդ էլ չես նկատի, թե ոնց եղավ, որ սուլում ես։*

ՋՈՆԻ— *Ազնի՞վ խոսք։*

ՏՂԱՆ— *Հավատա։*

ՋՈՆԻ— *Մայրդ մեռա՞ծ է։*

ՏՂԱՆ— *Ո՞նց իմացար։*

ՋՈՆԻ— *Իմ մայրն էլ մեռած է։*

ՏՂԱՆ— *Ճի՞շտ։*

ՋՈՆԻ— (Հոգոց ճանելով)։ *Հա, մայրս մեռավ։*

ՏՂԱՆ— *Ես մորս չեմ հիշում։ Դու քո մորը հիշո՞ւմ ես։*

ՋՈՆԻ— *Էնքան էլ պարզ չեմ հիշում։ Թեև երբեմն երազում տեսնում եմ նրան։*

ՏՂԱՆ— *Ես էլ էի տեսնում։*

ՋՈՆԻ— *Հիմա էլ չե՞ս տեսնում։*

ՏՂԱՆ— (Սթափ)։ *Էհ, դրանից ի՞նչ օգուտ։*

ՋՈՆԻ— *Մայրս գեղեցիկ էր։*

ՏՂԱՆ— *Հա, գիտեմ։ Հիշում եմ։ Իսկ հայր ունե՞ս։*

ՋՈՆԻ— (Պարծանքով) *Օ, իհարկե։ Տանն է հիմա, քնած է։*

ՏՂԱՆ— *Իմ հայրն էլ է մեռած։*

ՋՈՆԻ— *Հա՞յրդ էլ։*

ՏՂԱՆ— (Իրողությունը հաստատելով)։ *Հա։*

Սկսում են մեկը մյուսին գցել-բռնել թենիսի մի ճին գնդակ։

ՋՈՆԻ— *Որևէ հարազատ ունե՞ս։*

ՏՂԱՆ— *Մորաքույր ունեմ, բայց իսկական մորաքույրս չէ։ Ես որբանոցում եմ մեծացել։ Որդեգրված եմ։*

ՋՈՆԻ— *Որբանոցն ի՞նչ բան է։*

ՏՂԱՆ— *Մի տեսակ տեղ է, ուր ապրում են անհայր-անմայր երեխաները, մինչև մեկնումեկը նրանց որդեգրի։*

ՋՈՆԻ— *Որդեգրելը ո՞րն է։*

ՏՂԱՆ— *Մեկը, որ տղա կամ աղջիկ է ուզում, գալիս է որբանոց և բոլորի միջից մեկին վերցնելով տանում է իր տունը։ Թե քեզ վերցրին, ուրեմն դու կգնաս ու կապրես նրանց մոտ։*

ՋՈՆԻ— *Գո՞հ ես, որ քեզ որդեգրել են։*

ՏՂԱՆ— *Դժգոհ չեմ։* (Տղան մի կողմ է նետում գնդակը)։

ՋՈՆԻ— *Անունդ ի՞նչ է։*

ՏՂԱՆ— *Հենրի։ Իսկ քո՞նը։*

ՋՈՆԻ— *Ջոնի։*

ՏՂԱՆ— *Լրագիր ուզո՞ւմ ես։ Եվրոպայում պատերազմ է։*

ՋՈՆԻ— *Ես փող չունեմ։ Մենք հարուստ չենք։ Չենք աշխատում։ Իմ հայրը բանաստեղծություն է գրում։*

ՏՂԱՆ— (Ջոնիին լրագրի մի ճավելված տալով)։ *Օ, էդ լավ բան է։ Մոտդ երբեք փող չի՞ լինում։*

ՋՈՆԻ— *Երբեմն։ Մի անգամ ես մի քառորդ դոլար գտա։ Ընկած էր ուղիղ իմ դիմաց, մայթին։ Մի անգամ էլ հայրս Նյու Յորքից տասը դոլարի չեկ ստացավ։ Մենք մի հավ առանք և շատ դրոշմանիշեր և թուղթ ու ծրարներ։ Հավը հավկիթ չէր ածում, էնպես որ տատս մորթեց և ճաշ եփեց մեզ համար։ Դու հավ կերած կա՞ս։*

ՏՂԱՆ— *Իհարկե։ Մի վեց-յոթ անգամ կերած կլինեմ։*

ՋՈՆԻ— *Ի՞նչ ես ուզում դառնալ, երբ մեծանաս։*

ՏՂԱՆ— *Ուհ, չգիտեմ։ Չգիտեմ, թե ինչ եմ անելու։*

ՋՈՆԻ— (Պարծանքով)։ *Ես հորս պես բանաստեղծ եմ դառնալու, ինքը էդպես ասաց։*

ՏՂԱՆ— *Իսկ ես երևի դեռ որոշ ժամանակ լրագրավաճառ կմնամ։* (Ուզում է գնալ)։ *Լավ։ Ցտեսություն։*

ՋՈՆԻ— *Նորից կգա՞ս էստեղ։*

ՏՂԱՆ— *Ես ամեն առավոտ էս ժամին անցնում եմ էստեղով, բայց քեզ երբեք չեմ տեսել։ Առաջին անգամ է։*

ՋՈՆԻ— (Ժպտալով)։ *Երազ տեսա, արթնացա և քունս արդեն փախավ։ Որոշեցի վեր կենալ ու էստեղ գալ։ Երազում մորս տեսա։*

ՏՂԱՆ— *Դե, ուրիշ անգամ էլ որ քունդ չտանի, իրար կտեսնենք։*

ՋՈՆԻ— *Հույս ունեմ։ Ցտեսություն։*

ՏՂԱՆ— *Ցտեսություն։ Դու պարզապես փորձիր և ինքդ էլ չես իմանա, թե ոնց եղավ, որ արդեն սուլում ես։*

ՋՈՆԻ— *Շնորհակալ եմ։*

Տղան գնում է սուլելով։ Ջոնին ծալած լրագիրը նետում է գավիթն ի վեր և նստում է աստիճաններին։

Նրա տատը գավիթ է ելնում ավելը ձեռին և սկսում է ավլել։

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ— (Հայերենով, որ նրա իմացած միակ լեզուն է, բացի թուրքերենից, իրանցերենից և մի քիչ էլ արաբերենից, որոնք այդ շրջապատում ոչ ոք չի հասկանում)։ *Իմա՞լ ես, գառ ջան։*

ՋՈՆԻ— (Որը հայերեն հասկանում է, բայց չի խոսում, անգլերենով): *Լավ եմ։*

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ— *Քու հեր իմա՞լ է։*

ՋՈՆԻ— *Չգիտեմ։* (Բարձրաձայն՝ հորը): *Է՜յ, պա, ինչպե՞ս ես։* (Դադար: Ավելի բարձրաձայն): *Պա՜։* (Դադար: Լռություն): *Քնած կլինի։*

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ— *Տուն փող կա՞։*

ՋՈՆԻ— *Փո՞ղ։* (Գլուխը տարուբերելով): *Ոչ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Ներսից): *Ջոնի՞։*

ՋՈՆԻ— (Ոտքի ցատկելով): *Պա՜։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Դու ինձ կանչեցի՞ր։*

ՋՈՆԻ— *Հա։ Ինչպե՞ս ես։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Լավ եմ, Ջոնի։ Դո՞ւ ինչպես ես։*

ՋՈՆԻ— *Ես լավ եմ, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Դրա՞ համար ինձ արթնացրիր։*

ՋՈՆԻ— (Տատին): *Նա լավ է։* (Հորը, ավելի բարձր ձայնով): *Պառավը ուզում է իմանալ, թե ինչպես ես։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Հայերենով՝ մորը): *Աղեկ եմ, մարեմ։ Բարի լույս։* (Ջոնիին անգլերենով): *Ինչո՞ւ ես նրան պառավ ասում, նա այնքան էլ ծեր չէ։*

ՋՈՆԻ— *Ես ուզում էի տատիկ ասել և ոչ թե պառավ։*

Ջոնիի հայրը գավիթ է ելնում, շապիկը կոճկելով, գլխով բարևում է մորը, աչքի պոչով նայում է արևին՝ ճիշտ այնպես, ինչպես Ջոնին էր նայել, ժպտում նույն ձևով, ամբողջ մարմնով ձգվում ու նայում է արևին, ապա ցատկելով իջնում է աստիճաններից և մեկ անգամ գլուխկոնծի է տալիս, թեև անհաջող՝ գետին է փովում մեջքի վրա:

ՋՈՆԻ— *Ավելի շատ վարժություն պիտի անես, պա։ Շարունակ նստած ես։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Մեջքի վրա): *Քո հայրը մեծ բանաստեղծ է, Ջոնի։ Ճիշտ է, ես քեզ նման հաջող գլուխկոնծի չեմ տալիս, բայց որպեսզի իմանաս, թե ինչ հզոր մարդիկ եմ ես, կարդա այն բանաստեղծությունը, որ երեկ գրեցի։*

ՋՈՆԻ— *Իսկապե՞ս լավն է, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Լա՞վ։* (Լարախաղացի պես ոտքի թռչելով): *Հոյակա՜պ է։ Ուղարկելու եմ «Աթլանթիկ» ամսագրին։*

ՋՈՆԻ— *Օ, մոռացա, պա։ Դռան առաջ մի լրագիր կա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Գավիթն ի վեր ելնելով): *Առավոտյա՞ն լրագիր է, Ջոնի։*

ՋՈՆԻ— *Հա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Օ, դա հրաշալի անակնկալ է։ Որտեղի՞ց ճարեցիր։*

ՋՈՆԻ— *Հենրին տվեց։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Հենրի՞ն։ Ո՞վ է Հենրին։*

ՋՈՆԻ— *Մի տղա է, որ ոչ մայր ունի, ոչ էլ հայր։ Ու շատ լավ սուլել գիտի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Վերցնելով լրագիրը և բանալով այն)։ *Շնորհքով տղա է։* (Կարդում է խորագրերը)։

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ— (Դիմելով Ջոնիի հորը, Ջոնիին, ինքն իրեն և աշխարհին)։ *Էն դարիպ մարդն ո՞ւր է։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Լուրերով տարված)։ *Հը՞մ։*

ՋՈՆԻ— *Ո՞ր մարդը։*

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ— *Դու գիտես, լաո։ Էն հալիվորը, որ փող կփչեր։* (Նա մրնջախաղով ցույց է տալիս, թե ինչպես են փող փչում)։

ՋՈՆԻ— *Օհ, պարոն Մեք-Գրեգո՞ր։ Նրան հետ տարան ծերանոց։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Լրագիրը կարդալով)։ *Ավստրիա, Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Ռուսաստան։ Ցեպելիններ։ Սուզանավեր։ Գնդացիրներ։ Ռումբեր։* (Գլուխը տարուբերելով)։ *Նորից գժվել են։*

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ— (Ջոնիին, հանդիմանական)։ *Հայերեն խոսա, լաո։*

ՋՈՆԻ— *Ես հայերեն խոսել չգիտեմ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Ջոնիին)։ *Ի՞նչ է պատահել։*

ՋՈՆԻ— *Տատիկը պարոն Մեք-Գրեգորի մասին է հարցնում։*

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ— (Ջոնիի հորը)։ *Որտե՞ղ է նա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Հայերեենով)։ *Հետ դառավ ծերանոց։*

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ— (Գլուխը տխրությամբ օրորելով)։ *Վախ, վախ, վախ, խեղճ հալիվոր բանտարկյալ։*

ՋՈՆԻ— *Ծերանոցը բա՞նտ է, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Հաստատ չգիտեմ, Ջոնի։*

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ— (Կատաղած, ճիշտ այնպես, ինչպես իր որդին և թոռնիկն են խոսում, երբ զայրացած են)։ *Հորի՞ հալիվորներու տուն գնաց։ Հիդա տուն չի՞։ Ե՞րբ կիգա։* (Մտնում է ներս)։

ՋՈՆԻ— *Ճիշտ է ասում, պա։ Ինչո՞ւ պարոն Մեք-Գրեգորը չի վերադառնում և մնում մեզ մոտ։ Ինչ է՝ անպայման ծերանոցո՞ւմ պիտի ապրի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Մարդը որ ծերանում է, Ջոնի, շատ ծերանում ու ոչ փող ունի, ոչ էլ հարազատ, նրա տեղը ծերանոցն է։*

ՋՈՆԻ— *Ես պարզապես երբեմն կարոտում եմ նրան։ Դու չե՞ս կարոտում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ճշմարիտն ասած, կարոտում եմ, Ջոնի։*

ՋՈՆԻ— *Ես միշտ հիշում եմ նրան, մանավանդ նրա նվագը։ Իսկ նրա ջուր խմե՞լը։ Մոռանալո՞ւ բան է։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Նա հոյակապ մարդ է։*

ՋՈՆԻ— *Իսկապե՞ս նրա սիրտը լեռներում է, պա, ինչպես ինքն էր ասում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ոչ բառացիորեն։*

ՋՈՆԻ— *Եվ իսկապե՞ս նա հինգ հազար մղոն հեռու է տնից։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Առնվազն այդքան։*

ՋՈՆԻ— *Ի՞նչ ես կարծում, նա մի օր կհասնի՞ տուն։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Նա ծեր մարդ է, Ջոնի։ Անպայման կհասնի։*

ՋՈՆԻ— *Ուզում ես ասել՝ նա գնացք և նավ կնստի և կհասնի՞ այդ լեռներին։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Այդպես չէ, Ջոնի։ Նրա հասնելը մի քիչ տարբեր կլինի դրանից։ Նա կմեռնի։*

ՋՈՆԻ— *Դա՞ է տուն հասնելու միակ ճանապարհը։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Դա միակ ճանապարհն է։*

Այս ամբողջ ժամանակ Ջոնիի հայրը թերթում է լրագիրը, իսկ Ջոնին զանազան ճարպիկ շարժումներ է կատարում, խայտում է գավիթի բազրիքների վրայով, ներքև է ցատկում, գլուխկոնձի տալիս, տնկվում գլխի վրա և այլն, և այլն։ Նա իր հարցերից մի քանիսը տալիս է այդպես գլխի վրա տնկված։ Մոտիկից լսվում է ականջ ծակող մի սուլոց։

ՋՈՆԻ— (Անհամբեր)։ *Պարոն Վիլին է, պա, փոստատարը։* (Ջոնիի հայրը թոչում է ոտքի, լրագիրը ձեռքից վայր է ընկնում)։ *Ի՞նչ ես կարծում՝ գուցե Նյու Յորքից մեզ նամակ է եկել և գուցե մեջն էլ մի չե՞կ է դրված։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Չգիտեմ, Ջոնի։*

Պարոն Վիլին հեծանիվ նստած գալիս է։ Քիչ է մնում հեծանիվից ընկնի Ջոնիի հար պատճառով։

ՊԱՐՈՆ ՎԻԼԻ— (Ցած թոչելով հեծանիվից այնպես, կարծես ձիուց է իջնում)։ *Բարի լույս, պարոն Ալեքսանդր։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Բարի լույս, պարոն Վիլի։*

ՋՈՆԻ— *Մեզ նամակ կա՞, պարոն Վիլի։*

ՊԱՐՈՆ ՎԻԼԻ— (Պայուսակից նամակների մի կապոց հանելով և երիզը թուլացնելով սկսում է նայել)։ *Թույլ տուր տեսնեմ, Ջոնի։ Եթե չեմ սխալվում, ես այստեղ մի բան պետք է ունենամ հորդ համար։*

ՋՈՆԻ— *Նյու Յորքի՞ց է։*

ՊԱՐՈՆ ՎԻԼԻ— (Դուրս քաշելով մի տափակ ծրար)։ *Այո, Նյու Յորքից է,*

Ջոնի։ Պարոն Ալեքսանդր, կարծես ձմեռն արդեն մոտ է։ Այս առավոտ սագերը չվում էին։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Հուզված, լարված, սակայն արտաքուստ անփույթ)։ *Այո, գիտեմ։* (Ինքն իրեն)։ *Գիտեմ։ Գիտեմ։*

ՋՈՆԻ— *Երբևիցե թե Նյու Յորքից նամակ ստանամ, միշտ պահելու եմ։*

ՊԱՐՈՆ ՎԻԼԻ— (Զրուցելու ցանկությամբ)։ *Ինչպե՞ս են գործերը, պարոն Ալեքսանդր։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ես առ այսօր բախտավոր եմ եղել իմ գործով, պարոն Վիլի, շնորհակալ եմ։*

ՋՈՆԻ— *Հայրս մի անգամ եղել է Նյու Յորքում։ Եղել ես, չէ՞, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Այո, եղել եմ, Ջոնի։ Ինչպե՞ս է ձեր ընտանիքը, պարոն Վիլի։*

ՊԱՐՈՆ ՎԻԼԻ— *Բոլորը լավ են, բացի Ջոյից, որ ամենափոքրն է։ Շարունակ լաց է լինում։ Իսկ ես երեխայի լացին դիմանալ չեմ կարող։ Հետս չգիտեմ, թե ինչ է կատարվում, բայց դրանից ասես ամեն բանի հավատը կորցնում եմ։ Երբ Ջոն լաց է լինում, ես ինքս ինձ ասում եմ. ախր, օգուտը ո՞րն է։*

ՋՈՆԻ— *Կարծում եմ, ես էլ կյանքումս մի օր Նյու Յորք կընկնեմ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Դատարկ բան է, պարոն Վիլի։ Միառժամանակ հետո երեխան ձայնը կկտրի։*

ՊԱՐՈՆ ՎԻԼԻ— *Անշուշտ, և որքան շուտ, այնքան լավ։* (Նա ճեռանում է ծրարը ձեռքին)։ *Ցտեսություն, պարոն Ալեքսանդր, ցտեսություն, Ջոնի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Պարոն Վիլի՜։*

Պարոն Վիլին ծրարը մեկնում է նրան։ Նրանք ճրաժեշտ են տալիս, և պարոն Վիլին, ճեծանիվ նստելով, գնում է։ Ջոնի ճայրը ծրարը պահում է իր առաջ, ակնհայտորեն ցանկանալով բանալ, բայց վախենում է։

ՋՈՆԻ— (Անհամբեր)։ *Դե լավ, պա։ Բաց արա նամակը։ Ի՞նչ ես սպասում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Բարկացած, զոռալով)։ *Ջոնի, ես վախեցած եմ։ Չեմ հասկանում, թե ինչպես ես՝ քո հայրը, կարող եմ այսքան վախեցած լինել։*

ՋՈՆԻ— *Վախեցած չես երևում, պա։ Նամակը ումի՞ց է։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *«Աթլանթիկ» ամսագրից։ Հիշո՞ւմ ես էն բանաստեղծությունները, որ ես գրեցի պարոն Մեք-Գրեգորի էստեղ լինելուց հետո։*

ՋՈՆԻ— *Գույն նրանք գնել են էդ բանաստեղծությունները։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Գնել են, ո՞նց չէ։ Նրանք բանաստեղծություններ չեն*

գնում, Ջոնի։ Նրանք մարդու ահաբեկելով մեռցնում են։ (Կարդալով իր անունը և հասցեն մեծ հանդիսավորությամբ, ահավոր սարսափով և սոսկալի զայրույթով)։ *Բեն Ալեքսանդր, Սան Բենիտո փողոց 2226, Ֆրեզնո, Կալիֆոռնիա։*

ՋՈՆԻ— *Նամակը քեզ է հասցեագրված, պա։ Ինչո՞ւ բաց չես անում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Գոռալով)։ *Վախեցած եմ, ասացի քեզ։ Ես սոսկահար եմ ու ամոթահար։ Այդ բանաստեղծությունները հոյակապ էին։ Ինչպե՞ս կարող է պատահել, որ ես վախենամ։*

ՋՈՆԻ— (Հանդուգն)։ *Մի վախենա, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Զայրացած)։ *Ինչո՞ւ նրանք բարձրաձայն փառաբանում են ամեն բան, բացի լավագույնից։ Ինչո՞ւ են կործանում իրենք իրենց, մահվան գործիքների հետևից ընկնելով, և դեն են նետում այն ամենը, ինչ ծառայում է կյանքին։ Ես այդ բանը չեմ կարողանում հասկանալ։ Ոչ մի հույս մեզանից և ոչ մեկի համար։*

ՋՈՆԻ— *Մի հուսահատվիր, պա։* (Կատաղած)։ *Ո՞վ է այդ գրողի տարած «Աթլանթիկ» ամսագիրը։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Բարկացած)։ *Հեռացիր, Ջոնի։ Գնա էստեղից։ Գնա, խնդրում եմ։*

ՋՈՆԻ— (Նույնպես բարկացած)։ *Լավ, պա։*

Ջոնին անցնում է տան հետև, դարձյալ երևում է, մի պահ նայում է ճարը, ապա գիտակցում է, որ պետք է հեռանալ։

Ջոնիի հայրը ակներև է, որ հասկանում է՝ «Աթլանթիկ» ամսագիրը հետ է ուղարկել իր բանաստեղծությունները։ Նույնչափ ակներև է և այն, որ նա չի կարող դրան հավատալ։ Այն էլ է պարզ, որ բանաստեղծությունները հոյակապ են, որովհետև ի՞նքը այդպիսին է։ Վագրի պես քայլում է նետ ու առաջ։ Թեև նրա շրթունքները փակ են, բայց թվում է, թե խոսում է շշշապատի հետ։ Վերջապես նա մոլեգնությամբ պատռում է ծրարը։ Ծրարը ցած է ընկնում։ Ջոնիի նոր ձեռքին իր բանաստեղծությունների ձեռագիրն է։ Մաքուր սպիտակ թղթի մի թերթիկ սառում ընկնում է գետնին։ Նա կանգնում է ամբողջ հասակով, շատ բարձրահասակ, շատ հպարտ և կարդում է բանաստեղծություններն իր համար, էջերն արագորեն դարձնելով։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Կատաղորեն)։ *Օ՜, դուք՝ խելագարներ, ողբալի ապուշներ։*

Նստում է գավիթի աստիճաններին և երեսը թաղում ձեռքերի մեջ։ Մի քանի ոտք հետո նա այդ բանաստեղծությունները, որ դրված էին աստիճանների վրա, ոտքով շպրտում է գետնին և նորից վերցնելով առավոտյան լրագիրը, աչքի է անցկացնում խորագրերը։

Նրա ձայնը, որ սկզբում հանդարտ է, բայց մոլեգին, գնալով ուժգնանում է։

Առա՜ջ, սպանեցեք բոլորին, պատերազմ հայտարարեք մեկդ մյուսին։ Ժողովեք մարդկանց հազարներով և հոշոտեք նրանց։ Հոշոտեք նրանց խեղճ սրտերը, նրանց խեղճ հոգիները և նրանց թշվառ մարմինները։ Այլանդակեք նրանց։ Պղծեք նրանց երազները։ Ահաբեկեք նրանց. խեղեցեք նրանց՝ իրար հանդեպ ատելություն բորբոքելով։ Ապականեցեք կյանքի առասպելը, դուք՝ խելագարներ, քանզի ձեր մեծությունը չափվում է ձեր կատարած ավերմունքով։

Ջոնին երևում է տան մոտ, ճոր կողմից անտեսանելի։ Նա տեղում քարացել ճորն է լսում։ Երկինքը սկսում է մթնել։

Դուք՝ աշխարհի նենգամիտներ։ Դուք՝ եղկելիներ և անօրեններ։

Նա ոտքի է կանգնում, մատն ուղղում ասես ընդդեմ աշխարհի։

Առա՜ջ։ Թող որոտան ձեր անզոր թնդանոթները։ Դուք ոչ մի բան չեք կարող սպանել։ (Խաղաղված, ժպտալով)։ *Աշխարհում բանաստեղծներ մի՜շտ կլինեն։*

Լուռ փայլատակում։

Նույն տունը։ Երկինքը խավար է, ինչպես լինում է փոթորկի ժամանակ։ Հանկարծ լսվում է որոտի մի խոր. հեռավոր թնդյուն և երևում է մի սրընթաց փայլակ։ Ջոնիի հայրը զավիթի աստիճաններին կանգնած ժպտում է անմիտ, անմխիթար, ողբերգական ժպիտով։ Շուրջը ամեն ինչ նույնն է. բանաստեղծությունների թերթիկները ընկած են գետնին, ծառը՝ անդաստակի հատակին, լրագիրը՝ նույնպես։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Գլուխը անմտորեն տարուբերելով, անկարող հաշտվելու իրողությանը)։ *Ջո՜նի։* (Դադար, փոքր-ինչ բարձրանալով)։ *Ջո՜նի։* (Դադար։ Այս անգամ ավելի մեղմ)։ *Ջո՜նի։* (Գոռալով)։ *Ջո՜նի։* (Տղան մոտենում է և երկչոտ կանգնում հոր առաջ։ Հայրը վեր է նայում կրակվող աչքերով, կեցվածքը՝ հանդուգն, դառն, համառ, զորավոր)։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Գորովալից, բայց սոսկալի ուժով)։ *Նախանձաշե՞լ ես, Ջոնի։*

ՋՈՆԻ— (Երկչոտությամբ)։ *Ես քաղցած չեմ, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ներս գնա և կեր։*

ՋՈՆԻ— *Քաղցած չեմ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Արա, ինչ ասում եմ։*

ՋՈՆԻ— *Մինչև դու չուտես, ես չեմ ուտի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ես քաղցած չեմ։*

ՋՈՆԻ— *Ես կգնամ պարոն Կոսակի մոտ. տեսնեմ մի բան կարող եմ ճարել։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Նվաստացած, տղայի թեը բռնելով): *Ոչ, Ջոնի։* (Լռում է, ակնհայտորեն աշխատելով դրությունը բացատրող բառեր գտնել): *Ջո՞նի։ Ես կարծում էի, թե մենք մի քիչ փող կստանանք։ Չէի կարծում, որ էսպես կլինի։ Դե, ներս գնա և կեր։*

ՋՈՆԻ— (Աստիճանները բարձրանալով): *Դու էլ պետք է մի բան ուտես։* (Մտնում է տուն):

Փայլակ առանց որոտի:

Գալիս են գրասենյակային աշխատողի հագուստով մի մարդ և մի երիտասարդ ամուսին իր կնոջ հետ, որի գրկին երեխա կա:

ՔԱՆԻՆԳԸՄ— *Սա է տունը։ Վարձը՝ ամսական վեց դոլար։ Այնքան էլ շքեղ չէ, բայց անձրևից ու ցրտից պաշտպանվելու համար լավ է։* (Ջոնիի հայրը նայում է այդ մարդկանց: Նրա հայացքը պաղել է: Քանինգըմը առաջանում է դեպի Ջոնիի հայրը՝ երկարելով ձեռքը, մինչ մյուսները մնում են խմբով կանգնած): *Հիշո՞ւմ եք ինձ։ «Տրրվում է վարձով» ցուցանակը ես փակցրի վերևում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Բարձրանալով): *Հիշում եմ։ Բարև ձեզ։*

ՔԱՆԻՆԳԸՄ— (Շփոթված): *Ը՞հ... Գիտեք ինչ, պարոն Գորին՝ տան տերը, քաղաքում չէ, իսկ այս մարդիկ տուն են որոնում։ Շատ շտապ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Անշուշտ ես կարող եմ ազատել, երբ կամենաք։ Նրանք կահ-կարասի ունե՞ն։*

ՔԱՆԻՆԳԸՄ— (Աղքատ ընտանիքին դառնալով): *Կահ-կարասի ունե՞ք։*

ԱՄՈՒՍԻՆԸ— *Ոչ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Ամուսիններին): *Կարող եք իմը վերցնել։ Շատ բան չկա, բայց գործ կտեսնի։ Մի շատ լավ վառարան ունեմ։*

ԿԻՆԸ— (Աղքատի արժանապատվությամբ): *Մենք չենք ուզում ձեր կահ-կարասին վերցնել։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Բարի։ Ես երեք ամսվա վարձը չեմ վճարել։ Կահ-կարասին կթողնեմ վարձի դիմաց։*

Տները վարձու տվող գործակալը չանում է ինչ-որ բան ասել:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Բան չկա։ Ցավում եմ, որ ես 18 դոլար չունեմ։ Կահ-կարասու արժեքը մոտավորապես այդքան է։ Դուք կարող եք թույլ տալ, որ այս մարդիկ օգտագործեն դրանք, մինչև պարոն Գորին վերադառնա։* (Ամուսիններին): *Ուզո՞ւմ եք տեսնել տունը։*

ԱՄՈՒՍԻՆԸ— *Վատ չի երևում։*

ՔԱՆԻՆԳԸՄ— (Գնալով): *Ուրեմն հարցը լուծված է։* (Այդ մարդկանց): *Վարձը ամսական վեց դոլար է։ Ջուրն էլ հաշված։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Դուք կարող եք տեղափոխվել, երբ կամենաք։*

ԱՄՈՒՍԻՆԸ— *Շատ շնորհակալ ենք։ Մենք կվերադառնանք այսօր իրիկնադեմին կամ վաղը։*

Նրանց գնալու պահին հայտնվում է Ջոնիի ձեռքին մի ափսե, մեջը երկու ջերմ հաց և խաղողի մի փոքրիկ ողկույզ։

ՋՈՆԻ— *Ովքե՞ր էին այդ մարդիկ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Հենց էնպես, անցորդներ էին։*

ՋՈՆԻ— *Ի՞նչ էիք խոսում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Հենց էնպես խոսում էինք, Ջոնի։*

ՋՈՆԻ— (Աղաղակելով, շատ բարկացած)։ *Քեզ ամուր պահիր, պա՜։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Դառնալով և նայելով որդուն սիրով, հրճվանքով, հիացմունքով, խնդությամբ և հանկարծ ծիծաղելով)։ *Ես ոգով ամուր եմ, Ջոնի։ Թող աշխարհը աշխարհ լինի և աստծո սերը ամենուրեք։*

ՋՈՆԻ— (Կատակելով)։ *Լավ, ուրեմն։ Եկ ուտենք։*

Նա ափսեն դնում է սանդուղքի վերևի աստիճանին և նրանք միասին նստելով սկսում են ուտել։ Ուտում են լուռ, իրար նայելով. տղան աչքի պոչով նայում է հորը, ինչպես նայել էր առևին. հայրը նույն կերպ նայում է որդուն։ Տղան սկսում է ժպտալ։ Հայրը նույնպես սկսում է ժպտալ։

ՋՈՆԻ— *Խաղող սիրո՞ւմ ես, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Իհարկե սիրում եմ։*

ՋՈՆԻ— *Պա՞։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ի՞նչ է։*

ՋՈՆԻ— *Իսկապե՞ս դա նման է բանտի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Երբեմն թվում է, թե նման է։ Երբեմն էլ մտածում եմ, որ չի կարող բանտ լինել։*

ՋՈՆԻ— *Ի՞նչը, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Կարծում եմ՝ թե մեկը և թե մյուսը, Ջոնի։ Հասկացա՞ր։ Երկուսն էլ։*

ՋՈՆԻ— *Ես ուրիշ բան եմ ուզում ասել. քո կարծիքն ի՞նչ է, նա տան կարոտը կզգա՞։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Անկասկած կզգա։*

ՋՈՆԻ— *Երանի հետ գար։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Որքա՜ն կուզենայի նորից տեսնել նրան։*

ՋՈՆԻ— *Ես շարունակ նրան եմ հիշում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ես նույնպես։ Եվ միշտ պիտի հիշեմ նրան։*

ՋՈՆԻ— *Ես էլ։ Իսկ նա պարտավո՞ր էր վերադառնալ այնտեղ, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Երևի պարտավոր էր։*

ՋՈՆԻ— *Դուրեկան երիտասարդ էր։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Խոսքդ էն երիտասարդի մասի՞ն է, որ եկավ ու տարավ նրան։*

ՋՈՆԻ— *Հա, դու գիտես։ Էն երիտասարդը, որ այնպես վճռական ձայնով էր խոսում, կարծես ճառում էր ժողովրդին։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Լավ երիտասարդ էր։*

Ափսեի վրա մնացել է խաղողի մի հատիկ։

ՋՈՆԻ— *Վերցրու կեր, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Զվարթացած)։ *Ոչ, դա քո բաժինն է, Ջոնի։ Ես հաշվեցի։*

ՋՈՆԻ— *Շատ լավ, պա։* (Նա վերցնում է խաղողի վերջին հատիկը և ուտում)։ *Դա գողությո՞ւն է, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Զավեշտով)։ *Ոմանք ասում են՝ գողություն է, ոմանք ասում են՝ ոչ։* (Դրամատիկ)։ *Իմ կարծիքով դա գողություն չէ։* (Բղավելով)։ *Վազերի վրայից քաղեցիր, չէ՞։*

ՋՈՆԻ— *Վազերի վրայից քաղեցի, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Զավեշտով)։ *Ուրեմն դա չի կարող գողություն համարվել։*

ՋՈՆԻ— *Իսկ ե՞րբ կարող է գողություն համարվել։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Ձեռքով շարժում անելով, իբրև թե ոչինչ բան է)։ *Իմ պատասխանությամբ, Ջոնի, գողություն է, երբ դու առանց անհրաժեշտության վնաս ես հասցնում և կամ անգթությամբ ես վերաբերվում մի անմեղ էակի ու անարժան կերպով շահ կամ ուժ ես ստանում պրանից։*

ՋՈՆԻ— *Օ՜հ։* (Դադար)։ *Ուրեմն, եթե դա գողություն չի, պա, գնամ մի քիչ էլ քաղեմ։* (Վեր է կենում)։ *Խաղողը շուտով կվերջանա։* (Գնում է)։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Ծիծաղելով, տղայի գնալուց հետո)։ *Որդյակ իմ, Ջո՜նի։ Անտոված իմ, որքա՜ն բախտավոր եմ ես։ Որքա՜ն երանելի։* (Դեռնից վերցնում է բանաստեղծությունների ձեռագիրը, դնում է վերարկուի գրպանը և քայլում է դեպի փողոց)։

Պարոն Կոսակի նպարեղենի խանութը։ Նորից պարոն Կոսակը ճնշած է՝ ձեռքերը գլխի տակ ծալած։ Խանութը ավելի աղքատիկ է թվում, քան առաջ։ Ընտանիքը ակնհայտորեն սպառել է պաշարը։ Ջոնի հայրը կամաց մտնում է խանութ, գրեթե երկչոտությամբ։ Պարոն Կոսակը բարձրացնում է գլուխը, քթում է, աչքերը և կանգնում։

ՀՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Գրեթե հանցավորի պես)։ *Ես Ջոնիի հայրն եմ։*

Երկուսն էլ կանգնած մի պահ նայում են իրար. նրանցից ամեն մեկը և ուրախ է, և շփոթված, և զգացված, և գոհացած, և զայրացած աշխարհի միևնույն բաների՝ ազատության, նենգության, անազնվության, անհավասարության վրա: Նրանք սկսում են ժպտալ և ապա ջերմորեն ձեռք են բռնվում։

ԿՈՍԱԿ— *Ես ձեզ իսկույն ճանաչեցի։ Ջոնին պատմել է ինձ ձեր մասին։ Պատիվ է ինձ համար։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Դուք բարի մարդ եք։*

ԿՈՍԱԿ— *Չգիտեմ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Դանդաղ): *Ես եկել եմ մնաս բարով ասելու։ Ներողություն խնդրելու։ Շնորհակալություն հայտնելու։*

ԿՈՍԱԿ— (Արագ): *Չլինի՞ թե հեռանում եք։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Դժբախտաբար, այո։*

ԿՈՍԱԿ— *Ափսոս, մենք բոլորս պիտի կարոտենք Ջոնիին։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ես փող չունեմ։ Ես ձեզ պարտք եմ։*

ԿՈՍԱԿ— *Այդ ոչինչ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Հնարավոր է, որ էլ չտեսնեմ ձեզ։* (Գրպանից հանում է բանաստեղծությունների ձեռագիրը: Հուժկու): *Ես բանաստեղծ եմ։ Ահա մի քանիսը իմ բանաստեղծություններից։* (Արագ): *Ես դրանք չեմ առաջարկում այն գումարի դիմաց, որ պարտք եմ ձեզ։ Փողի հարցը ուրիշ է։* (Խնդրելով): *Չէի՞ք պահի արդյոք, ձեր արած լավության դիմաց։*

ԿՈՍԱԿ— (Անկեղծորեն): *Ես չեմ կարող ձեր բանաստեղծությունները վերցնել։* (Դադար):

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ես կարծում էի, թե ձեր գործերը հաջող են գնում։*

ԿՈՍԱԿ— *Ժողովուրդը փող չունի։ Չգիտեմ, թե ինչպես եմ նոր մթերք բերելու։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ցավում եմ։*

ԿՈՍԱԿ— *Ձմռանը ավելի դժվար է։ Մթերանոցները փակվում են։ Գործ չկա։ Ես կարող էի մարդկանց մի բան տալ պարտքով, բայց այս ձմեռ փող չունեմ նոր մթերքի համար։ Երևի ստիպված լինեմ խանութը փակել։ Հազիվ ընտանիքիս բավարարի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Զգացված և զայրացած): *Այս բանաստեղծությունները... Թույլ տվեք ասել, որ սրանք իմ ամենալավ գործերն են։ Ես ուզում եմ դրանք թողնել ձեզ մոտ։*

Պարոն Կոսակի դուստր Եսթերը, յոթ տարեկան մի սիրունիկ աղջիկ, ներսի դռնից մանում է խանութ:

ԿՈՍԱԿ— *Սա իմ դուստր Եսթերն է։ Եսթեր, սա Ջոնիի հայրն է։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ջոնին ինձ պատմել է քո մասին։*

ԵՍԹԵՐ— (Ուրախացած, բայց ամաչելով)։ *Բարև ձեզ։*

ԿՈՍԱԿ— *Նրանք էստեղից գնում են։*

ԵՍԹԵՐ— (Ցնցված)։ *Օ՜հ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ջոնին քեզնից բաժանվելու է։*

Աղջկա շուրթերը դողում են։ Աչքերում երևում են արցունքներ։ Նա ետ է դառնում և վազում է խանութից դուրս։

ԿՈՍԱԿ— *Էսպես է միշտ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Երեխաներ են։*

ԿՈՍԱԿ— *Այո, բայց դա էդպես է եղել սկզբից և երբեք չի փոխվում։ Միայն կանայք չեն կարողանում հաշտվել դրան։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Միգուցե այս բանաստեղծությունները կտաք նրան։*

ԿՈՍԱԿ— *Հաճույքով։ Բան չկա, մի քիչ լաց կլինի և վերջ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Վերցրեք։* (Բանաստեղծությունները պարոն Կոսակին տալով)։ *Դուք ինձ բարիք արած կլինեք դրանք ընդունելով։* (Բարձրաձայն, աստծուն և աշխարհին)։ *Այն բանաստեղծությունը, որ չի կարդացվում՝ բանաստեղծություն չէ։ Հնարավոր է, որ ընդամենը մեկ ընթերցողի եմ ես արժանի։ Եթե այդպես է, ես ուզում եմ, որ այդ ընթերցողը դուք լինեք։*

ԿՈՍԱԿ— *Շնորհակալություն։ Ես դրան անարժան եմ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Ծպտալով)։ *Մնաք բարով։*

Ջոնիի հայրը դուրս է գալիս խանութից։ Նպարավաճառը գրպանից հանում է ակնոցը, դնում աչքերին և, խանութի մեջտեղում կանգնած, սկսում է կարդալ, ինքն իր համար, շրթունքները անձայն շարժելով։ Նրա դեմքի արտահայտությունը հետզհետե փոխվում է։ Անձրև է սկսվում։ Փոքրիկ ծաքերը վերադառնում է խանութ։

ԿՈՍԱԿ— (Ցածրաձայն կարդալով բանաստեղծություններից մեկը)։ *Երկրի ընդերքում և հեռու կանաչ ծովերի խորքում, և ապառաժի քար կրծքին կառչած, ես քեզ եմ հիշում, լուսեղեն իմ սեր։ Դու էլ ինձ հիշիր։*

Աղջիկն սկսում է հեկեկալ, հայրը շրջվում է և մոտենում նրան։

Տան սենյակը։ Որոշ ժամանակ անց։ Անձրևը դեռ շարունակվում է։ Ջոնիի հայրը, սեղանի առաջ նստած, աչքի է անցկացնում ձեռագրերի մի շեղջ։ Նա հանախակի վեր է կենում և մոտենում պատուհանին։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ի՞նչ պատահեց նրան։*

Հետ է գնում, աչքի է անցկացնում մի քանի թերթիկ, ջղայնանում է, նետում մի կողմ և նորից գնում դեպի լուսամուտը: Այս սկսում է հետ ու առաջ քայլել, սպասելով:

Վերջապես Ջոնին նայտնվում է գավիթի աստիճանների, ներս է ընկնում և, դուռը հետևից արագորեն փակելով, սողնակը գցում է: Նա շնչասպառ է և վախեցած: Այնպիսի տեսք ունի, ասես հետևից ընկել են: Ձեռքին՝ կարմիր խաղողի չորս ողկույզ, միջին մեծության, վեց հատ սև թուզ և երկու նուռ:

ՋՈՆԻ— (Հուզված և շնչակտուր): *Որտե՞ղ թաքցնեմ սրանք, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ի՞նչ է պատահել, Ջոնի։*

ՋՈՆԻ— *Դու ասեցիր, որ գողություն չի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Կատաղի ջղայնությամբ): *Ճիշտ է, գողություն չի։*

ՋՈՆԻ— *Իսկ ի՞նչ կասես ագարակատիրոջ շան մասին։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ի՞նչ ես խոսում։ Ի՞նչ ագարակատիրոջ շուն։*

ՋՈՆԻ— *Ագարակատիրոջ շունը, որ ինձ հալածեց մինչև էստեղ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Գոռալով): *Շո՞ւն։ Ուզում ես ասել, որ քո հետևից շո՞ւն է ընկել։ Ի՞նչ տեսակ շուն էր։*

ՋՈՆԻ— *Կարգին չկարողացա տեսնեմ, բայց կարծես մեծ շուն լիներ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Սաստիկ զայրացած այդ անավոր նվաստացման համար): *Չլինի՞ էդ ստոր արարածը փորձել է քեզ կծել, Ջոնի։*

ՋՈՆԻ— *Կարծես թե չէ, պա, բայց ամեն րոպե ինձ թվում էր, թե հիմա կկծի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Գոմոռա՞ց վրադ։*

ՋՈՆԻ— *Իսկական գոմոռցի նման չէր։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ուրեմն՝ ի՞նչ եղավ։*

ՋՈՆԻ— *Ես մինչև տուն վազեցի, շունն էլ հետևիցս։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Հիմա ո՞ւր է։*

ՋՈՆԻ— *Դրսում կլինի, պա։ Դու համոզվա՞ծ ես, որ դա գողություն չի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Սաստիկ զայրացած, երեք-չորս հատ խաղող ուտելով): *Անշուշտ, գողություն չի։ Ես կզբաղվեմ այդ շնով։ Ոչ մի մարդ կամ գազան չի կարող քո հորը ահաբեկել, Ջոնի։ Միշտ հիշիր դա։* (Նա զգուշորեն գնում է դեպի լուսամուտը և գողունի նայում է դուրս):

ՋՈՆԻ— *Էնտե՞ղ է, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Դռանը մի փոքրիկ շուն կա, Ջոնի։ Քնած է, կարծեմ։*

ՋՈՆԻ— (Զարմացած վեր ցատկելով): *Էդպես էլ գիտեի, ագարակատիրոջ շունն է, ինձ է սպասում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Մեծ շուն չի, Ջոնի։*

ՋՈՆԻ— *Չա, բայց նրա արածս գողություն է, եթե դա ագարակատիրոջ շունն է, ի՞նչ անենք։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Անտեր փոքրիկ շուն է, Ջոնի։ Իրեն ընկեր է փնտրում, գրազ եմ գալիս։*

ՋՈՆԻ— *Մինչև տուն վազեց հետևիցս։ Համոզվա՞ծ ես, որ տեր չունի, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Հաստատ համոզված եմ, Ջոնի։ Իզուր չէ, որ բանաստեղծ եմ։ Ես կյանքը հասկանում եմ։* (Շունը սկսում է գռմռալ և հաչել: Ջոնիի հայրը վախեցած հետ է ցատկում պատուհանից: Ջոնին լարված, պապանձված ականջ է դնում):

ՋՈՆԻ— (Շշնջալով): *Էդ ի՞նչ է, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Կարծեմ մարդ է գալիս։*

ՋՈՆԻ— *Տեսա՞ր, պա, գողություն է։ Ագարակատերը կլինի։*

Նա վազում է դեպի սեղանը և մրգերը շտապ հավաքում: Վազելով ներս է ընկնում տատը:

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ— (Հայերեն): *Էդ ի՞նչ իրարանցում է էս անձրևոցին։*

Ջոնին մրգերը սենյակից դուրս է տանում: Վերադառնում է սատտիկ տագնապահար: Շունը դեռ շարունակում է գռմռալ և հաչել: Ջոնիի հայրն ավելի տագնապահար է, քան թե Ջոնին:

ՋՈՆԻ— *Գրողը տանի, պա։ Ա՜յ թե պատմության մեջ ընկանք։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ինչպե՞ս կուզեի ծխել։*

ՋՈՆԻ— (Հոր համար մտահոգված, հայերենով՝ իր տատին): *Ներսը ջաղարա կա՞։*

Ջոնիի տատը վազում է մյուս սենյակը: Շան գռմռոցը դադարում է:

ՋՈՆԻ— *Տեսա՞ր, պա։ Ագարակատերն է։ Որտե՞ղ թաքնվեմ։ Դուռը բաց չանես։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Դուռը բա՞ց անեմ։ Օգնիր սեղանը քաշենք դռան առաջ։*

Նրանք սեղանը հրելով դեմ են տալիս դռանը և կամացուկ վերադառնում սենյակի մեջտեղը: Ջոնիի տատը շտապով հետ է գալիս, բերելով մի ծխախոտ և լուցկի: Դրանք տալիս է Ջոնիի հորը, հա վառում է ծխախոտը, խոր քաշում է ծխում և շտկվում՝ կանգնում է:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Դրամատիկ): *Պտուղը ես եմ քաղել, հասկացա՞ր, Ջոնի։*

ՋՈՆԻ— *Դուռը բաց չանես, պա։*

Ջոնիի հայրը վերցնում է մի աթոռակ և կամաց դնում է սեղանի վրա, դռան դեմ, որ ավելի ծանր լինի: Ջոնին մի աթոռ է դնում սեղանին: Պատավը դնում է մի անոթ: Ջոնիի հայրը այդ պատնեշի վրա ավելացնում է երեք գիրք: Քանի դեռ թակոցը շարունակվում է, նրանք հետզհետե տան ամբողջ կահկարասին բերում ու դեմ են տալիս դռանը:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Մի վախենա, Ջոնի։*

ՋՈՆԻ— *Նա չի կարող ներս մտնել, չէ՞, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Չեմ կարծում։* (Տատը, հայրը և որդին կանգնած են մեկտեղ դատարկ սենյակում՝ աշխարհին դիմադիր)։

Երկարատև դադար, սոսկալի վախով և կատաղի դիմադրությամբ լի։ Ապա լռությունը խզվում է։ Լսվում է շեփորով մենանվագ՝ «Իմ սիրտը լեռներում է» երգը։ Արևը դուրս է գալիս։

ՋՈՆԻ— (Ցնծագին աղաղակում է)։ *Պարոն Մեք-Գրեգո՞ր է։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Վազում է դեպի լուսամուտը, բացում է և բղավում)։ *Բարի գալո՞ւստ, պարոն Մեք-Գրեգոր։ Ջոնի, կահ-կարասին տեղը տար։*

Ջոնիի հայրը վերադառնալով օգնում է Ջոնիին և նրա տատին՝ կահ-կարասին վերադասավորելու։ Վերջապես ամեն արգելք ճեռացված է։ Ջոնիի հայրը շրխկոցով բաց է անում դուռը։ Շեփորելով ներս է մտնում Ջասպեր Մեք-Գրեգորը, շունը առջևից։ Շունը մի շատ փոքրիկ փողոցային լակոտ է, աշխուժորեն վազվզում է, սաստիկ հուզված է։ Մեք-Գրեգորի աչքերը լի են տխրությամբ և ուրախությամբ։ Ջոնին վազում է խոհանոց, բերում է խաղող՝ ափսեի մեջ և մի սափոր ջուր։ Մեք-Գրեգորը ավարտում է մենանվագը։ Մի պահ բոլորը քար լռություն են պահպանում, նմանապես և շունը։ Ջոնին Մեք-Գրեգորին առաջարկում է սափորով ջուր։

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Հոգնած)։ *Հիմա ժամանակը չէ, Ջոնի։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Բարի գալուստ, բարեկամս։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Փախա այնտեղից։ Նրանք հիմա փնտրում են ինձ, բայց ես չեմ ուզում հետ գնալ։ Նրանք գողացան իմ շեփորը։ Նրանք ուզում էին ինձ գամել անկողնին։ Ասացին, որ ես հիվանդ եմ։ Ես հիվանդ չեմ։ Ես ծեր եմ։ Ես գիտեմ, որ երկրային օրերս հաշված են։ Ես ուզում եմ այդ օրերը ձեզ հետ անցկացնել։ Թույլ մի տաք, որ նրանք ինձ հետ տանեն։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Թույլ չեմ տա։* (Աքոռ է մատուցում ծերուկին)։ *Նստեցեք, խնդրեմ։* (Ամենքը նստում են։ Մեք-Գրեգորը մեկ առ մեկ նայում է բոլորին)։

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Ինչքան լավ է, որ ձեզ տեսնում եմ նորից։*

ՋՈՆԻ— *Ձեր սիրտը դարձյալ լեռներո՞ւմ է։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Գլխով է անում)։ *Լեռներում է, տղաս։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Բարկացած)։ *Ջո՛նի։*

ՋՈՆԻ— (Նեղացած)։ *Ի՞նչ է։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Բերանդ փակիր։*

ՋՈՆԻ *Ինչո՞ւ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ինչո՞ւ։ Ի՞նչ հս հիմար-հիմար մեջ ընկնում։ Չե՞ս տեսնում, որ պարոն Մեք-Գրեգորը հոգնած է։*

ՋՈՆԻ— (Մեֆ-Գրեգորին): *Հոգնա՞ծ հք։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Մայրդ որտե՞ղ է, տղաս։*

ՋՈՆԻ— *Մեռած է։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Համարյա թե ինքն իրեն): *Մեռած չէ, Ջոնի։* (Օրորում է գլուխը): *Լեռներում է։*

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ— (Ջոնիի հորը): *Ի՞նչ կըսե։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Օրորելով գլուխը): *Ոչինչ։* (Մեֆ-Գրեգորին): *Ուտել չե՞ք ուզում։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Նայելով ափսեին): *Մի հատիկ խաղող։ Ավելին պետք չէ։* (Նա խաղողի ողկույզից մի հատիկ պոկելով գցում է բերանը: Հանկարծ շրջվում է, ցնցված)։ *Գալի՞ս են։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Մի վախենաք, բարեկամս, պառկեք և հանգստացեք։*

Ջոնիի հայրը ծերունուն տանում է դեպի թախտը: Ծերունին պառկում է մեջքի վրա: Ջոնիի հայրը վերադառնում է սեղանի մոտ: Ոչ ոք չի ուտում: Հանկարծ ծերունին տեղից վեր է թռչում: Ոչինչ չի պատահել: Նա թախտից վեր է կենում և վերադառնում է սեղանի մոտ:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Դուք չեք թողնի, որ նրանք ինձ տանեն, չէ՞։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ոչ մի դեպքում։* (Ճեղքում է մի նուռ և կեսը մեկնում Մեֆ-Գրեգորին): *Գոնե մի բան կերեք։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Շնորհակալ եմ, բարեկամս։* (Մի քիչ նուռ է ուտում):

Դուռը բախում են: Մեֆ-Գրեգորը կատաղած վեր է ցատկում:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Գոռալով): *Դուք ինձ հետ չե՞ք տանի։ Զգուշացնում եմ։ Ես կընկնեմ ու կմեռնեմ։ Իմ տեղը այս մարդկանց հետ է։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Ահաբեկված): *Բանա՞նք դուռը։*

ՋՈՆԻ— (Նույնպես ահաբեկված): *Ի՞նչ անենք։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Հուժկու): *Իհարկե բանանք։* (Մոտենում ու բաց է անում դուռը: Ատաղձագործ Ռուֆ էպլին է: Նա փոքր-ինչ ցնցված է Մեֆ-Գրեգորի կատաղությունից):

ՌՈՒՖ ԷՊԼԻ— *Բարև ձեզ, պարոն Մեք-Գրեգոր։*

ՋՈՆԻ— *Ո՞վ է։*

ՌՈՒՖ ԷՊԼԻ— *Ռուֆ էպլին է։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Բարև, Ռուֆ։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Շեմքին): *Ներս մտիր, Ռուֆ։*

Ռուֆը մտնում է ներս: Նա ծերին ունի հաց, երշիկ, երկու ձու։

ՌՈՒԹ ԷՊԼԻ— *Տանը նստած էի, երբ նորից լսեցի այդ երգը։ Հաստատ համոզված էի, որ պարոն Մեք-Գրեգորն է։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Շատ ուրախ եմ, որ ինձ հիշել եք։*

ՌՈՒԹ ԷՊԼԻ— *Ոչ ոք չի կարող մոռանալ այդ երգը, պարոն Մեք-Գրեգոր։ Մի քանի բան եմ բերել։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Թերածը վերցնելով և դնելով սեղանին)։ *Շնորհակալ եմ, բարեկամս, շնորհակալ եմ։*

Դուռը վերստին բախում են։ Հեռագրալարեր նորոգող բանվոր Սեմ Ուոլեսն է, հագին՝ աշխատանքային լայն կոմբինեզոն, որի վրա չորս կողմից գործիքներ են կախված, սրունքների շուրջը՝ հեռագրալարեր, փոկեր։ Հետը բերել է պանիր, պոմիդոր և բողկ։

ՈՒՈԼԵՍ— *Ես գիտեի, որ պարոն Մեք-Գրեգորն է։ Ինձ ու ինձ ասացի. մի քիչ ուտելիք տանեմ։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Սա իսկապես հաճելի անակնկալ է։*

ՌՈՒԹ ԷՊԼԻ— (Երևում է, որ ինչ-որ բան է ուզում ասել, բայց դժվարանում է)։ *Ա՜հ, պարոն Մեք-Գրեգոր...*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— *Ի՞նչ կա, բարեկամս, համարձակ խոսիր։ Ես պարզ մարդ եմ և ոչնչով չեմ տարբերվում քեզնից։*

ՌՈՒԹ ԷՊԼԻ— *Քեննիս իր ընտանիքով կանգնած են դրսում։ Ուզում են ձեր նվագը նորից լսել։ Մի քանի ուրիշ մարդիկ էլ կան։*

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Շոյված)։ *Իհարկե կնվագեմ։ Ութսունն անց եմ և շուտով չվելու եմ աշխարհից։ Գնալուց առաջ ուզում եմ դառնալ ձեր մասը, որ ապրելու եք իմ մահից հետո։ Երեխանե՞րը էլ կան դրսում։*

ՌՈՒԹ ԷՊԼԻ— *Յոթը։ Քեննիս պստիկներն են։*

Ներս են մտնում հարևաններից ևս մի քանի հոգի՝ ուտելիքով։ Մեք-Գրեգորը վերցնում է շեփորը։ Բոլորը, բացի Ջոնիի հորից, հետևում են նրան՝ սենյակից դեպի գավիթ ելնելով։ Մեք-Գրեգորն սկսում է նվագել նույն երգը։ Այս անգամ նա շատ է ծերացած ու թույլ իր շեփորը առաջվա պես հնչեցնելու համար, բայց իր ուժից եկածն անում է ու ավարտում մենանվագը։ Ջոնիի հայրը գնում-գալիս է սենյակում՝ մեկ ժպտալով, մեկ խոժոռվելով։ Այս տեղը նրա սրտովն է։ Կամաց բացվում է խոհանոցի դուռը և Եսթեր Կոսակը երևում է շեմքին։ Ջոնիի հայրը շրջվում և տեսնում է նրան։ Աղջիկն այլևս լաց չի լինում։ Նա ինչ-որ բան ունի պահած իր բռում։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Հանդարտ)։ *Բարև, Եսթեր։*

ԵՍԹԵՐ— *Ջոնին ո՞ւր է։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Գնամ գտնեմ նրան։* (Գնում է դեպի գավիթը։ Աղջիկը սպասում է տխուր ու միայնակ։ Մի րոպե հետո ներս է խուժում

Ջոնին, սաստիկ հուզված, բայց իսկույն խաղաղվում է, երբ զգում է աղջկա տրամադրությունը)։

ՋՈՆԻ— *Բարև, Եսթեր։*

ԵՍԹԵՐ— *Բարև, Ջոնի։*

ՋՈՆԻ— *Ի՞նչ է պատահել։*

ԵՍԹԵՐ— *Հայրս ինձ համար կարդաց այդ բանաստեղծությունները։*

ՋՈՆԻ— *Ի՞նչ։*

ԵՍԹԵՐ— (Բուռը բանալով)։ *Վերցրու։ Իմ ունեցածը սա է։* (Ջոնին վերցնում է մի բուռ մանրադրամ)։ *Ծննդյան տոների համար էի հավաքել։* (Լացը գալիս է։ Շրջվում և վազում է դուրս)։

ՋՈՆԻ— (Սաստիկ ազդված և մոլեգին, զգալով մի ինչ-որ և՛ խոր, և՛ գեղեցիկ, և՛ անավոր բան)։ *Սո՞ւրբ Մովսես։* (Նրա դեմքը ստանում է պատանեկան ցավի ողբերգական արտահայտություն, և նա սկսում է լաց լինել։ Դրամները պատովն է տալիս և վայր է փռվում ճեկեկալով)։ *Սա ո՞ւմ է պետք, գրողը տանի։* (Ջոնիի հայրը վերադառնում է)։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— (Մոտենալով)։ *Ջո՞նի։*

ՋՈՆԻ— (Հեկեկալով և բարկացած)։ *Եսթերն ինձ փող էր բերել։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Լաց լինելը օգուտ չունի, Ջոնի։*

ՋՈՆԻ— (Վեր ցատկելով)։ *Ո՞վ է լաց լինում։* (Հեկեկում է ավելի դառնագին)։

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Գնա երեսդ լվա։ Իզուր բան է։*

ՋՈՆԻ— (Գնալով)։ *Ինչ-որ տեղ մի բան սխալ է, պա։* (Մեֆ-Գրեգորը վերջացնում է մենանվագը, մարդիկ կանգնած են լուռ՝ ակնածանքով, այն գիտակցությամբ, որ մի բան սխալ է։ Լսվում է Մեֆ-Գրեգորի ձայնը)։

ՄԵՖ-ԳՐԵԳՈՐ— (Ուժասպառ)։ *Տարինե՞ր, բարեկամներս... Ես հասել եմ նրանց վերջին սահմանին։ Ցավում եմ, որ էլ չեմ կարող նվագել ձեզ համար։ Շնորհակալություն։ Շնորհակալություն։*

Ջոնիի հայրը հետ ու առաջ է անում սենյակում։ Նստում է սեղանի մոտ, նայում ուտելիքին։ Մեֆ-Գրեգորը և Ջոնիի տատը վերադառնալով նստում են սեղան։ Շուռը պառկած է մի անկյունում։

ՄԵՖ-ԳՐԵԳՈՐ— (Բարձրացնելով սափորը՝ խմում է մի քիչ)։ *Նրանք չէին թողնում, որ նվագեմ։* (Մի քիչ էլ է խմում)։ *Նրանք գողացան իմ շեփորը։ Ասին, որ ես հիվանդ եմ։ Ես ցուլի պես առողջ ու պինդ եմ։ Եթե եկան ինձ տանելու, կձևացնեմ, որ մեռնում եմ։ Ես կխաղամ Լիր Արքայի մահվան տեսարանը։ Ես կխաղամ բոլոր տեսարանները մահվան։*

Ջոնին վերադառնում է լրջադեմ։ Բոլորով հավաքված են սեղանի շուրջը։ Բացի տատից ոչ ոք չի կարողանում հաց ուտել։ Երկար լռություն։ Տատը դադարում է ուտելուց։

ՋՈՆԻՆ ՏԱՏԸ— *Ի՞նչ եղավ։ Հորի՞ համալ տրտմեցիք։* (Մեք-Գրեգորը ատամի է կանգնում)։

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ— (Արտասանում է՝ վերհիշելով Շեքսպիրի տողերը և հնարելով մի քանիսը իրենից)։

Փչեք, խենթ հողմեր, փչեք, մինչև ձեր այտերը պայթեն։
Կատաղե՛ք, փչե՛ք։
Դուք հեղեղատներ և փոթորիկներ ճայթեցեք թափով,
Ջրով ծածկեցեք աշտարակներն ու հողմացույցները.
Ծծմբաբոցեր, որ սլանում եք մտքերից արագ,
Կաղնահեղձ շանթի դուք սուրհանդակներ,
Եկե՛ք խանձեցեք սպիտակ գլուխս։
Թնդա՛ ողջ ձայնով. ժայթքի՛ր դու կրակ, տարափի՛ր անձրև,
Չեմ տվել ես ձեզ թագավորություն, չեմ կոչել զավակ,
Կանգնած եմ այստեղ, ձեր ստրուկն եմ ես։
Մի թըշվառ, տկար, անարգված ծերուկ։
Լինե՞լ, թե չլինել...

Ղրեգորեն։

Լինե՛լ, լինե՛լ։
Ինչպե՞ս, խեղկատա՞կ։ Բախտից ծանակվա՞ծ,
Դուրս նետված տնից,
Հայրենի ծխից ու սիրուց մերժված։
Իմ դեմ առավել հանցանք է գործված,
Քան թե գործել եմ։
Զե՛նք, զե՛նք։ Սո՛ւր վերցրեք, կրա՛կ։
Ավերեք տեղը։ Փոքրիկ շները հաչում են վրաս,
Թրեն, Բլանչը և Անուշակը։ Տեսե՛ք՝ հաչում են։
Բայց սա շավիղն է խելագարության, դուրս գամ դրանից,
Քավ է։ Թողնենք այդ։ Խելքս մաղում է։

Ջոնին մոտենում է նրան, ծունկի է իջնում։

Մոտեցիր, տղաս։ Ինչպե՞ս ես, տղաս։ Ինչպե՞ս, դու սառն ես։
Ինձ մենակ թողեք։ Մի՛ պայթիր, սիրտ իմ,
Իմ խեղկատակը, ավա՛ղ, կախված է։
Ոչ ոչ՝ չի շնչում։
Ինչո՞ւ ապրում են ձին, շունը, մուկը,
Իսկ դու չես ապրում։

Դու էլ հետ չես գա։
Երբեք չես դառնա, օ, երբե՜ք, երբե՜ք։

Արձակիր խնդրեմ, ա՜յ, այս կոճակը։ Շնորհակալ եմ։

Շեփորն առչեր պահած։

Տեսնո՞ւմ եք, պարոն։ Դեմքին նայեցեք, տեսեք շուրթերը։
Այնտե՛ղ նայեցեք, այնտե՛ղ նայեցեք։

Մեֆ-Գրեգորի արտասանության միջոցին Ջոնին վերադառնում է դեպի բաց-ված դռամները և ճատակից մեկ առ մեկ վերցնելով՝ նայում է դրանց։

Սենյակում բար լռություն է։ Փողոցից լսվում է ձիակառքի մոտենալը, ապա ոտնաձայներ նախագավթում և դռան թակոց։ Ջոնիի հայրը գնում է դեպի դուռը։ Եկողներն են. Ֆիլիպ Կարմայքլը և երկու պահակ՝ ծերանոցից։ Պահակները մնում են շեմին։

ԿԱՐՄԱՅՔԼ— *Նրա շեփորի ձայնն առանք։ Նա շատ տկար է։ Եկել ենք հետ տանելու։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ներս համեցեք, խնդրեմ։* (Կարմայքլը մոտենում է Մեֆ-Գրեգորին)։ *Պարոն Մեք-Գրեգոր։* (Պատասխան չկա։ Բարձրաձայն)։ *Պարոն Մեք-Գրեգոր։* (Ավելի մոտ գալով)։ *Պարոն Մեք-Գրեգոր։ Պարոն Մեք...*

Կարմայքլը դիմում է դեպի Մեֆ-Գրեգորը և գնում է նրան։

ԿԱՐՄԱՅՔԼ— *Մեռած է։*

ՋՈՆԻ— *Ոչ, ճիշտ չէ։ Նա դեր էր խաղում...*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Վկա է աստված, նա մեր ժամանակի շեքսպիրյան ամենամեծ դերասանն էր։*

ԿԱՐՄԱՅՔԼ— *Ցավում եմ, որ այդ բանը այստեղ պատահեց։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Իսկ ինչո՞ւ ոչ։ Ինչո՞ւ չպետք է այստեղ կատարվեր։ Սա հենց այն տեղն է, ուր ինքը ուզում էր մեռնել։*

ՋՈՆԻ— *Նա խաղում էր, պա։ Նա մեռած չէ։* (Մոտենալով Մեֆ-Գրեգորին)։ *Դուք մեռա՞ծ եք, պարոն Մեք-Գրեգոր։*

Հասկանալի է, որ պատասխան չկա։

ԿԱՐՄԱՅՔԼ— *Մենք պետք է տանենք նրան։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Ահա իր շեփորը։ Հետը դրեք։*

Ջոնիի հայրը բարձրացնում է Մեֆ-Գրեգորին և տանում է դուրս։ Պահակ-ները նրան հանում են փողոց։ Իրիկնադեմի արևալույսը ծավալվելով ստանում է նույն ուժգնությունը, ինչպես պիեսի սկզբում էր։ Ձիակառքը հեռանում է։ Մի պահ տիրում է արտասովոր լռություն, ապա հեռվից լսվում է մենավոր շեփորի

բույլ ձայնը: Դուռը ծեծում են: Ջոնի հայրը բաց է անում՝ երիտասարդ ամուսինն է կնոջ հետ, սրա ձեռքին լացող երեխան: Նրանք մտնում են ներս:

ԿԻՆԸ— *Էս երեխան հոգիս հանեց, քնել է ուզում։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Տունը պատրաստ է։* (Ջոնիին): *Մանրուքներդ հավաքիր։* (Մորը՝ հայերենով): *Հայդե, կերթանք, մարե։*

Նա անկողնու տակից դուրս է քաշում մի հարդե տոպրակ, որի մեջ գցում է իր բանաստեղծությունները, գրքերը, ծրարները, մի հաց և ուտելիքի մյուս մնացորդները: Ջոնիի տատը շալ է գցում գլխին և ուսերին: Ջոնին իր բոլոր մանրուքները թողնում է տանը: Վերցնում է միայն մի բուռ մանր դրամը: Երեխան ձայնը կտրում է: Շունը գնում է Ջոնիի հետևից: Նվագը հետզհետե ավելի ուժեղ է հնչում:

ԱՄՈՒՍԻՆԸ— *Շատ շնորհակալ ենք ձեզնից։*

ԿԻՆԸ— *Տեղ ունե՞ք գնալու։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Այո, ունենք։ Մնաք բարով։*

ԱՄՈՒՍԻՆԸ ԵՎ ԿԻՆԸ— *Գնաք բարով։* (Նրանք տնից ելնելով իջնում են փողոց):

ՋՈՆԻ— *Մենք ո՞ր գրողի ծոցն ենք գնում, պա։*

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ— *Դու մի մտահոգվիր, Ջոնի։ Դու միայն ինձ հետևիր։*

ՋՈՆԻ— *Ես ոչ մեկի անունը չեմ տալիս, պա, բայց ինչ-որ տեղ մի բան սխալ է։*

Նվագը գնալով ավելի ուժգին է հնչում: Նրանք լուռ հեռանում են փողոցով:

ՔՈ ԿՅԱՆՔԻ ԺԱՄԵՐԸ

Կյանքիդ ժամերն ապրիր այնպես, որ այդ քաղցրը ժամերին ոչ քեզ, ոչ էլ կողքիդ ապրողներին չդիպչեն ապականությունն ու մահը: Ամենուրեք փնտրիր բարին ու հենց հայտնաբերես, հանիր լույս աշխարհ իր թաքստոցից, թող բարությունը լինի անկաշկանդ ու չամաչի ինքն իրենից: Աչքի լույսի պես պահիր, փայփայիր մարդկայնության ամենաչնչին նշույլներն անգամ, քանի որ դա է ընդդիմանում մահվանը, թեև անցավոր է: Ամեն ինչի մեջ գտիր լուսավորը, այն, ինչ չի կարող արատավորվել: Եթե մեկնումեկի սրտում առաքինությունը պահ է մտել անով ու կսկիծով՝ արայ աշխարհի ծաղր ու ծանակից մաքրապուրծ եղած, քաջալերիր նրան: Մի խաբվիր արտաքին տպավորությամբ, որովհետև դա վայել չէ պայծառատես աչք ու բարի սիրտ ունեցողին: Ոչ մեկին մի ենթարկվիր, բայց և ոչ մեկին էլ քեզ մի ենթարկիր: Հիշիր, որ ամեն մարդ քո նմանակն է: Ամեն մեկի մեղքը նաև քո մեղքն է, և բոլոր անմեղներն իրենց անմեղությունը կիսում են քեզ հետ: Արհամարհիր չարիքն ու անազնվությունը, բայց ոչ չար ու անազնիվ մարդկանց. հասկացիր սա: Մի ամաչիր բարի ու քնքուշ լինել, բայց հենց որ կյանքիդ որևէ ժամին վրա հասնի սպանություն գործելու պահը, գործիր այդ սպանությունն ու մի զղջա: Կյանքիդ ժամերն ապրիր այնպես, որ քեզ բաժին ընկած ժամերին չավելացնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ժպիտով ընդունես նրա անսահման լույսն ու խորհուրդը:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Ջո— *պարապ երիտասարդ, որ փողի տեր է ու սիրտն էլ՝ բարի*
Թոմ— *նրա երկրպագուն, սանը, կամակատարը, աջ ձեռքն ու բարեկամը*
Քիթի Դյուվալ— *ջահել կին, որ հիշելու շատ բան ունի*
Նիֆ— *պանդոկապան, որի պանդոկը կոչվում է «Նիքի բար, ռեստորան և զվարճավայր»*
Արաբ— *արևելքցի փիլիսոփա և շրթհարմոնահար*
Քիտ Քարսոն— *ծերուկ, որ ասես հնդկացիների դեմ կռված լեգենդար հերոս Քիտ Քարսոնը լինի*
Մաffարթի— *խելոք ու շատ կարդացած նավաբեռնակիր*
Քրափ— *նրա մանկության ընկերը, նավահանգստի ոստիկան, որ ատելով ատում է իր աշխատանքը, բայց չգիտի, թե դրա փոխարեն ինչով զբաղվի*
Հարի— *դոփապարի բնածին վարպետ, որ ուզում է զվարճացնել մարդկանց, բայց չի կարողանում*
Ռեսլի— *սևամորթ պատանի, որ դաշնամուրով նվագում է պարզ ու հասարակ, թախծալի բուգի-վուգի*
Դաղլի— *սիրահարված երիտասարդ*
Էլսի— *նրա սիրած աղջիկը, հիվանդապահուհի*
Լարին— *անհրապույր կին*
Մերի Լ.— *արտակարգ գեղեցիկ ու արժանավոր, թեև դժբախտ կին*
Ռիլի— *գնդիկախաղի մոլի սիրահար*
Բիլ— *սրիկա*
Նիֆի մայրը
Առաջին պոռնիկ
Երկրորդ պոռնիկ
Առաջին ոստիկան
Երկրորդ ոստիկան
Նավատի

Բարձրաշխարհիկ պարոն
Բարձրաշխարհիկ տիկին
Հարբեցող
Լրագրավաճառ աղա
Անն — *Նիքի դուստրը*

Գործողության վայրը՝

«Նիքի բար, ռեստորան և զվարճավայր» պանդոկը Սան Ֆրանցիսկոյի Փասիֆիք փողոցում, էմբարկադերոյի փեշին, պայմանականորեն պատկերված կացարան՝ 21-րդ սենյակը «Նյու Յորք» հյուրանոցի վերնահարկում։

Ժամանակը՝

1939 թվականի հոկտեմբերյան մի օրվա ցերեկն ու երեկոյան։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Նիֆի պանդոկը Սան Ֆրանցիսկոյի ծովափնյա գվարճարաններից է, զուտ ամերիկյան ոճի մի ժամանցավայր:

Սեղաններից մեկի մոտ նստած է Ջոն՝ սովորականի պես հանգիստ, սովորականի պես խաղաղ, սովորականի պես խոկուն, սովորականի պես տոչոր, սովորականի պես ձանձրույթին գերի, սովորականի պես ինքնավստահությամբ լի: Հագնված է ընտիր, բայց պատանու նման անփույթ, մի բան, որ նրան գրեթե տղայի կերպարանք է տալիս: Նստել է, մտքերով ընկել:

Վանառասեղանի հետևում կանգնած է Նիֆը. սա իտալական ծագումով ամերիկացի է, մի բարձրահասակ, շիկահեր երիտասարդ. աջ բազկի ներսի կողմը ճսկայամարմին մերկ կին է կարմիրով դաջված: Նիֆն ուսումնասիրում է ձիարշավի ծրագիրը:

Վանառասեղանի վերջում՝ իր մշտական տեղում, նստած է Առաքը, մի վտիտ ծերուկ, ի հիշատակ իր հայրենիքի՝ ծայրերը դեպի վեր ոլորած բեղով, որը նրան մի տեսակ վայրագ տեսք է տալիս: Ձախ ձեռքի բթամատի ու ցուցամատի արանքում դրոշմված է մահմեդական նշան՝ իբրև վկայություն, որ նա ուխտի է գնացել Մեքքա: Առաքը կում-կում գարեջուր է խմում:

Առավոտյան ժամը տասնմեկն անց կեսի կողմն է: Սեմը՝ պանդոկի սպասավորը, զբաղված է ավելլ-մաքրելով: Երևում է միայն նրա քիկունքը: Նա անհետանում է խոհանոցում: Վանառասեղանին կոթնած Նավաստին դատարկում է բաժակն ու հեռանում այնպիսի մտախոհ քայլերով, ասես նգնում է պարզել կյանքի իմաստը:

Ներս է մտնում Լրագրավաճառ տղան:

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— (Կենսուրախ): *Բարի լույս բոլորին:*

Ոչ մի պատասխան:

(Նիֆին): *Թերթ չե՞ք ուզում, միստր:*

Նիֆը տարուբերում է գլուխը՝ ոչ:

(Մոտենում է Ջոյին): *Թերթ, միստր:*

Ջոն տարուբերում է գլուխը՝ ոչ: Տղան, քերքերը հաշվելով, ուղղվում է դռան կողմը:

ՋՈ— (Սթափվելով): *Քանի՞ հատ ունես։*
ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— *Հինգ։*

Ջոն մի քսանհինգ սենթանոց է մեկնում նրան, վերցնում բոլոր թերթերը, սրտնեղած աչքի անցկացնում վերնագրերն ու թերթերը մի կողմ շպրտում:

ԱՐԱԲ— (Վերցնում է թերթերից մեկը, նայում վերնագրերը, գլուխն օրորում, կարծես մերժելով ուրիշ ամեն ինչ, որ կարելի է ասել աշխարհի մասին): *Քարը քարին չի մնում։ Ինչ որ կա չկա, կորչում է, գնում։*

Մտնում է Հարբեցողը: Մոտենում է հեռախոսին, պրպտում արտահան խորշը պատահաբար մնացած հինգ սենթանոց գտնելու հույսով, հետո նստում Ջոյի սեղանին: Վրա է հասնում Նիքը, դուրս տանում նրան: Հարբեցողը հետ է գալիս:

ՀԱՐԲԵՑՈՂ— (Քաղաքացիական իրավունքների ջատագովի պես): *Սա ազատ երկի՞ր է, թե՞ ինչ է։*

Ճոճադռներից ներս է սուրում Ուիլին և միմոսի նման տնկում աջ ձեռքի ցուցամատը, որ նշանակում է, թե մի բաժակ գարեջուր է ուզում: Նա շատ ջահել է, քսան տարեկանից ավել չի լինի: Հագին ծանր կոշիկներ են, հին ու կեղտոտ վելվետե շալվար, բաց կանաչ գույնի վզով սվիտր՝ կրծքին խոշորագիր «F», թվիդե երկկոճականի պիջակ, որ վրայով մեծ է և բոլորքը հետ ծալած լայնեզր գլխարկ: Նիքը մի բաժակ գարեջուր է հրամցնում, նա գլուխն է քաշում, հաճույքից փնչալով՝ նմլկոտում, դեմքին ծանրումեծ արտահայտություն տված՝ մի մատով հրաժեշտի նշան անում Նիքին և պարմացած ու ոգի առած դիմում դռան կողմը։ Գնդիկախաղի մեքենայի կողքով անցնելիս, հանկարծ վարանում է, շուռ գալիս, զննում տեխնիկայի այդ հնարակերտ գյուտը, մի շարժում է անում, կարծես ուզում է ասել՝ չէ՛, չէ՛, ոչ մի դեպքում: Շրջվում է, որ գնա, ոտքը կախ է գցում, հետ դառնում խաղամեքենայի մոտ, նայում է, տնտղում, մի բուռ մանրոն է հանում շալվարի գրպանից, ջոկջկում-գտնում մի հինգ սենթանոց, ձեռքը թափ է տալիս, այսինքն թե՝ մի անգամ կարելի է փորձել, ինչ ուզում է լինի։ Մետաղադրամը գցում է խաղամեքենայի ներքը, սեղմում լծակը, ականջ դնում մեքենայի հանած հետաքրքրաշարժ աղմուկին:

ՆԻՔ— *Դու էդ մեքենայի հախից եկողը չես։*
Ուիլի— *Ճի՞շտ։*

Գնդիկները գլոր-գլոր շաղ են գալիս ու շարվում են իրենց տեղում: Ուիլին նորից է սեղմում լծակը և գնդիկներից մեկը ելման դիրքի բերում: Նա խոր շունչ է քաշում, ասես կենաց ու մահու կռվի պատրաստվում՝ մոտալուտ մեծ դրամայի կանխազգացումով համակված։ Զգվում է, զգաստանում, շիտակ ու երկյուղած է մրցամարտի շեմին։ Պիտի կռիվ տա մեքենայի դեմ: Պիտի մենամարտի

կանչի ճակատագրին: Նրա բաշությունն ու ճարպկությունը չափվելու են Ամերիկայի նորաբուխ հրաշքների արդյունաբերության հենգ ու խորամանկ անպարարության հետ, նրան մարտահրավեր նետած ողջ աշխարհի հետ: Ուիլիսն ամերիկյան պիոներների վերջին մոհիկանն է, որ կռվելու էլ ոչ մի թշնամի չունի, բացի խաղամեքենայից և ոչ մի հատուցում չի ստանալու, բացի առկայծող լույսերից ու վեց պղնձադրամից՝ իր զոհաբերած մեկի փոխարեն: Նրա դեմ-դիմաց վերջին չեմպիոնն է՝ խաղամեքենան: Իսկ նա վերջին մրցակիցն է՝ այդ կոչման վերջին հավակնորդը, մի երիտասարդ, որ այս աշխարհում ոչ մի անելիք չունի: Ուիլիսն կամացուկ սեղմում է բռնակը, ծանրութեթև անում իրադրությունը, բռնակը հետ է քաշում, մի վայրկյան ձեռքը վրան դրած պահում, ապա բաց թողնում: Առաջին գնդիկը տեղից պոկվելով՝ սկսում է գլորվել խոչընդոտների միջով. մրցամարտն սկսված է: Այս ամբողջ ժամանակամիջոցում նվագարկիչից լսվող «Միսուրի» վալսը այստեղ ավարտվում է:

Սա գործողության սկիզբն ազդարարող նշանաբանն է:

Ջոն հանկարծ սթափվում է իր անուշներից: Այնպես է սուլում, ասես հեռվից-հեռու տմբսի է կանչում, թեև նրա սուլոցը ավելի մեղմ է: Ուիլիսն շուտ է գալիս, բայց Ջոն նշանացի հասկացնում է նրան, որ իր գործին մնա: Նիքը, մրցարշավի ծրագրից հայացքը կտրելով, գլուխը բարձրացնում է:

ՋՈ— (Ձայն է տալիս): *Թոմ։* (Ինքն իրեն): *Մի իմանամ սա որ գրողի ծոցն է կորչում, հենց պետք է գալիս։* (Հայացքը հանկիստ պտտեցնում է շուրջ կողմ. անա անկյունի ավտոմատ նվագարկիչը, սա էլ հեռախոսը, բեմահարթակը, խաղամեքենան, վանառասեղանը և այլն: Նորից է ձայն տալիս, այս անգամ շատ բարձր): *Հե՜յ, Թո՜մ։*

ՆԻՔ— (Քնատ մարդու դյուրագրգռությամբ): *Ի՞նչ ես ուզում։*

ՋՈ— (Առանց երկար-բարակ մտածելու): *Ուզում եմ Թոմն ինձ համար մի ձմերուկ բերի, այ թե ինչ եմ ուզում։ Դո՞ւ ինչ ես ուզում։ Փո՞ղ, սե՞ր, փառք ու պատի՞վ, թե՞ մի ուրիշ բան։ Ինչքան էլ գլուխ տրաքացնես ձիարշավի ծրագրի վրա, դրանցից ոչ մեկն էդտեղ չես գտնի։*

ՆԻՔ— *Մարդ պիտի կյանքից հետ չմնա։*

Ներս է ընկնում Թոմը: Սա հաղթահասակ, պարթև տղամարդ է, կլինի թերևս երեսուն տարեկան, բայց շատ ավելի ջահել է երևում: Պատճառը դեմքի մանկական արտահայտությունն է. գեղեցիկ, հիմարավուն, միամիտ, հուզահակ, ամեն ինչից փոքր-ինչ շվարած մի դեմք: Թոմը տարիքով մեծ է, բայց դեռ տղայի տպավորություն է թողնում: Նա աշխուժ է՝ անտաշ ու երկչոտ դեռահասի պես, որ խելքից դուրս բոյ է քաշել: Հագին աչք ծակող, էժան կոստյում է։ Ջոն հետ է ընկնում աթոռի թիկնակին և անսքող դժգոհությամբ ոտքից գլուխ չափում նրան։ Թոմը դանդաղեցնում է քայլերը, շփոթմունքից կարկամում՝ սպասելով թքու խոսքերի տարափի, միանգամայն վստահ, որ փրկություն չունի:

ՋՈ— (Ձոր ու խիստ, բայց մի քիչ էլ նրա հոգու հետ խաղալով)։ *Ո՞վ փրկեց քո կյանքը։*

ԹՈՄ— (Անկեղծորեն)։ *Դու փրկեցիր, Ջո։ Շնորհակալ եմ։*

ՋՈ— (Հետաքրքրությամբ)։ *Ո՞նց փրկեցի։*

ԹՈՄ— (Տարակուսանքով)։ *Ի՞նչ։*

ՋՈ— (Էլ ավելի մեծ հետաքրքրությամբ)։ *Ո՞նց փրկեցի։*

ԹՈՄ— *Ջո, դու գիտես ոնց փրկեցիր։*

ՋՈ— (Հեգահամբույր)։ *Ես ուզում եմ դո՛ւ պատասխանես։ Ո՞նց եմ փրկել կյանքդ։ Մտքիցս թռել է։*

ԹՈՄ— (Լայն, թախծալի ժպիտը դեմքին, անցածը հիշելով)։ *Երեք տարի առաջ, էն որ հիվանդ էի ու սոված մեռնում էիր դու ինձ մի կուշտ հավապուր կերցրիր։*

ՋՈ— (Զմայլված)։ *Հավապո՞ւր։*

ԹՈՄ— (Պատրաստակամորեն)։ *Հա։*

ՋՈ— *Երեք տարի առա՞ջ։ Էդքան վաղո՞ւց էր։*

ԹՈՄ— (Հրճված, որ կարող է անհրաժեշտ տեղեկությունը հայտնել)։ *Բա ի՞նչ. երեսունյոթ, երեսունութ, երեսունինը։ Հիմա 1939 թիվն է, Ջո։*

ՋՈ— (Զվարճանալով)։ *Թիվ-միվը կարևոր չի։ Պատմիր ամեն ինչ սկզբից մինչև վերջ։*

ԹՈՄ— *Ինձ տարար բժշկի։ Համ ծախսի փող տվիր, համ էլ սենյակիս վարձը մուծեցիր։ Է՛, Ջո, դու գիտես՝ ինչեր ես արել ինձ համար։*

ՋՈ— (Գլխով հավանություն է տալիս։ Ամեն հարցից հետո երեսը շրջում է Թոմից)։ *Հիմա լա՞վ է առողջությունդ։*

ԹՈՄ— *Հա, Ջո։*

ՋՈ— *Հագնելիք ունե՞ս։*

ԹՈՄ— *Հա, Ջո։*

ՋՈ— *Օրական երեք անգամ ուտո՞ւմ ես։ Մեկ-մեկ էլ չո՞րս։*

ԹՈՄ— *Հա, Ջո։ Պատահում է հինգ անգամ էլ եմ ուտում։*

ՋՈ— *Քնելու տեղ ունե՞ս։*

ԹՈՄ— *Հա, Ջո։*

ՋՈ— (Գլխով է անում, լռում, սևեռուն հայացքով զննում է Թոմին)։ *Դե որ էդպես է, մի ասա իմանանք, թե որ գրողի ծոցն էիր կորել։*

ԹՈՄ— (Հլու-հնազանդ)։ *Դուրս եկա փողոց, ասի տեսնեմ տղերքն ինչ են խոսում, Ջո։ Նավահանգստի խռովության մասին էին պատմում։*

ՋՈ— (Կտրուկ)։ *Ես ուզում եմ, որ դու պետք եղած ժամանակ ձեռքիս տակ լինես։*

ԹՈՄ— (Գոհ, որ փոքրիկն արդեն անցած է)։ *Էլ չեմ անի, Ջո։ Դուսը մի տղա ասում էր՝ մինչև հեղափոխություն չլինի, ոչ մի բան կարգի չի ընկնի։*

ՋՈ— (Անհամբերությամբ)։ *Հա, լսել ենք, ծանոթ ենք։ Տես ինչ եմ ասում։ էս փողը վերցրու, կգնաս խանութ։ Գիտե՞ս «էմփորիում» հանրախանութի տեղը։*

ԹՈՄ— *Բա ո՞նց, Ջո։*

ՋՈ— *Շատ լավ։ Կնստես վերելակ ու կբարձրանաս չորրորդ հարկ։ Կմտնես խաղալիքների բաժին։ Ինձ համար երկու դոլարի խաղալիքներ կառնես ու կբերես էստեղ։*

ԹՈՄ— (Ապշած)։ *Խաղալիքնե՞ր։ Ի՞նչ խաղալիքներ, Ջո։*

ՋՈ— *Ինչ կպատահի։ Թող մանր-մունր լինեն, որ էս սեղանին տեղավորվեն։*

ԹՈՄ— *Խաղալիքներն ի՞նչ ես անում, Ջո։*

ՋՈ— (Թեթևակի բարկացած)։ *Ի՞նչ։*

ԹՈՄ— *Դե լավ, լավ։ Ի՞նչ ես ամեն փուչ բանից ջղայնանում։ Ախր մարդիկ ի՞նչ կմտածեն, որ առանց բոյից ամաչելու խաղալիք առնեմ։*

ՋՈ— *Ո՞ր մարդիկ։*

ԹՈՄ— *Է՜, Ջո, անընդհատ ստիպում ես օյինբազություններ անել, իսկ ես ամոթից գետինն եմ մտնում։ Քեզ համար հանգիստ նստում ես էստեղ ու ինչքան անգութ գործ կա, իմ գլխին կապում։*

ՋՈ— (Հայացքը փախցնելով)։ *Արա ինչ ասում եմ։*

ԹՈՄ— *Հա, բայց գոնե չիմանա՞մ ինչի համար։* (Ուզում է գնալ)։

ՋՈ— *Սպասիր մի րոպե։ Էս հինգ սենթանոցը վերցրու։ Գցիր նվագարկիչի մեջ։ Համար յոթ կոճակը սեղմիր։ Էլի եմ ուզում լսել էդ վալսը։*

ԹՈՄ— *Փառք աստծու, որ ես գնում եմ ու չեմ լսելու։ Ջո, ախր ի՞նչ կա դրա մեջ էդքան լսելու։ Օրական տասն անգամ էդ երգը լսում ենք։ Ինչո՞ւ չենք օրինակ՝ համար վեցը լսում, կամ էլ երկուսը, կամ թեկուզ ինը։ Էնքան համարնե՜ր կան։*

ՋՈ— (Ազդեցիկ շեշտով)։ *Փողը գցիր նվագարկիչի մեջ։* (Դադար)։ *Նստիր ու երաժշտությունը մինչև վերջ լսիր։ Հետո կգնաս խաղալիք առնելու։*

ԹՈՄ— *Դե լավ, լավ։*

ՋՈ— (Բարձրաձայն)։ *Քեզ էլ նահատակի տեղ չդնես։ Մի մեծ բան չի։*

Թոմը մետաղադրամը գցում է ավտոմատ նվագարկիչի մեջ, բայց այնպիսի համբերատար ու կտրուկ շարժումով, որը բացեիբաց ի ցույց է դնում, թե նա ոչ համակրություն է տածում Ջոյի քմահաճույքին, ոչ էլ փոքրիշատե ոգևորված է դրանով։ Այսուհանդերձ, Թոմի պահվածքից դժվար չէ գլխի ընկնել, որ նրա

դժկամությունը շինծու է ու չափազանցված: Իրականում նա հմայված է այդ երաժշտությամբ, բայց դա այնպես է շփոթեցնում նրան, որ ձևացնում է, թե իր տրտով չէ:

Լսվում են երաժշտության առաջին հնչյունները: Սա «Միսուրի» վալսի կատարումն է նվագախմբի ողջ կազմի մասնակցությամբ, մի անրջահյուս ու ինքշաթով մեղեդի, որ առաջ են տանում փողային գործիքները՝ շարունակ կրկնելով իրենց հեծեծագին թեման:

Սկզբում Թոմը ականջ է դնում մի տեսակ նեղսրտած, որովհետև չի կարողանում հասկանալ, թե ինչն է երաժշտության մեջ, որ այդպես դյուրում է Ջոյին, իսկ իրեն տանջալի խռովքի մատնում ու շփոթեցնում: Սակայն շատ չանցած, նա լիովին կլանվում է երգով, որն անափ վշտի ու հայրենապաշտակ սրտի մելամաղձիկ պատմությունն է անում:

Քնարական հույզերից ալեկոծ հոգով, նա խռովահար ոտքի է կանգնում: Մինչդեռ Ջոն անտարբեր է ու քարացած, ասես երաժշտությունը բնավ չի էլ լսում: Նրան հետաքրքրողը Թոմն է: Ջոն շուռ է գալիս ու նայում Թոմին:

Ճոճաղոռներից հուշիկ ներս է սահում Քիթի Դյուվալը, որն ապրում է մոտակա անկյունի «Նյու Յորք» հյուրանոցում: Դանդաղաքայլ գնում է վաճառասեղանի կողմը: Նրա տեսքն ու շարժումները, ողջ էությունը լիովին ներդաշնակում են ամերիկյան այդ տրտմանուշ մեղեդուն: Դա նրա մեղեդին է, ինչպես որ Թոմինն է, մեղեդի, որ կյանքը խլել է նրանից, դրա փոխարեն սիրտը փշրելով ու հոգուն անթիվ վերքեր հասցնելով: Նա կարծես թե հասկանում է սա ու շարացած է, ինքն իր վրա շարացած: Ատելությամբ է լցված ողորմելի աշխարհի նկատմամբ և խղճահարությամբ ու համահրանքով՝ նրա ողբերգական, աներևակայելի, մոլորյալ զավակների հանդեպ: Փոքրամարմին, ամուր աղջիկ է՝ օժտված նուրբ ու անսասան գեղեցկությամբ, որը շարադավ ու պիղծ իրականության որոգայթներից ոչ մեկը չի կարող խորտակել: Այդ գեղեցկությունը անմահության այն հատիկն է, որ անթեղված է բարի ու հասարակ մարդկանց մեջ և գոյատևում է մարդկային ցեղի որոշ կին ներկայացուցիչների շնորհիվ՝ ով էլ լինեն նրանք, ինչքան էլ պատահաբար կամ աննպատակ աշխարհ եկած լինեն: Քիթի Դյուվալն աննման է: Նրան հատուկ են ցասկոտ անարատությունն ու մոլեգին հպարտությունը:

Նրա քայլվածքի ու պահվածքի մեջ նրբագեղությունը միահյուսված է ամբարտավանությանը: Ի դեմս Քիթիի, Ջոն իսկույն ևեթ ճանաչում է արտակարգ մեկին:

ՔԻԹԻ— (Մոտենում է վաճառասեղանին): *Գարեջուր:*

Նիքը մեքենայաբար մի բաժակ գարեջուր է դնում նրա առաջ: Քիթի Դյուվալը խմում է կեսը և վերստին ականջը պահում երաժշտությանը: Թոմը շրջվում է, տեսնում աղջկան: Ամեն ինչ աշխարհում, աղջկանից բացի, դադարում է նրա համար գոյություն ունենալ: Արձանի նման մեխվում է տեղում՝ ասես կախարդված, աղջկա նկատմամբ զրեթե աստվածային պաշտամունքով լի:

ՋՈ— (Նկատում է Թոմի կերպարանափոխությունը: Կամացուկ): *Թոմ:*

Թոմի ոտքերը նրան տանում են վաճառասեղանի կողմը, որտեղ կանգնած է Քիթին:

(Բարձրաձայն): *Թո՛մ։*

Թոմը կանգ է առնում, շրջվում: Ջոն իր սեղանին մոտենալու նշան է անում։ Թոմը մոտ է գնում:

(Մեղմ): *Ասածներս լա՞վ հասկացար։*

ԹՈՄ— (Աշխարհից վերացած): *Ի՞նչ։*

ՋՈ— *Ո՞նց թե՝ ինչ։ Հենց նոր քեզ բան հանձնարարեցի։*

ԹՈՄ— (Աղեկտուր): *Ի՞նչ ես ուզում, Ջո։*

ՋՈ— *Ուզում եմ ուշքի գաս։* (Հանգիստ վեր է կենում ու խփում-զցում Թոմի գլխարկը):

ԹՈՄ— (Հապշտապ վերցնելով գլխարկը): *Հասկացա, Ջո։ «Էմփորիում» հանրախանութ. չորրորդ հարկ. խաղալիքների բաժին. երկու դոլարի խաղալիքներ, որ տեղավորվեն սեղանին։*

ՔԻԹԻ— (Ինքն իրեն): *Գրողը տանի, սա ինչացո՞ւ է, որ էս հսկային բուռն է հավաքել։*

ՋՈ— *Կես ժամից էստեղ լինես։ Կողմնակի բաներով չընկնես՝ ոտքդ կախ գցես։ Արա ինչ ասում եմ։*

ԹՈՄ— (Թախանձագին): *Ջո, ի՞նչ կլինի, որ ձիարշավի մրցումներին կես դոլար խաղչեք դնեմ։ Փորձը փորձանք չի. մի ձի կա, Թանկ ժամանակ է անունը, հաստատ գիտեմ, բոլորից առաջ է անցնելու։ Ինձ փող է պետք։*

Ջոն մատնացույց է անում դուռը: Թոմը դուրս է գնում:

ՆԻՔ— (Սանրվում է հայելու առաջ): *Կարծեմ ուզում էիր, որ նա ամերուկ բերի։*

ՋՈ— *Մոռացել էի։* (Մի պահ նայում է Քիթիին. դանդաղ, պարզորոշ, անկեղծ խանդաղատանքով): *Ի՞նչ է ձեր երազանքը։*

ՔԻԹԻ— (Գնում է Ջոյի կողմը, մոտենում նրան): *Ի՞նչ։*

ՋՈ— (Ասես վախենալով, թե նրա երազը կցնդի-կանէանա): *Ի՞նչ է հիմա ձեր երազանքը։*

ՔԻԹԻ— (Էլ ավելի մոտենալով): *Ի՞նչ երազանք։*

ՋՈ— *Ինչ երազա՞նք։ Հենց նոր երազում էիք, չէ՞։*

ՆԻՔ— *Ասենք թե նա ամերուկը բերեր։ Ի՞նչ պիտի անեիր, գրողը տանի։*

ՋՈ— (Բորբոքված): *Կդնեի սեղանին։ Կնայեի։ Հետո էլ կուտեի։ Բա քո կարծիքով ի՞նչ պիտի անեի. ծախելո՞ւ էի՝ մի բան էլ օգուտ քաղկլով։*

ՆԻՔ— *Շա՞տ իմանամ մտքումդ ինչ կա։ Ես ուրիշ բան եմ ուզում իմանալ. որտեղի՞ց է քեզ էդքան փողը։ Ինչո՞վ ես զբաղվում։*

ՋՈ— (Հայացքը Քիթիից չհեռացնելով, Նիքին)։ *Մի շիշ շամպայն բեր մեզ համար։*

ՔԻԹԻ— *Շամպա՞յն։*

ՋՈ— (Պարզաբանորեն)։ *Ուրիշ բա՞ն կուզեիք։*

ՔԻԹԻ— *Իբր թե որ ի՞նչ։*

ՋՈ— *Ուղղակի մտքովս անցավ, որ դուք երևի շամպայն եք սիրում։ Ես, օրինակ, շատ եմ սիրում։*

ՔԻԹԻ— *Է, հա՛, իբր թե որ ի՞նչ։ Իմ գլխին չես կարող օյիններ խաղալ։*

ՋՈ— (Մեղմ, բայց վճռականորեն)։ *Ես սրա-նրա սրտին կպչելու սովորություն չունեմ։ Ուրիշի վատն ուզեցող մարդկանց արհամարհում եմ։ Թե չէ կարող էի մի բացահայտ բան ասել, ուրեմն և դաժան ու գուցե անարդար լինել։*

ՔԻԹԻ— *Տես, հա, չլինեմ չիմանամ, ինձ ծուռ մտքով նայես։*

ՋՈ— (Դանդաղ, առանց նրան նայելու)։ *Քո մասին ես միայն ամենալավն եմ մտածում։ Չեմ էլ կասկածում՝ ինչ հոգի ունես։*

ՆԻՔ— (Ուշադիր լսել է, բայց ոչինչ չի հասկացել)։ *Էս ի՞նչ եք տալիս-առնում։*

ՔԻԹԻ— *Բերանդ փակիր, դո՛։...*

ՋՈ— *Նա էս պանդոկի տերն է, շատ կարևոր մարդ։ Ով ասես չի գալիս նրա մոտ աշխատանք գտնելու. է՛լ կատակերգուներ, է՛լ պարողներ...*

ՔԻԹԻ— *Ի՞նձ ինչ։ Թող լեզուն չերկարացնի։*

ՆԻՔ— *Եղավ, քույրիկս։ Ո՞վ չգիտի, թե երկու դոլարի դիմաց աշխարհի ամենահին արհեստը բանեցնող կնիկն առավոտներն ինչ օրի է լինում։*

ՔԻԹԻ— (Կատաղի)։ *Չհամարձակվե՛ս ինձ անուններ կպցնել։ Ես էստրադային արտիստուհի եմ եղել։*

ՆԻՔ— *Դե որ դու էստրադային արտիստուհի ես եղել, ուրեմն ես էլ Չարլի Չապլինն եմ։*

ՔԻԹԻ— (Զայրագին ու մի տեսակ սրտակեղեք)։ *Ես էստրադային արտիստուհի եմ եղել։ Ամբողջ երկրով մեկ՝ օվկիանոսից օվկիանոս, հյուրախաղեր եմ տվել։ Եվրոպայի մեծամեծերն ինձ ծաղկեփնջեր էին ուղարկում։ Ամենահարուստ, երևելի երիտասարդներն էին ճաշի հրավիրում։*

ՆԻՔ— *Հեքիաթներ ես պատմում։*

ՔԻԹԻ— (Ջոյին)։ *Ես իրոք էստրադային արտիստուհի եմ եղել։ Քիթի*

Դյուվալ. դա հենց իմ անունն է։ Իսկ նկարներս դրված էին ամեն տեղ, երկրի բոլոր թատրոնների առաջ։ Բեմական շորերը հագիս, բոյով մեկ նկարվել էի։

ՋՈ— (Փաղաքուշ ճորդորանքով): *Ես հավատում եմ քեզ։ Մի քիչ շամպայն խմիր։*

ՆԻՔ— (Շամպայնի շիշն ու գավաթները ձեռքին մոտենում է նրանց սեղանին): *Մեր պարոնի քեֆն էլի բացվել է։*

ՋՈ— *Միսս Դյուվա՞լ։*

ՔԻԹԻ— (Անկեղծորեն, պարզաբանելով): *Դա իմ իսկական անունը չի։ Բեմական կեղծանունն է։*

ՋՈ— *Ես քեզ կդիմեմ բեմական կեղծանունով։*

ՆԻՔ— (Շամպայն լցնելով): *Հը՛, քույրիկ, մի բան որոշիր։ Խմո՞ւմ ես շամպայն նրա հետ, թե՞ չէ։*

ՋՈ— *Խմիչք լցրու լեդիին։*

ՆԻՔ— *Աչքիս վրա, պրոֆեսոր։ Ինչքան խելքիս զոռ եմ տալիս, չեմ հասկանում, թե ինչի քաղաքի կենտրոնի շքեղ ռեստորանները թողած, իմ քոսոտ պանդոկն ես անընդհատ գալիս։ Ինչի՞ չես գնում օրինակ՝ «Սուրբ Ֆրանցիսկոսում» շամպայն խմելու։ Մի իսկական լեդիի էլ կհրավիրեիր հետդ սեղան նստեր։*

ՔԻԹԻ— (Կատաղի): *Հերի՞ք է ինձ անուններ կպցնես, դո՛ւ, ատամնաբո՛ւյժ։*

ՋՈ— *Ատամնաբո՞ւյժ։*

ՆԻՔ— (Զարմանքով, բարձրաձայն): *Դա՞ ինչ հայհոյանք է։* (Դադար։ Նայում է Քիթիին, ապա Ջոյին, տարակուսած): *Էս մեր ընկերոջ տեղը ախր սա չի, է՛։ Հենց մենակ նրա համար եմ էստեղ շամպայն պահում. հա պատվիրում է։* (Քիթիին): *Ջիմանաս դու միակն ես, որ հետդ նստած՝ շամպայն է խմում։ Ամենքի հետ էլ բաժակ է բռնում։* (Դադար): *Խենթ է, ինչ է, չեմ հասկանում։*

ՋՈ— (Ասես գաղտնի է վստահում): *Նիք, իմ կարծիքով, մի երկու դար հետո քեզնից ինչ-որ բան դուրս կգա։*

ՆԻՔ— *Ներող կլինես, բայց քո լեզուն ես չեմ հասկանում։*

Ջոն բարձրացնում է գավաթը։ Քիթին զգուշորեն բարձրացնում է իրենը՝ դեռևս անվստահ, թե այս ամենին ինչ է հետևելու։

ՋՈ— (Անմիջականորեն): *Հոգուդ կենացը, Քիթի Դյուվալ։*

ՔԻԹԻ— (Նոր միայն սկսելով նասկանալ սրտագին երախտագիտությամբ նայում է նրան): *Շնորհակալ եմ։*

Խմում են։

ՋՈ— (Զայն է տալիս): *Նի՛ք։*

ՆԻՔ— *Հա՛։*

ՋՈ— *Թե դեմ չես, ասում եմ, մի հինգ սենթանոց գցիր Նվագարկիչի մեջ։ Համար...*

ՆԻՔ— *Յոթ կոճակն էլ սեղմեմ, չէ՞։ Գիտեմ, գիտեմ։ Իսկի էլ դեմ չեմ, ձերդ բարձրություն, չնայած անձամբ ես երաժշտության սիրահար չեմ։* (Նվագարկիչի կողմը գնալով)։ *Ճիշտը որ ասեմ, Զայկովսկին, իմ կարծիքով, ախմախ մարդ է եղել։*

ՋՈ— *Զայկովսկի՞ն։ Նրա անո՞ւնը որտեղից գիտես։*

ՆԻՔ— *Ախմախ մարդ է եղել։*

ՋՈ— *Հա՞, ինչո՞ւ։*

ՆԻՔ— *Մի կիրակի առավոտ ռադիոն միացրի, նրա մասին էին խոսում։ Ա՜յ քեզ անողնաշար փսլնքոտ։ Բա տղամարդը կթողնի՞, որ ինչ-որ կնիկ իրեն խելքամաղ անի։*

ՋՈ— *Հա՞, հասկանալի է։*

ՆԻՔ— *Վաճառասեղանի հետևը կանգնած՝ ականջս կախել, էդ ցնդաբանությունն էի լսում ու երեխայի պես աղի արտասուք թափում։ «Լոկ սիրավառ սիրտը, որ կարոտից այրվել ու սիրո ժամի տենչանքով է ապրել...»։ Չէ, ինչ ուզում ես ասա, ախմախ մարդ է եղել։*

ՋՈ— *Ինչո՞ւ էիր աղի արտասուք թափում։*

ՆԻՔ— *Ի՞նչ։*

ՋՈ— (Համառորեն)։ *Ինչո՞ւ էիր աղի արտասուք թափում, Նիք։*

ՆԻՔ— (Ինքն իր վրա բարկացած)։ *Ասիմ, է՛։*

ՋՈ— *Ես քեզ մի աչքով եմ նայել, Նիք։ Սեղմիր համար յոթը։*

ՆԻՔ— *Քար սիրտ էլ լիներ, էլի փուլ կգար։ Ինչ ասես հաղորդում են. ախր ո՞ւմ է պետք։* (Պոնձադրամը գցում է ավտոմատի մեջ, և վալսը նորից է սկսվում։ Ականջ է անում երաժշտությանը, ապա կրկին ձեռքն առնում ձիարշավի ծրագիրը)։

ՔԻԹԻ— (Ինքն իրեն, անուրջուն)։ *Սիրում եմ շամպայնն ու շամպայնին սազող ամեն, ամեն ինչ։ Մեծ տներն իրենց մեծ գավիթներով, մեծ սենյակներն իրենց մեծ լուսամուտներով, մեծ պարտեզներն ու ամեն քայլափոխի բացված ծաղիկները, մեծ ծառերն ու նրանց շվաքում քնած գամփռներին։*

ՆԻՔ— *Գնամ կողքի տունը՝ Ֆրենքիի մոտ, խաղչեք դնեմ։ Հիմա հետ եմ գալիս։*

ՋՈ— *Մի խաղչեք էլ իմ տեղը դիր։*

ՆԻՔ— (Մոտենալով Ջոյին)։ *Ո՞ր ձիու վրա։*

ՋՈ— (Փող տալով նրան)։ *Թանկ ժամանակի։*

ՆԻՔ— *Տասը դոլա՞ր։ Բա որ առաջին տեղը չբռնի՞։ Թե՞ երկրորդ ու երրորդ տեղերի համար էլ դնեմ։*

ՋՈ— *Չէ։ Մենակ առաջին տեղի համար դիր։*

ՆԻՔ— *Դո՛ւ գիտես։* (Գնում է):

Ճոճադռներից մրրիկի պես ներս է խուժում Դադլին կամ Դադլի Ռ. Բոսթուիքը, ինչպես ինքն է անվանում իրեն և ուղղակի նետվում հեռախոսի վրա:

Դադլին սովորական և միաժամանակ արտասովոր երիտասարդ է, կլինի քսանչորս-քսանհինգ տարեկան: Ինչպես ասում են, աստված բոյ չի տվել. հագուստ-կապուստը թեև կոկիկ է, բայց էժանագին: Գորշ ու միապաղաղ առօրյա գոյությունը նրան հալումաշ է արել, ջղերը քայքայվել են: Առաջին հայացքից նա ոչնչություն է թվում, բայց իրականում մեծ անհատականություն է: Մի մոլորված հոգի: Ուսում է ստացել, բայց գլխն այդպես էլ ոչինչ չի մտել։ Անմիտ խիզախությամբ նա պայքարում է կյանքից կառչելու համար, մինչդեռ ուժաբեկ ու սանձահար մարմինը անձնատուր չլինելով՝ բզկտում է նրա ծտի ուղեղը, որ ուսուցանված գիտելիքներից լոկ եռուքոր է բռնել: Չնայած իր պակաս-պռատ կողմերին, Դադլին մեծ անհատականություն է, որովհետև մի հասարակ ու հիմնավոր բան է ուզում. կին: Այդ անդիմադրելի ու մոլեգին պահանջը, մի սովորական, բայց և ինքնըստինքյան զարմանահրաշ պահանջ՝ երբ նկատի ունենանք սույն կենդանուն շրջապատող աննախանձելի միջավայրը, հենց այն զորությունն է, որ ոչնչությունից նրան բարձրացնում է մինչև մեծություն: Ինչքան էլ այդ մեծությունը ծիծաղելի լինի, միևնույն է, հիասքանչ է. աշխարհիս կարգն է այդպես: Այն ամենը, ինչ սովորեցրել են Դադլիին և այն ամենը, ինչին նա հավատում է, կեղծիք է, խաբեություն, բայց իր ներսի այդ անխորտակելի զորության շնորհիվ նա ինքն իրական է, գրեթե գերիրական: Նրա կերպարանքը մարդու ծիծաղ է շարժում: Դադլիին բնորոշ ռիթմը չղազրգիռ լարվածությունն է: Խոսում է նվնվալով ու շնչահեղձ լինելով: Հախուռն ու կատաղի շարժումներ է անում։ Նրա «եսը» երկփեղկված է, անհավասարակշիռ ու դյուրաբորբոք, սակայն էության խորքում նա օժտված է այն ներքին ամբողջականությամբ ու նպատակասլացությամբ, որ հատուկ են բոլոր տեսակի կենդանիներին: Դադլին բնածին կամ ձեռքբերովի՝ քիչումիչ մտավոր ընդունակություններ ունի, բայց նրան խորթ չէ և կենդանական միամիտ տարերքը: Այս պատանուն քարոզել, հավատացրել են, թե իրեն վիճակված է մարդամեջ մտնել: Այնինչ իրականում այդ բախտն ամենքին էլ նրան վիճակված չէ, և լավ կլիներ նրան բացեիբաց ասել այդ մասին կամ էլ կրթությամբ չաղարտել նրա բնական ու առողջ անգիտությունը, կործանիչ հարված հասցնելով մարդկային ցեղի՝ բոլոր մյուս առումներով արժանավոր ու դուրեկան այս ներկայացուցչին:

Հեռախոսի մոտ հայտնվելուն պես, Դադլին տեղնուտեղն սկսում է կատաղի թափով ինչ-որ համար հավաքել, ապա վարանում է, միտքը փոխում, համարը կիսատ թողած՝ վայրագորեն կախում է լսափողը ու հանկարծ նորից սկսում համարը հավաքել:

Դադլիի կայծակնային ներխուժումից կես րոպե չանցած՝ պոլկայի ասեք, թե վալսի ռիթմով, հայտնվում է Հարին:

Սա արդեն ուրիշ պատմություն է: Հարին ներս է մտնում վախվորած, անվստահորեն չորս կողմը նայում՝ այստեղ էլ քաշվելով ու իրեն անհարմար զգա-

լով, ինչպես ամենուրեք: Նա հագնված է ըստ նորաձևության և դրանից նեղվում ու կաշկանդվում է: Սրտին դանակ տաս, արյուն չի կաթի, բայց որոշել է ինչ գնով էլ լինի իր գործը գլուխ բերել: Նրա գալստյան մեջ ինչ-որ պարային բան կա:

Հագուստը վրայով մեծ է: Շալվարը լայնավուն է, պիջակը՝ լենուրոլ, բացի այդ, մեկը մյուսին չի սազում:

Հարին խելքից բարակ է, բայց գլխում շարունակ մտքեր են պտտվում: Նա նույնիսկ իր սեփական փիլիսոփայությունն ունի: Այդ փիլիսոփայությունը պարզ է ու գեղեցիկ: Աշխարհը տխուր է: Աշխարհին ծիծաղ է պետք: Հարին ծիծաղաշարժ է: Աշխարհին Հարին է պետք: Հարին է, որ աշխարհին ծիծաղ կպարգևի:

Ժամանակին նա երևի սովորել է դպրոցում, թեև միջնակարգը հազիվ քե ավարտած լինի: Ականջ է կախել նաև բիլիարդանոցների խոսքուզրույցին:

Նա փնտրում է Նիֆին: Մոտենում է Արաբին ու հարցնում. «Դո՞ւք եք Նիֆը»: Արաբը տարուբերում է գլուխը: Հարին կանգնում է վանառասեղանի մոտ, սպասում Նիֆին: Թեկուզ քարը սարվի, որոշել է սպասել:

Վերադառնում է Նիֆը:

ՀԱՐԻ— *Դո՞ւք եք Նիֆը:*

ՆԻՖ— (Խիստ բարձրաձայն): *Հա՛, ե՛ս եմ Նիֆը:*

ՀԱՐԻ— (Դերասանավարի): *Մեծ կատակերգուի կարիք չե՞ք զգում:*

ՆԻՖ— (Վանառասեղանի հետևն անցնելով): *Օրինակ՝ էդ ո՞ւմ:*

ՀԱՐԻ— (Գրեթե նեղացած): *Իմ:*

ՆԻՖ— *Քո՞: Քո ի՞նչն է ծիծաղելի:*

Դադլին հեռախոսով համար է հավաքում: Թերևս ինչ-որ անսարքության պատճառով, սկավառակը պտտելիս, բարձրահունչ շխկշխկոց է լսվում:

ԴԱԴԼԻ— *Ալո՞, Սանսեթ յոթանասուներեք-քառասունի՞նն է: Կարելի՞ է միսս Էլսի Մանդելշպիգելին:* (Դադար):

ՀԱՐԻ— (Ոգևորությամբ ու աղմուկով դուիապար է զարկում): *Ես պարում եմ ու ծիծաղելի համարներ ցույց տալիս:*

ՆԻՖ— *Հատուկ շորերո՞վ: Թե՞ հագիդ եղածով:*

ՀԱՐԻ— *Ինձ ընդամենը մի սիգար է պետք, ուրիշ ոչ մի բան:*

ՔԻԹԻ— (Դեռ քաղցր անուրջներին անձնատուր եղած): *Դուրս կգայի տանից ու կկանգնեի գավիթում: Կնայեի ծառերին, ծաղիկներից հոտ կքաշեի, կվազեի կանաչի վրայով, կփռվեի ծառի տակ ու դիրք կկարդայի:* (Դադար): *Երևի բանաստեղծություններ:*

ԴԱԴԼԻ— (Վանկերը հատ-հատ, հստակ արտասանելով): *Էլսի Մանդելշպիգել:* (Համբերությունը կորցրած): *Նրա սենյակը չորրորդ հարկում է: Հիվանդապահուհի է Հարավ-Խաղաղօվկիանոսյան երկաթուղու վարչությանը կից հիվանդանոցում... Էլսի Մանդելշպիգել... Դիշերն է աշխատում... Էլսի... Այո...* (Նորից է սպասում):

Մնում է Ռեսլին՝ մի սևամորթ պատանի: Մոտենում է վաճառասեղանին և սպասողական դիրքով կանգնում է Հարիի կողքին:

ՆԻՔ— *Գարեջո՞ւր։*

ՌԻԵՍԼԻ— *Չէ, սըր։ Ես կուզեի խոսել ձեզ հետ։*

ՆԻՔ— (Հարիին)։ *Հա՛։ Դե, մի ծիծաղելի բան ցույց տուր, տեսնենք։*

ՀԱՐԻ— (Կերպարանափոխվում է, դառնում է բոլորովին ուրիշ մարդ, դերասան, որը հոգին չի խնայում ծիծաղելի երևալու համար. ձայնը գլուխն է գցել, ընդոստ ու եռանդագին շարժումներ է անում)։ *Ուրեմն կանգնած եմ Երրորդ ու Մարքիթ փողոցների անկյունում։ Նայում եմ չորս կողմս։ Խելք եմ բանեցնում։ Ահա. հենց աչքիս առաջ ամբողջ քաղաքն է։ Արար աշխարհը։ Մարդիկ անցուդարձ են անում։ Ամեն մեկը մի տեղ է գնում։ Թե ուր՝ չգիտեմ, բայց բոլորը գնում-գալիս են։ Իսկ ես գնալու ոչ մի տեղ չունեմ։ Ո՞ր գրողի ծոցը գնաս։ Խելք եմ բանեցնում։ Է՜հ, ես ինձ համար միամիտ կանգնած եմ, ո՞ւմ եմ խանգարում, անմեղ քաղաքացի եմ։ Տեսնեմ հաստափոր մի մարդ է գալիս։ Սրա դեմդիմաց որտեղից որտեղ մի պառավ է բուսնում։ Հաստլիկի փորը շըը՜մփ՝ դիպչում է պառավի երեսին։ Երկուսն էլ շտապում էին։ Մեկը տռզել է, ճարպակալել, մյուսը՝ զառամել։ Կպան իրար. բո՜ւմ։ Չեմ հասկանում։ Սա ի՞նչ է նշանակում. պատերա՞զմ։ Պատերա՛զմ։ Գերմանիա՜, Անգլիա՜, Ռուսաստա՞ն։ Խելքս բան չի կտրում։* (Պատիվ է տալիս, հետ դարձ կատարում, իբր հրացանով պատվի առնում, նշան բռնում ու կրակում: Արտաձայն, դրամատիկ շեշտով)։ *ՊԱՏԵՐԱ՜ԱԶՄ։* (Շեփորում է «ի զեն» ազդանշանը)։

ՆԻՔ— (Այս ամենից կշտացած, Հարիին նշան է անում, որպեսզի վերջ տա և մոտենում է Ռեսլիին)։ *Ի՞նչ էիր ուզում ասել։*

ՌԻԵՍԼԻ— (Կարկամած)։ *Ես...*

ՆԻՔ— *Դե, սաս։ Խոսիր։ Սովա՞ծ ես, ինչ է։*

ՌԻԵՍԼԻ— *Ազնիվ խոսք, սոված չեմ։ Ուղղակի աշխատանք եմ ուզում։ Ողորմություն չեմ խնդրում։*

ՆԻՔ— *Դե լավ։ Ի՞նչ կարող ես անել, ձեռիցդ ի՞նչ է գալիս։*

ՌԻԵՍԼԻ— *Կարող եմ պետք եղած ժամանակ դեսուդեն գնալ, հավաքել-մաքրել, աման լվանալ. ինչ էլ որ լինի։*

ԴԱՂԼԻ— (Լսափողի մեջ, տենչագին կարոտով)։ *Էլսի՞։ Էլսի, ես եմ՝ Դաղլին։ Էլսի, եթե չամուսնանաս ինձ հետ, ես կգնամ ջուրը կընկնեմ։ Առանց քեզ օր ու արև չունեմ։ Աչքիս քուն չի գալիս։ Քեզանից բացի, ոչ մի բանի մասին չեմ կարողանում մտածել։ Ուշքս ու միտքս հենց դու ես, որ կաս. անընդհատ, օրնիբուն, գիշեր թե ցերեկ։ Էլսի,*

ես սիրում եմ քեզ։ Սիրում եմ... Ի՞նչ... (Պոռթկալով)։ *Դա Սանսեթ յոթանասունհինգ-չա. ասումինը չի՞* (Դադար)։ *Յոթանասունհինգ-չառասունհերե՞քն է։* (Ձայնն իջեցնելով, մինչդեռ խաղամեքենան Ուսլիի ձեռքի տակ սկսում է աղմկել)։ *Իսկ ի՞նչ է ձեր անունը... Լորի՞ն... Լորին. Սմի՞թ։ Ես էլ կարծեցի էլսի Մանդելշպիգելն եք... Ի՞նչ... Դադլի... Հա, Դադլի Ռ. Բոսթուիք... Այո, «Ռ»։ Այսինքն՝ Ռաուլ, բայց ես միշտ կրճատ ձևով եմ ասում... Ես էլ եմ ուրախ ձեզ հետ ծանոթանալուս համար... Ի՞նչ... էստեղ անտանելի աղմուկ է, ոչ մի բան չի լսվում...*

Խաղամեքենայի աղմուկը դադարում է։

Որտե՞ղ եմ։ Նիքի մոտ, Փասիֆիք փողոցի նրա պանդոկում... Հարավ-Խաղաղօվկիանոսյան երկաթուղու վարչությունում եմ աշխատում... Ասացի՝ հիվանդ եմ, կեսօրից հետո ուղարկեցին տուն... Սպասեք՝ հարցնեմ։ Ես էլ կուզենայի ձեզ հետ հանդիպել... Բա իհարկե։ Հիմա կհարցնեմ։ (Շրջվում է Նիքի կողմը)։ *Ո՞նց է ձեր հասցեն։*

ՆԻՔ— *Փասիֆիք փողոց, համար երեք. համա թե կեղտոտի մեկն ես։*

ԴԱԴԼԻ— *Կեղտոտի մե՞կը։ Ախր չգիտեք, է՜, ինչքան եմ տանջվել էլսիի երեսից։ Սովոր եմ ամոթի գերի՝ ձևականությունների հետևից ընկնեմ։ Մարդ ամեն ինչ սրտին մոտ չի ընդունի։* (Լսափողի մեջ)։ *Ալո՜, էլինոր... վա՜յ, ի՜նչ եմ ասում... Լորին, հասցեն էսպես է. Փասիֆիք փողոց, համար երեք... Հա, իհարկե։ Կսպասեմ քեզ... Ոնց կճանաչե՞ս։ Կճանաչե՞ս։ Ես քեզ կճանաչեմ... Ցտեսություն, առայժմ։* (Կախում է լսափողը)։

ՀԱՐԻ— (Շարունակում է իր մենախոսությունը՝ առաջվա պես բռնցքամարտիկի շարժումներ անելով, դեսուդեն ընկնելով և այլն)։ *Ես ինձ համար սուսուփուս կանգնած եմ։ Ոչ մի մարդու վնաս չեմ տալիս, իմ յուղով տապակվում եմ։ Ախր ինչո՞ւ պիտի զինվոր դառնամ։* (Անկեղծ, խելահեղորեն)։ *ԲՈԻՌՈԻՌ՜ԻՄ։ Պատերա՜զմ։ Ինչ արած, թող լինի պատերազմ։ Ես քաշվում եմ մի կողմ։ Ատում եմ պատերազմը։ Գնում եմ Սակրամենտո։*

ՆԻՔ— (Բղավում է)։ *Հերի՜ք է, կատակերգու։ Մի քիչ շունչ քաշիր։*

ՀԱՐԻ— (Սիրտը կախ մոտենում է Ուսլիին)։ *էլ ոչ ոք հումորի զգացում չունի։ Աշխարհը երբեք էսպես հոգի չի տվել ծիծաղի համար, բայց ոչ ոք ծիծաղել չգիտի։*

ՆԻՔ— (Ուեսլիին)։ *Միության անդա՞մ ես։*

ՈՒՍԼԻ— *Ի՞նչ միության։*

ՆԻՔ— *Վա՜հ, քո տունը շինվի, հո երկնքի՞ց չես ընկել։ Գիտես հենց էդպե՞ս է. քեզ ու գլխու մտնում ես ռեստորան, աշխատանք ուզում, ստանում աշխատանքն ու գործի՞ անցնում։ Արհմիության անդամ պիտի լինես։*

ՈՒԵՍԼԻ— *Ես չեմ իմացել։ Ինձ աշխատանք է պետք։ Ինչքան հնարավոր է շուտ։*

ՆԻՔ— *Ախր արհմիության անդամ պիտի լինես։*

ՈՒԵՍԼԻ— *Ես ամեն ինչի համաձայն եմ։ Մենակ թե մի կտոր հացի տեր դառնամ։*

ՆԻՔ— *Գնա խոհանոց, Սեմին ասա՝ քեզ հաց ու ջուր տա։*

ՈՒԵՍԼԻ— *Ազնիվ խոսք, սոված չեմ։*

ԴԱՎԻԼ— (Աղաղակում է)։ *Ա՜խ, ինչե՜ր եմ քաշել էլսիի երեսից։*

ՀԱՐԻ— *Գլուխս լիքն է ամեն տեսակ ծիծաղելի մտքերով, ինչ է՝ օգնեմ մարդկանց նորից երջանիկ լինել։*

ՆԻՔ— (Ուեսլիին բռնելով)։ *Սոված չի, բա ո՞նց։*

Ուեսլին ֆիչ է մնում քաղցից ուշաթափվի։ Նիքը ճիշտ ժամանակին բռնում է նրան։ Արաբն ու Նիքը Ուեսլիին տանում են խոհանոց։

ՀԱՐԻ— (Ուիլիին)։ *Մի տես ծիծաղելի՞ է ստացվում, թե՞ չէ։ Իմ հնարածն է։ Ես եմ հորինել էս պարը։ Սա մենախոսությունից հետո է գալիս։*

Հարին սկսում է պարել։ Ուիլին մի պահ նայում է նրան, ապա նորից տարվում իր խաղով։ Հարի պարածը ինչ-որ անհեթեթ բան է, որ նա կատարում է խորին տրտմությամբ, բայց և շանթ ու եռանդ չխնայելով։

ԴԱՎԻԼ— *Էլսի... Վա՜յ, Էլսի, Էլսի, ի՜նչ ասեմ ես քեզ... Ախր ի՞նչ հորս ցավն է էդ Լորին Սմիթը։ Չեմ էլ ճանաչում՝ ով է։*

Ջոն ու Քիթին լուռումունջ խմում են։ Ձայն չկա, միայն պարող Հարի կոշիկների մեղմ կտկտոցն է լսվում։

ՋՈՆ— *Հիմա՞ ինչ է երազանքդ, Քիթի Դյուվալ։*

ՔԻԹԻ— (Երազներից բառ ու պատկեր հյուսելով)։ Տունը։ *Տեր աստված, իմ միակ երազանքը տունն է։ Ոչ տուն ունեմ, ոչ տեղ։ Բայց անընդհատ երազում եմ, որ մենք նորից միասին ենք, բոլորս իրար հետ։ Օհայոյում մի ագարակ ունեինք։ Դժվար էինք ապրում։ Միշտ տխուր-տրտում։ Հոգսերից աչք չէինք բացում։ Բայց իմ միակ երազանքը տունն է, կարծես թե կարող եմ վերադառնալ տուն և նորից տեսնել հայրիկին, մայրիկին, Լուիին, փոքր եղբորս՝ Սթիվենին ու քույրիկիս՝ Մերիին։ Ես լեհուհի եմ։ Դյուվա՜լ։ Իմ ազգանունը Դյու-*

վալ չի, Կորանովսկա է։ Կատերինա Կորանովսկա։ Մենք ամեն ինչ կորցրինք։ Տունը, ագարակը, այգին, ձիերը, կովերը, հավերը։ Հայրիկը մեռավ։ Տարիքն առել էր։ Տասներեք տարով մեծ էր մայրիկից։ Տեղափոխվեցինք Չիկագո։ Ամեն ինչ անում էինք, որ աշխատանք ճարենք, մնանք միասին։ Լուին փորձանքի մեջ ընկավ։ Ինչ-որ տղերքի հետ էր կապվել։ Հենց էդ տղերքն էլ նրա գլուխը կերան։ Չգիտեմ ինչի համար։ Սթիվենը փախավ տանից։ Տասնյոթ տարեկան էր։ Ով իմանա որտեղ է։ Հետո էլ մայրիկը մեռավ։ (Դադար)։ *Ինչ է երազանքս։ Տունը։ Հարազատ տունը։*

ՆԻՔ— (Ուեսլիի հետ դուրս է գալիս խոհանոցից)։ *Այ էսպես։ Նստիր էստեղ, հանգստացիր։ Գոնե առայժմ փորդ կուշտ կլինի։ Ինչո՞ւ չէիր ասում, որ սոված ես։ Հիմա արդեն լա՞վ ես։*

ՈՒԵՍԼԻ— (Դաշնամուրի աթոռին նստելով)։ *Լավ եմ, շնորհակալություն։ Մտքովս չէր անցնում, որ էդքան սոված եմ։*

ՆԻՔ— *Դե լավ։* (Հարիին, որը շարունակում է պարել)։ *Լսիր, քո արևին էդ ի՞նչ ես անում։*

ՀԱՐԻ— (Պարն ընդհատելով)։ *Սա իմ հնարածն է։ Ես բնատուր պարող եմ ու կատակերգու։*

Ուեսլին կամաց-կամաց, նոտա առ նոտա, ակորդ առ ակորդ, սկսում է դաշնամուր նվագել։

ՆԻՔ— *Բանի նման չի։ Ինչի՞ չես փորձում ուրիշ գործ գտնել։ Օրինակ՝ կարող ես խանութում գործակատար աշխատել։ Ի՞նչ ես գլուխդ դցել, որ պիտի անպայման կատակերգու լինես։*

ՀԱՐԻ— *Ես աշխարհին տալու բան ունեմ, բայց մարդիկ էնքան անխելք են, որ չեն թողնում ունեցածս իրենց պարգևեմ։ Ինձ ոչ ոք չի հասկանում։*

ԴԱԴԼԻ— *Է՜հ, էլսի, էլսի... Աչքս լույս, նստել, ինչ-որ կնկա եմ սպասում, որի երեսը իսկի չեմ էլ տեսել։ Ինչ-որ Լորին Սմիթի։ Կյանքումս տեսած չկամ։ Սատանի բան էր, ասա՝ համարը ճիշտ հավաքեիր, էլի։ Հիմա կհայտնվի զուգված-զարդարված մի գեղեցկուհի, դե՛, տղա ես՝ տակից դուրս արի։ Խնդրում եմ մի գարեջուր տաք։*

ՀԱՐԻ— *Նիք, դու պետք է ինձ տնսնես բեմում։ Էնքան արտակարգ բան է ստացվում. ամբողջ Ամերիկայում ճրագով ման գաս, նմանը չես գտնի։ Մենակ թե ինձ հնարավորություն տուր։ Փողը նախօրոք չեմ ուզում։ Թող մենակ էս իրիկուն փորձեմ։ Թե բոլորը ծիծաղից չուշաթափվեն, բան չունեմ ասելու, կթողնեմ կգնամ։ Էստրադայի արվեստը շունչը փչել է, թե չէ ինձ նման տղան էստեղ ի՞նչ ուներ։*

ՆԻՔ— *Դու ծիծաղեցնող չես։ Ա՜յ անբախտ լակոտ, քեզանից ի՞նչ կա-*

տակերգու։ Ի՞նչ ես ցանցառի նման մեյմունություն անում, գրողը տանի։ Ախր քեզ նայելիս մարդու սիրտ է մղկտում։ Էդ ինչի՞դ վրա ես էդպես հրճվում, զվարճանում։ Ամբողջ կյանքումդ հացի կարոտ չե՞ս եղել։

ՀԱՐԻ— *Հա, հենց հացի կարոտ եմ եղել, բայց մի մոռացիր, որ որոշ բաներ ավելի կարևոր են, քան մնացածը։*

ՆԻՔ— *Օրինակ, էդ ի՞նչն է ավելի կարևոր, քան մնացածը։*

ՀԱՐԻ— *Օրինակ, տաղանդը ավելի կարևոր է, քան թե, ասենք, փողը։ Բա՛։ Իսկ ես տաղանդ ունեմ։ Գիշեր-ցերեկ գլխումս նոր մտքեր են ծնվում։ Ամեն ինչ ինձ մոտ ինքն իրեն է ստացվում։ Ես ոճ ունեմ, ուղղակի մի քիչ ժամանակ է պետք, որ ոճս հղկեմ։ Ուրիշ ոչինչ։*

Ուեսլին ձայնապարաստից ինչ-որ բան է նվագում դաշնամուրով, մի չնաշխարհիկ, երկնային մեղեդի: Հարին, մի պահ ականջ դնելով, սկսում է պարել:

ՆԻՔ— (Չորս կողմը նայելով): *Ամբողջ Ֆրիսկոյում իմ պանդոկից քոսոտը չկա, բայց լույս է ընկնում մի մարդ ու ոտը դեմ տալիս, որ հատուկ իր համար շամպայնի պաշարներ դիզեմ։ Պոռնիկները ներս են մտնում ու գոռում վրաս, թե իրենք լեդիներ են։ Գալիս է տաղանդն ու աղաչանք թափում, որ ասպարեզ տամ իրեն։ Մինչև անգամ բարձր խավի մարդիկ են մեկ-մեկ բարեհաճում։ Ինչից է՝ չեմ հասկանում։ Թե խմիչքից է։ Թե պանդոկի տեղից։ Թե ինձանից է։ Թե պանդոկս է էդպես խելքահան անում։ Նոյի տարվա էս ծակուռը։* (Դադար): *Թե՞ մարդիկ մենակ էստեղ են իրենց տանն զգում։*

Ուեսլին շարունակում է նվագել. հիմա արդեն ընկել է տարերքի մեջ, իսկ Հարին սկսում է նոր համար մշակել, արդեն ծանոթ ոճի մի բան: Դադլին ավելի ու ավելի է տրտմում:

ՔԻԹԻ— *Չե՞ս պարի ինձ հետ։*

ՋՈ— (Բարձրաձայն): *Ես պարել չգիտեմ։*

ՔԻԹԻ— *Ամեն մարդ էլ գիտի, ի՞նչ մի դժվար բան է։ Ուղղակի գրկիր ինձ ու վերջ։*

ՋՈ— *Չէի ուզենա սիրտդ կոտրել, բայց ներողություն, պարել չգիտեմ։ Երանի իմանայի։*

ՔԻԹԻ— *Դե լավ, խնդրում եմ։*

ՋՈ— *Կներես։ Ես էլ սրտանց կուզենայի։*

Քիթին պարում է մենակ:

Մտնում է Թոմը՝ մի փաթեթ ձեռքին: Տեսնում է Քիթիին ու նորից գլուխը կորցնում: Իրեն հավաքելով՝ փաթեթը դնում է Ջոյի սեղանին։

ՋՈ— (Փաթեթը վերցնելով)։ *Ի՞նչ ես բերել։*

ԹՈՄ— *Երկու դոլարի խաղալիքներ։ Ինչի համար որ ուղարկել էիր։ Վաճառողուհին հարցրեց, թե խաղալիքներն ինչիս են։ Չիմացա ինչ պատասխանեմ։* (Սևեռուն հայացքով նայում է Քիթիին, ապա նորից դառնում Ջոյին)։ *Ջո, ինձ փող է պետք։ Ես հոգով մարմնով պարտական եմ քեզ ու պատրաստ եմ սրտիդ ուզածն անել, բայց ի՞նչ կլինի, գոնե հազարից մեկ մի քիչ փող տուր ինձ։*

ՋՈ— *Փողն ինչի՞դ է պետք։*

Թոմը շրջվում է հափշտակված նայում պարող Քիթիին։

(Նկատելով այդ)։ *Պարզ է։ Առ։ Հինգ դոլար տամ։* (Գոռում է)։ *Պարել գիտե՞ս։*

ԹՈՄ— (Հպարտությամբ)։ *Հինգ տարի առաջ, Սակրամենտոյում՝ պարերի մրցույթին, երկրորդ տեղն եմ գրավել։*

ՋՈ— (Փաթեթը բացելով, բարձրաձայն)։ *Շատ լավ։ Ուրեմն պարիր նրա հետ։*

ԹՈՄ— *Ո՞ւմ, նրա՞։*

ՋՈ— (Բարձրաձայն)։ *Հա, հենց նրա՝ Քիթի Դյուվալի. հռչակավոր էստրադային արտիստուհու, համաշխարհային էստրադայի թագուհու հետ։ Պարիր։ Նա ուզում է պարել։*

ԹՈՄ— (Քիթի Դյուվալ անունն իսկ երկրպագելու պատրաստ, անճարակորեն)։ *Ջո, մի բան ասե՞մ։*

ՋՈ— (Հանում է խաղալիքներից մեկն ու լարում)։ *Կարիք չկա։ Գիտեմ։ Դու սիրում ես նրան։ Իրոք սիրում ես։ Կույր չեմ, տեսնում եմ։ Բայց զգույշ մնա։ Էլի խելքդ չթռցնես։*

ՆԻՔ— (Հիացմունքից քար կտրած նայելով Ուեսլիին և ունկնդրելով նրա նվագը)։ *Դե արի հասկացիր։ Գալիս է, ուզում է աման լվացող աշխատել։ Սովից ուշքը գնում է։ Հետո նստում է դաշնամուրի մոտ ու ի՜նչ Հեյֆեց, ի՜նչ ֆլան-ֆստան, բոլորին էլ տալիս է, անցնում։*

ՋՈ— *Հեյֆեցը ջութակ է նվագում։*

ՆԻՔ— *Ի՜հ, ի՞նչ ես բանի հետևից ընկնում։ Ախր շատ լավ է նվագում, է՛։*

ԹՈՄ— (Քիթիին)։ *Քիթի...*

ՋՈ— (Խաղալիքը լարելով՝ բաց է թողնում, բարձրաձայն)։ *Ոչինչ մի ասա։ Ուղղակի պարիր։*

Թոմն ու Քիթին պարում են։ Նիքը, վաճառասեղանի հետևը կանգնած, չորս կողմն է նայում։ Հարին պարում է։ Դադլին վիշտը թաղում է գարեջրի մեջ։

Մտնում է Լորին Սմիթը՝ մոտ երեսունհինգ տարեկան, շատ ինքնահավան ու ծիծաղելի տեսքով մի կին։ Մոտենում է վաճառասեղանին։

ՆԻՔ— *Ի՞նչ կա, տիկին։*

ԼՈՐԻՆ— (Հայացքը ման է ածում, տնտղում բոլոր երիտասարդներին՝ սրանց խուճապի մատնելով)։ *Ես փնտրում եմ այն պատանուն, որի հետ խոսում էի հեռախոսով։ Դաղլի Ռ. Բոսթուիքին։*

ԴԱԴԼԻ— (Տեղից վեր թռչելով՝ վազում է նրա մոտ, մնում ապուշ կըտրած)։ *Դաղլի Ռ.* (Կարկամած) *Բոսթուիքի՞ն։ Հա՜։ Նա դուրս եկավ տասը րոպե առաջ։ Էն մեղք ու կրակ կաղի հետ չե՞ք։*

ԼՈՐԻՆ— *Կաղի՞։*

ԴԱԴԼԻ— *Հա։ Դաղլի Բոսթուիք։ Հենց էդպես էլ անունն ասաց։ Ու խընդրեց հայտնել, որ չսպասեք իրեն։*

ԼՈՐԻՆ— *Ինչ արած։* (Ուղղվում է դեպի դուռը, հետ շրջվում)։ *Համոզվա՞ծ ես, որ Դաղլի Բոսթուիքը հենց դու չես։*

ԴԱԴԼԻ— *Ո՞վ՝ ե՞ս։* (Քիթը երկինք տնկելով)։ *Իմ անունը Ռոժե Թընըֆրանսիա է։ Ես կանադական ֆրանսիացի եմ։ Կյանքումս առաջին անգամ էի տեսնում այդ թշվառականին։*

ԼՈՐԻՆ— *Ինձ թվում է ձայնդ նման է հեռախոսով լսածս ձայնին։*

ԴԱԴԼԻ— *Զուգադիպություն է։ Պատահականություն։ Բախտի քմահաճույք։ Կամ նման մի բան։ Ձեռ քաշեք այդ մտքից։ Խեղճ հաշմանդամը տասը րոպե առաջ ոտքերը քարշ տալով՝ դուրս եկավ այստեղից։*

ԼՈՐԻՆ— *Նա ասաց՝ որոշել է ինքնասպան լինել։ Ես պարզապես ուզում էի նրան օգնության հասնել։* (Գնում է)։

ԴԱԴԼԻ— *Օգնության հասնե՞լ։ Սրանից ի՞նչ օգնության հասնող։* (Վազում է հեռախոսի մոտ)։ *Ա՜խ, էլսի, էլսի... Տես ինչ օյին եկավ։ Չէ, մյուս անգամ թեկուզ վիզս կտրեն, էլ էս տեսակ բան չեմ անի։* (Թերթում է հեռախոսագիրքը)։ *Թե անտեր համա՞րն ինչի եմ անընդհատ մոռանում։ Էս շաբաթ մի հարյուր անգամ զանգած կլինեմ, բայց էլի համարը մտքումս չի մնում։ Թող ինչքան ուզում է հեռախոսի մոտ չգա, մեկ է, զանգելու եմ։ «Տանը չի»։ «Դուրս է եկել»։ «Գնացել է աշխատանքի»։ «Սխալ եք զանգել»։ Ամեն ինչ թարս է։ Իսկ իմ աչքերից քունը փախել է։* (Ասես մարտահրավեր նետելով)։ *Ոնց էլ լինի, գոնե մի անգամ կմոտենա հեռախոսին։ Թե աշխարհում իսկական սեր կա, չի կարող պատահել, որ չմոտենա։ Էս է. Սանսեթ յոթանասուներեք-քառասունինը։* (Հավաքում է համարը)։

Ջոն շարունակում է գենել խաղալիքները։ Եղած-չեղածը մի մեծ լարովի խաղալիք է, մի քանի շվի և մի փոքրիկ երաժշտական արկղիկ։ Ջոն արագ-արագ մեկը մյուսի հետևից փչում է շվիները, ասես հապճեպ ծանոթանում դրանց։ Թոմն ու Քիթին ավարտում են պարը։ Թոմը չի կշտանում Քիթին նայելուց։

ԴԱՎԻԼԻ— *Ալո՛, Սանսեթ յոթանասուներեք-քառասունի՞նն է... Էլսիին կարելի՞ է... Այո...* (Շեշտված, դառնագին): *Ո՛չ, Դավլի Բոսթուիքը չի։ Ռոժե Թընբֆրանսիան է Կանադայի Մոնրեալ քաղաքից։ Ես միսս Մանդելշպիգելի մանկության ընկերն եմ։ Երկուսս էլ նույն մանկապարտեզում էինք։* (Ձեռքով փակում է լսափողը): *Գրողը ձեզ խեղդի։* (Լսափողի մեջ): *Այո... Շնորհակալություն, կսպասեմ։*

ԹՈՄ— *Ես քեզ սիրում եմ։*

ՔԻԹԻ— *Կուզե՞ս գնանք ինձ մոտ։*

Թոմը պապանձվում է։

Երկու դոլար ունե՞ս։

ԹՈՄ— (Կլուխը շփոթահար օրորում է): *Հինգ դոլար ունեմ, բայց ես քեզ սիրում եմ։*

ՔԻԹԻ— (Աչքերը նրան հառելով): *Ուզում ես ունեցած-չունեցածդ ծախսե՞լ։*

Թոմը գրկում է նրան։ Երկուսով հեռանում են։

ՋՈ— (Նայում է նրանց հետևից, ապա նորից դառնում իր խաղալիքին): *Էս ո՞ւր է նավահանգստի բեռնակիրը՝ Մաքքարթին։*

ՆԻՔ— *Կերևա, էլի։*

ՋՈ— *Խելքդ ի՞նչ է կտրում, էսօ՞ր ինչի մասին է խոսելու։*

ՆԻՔ— *Հազար ու մի բանի, սովորականի պես։ Գնամ իմանամ երրորդ մրցավազքին ո՞ր ձին է տարել։*

ՋՈ— *Թանկ ժամանակը։*

ՆԻՔ— *Էդ քո՛ կարծիքն է։* (Գնում է):

ՋՈ— (Ինքն իրեն): *Վեցերորդ մրցավազքին էսօր մի ձի է մասնակցում, անունը՝ Մաքքարթի։*

ԴԱՎԻԼԻ— (Լսափողի մեջ): *Ալո՛։ Ալո՛, Էլսի, դո՞ւ ես...* (Ձայնը նվազում է, ծնկները թուլանում են): *Վա՛յ, տեր աստված, հեռախոսի մոտ է եկել... Էլսի, ես Նիքի պանդոկում եմ, Փասիֆիք փողոցում։ Դու ամեն գնով պիտի գաս էստեղ, խոսելու բան ունեմ... Ալո՛։ Ալո՛, Էլսի՛...* (Ապշած): *Ցա՞ծ դրեց, թե՞ անջատեցին։* (Կախում է լսափողը և մոտենում վանառասեղանին):

Ուեսլին դեռ դաշնամուր է նվագում: Հարին դեռ պարում է: Ջոն լարում է խաղալիքն ու հետևում , թե ինչպես է գործում:

Վերադառնում է Նիքը:

ՆԻՔ— (Խաղալիքին նայելով): *Տես, է՛։ Լավ են հնարել։*

ՋՈ— *Ինչքա՞ն եմ շահել։*

ՆԻՔ— *Ի՞նչ իմացար, թե շահել ես։*

ՋՈ— *Քեզ հիմարի տեղ մի դիր։ Նա ասաց՝ Թանկ ժամանակը բոլոր ձիերից էլ առաջ է անցնելու։ Իսկ նա սիրահարված է, չէ՞։*

ՆԻՔ— *Ա՜հ, չգիտեմ ոնց է եղել, ինչ, բայց Թանկ ժամանակը իրոք առաջին տեղն է բռնել։ Դրածդ տասը դոլարի դիմաց ութսունն ես շահել։ Էդ ո՞նց ես հաջողացնում։*

ՋՈ— (Քրքջալով): *Հավատ է պետք, հավա՜տ։ Ինչքա՞ն է մյուսներից առաջ անցել։*

ՆԻՔ— *Կես գլուխ։ Ստուգիր ծրագրում. ամենադանդաղոշ, ամենաէժան, ամենաանպետք ձին է եղածների մեջ, իսկի հեծնորդն էլ չի բանի նման։ Թե ինչի՞ է բախտիս էսպես քար ընկել։*

ՋՈ— *Ինչքա՞ն ես տանուլ տվել։*

ՆԻՔ— *Հիսուն սենթ։*

ՋՈ— *Խաղալը քո բանը չի։*

ՆԻՔ— *Ինչի՞։*

ՋՈ— *Որովհետև հիսուն սենթից ավել փող չես դնում։ Լվի չափ հավատ ունես, այ թե ինչի։*

ՀԱՐԻ— (Գոչում է): *Ո՞նց է, Նիք, հավանո՞ւմ ես, թե՞ չէ։* (Հիմա նա իսկապես ջանք չի խնայում. ձեռքերն ու ոտքերը անդուլ շարժման մեջ են):

ՆԻՔ— (Շուռ է գալիս, նայում): *Վատ չի։ Քեզ հաշվիր ընդունված։ Սեղանները կսպասարկես։* (Ուեսլիին): *Լսիր, Ուեսլի, կարո՞ղ ես իրիկունը էդ նույնը նվագել։*

ՈՒԵՍԼԻ— (Շրջվում է՝ շարունակելով նվագել): *Հաստատ չգիտեմ։ Մի բան կնվագեմ, էլի, միստր Նիք։*

ՆԻՔ— *Լավ։ Դու էլ ես ընդունված։* (Անցնում է վանառասեղանի հետևը):

Պանդոկի մթնոլորտը հիմա ջերմ է, բնական, զուտ ամերիկյան ոգով անկաշկանդ: Ամեն ոք անմեղ է ու բարի, ամեն ոք անում է այն, ինչ, իր կարծիքով, պիտի որ անի: Ամեն մեկի վարքագծի մեջ նկատելի են ամերիկյան խորունկ պարզամտությունն ու վստահությունը: Ոչ մեկը մյուսի հետ մրցության մտնելու նպատակ չունի: Ոչ մեկն ատելությամբ չի լցված մյուսի նկատմամբ: Ամեն ոք ապրում է ու թողնում, որ մյուսն էլ ապրի: Ամեն ոք հետևում է իր նակատագրի թելադրանքին, եթե զգում է, որ պետք է հետևի, կամ ջանում է խուսափել նակատագրից, եթե զգում է, որ պետք է խուսափի, կամ էլ մոռացության է տալիս իր նակատագիրը, եթե զգում է, որ պետք է մոռացության տա: Թեպետ բոլորն էլ միանգամայն լուրջ են, բայց տեսարանը ակնհայտորեն շաղախված է հումորով ու ժպիտով: Ասես ամեն ոք նոգով ու մարմնով ձերբազատվել է իր վրին փաթաթված ընկճվածության, սրտնեղանքի, երկյուղի ու անզորության հոգեվիճակից և հայտնվել անհոգության ու խանդաղատանքի շատ ավելի բնական վի-

ճակում: Ամեն ոք յուրովի, իր բուն էությամբ ձուլվել է շրջապատին. Ռեսլին այնպես լավ է նվագում, ինչպես երբեք չի նվագել. Հարին այնպես լավ է պարում, ինչպես երբեք չի պարել. Նիքը, վանառասեղանի հետևում կանգնած, փայլեցնում է բաժակները. Ջոն տնեղում է խաղալիքն ու էթի տակ ժպտում. Դաղլին թեև մտատանջությունները դեռ չի թոթափել, բայց համենայն դեպս, հիմա հանդարտ է ու տրտում հավասարակշռվածությամբ լի. Ուիլին երջանիկ է իր խաղով տարված. Արաբը խորասուզվել է հուշերի մեջ, որոնց գրկում էլ կուզենար մնալ:

Եվ հանկարծ այս մթնոլորտում հայտնվում է Բլիքը: Սա մարդ արարածների այն տեսակից է, որ հենց առաջին հայացքից հակակրանք են առաջացնում: Արտաքուստ նա ուրիշներից բնավ չի տարբերվում: Տեսքը սովորական է: Ոչ մի ակնբախ պակասություն չունի, բայց համոզված ես, որ ամենաներողամիտ վերաբերմունքի դեպքում էլ անհնար է նրան մարդ էակ համարել: Նա ուժեղ տղամարդ է առանց իսկական ուժի, ուժեղ միայն թույլերի մեջ. թույլ մեկը, որ սովոր է ճնշել իրենից թույլին:

Բլիքը մտնում է իբր հենց այնպես, ասես պանդոկի մշտական հաճախորդներից է, և Հարին տեղնուտեղը դանդաղեցնում է պարը:

ԲԼԻՔ— (Անուշ-մեղուշ, շինծու մտերմությամբ): *Ողջույն, Նիք:*

ՆԻՔ— (Ընդհատում է գործը, թեքվում վանառասեղանի վրա): *Ո՞ր խաչից է, ո՞ր քամին քեզ էս կողմը բերեց: Դու շատ մեծ մարդ ես իմ խեղճուկրակ պանդոկի համար:*

ԲԼԻՔ— (Շոյված): *Դե լա՜վ, դու էլ, Նիք:*

ՆԻՔ— *Իշխանավորներն էստեղ երբեք չեն գալիս: Ա՜ռ, խմիր:* (Մի շիշ վիսկի է հանում):

ԲԼԻՔ— *Շնորհակալ եմ, չեմ խմում:*

ՆԻՔ— (Ինքը խմելով): *Էդ ինչի՞:*

ԲԼԻՔ— *Ի պաշտոնե:*

ՆԻՔ— *Քո բանուգործն ի՞նչ է. բարքերին հետևող հարամ ոստիկանությունից չե՞ս: Իսկ ինձ մոտ բարքերն արի տես, որ անարատ են:*

ԲԼԻՔ— (Կտրուկ): *Պոռնիկները էստեղ բուն են դրել:*

ՆԻՔ— (Զայրագին): *Ի՞նչ է ուզածդ:*

ԲԼԻՔ— (Բարձրաձայն): *Ի՞նչ պիտի լինի. ուզում եմ զգուշացնել, որ վերջ տաք դրան:*

Երաժշտությունը դադարում է, լարած խաղալիքը մեկեն անշարժանում: Տիրում է քար լռություն. մթնոլորտը համակված է անսովոր երկյուղով ու անհերդաշնակությամբ: Հարին չգիտի, թե ձեռուտն ինչ անի: Ռեսլիի բևերը անգոր կախ են ընկել: Ջոն խաղալիքը կամացուկ հրում է մի կողմ՝ մեծ հետաքրքրությամբ շուրջը նայելով: Ուիլին ընդհատում է խաղը, շրջվում ու սպասողական դիրք ընդունում: Դաղլին թափով շտկվում է, կարծես ուզում է ասել. «Ես վախեցող պտուղը չեմ: Գիտեմ, որ միակ կարևոր բանը աշխարհում սերն է»: Արա-

բը նույնն է, ինչ որ միշտ, միայն թե ավելի աչալուրջ է: Նիքը մեծամտորեն հիբը բարձր է պահում:

Այս լռությունն ու լարվածությունը մի պահ երկարում են, ասես Բլիքն սպասում է, որ բոլորը զգան իր ներկայությունը: Նա ակնհայտորեն շոյված է այն բանից, որ տպավորություն է գործել Հարիի, Դաղլիի, Ուեսլիի և Ուիլիի վրա, բայց թեթևակի խոցված է Նիքի անտարբերությունից ու անբարյացակամությունից:

ՆԻՔ— *Ի՞նչ ես աչքերդ չռել վրաս։ Ես անբարոյական կնկան բարոյականից տարբերել չգիտեմ։ Ամուսնացա՞ծ ես։*

ԲԼԻՔ— *Հարցեր տվողը ե՛ս եմ, ոչ թե դու...*

ՆԻՔ— (Ընդհատելով): *Երևի մի քառասունհինգ տարեկան մարդ ես։ Էդ տեսակ բաները ինձանից լավ կիմանաս։*

ԲԼԻՔ— (Փրփրած): *Ասում եմ՝ պոռնիկները էստեղ բուն են դրել։*

ՆԻՔ— (Սկսում է բղավել): *Ի՞նչ ես անշառ գլուխս շառի մեջ գցում։ Մարդիկ գալիս են էստեղ խմելու, հետո էլ իրենց համար թողնում գնում են։ Իմ ինչի՞ն է պետք նրանք ովքեր են։*

ԲԼԻՔ— *Է՛հ, իսկ ինձ պետք է։*

ՆԻՔ— *Պիտի կնկա հետ ման գաս փողոցում ու տեղաշոր մտնես, որ իմանաս՝ փողոցային է, թե չէ։ Փորձիր, կտեսնես։ Ի՞նչ է, չէիր ուզի։ Էն էլ ո՞նց կուզեիր։*

ԲԼԻՔ— *Ավել-պակաս դուրս մի տուր, թե չէ որջդ փակել կտամ։*

ՆԻՔ— (Իմիջիայլոց, առանց շարակամության): *Լսիր, ես չեմ ուզում գործ ունենալ ոչ քեզ, ոչ էլ քեզպեսների հետ։ Ի՞նչ է աշխարհը վատն է, դու էլ կաշվիցդ դուրս ես գալիս, որ ավելի վատը դարձնես, սարքես քեզ նման։*

ԲԼԻՔ— (Ցասումնալի դադարից հետո, արհամարհանքով): *Իրիկվա կողմն էլ կհանդիպեմ։* (Գնում է դեպի դուռը):

ՆԻՔ— (Զայրույթից եռ գալով, բայց շատ զուսպ): *Ի՞նչ նեղություն։ Ուրիշին ուղարկիր։ Քո բնավորությունը իմ սրտով չի։*

ԲԼԻՔ— (Անփույթ արհամարհանքով): *Մի խախտիր օրենքները։ Քոնն էլ իմ սրտով չի։* (Աչքերն այս ու այն կողմ է դարձնում և գնում):

Մի պահ լռություն է տիրում: Ապա Ուիլին շրջվում է, մի ուրիշ պղնձադրամ գցում խաղամեքենայի մեջ և նորից սկսում խաղալ: Ուեսլին դառնում է դաշնամուրի կողմն ու անվստահորեն սկսում ծնգծնգացնել. նվագելու սիրտ չունի: Հարին աննպատակ թրև է գալիս. ի վիճակի չի պարել: Դաղլին խորասուզվում է իր սովորական մելամաղձի մեջ: Նիքը մի ֆիչ շվշվացնում է ու ճանկարծ լռում:

ՋՈ— (Լարում է խաղալիքը: Կատակով): *Նիք, միտք ունես էդ մարդուն էն աշխա՞րհն ուղարկել։*

ՆԻՔ— *Զզվանքս գալիս է։*

ՋՈ— *Հա՞, ինչո՞ւ։*

ՆԻՔ— *Արժի՞ դրա նմանի համար հոգին պղտորել։ Բա արժի՞ դրան ատել։ Ախր տեղով ոչնչություն է։ Մարդ չի, է՜, սոխի գլուխ է։ Բեղից ընկած բրինձ։ Բայց ամեն անգամ, հենց գալիս է էստեղ, պայթում եմ կատաղությունից։ Խմել չի ուզում։ Նստել չի ուզում։ Ոչ մի բանի մասերի արանքով նայել չի ուզում։ Ինձ մի բան բացատրիր։*

ՋՈ— *Ջույգ աչքիս վրա։*

ՆԻՔ— *Ինչի՞ է նրա պես շան որդին ձեռից եկածն անում, որ աշխարհը փոխի։*

ՋՈ— (Զարմանքով): *Նա է՞լ է ուզում աշխարհը փոխել։*

ՆԻՔ— (Սրտնեղած): *Դու գիտես՝ ինչ եմ ասում։ Ինչի՞ է մարդկանց բկից բռնում։ Չէ, դա հիվանդություն ունի։*

ՋՈ— (Ասես ինքն իրեն, մտորելով այն փաստի շուրջը, որ Բլիքն էլ է ուզում աշխարհը փոխել): *Ու դեռ աշխարհն էլ ուզում է փոխել։*

ՆԻՔ— *Դե, ես էլ իմ գործին եմ նայում ու նրան ատում։*

ՋՈ— *Բանը նա չի, Նիք։ Բանը ամեն ինչն է՝ եղած-չեղածը։*

ՆԻՔ— *Ըհը, գիտեմ։ Բայց մեկ է, չեմ ուզում դրա երեսը տեսնել։ Տականք է, տականք։ Ինձ հասկանում ես, չէ՞։ Վայն եկել է խեղճերին ու անճարներին տարել. գլխներին սև է բերում* (Շփոթահար): *Աղջըկերքից մեկը քիչ էր մնում ինքնասպան լինի դրա երեսից։* (Մոլեգին): *Դե թող համարձակվի էստեղ մեկնումեկին կպչել, տես գլուխը ո՞նց եմ ջարդում։ Սա ի՜մ պանդոկն է։* (Փոքր-ինչ խորհելով): *Կամ էլ թող փորձի մեկնումեկի սիրտը նեղացնել։*

ՋՈ— *Միգուցե հոգու խորքում նա էդքան էլ վատը չի։*

ՆԻՔ— *Տակն էլ գիտեմ, գլուխն էլ։ Անպետքի մեկն է։*

Այս խոսակցության ընթացքում Ուիլին նորից սկսում է ոգևորված նվագել, խաղալիքը գործի է ընկնում, իսկ Հարին կամաց-կամաց սկսում է պարել: Նիքը դուրս է գալիս վաճառասեղանի հետևից և հիմա երեխայի պես հափշտակված, իր ողջ զայրույթը մոռացության տալով, նայում է խաղալիքին: Նրա դեմքը դառնում է խնդուն, ամեն ինչ նրա ժպիտն է բերում: Շուռ է գալիս, ականջ դնում Ուեսլիի նվագին, նայում Հարիին, գլխով է անում Արաբին, Դադլիին ի սեր՝ օրորում գլուխը, բարեսրտորեն ձեռքը թափ տալիս Ուիլիի կողմը: Ինչ լավ է, այստեղ՝ իր պանդոկում, ամերիկյան այս անշուք ու հասարակ ժամանցարանում, ամեն մարդ իր համար ազատ շունչ է քաշում:

ՆԻՔ— *Լավն է պանդոկս։ Դրախտը ձեզ օրինակ։ Է՜յ, կատակերգու, էս իրիկուն պարելը քո հույսին եմ թողնում։ Երեսս պարզ կանես։ Ուեսլի, իրիկունը դրա պես մի բան կնվագես։ Շատ լավ է ստացվում։*

ՀԱՐԻ— *Շնորհակալ եմ, Նիք։ Տեր աստված, իմ ճամփան էլ վերջապես բացվեց։* (Ձանգահարում է հեռախոսով)։ *Ալո՛, մա՞մ. դո՞ւ ես, մամ... Հարին է։ Ես գործ ճարեցի։* (Կախում է լսափողը և ժպիտը դեմքին շրջում պանդուկում)։

ՆԻՔ— (Այս ամբողջ ժամանակաընթացքում խաղալիքից աչքերը չկըտրելով)։ *Տես, է՛ էս մեկը որ հա՛։ Բայց ի՞նչ է սխալ։*

Մտնում է Մերի Լ.-ն։

ՋՈ— (Խաղալիքը Նիքի և Մերի Լ.-ի կողմը պարզելով)։ *Խաղալիք է, Նիք։ Մարդու հորինած հնարակերտ սարք երեխաների ձանձրույթը, թախիծը կամ սրտնեղությունը փարատելու համար։ Ազնիվ զվարճալիք։ Մի զվարճալիք, որ, ինչ ասեմ, բոլոր մյուսներից հազար անգամ ազնիվ է։*

Բոլորը նավարվում են Ջոյի սեղանի շուրջը՝ նայելու խաղալիքին։ Սա կանգ է առնում։ Ջոն լարում է երաժշտական արկղիկը, վերցնում շվիներից մեկն ու սկսում փչել։ Նվին շատ տարօրինակ՝ ծիծաղելի ու միաժամանակ թախծոտ ելևէջներ է հանում։

ՋՈ— *Հրաշալի է։ Ողբերգական է, բայց հրաշալի։*

Ուեյին դաշնամուրով նվագում է երաժշտական արկղիկի մեղեդին։ Մերի Լ.-ն նստում է մի սեղանի մոտ։

ՆԻՔ— *Ջո... էդ աղջիկը՝ Քիթին... ի՞նչ կար մտքում, որ ինձ ատամնաբույժ ասաց։ Ես ոչ մեկի մազին էլ չեմ կպչի, ինչ մնաց, թե ատամ հանեի։* (Մոտենում է Մերի Լ.-ի սեղանին)։

Հարին պարում է՝ նմանակելով խաղալիքի շարժումները։ Դաշնամուրի նվագն ավելի ու ավելի բարձր է ելնում։ Հետզհետե լույսը մարում է, մինչդեռ դաշնամուրի մենանվագը շարունակվում է։

Վարագույր

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Անցել է մի ժամ: Բոլոր նրանք, ովքեր վարագույրն իջնելիս Նիֆի պանդոկում էին, դեռևս այստեղ են: Ջոն, իր սեղանի մոտ նստած, անշտապ խառնում է խաղաթղթերի մի կապուկ և միևնույն ժամանակ զննում դիմացի սեղանին նըստած կնոջ դեմքը. այնպես է նայում նրա պայուսակի վրա դրոշմված անվանատառերին, ասես դրանք աշխարհի կորուսյալ փառքի խորհրդանշաններն են: Կինն իր ներքին, ժամանակ առ ժամանակ, բռուցիկ հայացքներ է նետում Ջոյի կողմը: Ավելի շուտ, զգում է Ջոյի ներկայությունը, ինչպես որ զգացել է արդեն մի ժամ շարունակ: Գարեջուրը մի քիչ նրա գլուխն է ընկել, Ջոյի կատարն էլ է արդեն տաքացած, բայց Ջոն սովորականի պես լիովին տիրապետում է իրեն, պարզապես ամեն ինչ ավելի սուր է ընկալում: Մյուս բոլորը չորս կողմն են, սեղանների շուրջը և այլն:

ՋՈ— *Դա ի՞նչ է նշանակում. Մեյջ Լո՞բովից։*

ՄԵՐԻ— *«Դա»-ն ինչի՞ հետ եք։*

ՋՈ— *Թե՞ Մեյբլ Լեպեսկու անուն-ազգանունն է։*

ՄԵՐԻ— *Ի՞նչ անուն-ազգանուն։*

ՋՈ— *Մ. Լ. սկզբնատառերով նշված անուն-ազգանունը։ Ձեր պայուսակի վրա։*

ՄԵՐԻ— *Ոչ։*

ՋՈ— (Երկար-բարակ գլուխ է կոտրում, թե ինչ անուն-ազգանուն կարող է լինել, մի խաղաթուղթ է հանում կապուկից, աչքերը հառում կնոջ գեղեցիկ դեմքին): *Մարջի Լո՞նգուորթի։*

Այս ամենը չափազանց բնական է ու անկեղծ, երկուսն էլ ամենևին կատակ չեն անում: Գլուխները տաք են, բայց երկուսն էլ իրենց շատ լուրջ են պահում:

ՄԵՐԻ— *Ոչ։*

ՋՈ— (Ձայնի ավելի բարձր ելևէջով, ասես փոքր-ինչ անհանգստացած): *Միջ Լո՞րի։*

Մերին տարուբերում է գլուխը:

Իմ անուն-ազգանունն էլ Ջ. Թ. տառերով է սկսվում։

ՄԵՐԻ— (Դադար): *Ջո՞ն։*

ՋՈ— *Ոչ։* (Դադար): *Մարթա Լանքա՞սթեր։*

ՄԵՐԻ— *Ոչ։* (Կարճ դադար): *Ջոզեֆ։*

Ջո— *Համարյա թե։ Անունս Ջոզեֆ է, բայց բոլորն ինձ Ջո են ասում։ Ազգանունս դժվար է։ Մի քիչ օգնեմ ձեզ։ Ես իռլանդացի եմ։* (Դադար): *Միգուցե ուղղակի սովորական Մերի՞։*

ՄԵՐԻ— *Այո, դուշակեցիք։ Ես էլ եմ իռլանդուհի։ Համենայն դեպս, հորս կողմից։ Մորս կողմից անգլուհի եմ։*

ՋՈ— *Ես երկու կողմից էլ իռլանդացի եմ։ Մերին իմ սիրած անուններից է։ Դրա համար էլ երևի միտքս չեկավ։ Ժամանակին, Մեքսիկո քաղաքում, մի աղջկա հետ էի հանդիպում, նրա անունն էլ էր Մերի։ Ամերիկուհի էր, Ֆիլադելֆիացի։ Ամուսնացավ էնտեղ, այսինքն՝ Մեքսիկոյում։ Ես էլ էի դեռ էնտեղ։ Մենք սիրահարված էինք իրար։ Համենայն դեպս, ես սիրահարված էի։ Ուրիշի սիրտը երբեք չես կարդա։ Պատկերացրեք, որ նա նշանված էր ինչ-որ մեկի հետ. մայրը մոտն էր, էնպես որ երկուսով բանը գլուխ էին բերել։ Մի վեց-յոթ տարի անցած կլինի։ Հիմա երևի երեք-չորս երեխա ունի։*

ՄԵՐԻ— *Դեռ սիրո՞ւմ եք նրան։*

ՋՈ— *Դե... չէ՞։ Այսինքն՝ ճիշտն ասած, չգիտեմ։ Երևի սիրում եմ։ Նրա ամուսնությունից նույնիսկ երկու օր առաջ ես դեռ չգիտեի, որ ուրիշի հետ է նշանված։ Կարծում էի՝ ե՛ս պիտի հետն ամուսնանամ։ Անընդհատ երազում էի մեր ապագա երեխաների մասին, ինձուինձ պատկերացնում նրանց։ Իմ սիրած երեխան երրորդն էր։ Առաջին երկուսը շատ անուշիկ էին։ Սիրուն-սիրուն, լավն ու խելոք։ Բայց երրորդն ուրիշ էր. հիմարիկի մեկը, իսկական խենթուկ։ Նրա համար կյանքս կտայի։ Երբ Մերին ասաց, որ ամուսնանում է, երկու առաջնեկիս համար էնքան վատ չզգացի, ինչքան էդ խենթուկի։*

ՄԵՐԻ— (Մի վայրկյան տևած դադարից հետո): *Ինչո՞վ եք զբաղվում հիմա։*

ՋՈ— *Ինչո՞վ։ Ճիշտն ասած, ոչ մի բանով։*

ՄԵՐԻ— *Մի՞շտ եք շատ խմում։*

ՋՈ— (Լրջախոհ): *Ոչ միշտ։ Միայն արթուն ժամանակ։ Իսկ գիշերը յոթուկես ժամ քնում եմ։*

ՄԵՐԻ— *Ինչ լավ է։ Արթուն ժամանակ խմելը նկատի ունեմ։*

ՋՈ— (Մտածկոտ): *Բացառիկ հաճույք է։*

ՄԵՐԻ— *Դուք իսկապե՞ս սիրում եք խմել։*

ՋՈ— (Համոզված): *Այո, ինչքան որ սիրում եմ շնչել։*

ՄԵՐԻ— (Նազելիորեն): *Ինչո՞ւ։*

ՋՈ— (Դրամատիկ շնչով): *Ինչու եմ սիրում խմե՞լ։* (Դադար): *Որովհետև չեմ սիրում հիմար դրության մեջ ընկնել։ Չեմ սիրում շարունակ ինձ զգալ մեռած ու միայն երբեմն, կարճ ժամանակով, մի քիչ կյանքի գալ։* (Դադար): *Եթե չեմ խմում, բոլոր մյուսների պես տարվում եմ մանրուքներով։ Զբաղվում եմ գործերով, ինչ-որ բաներ անում։ Ամեն տեսակ շնչին ու տխմար բաներ՝ ամեն տեսակ շնչին ու տխմար պատճառներով։ Եսասիրական, մեծամիտ, առօրեական բաներ։ Շատ եմ արել։ Հիմա այլևս ոչինչ չեմ անում։ Լիաշունչ ապրում եմ, հետո էլ քնում։*

Դադար:

ՄԵՐԻ— *Լա՞վ եք քնում։*

ՋՈ— (Ասես դա ինքնին հասկանալի է): *Իհարկե։*

ՄԵՐԻ— (Մեղմ, գրեթե ինքշալի): *Իսկ հետագայում ի՞նչ եք մտադիր անել։*

ՋՈ— (Բարձրաձայն, բայց նույնպես ինքշալի): *Հետագայո՞ւմ։ Ոչ մի բան։ Քուն կմտնեմ, կարթնանամ։*

ՄԵՐԻ— (Սկսելով ամեն ինչ հասկանալ): *Ահ, այո։ Այո, իհարկե։*

Դադարին մի պղնձադրամ է գցում նվագարկիչի մեջ:

ՋՈ— (Մտազբաղ): *Ինչու եմ խմո՞ւմ։* (Մտորումների գիրկն ընկած՝ լռում է: Այդ մտորումներն ըստ երևույթին շատ խորն են ու խճճված և նրա դեմքին խիստ զվարճալի ու միամիտ արտահայտություն են տալիս): *Նման հարցին միանգամից չես պատասխանի։* (Ցրված ժպտում է):

ՄԵՐԻ— *Օ՜, ես չէի ուզում...*

ՋՈ— (Փութով, հարգալից): *Չէ, չէ։ Բան չկա։ Ես պատասխանը գիտեմ։ Ուղղակի բառեր չեմ գտնում։ Պարզ ու հասարակ բառեր։*

ՄԵՐԻ— *Դե լավ, իսկապես, կարևոր չի։*

ՋՈ— (Լրջորեն): *Օ, ոչ, կարևոր է։* (Քննախույզ): *Ուրեմն ինչու եմ խմո՞ւմ։* (Խորազնին): *Չէ, ինչո՞ւ են մարդիկ առհասարակ խմում։* (Ձանալով մտքերը ձևակերպել): *Օրն ունի քսանչորս ժամ։*

ՄԵՐԻ— (Պայծառ թախիծով): *Այո, ճիշտ է։*

ՋՈ— *Քսանչորս ժամ։ Այդ քսանչորս ժամից առնվազն քսաներեքուկես ժամը,— աստվա՜ծ իմ, չգիտեմ ինչու,— տխուր են, մեռած, տաղտկալի, դատարկ ու հոգեմաշ։ Բոպեներ են ժամացույցի վրա, ոչ թե*

կյանքի ժամեր։ Կարևոր չի դու ով ես և ինչով ես զբաղվում. միևնույն է, քանչորս ժամից քսաներեքուկեսը վատնում ես սպասելով։

ՄԵՐԻ— *Սպասելո՞վ։*

ՋՈ— (Բարձրաձայն, ձեռքերի օգնությանը դիմելով)։ *Եվ ինչքան շատ ես սպասում այնքան քիչ բան է մնում սպասելու։*

ՄԵՐԻ— (Ուշիմ աշակերտի պես նրան ուսկնդիր)։ *Իրո՞ք։*

ՋՈ— (Շարունակելով իր միտքը)։ *Այդպես անցնում գնում են օրեր։ Անցնում են շաբաթներ, ամիսներ, անցնում են տարիներ։ Եվ դու հասկանում ես, որ բոլոր տարիները մեռած են։ Օրերն ու ժամերը մեռած են։ Դու էլ ես մեռած։ Էլ սպասելու ոչ մի բան չունես։ Ոչ մի բան, բացի ժամացույցի բոպեներից։ Ժամացույցի բոպեներից, ոչ թե կյանքի ժամերից։ Ոչ մի բան, բացի բոպեներից ու բթացումից։ Գեղեցիկ, լուսավոր, խելոք բթացումից։* (Դադար)։ *Ես պատասխանեցի՞ ձեր հարցին։*

ՄԵՐԻ— (Լրջորեն)։ *Վախենում, որ այո։ Շնորհակալ եմ։ Կարիք չկար, որ ձեզ էդպես տանջեիք։*

ՋՈ— *Ի՞նչ տանջանք, դատարկ բան է։* (Դադար)։ *Երեխաներ ունե՞ք։*

ՄԵՐԻ— *Այո, երկուսը։ Մի տղա և աղջիկ։*

ՋՈ— (Բերկրանքով)։ *Այ, հիանալի է։ Ձեզ նմա՞ն են։*

ՄԵՐԻ— *Այո։*

ՋՈ— *Էլ ինչո՞ւ եք տխուր։*

ՄԵՐԻ— *Ես միշտ տխուր եմ։ Իսկ խմել սկսեցի միայն ամուսնանալուցս հետո։*

ՋՈ— (Աշխույժով)։ *Ո՞ւմ եք սպասում։*

ՄԵՐԻ— *Ոչ մեկին։*

ՋՈ— (Ժպտադեմ)։ *Ես էլ ոչ մեկին չեմ սպասում։*

ՄԵՐԻ— *Ամուսնուս, իհարկե։*

ՋՈ— *Հա՜, հասկանալի է։*

ՄԵՐԻ— *Նա փաստաբան է։*

ՋՈ— (Վեր է կենում, կոքնում սեղանին)։ *Փառավոր տղա է։ Ինձ դուր է գալիս։ Ի սրտե հավանում եմ։*

ՄԵՐԻ— (Համակ լսողություն դարձած)։ *Դուք ինչ-որ պարտավորություններ ունեք կատարելու։*

ՋՈ— *Հազար ու մի տեսակ։ Ճիշտն ասած, ես ամենքի նկատմամբ էլ ինձ պարտավորված եմ զգում։ Համենայն դեպս, ինձ պատահող բոլոր մարդկանց նկատմամբ։ Արդեն երեք տարի է փորձում եմ պարզել, թե հնարավո՞ր է ապրել իմ պատկերացմամբ՝ մարդուն*

վայել կյանքով, այսինքն՝ մի կյանքով, որ վնաս չի բերում ուրիշի կյանքին։

ՄԵՐԻ— *Դուք հանրահայտ դե՞մք եք։*

ՋՈ— *Շա՜տ։ Բացարձակ անհայտ, հենց դրանով էլ շատ հանրահայտ։ Ձե՞ք ուզում պարել։*

ՄԵՐԻ— *Ինչո՞ւ չէ, պարենք։*

ՋՈ— (Բարձրաձայն)։ *Կներեք։ Ես չեմ պարում։ Մտքովս չանցավ, թե դուք կուզենաք։*

ՄԵՐԻ— *Անկեղծ ասած, ես բոլորովին չեմ սիրում պարել։*

ՋՈ— (Ինֆենգոհությամբ, միտքը պարզելով)։ *Հազիվ եմ կարողանում քայլել։*

ՄԵՐԻ— *Շամպայնը գլխների՞դ է խփել։*

ՋՈ— *Չէ։ Ընդհանրապես։*

ՄԵՐԻ— (Նրան ակնդետ նայելով)։ *Փարիզում եղած կա՞ք։*

ՋՈ— *Քսանինը թվին և մի անգամ էլ երեսունչորսին։*

ՄԵՐԻ— *Երեսունչորսի ո՞ր ամսին։*

ՋՈ— *Ապրիլի մեծ մասը, ամբողջ մայիսն ու հունիսի սկիզբը էնտեղ եմ անցկացրել։*

ՄԵՐԻ— *Իսկ ես նույն տարվա նոյեմբերն ու դեկտեմբերը։*

ՋՈ— *Համարյա միաժամանակ էնտեղ ենք եղել։ Դուք արդեն ամուսնացա՞ծ էիք։*

ՄԵՐԻ— *Նշանված էի։*

Մի պահ լռում են՝ նայելով մեկմեկու։

(Մեղմաձայն, ծով հմայքով)։ *Դու իսկապես սիրո՞ւմ ես ինձ։*

ՋՈ— *Սիրում եմ։*

ՄԵՐԻ— *Շամպա՞յնն է մեղավոր։*

ՋՈ— *Ըհը։ Համենայն դեպս, մասամբ։* (Նստում է)։

ՄԵՐԻ— *Եթե էլ երբեք չտեսնես ինձ, սիրտդ շա՞տ կցավի։*

ՋՈ— *Շատ։*

ՄԵՐԻ— (Վեր կենալով)։ *Ինչ հաճելի է նման խոսքեր լսել։*

Ջոն մինչև հոգու խորքը վշտացած է, որ նա գնում է։ Ըստ էության, գրեթե խուճապահար է. վեր է կենում այնպիսի շարժումով, որը լի է սրտամաշ կսկիծով ու ափսոսանքով։

Ես պետք է գնամ։ Խնդրում եմ, մի վեր կենա։

Ջոն կանգնել է, ապշահար հայացքը սևեռել նրա դեմքին։

Մնաս բարով։

ՋՈՆ— (Պարզորեն)։ *Գնաս բարով։*

Կինը աչքերը ճառում է նրան, ապա շրջվում ու գնում։ Ջոն երկար ժամանակ մնում է կանգնած՝ նրա հետևից անթարթ նայելիս։ Հենց այն պահին, երբ դանդաղ նստում է, ներս է մտնում Լրագրավաճառ տղան, մոտենում ուղիղ Ջոյի սեղանին։

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— *Թերթ չե՞ք ուզում, միստր։*

ՋՈՆ— *Հիմա՞ քանիսն ունես։*

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— *Տասնմեկ հատ։*

Ջոն գնում բոլոր թերթերը, զգվանքով աչքի անցկացնում վերնագրերը և թերթերը մի կողմ շպրտում։ Տղան, զարմանք կտրած, նայում է նրան։

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— (Մոտենում է վանառասեղանի հետևը կանգնած Նիֆին։ Հուզված)։ *Դո՞ւք եք էս պանդոկի տերը, միստր։*

ՆԻՔ— (Անփութորեն, բայց շեշտված)։ *Հա՛ ե՛ս եմ էս պանդոկի տերը։*

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— *Կարո՞ղ է լիրիկական սիրուն տենորի կարիք ունենաք։*

ՆԻՔ— (Ասես ինքն իրեն)։ *Լիրիկական սիրուն տենորի՞։* (Բարձրաձայն)։ *Այսինքն՝ էդ ո՞ւմ։*

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— (Բարձրաձայն ու մի քիչ խռոված)։ *Իմ։ Ես արդեն մեծ եմ թերթ ծախելու համար։ Չեմ ուզում անընդհատ վերնագրեր գոռալ, ուզում եմ երգել։ Լիրիկական սիրուն տենորը պետք կգա ձեզ, չէ՞։*

ՆԻՔ— *Ի՞նչ կա քո մեջ լիրիկական։*

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— (Զիլ ձայնով, շփոթահար)։ *Ձայնս։*

ՆԻՔ— *Հա՞։* (Կարճ լռությունից հետո տեղի տալով)։ *Դե լավ. որ էդպես է, երգիր։*

Տղան անմիջապես սկսում է երգել «Երբ իռլանդացու աչքերն են ժպտում» զեղեցիկ ու աշխույժ երգը։ Նիքը և Ջոն ուշադիր լսում են, Նիքը՝ հետաքրքրությամբ, Ջոն՝ զարմացած ու առանց հիացմունքը թաքցնելու։

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— (Երգում է)։

Երբ իռլանդացու աչքերն են ժըպտում,
Ասես բացվում է այգն արևաշունչ,
Իռլանդացու ծիծաղը կարկաչուն
Հրեշտակների երգն է քաղցրահունչ։

Երբ իռլանդացու խենթ սիրտն է խայտում,
Աշխարհը թվում է զվարթ ու անտրտունջ,
Բայց երբ իռլանդացու աչքերն են ժպտում...

ՆԻՔ— (Բարձրաձայն, հապշտապ): *Իռլանդացի՞ ես։*

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՒ— (Բարձրաձայն, արագ-արագ, անպատեհ հարցից թեթևակի դժգոհ): *Չէ, հույն եմ։* (Երգն ավարտում է նախկինից բարձր ձայնով):

...Հպատակվում է սիրտդ անմրոունջ։

(Թատերականորեն շրջվում է Նիֆի կողմը, կարծես էստրադային երգիչ լինի, որն սպասում է ունկնդիրների ծափերին):

Նիֆը հետաքրքրությամբ նայում է տղային: Ջոն ոտքի է ելնում ու սեղանին կոթնած՝ հետևում նրանց:

ՆԻՔ— *Վատ չի։ Մի տարի հետո արի, նորից լսեմ քեզ։*

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՒ— (Սրտի թրթիռով): *Ազնիվ խո՞սք։*

ՆԻՔ— *Հա, 1940-ի նոյեմբերին, էդպես՝ ամսի յոթին։*

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՒ— (Կյանքում երբեք այսքան երջանիկ չի եղել: Վազում է Ջոյի մոտ): *Դուք է՞լ լսեցիք, միստր։*

ՋՈ— *Հա։ Հոյակապ էր, ապրես։ Հունաստանի ո՞ր կողմերից ես։*

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՒ— *Սալոնիկից։ Վայ, ձեր ցավը տանեմ, միստր։ Շնորհակալ եմ։*

ՋՈ— *Չարժի մի տարի սպասել։ Մի քիչ հետո նորից արի, հետդ էլ թերթ բեր։ Դու մեծ երգիչ ես։*

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՒ— (Սիրտը թունդ եկած): *Ա՜խ, շնորհակալություն, միստր։ Առայժմ։* (Վազում է Նիֆի մոտ): *Շնորհակալ եմ, միստր։* (Դուրս է վազում):

Ջոն ու Նիֆը նայում են նրա հետևից: Ջոն նստում է:

ՆԻՔ— (Միծաղադեմ): *Ինչ հրաշալի են մարդիկ, Ջո։ Տեսա՞ր էդ նստոյին։*

ՋՈ— *Իհարկե, հրաշալի են։ Ով էլ լինի, հրաշք է, որ կա։*

Զրույցով բռնված՝ մտնում են Մաֆֆարթին ու Քրափը: Մաֆֆարթին՝ բարձրահասակ մի տղամարդ, աշխատանքային շորերով է, որոնք շատ են ջահելացնում նրան: Հագին սև շինս է ու բանվորական կապույտ վերնաշապիկ: Առանց գլխարկի է, առանց փողկապի: Թիկնեղ է, նիհար ու խելացի դեմքով և խիտ, սև մազերով: Շալվարի հետևի աջ գրպանում այն կեռերից է, որ օգտագործում են նավահանգստի բեռնակիրները: Մաֆֆարթի ձեռքերը երկար են ու մազոտ: Թեթե-

ը մինչև արմունկները ֆշված են: Նա անկաշկանդ պահվածք ունի, թեթև շարժուն, զգայուն է և խորաթափանց, ընդունակ՝ տեղնուտեղն արձագանքելու այն ամենին, ինչն անաղարտ է ու հմայիչ: Հումորի զգացումը նրան չի դավանանում: Խառնվածքը բարի է ու մեղմ: Խոսում է հստակ, ներքին ջերմությամբ լեցուն: Ձայնը զորեղ է, բայց ելևէջներով հարուստ: Նա վայելում է կյանքը, ինչքան էլ որ կյանքը խառնաշփոթ է և սիրում է մարդկանց, ինչքան էլ որ մարդիկ խրթին են ու մութ: Քրափը Մաֆֆարթիի պես բիկնեղ ու բարձրահասակ չէ: Ոստիկանական համազգեստը, մահակը, ատրճանակը, գոտին ու գլխարկը նրան ֆիզիկապես նեղում են: Նա անկեղծորեն իրեն վատ է զգում ոստիկանի դերում: Շարժումները բռնազբոս են և ակամայից փոքուն: Նա պարզամիտ էությամբ բարի մարդ է: Քրափն այնքան գիտակից չէ, որքան Մաֆֆարթին, բայց ազնիվ է և չի ջանում մարդկանց աչքին թոզ փչել:

ՔՐԱՓ— *Չես հասկանում ինչ եմ ասում: Բարև, Ջո:*

ՋՈ— *Բարև, Քրափ:*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Ողջույն, Ջո:*

ՋՈ— *Ողջույն, Մաքքարթի:*

ՔՐԱՓ— *Երկու հատ գարեջուր, Նիք:* (Մաֆֆարթիին): *Ես մենակ հրամաններ եմ կատարում, էդքան բան: Շատ չգիտեմ ինչ կա էդ հրամանների տակ: Թե ում համար են դրանք, ում դեմ կամ ինչու՝ իսկի չեմ էլ իմանում: Կատարում եմ ու վերջ:*

Նիքը գարեջուր է տալիս նրանց:

ՄԱՔՔԱՐԹԻ— *Քիչ ես կարդում, քիչ:*

ՔՐԱՓ— *Քիչը որի՞ հետ ես: Ամեն առավոտ «Իզվեմինը» եմ կարդում, իրիկունն էլ՝ «Քոլ բուլիթին»:*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Ու հրամաններ ես կատարում: Հիմա՞ ինչ հրաման ես ստացել:*

ՔՐԱՓ— *Կարգ ու կանոն պահպանել նավահանգստում:*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Ո՞ւմ համար պահպանել:* (Ջոյին): *Ճիշտ չի՞:*

ՋՈ— (Տխուր): *Ճիշտ է:*

ՔՐԱՓ— *Ի՞նչ իմանամ՝ ում: Կարգ ու կանոն: Պահպանել ու վերջ:*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Կարգ ու կանոնը պահպանում են ինչ-որ մեկի համար: Մտքովդ ի՞նչ է անցնում, ո՞ւմ համար կլինի:*

ՔՐԱՓ— *Բնակիչների:*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Մի բնակիչ էլ ես եմ:*

ՔՐԱՓ— *Դե ուրեմն հենց քեզ համար եմ պահպանում:*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Էդ ո՞նց. մահակդ գլխիս ջարդելո՞վ:* (Ջոյին): *Ճիշտ չի՞:*

ՋՈ— (Թախծոտ, ինչ-որ բան վերհիշելով): *Չգիտեմ:*

ՔՐԱՓ— Մաք, դու գիտես, որ ես ոչ մի անգամ քեզ վրա ձեռ բարձրացրած չկամ։

ՄԱՔՔԱՐԹԻ— Է՛, կբարձրացնես. ասենք թե պարտականություններդ կատարելիս լինես. ես էլ ստացածդ հրամաններին հակառակվեմ, բա չե՞ս բարձրացնի. լավ էլ կբարձրացնես։

ՔՐԱՓ— Ախր մենք իրար հետ դպրոց ենք գնացել։ Միշտ էլ իսկական ընկերներ ենք եղել։ Ընդամենը մի անգամ ենք կռվել, էն էլ Ալմա Հեղերթիի համար։ Բայց ու չամուսնացար էլ Ալմա Հեղերթիի հետ։ (Ջոյին): Ճիշտ չի՞։

ՋՈ— Ամեն ինչ էլ ճիշտ է։

ՄԱՔՔԱՐԹԻ— Հա, չամուսնացա։ Թե չէ դու ամուսնացա՞ր։ (Ջոյին): Ջո, դու իմ կո՞ղմն ես, թե՞ դեմ։

ՋՈ— Ես բոլորի կողմն եմ։ Մեկ առ մեկ։

ՔՐԱՓ— Ջէ, ես էլ չամուսնացա։ Ասածս էլ էդ է։

ՄԱՔՔԱՐԹԻ— Ուզում ես ասել, որ հիմա էլ ոչ մեկս շահ չունե՞նք մեր վեճից։

ՔՐԱՓ— Ես չգիտեմ էլ ինչի համար ենք վիճում։

ՄԱՔՔԱՐԹԻ— Ասում եմ, էլի, քիչ ես կարդում, քիչ։

ՔՐԱՓ— Մաք, ախր դու էլ չգիտես ինչի համար ես վեճի մեջ մտել։

ՄԱՔՔԱՐԹԻ— Դա էնքան պարզ բան է, ուղղակի խելքից մտքից վեր պարզ ու հասարակ։

ՔՐԱՓ— Հա՞, դե ասա՝ ինչի՞ համար ես էդպես կուրծքդ դեմ տալիս։

ՄԱՔՔԱՐԹԻ— Անարգված մարդկանց իրավունքների։ Ճիշտ չի՞։

ՋՈ— Կարծես թե։

ՔՐԱՓ— Ում իրավունքների՞։

ՄԱՔՔԱՐԹԻ— Անարգվածների։ Աշխարհը լիքն է խիղճը կորցրած այլանդակներով. աչքն էլ չեն թարթի, իրենց մերձավորին էն օրը կգցեն, որ շունը ձեռքից հաց չի վերցնի։ Այնինչ մարդիկ ի ծնե համահավասար են։ Հիշո՞ւմ ես, ասել եմ։

ՔՐԱՓ— Մաք, բայց դու հո անարգվածների դասի՞ն պատկանում։

ՄԱՔՔԱՐԹԻ— Ես բեռնակիր եմ նավահանգստում։ Իդեալիստ մարդ եմ։ Շատ եմ մկանուտ միայն մտավոր կյանքով ապրելու համար։ Ամուսնացել եմ մի քնքուշ, դյուրազգաց ու կիրթ կնոջ հետ, որ երեխաներս նուրբ հոգի ունենան, ոչ թե անհոգի ձրիակերներ լինեն։ Ուժեղ ու քիչ թե շատ խելքը գլխին մարդը այս աշխարհում ուրիշ ընտրություն չունի. կամ ստորության ճամփան պիտի բռնի, կամ էլ ազնիվ աշխատավոր լինի։ Ստորությունը սրտովս չի, դրա համար

էլ աշխատավոր եմ։ Իսկ տղաս միջնակարգ դպրոցն ավարտելու վրա է և արդեն մտածում է գրող դառնալու մասին։

ՔՐԱՖ— *Ժամանակին ես էլ էի ուզում գրող դառնալ։*

ՋՈ— *Հիանալի է։* (Մի կողմ է դնում լրագիրը, հայացքը հառում Քրաֆին ու Մաffարթիին):

ՄԱՔՔԱՐԹԻ— *Ով ասես, որ չի ուզեցել գրող դառնալ։ Ամեն մոլագար, որ պատերազմի տարիներին մարդկանց մահու բերան է ուղարկել, իր կեղտոտ գործն սկսել է մի պուճախում նստած՝ ոտանավորներ խզմզելով։ Գարշելի բան է, էլի։ Հետո էլ կորցրածի տեղը հանել է նշանավոր սրիկա դառնալով։ Մինչև էսօր էլ էդպես շարունակվում է։*

ՔՐԱՖ— *Ճիշտ է ասո՞ւմ, Ջո։*

ՋՈ— *Էսօրվա թերթը կարդա, կիմանաս։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Գրազ կգամ, որ հիմա էլ մոտերքում՝ հենց մեր քթի տակ, մի դեղնակտուց է ապրում, որ գլուխը պատեպատ է տալիս, թե ոնց Շեքսպիր դառնա։ Իսկ մի տասը տարի հետո սենատոր կլինի կամ էլ մի ուրիշ քաղաքական գործիչ։*

ՔՐԱՖ— *Դրա դեմ մի բան պիտի ձեռնարկվի։*

ՄԱՔՔԱՐԹԻ— (Ծիծաղկոտ ձայնով): *Ասե՞մ ինչ. պիտի ավելի շատ հանդեսներ հրատարակվեն։ Հարյուրներով։ Հազարներով։ Ինչ որ էդ գրչակները գրում մրում եմ, պիտի տպագրվի, որ խելքները մտնի, թե իբր իրենք անմահացել են։ Այ, մենակ էդ ձևով դրանք կհանգստանան ու էլ գլխից դուրս բաներ չեն անի։*

ՔՐԱՖ— *Մաք, դու էլ պիտի գրող դառնայիր։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Ատում եմ դրանց ցեղը։ Ինչքան չարիք կա, էդ խառնակիչների ձեռքով է ծնվում։ Ճիշտ չի՞։*

ՋՈ— (Փութով): *Ամեն ինչ էլ ճիշտ է։ Ե՛վ ճիշտ է, և՛ սխալ։*

ՔՐԱՖ— *Բա որ էդպես է, էլ ինչո՞ւ ես գիրք կարդում։*

ՄԱՔՔԱՐԹԻ— (Ծիծաղելով): *Հանգստանալու համար։ Թեթևանալու։* (Դադար): *Աշխարհի երեսին գրողներից զզվելի մարդ չկա։ Լեզուն լավ բան է։ Էդ լեզուն իրենց զենքը դարձրած մարդիկ են զզվելի։*

Արաբը փոfr-ինչ մոտ է եկել և ուշի-ուշով ականջ է դնում:

(Արաբին): *Դո՞ւ ինչ կարծ/քի ես, եղբայր։*

ԱՐԱԲ— (Դեմքը կնճռոտում է, մոfի ծովն ընկնում): *Քարը քարին չի մնում։ Ինչ որ կա չկա, կորչում է, գնում։ Կա։ Չկա։ Ոչինչ։ Գնամ թափառեմ ու նայեմ երկնքին։* (Գնում է):

ՔՐԱՖ— *Կա՞, չկա՞։* (Ջոյին): *Դա ի՞նչ է նշանակում։*

ՋՍ— (Դանդաղ, մտածկոտ, ճիշողությունը լարելով)։ *Կա՞։ Չկա՞։ Դա նշանակում է աշխարհ գալ ու աշխարհից գնալ։ Շունչ առնել ու շունչը տալ։ Ասել է թե՝ «կա»-ն ծնունդն է, «չկա»-ն՝ մահը։ Աճի ու քայքայման անխուսափելի, ապշեցուցիչ, զարմանահրաշ հունդը աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչի մեջ։ Սկիզբը և վերջը։ Այդ մարդը յուրովի մարգարե է։ Մեկը, որ գարեջուր խմելով, կարող է հասնել խորիմաստ ընկալման այն սահմանագծին, ուր «կա»-ն ու «չկա»-ն, ըմբռնելին ու անըմբռնելին վերածվում են միևնույն բանին։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Ճիշտ է։*

ՔՐԱՓ— *Բա որ էդ խոսքերից գլուխ ես հանում, էլ ինչո՞ւ ես բեռնակիր աշխատում։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Մեր ցեղի բոլոր տղամարդիկ, դեռ էն գլխից, մենակ ամենահաղթանդամ ու ամենակովարար կնանիքի հետ են քնել-վեր կացել։* (Գարեջուր է խմում)։

ՔՐԱՓ— *Ես կարող եմ երկուսիդ էլ ժամերով լսել, բայց գետինը մտնեմ, թե մի բառ հասկանում եմ ձեր ասածներից։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Դրա համար էլ Մաքքարթիները շատ են խոշոր ու շատ են հուժկու, որ հերոսներ դառնան։ Թույլ ու անվստահ մարդիկ են միայն հերոսական սխրանքներ գործում։ Նրանց ուրիշ բան չի մնում։ Ինչքան ավելանում է հերոսների թիվը, այնքան արատավորվում է մարդկության պատմությունը։ Ճիշտ չի՞։*

ՋՍ— *Դուրս եկեք փողոց և կհամոզվեք։*

ՔՐԱՓ— *Դե, իհարկե, դու կարողանում ես փիլի... փիլիսո... մի խոսքով, բերանումդ լեզու ունես։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Ես էսպես խոսում եմ մենակ նրանց հետ, ովքեր ոստիկանական համազգեստով են ու ոչ մի բառ չեն հասկանում ասածներից։ Դու, ախպեր ջան, հենց էդ մարդկանցից ես։*

Հեռախոսը զանգում է։ Հարին ճանկարծ ելնում է տեղից ու նոր պար սկսում։

ՔՐԱՓ— (Նրան նկատելով, խիստ տիրականորեն)։ *Է՛յ, դո՛ւ, քեզ հետ եմ. էդ ի՞նչ գործի ես։*

ՀԱՐԻ— (Պարն ընդհատելով)։ *Հանկարծ մի նոր պարի միտք ծնվեց գլխումս։ Ասացի՝ փորձեմ, մշակեմ։ Նիք, Նիք, հեռախոսը զանգում է։*

ՔՐԱՓ— (Մամֆարթիին)։ *Իրավունք ունի՞։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Է՛ անհիշելի ժամանակներից կենդանի արարածները պարում են։ Ես նույնիսկ կասեի, որ կյանքն ու պարը միշտ էլ իրարից*

անբաժան են եղել, մինչև մեր օրերը, երբ արդեն տեսնում ենք... (Հարիին): *Պարիր, տղաս, ցույց տուր մտքիդ եկածը։*

ՀԱՐԻ— *Դեռ լրիվ չեմ մշակել, բայց սկիզբը սրա պես մի բան է։* (Պարում է):

ՆԻՔ— (Լսափողը վերցնելով): *Նիքի բարը, ռեստորանը և զվարճավայրն է... Բարև ձեզ... Նիքն է...* (Լսում է): *Ո՞ւմ...* (Շուռ է գալիս): *Էստեղ Դալի Բոսթուիք անունով մարդ կա՞։*

ԴԱԼԻ— (Վեր է ցատկում տեղից ու մոռանում հեռախոսին: Լսափողի մեջ): *Ալո՜ էլսի...* (Լսում է): *Գալիս ես էստե՞ղ...* (Ցնծագին: Բոլոր ներկաներին): *Գալի՜ս է...* (Դադար): *Չէ՛, չեմ խմի... Ա՛խ, աստվա՜ծ իմ, էլսի...* (Կախում է լսափողը, այնպիսի զարմացկոտ հայացքով նայում շուրս կողմը, ասես նոր է ծնվել: Շրջում է, շոշափում իրերը, աթոռները տեղը դնում և այլն):

ՄԱՔՔԱՐԹԻ— (Հարիին): *Չտեսնված է, չտեսնված։*

ՀԱՐԻ— *Հետո էս հեշտ ու հասարակ պարաքայլը կանեմ։* (Ցուցադրում է):

ՔՐԱՓ— *Հը՛ լա՞վ է, Մաք։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Ահավոր է, բայց անկեղծ է ու հավակնոտ, ինչպես ամեն ինչ մեր մեծ երկրում։*

ՀԱՐԻ— *Հետո կանցնեմ սրան։* (Ցուցադրում է): *Իսկ հիմա՝ ամենափայլուն կտորը։* (Վերջացնում է պարը):

ՄԱՔՔԱՐԹԻ— *Գերազանց է։ Սա ամերիկացիների հոգու և մարմնի ներկա վիճակի ամենաբավարար պատկերն է։ Տղաս, դու հանճար ես։*

ՀԱՐԻ— (Հրճվանքով սեղմում է Մաքքարթիի ձեռքը): *Էս իրիկուն կյանքումս առաջին անգամ ելույթ եմ ունենալու հասարակության առաջ։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Դու բոլորին կկախարդես։ Պարելը որտե՞ղ ես սովորել։*

ՀԱՐԻ— *Ոչ մի դաս կյանքումս չեմ առել։ Ես բնատուր պարող եմ։ Եվ կատակերգու։*

ՄԱՔՔԱՐԹԻ— (Զարմանքով): *Դու կարողանում ես մարդկանց ծիծաղեցնե՞լ։*

ՀԱՐԻ— (Հուսակտուր): *Ծիծաղեցնելը ծիծաղեցնում եմ, բայց ոչ ոք չի ծիծաղում։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Տարօրինակ է։ Ինչո՞ւ։*

ՀԱՐԻ— *Չգիտեմ։ Չեն ծիծաղում ու պրծավ գնաց։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Կարո՞ղ ես հիմա մի ծիծաղելի բան անել։*

ՀԱՐԻ— *Կուզենայի փորձել պատրաստածս նոր մենախոսությունը։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Խնդրեմ։ Թե ծիծաղելի լինի, խոսք եմ տալիս ծիծաղից չուր կտրել։*

ՀԱՐԻ— *Ուրեմն էսպես։* (Ջերմեռանդորեն գործի է անցնում): *Թուրքա-*

կան փողոցում եմ՝ Շարքիի բարում։ Ամառային ժամանակով իններդ տասնհինգ է պակաս։ Չորեքշաբթի է, ամսի տասնմեկը։ Ունեցածս ի՞նչ է. գլխացավ ու տասնութ թվին թողարկված մի հինգ սենթանոց։ Ուզա՞ծս ինչ է. մի բաժակ սուրճ։ Թե հինգ սենթանոցս ծախսեմ մի բաժակ սուրճի վրա, ուրեմն պիտի ոտքով տուն գնամ։ Մնացել եմ երկու քարի արանքում։ Հույն Ջորջն ու ֆիլիպինցի Պեդրոն տաքացած բիլիարդ են խաղում։ Իմ հագին քրջեր են։ Նրանց հագին՝ երեսունհինգ դոլարանոց, հատուկ կարել տված կոստյումներ։ Ես ոչ մի հատիկ սիգարետ չունեմ։ Նրանք մի մետրանոց սիգարներ են ծխում։ Սովորականի նման գլուխ եմ կոտրում։ Հույն Ջորջն էլ է մնացել երկու քարի արանքում. ի՞նչ խաղա, բանը բուրդ է։ Թե մի բաժակ սուրճ խմեմ, ուրեմն մեկն էլ եմ ուզելու։ Սա՞ ինչ բան է։ Վա՜յ, ականջիս ցավը բռնեց։ Քթիցս մուխ է բարձրանում։ Հույն Ջորջը ձեռքն է առնում խաղաձողը։ Կավիճ է քսում։ Վեր-դիր է անում իրավիճակը։ Ջողով մի թեթև խփում է գնդակներից մեկին։ Թի՜կ։ Սա ի՞նչ բան է։ Հույն Ջորջը դուրս պրծավ երկու քարի արանքից։ Իսկ ե՞ս։ Չգիտեմ գլուխս որ քարին զարկեմ։ Դուրս եմ գալիս ու մի լրագիր առնում։ Գրողը տանի, լրագիրն ինչի՞ս է։ Իմ ուզածը մի բաժակ սուրճ է ու մի լավ, բանեցրած մեքենա։ Իսկ ես դուրս եմ գալիս ու լրագիր առնում։ Վաղվա առավոտյան թերթն է. հինգշաբթի օրվանն է, ամսի տասներկուսինը։ Միգուցե իմ մասի՞ն էլ մի բան կա գրված։ Վռազ-վռազ աչքի եմ անցկացնում։ Չկա։ Իմ մասին ոչ մի բառ չկա։ Հիտլերի մասին է։ Նա յոթ սարի հետևն է։ Իսկ ես այստեղ եմ։ Ախր Հիտլերն ո՞վ է, ի՞նչ շուն է։ Ո՞վ է հիմա մնացել երկու քարի արանքում։ Նայում եմ չորս կողմս։ Բոլորն էլ մնացել են երկու քարի արանքում։ Արար աշխարհն է երկու քարի արանքում։

Դադար։ Քրափն ուղղվում է Հարիի կողմը, ասես ինձ հիմա մի հույժ կարևոր ձերբակալություն է գլուխ բերելու։ Հարին հետ-հետ է գնում դեպի դուռը։

ՄԱՔՔԱՐԹԻ— (Կանգնեցնում է Քրափին։ Հարիին)։ *Դրանից ծիծաղելի բան կյանքումս չեմ լսել։ Ճիշտն ասած, չեմ էլ տեսել։*

ՀԱՐԻ— (Մոտենում է Մաքքարթիին)։ *Բա ինչո՞ւ չեք ծիծաղում։*

ՄԱՔՔԱՐԹԻ— *Միտք եմ անում, միտք, բայց չեմ հասկանում։*

ՀԱՐԻ— *Այ, միշտ էդպես է. ես ծիծաղելի բաներ եմ հնարում, բայց դրանց վրա ոչ ոք չի ծիծաղում։*

ՄԱՔՔԱՐԹԻ— (Մտահոգ)։ *Հնարավոր է, որ դու քեզանից անկախ հայտնաբերել ես կատակերգության նոր տարատեսակ։*

ՀԱՐԻ— Էհ, ի՞նչ օգուտ, որ ոչ ոք չի ծիծաղում։

ՄԱՔՔԱՐԹԻ— Ծիծաղի տարբեր տեսակներ կան, տղաս։ Այ, ձեռքս խըղճիս դրած ասում եմ, որ ես, օրինակ, հիմա ծիծաղում եմ, բայց բարձրաձայն չեմ ծիծաղում։

ՀԱՐԻ— Ես ուզում եմ լսե՛լ ոնց են մարդիկ ծիծաղում։ Ուզում եմ, որ բարձրաձայն ծիծաղեն, կոկորդով մեկ։ Դրա համար եմ անընդհատ ծիծաղելի բաներ հնարում։

ՄԱՔՔԱՐԹԻ— Ինչ արած։ Միգուցե կգա ժամանակը, քեզ կհասկանան։ Գնացինք, Քրափ։ Ցտեսություն, Ջո։

Մաքքարթին ու Քրափը գնում են։

ՋՈ— Ցտեսություն։ (Կարճ դադարից հետո)։ Լսիր, Նիք։

ՆԻՔ— Ի՞նչ կա։

ՋՈ— Վերջին մրցավազքին խաղչեքդ դիր Մաքքարթիի վրա։

ՆԻՔ— Հո խելքդ չե՞ս թռցրել։ Խաբլան, դեն ընկած ձի է...

ՋՈ— Ինչ ունես-չունես, Մաքքարթիի վրա դիր։

ՆԻՔ— Մի սենթ էլ չեմ դնի։ Մաքքարթիի վրա դո՛ւ դիր ունեցածչունեցածդ։

ՋՈ— Ես փողի կարիք չունեմ։

ՆԻՔ— Էդ ո՞նց իմացար, որ Մաքքարթին է տանելու։

ՋՈ— Անունը Մաքքարթի է, չէ՞։

ՆԻՔ— Հա։ Հետո՞ ինչ։

ՋՈ— Մաքքարթի անունով ձին անպայման կտանի, այ կտեսնես։ Հենց էսօր կտանի։

ՆԻՔ— Ախր ինչո՞ւ, է՛։

ՋՈ— Ասածս արա, ամեն ինչ լավ կլինի։

ՆԻՔ— Մաքքարթիին թողնես, չուտի-չխմի, մենակ լեզվին զոռ տա, էդ չի՞ եղած-չեղածը։ (Դադար)։ Թո՞մն էս ուր է։

ՋՈ— Որտեղ որ է կգա։ Ինչքան էլ խեղճացած լինի, կգա։ Ամենաշատը մի հինգ-տասը րոպեից։

ՆԻՔ— Դու էդ Քիթիին չհավատացիր, չէ՞. որ իբր թե էստրադային արտիստուհի է եղել։

ՋՈ— (Բառերը հատ-հատ արտասանելով)։ Ես ավելի շատ հավատում եմ երաշանքին, քան թե փաստերին։

ՆԻՔ— (Մտաբերելով)։ Նրա մեջ իրոք որ մի յուրահատուկ բան կա։ Անունս էլ ատամնաբույժ կնքեց։

Մտնում է Թոմը. շփոթահար է ու խռովահույզ, մոլորվածի պես չորս կողմն է նայում և անապարանիոով մոտենում Ջոյի սեղանին։

ՋՈ— *Ի՞նչ է պատահել։*

ԹՈՄ— *Վերցրու տվածդ հինգ դոլարը, Ջո։ Սիրտս էլի սևացել է։*

ՋՈ— *Թե օրգանական բան չի, ինքն իրեն կանցնի։ Թե օրգանական է, գիտությունը մի ճար կանի։ Ի՞նչ է՝ օրգանակա՞ն, թե անօրգանական։*

ԹՈՄ— *Չգիտեմ, Ջո...* (Երևում է հուսահատությունից իրեն կորցրել է):

ՋՈ— *Ինչի՞ համար ես տանջվում-տապակվում։ Մի հանձնարարություն ունեմ քեզ տալու։*

ԹՈՄ— *Քիթիի համար։*

ՋՈ— *Ի՞նչ է եղել նրան։*

ԹՈՄ— *Նստել է իր սենյակում ու լաց է լինում։*

ՋՈ— *Լաց է լինո՞ւմ։*

ԹՈՄ— *Հա, արդեն մի ժամ կլինի։ Էսքան ժամանակ խոսում եմ, մխիթարում, լացը չի կտրում։*

ՋՈ— *Ինչո՞ւ է լաց լինում։*

ԹՈՄ— *Չգիտեմ։ Բան չեմ հասկանում։ Անընդհատ լաց է լինում ու պատմում ինչ-որ մեծ տան, գամփռների, ծաղիկների մասին, ասում է՝ մի եղբորը սպանել են, մյուսն էլ անհետ կորել է։ Ջո, սիրտս չի դիմանում, որ Քիթին լաց է լինում։*

ՋՈ— *Ուզում ես ամուսնանա՞լ էդ աղջկա հետ։*

ԹՈՄ— (Գլխով է անում): *Հա, ուզում եմ։*

ՋՈ— (Անկեղծ հետաքրքրությամբ): *Ինչո՞ւ։*

ԹՈՄ— *Ճիշտը չգիտեմ, որ ասեմ, Ջո։* (Դադար): *Հենց միտս է գալիս՝ փողոցներն է ընկնում, կարծես գլխիս կրակ թափվի։ Երևի սիրում եմ նրան, Ջո, ուրիշ ոչ մի բան։*

ՋՈ— *Լավ աղջիկ է։*

ԹՈՄ— *Ոնց որ հրեշտակ լինի։ Իսկի չես ասի, որ դուրս ընկած է, նրանց նման չի։*

ՋՈ— (Փութկոտ): *Առ. էսքան փողը վերցրու, վազիր հարևան Ֆրենքիի մոտ ու խաղչեք դիր Մաքքարթիի վրա։*

ԹՈՄ— (Փութկոտ): *Էսքա՞նը, Ջո։ Մաքքարթիի վրա՞։*

ՋՈ— *Հա, շտապիր։*

ԹՈՄ— (Գնալով): *Ա՛խ, Ջո։ Թե Մաքքարթին տարավ, գրպաններս կհաստացնենք։*

ՋՈ— *Վազ տուր, շուտ արա։*

Թոմը դուրս է վազում, դռան մոտ հիչ է մնում բախվի հետ եկող Արաբին: Նիքն առանց մի բառ ասելու Արաբի համար զարեջուր է լցնում:

ԱՐԱԲ— *Քարը քարին չի մնում։ Ուր էլ լինի։ Արար աշխարհում։ Քարը քարին չի մնում։ Ինչ որ կա չկա, կորչում է, գնում։*

ՆԻՔ— (Թրված)։ *Չէ մի չէ, Մաքքարթի՜։ Ուրեմն որ առավոտը մի թեթև բախտդ բերեց, քեզ պիտի էնքան կորցնես, որ ութսուն դոլարը քամո՞ւն տաս։*

ՋՈ— *Նա ուզում է ամուսնանալ էդ աղջկա հետ։*

ՆԻՔ— *Բա որ աղջիկը չուզի նրա կինը դառնա՞լ։*

ՋՈ— (Հանկարծակիի գալով)։ *Ճիշտ որ։* (Միտք է անում)։ *Է՛, ինչո՞ւ պիտի չուզի։ Թոմից էլ լավ տղա՞։*

ՆԻՔ— *Դե, նա էստրադային արտիստուհի է եղել։ Եվրոպայի մեծամեծներից ծաղկեփնջեր է ստացել։ Ամենահարուստ, երևելի երիտասարդներն են ճաշի հրավիրել։ Հո Թոմի թայը չի՞։*

Վազեվազ ներս է ընկնում Թոմը։

ԹՈՄ— (Ամեն ինչից զզված)։ *Տեղ հասա՝ մրցավազքն արդեն սկսվել էր։ Ֆրենքին չընդունեց խաղչեքը։ Մաքքարթին համարյա մինչև վերջ քաշ էր գալիս պոչից։ Մտածում էի՝ լավ պրծանք, փողներս ջուրը չընկավ։ Մեկ էլ հանկարծ Մաքքարթին պոկվեց առաջ ու բոլորին տարավ. էլ ի՞նչ, առաջին տեղը բռնեց։*

ՋՈ— *Ֆրենքին ինչքա՞ն էր նրա համար տալիս. մեկին՝ տասնհի՞նգ։*

ԹՈՄ— *Ավելի շատ, բայց խաղչեքը չընդունեց։*

ՆԻՔ— (Ամանների սրբիչը սենյակի մյուս ծայրը շպրտելով)։ *Թո՛ւհ, բա սա բա՞ն է։*

ՋՈ— *Տուր փողը։*

ԹՈՄ— (Փողը վերադարձնելով)։ *Հիմա մոտ մեկուկես հազար դոլար կունենայինք։*

ՋՈ— (Անտրամադիր, հենց այնպես, տեղնուտեղը մի բան մոգոնելով)։ *Գնա Շվաբախերի խանութ և ինձ համար առ Եվրոպայի ամենամեծ քարտեզը։ Հետ գալիս կմտնես Երրորդ փողոցի կոմիսիոն խանութներից մեկն ու մի լավ ատրճանակ կառնես, փամփուշտներն էլ հետը։*

ԹՈՄ— *Նա իր սենյակում նստել լաց է լինում, Ջո։*

ՋՈ— *Գնա բեր ուզածներս։*

ՆԻՔ— *Ի՞նչ է, որոշել ես քարտեզն ուսումնասիրել, հետո դուրս գալ ու ինչ-որ մեկին էն աշխա՞րհը ճամփել։*

ՋՈ— *Ուզում եմ աչքի անցկացնել Եվրոպայի քաղաքների, գետերի, լեռների ու հովիտների անունները։*

ՆԻՔ— *Բա ատրճանա՞կն ինչ ես անելու։*

ՋՈ— *Ուզում եմ տնտղել։ Հետաքրքիր է։ Առ էս քսան դոլարը, Թոմ։ Գնա բեր ուզածներս։*

ԹՈՄ— *Ուրեմն՝ Եվրոպայի մեծ քարտեզն ու ատրճանակ։*

ՋՈ— *Լավը կչոկես։ Վաճառողին կասես, որ զենքից գլուխ չեմ հանում ու հույսդ իր ազնվության վրա է։ Տասը դոլարից ավել փող չտաս։*

ԹՈՄ— *Ջո, երևում է մտքիդ բան ես դրել։ Ատրճանակի հետ հանաք չեն անի։*

ՋՈ— *Տես վատը չտանս։*

ԹՈՄ— *Ջո։*

ՋՈ— (Սրտնեղած)։ *Ի՞նչ է, Թոմ։*

ԹՈՄ— *Ջո, ինչո՞ւ ես ինձ անընդհատ հիմար բաների ուղարկում։*

ՋՈ— (Բարկացած)։ *Դրանք հիմար բաներ չեն, Թոմ։ Դե, ճամփա ընկիր։*

ԹՈՄ— *Բա Քիթիի՞ն, Ջո։*

ՋՈ— *Թող լա։ Օգուտ է։*

ԹՈՄ— *Դե որ առանց ինձ էստեղ երևա, խոսիր հետը, հա՞, Ջո։ Պատմիր իմ մասին։*

ՋՈ— *Լավ։ Գնա։ Ատրճանակը լցնել չտաս։ Ուղղակի կվերցնես, կգաս։*

ԹՈՄ— (Գնալով)։ *Ինչո՞ւ պիտի լցնել տամ. գլխիցս ձե՞ռ եմ քաշել։*

ՋՈ— *Սպասիր մի բոպե։ Էս խաղալիքները հետդ տար։*

ԹՈՄ— *Ու՞ր տանեմ։*

ՋՈ— *Մի երեխայի կտաս։* (Դադար)։ *Չէ։ Տար Քիթիին տուր։ Մի անգամ ինձ խաղալիքներ տվին, լացս կտրեցի։ Դրա համար էի քեզ խանութ ուղարկել։ Ուզում էի պարզել ինչ կա դրանց մեջ, որ տեսնելուն պես՝ լացս կտրեցի։ Հիշում եմ՝ աչքիս շատ տխմար թվացին։*

ԹՈՄ— *Ուրեմն ի՞նչ, Ջո։ Տանեմ Քիթիի՞ն տամ։ Քո կարծիքով լացը կկտրի՞։*

ՋՈ— *Գուցեև կտրի։ Դրանք էնպես են գրավում, որ մոռանում էլ ես, թե լացդ ինչու էիր դրել։ Խաղալիքները հենց դրա համար են։*

ԹՈՄ— *Հա, բա ի՞նչ։ Վաճառողուհին զարմացել էր, թե ինչիս են պետք։ Այ, հիմա կտանեմ կտամ Քիթիին։* (Ողբերգականորեն)։ *Ախր նա փոքրիկ աղջկա նման է։* (Գնում է)։

ՈՒԵՍԼԻ— *Միստր Նիք, կարելի՞ է էլի դաշնամուր նվագել։*

ՆԻՔ— *Ո՞նց թե՝ կարելի է։ Ինչքան սիրտդ տալիս է, նվագիր... մինչև չասեմ, որ հերիք է։*

ՈՒԵՍԼԻ— *Դուք մտադիր եք ինձ փո՞ղ տալ նվագելու համար։*

ՆԻՔ— *Բա ո՞նց։ Գոնե էնքան կտամ, որ գլուխդ պահես։*

ՈՒԵՍԼԻ— (Զարմանքով ու հիացմունքով)։ *Դաշնամուր նվագելու հա-*

մար էլ փող տա՞ն։ (Մոտենում է դաշնամուրին և սկսում կամացուկ նվագել)։

Հարին բարձրանում է փոքրիկ բեմահարթակ և ականջ դնում երաժշտությանը։ Քիչ անց սկսում է դոփապար զարկել՝ ներբանները մեղմ կտկտացնելով։

ՆԻՔ— *Ինչի՞ համար էիր լացդ դրել որ։*
ՋՈ— *Մորս համար։*

ՆԻՔ— *Ի՞նչ էր եղել նրան։*
ՋՈ— *Մահացել էր։ Խաղալիքները տվեցին թե չէ, լացս կտրեցի։*

Մտնում է Նիքի մայրը՝ մոտ վաթսուն տարեկան, համեստ սև շորով, փոքր-մոքր, աշխույժ մի պառավ։ Նրա դեմքը փայլում է ուրախությունից։ Բարձրաձայն, զանազան շարժումներ անելով՝ լեզվին է տալիս իտալերեն։ Նիքը հրճվում է նրան տեսնելով։

ՆԻՔԻ ՄԱՅՐԸ— (Իտալերեն)։ *Ի՞նչ կա, ի՞նչ չկա, ամեն ինչ լա՞վ է, Նիքի։*
ՆԻՔ— (Իտալերեն)։ *Լավ է, լավ, մամա։*

Մի կես ռոպե բարձրաձայն տալիս-առնում են ընտանեկան գործերի մասին, որից հետո Նիքի մայրը հեռանում է այնպես զվարթ ու աղմկոտ, ինչպես որ եկել էր։

ՋՈ— *Ո՞վ էր էդ կինը։*
ՆԻՔ— (Հպարտ-հպարտ ու մի քիչ տխուր)։ *Մայրս։* (Դեռ նայում է մուտքի ճոճվող դռներին)։
ՋՈ— *Ի՞նչ էր ասում։*
ՆԻՔ— *Հեչ։ Մոտովն անցել էր, եկել էր ինձ տեսնի։* (Դադար)։ *Ատրճանակն ինչի՞դ է պետք։*
ՋՈ— *Սիրում եմ տնտղել իրերը, Նիք։*

Սիգապանծ քայլքով մտնում է մի ծերուկ, որն այնպիսի տեսք ունի, ասես ժամանակին եղել է Քիտ Քարսոնը։ Մի պտույտ է տալիս ու վերջիվերջո կանգնում Ջոյի սեղանի մոտ։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Անունս Մըրֆի է։ Հին որսորդ եմ։ Հո դեմ չե՞ք լինի, որ ձեր սեղանին նստեմ։*
ՋՈ— *Համեցեք։ Ի՞նչ կխմեք։*
ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Նստելով)։ *Գարեջուր։ Ինչ որ միշտ խմում եմ։ Շնորհակալ եմ։*
ՋՈ— (Նիքին)։ *Մի բաժակ գարեջուր, Նիք։*

Նիքը մի բաժակ գարեջուր է բերում, դնում սեղանին։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Մի շնչով դատարկում է, աջ ձեռքի երեսով սրբում ճերմակ, փարթամ բեղը։ Ձուկը գլխից բռնելով)։ *Դժվար թե քո օրում սիրահարված լինես լիլիպուտ կնկա՝ քաշը երեսունինը ֆունտ։*

ՋՈ— (Նրան զննելով)։ *Չէ, բախտ չի վիճակվել, բայց մի բաժակ էլ գարեջուր խմեք։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Մտերմաբար)։ *Շնորհակալ եմ, հոգաչափ շնորհակալ։ Գելափում էր, քսան տարի առաջ։ Ռուֆուս Ջենքինս անունով մի տղա եկավ քաղաք, հետն էլ վեց հատ սպիտակ, երկու հատ սև ձի։ Թե՝ մարդ եմ ման գալիս, ձիերիս ընտելացնի. դե, ես չեմ կարող, ձախ ոտս սախաթ է։ Ոնց եղավ, Փարքերի կրպակում պատահեցի Հենրի Ուոլֆոլին, խոսք խոսքի հասավ, վերջը տուրուդմփոց բացվեց։ Ձեռս մի պղնձե թքաման ընկավ, տարա բերեցի, գլխին բամփեցի։ Պոչս քաշեցի ու հայդա՝ Մեքսիկա։ Բայց արի տես, որ սրա գլուխը պինդ էր, չմեռավ։ Էս մեքսիկացիներն էլ մլթոներեն էին խոսում, մի բառն ինչ է՝ չէի հասկանում։ Շատ որ դեսուդեն ընկա, մի անասնաբույծ ինձ գործի վերցրեց, անունը՝ Դիեգո, ուսումն էլ ստացել էր Կալիֆոռնիայում։ Մեզանից լավ էր մեր լեզվով բլբլացնում։ Գիտես, ասում է, քո գործի անունն ի՞նչ է, Մրրֆ. ինչքան ուժդ պատի, պիտի էս ցուլերին բռես, որ մրցանակ շահեն։ Գլխիս վրա, ասում եմ, բայց ինչո՞վ բռեմ, ինչքան ուժս պատի։ Խոտ տուր, ասում է, կաթնուկ տուր, աղ տուր, գարեջուր, ասպիրին։ Երկու օր չանցած՝ ակորդեոնի խաթեր կռվի մեջ ընկա։ Իրեն կտրատում է, թե բա՝ գողացել ես։ Իսկ ես փոխ էի առել։ Էլ չհամբերեցի, տարա բերեցի ու ակորդեոնով գլխին շրմփացրի։ Ակորդեոնը ձեռաց ջարդուխուրդ եղավ. էնքան սրտիս ցավ տվեց. ակորդեոնը ո՞րն է, հրաշք բան էր, կյանքումս դրա պես տեսած չկայի։ Մի ձի ճարեցի, ինձ գցեցի թամքին ու էլի հայդա՝ սահմանը անցա, քշեցի եկա Թեքսաս։ Ոնց եղավ, մի մարդու հետ խոսքի բռնվեցի, տեսքից շատ ազնիվ մարդ էր երևում։ Բայց ի՞նչ դուրս գա, որ լավ լինի. դու մի ասա, էս մարդը խուզարկու է, ինձ է ման գալիս։*

ՋՈ— *Հա, բայց դուք խոսում էիք լիլիպուտի մասին՝ քաշն էլ երեսունինը ֆունտ։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Բա իսկի կմոռանա՞մ էդ աղա կնկան։ Մինչև մահ-գերեզման միտս կպահեմ էդ պստիկ ճստիկին։*

ՋՈ— *Իսկապե՞ս։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Թեկուզ վաթսուն տարի ապրեմ։*

ՋՈ— *Վաթսո՞ւն։ Դուք հիմա էլ վաթսունից մեծ եք երևում։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Կյանքիցս է։ Տեսածս դարդ ու ցավից։ Երեք ամիս առաջ հիսունութս լրացավ։*

ՋՈ— *Պարզ է։ Հետո՞, շարունակեք, մի բան էլ պատմեք։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Էդ թեքսասցի խուզարկուին ֆոռացնում եմ. ազգս Ռոթշիլդյան է, ասում եմ, լեռնադործ ինժեներ եմ՝ Փենսիլվանիայից, յուղոտ տեղ եմ ման գալիս, որ դործի մտնեմ։ Երկու հասցե տվեց, թե՝ գնա Հաուսթոն։ Մի օր ծեգը ծեգին մաղ էր մնում, որ աչքիցս զըրկվեմ սանդուղքով իջնելիս։ Մի զրռ ածդահա առաջս կտրեց՝ բոյը վեց ոտնաչափ, աջ ձեռան տեղն էլ մի երկաթե չանչ։ Դու իմ ընտանիքը, ասում է, քայքայել ես։ Երդում-կրակ եմ ուտում, թե՝ այ մարդ, ես տեղացի չեմ, էս երկու օրն եմ եկել Հաուսթոն։ Աղչկերքը կիտվել են սանդուղքի գլխին, դուրս եկել թամաշի, որ էս է պիտի տուրուդմփոց նայեն։ Ուղիղ յոթ հոգի։ Սա, ուրեմն, դիմացս ցցվել է՝ ոչ էս կողմ, ոչ էն կողմ, բոյը վեց ոտնաչափ, աջ ձեռան տեղն էլ երկաթե չանչը։ Ում սիրտը ասես, որ դող չի ընկնի։ Չանչը տարավ բերեց, որ գլխիս բամփի, հենց էդ արանքում ինձ չկորցրի, դրա մռութին մի լավ հասցրի։ Թե տեղնուտեղը գլխիս ճար չանեի, աչքիս պիտի մնաս բարով ասեի։ Սա հարբածի պես գլդիգլոր եղավ ու որտեղից որտեղ ատրճանակ հանեց։ Իրար հետևից յոթ անգամ կրակեց։ Համա ես ծտի պես թռել էի, մի շնչում սանդուղքով վերև բարձրացել։ Էդպես մի ժամի չափ ոտս կախ արեցի, վերջը որոշեցի դուրս գալ լույս աշխարհ։ Ուրեմն մի մետաքսի շոր եմ վրաս քաշել, գույնզգույն փետուրներով զուգվել, գլխիս էլ մի մեծ գլխարկ եմ դրել ու ճակատիս քաշել։ Տեսնեմ անկյունում կանգնել, ճամփա է պահում։ Վա՜խ, ասում եմ, էս ի՞նչ ասլան է պատի տակ դարդոտած կանգնել՝ փոխանակ ինձ պես հուրի-փերու հետ գնա քեֆ քաշի։ Ասում է՝ սրտիս հետ գնա՜, քեզ նման լրբի հավեսը չունեմ։ Ընկել եմ փողոց, էդպես գնում եմ. վերջը հայդա՜՝ թողեցի, դուրս եկա քաղաքից։ Դժվար թե քո օրում կաշիդ փրկելու համար փեշ հագած լինես։*

ՋՈ— *Չէ, չի վիճակվել։ Ոչ էլ կյանքումս սիրահարվել եմ լիլիպուտի՝ քաշը՝ երեսունինը ֆունտ։ Էլի գարեջուր խմեք։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Շնորհակալ եմ։* (Մի բաժակ գարեջուր էլ է դատարկում)։ *Իսկ փորձած կա՞ս հեծանիվով կով արածացնել։*

ՋՈ— *Չէ, առիթ չի եղել։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Հաուսթոնից ծլկեցի՝ գրպանումս հինգ սենթ։ Լուսինդա*

անունով մի աղջկանից էի նվեր ստացել։ Տասնչորս ժամում տասնչորս մղոն ոտքով կտրեցի։ Շատ էի գնացել, թե քիչ, մեկ էլ ի՞նչ տեսնեմ. մի մեծ, ուզածիդ պես տուն՝ չորս կողմը փշալար, գամփռներն էլ բակում։ Շուն տեսնելիս միշտ ճամփաս թեքել եմ։ Բայց հիմի սովն ու ծարավը էնպես էին զոռում, որ ուզած-չուզած ներս մտա դարպասից։ Գամփռները վեր թռան ու վրա պրծան ինձ։ Ճակատս դեմ տված ճամփա եմ բացում, համա ամեն շունչ քաշելիս, գլխիս մի մաղ է սպիտակում։ Մահն աչքս առած՝ հասա տան շեմքն ու դուռը թակեցի։ Մի հաստաքամակ նեգրուհի դուռը բաց արեց ու տեղնուտեղը երեսիս շրխկացրեց։ Ասում է՝ ռադ եղիր գնա՞, քոսոտ անտեր շուն։ Նորից եմ թակում։ Էլի ասում է՝ ռադ եղիր գնա՞։ Նորից։ Էլի՝ ռադ եղիր գնա՞։ Մի անգամ էլ որ թակեցի, տանտերը ինքը դուռը բաց արեց. հալևոր մարդ էր, հայհայը գնացել, վայվայն էր մնացել, երևի իննսուն տարեկանից պակաս չէր լինի, ձեռքին էլ կոթը սղոցած մի որսորդական հրացան։ Ասում եմ՝ ես փորձանքի չեմ ման գալիս, այ հեր, սոված-ծարավ տղա եմ, անունս՝ Քեյվընու։ Էս խոսքերիս վրա բիձուկը փափկեց ներս տարավ ինձ։ Անանուխի փունջ սարքեց երկուսիս համար։ Այ հեր, ասում եմ, բա էստեղ մենակ ե՞ս ապրում։ Թե՝ խմիր, խմիր, լեզվիդ մի տուր։ Կարող է մենակ եմ, կարող է և չէ։ Չտեսա՞ր տանտիկնոջը։ Դե, մնացածն էլ դո՛ւ տեղը բեր։ Էդ տեսակ բան ականջովս էլի էր ընկել, բայց ամոթու էլ չհարցուփորձեցի, բերանս ջուր առա, ծպտուն չհանեցի։ Թե որ ասեմ էդ հալևորը իմ պապն էր, չես հավատա, չէ՞։

ՋՈ— Գուցեև հավատամ։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— Է՛հ, էդպես էլ դուրս եկավ, որ իմ պապը չի։ Ա՛յ թե մազալու բան կլիներ, ափսոս։

ՋՈ— Իսկ որտե՞ղ էիք հեծանիվով կով արածեցնում։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— Օհայո նահանգի Տոլեդո քաղաքում, տասնութ թվին։

ՋՈ— Օհայո նահանգի Տոլեդո քաղաքո՞ւմ։ Էնտեղ կով չեն պահում։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— Հիմի՝ էլ չեն պահում։ Տասնութ թվին էին պահում։ Ինչ որ է. մի մարդ կար, պահում էր։ Հաշվապահ էր, անունը՝ Սեմ Գոլդ, ինքն էլ՝ բնիկ Նյույորքցի, Իսթ Սայդում էր ծնվել։ Սոմբրերո, Օղապարան, ատրճանակ, երկու գլուխ կով ու երկու հեծանիվ։ Սեմն իր ռանչոյի անունը «Դրախտի Սեմ» էր դրել. երկու ակր ընտիր հող ուներ՝ հենց քաղաքի փեշին։ Միտդ է՞, տասնութ թիվը պատերազմի տարի էր։

ՋՈ— Հա, միտքս է, բայց ո՞նց էիք երկու կովը հեծանիվով արածացնում։ Էդ ո՞նց էիք գլուխ բերում։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— Ամենահեշտ բանն է աշխարհում։ Ձեռներս բաց թողած էի հեծանիվը քշում։ Ուզեի-չուզեի, թե չէ ո՞նց պիտի օղապարանը գցեի, կովերին բռնեի։ Սեմ Գոլդի մոտ էնքան աշխատեցի, մինչև որ կովերը փախեփախ ընկան։ Հեծանիվներից լեղաճաք էին լինում։ Փախան գնացին, Տոլեդո հասան։ Ոչ մի լուր չեկավ։ Էլ թերթ չմնաց, որ հայտարարություն չտանք, բայց կովերը ոտով-գլխով կորան ու կորան։ Խեղճ մարդու քեֆը կոտրվեց։ Երկու հեծանիվն էլ ծախեց ու հետ դառավ Նյու Յորք։ Ես էլ կարմիր աստառով խաղաթղթերի կապուկից չորս տուզը վերցրի ու քաղաքի ճամփան բռնեցի։ Նստեցի պոկերի։ Խաղացողներից մեկը, անունը՝ Ջաք Քոլինզ, տաքարյուն տղա էր, աչքն էլ չէր ճպի, գլուխը փորձանքի կտար։ Խնդմնդալով սրան ասում եմ՝ վայ թե սիրտ չանես հարյուր դոլարի վրա հետս գրազ գաս, որ մյուս բաժանելիս չորս տուզն էլ ինձ է ընկնելու։ Պայմանն ընդունեց, թե բա՝ ի՞նչ կա սիրտ չանելու։ Իմ թղթերը կարմիր աստառով էին, նրանցը՝ կապույտ։ Ասա՝ հիշում էի՞ անտեր մնացածը։ Ուրեմն չորս հատ տուզ եմ ցույց տալիս. ագռավի տուզը, խաչի տուզը, ագուռի տուզը, սրտի տուզը։ Մինչև մահ-դերեզման միտս կպահեմ էդ չորս թուղթը, թեկուզ վաթսուն տարի ապրեմ։ Տեղնուտեղը կաշիս կքերթեին, թե էդ տարվա փոթորիկը մեյդան չընկներ։

ՋՈ— Փոթորի՞կը։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— Ի՞նչ է, մոռացել ե՞ս տասնութ թվի Տոլեդոյի փոթորիկը։

ՋՈ— Ոչ տասնութ թվին, ոչ էլ ուրիշ տարի Տոլեդոյում փոթորիկ չի եղել։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— Մեղա քեզ, աստված։ Բա ինչի՞ արար աշխարհը գլխիս խավարեց, հե՛ր օրհնած։ Էդ ո՞նց պիտի մեկ էլ էն տեսնեի, որ ընկել եմ Չիկագո ու բժժած ման եմ գալիս Սթեյթ փողոցում։

ՋՈ— Երևի ուղղակի վախեցրել են ձեզ։

ՔԻԹ ՔԱՐՍՈՆ— Չէ, վախեցնե՞լը որը է։ Թե տասնութ թվի նոյեմբերի թերթերը քրքրես, չի կարող պատահի, որ Տոլեդոյի փոթորիկի մասին մի բան չգտնես։ Հիշում եմ, մի երկհարկանի տան կտրին նստած էի, փոթորիկը ինձ հյուսիս-արևմուտք էր քշում։

ՋՈ— (Լուրջ-լուրջ)։ Հյուսիս-արևմո՞ւտք։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— Է՜հ, որդի, չլինի՞ թե ուզում ես ասել, որ դու էլ չես հավատում ինձ։

ՋՈ— (Լուռ է: Ապա՝ ամենայն լրջությամբ, կտրուկ ու վճռականորեն): *Իհարկե, հավատում եմ։ Կյանքը արվեստ է, ոչ թե հաշվապահություն։ Մարդ ինքն իրեն գտնելու համար պիտի շատ ու շատ խաղափորձեր անի։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Մտախոհ, զարմացած, ժպիտը դեմքին): *Դու հանդիպածս առաջին մարդն ես, որ հավատում է ինձ։*

ՋՈ— (Լուրջ): *Էլի գարեջուր խմեք։*

Մտնում է Թոմը՝ բերելով քառեզգիրքը, ատրճանակը ու մի տուփ փամփուշտ: Քիտ Քարսոնը գնում է վանառասեղանի կողմը:

(Թոմին): *Տվեցի՞ր խաղալիքները։*

ԹՈՄ— *Հա, տարա տվեցի։*

ՋՈ— *Լացը կտրե՞ց։*

ԹՈՄ— *Չէ, սկսեց ավելի աղեկտուր լաց լինել։*

ՋՈ— *Այ քեզ բան։ Տեսնես ինչո՞ւ։*

ԹՈՄ— *Ջո, ախր որ մի բոպե շուտ հասած լինեի, Ֆրենքին կընդուներ խաղչեքը, ու հիմա մենք մոտ մեկուկես հազար դոլար կունենայինք։ Դրանից ինչքա՞նը կտայիր ինձ, Ջո։*

ՋՈ— *Եթե նա ամուսնանար հետդ, լրիվ՝ ինչքան որ լիներ։*

ԹՈՄ— *Հաստա՞տ, Թոմ։*

ՋՈ— (Բացում է փաթեթները, սկզբից աչքի անցկացնում քառեզգիրքը, ապա՝ տնտղում ատրճանակը): *Իհարկե։ Դու իմ տերության միակ հպատակն ես։ Իսկ հպատակի բարօրության մասին հոգալը իմ պարտականությունն է։*

ԹՈՄ— *Ի՞նչ կարծիքի ես, Ջո, էլ չի պատահի՞, որ մենք ութսուն դոլար դնենք ձիարշավի մրցումներին, շահողին մի դոլարի դիմաց տասնհինգը տան, լավ եղանակ լինի, վազքուղին էլ պինդ, ձիերը հաջող մեկնարկ վերցնեն, մեր ձին համարյա մինչև վերջ քաշ գա մյուսների պոչից, մենք էլ մտածենք, թե փողներս ջուրը գցեցինք, ու հանկարծ մեր ձին պոկվի առաջ և բոլորից շուտ տեղ հասնի։*

ՋՈ— *Լավ չհասկացա։*

ԹՈՄ— *Դու գիտես մտքինս ինչ է։*

ՋՈ— *Ք՝ մտքինը անհնարին բան է։ Չէ, Թոմ, էլ երբեք չի պատահի։ Մենք ուղղակի մի քիչ ուշացանք, այ թե ինչ։*

ԹՈՄ— *Կպատահի, Ջո։*

ՋՈ— *Դժվար թե։*

ԹՈՄ— *Բա էլ ո՞նց պիտի փող ճարեմ, որ ամուսնանամ։*

ՋՈ— *Չգիտեմ, Թոմ։ Գուցե և չճարես։*

ԹՈՄ— *Ջո, ես պետք է նրա հետ ամուսնանամ։* (Գլուխն օրօրելով)։ *Մի տեսնեիր ինչ խղճուկ սենյակում է ապրում։*

ՋՈ— *Ինչ սենյակ է ո՞ր։*

ԹՈՄ— *Էնքան նեղլիկ է։ Շունչդ կտրվում է, ինց որ բանտում լինես։ Անտանելի սենյակ է, Ջո։ Քիթին արժանի է ավելի լավ տեղ ապրելու։*

ՋՈ— *Ուզում ես նրան դո՞ւրս բերել էդտեղից։*

ԹՈՄ— *Հա։ Ուզում եմ, որ նա էնպիսի տան մեջ ապրի, ուր գոնե քիչ թե շատ ապրելու տեղ կա։ Քիթիին պարտեզ է պետք կամ դրա պես մի բան։*

ՋՈ— *Ուզում ես նրա հոգսը քեզ վրա՞ վերցնել։*

ԹՈՄ— *Բա ի՞նչ, Ջո։ Պիտի մի լավ մարդու հոգսը ինձ վրա վերցնեմ, որ զգամ, թե ես էլ եմ ինձանից մի բան ներկայացնում։*

ՋՈ— *Ուրեմն պիտի աշխատանք գտնես։ Ի՞նչ կարող ես անել։*

ԹՈՄ— *Միջնակարգ դպրոցն ավարտել եմ, բայց չգիտեմ ինչ կարող եմ անել։*

ՋՈ— *Իսկ որ մտքումդ ծանրութեթև ես անում, սիրտդ ի՞նչ է ասում՝ ի՞նչ կուզեիր անել։*

ԹՈՄ— *Երնեկ քեզ նման նստեի, Ջո, ձեռիս տակ մեկին պահեի, որ դեսուդեն վազեր, շամպայն վայելեի, ոչ մի հոգս չունենայի, գրպանս միշտ լիքը լիներ ու փողի համար երբեք դարդ չանեի։*

ՋՈ— *Արքայական կյանք ես ուզում։*

ՆԻՔ— (Ջոյին)։ *Բա դո՞ւ, դո՞ւ էդ ինց ես հաջողացնում։*

ՋՈ— *Ճիշտն ասած, չգիտեմ, բայց իմ կարծիքով, պիտի սերտ դաշինք կնքես երկնավորի հետ։*

ՆԻՔ— *Քո ասածներից բան չեմ հասկանում։*

ԹՈՄ— *Ջո, միգուցե հետ դառնամ Քիթիի մոտ ու նորի՞ց փորձեմ նրան հանգստացնել։*

ՋՈ— *Ձեռքդ տուր, վեր կենամ, ես էլ եմ գալիս։*

ԹՈՄ— (Զարմանքով)։ *Ի՞նչ։ Արդեն վե՞ր ես կենում։*

ՋՈ— *Ասում ես՝ լա՞ց է լինում։*

ԹՈՄ— *Լաց է լինում։ Առաջվանից աղեկտուր։*

ՋՈ— *Ինձ թվում էր հենց որ խաղալիքները տեսնի, լացը կկտրի։*

ԹՈՄ— *Ես սովոր եմ, որ դու գիշերվա ժամը չորսից մինչև հաջորդ գիշերվա երկուսը տեղդ նստած լինես։*

ՋՈ— *Ուղղակի ոտքով ման գալն իմ բանը չի, Թոմ։ Ուրիշ ոչինչ։ Մոտ արի։ Տուր ձեռքդ։ Ես նրան հանգստացնելու ձևը կգտնեմ։*

ԹՈՄ— (Օգնելով նրան վեր կենալ)։ *Ջո, ես երբեք չեմ ասել քեզ, բայց դու ուրիշ ես, նման չես մյուսներին։*

ՋՈ— (Հապճեպ, փոքր-ինչ բարկացած)։ *Հիմար-հիմար դուրս մի տուր։ Կան բաներ, որ գլխումս տեղ չեն անում։ Դե, ես էլ փորձում եմ տեղ անել։* (Նա մի քիչ հարբած է։ Գնում է Թոմի հետ)։

Մինչ Ռեսլին դաշնամուր է նվագում, լույսերը դանդաղ մարում են, ապա նույնքան դանդաղ վերստին պայծառանում՝ ի նախանշան երրորդ գործողության։

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մի հասարակ մահճակալ Նիֆի պանդոկում, որը պայմանականորեն պատկերում է «Նյու Յորք» հյուրանոցի քսանմեկերորդ սենյակը: Մահճակալը կարելի է դնել կենտրոնում կամ փոքրիկ բեմահարթակին: Պանդոկում ամեն ինչ առաջվա նման է, միայն թե բոլորը լուռ են, անշարժ ու մթության մեջ, բացի Ռեսլիից, որը դաշնամուրով նվագում է ինչ-որ մեղմ ու թախծոտ մեղեդի: Քիթի Դյուվալը այն զգեստով է, որ հագել է Օհայոյում անցած իր երիտասարդ տարիներին: Մահճակալին նստած՝ մի ժապավեն է կապում մազերին: Ձեռքի հայելու մեջ նայում է իրեն: Տարիների թողած հետքերը նրա սիրտը կսկիծով են լցնում: Զայրացին ու վշտաբեկ շարժումով ժապավենը պոկում է գլխից: Վերցնում է անկողնու վրա թողած գիրքն ու փորձում կարդալ: Նորից է սկսում հեծկլտալ: Հանում է իր հին լուսանկարն ու նայում: Ընկնում է անկողնու վրա, դեմքը ծածկոցի մեջ թաղում և ավելի աղիողորմ հեկեկում: Ականջին ինչ-որ թխկթխկոց է հասնում. կարծես դուռն են ծեծում:

ՔԻԹԻ— (Հեծկլտալով): *Ո՞վ է:*

ԹՈՄԻ ՁԱՅՆԸ— *Ես եմ, Քիթի, Թոմը: Ջոն էլ է հետս:*

Հուշիկ քայլերով մահճակալին է մոտենում Ջոն, հետևից՝ Թոմը: Ջոյի ձեռքին մի բավականին մեծ խաղալիք կարուսել է: Մի պահ նա ուշի-ուշով նայում է Քիթիին: Խաղալիք կարուսելը դնում է հատակին՝ մահճակալի ոտքերի մոտ:

ԹՈՄ— (Թեքվելով Քիթիի վրա): *Մի լա, Քիթի, մի լա:*

ՔԻԹԻ— (Առանց գլուխը բարձրացնելու, արտասվագին): *Էլ չեմ կարող էսպես ապրել:*

Ջոն գործի է դնում կարուսելը, որից տարօրինակ, տխուր, զանգակածայն երաժշտություն է լսվում: Մեղեդին սկսվում է դանդաղ, ապա արագանում, հետզհետե նորից դանդաղում՝ մինչև ավարտվելը: Խաղալիքը հենց Ջոյի հետաքրքրությունն էլ է շարժում. նա անբարբ նայում է կարուսելին և լսողությունը լարած՝ ականջ դնում երաժշտությանը:

ԹՈՄ— (Աշխուժորեն): *Քիթի, Ջոն վեր է կացել պանդոկի իր տեղից, որ հատուկ քեզ համար խաղալիք ճարի ու բերի էստեղ: Սա նվա-*

գով է։ Ամբողջ քաղաքը տաքսիով չափչփեցինք, մինչև որ գտանք։ Հապա լսիր։

Քիթին դանդաղորեն նստում է, ականջ դնում։ Թոմը հայացքը չի կտրում նրանից։ Ամեն ինչ տեղի է ունենում թախծալի դանդաղությամբ։ Քիթի աչքն ընկնում է իր ճին լուսանկարի վրա, որտեղ նա պատկերված է մանկական տարիքում։ Վերցնում է լուսանկարը և նորից նայում։

ԹՈՄ— (Լուսանկարին նայելով)։ *Ո՞վ է էս պստիկ աղջիկը, Քիթի։*

ՔԻԹԻ— *Ես եմ։ Յոթ տարեկանում։* (Լուսանկարը տալիս է Թոմին)։

ԹՈՄ— (Նայում է, ժպտում)։ *Այ թե սիրունիկն ես, Քիթի։*

Ջոն մեկնում է ձեռքը։ Թոմը լուսանկարը տալիս է նրան ու նորից շրջվում Քիթի կողմը։ Թոմի աչքին Քիթին նիմա էլ է նույն սիրունիկ աղջիկը, ինչ որ յոթ տարեկանում։ Ջոն զննում է լուսանկարը։ Քիթին աչքերը բարձրացնում է, նայում Թոմին։ Կասկած չկա, որ նրանք իսկապես սիրում են իրար։ Ջոն հայացքը դարձնում է նրանց։

ՔԻԹԻ— *Թոմ։*

ԹՈՄ— (Պատրաստակամորեն)։ *Հա, Քիթի։*

ՔԻԹԻ— *Թոմ, փոքր ժամանակ ի՞նչ էիր երազում դառնալ։*

ԹՈՄ— (Մի քիչ տարակուսած, բայց նրան գոհացնելու նույն պատրաստակամությամբ)։ *Ի՞նչ, Քիթի։*

ՔԻԹԻ— *Դու հիշո՞ւմ ես մանկությունդ։*

ԹՈՄ— (Մտախոհ)։ *Հա, Քիթի, մեկ-մեկ միտս է գալիս։*

ՔԻԹԻ— *Ի՞նչ էիր ուզում դառնալ։*

ԹՈՄ— (Նայում է Ջոյին, բռնում նրա հայացքը, լեզուն բացվում է)։ *Մեկ ուզում էի շոգեքարշի մեքենավար դառնալ, մեկ՝ ոստիկան։*

ՔԻԹԻ— *Իսկ ես երազում էի մեծ դերասանուհի դառնալ։* (Աչքերը Թոմի երեսին հառելով)։ *Երբեք չե՞ս երազել բժիշկ դառնալ, Թոմ։*

ԹՈՄ— (Նայում է Ջոյին, նորից բռնում նրա հայացքը։ Ջոն դեմքի լրջամիտ արտահայտությամբ քաջալերում է նրան, որ շարունակի)։ *Այ, հիմա հիշեցի։ Բա ո՞նց, Քիթի։ Մի անգամ... երազել եմ բժիշկ դառնալ։*

ՔԻԹԻ— (Տխուր ժպիտով)։ *Ինչ լավ է։ Ես էլ երազում էի, թե մեծ դերասանուհի կդառնամ, օրերից մի օր թատրոն կգա մի շահել բժիշկ, կտեսնի ինձ, կսիրահարվի ու ծաղիկներ կուղարկի։*

Ջոն նշաններ է անում Թոմին՝ հասկացնելով, որ շարունակի։

ԹՈՄ— *Ես հենց էդպես էլ կանեի, Քիթի։*

ՔԻԹԻ— *Ես չէի իմանա ծաղիկներն ումից են ու հետո նրան կտեսնեի*

փողոցում և կսիրահարվեի։ Չէի իմանա, որ նա էլ է սիրահարված ինձ։ Գիշեր-ցերեկ նրա մասին կմտածեի։ Կերազեի, որ նա ամբողջ կյանքում իմ կողքին լինի։ Կերազեի նրա նման երեխաներ ունենալ։ Հենց որ տեսնեի նրան ու սիրահարվեի, էլ չէի ուզենա դերասանուհի մնալ։ Մենք գնացք կնստեինք ու կգնայինք մեկը մյուսից գեղեցիկ քաղաքներ և ամեն տեղ կհանդիպեինք հրաշալի մարդկանց, փող կտայինք աղքատներին, և ով հիվանդանար, ուր էլ որ լիներ, նա կգնար հիվանդի մոտ ու կբուժեր։

Թոմը շփոթահար ու մոլորված, ցավագին հայացքով նայում է Ջոյին։ Քիթին թաղվել է անուշՀների մեջ, զրեթե ինքնամոռացության գիրկն ընկել։

ՋՈ— (Կամացուկ)։ *Խոսիր հետը, Թոմ։ Դարձիր նրա հրաշագործ ջահել բժիշկը, ում մասին երազել է, բայց երբեք չի գտել։ Սկսիր։ Գոնե դու ուղղիր կյանքի սխալները։*

ԹՈՄ— *Ջո...* (Սրտակտուր)։ *Չգիտեմ ինչ ասեմ։*

Միջանցքից ինչ-որ աղմկոտ երգի պատառիկներ են լսվում։ Ջահել, առնական ձայնով մեկը ծոր է տալիս. «Խոլ օվկիանի կուրծքն է նեղմում նավը մեր...»։

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆԸ— *Քիթի, աա՜հ, Քիթի։*

Քիթին հանկարծ ցնցվում է, սթափվում։

Աաա՜հ, ո՞ր գրողի ծոցն ես կորել, Քիթի։

Թոմը վեր է թռչում՝ արյունը գլխին։

ԿՆՈՋ ՁԱՅՆԸ— (Միջանցքում)։ *Ո՞ւմ ես փնտրում, է՛յ, նավաստի։*

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆԸ— *Աշխարհի ամենասիրուն պոռնիկին։*

ԿՆՈՋ ՁԱՅՆԸ— *Էլ ո՞ւր ես գնում, ես ի՞նչ պակասն եմ։*

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆԸ— (Անտարբեր արհամարհանքով)։ *Դո՞ւ։ Չէէէ՜։ Դու ի՞նչ զիբիլ ես Քիթիի կողքին... Հոտած քավթառ...*

ԿՆՈՋ ՁԱՅՆԸ— (Ճղճղալով, շարությամբ)։ *Ի՜նչ ես բերանդ շաղ տալիս, վիժվածք։*

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆԸ— (Նույն անտարբեր արհամարհանքով, բայց ավելի բարձրաձայն)։ *Ռեխդ փակիր, թե չէ վզակոթիդ էնպես կհասցնեմ որ... Ծածկիր դուռը, շո՜ւտ։*

ԿՆՈՋ ՁԱՅՆԸ— *Այլանդա՜կ։ Բոլորդ էլ այլանդակներ եք։*

Դուռը շրխկոցով փակվում է։

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆԸ— (Սրտալի, մռայլ երիզով)։ *Աաա՜հ, Քիթի...*

Քսանմեկերորդ սենյակ... Ո՞ր գրողի ծոցն է քսանմեկերորդ սենյակը։

ԹՈՄ— *Ջո, ես դրան կսպանեմ։*

ՔԻԹԻ— (Լիովին սթափված ու սոսկալի վախեցած)։ *Տեսնես ո՞վ է։* (Երկար ու սեռուն հայացքով նայում է Թոմին և Ջոյին)։

Թոմը զայրույթից գույն է տալիս, գույն առնում։ Ջոն անխռով է, հայացքը լի է խղճահարությամբ։ Քիթին դեմքը թաղում է անկողնու մեջ։

ՋՈ— (Կամացուկ)։ *Դուրս արա նրան, Թոմ։*

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆԸ— *Հրես է՛. համար քսանմեկ։ «Կապույտ է երկինքը, հովն է շնչնկում։ Ինչ լա՜վ է երկուսով մեր տաքուկ անկյունում»։* (Ողբերգականորեն)։ *Աաա՜հ, թքած ամեն ինչի վրա։*

Տխուր երգելով, մանանգալին է մոտենում մի ջանել նավաստի։ Սիրունատես տղա է, բան տարեկանից ավել չի լինի։ Նա պարզապես հարբած է ու մենակ։

ՆԱՎԱՍՏԻ— *Ողջույն, Քիթի։* (Դադար)։ *Օհո՜, այցելուներ։ Կներեք։ Հազար ներողություն։* (Քիթիին)։ *Ես հետո կգամ։*

ԹՈՄ— (Նրա ուսերը թափ տալով, կատաղի)։ *Կսպանե՛մ, մեկ էլ ոտք ես դրել էստեղ։*

Ջոն զսպում է Թոմին։ Սա դուրս է հրում վախեցած տղային։

ՋՈ— (Տրտում)։ *Թոմ, մնա Քիթիի մոտ։ Ես իջնեմ փողոց, մեքենա բռնեմ։ Մի քանի րոպեից էստեղ կլինեմ։ Կգնանք օվկիանոսի կողմը՝ մայրամուտը նայելու։ Հետո Գլխավոր խճուղով կգնանք Կիսալուսնի ծոց։ Կընթրենք էնտեղ, իսկ դու և Քիթին կարող եք պարել։*

ԹՈՄ— (Քար կտրած, անզոր արտահայտելու իր զարմանքն ու երախտագիտությունը)։ *Ջո, էդ բոլորն ինձ համա՞ր ես անում։ Ուրեմն ինձ չե՞ս ուղարկում, իմ տեղը դո՞ւ ես գնում։*

ՋՈ— *Հա։* (Մի շարժում է անում Քիթիի կողմը՝ հասկացնելով Թոմին, թե հարկավոր է խոսել նրա հետ, պաշտպանել նրա անմեղությունը, որ վտանգի տակ է, երբ Թոմը նրա կողքին չէ, անմեղություն, որի համար Թոմն այդպես սիրում է նրան։ Գնում է)։

Թոմը նայում է Քիթիին։ Նրա դեմքը մթնում է ու ստանում մանկական արտահայտություն։ Գործի է դնում կարուսելը, ականջ է դնում՝ հայացքը Քիթիին հառած, որը համրաշարժ բարձրանում է տեղից՝ միմիայն Թոմին նայելով։ Թոմը վերցնում է պտտվող կարուսելը և դանդաղորեն մեկնում Քիթիին, ասես այդ խաղալիքն իր սիրտն է։ Դաշնամուրի նվագը հետզհետե ուժգնանում է, լույսերն աղոտանում են, լսվում է պարող Հարիի կոշիկների փութեռանդ կոկտացը։

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Փիշ անց: Ուեսլին դեռևս դաշնամուրի մոտ է: Հարին պարում է բեմաճարբակին: Նիքը կանգնած է վաճառասեղանի հետև: Արաքն իր մշտական տեղում է: Քիտ Քարսոնը հուն է մտել՝ գլուխը ձեռքերին դրած:

Մտնում է Հարբեցողը: Գնում է հեռախոսի կողմը, պրպտում արտահան խորշը պատահաբար մնացած հինգ սենթանոց գտնելու հույսով: Նիքը մոտենում է Հարբեցողին՝ նրան դուրս տանելու համար: Հարբեցողը մի բոպե համբերելու նշան է անում: Նիքն անցնում է վաճառասեղանի հետը և Հարբեցողի համար վիսկի լցնում:

ՀԱՐԲԵՑՈՂ— *Ահելների կենացը, աստված նրանց դատաստանը քաղցր անի։* (Մի ուրիշ բաժակ բարձրացնելով): *Ջահելների կենացը, աստված երկար արև տա նրանց։* (Մի նոր բաժակ բարձրացնելով): *Մանուկների ու... պստլիկ կենդանիների կենացը, թեկուզ շնիկների, որ կծել չգիտեն։* (Մի բաժակ էլ բարձրացնելով, ամբողջ ձայնով): *Անտառաբուծության կենացը։* (Գրպաններում փող է որոնում: Գտնում է): *Պրեզիդենտ... Թաֆթի կենացը։* (Գնում է):

Հեռախոսը զանգում է:

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Վեր թռչելով, կովի պատրաստ): *Դե՛, մոտ եկեք, ո՞ւմ գլուխն է քոր գալիս, ուզում եք բոլորդ վրա տվեք։ Չիմանաք ողորմություն խնդրողներից եմ, միշտ էլ ես եմ ողորմություն տվել։*

ՆԻՔ— (Հանդիմանալից): *Է՞, չեղավ, Քիտ Քարսոն։*

ԴԱՎԻԼԻ— (Լսափողը վերցնելով): *Ալո՛... Ո՞ւմ... Նիքի՞ն... Այո։ Էստեղ է։* (Նիքին): *Քեզ են ուզում։ Երևում է կարևոր բան է։*

ՆԻՔ— (Մոտենալով հեռախոսին): *Կարևո՞ր։ Ի՞նչ պիտի լինի կարևոր։*

ԴԱՎԻԼԻ— *Մեծավորի պես է խոսում։*

ՆԻՔ— *Մեծավորի՞։* (Ուեսլիին ու Հարիին): *Էյ, դուք, մի քիչ կամաց։ Թողեք լսեմ, տեսնենք էս ինչ կարևոր բան են ասում։*

Ուեսլին դադարում է նվագել: Հարին ընդհատում է պարը:

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Կիպ մոտենում է Նիֆին): *Թե իմ անելու բան կա, ասա՝ անեմ քո թանկագին խաթեր համար։ Հիսունութ տարեկան եմ, գըլխովս երեք պատերազմ է անցկացել, չորս անգամ պսակվել եմ, երեխեքիս թիվ ու հաշիվ չկա, անուններն էլ չգիտեմ։ Ձեռս դատարկ է, մկները գրպանումս վազվզում են։ Հացը կոտեմին հազիվ եմ հասցնում։ Բայց թե իմ անելու բան կա, ասա՝ անեմ քո թանկագին խաթեր համար։*

ՆԻՔ— (Համբերատար): *Լսիր, հայրիկ, ասածու սիրուն, նստիր, քունդ առ... իմ թանկագին խաթեր համար։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Էդ էլ անեմ, ի՞նչ կա որ։* (Նստում է, ձեռքերը դնում սեղանին, գլուխն էլ՝ ձեռքերին: Միայն թե ոչ երկար: Հենց որ Նիֆն սկսում է հեռախոսով խոսել, ուշի-ուշով ականջ է դնում, ոտքի ելնում և սկսում մնջակատակի պես՝ շարժումներով ու դիմախաղով վերարտադրել այն ամենը, ինչի մասին խոսում է Նիֆը):

ՆԻՔ— (Լսափողի մեջ): *Հա՛* (Դադար): *Ո՞վ... Հա՞, պարզ է...* (Լսում է): *Ի՞նչ եք կպել նրանցից...* (Լսում է): *Եկեղեցականնե՞րը։ Այ գետնի տակն անցնեն դրանք։ Ես էլ եմ կաթոլիկ...* (Լսում է): *Լավ, ներս չեմ թողնի։ Կասեմ, որ մի երկու օր էստեղ չերևան... Հա, հասկանում եմ, թե ինչն ինչոց է...*

Երկչոտ քայլերով մտնում է Նիֆի դուստրը՝ Աննան, աչքը չի պոկում նորից: Նիֆը նրան չի նկատում: Աղջիկը կանգնում է դաշնամուրի մոտ:

Ի՞նչ... (Խիստ զայրացած): *Լսե՞ք, էդ Բլիք է, ինչ է, կյանքս կերել է։ Առավոտն էստեղ էր, ասացի, որ շառը քաշի գնա ու էլ մյուս անգամ էս կողմը չգա։ Ես աղջկերքին հեռու կպահեմ։ Դուք էլ Բլիքին հեռու պահեք...* (Լսում է): *Գիտեմ, որ աներձագը մեծ պաշտոնյա է, բայց թքած ունեմ։ Նա էստեղ ոչ մի անելիք չունի։ Անընդհատ բան է ման գալիս, որ մարդու գլխին կոտրի։ Ես ոչ մի օրենք չեմ խախտում։ Իմ պանդոկը քաղաքի ամենաայլանդակ մասում է, բայց հինգ տարվա մեջ ինձ մոտ ոչ մեկին ոչ թալանել են, ոչ սպանել, ոչ էլ աչքերը կապել։ Ես չեմ կպչում մարդկանց գլխից, թողնում եմ ազատ՝ ինչ ուզեն, անեն։ Իսկ ձեր գովական շքեղ ռեստորանները հենց քաղաքի կենտրոնում են, բայց դրանց երեսից իրիկունները քիթ սրբելու ժամանակ չունեք...* (Ուեսլիին նշաններ է անում, ապա ափով փակում լսափողը՝ շարունակելով լսել: Ուեսլիին): *Ի՞նչ ես սսկվել, նվագիր։ Ականջս տարավ։* (Հարիին): *Պարիր, տղաս, պարիր։*

Ուեսլին նորից է սկսում նվագել, Հարին պարում է:

(Լսափողի մեջ): *Հա, դուրս կանեմ, դուրս կանեմ։ Բայց մի պայմանով, որ էդ Բլիք է, ինչ է, չերևա էս կողմերն ու օյիններ հանի...* (Դադար): *Լավ։* (Կախում է լսափողը):

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Գլխացավի գործ է բացվե՞լ։*

ՆԻՔ— *Էլի էդ զզվանքներն են. բարքերին հետևող ոստիկանությունից։ Գլխակեր Բլիքի սարքած բաներն են։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Ով ուզում է լինի։ Հույսդ ինձ վրա դիր։ Ի՞նչ տեսակ գլխակեր է էդ գլխակեր Բլիքը։*

ՆԻՔ— *Խիստ հատուկ տեսակի։ Ուսերին գլուխ չունի, բայց ուրիշների գլուխն ուտելու մեծ ախորժակ ունի։*

ԱՆՆԱ— (Քիտ Քարսոնին, անհուն, ջերմագին, սրտառուչ հպարտությամբ, Նիքին մատնացույց անելով): *Հայրիկս է, բա՛։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Աղջկա անակնկալ հայտնությունը, անուշ ձայնն ու շքեղաղ կերպարանքը նրան ստիպում են զարմանքից վեր թռչել): *Տե՛ր աստված, տեսի՛լք է, ի՞նչ է։ Զագուկս, հրեշտակս, որտեղի՞ց լույս ընկար։ Իմ աղջիկն էլ էր էսպես, մի անգամ հազար շուն ու գելի մեջ հորը ճանաչեց։*

ՆԻՔ— (Զարմանքով): *Աննա, ի՞նչ ես կորցրել էստեղ։ Դե շուտ տուն գնա, սա քո ի՞նչ տեղն է։ Գնա տատիկին օգնիր՝ հաց սարքի ինձ համար։*

Աննան ժպտում է հորը, հասկանում նրան, գիտի, որ այդ խոսքերը սիրո խոսքեր են: Ուղղվում է դռան կողմը՝ անընդհատ հորը նայելով, կարծես ուզում է ասել, թե մինչև կյանքի վերջը պատրաստ է հոր առաջ հաց դնել-վերցնել: Գնում է:

Նիքը հայացքը ճոճվող դռներին է հառել: Քիտ Քարսոնը երկու-երեք քայլ է անում դեպի դուռը: Աննան հրում, բացում է դռներից մեկը, գլուխը ներս մտցրնում՝ մի անգամ էլ հորը տեսնելու համար: Թափահարում է ձեռքը՝ նրան հրաժեշտ տալով: Շրջվում է ու վազում:

ՆԻՔ— (Հոգուն խորունկ տխրություն է իջել: Զգիտի ինչ անի: Մի շիշ և բաժակ է վերցնում: Իր համար խմիչք է լցնում: Խմում է: Քիչ է. էլի է լցնում և բաժակը մի շնչով դատարկում: Մրմնջալով): *Իմ քաղցր, անուշ բալա։ Նրա կտորն է, է՜հ, լույս դառնա նա։* (Հանում է թաշկինակը, սրբում աչքերն ու քիթը մաքրում):

Քիտ Քարսոնը կիպ մոտենում է Նիքին, աչքերը գամում նրա երեսին:

(Նայում է Քիտ Քարսոնին: Բարձրաձայն, համարյա թե նրան սրտանաք անելով): *Ասում ես՝ ձեռդ դատարկ է, չէ՞։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Հա, հա, միշտ դատարկ է եղել։ Գրպանումս մկներ են վազվզում։*

ՆԻՔ— *Լավ: Գնա խոհանոց ու Սեմին օգնիր: Մի բան կեր: Հենց որ հետ գաս, երկու բաժակ գարեջուր կստանաս:*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Ուշադիր նայելով Նիքին): *Ինչ էլ ասես, կանեմ: Լավ մարդուն ես ձեռաց ճանաչում եմ:* (Գնում է):

Պանդոկ է մտնում Էլսի Մանդելշպիգելը: Գեղեցիկ, թխահեր աղջիկ է: Թախծոտ, իմաստուն, երազկոտ դեմքը լի է կարեկցանքով, թվում է՝ ուր որ է աչքերից արցունքներ կթափվեն: Նա ասես պարուրված է անրջանքի շղարշներով: Քայլվածքը նուրբ է ու նազանի: Կարծես ոտքերը փոխում է ցնորական ու քնքշածուփ մշուշի միջով: Սկզբում Դադլին չի նկատում նրան: Իսկ երբ ի վերջո տեսնում է, այնպես է քարանում, որ հազիվ է ի վիճակի շարժվել կամ խոսել: Աղջկա ներկայությամբ նա ոտքից-գլուխ կերպարանափոխվում է: Ասես ինքնամոռացման մեջ, վեր է կենում տեղից և տխուր ժպիտով գնում աղջկան ընդառաջ:

ԷԼՍԻ— (Նրան նայելով): *Բարև, Դադլի:*

ԴԱԴԼԻ— (Սրտաբեկ): *Էլսի...*

ԷԼՍԻ— *Կներես:* (Բացատրելով): *Այնքան մարդ կա հիվանդ: Անցած գիշեր մի փոքրիկ տղա մահացավ: Ես քեզ սիրում եմ, բայց...* (Ձեռքը թափ է տալիս՝ ջանալով ցույց տալ, թե ինչ անհույս բան է սերը):

Նստում են:

ԴԱԴԼԻ— (Աչքը նրա աչքին գցած, շշմած ու խաղաղված): *Էլսի, չես պատկերացնի ինչքան եմ ուրախ քեզ տեսնելու համար, ուղղակի որ հիմա նստած ես իմ առաջ:* (Սրտակեղեք): *Վախենում էի, որ էլ երբեք չեմ տեսնի քեզ: Խելագարվում էի: Չէի ուզում ապրել: Ազնիվ խոսք:* (Գլուխը վշտագին օրորում է՝ մունջ ու հրաշագեղ սիրով համակված):

Մտնում են երկու պոռնիկ և կանգնում Դադլիից ոչ հեռու, վաճառասեղանի մոտ:

Ամեն ինչ էլ գիտեմ: Էլի ես ասել, բայց ես ոչ մի բան չեմ կարող անել, Էլսի: Ես սիրում եմ քեզ:

ԷԼՍԻ— (Մեղմիկ, թախծալի քնքշությամբ ու անկեղծ գորովանքով): *Գիտեմ, որ սիրում ես: Ես էլ քեզ եմ սիրում, բայց չե՞ս տեսնում, որ այս աշխարհում սերն անհնարին է:*

ԴԱԴԼԻ— *Գուցեև ոչ, Էլսի:*

ԷԼՍԻ— *Սերը երկնքի թռչունների համար է: Նրանք թևեր ունեն ու կարող են թռչել, հենց որ չվելու ժամանակը գա: Սերը ջունգլիներում ապրող վագրերի համար է, որովհետև նրանք չգիտեն իրենց վերջն ինչ է լինելու: Իսկ մենք գիտենք մեր վերջն ինչ պիտի լինի: Ամեն*

գիշեր տեսնում եմ, թե ինչպես են մարդիկ տառապանքների մեջ մեռնում։ Լսում եմ նրանց շնչառությունը, լացը, զառանցանքը։ Նրանք հեկեկում են օդի ու ջրի, սիրո կարոտից, մայրերի կարոտից, կանաչ դաշտերի ու արևի լույսի կարոտից։ Մեր կյանքում չեն լինի ոչ սեր, ոչ վեհություն։ Երանի թե լիներին։

ԴԱԴԼԻ— (Նրա խոսքերից մինչև հոգու խորքը հուզված)։ *Ես քեզ սիրում եմ, Էլսի։*

ԷԼՍԻ— *Դու ուզում ես ապրել։ Ես էլ եմ ուզում ապրել, բայց որտե՞ղ։ Ո՞ւր կարող ենք փախչել այս թշվառ աշխարհից։*

ԴԱԴԼԻ— *Մենք փախչելու տեղ կգտնենք, Էլսի։*

ԷԼՍԻ— (Նրան ժպտալով)։ *Լավ։ Նորից փորձենք։ Գնանք, մի սենյակ վարձենք էժանագին հյուրանոցներից մեկում ու երևակայենք, թե աշխարհը գեղեցիկ է և կյանքը լի է սիրով ու վեհությամբ։ Բայց երբ լույսը բացվի, կարո՞ղ ենք մոռանալ մեր պարտքերն ու պարտականությունները, մոռանալ, թե ինչ գնով պիտի վարձահատույց լինենք ամեն մի ծիծաղելի մանրուքի համար։*

ԴԱԴԼԻ— (Կույր հավատով)։ *Կարող ենք, Էլսի, կարող ենք։*

ԷԼՍԻ— *Լավ, Դադլի։ Խոսք չունեմ։ Գնանք։ Վրա է հասել մի նոր սըրտամաշ պատերազմի ժամը։ Շտապենք, քանի դեռ համազգեստը վրադ չեն քաշել, շարք չեն կանգնեցրել, ձեռքդ հրացան խոթել և ուղարկել սպանելու կամ սպանվելու։* (Փաղաքուշ հայացքով նայում է նրան և ձեռքը բռնում)։

Դադլին այնպիսի երկյուղածությամբ է գրկում աղջկան, կարծես վախենում է նրան ցավ պատճառել։ Գնում են, ասես իրար փարած ասածո զառներ լինեն։ Մի պահ լռություն է տիրում։ Պոռնիկներից մեկն սկսում է քահ-քահ ծիծաղել։

ԱՌԱՋԻՆ ՊՈՌՆԻԿ— *Վա՜յ, ձեր գլուխը մեռնի։ Համա թե պանդոկ ունես, Նիք, ինչ ասես չես տեսնի։*

ՆԻՔ— *Ինչ արած, պանդոկս էն աշխարհում չի։ Մարդամեջ տեղ է, փողոցում, քաղաքի մեջ։ Մարդիկ գալիս-գնում են։ Ամեն մեկն իր հետ մի բան է բերում, իր հոգսն ու ցավը։ Ամեն մեկն ասում է իր ասելիքը։*

ԵՐԿՐՈՐԴ ՊՈՌՆԻԿ— *Էդ լրբի պես սատանա նալոդներն են, է՛, որ մեր հացը կտրում են։*

ՆԻՔ— (Մտաբերելով)։ *Հա՛. Ֆինեգանն էր զանգել։*

ԱՌԱՋԻՆ ՊՈՌՆԻԿ— *Էդ հաստափոր առնե՞տը։*

ԵՐԿՐՈՐԴ ՊՈՌՆԻԿ— *Ի՞նչ չոռ ու ցավ է իր գլխին ուզում. ա՞ղն է պակաս, թե՞ մաղը։*

ՆԻՔ— *Էս երկու օրը ավելի լավ է կինոներից քթներդ դուրս չհանեք։*

ԱՒԱՋԻՆ ՊՈՌՆԻԿ— *Ի՞նչ ցավներս է մնացել կինոներում։ Ամեն տեղ նույն զիբիլն է։* (Հեգնանքով)։ *Մի գլուխ սեր, հա սեր. ո՞վ զահլա ունի։*

ՆԻՔ— *Զիբիլ է, թե զիբիլ չի, բայց հոգեառներիդ սիրաքստիկը բռնել է. որոշել են էս երկու օրը ձեր պոչից կպչել։ Թե խելք ունեք, գլխներիդ ճարը տեսեք, էստեղից էլ հեռու մնացեք։*

ԱՒԱՋԻՆ ՊՈՌՆԻԿ— *Մեկը ես, հենց որ համազգեստը հագին, կրծքանշանը կպցրած, մահակով ու ատրճանակով տղամարդ եմ տեսնում, ծնկներս թուլանում են, քիչ է մնում վզովն ընկնեմ։*

Մտնում է Քրափը։ Պոռնիկները բաժակները ցած են դնում։

ՆԻՔ— *Դե լավ, լավ, գնացեք։*

Պոռնիկները գնում են դռան կողմը և դեմ առնում Քրափին։

ԵՐԿՐՈՐԴ ՊՈՌՆԻԿ— *Գնում ենք, գնում։*

ԱՒԱՋԻՆ ՊՈՌՆԻԿ— *Իմիջիայլոց, մենք նախկին մանեքենուհիներ ենք։*

Երկուսն էլ գնում են։

ՔՐԱՓ— (Վաճառասեղանի մոտ)։ *Գործադուլը քիչ էր, հիմա էլ խեղդում են, թե փողոցներն ընկած՝ աղջկերքի պոչից վազ տվեք, որ անառակությամբ չզբաղվեն։ Բան չեմ հասկանում։ Երնեկ հետ դառնայի տուն ու երեխեքի ձեռից բռնած՝ փողոցն անցկացնեի դպրոցից գալիս։ Էդ է իմ գործը։ Չեմ սիրում գլուխս ցավի տակ դնել։ Մի գարեջուր տուր։*

Նիքը մի բաժակ գարեջուր է տալիս նրան։

(Մի երկու կում անելով)։ *Այ, հենց հիմա, Մաքքարթին՝ ամենամոտ ընկերս, մնացած վաթսուն գործադուլավորների հետ արյուն-քրտինք է թափում, որ դավաճանների առաջն առնի, ինչ է՝ իրիկունը «Մերի Լուքենբախ» նավը չբեռնաթափեն։ Խելքս մի բան չի մըտնում ու չի էլ մտնի. ախր ո՞ր ձին է քացի տվել Մաքքարթիի գըլխին, ինչի՞ համար է պրոֆեսորի տեղը բեռնակիր դառել։*

ՆԻՔ— *Կովբոյներ ու հնդկացիներ, ոստիկաններ ու գողեր, գործադուլավորներ ու դավաճաններ...*

ՔՐԱՓ— *Բոլորն էլ մարդիկ են, բոլորն էլ ուզում են օր ու արև տեսնել, հացի տիրանալ, ընտանիքը պահել, երեխեքին մեծացնել, հանգիստ քուն մտնել։ Ուզում են կինո գնալ, կիրակի օրերը մեքենայով ման*

գալ։ Բոլորն էլ լավ մարդիկ են. ուրեմն էլ որտեղի՞ց են էս փորձանքները գլխներիս գալիս։ Բոլորի ուզածն էլ մենակ մի բան է. պարտքի տակից պրծնել, հանգիստ շունչ քաշել։ Էլ ինչի՞ համար են մեկը մյուսի գլխին փորձանքներ բերում։ Ես ամեն ինչ գցել-բռնել եմ ու գիտե՞ս ինչ մտքի եմ եկել, Նիք։

ՆԻՔ— *Չգիտեմ։ Ի՞նչ։*

ՔՐԱՓ— *Իմ կարճ խելքով էնքանն եմ տեսնում, որ մենք բոլորս խելագարվել ենք։ Քսանյոթերորդ կառանացցի կողմերն էի գնում, որ էս միտքը գլխումս մեխվեց։ Էնպես վեր թռա, ոնց որ սառը ջուր գլխիս լցնեին։ Էդ տեսակ բան հետս երբեք չէր կատարվել։ Ախր մի տես ինչ հրաշք աշխարհում ենք ապրում, մի տես չորս կողմը ինչքան հրաշալիքներ կան։ Իսկ հիմա նայիր մեզ։ Մենակ նայիր, ուրիշ բան չէ։ Մենք խելագարվել ենք, խելքներս հետ տվել։ Ամեն ինչ ունենք, բայց հոգիներս կորցրած՝ հա դժգոհում ենք ու դժգոհում։*

ՆԻՔ— *Ճիշտ է, խելագարվել ենք։ Բայց թեկուզ էդպես, պիտի բոլորս միասին ապրենք։* (Ցույց է տալիս պանդոկում հավաքվածներին)։

ՔՐԱՓ— *Հույս չկա։ Երևի ոստիկանը իրավունք չունի էս տեսակ մտքերով տարվել, բայց դու ու քո աստվածը, ի՞նչ անեմ, որ հենց էս մտքերն են գլխումս ծնվում։ Ո՞նց է էսքան կեղտը մեջներս մտել։ Ախր աշխարհն էնքան լավն է։ Բա հրաշք չի՞, որ լույսը բացվելու հետ զարթնում ես քնից, դուրս ես գալիս, քայլում, ծառ ու ծաղկունքի անուշ հոտը շնչում, դպրոց գնացող երեխեքին ու երկնքի ամպերին նայում։ Բա հրաշք չի՞, որ քայլում ես քեզ համար, քո քեֆին շվշվացնում կամ էլ քթիդ տակ երգում։ Ախր աշխարհը դրախտ է, դրախտ։ Էլ ինչի՞ համար են մարդիկ էսքան չարիքներ բերում։*

ՆԻՔ— *Չգիտեմ։ Ինչի՞ համար։*

ՔՐԱՓ— *Մենք խելագարվել ենք, այ դրա համար։ Կորցրել ենք մեր բարությունը։ Չորս կողմը ամեն ինչ նեխել է։ Խեղճ աղջկերքը ծախում են իրենց։ Այնինչ մի երկու տարի առաջ դեռ դպրոցականներ էին։ Բոլորը հարայ տված փողի հետևից են վազում, թե ոնց անեն, որ շատ փող ճանկները գցեն։ Ջիարշավի մրցումներին խելքից դուրս խաղչեքեր են դնում, չգիտես ինչեր անում։ Ոչ ոք չի ուզում հանգիստ սրտով ման գալ ջրի ափին։ Ոչ ոք չի ուզում իր համար, ականջը դինջ ապրել, բոլորն էլ պատրաստ են իրար միս կրծել։ Նիք, ես էլ ուժ չունեմ ոստիկան լինելու, ի վիճակի չեմ։ Թող մի ուրիշը պահպանի օրենքն ու կարգուկանոնը։ Ես հիմար բառերով վարչությունում կլուխներս տարան։ Երեսունյոթ տարեկան եմ, բայց դեռ*

չեմ կարողանում էդ պարապ խոսքերին վարժվել։ Մենակ կրակն էն է, որ տանտիկինս վայնասուն կգցի։

ՆԻՔ— *Էդպես է, էլի, տանտիկի՞ն կա, բա՞ն կա։*

ՔՐԱՓ— *Սքանչելի կին է, Նիք։ Երկու չտեսնված տղա ունենք։ Մեծը տասներկու տարեկան է, պուճուրը՝ յոթ։*

Արաբը վեր է կենում և մոտ գալիս՝ ականջ դնելու։

ՆԻՔ— *Չեմ իմացել։*

ՔՐԱՓ— *Բա, այ էսպիսի բաներ։ Բայց ի՞նչ անեմ, ի՞նչ, ես էլ չգիտեմ։ Արդեն յոթ տարի է, ուզում եմ ծառայությունը թողնել։ Դեռ ուսումնարան ընդունվելուս առաջին օրն էի ուզում թքել հեռանալ։ Չհեռացա։ Ասենք թե հեռանամ, ո՞ր հողը գլխիս տամ։ Ո՞նց փող աշխատեմ։*

ՆԻՔ— *Այ, հենց դրա համար էլ խելագարվել ենք, պատճառներից մեկն էլ էդ է։ Չգիտենք ոնց փող աշխատենք, ձեռքներիս տակ եղած միջոցն էլ հակառակի պես միշտ սրտներովս չի։*

ՔՐԱՓ— *Մեկ-մեկ զգում եմ, որ ինձ ստոր անասունի պես եմ պահում. ատում եմ մարդկանց մենակ նրա համար, որ խեղճուկրակ են, աղքատ ու սոված-ծարավ, հիվանդ կամ հարբած։ Բայց հենց որ վարչությունում մի փքված դդմագլուխ եմ տեսնում, հանկարծ դառնում եմ հետը հաճ ու հավան, հացին յուղ եմ քսում, որ սիրտը շահեմ։ էն էլ ո՞ւմ։ Ով որ աչքիս փուշն է։ Ու զզվում եմ ինձնից։* (Վեռականորեն)։ *Չէ, կթքեմ կհեռանամ։ Բոլ է, հերիք է։ Կհեռանամ ու վերջ։ Իրենց տված համազգեստը իրենց կսեցնեմ, վրայից կախած զիզի-բիզիներն էլ հետը։ Չեմ ուզում, որ էս ամեն ինչի մեջ մատս խառը լինի։ Աշխարհն էնքան լավն է։ Ինչո՞ւ պիտի անընդհատ մեկս մյուսի գլխին փորձանքներ բերենք։*

ԱՐԱԲ— (Կամացուկ, մեղմորեն, մեծ բանիմացությամբ)։ *Քարը քարին չի մնում։ Ինչ որ կա չկա, կորչում է, գնում։*

ՔՐԱՓ— *Ի՞նչ։*

ԱՐԱԲ— *Քարը քարին չի մնում։ Քարը քարին չի մնում։*

ՔՐԱՓ— *Այ, սրտիցս ջուր խմեց. իրոք որ քարը քարին չի մնում։*

ԱՐԱԲ— *Ինչ որ կա չկա, կորչում է, գնում։*

ՔՐԱՓ— (Նիֆին)։ *Էս ի՞նչ է, ուրիշ ասելիք չունի՞։*

ՆԻՔ— *Էս շաբաթ՝ չէ, մենակ էդ է ասում։*

ՔՐԱՓ— *Իմիջիայլոց, ինչացո՞ւ է։*

ՆԻՔ— *Արաբ է կամ դրա պես մի բան։*

ՔՐԱՓ— *Չէ, ես նկատի ունեմ, թե ինչով է զբաղվում։*

ՆԻՔ— (Արաբին): *Ինչո՞վ ես զբաղվում, եղբայր։*

ԱՐԱԲ— *Աշխատում եմ։ Աչքս բացել՝ աշխատում եմ։ Աշխատում եմ, հա աշխատում։ Փոքր տղա՝ աշխատում էի։ Ալևոր եմ՝ աշխատում եմ։ Հայրենիքում աշխատում էի։ Պանդուխտ դառա՝ աշխատում եմ։ Նյու Յորքում Փիթսբուրգում։ Դեթրոյթում։ Չիկագոյում։ Սան Ֆրանցիսկոյում։ Աշխատել ու աշխատում եմ։ Չեմ մուրում։ Աշխատում եմ։ Ինչի՞ համար։ Ոչնչի։ Երեք որդիս հրեն՝ հայրենիքում։ Քսան տարի ոչ մի լուր։ Կորե՞լ են։ Մեռե՞լ։ Ո՞վ իմանա։ Կա։ Չկա։ Քարը քարին չի մնում։ Ինչ որ կա չկա, կորչում է, գնում։*

ՔՐԱՓ— *Բա անցած շաբա՞թ ինչ էր ասում։*

ՆԻՔ— *Բան չէր ասում։ Շրթհարմոն էր նվագում։*

ԱՐԱԲ— *Նվագում եմ։ Հայրենիքիս երգը։* (Հետևի գրպանից մի շրթհարմոն է հանում);

ՔՐԱՓ— *Լավ մարդ է երևում։*

ՆԻՔ— *Ամենալավ մարդն է աշխարհիս երեսին։*

ՔՐԱՓ— (Դառնությամբ): *Բայց խենթ է։ Մեզ՝ բոլորիս նման։ Իսկական խելագար։*

Ուեսլին ու Հարին վաղուց են վերջացրել նվագն ու պարը: Միասին սեղան նստելով՝ մի քիչ զուցում են, ապա տարվում թղթախաղով: Հենց որ Արաբն սկսում է շրթհարմոն նվագել, նրանք թողնում են խաղը և ականջ դնում:

ՈՒԵՍԼԻ— *Լսո՞ւմ ես։*

ՀԱՐԻ— *Ա՜յ ինչ եմ ասել։*

ՈՒԵՍԼԻ— *Լաց է, հեկեկոց։*

ՀԱՐԻ— *Ես էլ ուզում եմ մարդկանց ծիծաղեցնել։*

ՈՒԵՍԼԻ— *Սրտի խորքից եկող լաց է, սրտի խորքից։ Հին օրերի լաց է։ Հազարամյա լաց։ Հեռո՜ւ-հեռավոր տեղից է գալիս։*

ՀԱՐԻ— *Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ ես դա դուրս բերել դաշնամուրով։*

ՈՒԵՍԼԻ— *Ես կուզենայի սրա տակ երգել, բայց հազար ափսոս, երգել չգիտեմ։*

ՀԱՐԻ— *Փորձիր, տես կկարենա՞ս դուրս բերել, ես էլ կպարեմ։*

Ուեսլին մոտենում է դաշնամուրին և ուշի-ուշով ունկնդրելով՝ սկսում է նվագակցել շրթհարմոնին: Հարին ելնում է փոքրիկ բեմահարթակ և մի քանի փորձերից հետո սկսում է պարել այդ մեղեդու տակ: Այս մեղմալուր նվագն ու պարը շարունակվում են մինչև գործողության վերջը: Քրափն ու Նիքը լուռ են, ի սրտե հուզված։

ՔՐԱՓ— (Կամացուկ): *Է՜հ, ինչ որ է, Նիք։*

ՆԻՔ— *Հը՞մմմ։*

ՔՐԱՓ— *Ինչ որ ասացի, մտքիցդ հանիր։*

ՆԻՔ— *Եղավ։*

ՔՐԱՓ— *Մեկ-մեկ գիժ դամարս էսպես բռնում է։*

ՆԻՔ— *Ա՛հ, խոսեցինք, անցավ-գնաց։*

ՔՐԱՓ— (Նորից ոստիկան դարձած, բարձրաձայն): *Աղջիկներին մոտ չթողնես։*

ՆԻՔ— (Բարձրաձայն ու բարեկամաբար): *Անհոգ մնա։*

Նվագն ու պարը հասել են բարձրակետին։

Վարագույր

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Իրիկնապահ: Ամբողջ գործողության ընթացքում մերթընդմերթ լսվում են ծովամեջի մեջ նավերի արձակած ազդանշանները:

Դռան մեջ երևում են երեկոյան հագուստով ու գլանագլխարկով մի պարոն և մի տիկին, որ նույնպես երեկոյան զգեստ է հագել:

Ուիլին դեռևս զբաղված է խաղամեքենայով: Նիքը կանգնած է վաճառասեղանի հետևում: Ջոն նստած է իր տեղում, զննում է եվրոպական երկրների քարտեզագիրքը: Սեղանի վրա՝ գավաթի կողքին, դրված են աստճանակի ու փամփուշտների տուփերը: Ջոն հանգիստ է, դեմքի անխռով արտահայտությամբ, լայնեզր գլխարկը թեքել է ծնծրակին: Թոմը կռթնել է վաճառասեղանին, երազում է սիրո և Քիթիի մասին: Աբաբը դուրս է եկել: Ուեսլին ու Հարին էլ չկան: Քիտ Քարսոնը աչքը գցել է Ուիլլի խաղին:

ՏԻԿԻՆ— *Օ՛, խնդրում եմ, ներս մտնենք։*

Տղամարդը ճարահատյալ ու քիթը կախ հետևում է նրան: Բարձրաշխարհիկ պարոնն ու տիկինը սեղան են նստում: Նիքը նաշացուցակը տալիս է նրանց: Դուրսը՝ փողոցում, երգում են Փրկության բանակի նվիրյալները: Երգեցողությանը նվագակցում են մեծ թմբուկը, դափերն ու կոռնետը: Կատարվում է «Արյունն աստծո գառան» օրհներգը: Սրաժշտությունն ու խոսքերը պանդոկում հազիվ լսելի են և զավեշտական տպավորություն են թողնում: Սրան հաջորդում է հին մեղսագործի ապաշխարանքը: Դա Հարբեցողն է: Նրա խոսքերն այնքան էլ ըմբռնելի չեն, բայց դրանց իմաստը անսխալ հասկացվում է. նա փրկված է, այլևս չի ուզում մեղք գործել և այլն:

ՀԱՐԲԵՑՈՂԻ ՁԱՅՆԸ— (Ապաշխարելով, անտարակույս հարբած): *Եղբայրնե՞ր և քույրե՞ր։ Ես մեղսասեր էի։ Ծխախոտ էի ծամում ու կանանց հետևից ընկնում։ Ո՞հ, ինչ մեղքեր էի գործում, եղբայրներ և քույրեր։ Իսկ հիմա փրկված եմ, փրկված Փրկության բանակի շնորհիվ, աստված մեղքերիս թողություն անի։*

ՋՈՆ— *Հիմա նայենք։ Ահա մի քաղաք. Պրիբոր։ Չեխոսլովակիայում։ Փոքր, անուշիկ, մենավոր Չեխոսլովակիա։ Տեսնես ի՞նչ քաղաք է հանկ Պրիբորը։* (Ասես ոգեկոչելով): *Պրի՞բոր։ Պրի՞բոր։*

Թոմը վեր է թռչում։

ՏԻԿԻՆ— *Ի՞նչ պատահեց նրան։*

ՊԱՐՈՆ— (Ռոմերն այնպես է սեղմում իրար, կարծես զուգարանի կարիք ունի)։ *Հարբած է։*

ԹՈՄ— *Ո՞ւմ ես կանչում, Ջո։*

ՋՈ— *Պրիբորին։*

ԹՈՄ— *Պրիբո՞րն ով է։*

ՋՈ— *Չեխ է։ Եվ սլովակ։ Չեխոսլովակ։*

ՏԻԿԻՆ— *Ինչ հետաքրքիր է։*

ՊԱՐՈՆ— (Ռոմերն ուղղելով)։ *Նա հարբած է։*

ՋՈ— *Թոմ, Պրիբորը քաղաք է Չեխոսլովակիայում։*

ԹՈՄ— *Հա՜։* (Դադար)։ *Դու նրա սրտով էիր գնում, Ջո։*

ՋՈ— *Քիթի Դյուվալի՞։ Նա աշխարհի ամենահիանալի մարդկանցից մեկն է։*

ԹՈՄ— *Չես պատկերացնի ինչ մեծ լավություն արիր, որ մեզ նստեցրիր մեքենա ու ջրափով տարար Կիսալուսնի ծոց։*

ՋՈ— *Էդ երեք ժամը իմ կյանքի ամենաքաղցր, ամենատխուր ու ամենասիրուն ժամերն էին։*

ԹՈՄ— *Ինչո՞ւ, Ջո։*

ՋՈ— *Ինչո՞ւ։ Ես ուսումնասիրում եմ կյանքը։* (Ձայնը բարձրացնելով)։ *Թո՛մ։* (Հանդարտ)։ *Ես քննախույզ եմ, հետազոտող։ Ջորս կողմս ամեն ինչ ուսումնասիրում եմ։ Ամեն, ամեն ինչ։ Ու հենց որ գեղեցկության թեկուզ մի բեկոր եմ գտնում մեկնումեկի հոգում կամ ինչ-որ բանի մեջ, որտեղ թվում էր միայն ապականությունն ու մահը պիտի բուն դրած լինեին, նոր եմ հասկանում, որ մեր կյանքը լի է անսպառ բարությամբ։ Լավ բան է դրան հասու լինելը։ Դա մի ճշմարտություն է, որ ես անընդհատ պիտի աշխատեմ հաստատել։*

ՏԻԿԻՆ— *Դու համոզվա՞ծ ես, որ նա հարբած է։*

ՊԱՐՈՆ— (Ռոմերը նորից իրար սեղմելով)։ *Կամ հարբած է, կամ էլ պարզապես ցնդածի մեկն է։*

ԹՈՄ— *Ջո։*

ՋՈ— *Ի՞նչ է։*

ԹՈՄ— *Չե՞ս նեղանա, որ մի բան ասեմ։*

ՋՈ— (Անհամբեր)։ *Ի՞նչ կա, Թոմ։*

ԹՈՄ— *Որտեղի՞ց քեզ էդքան փողը, Ջո։ Մեքենայի հաշիվը փակեցիր։ Ռեստորանում կերած-խմածներիս տակից դուրս եկար։ «Նյու*

Յորք» հյուրանոցից Քրիստին տեղափոխեցիր Փաուել փողոցի Սուրբ Ֆրանցիսկոսի հյուրանոցը։ Ես տեսա՝ նրա սենյակի վարձը մուծեցիր։ Փող տվիր, որ նոր հագուստ-կապուստ առնի։ Որտեղի՞ց է քեզ էդքան փողը, Ջո։ Երեք տարվա մեջ ես ոչ մի անգամ չեմ հարցրել քեզ։

ՋՈ— (Տրտմալի հայացքով նայում է Թոմին՝ թեթևակի սրտնեղած ոչ այնքան նրա, որքան ինքն իր վրա, Թոմի նկատմամբ իր գերազանցության, աշխարհի բանի վրա։ Հստակորեն, դանդաղ ու ծանրակշիռ)։ *Խելքդ գլուխդ հավաքիր, Թոմ։ Ուշադիր լսիր, թե ինչ եմ ասում։ Եթե ինչ-որ մեկը փող ունի,— միևնույն է, դիզում է, թե մսխում,— վստահ եղիր՝ ուրիշից է գողացել։ Ոչ թե հարուստներից, որ անհատնում ունեցվածքի տեր են, այլ աղքատներից, որ զուրկ են։ Գողացել է աղքատներից, կողոպտել նրանց կյանքն ու երազները։ Ես բացառություն չեմ։ Իմ փողը, որ հովին ու զովին եմ տալիս, ես վաստակել եմ։ Բայց դա չի նշանակում, թե չեմ գողացել ուրիշների պես։ Փողի տեր դառնալով՝ ես շատ-շատերին զրկել եմ օրվա հացից։ Նույնիսկ հիմա՝ պարապ-սարապ նստած, ես փող եմ սարքում։ Փողն ինքն է փող բերում։ Ուրեմն շատ-շատերին դեռ տանջանքների եմ մատնում։ Չգիտեմ նրանք ովքեր են, չգիտեմ որտեղ են։ Եթե իմանայի, ինձ շատ ավելի վատ կզգայի, քան հիմա։ Ես քրիստոնյայի խիղճ ունեմ, չնայած աշխարհում խիղճ ասած բանը վաղուց վերացել է։ Աշխարհը տքնում է հասարակական խղճի պես մի բան ձեռք բերել, բայց սատանան գիտի, թե դրան հասնելու համար դեռ ինչքան-ինչքան ջուր պիտի հոսի։ Ես փող ունեմ։ Եվ միշտ կունենամ, քանի դեռ աշխարհը կմնա հիմիկվա նման։ Ես չեմ աշխատում։ Ոչինչ չեմ անում։* (Մի կում խմելով)։ *Խմում եմ։ Երեխա ժամանակս եմ աշխատել։ Հողի հետ մաղվել եմ, քարի հետ քաղվել։ Հասկանո՞ւմ ես, Թոմ, շան չարչարանք եմ քաշել։ Ասում են՝ մարդիկ պիտի հաճույք ստանան կյանքից։ Ես հոգնել եմ։* (Վերցնում է ատրճանակը և խոսելու հետ մեկտեղ տնտղում)։ *Որոշել եմ հաշիվներս մաքրել կյանքի հետ։ Ի՞նչ հաճույք պիտի ստանաս կյանքից, եթե չես աշխատում։ Եթե բան չես անում։ Իսկ ես չեմ անում։ Էլ չեմ ուզում անել։ Չեմ կարող էնպես մի բան անել, որ ամոթ չզգամ։ Որովհետև մի պարզ, լավ բան անել չեմ կարողանում։ Համբերություն չունեմ։ Խելքիս ձեռը կրակն եմ ընկել։ Փողը աշխարհի ամենամեղսալի բանն է։ Նրանից գարշահոտ է փչում։ Եվ սրանից հետո էլ գլուխս չտանես նման հարցերով։*

ԹՈՄ *Ես չի՛մ ուզում տրամադրությունդ գցել, Ջո։*

ՋՈ— (Դանդաղ)։ Առ։ Էս ատրճանակը տար փողոց, տուր մի ծրժանավոր ավազակի։

ՏԻԿԻՆ— Ինչ է ասո՞ւմ։

ՊԱՐՈՆ— (Ոտքերն ուղղելով)։ Դու ուզում էիր որևէ պանդոկ այցելել։ Խնդրեմ, սա հենց պանդոկ է։ (Ողջ աշխարհին դիմելով)։ Քսանութ տարվա ամուսնացած կին է, բայց դեռ արկածնե՞ր է փնտրում։

ԹՈՄ— Ես ի՞նչ իմանամ ով է ավազակ։

ՋՈ— Վերցրու։ Տուր մեկնումեկին։

ԹՈՄ— (Շվարած)։ Տամ մեկնումեկի՞ն։

ՋՈ— Իհարկե։

ԹՈՄ— Իսկ չի՞ լինի, որ հետ տանեմ խանութ ու մեր փողի գոնե մի մասը ստանամ։

ՋՈ— Շահամոլի պես մի խոսիր։ Նայիր չորս կողմդ, տես աչքիդ ով է ատրճանակի կարիք զգում, տուր իրեն։ Հո վատ ատրճանա՞կ չի։

ԹՈՄ— Վաճառողն ասաց՝ լավն է, բայց ես ի՞նչ իմանամ ում է ատրճանակ պետք։

ՋՈ— Ի՞նչ է, Թոմ, ատրճանակի կարիք ունեցող կարգին մարդ չե՞ս տեսել։

ԹՈՄ— Չեմ հիշում։ Ջո, բա որ շշկլվեմ, մի թարս մարդու տա՞մ։ Նա էլ բռնի ու մի հիմարություն անի։

ՋՈ— Դե լավ։ Ե՛ս կգտնեմ մեկնումեկին։

Թոմը վեր է կենում։

Առ փող տամ։ Գնա ինձ համար էս շաբաթ լույս տեսած հանդեսները բեր՝ «Լայֆ», «Լիբերթի» և «Թայմ», հետն էլ մի վեց-յոթ տուփ ծամոն։

ԹՈՄ— (Շտապ-շտապ, որպեսզի բոլորը հիշի)։ «Լայֆ», «Լիբերթի», «Թայմ» ու վեց-յոթ տուփ ծամոն։

ՋՈ— Ճիշտ է։

ԹՈՄ— Էդքան ծամո՞ն։ Ի՞նչ տեսակ լինի։

ՋՈ— Ինչ որ պատահի։ Խառը։ Ամեն տեսակ։

ԹՈՄ— Մատուտակի է՞լ։

ՋՈ— Անպայման։

ԹՈՄ— Իսկ մրգահյութի՞։

ՋՈ— Մրգահյութի էլ։

ԹՈՄ— Մրգախյուսի է՞լ։

ՋՈ— Էդ տեսակ ծամոն էլ կա՞։

ԹՈՄ— Կարծեմ կա։

ՋՈ— *Լավ։ Մրգախյուսի էլ առ։ Ամեն տեսակ առ։ Ինչ որ ծախում են, բոլորից էլ բեր։*

ԹՈՄ— *Ուրեմն՝ «Լայֆ», «Լիբերթի», «Թայմ» ու ամեն տեսակ ծամոն։* (Գնում է դռան կողմը):

ՋՈ— (Նրա հետևից, բարձրաձայն): *Նաբաթ էլ առ։ Տարբեր գույների։*

ԹՈՄ— *Շատ լավ, Ջո։*

ՋՈ— *Եվ ամենաերկար սիգարներից։ Վեց հատ։*

ԹՈՄ— *Սիգարնե՞ր։ Պարզ է։*

ՋՈ— *Թերթ ծախող տղա տեսնես, մի դոլար կտաս։*

ԹՈՄ— *Լավ, Ջո։*

ՋՈ— *Թե ծեր մարդ պատահի, մի դոլար էլ նրան կտաս։*

ԹՈՄ— *Լավ, Ջո։*

ՋՈ— *Փրկության բանակի էդ տաղտացներին էլ երկու դոլար տուր ու խնդրիր, որ քիչ առաջվա երգը մի անգամ էլ երգեն. ո՞նց էր սկըսվում, է՛ Հա՛։* (Բարձրաձայն երգում է): *«Երբ գեհենի հուրն է վառվում, հուսո մի ցոլք հղիր ի ծով...»։*

ԹՈՄ— (Հապճեպ): *«Երբ գեհենի հուրն է վառվում, հուսո մի ցոլք հղիր ի ծով...»։*

ՋՈ— *Ճիշտ է։* (Շարունակում է բարձրաձայն ու բարեպաշտորեն երգել): *«...Ա՜խ, ուժաքամ, հեգ նավաստուն փրկիր մահից ժանտախռով...»։* (Ընդհատում է երգը):

ԹՈՄ— *Շատ լավ, Ջո, ամեն ինչ հասկացա։ Ուրեմն՝ «Լայֆ», «Լիբերթի», «Թայմ», ամեն տեսակ ծամոն՝ ինչ որ պատահի, նաբաթ, վեց հատ ամենաերկար սիգարներից, մի դոլար՝ թերթ ծախող տղային, մի դոլար՝ ծերուկին, երկու դոլար էլ՝ Փրկության բանակին։* (Գնալով): *«Երբ գեհենի հուրն է վառվում, հուսո մի ցոլք հղիր ի ծով...»։*

ՋՈ— *Ճիշտ է։*

ՏԻԿԻՆ— *Կատարյալ խելագար է։*

ՊԱՐՈՆ— (Ոտքերը հոգնատանջ իրար սեղմելով): *Դու ինքդ խնդրեցիր, որ առաջնակարգ ռեստորանի փոխարեն քեզ տանեմ որևէ էժանագին պանդոկ։ Սա էլ հենց պանդոկ է։ Ես մեղք չունեմ, որ այդ մարդը ցնորված է։ Ուզո՞ւմ ես հետ դառնանք, գնանք այնպիսի տեղ, ուր խելագարներ չկան։*

ՏԻԿԻՆ— *Ոչ, դեռ ոչ։*

ՊԱՐՈՆ— *Է՛հ, ինչպես կուզես։ Միայն թե ամեն բոպե մի կրկնիր, թե նա խելագար է։*

ՏԻԿԻՆ— *Չեմ հասկանում ինչ կա դրա մեջ, որ այդպես բորբոքվում ես։*

Տղամարդը նրան պատասխանի չի արժանացնում, ուղղում է ռոմերը: Հենց որ Ջոն սկսում է երգել, Քիտ Քարսոնը երեսը շրջում է խաղամեքենայից և ակամայ դնում: Մինչ տղամարդն ու կինը խոսքակռիվ են տալիս, նա մոտենում է Ջոյի սեղանին:

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Եկեղեցակա՞ն ես։*

ՋՈ— *Կիրակնօրյա եկեղեցական դպրոց եմ գնացել։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Միրո՞ւմ ես երգել։*

ՋՈ— *Մեկ-մեկ։ Կխմե՞ք։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Շնորհակալ եմ։*

ՋՈ— *Մի բաժակ վերցրեք, նստեք։*

Քիտ Քարսոնը մի բաժակ է վերցնում Նիֆից, վերադառնում սեղանի մոտ, նստում: Ջոն նրա համար խմիչք է լցնում, երկուսով բաժակ բաժակի են զարկում, և հենց այդ պահին Փրկության բանակի անդամները սկսում են երգել՝ կատարելով Ջոյի պատվերը: Ջոն ու Քիտ Քարսոնը խմում են շամպայնը և հարմար պահ որսալով՝ սկսում են երկուսով ձայնակցել: Նստած՝ շամպայն են վայելում ու ձայները գլուխները գցած, մեղեդին աղավաղելով՝ երգում: Բարձրաշխարհիկ տիկինը միանում է նրանց, բայց ամուսինը սաստում է կնոջը:

ՋՈ— *Էս երգը միշտ էլ սրտիս սիրելի է եղել։ Ու միշտ երգել եմ ամբողջ կոկորդով։ Կյանքումս ոչ մի նավաստու չեմ փրկել։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Բարձրաշխարհիկ տիկնոջ առաջ ձևեր թափելով, մի բան, որ կնոջը դուր է գալիս): *Ինձ պատահել է, որ նավաստու փրկեմ։ Այսինքն՝ ճիշտը որ ասեմ, իսկի նավաստի էլ չէր։ Մի սեամորթ էր, անունը՝ Ուելինգթոն։ Բոյ-բուսաթին նայելիս մարդու խելք էր գնում։ Հոգի տղա էր, բայց ընկեր-մընկեր չուներ, որ հետն ասեր-խոսեր։ Ինչ որ է՝ քանի դեռ ես վրա չէի հասել։ Ինչ որ մեկն ինձ ասեր, թե գնա Նյու Օռլեան։ 1899 թվի ամառն էր. չէ՛, իննսունութ թվի։ Ջահել-ջիվան տղա էի, բեղ-մորուս չունեի, բայց շատերն ինձ ապահովված մարդու տեղ էին դնում, հարգում-պատվում էին։*

ՋՈ— *Ձենքից լա՞վ եք գլուխ հանում։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Տիկնոջ մոտ իրեն երևակայելով): *Հինգ մատի պես։ Հո իզուր չեմ օջիբվեյ ցեղի հնդկացիների դեմ կռվել։ Տակալուկա լճի մոտերքը, Միչիգանում։* (Վերհիշելով): *Հազար ութ հարյուր ութսունմեկ կամ երկու թվին էր։ Քշեցի դրանց, դեմ տվի լճին։ Բրկներին չոքեցի, որ լող տալով գնան հասնեն Կանադա։ Բոլորը՝ մի մարդու պես։ Մանավանդ մի հնդկացի, անունը՝ Հարի Դեյզի։*

ՋՈ— (Ատրճանակի տուփը քացելով): *Ի՞նչ կասեք էս ատրճանակի մասին։ Լա՞վն է, թե՞ չէ։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Ատրճանակը տեսնելուն պես՝ վեր է թռչում): *Հա՜, բան չես ասի, ընտիր ապրանք է։ Վեցլիցքանի է։ Մի անգամ վեցլիցքանոցով մի հոգավորի վրա կրակել եմ։ Գնդակն աջ ձեռի ափը ծակեց դուրս պրծավ։ Էդ տնավերը ձեռքը տնկել էր, ինչ է թե՝ ընկերոջը մնաս բարով է անում։ Ես էլ իմացա թռչուն է։ Կարծեմ անունը Քարոուեյ էր։ Լարիմոր Քարոուեյ։*

ՋՈ— *Բանեցնելու ձևը գիտե՞ք։* (Հնաձև, ճսկայական ատրճանակը մեկնում է Քիտ Քարսոնին):

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Միծաղելով անհեթեթ հարցի վրա): *Բանեցնելու ձև՞ը։ Հապա մի դեսը տուր էդ մատնոցը, որդի։ Հիմի ամեն ինչն էլ տեղը տեղին քեզ ցույց կտամ։*

Ջոն ատրճանակը տալիս է նրան:

(Մանրումեծ): *Ուրեմն տես ինչ եմ ասում։ Կա-չկա սա նոր ձևի վեցլիցքանոց է։ Իմ ժամանակ էս տեսակ չկար։ Հայ գիդի հա՜, քանի տարի է, ոչ մի հնդկացու հերը չեմ անիծել։ Ինչքան որ գիտեմ, էս մասը վայ թե պիտի դուրս քաշվի։* (Մեծ շարշարանքով դուրս է քաշում փողը): *Այ էսպես։ Տեսա՞ր։*

ՋՈ— *Ամեն ինչ տե՞ղն է։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Կարգին էլ ատրճանակ է։ Լավ զենք ունես, որդի։ Այ, հիմի ամեն ինչն էլ ոնց որ պետքն է քեզ բացատրեմ։ Տեսնում ե՞ս էս ծակերը։ Այ, փամփուշտները դրվում են էստեղ։*

ՋՈ— (Մի քանի փամփուշտ հանելով տուփից): *Ըհը։ Ցույց տվեք՝ ոնց են անում։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Փոքր-ինչ սրտնեղած): *Է՜հ, որդի, մեկ-մեկ դնում ես էս ծակերի մեջ, էլի։ Այ էսպես։ Էս՝ մեկ, էս՝ երկու, էս՝ երեք, էս՝ չորս, էս՝ հինգ, էս էլ՝ վեց։ Հետո արդեն փողը մտցնում ես տեղը։ Հրահանը քաշում ես։ Մնում է նշան բռնես ու կրակես։* (Ատրճանակն ուղղում է Բարձրաշխարհիկ տիկնոջ և պարոնի վրա):

Սրանք երկուսն էլ ճչում են ու տեղներից վեր թռչում: Քիտ Քարսոնը անից քարանում է, թեև ատրճանակի հրանը չի քաշել:

ՋՈ— *Էդքան բա՞ն։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Սպանելու համար կազմ ու պատրաստ է։*

ՋՈ— *Տվեք ես բռնեմ։*

Քիտ Քարսոնը ատրճանակը տալիս է Ջոյին: Տիկինն ու պարոնը աչ ու սարսափով հետևում են նրանց:

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Զգույշ մնա, որդի։ Հրահանը չքաշես։ Լցրած զենքի հետ խաղ չեն անի. քանի-քանիսն են իրենց հիմար խելքից աչքը կորցրել։ Մի մարդ գիտեի, անունը՝ Դենի Դոնովան, քթից ձեռ քաշեց։ Ինքն իր տունը քանդեց։ Պինդ պահիր։ Զգանը կամաց սեղմիր, հուպ չտաս միանգամից։ Թե չէ կվրիպես։*

ՋՈ— *Շնորհակալ եմ։ Տեսնես կարո՞ղ եմ դատարկել։* (Սկսում է դատարկել ատրճանակը):

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Էդ էր պակաս, որ չկարենայիր։*

ՋՈ— (Դատարկում է ատրճանակը, մոտիկից զննում, փամփուշտները նորից տուփի մեջ դնում: Աչքը ատրճանակից չհեռացնելով): *Շատ շնորհակալ եմ։ Միշտ ուզեցել եմ էս կարգի բաներին մոտիկից ծանոթանալ։ Լա՞վն է իրոք։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Չտեսնված լավն է, որդի։*

ՋՈ— (Վանառասեղանին դրված շշերից մեկին նշան բռնելով): *Թրա՛խկ։*

ՈՒԻԼԻ— (Խաղամեքենայի մոտից, որն սկսում է խուլ շառաչյուն հանել): *Ուռռա՜։* (Բարձրաձայն, հաղթականորեն): *Հը՛, ո՞նց է, Նիք։ Բա ասում էիր՝ սրա հախից եկողը չեմ։ Դե, հիմա նայիր։*

Մեքենայի միջից յուրահատուկ աղմուկ է լսվում: Կարմիր ու կանաչ լույսերն առկայծում են: Զանգը վեց անգամ զիլ հնչում է:

Մեկ։ Երկու։ Երեք։ Չորս։ Հինգ։ Վեց։

Խաղամեքենայի ներսից հանկարծ դուրս է պրծնում ամերիկյան ազգային դրոշը:

(Կանգնում է զգաստ, պատիվ տալիս): *Այ մարդ, էս ի՞նչ հրաշք երկիր է։*

Խաղամեքենայի բնդերից բարձրաձայն հորդում է «Ամերիկա» երգի մեղեդին: Ջոն, Քիտ Քարսոնը և Բարձրաշխարհիկ տիկինը ոտքի են ելնում: Երգում են:

(Մյուսների հետ երգելով): *«Քեզ եմ երգում, իմ հայրենիք, ազատության քաղցր երկիր...»։*

Ամեն ինչ հանդարտվում է: Դրոշակն իջնում է խաղամեքենայի մեջ: Ուիլին դողում է հուզմունքից, ապշահար է ու զմայլված: Բոլորն էլ իրենց տեղից դիտել են պարտյալ մեքենայի տված ներկայացումը:

(Հայացքը մեկից մյուսին դարձնելով, ասես ամենքն էլ եղել են իր մրցակցի կողմը): *Հը՛, բա ո՞նց եղավ։ Ախր ես գիտեի, որ սա իմ ձեռքից պրծնողը չի։* (Նիքին)։ *Դե՛, վեց հատ հինգ սենթանոց ցնծա։*

Նիքը հինգ սենթանոցները տալիս է նրան:

(Մոտենում է Ջոյին և Քիտ Քարսոնին): *Մի քիչ շարչարեց, բայց հո հասա ուզածիս։ Գիտական մոտեցում է պետք, գիտական, ճիշտ եմ ասում։ Մի թեթև ձեռքի շնորհք ունենաս, գնդիկախաղով էլ գլուխդ կպահես։ Բայց ես դրա համար չեմ խաղում։ Սիրտս ճաքում է. էնքան չեմ սիրում, որ ինձ նեղն են գցում։ Ով ուզում է լինի. մեքենա է, թե ինչ քար ու քացախ է, ինձ համար մի հաշիվ է։ Գիտե՞ք ես ինչ տեսակ բնավորություն ունեմ. ասենք թե մտքիս մի բան դրի, չէ՞, տեղնուտեղը գործի եմ կպչում ու գլուխ բերում։ Ուրիշ ձևով չես կարող բախտիդ տերը դառնալ։* (Մատնացույց անելով իր սվիտերի վրայի «F» տառը): *Տեսնո՞ւմ եք էս տառը։ Զիմանաք ինչ-որ գլուտ ուսումնարանի անվան առաջին տառն է։ Սա իմ ազգանվա՞ն առաջին տառն է. Ֆարուզլի։ Ուիլի Ֆարուզլի։ Ես ասորի եմ։ Մեր քաղաքակրթությունը ծագել է վեց-յոթ դար առաջ։ Էստեղից հեռու մի տեղ։ Օսմանի մասին չե՞ք լսել. Հարոլդ Օսմանի։ Նա էլ է ասորի։ Ֆրեզնոյում նվագախումբ ունի։* (Մոտենում է Բարձրաշխարհիկ տիկնոջն ու պարոնին): *Կյանքումս երբեք չեմ տեսել ձեզ, բայց ձեր հագուկապից ու կյանքի ընկերուհուց երևում է* (վայելչորեն մատնանշում է տիկնոջը), *որ դուք չեք վախենում դժվարություններին շիփ-շիտակ նայել, արձակ-համարձակ գործի եք անցնում ու հարցերը լուծում։ Նույնն էլ ես եմ։ Բա։* (Գեղաթով ժպտում է, հախուռն շարժումով բռնում պարոնի ձեռքը): *Կարգին մարդկանց հետ մի թեթև զրույցն էլ է հաճույք, տարբերությունն իսկույն զգում ես։ Մենք դեռ կհանդիպենք։ Առայժմ։* (Շրջվում է, երկու քայլ անում, ապա վերադառնում նրանց սեղանի մոտ: Վերին աստիճանի քաղաքավարի ու լուրջ): *Ցտեսություն, տիկին։ Լավ ամուսին ունեք։ Աչքի լույսի պես պահեք։* (Ջոյին ու համայն աշխարհին հրաժեշտի ողջույն հղելով՝ գնում է):

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Ջոյին): *Ես ու իմ հոգին, հավատս չէր գալիս, թե էդ ջահել ասորին կհասնի ուզածին։ Չէ, նա մի բան արժի։*

Վերադառնում է Թոմը՝ բերելով շաքարաճանդեսներն ու մյուս գնումները:

ՋՈ— *Ամեն ինչ բերեցի՞ր։*

ԹՈՄ— *Հա։ Նաբաթը մի քիչ դժվար ճարվեց։*

ՋՈ— *Տուր տեսնեմ։*

ԹՈՄ— *Սա է։*

ՋՈ— (Ձեռքը մտցնում է ցելոֆանե տոպրակի մեջ, մի բուռ նաբաթ հա-

նում, նայում է, ժպտում ու մի քանի հատ գցում բերանը)։ *Ձայնն է, առաջվա պես։ Վերցրեք։* (Տոպրակը մեկնում է Քիտ Քարսոնին)։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Տիկնոջ մոտ ձևեր թափելով)։ *Շնորհակալ եմ։ Էսօրվա պես միտս է, թե առաջին անգամ երբ նաբաթի համը տեսա։ Վեց տարեկան էի կամ ամենաշատը՝ յոթ։ Որ սուտ չասեմ, երևի* (դանդաղ) *հազար ութ հարյուր... յոթանասունյոթ թվին էր։ Կամ յոթանասունութ։ Բալթիմորում էր։*

ՋՈ— *Վերցրու, Թոմ։*

ԹՈՄ— *Շնորհակալություն, Ջո։* (Մի քանի հատ վերցնում է)։

ՋՈ— *Հիմա ծամոնններին անցնենք։* (Փաքեթի միջից ծամոնի բոլոր տուփերը լցնում է սեղանին)։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Ձևեր թափելով)։ *Մի տղա էլ կար հետս, անունը՝ Քլարք։ Քուինթոն Քլարք։ Վերջը սենատոր դառավ։*

ՋՈ— *Հա ուրեմն։ Մրգախայտուսին սա է։* (Բացում է տուփը և ամբողջ պարունակությունը՝ հինգ կտոր ծամոնն էլ գցում բերանը)։ *Միշտ ուզեցել եմ պարզել, թե միանգամից քանի հատ կծամեմ։ Գիտե՞ս ինչ, Թոմ, գրազ գանք, որ ես միանգամից քեզնից շատ կծամեմ։*

ԹՈՄ— (Հրճվանքով)։ *Շատ լավ, արի փորձենք։*

Երկուսն էլ սկսում են բերանները ծամոն լցնել։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Ես էլ դատավորն եմ։ Ուրեմն իմացած լինենք. անընդհատ մի-մի հատ ավելացնում եք։ Քանի՞ հատ է քոնը։*

ՋՈ— *Վեց։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Շատ բարի։ Մի քիչ համբերիր, մինչև Թոմը հավասարվի քեզ։*

ՋՈ— (Մինչ Թոմը կհավասարվի իրեն)։ *Թերթ ծախող տղային մի դոլար տվի՞ր։*

ԹՈՄ— *Հա, բա ո՞նց։*

ՋՈ— *Ի՞նչ ասաց։*

ԹՈՄ— *Ասաց՝ շնորհակալություն։*

ՋՈ— *Ի՞նչ տեսակ տղա էր։*

ԹՈՄ— *Փոքր-մոքր, թուխ երեխա էր։ Երևի իտալացի էր։*

ՋՈ— *Ուրախացա՞վ։*

ԹՈՄ— *Հա, շատ ուրախացավ։*

ՋՈ— *Դե լավ է։ Իսկ ծերուկին մի դոլար տվի՞ր։*

ԹՈՄ— *Հա։*

ՋՈ— *Գոհ մնա՞ց։*

ԹՈՄ— *Հա։*

ՋՈ— *Լավ է։ Քանի՞ հատ է բերանումդ։*

ԹՈՄ— *Վեց։*

ՋՈ— *Ըհը, հավասարվեցինք։ Իմն էլ է վեցը։* (Մի ծամոն էլ է գցում բերանը)։

Թոմն էլ է մի ծամոն գցում բերանը։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Եղավ յոթ-յոթ։*

Ջոնն ու Թոմը, չափազանց լուրջ տեսքով, մեկական ծամոն էլ են գցում բերանները։

Ութ-ութ։ Ինը-ինը։ Տասը-տասը։

ՋՈ— (Հրճվանքով)։ *Միշտ, միշտ ուզեցել եմ փորձել, թե միանգամից քանիսը կծամեմ։* (Վերցնում է հանդեսներից մեկը)։ *Տեսնենք աշխարհում ինչ է կատարվում։* (Թերթում է էջերը՝ անդադար ավելացնելով բերանի ծամոնների թիվը)։

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Տասնմեկ-տասնմեկ։ Տասներկու-տասներկու։*

Ջոն ու Թոմը շարունակում են մրցությունը, մինչ Քիտ Քարսոնը առաջվա պես հայտնում է հաշիվը։ Չնայած իրենց երեխայական արարմունքին, երկուսն էլ միանգամայն լուրջ են։

ԹՈՄ— *Ջո, ինչո՞ւ Քիթիին տեղափոխել տվիր Սուրբ Ֆրանցիսկոսի հյուրանոց։*

ՋՈ— *Նա ումի՞ց է պակաս. էնտեղ վեր թափած էդ վերնախավի լրբերը նրա եղունգն էլ չարժեն։*

ԹՈՄ— *Հա, բայց ի՞նչ կարծիքի ես, նա էդ հյուրանոցում իրեն լա՞վ կզգա։*

ՋՈ— *Սկզբում միգուցե չէ, բայց մի երկու օրից արդեն կընտելանա։ Մեծ, հաճելի սենյակ է։ Փափուկ անկողին։ Հագուստ-կապուստ կա։ Սնունդը լավն է։ Կհարմարվի, Թոմ։*

ԹՈՄ— *Հույս ունեմ։ Քեզ չի՞ թվում, որ նա իրեն մեն-մենակ կզգա, ոչ մեկը չի լինի, որ հետը գոնե խոսի։*

ՋՈ— (Շեշտակի հայացք է գցում Թոմի վրա, գրեթե հիացմունքով, գոհունակորեն, բայց խիստ)։ *Նրա համար ոչ մի տեղ էլ մեկը չկա, որ հետը խոսի, բացի քեզանից։*

ԹՈՄ— (Զարմացած ու բերկրալից)։ *Ինձանի՞ց, Ջո։*

ՋՈ— *Հա, հենց քեզանից։ Աստծու կամքով է, ինչով է, դու էդ աղչկա մյուս կեսն ես։ Իմ ասած աղչիկը էն չարացած կինը չի, որ քիթը ցցած գալիս է նավահանգստի էս պանդոկն ու ճչում-ծղրտում, ինչ է՝ կյանքն իրեն ոտնատակ է տվել։ Ով էլ ուզի, նրա կցորդը կդառ-*

նա։ Ես խոսում եմ օհայացի աղջկա մասին, որ մի ժամանակ իսկական կյանք է երազել։ Այ, նրա՛ մյուս կեսն ես։ Դու նրան պետք ես ոչ թե հետը պառկելու ու փող տալու համար, որ նա կարենա գոյությունը պահպանել՝ ուտի, հագնվի ու սենյակի վարձը մուծի։ Չէ, նա քո կարիքն ունի հոգով ու մարմնով, ամբողջ էությամբ։

Թոմն ու Քիտ Քարսոնը ամենայն ուշադրությամբ լսում են Ջոյին, ընդ որում Քիտ Քարսոնը՝ խորին հավանությամբ:

Ես տեղավորեցի նրան էդ հյուրանոցում, որ իրեն հավաքելու հնարավորություն ունենա։ «Նյու Յորք» հյուրանոցում դա նրան չէր հաջողվի։ Տեսար, թե էնտեղ ինչ է կատարվում։ Նրա համար ոչ մի տեղ էլ ոչ մեկը չկա, որ հետը խոսի, բացի քեզանից։ Մյուս բոլորը նրա հետ էնպես են վարվում, որ նա իրեն պոռնիկի նման է պահում։ Էդպես որ շարունակվի, ինքն էլ կսկսի հավատալ դրան։ Ու էլ վերջ՝ նույնիսկ հուշեր չի ունենա։ Ասում ես՝ իրեն մեն-մենա՞կ կզգա։ Բա ինչպես, կզգա։ Մարդիկ իրենց մատնում են մենակության մինչև անգամ հանուն տառապանքի։ Ես ուզում եմ, որ նա հանուն քե՛զ իրեն մեն-մենակ զգա։ Մենակությունը կօգնի, որ նա գտնի իրեն, իր սրտի ուժը դառնա։ Մենությունը օգուտ է մարդուն։ Հիմա դա միակ բանն է, որ պետք է Քիթիին։ Էլ չկա՞ մատուտակի ծամոն։

ԹՈՄ— (Ապշած)։ *Ինչի՞։ Մատուտակի՞։* (Մտազբաղ պրպտում է): *Երևի մատուտակինը լրիվ ծամել ենք։ Բայց դեռ մեխակի ունենք, անանուխի, ընկույզի, մուշկի ու մրգահյութի։*

ՋՈ— *Մի ժամանակ ես ամենից շատ մատուտակինն էի սիրում։ Քիթիի համար մի անհանգստանա։ Ամեն ինչ լավ կլինի, Թոմ։ Դու իրոք ուզում ես ամուսնանալ նրա հետ, չէ՞։*

ԹՈՄ— (Գլխով է անում): *Այնպես խոսք, Ջո։* (Սրտակտուր): *Բայց փող չունեմ։*

ՋՈ— *Իսկ եթե պրոֆեսիոնալ բռնցքամարտի՞կ դառնաս կամ դրա պես մի բան։*

ԹՈՄ— *Չէէէ՛։ Ես չեմ կարող խփել մի մարդու, որն ինձ ոչ մի վատություն չի արել։ Նա պիտի էնպիսի բան արած լինի, որ ատելությունից ինձ կորցնեմ։*

ՋՈ— *Դե ուրեմն մտածիր, թե ինչ կարող ես անել, որ գոնե մի քիչ սրբտովդ լինի։*

ԹՈՄ— *Երնեկ չէ՞ր իմանայի, Ջո։*

ՋՈ— (Միտքը լարելով, հանկարծ): *Թոմ, չէի՞ր ուզենա բեռնատար մեքենա քշել։*

ԹՈՄ— (Շանթահար): *Մտքովս երբեք չի անցել, Ջո։ Այ, դա սրտովս է։ Քեզ համար ճամփորդում ես։ Ճանապարհներ։ Քաղաքներ։ Տաք կարկանդակներով սուրճ։ Զքնաղ հովիտներ, լեռներ, գետակներ, ծառ ու ծաղիկ, արևածագ, մայրամուտ։*

ՋՈ— *Դրա մեջ իրոք որ բանաստեղծական բան կա։*

ԹՈՄ— *Ջո, դա հենց իմ ուզած գործն է։ Նստում ես ղեկին ու ճամփա գնում, նայում չորս կողմդ, ժպտում, ծիծաղում։ Ի՞նչ կլինի, որ Քիթիին էլ մեկ-մեկ հետս տանեմ։*

ՋՈ— *Գաղափար չունեմ։ Տուր տեսնեմ հեռախոսագիրքը։ Բայց դու կարո՞ղ ես բեռնատար քշել։*

ԹՈՄ— *Բեռնատա՞ր. Ջո, դու գիտես, որ ես ամեն ինչ էլ կարող եմ քշել, մենակ թե շարժիչ ու ակներ ունենա։* (Հեռախոսագիրքը տալիս է Ջոյին):

ՋՈ— (Թերթում է, գտնում): *Ըհը՛։ Սա է, որ կա։ Թաքսիդո յոթանասունինը-զրո-զրո։ Էս հինգ սենթանոցը վերցրու, համարը հավաքիր։*

ԹՈՄ— (Մոտենում է հեռախոսին, համարը հավաքում): *Ալո՛։*

ՋՈ— *Միստր Քեյթին ուզիր։*

ԹՈՄ— (Բերանը ծամոնով լի): *Միստր Քեյթին կարելի՞ է...* (Դադար): *Միստրը Քե՞յթ։*

ՋՈ— *Գոնե ծամոնը բերանիցդ հանիր։*

ԹՈՄ— (Ծամոնը հանելով): *Միստր Քե՞յթ... Այո, այո, միստր Քեյթին... Լավ... Բարև ձեզ, միստր Քեյթ...*

ՋՈ— *Ասա՝ թող լսափողը ցած չդնի։*

ԹՈՄ— *Խնդրում եմ լսափողը ցած չդնեք։*

ՋՈ— *Տուր ձեռքդ, Թոմ։*

Թոմը օգնում է Ջոյին՝ մոտենալու հեռախոսին:

(Լսափողի մեջ, ծամոնը մատներով զգուշորեն բռնած): *Քե՞յթ։ Ջոն է... Հա։ Ուզածիդ պես... Դե լավ, եղածը մի բան չէր...* (Դադար): *Քեզ մոտ լավ վարորդի տեղ չի՞ ճարվի...* (Դադար): *Չէ՝ ինչքան գիտեմ։* (Թոմին): *Վարորդական իրավունք ունե՞ս։*

ԹՈՄ— (Անհանգստացած): *Չունեմ, բայց կարող եմ ստանալ, Ջո։*

ՋՈ— (Լսափողի մեջ): *Չունի, բայց հեշտ ու հանգիստ կարող է ստանալ... Գրողի ծոցը արհմիությունը։ Հետո կմտնի... Ոնց կուզես. թեկուզ անունը փոխարեզիդենտ դիր ու ասա՝ իր քեֆին է մեքե-*

նա քշում... Բա իհարկե... Ինչ ես ասո՞ւմ... էս գիշե՞ր... Ի՞նչ կա որ... Սան Դիե՞գո... Դե լավ, առայժմ թող առանց վարորդական իրավունքի մեկնի։ Ի՞նչ տարբերություն, գրողը տանի... Հա։ Իհարկե... Տեսնե՞ս... Եղավ։ Հենց հիմա կուղարկեմ։ Անմիջապես։ (Կախում է լսափողը։ Հեռախոսին)։ *Ապրես։*

ԹՈՄ— *Աշխատելո՞ւ եմ։*

ՋՈ— *Ուզում է տեսնել քեզ։*

ԹՈՄ— *Տեսքս մի բանի նմա՞ն է, Ջո։*

ՋՈ— (Ուշադիր նայելով նրան)։ *Գլուխդ բարձր պահիր։ Կուրծքդ էլ դուրս գցիր։*

Թոմը կատարում է նրա ցուցումները։

Քեֆդ ո՞նց է։

ԹՈՄ— *Շատ լավ։*

ՋՈ— *Տեսքդ էլ է շատ լավ։* (Ծամոնը հանում է բերանից և փաթաթում «Լիբերթի» հանդեսով)։ *Բախտդ բերեց, Թոմ։ Հիմա ինձ լսիր։* (Կծում պոկում է երկար սիգարի ծայրը, կպցնում սիգարը։ Մեկական սիգար էլ տալիս է Թոմին ու Քիտ Քարսոնին)։ *Ծխեք ձեզ համար։ Սրանք էլ վերցրու։* (Երկու սիգար էլ է տալիս Թոմին)։ *Տուր էդ պոչ խուզածներն էլ մի-մի հատ ծխեն։* (Մատնացույց է անում Բարձրաշխարհիկ տիկնոջն ու պարոնին)։

Թոմը մոտենում է նրանց և, առանց մի բառ ասելու, ամեն մեկին մի-մի սիգար տալիս։ Ամուսինը վիրավորված է. սիգարից նոտ քաշելով՝ դեն է շպրտում։ Կինը մի պահ նայում է սիգարին, ապա դնում բերանը։

ՊԱՐՈՆ— *Ի՞նչ ես անում։*

ՏԻԿԻՆ— *Ազնիվ խոսք, սիրելիս, այնպես » եմ ուզում։*

ՊԱՐՈՆ— *Դե, գիտես, ամեն ինչին էլ չա՞փ կա, սահմա՞ն կա։*

ՏԻԿԻՆ— *Բայց ես իրոք շատ եմ ուզում, սիրելիս։* (Ծիծաղում է, սիգարը նորից դնում բերանը։ Շրջվում է Քիտ Քարսոնի կողմը։ Սա կծում է, թքում սիգարի ծայրը։ Կինը նետևում է նրա օրինակին)։

ՊԱՐՈՆ— (Բարձրաձայն)։ *Հինգ հաստնացած զավակների մայր է, բայց դեռ ռոմանտիկ արկածնե՞ր է փնտրում։* (Դոռում է կնոջ վրա, մինչ Քիտ Քարսոնը վառում է սրա սիգարը)։ *Չհամարձակվե՛ս։ Ես արգելո՛ւմ եմ։*

ՋՈ— (Բղավելով)։ *Ի՞նչ է պատահել։ Հանգի՛ստ թող նրան։ Խեղճ կնոջ հոգին հանեցիր, էլի՛։* (Գրեթե առանց դադարի)։ *Հիմա ինձ լսիր Թոմ։*

Տիկինը կպցրած սիգարը դնում է բերանը և հանությամբ ծխում:

Սա քեզ տասը դոլար։

ԹՈՄ— *Տասը դոլա՞ր։*

ՋՈ— *Հնարավոր է, որ հենց էս գիշեր դուրս գաս ուղերթի։ Նա ուզում է քեզ Սան Դիեգո ուղարկել։*

ԹՈՄ— *Ջո, ես պիտի Քիթիին իմաց տամ։*

ՋՈ— *Ե՛ս իմաց կտամ։*

ԹՈՄ— *Ջո, աչքդ նրա վրա պահիր։*

ՋՈ— *Լավ կլինի, լավ։ Հերիք է նրա համար անհանգստանաս։ Կորած տեղ չի, Սուրբ Ֆրանցիսկոսի հյուրանոցում է։ Տես ինչ եմ ասում։ Կնստես տաքսի ու կգնաս Թաունսենդ և Չորրորդ փողոցների անկյունը։ Մի մեծ ցուցանակ աչքովդ կընկնի. «Քեյթի ավտոտրանսպորտային ընկերություն»։ Նա սպասելու է քեզ։*

ԹՈՄ— *Շատ լավ, Ջո։* (Բառերը մի կերպ իրար կապելով)։ *Շնորհակալ եմ, Ջո։*

ՋՈ— *Հիմար-հիմար դուրս մի տուր։ Ճամփա ընկիր։*

Թոմը գնում է։ Տիկինը մերթընդմերթ փչում է սիգարի ծուխը։ Թոմի հեռանալուն պես՝ մանում են Ուեսլին ու Հարին։

ՆԻՔ— *Էս որտե՞ղ եք թրև գալիս։ Հաճախորդներին պիտի զվարճացնե՞ք, թե՞ չէ։ Մի տեսեք ինչ ջոկովի մարդիկ են նստած։* (Ցույց է տալիս Բարձրաշխարհիկ տիկնոջն ու պարոնին)։

ՈՒԵՍԼԻ— *Դուք ասացիք՝ երկրորդ ելույթի համար ժամը տասին գանք։*

ՆԻՔ— *Ե՞ս եմ ասել։*

ՈՒԵՍԼԻ— *Հա, սըր, միստր Նիք, հենց էդպես էլ ասացիք։*

ՀԱՐԻ— *Բա առաջին ելո՞ւյթը ոնց էր, ոչի՞նչ։*

ՆԻՔ— *Առաջինը ելույթ չէր։ Մարդ-մարդասանք չկար։ Ի՞նչ ելույթ, թե որ հանդիսատես չկա։ Մարդիկ վախենում են նավահանգստի կողմը երևալ։*

ՀԱՐԻ— *Ըհը։ Հենց նոր մենք քսանյոթերորդ կառանացցի մոտ էինք։ Բեռնակիրներից մեկը ոստիկանի հետ կռվի բռնվեց, ոստիկանն էլ տուր թե կտաս՝ մահակով գլխին հո չհասցրեց։ Մեր աչքով տեսանք, ճիշտ չե՞մ ասում, Ուեսլի։*

ՈՒԵՍԼԻ— *Հա, սըր, էնտեղ կանդնած նայում էինք, էդ ամեն ինչը մեր աչքով տեսանք։*

ՆԻՔ— (Փոfr-ինչ անհանգստացած)։ *Ուրիշ բան չեղա՞վ։*

ՈՒԵՍԼԻ— *Բոլորը խառնվեցին, սկսեցին խոսել, իրար հերթ չէին տալիս։*

ՀԱՐԻ— *Հետո մի մարդ եկավ մեծ մեքենայով ու ասաց, որ հենց հիմա ժողովը կսկսվի, և իրենք հույս ունեն բոլորի պահանջները բավարարել ու վերջ տալ գործադուլին։*

ՈՒԵՍԼԻ— *Հենց հիմա։ Իրիկունը։*

ՆԻՔ— *Ի՞նչ անենք՝ իրիկուն է։ Իսկը ժամանակն է։ Մեկ էլ տեսար խեղճ ոստիկանների նյարդերը չդիմացան... մարդիկ են, էլի. վերցրին ու մեկնումեկի վրա կրակ բացեցին։* (Հարիին, անսպասելիորեն): *Մոտ արի։ Իմ փոխարեն վաճառասեղանի հետևը կկանգնես։ Ես գնամ կառանացցի կողմերը մի քիչ մաքուր օդ շնչեմ։*

ՀԱՐԻ— *Աչքիս վրա, սըր։*

ՆԻՔ— (Բարձրաշխարհիկ տիկնոջն ու պարոնին): *Հը՛ ընտիր հասարակություն, որոշեցի՞ք ինչ եք պատվիրելու։*

ՏԻԿԻՆ— *Շամպայն ունե՞ք։*

ՆԻՔ— (Ջոյին մատնացույց անելով): *Բա ձեր կարծիքով նա իր շշի միջից ինչ է հա լցնում-խմում՝ ջո՞ւր։*

ՏԻԿԻՆ— *Սառեցրած կա՞։*

ՆԻՔ— *Ինչքան ուզեք։ Արդեն մի ամիս է, նա էստեղ, օր ու գիշեր նըստած, շամպայն է կոնծում։*

ՏԻԿԻՆ— *Կարելի՞ է մի շիշ։*

ՆԻՔ— *Վեց դոլար արժի։*

ՏԻԿԻՆ— *Թեկուզև այդպես. մեզ ձեռ է տալիս։*

ՊԱՐՈՆ— *Իսկ ես չգիտեմ՝ ձե՞ռ է տալիս, թե՞ չէ։ Միայն գիտեմ, որ չեմ ուզում գիտենալ։*

Նիքը հանում է բաճկոնը և Հարիին օգնում հագնելու։ Հարին պարելով մի շիշ շամպայն և երկու գավաթ է մատուցում տիկնոջն ու պարոնին, վերցնում վեց դոլարը և պարելով էլ վերադառնում վաճառասեղանի հետևը։

ՆԻՔ— (Վերցնում է վերարկուն ու գլխարկը։ Ուեսլիին): *Մի քիչ ծընգծընգացրու, տղաս, ծնգծնգացրու։*

ՈՒԵՍԼԻ— *Էս բոպեիս, սըր, միստր Նիք։*

Նիքը գնում է դռան կողմը։ Մտնում է Առաքը։

ՆԻՔ— *Բարի երեկո, Մահմեդ։*

ԱՐԱՔ— *Քարը քարին չի մնում։*

ՆԻՔ— *Ինչ որ կա չկա, կորչում է, գնում։* (Դուրս է գալիս)։

Ուեսլին կամացուկ դաշնամուր է նվագում։ Առաքը մի բաժակ գարեջուր է խմում, հանում շրթնարմոնը և իմն էլ սկսում նվագել։ Ուեսլին նվագակցում է Առաքին։

Մտնում է Քիթի Դյուվալը. նա արտակարգ գեղեցկացել է. հագին նոր զգեստ է: Քայլում է վարանելով, ասես նեղվում է նոխ հանդերձանքից, ասես ինքն իրավունք չունի նման շորեր հագնել: Բարձրաշխարհիկ տիկնոջ ու պարոնի վրա նա մեծ տպավորություն է գործում: Հարին ափիբերան եղած՝ նայում է նրան: Ջոն տարված է «Թայմ» կարդալով: Քիթին մոտենում է նրա սեղանին:

Ջո— (Աչքերը բարձրացնելով՝ առանց զարմանքի նշույլի նայում է նրան): *Բարի երեկո, Քիթի։*

Քիթի— *Բարի երեկո, Ջո։*

Ջո— *Ինչ հաճելի է քեզ նորից տեսնել։*

Քիթի— *Տաքսիով եկա։*

Ջո— *Էլի լա՞ց ես եղել։*

Քիթին ի վիճակի չէ պատասխանել:

(Հարին): *Մի բաժակ բեր։*

Հարին բերում է բաժակը: Ջոն շամպայն է լցնում Քիթի համար:

Քիթի— *Քեզ ասելու բան ունեմ։*

Ջո— *Խմիր։*

Քիթի— *Ես երբեք էստրադային արտիստուհի չեմ եղել։ Մենք աղքատ էինք՝ դառն ու դատարկ։*

Ջո— *Նստիր, Քիթի։*

Քիթի— (Նստում է): *Շատ եմ փորձել աշխատանք գտնել, բայց ոչ մի անգամ բեմ չեմ բարձրացել։*

Ջո— *Քո կենացը, Կատերինա Կորանովսկա։ Քո և Թոմի կենացը։*

Քիթի— (Թախծագին): *Իսկ ո՞ւր է Թոմը։*

Ջո— *Նա աշխատանքի է ընդունվել։ Բեռնատար է քշելու։ Էս գիշեր պիտի դուրս գա ուղերթի։ Մի երկու օրից կվերադառնա։*

Քիթի— (Տխուր): *Ես նրան ասացի, որ կամուսնանամ հետը։*

Ջո— *Նա ուզում էր տեսնել քեզ ու մնաս բարով ասել։*

Քիթի— *Ախր նա շատ լավն է ինձ նմանի համար։ Ոնց որ փոքրիկ տղա լինի։* (Հոգնաբեկ): *Իսկ ես... ինչ ասես, որ գլխովս չի անցել։*

Ջո— *Քիթի Դյուվալ, ես շատ քչերին եմ տեսել, որ իրոք քեզ նման մաքուր ու անմեղ լինեն։ Մի երկու օրից նա հետ կգա։ Գնա հյուրանոց ու սպասիր նրան։*

Քիթի— *Հենց դրա մասին էլ ուզում էի ասել. չեմ դիմանում մենակությանը։ Ես վատն եմ։ Ինձ ստիպում եմ, ամեն ինչ անում, բայց ոչ մի օգուտ։ Չգիտեմ ինչ բան է։ Ինձ պակասում է...* (Ձեռքը անհույս թափ է տալիս):

ՋՈ— (Փափկասրտորեն)։ Քիթի, դու իրոք ուզում ես էստե՞ղ վերադառնալ։

ՔԻԹԻ— Չգիտեմ։ Դեռ չեմ որոշել։ Էնտեղ նույնիսկ ամեն ինչի հոտն է ուրիշ։ Չգիտեմ, թե ինձ ոնց զգամ, ինչ մտածեմ։ (Հուսահատ շարժումով)։ Մի բան գիտեմ, որ էնտեղ օտար եմ։ Ամբողջ կյանքս հենց էդ բոլորի մասին եմ երազել, բայց հիմա շատ ուշ է։ Ես ամեն ինչ անում եմ, որ ինձ երջանիկ զգամ, բայց դրա փոխարեն անընդհատ հիշում եմ անցած-գնացածն ու արտասուք թափում։

ՋՈ— Ինչ ասեմ՝ չգիտեմ։ Քիթի, ես չէի ուզում սիրտդ ցավացնել։

ՔԻԹԻ— Դու իմ սիրտը չես ցավացրել։ Դու միակ մարդն ես, որ իմ նկատմամբ բարի է եղել։ Երբեք չեմ հանդիպել քեզ նման մեկին։ Ես էլ չեմ հավատում սիրուն, բայց գիտեմ, որ քեզ սիրում եմ, գիտեմ, որ սիրում եմ Թոմին։

ՋՈ— Ես էլ քեզ եմ սիրում, Քիթի Դյուվալ։

ՔԻԹԻ— Նա կուզենա, որ մենք երեխաներ ունենանք։ Գիտեմ, կուզենա։ Ես էլ կուզենայի։ Իհարկե, կուզենայի։ Բայց ես չեմ կարող... (Տարուբերում է գլուխը)։

ՋՈ— Թոմն ինքը երեխա է։ Դու նրա հետ շատ երջանիկ կլինես։ Նա ուզում է, որ դու էլ հետը ուղևորությունների մեկնես։ Թոմն ստեղծված է հենց քեզ համար։ Դու էլ նրա համար ես ստեղծված։

ՔԻԹԻ— (Երեխայավարի)։ Ուզում ես, որ ես հետ դառնամ հյուրանոց ու սպասեմ նրա՞ն։

ՋՈ— Ես չեմ կարող քեզ թելադրել, թե ինչ անես։ Չնայած իմ կարծիքով վատ չէր լինի էդպես։

ՔԻԹԻ— Թե իմանայիր մենակությունից ինչքան եմ տանջվում։ Առաջվանից էլ շատ։

ՋՈ— Միգուցե դա ընդամենը մի շաբաթ տևի, Քիթի։ (Անսպասելի միտք հղանալով՝ շեշտակի հայացք է նետում նրա վրա)։ Չէ՞ր ասում, թե գիրք ես ուզում կարդալ։ Բանաստեղծություններ, չէ՞։

ՔԻԹԻ— Ես էլ չգիտեի, թե ինչ եմ ասում։

ՋՈ— (Փորձելով ելնել)։ Դե չէ, իհարկե, գիտեիր։ Ինձ թվում է բանաստեղծությունները քեզ դուր կգան։ Քիթի, մի րոպե սպասիր էստեղ։ Գնամ տեսնեմ չե՞մ կարող քեզ համար մի քանի գիրք ճարել։

ՔԻԹԻ— Լավ, Ջո։

Ջոն սանդղակից դուրս է գնում՝ մեծ ջանքեր գործադրելով, որպեսզի չընկնի։ Նավաշչակի ազդանշան։ Երաժշտություն։

Մտնում է Լրագրավաճառ տղան։ Փնտրում է Ջոյին։ Սիրտը կոտրվում է, որ Ջոն չկա։

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— (Բարձրաշխարհիկ պարոնին): *Թերթ չե՞ք ուզում։*
ՊԱՐՈՆ— (Զայրալից): *Ոչ։*
ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— (Մոտենում է Արաբին): *Թերթ, միստր։*
ԱՐԱԲ— (Սրտնեղած): *Քարը քարին չի մնում։*
ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— *Ի՞նչ։*
ԱՐԱԲ— (Բարկացած): *Քարը քարին չի մնում։*
ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— (Գնում է դռան կողմը, շուռ գալիս, նայում Արաբին, գլուխն օրորում): *Քարը քարին չի՞ մնում։ Ի՞նչ եք ուզում դրանով ասել։*

Մտնում են Բլիքը և երկու ոստիկան:

(Բլիքին): *Թերթ, միստր։*

Բլիքը մի կողմ է հրում նրան: Լրագրավաճառ տղան գնում է:

ԲԼԻՔ— (Տեր ու տիրականի պես շրջում է: Հարիին): *Որտե՞ղ է Նիքը։*
ՀԱՐԻ— *Դուրս եկավ մի քիչ մաքուր օդ շնչի։*
ԲԼԻՔ— *Բա դո՞ւ ով ես։*
ՀԱՐԻ— *Հարին։*
ԲԼԻՔ— (Արաբին ու Ռեսլիին): *Է՛յ, դո՛ւք։ Վերջ տվեք։*

Արաբն ու Ռեսլին ընդհատում են նվագը:

(Ոտից-գլուխ տնտղելով Քիթիին): *Անունդ ի՞նչ է, քույրիկ։*
ՔԻԹԻ— (Բլիքին նայելով): *Ասենք թե Քիթի Դյուվալ։ Քե՞զ ինչ։* (Նրա ձայնը, ինչպես պիեսի սկզբում, դառնում է կոպիտ, իր ասածի, շոր, բայց և մորմոքալից):
ԲԼԻՔ— (Զայրացած): *Լեզուդ քեզ արա, պատռա՛ծ բերան։ Հարցերի՛ս պատասխանիր։*
ՔԻԹԻ— *Դե գլխիցս ռա՞ղ եղիր։*
ԲԼԻՔ— (Մոտ գալով, փրփրած): *Որտե՞ղ ես ապրում։*
ՔԻԹԻ— *«Նյու Յորք» հյուրանոցի քսանմեկերորդ սենյակում։*
ԲԼԻՔ— *Ի՞նչ ես աշխատում։*
ՔԻԹԻ— *Հիմա չեմ աշխատում։ Աշխատանք եմ փնտրում։*
ԲԼԻՔ— *Ի՞նչ աշխատանք։*

Քիթին ի վիճակի չէ պատասխանել:

(Գազազած): *Ի՞նչ աշխատանք։*
ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— (Մոտենալով): *Իմ ներկայությամբ կնոջ հետ էդ ձևով չխոսես։*

Բլիքը շրջվում է, հայացքը մեխում է Քիտ Քարսոնի դեմքին: Վանառաստ-դանի մոտ կանգնած ոստիկանները շարժվում են նրանց կողմը:

ԲԼԻՔ— (Ոստիկաններին): *Վնաս չունի, տղերք։ Սրա ճաշը ես իմ ձեռով կեփեմ։* (Քիտ Քարսոնին): *Ինչ ասացի՞ր։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Էդ ո՞վ է քեզ իրավունք տվել, որ մարդկանց խաթրին կպչես։ Քեզ ինչի՞ տեղ ես դրել։*

Բլիքն առանց մի խոսք ասելու Քիտ Քարսոնին քարշ է տալիս դուրս: Հարվածների ձայն, տնքոց: Բլիքը վերադառնում է՝ ծանր շնչելով:

ԲԼԻՔ— (Ոստիկաններին): *Ամեն ինչ կարգին է, տղերք։ Հիմա կարող եք գնալ։ Դրա հոգսը քաշեք։ Ուշքի բերեք ու գլուխն էլ խելք դրեք, որ սրանից հետո իրեն պահել իմանա։* (Նորից դառնալով Քիթիին): *Իսկ դու հարցիս պատասխանիր. ի՞նչ աշխատանք։*

ՔԻԹԻ— (Հանգիստ): *Պոռնիկ եմ, հասկացա՞ր, ճիճու։ Դու շատ լավ գիտես ինչ աշխատանք եմ անում։ Ես էլ գիտեմ՝ դո՛ւ ինչ ես անում։*

ՊԱՐՈՆ— (Ցնցված ու անկեղծորեն խոցված): *Ներեցեք, պարոն սպա, բայց ինձ թվում է, որ ձեր վերաբերմունքով...*

ԲԼԻՔ— *Սո՛ւս։*

ՊԱՐՈՆ— (Ցածրաձայն).— *...դուք ստիպում եք այս խեղճ երեխային իր վրա սուտ մեղադրանքներ բարդել։*

ԲԼԻՔ— *Ասացի՝ սո՛ւս։*

ՏԻԿԻՆ— *Ինչպե՞ս։* (Ամուսնուն): *Նման վիրավորանքը կո՞ւլ ես տալու։*

ԲԼԻՔ— (Պարոնին, որ կանգնել է նստած տեղից): *Կուլ չե՞ս տալու։*

ՊԱՐՈՆ— (Կնոջ թևը բռնելով): *Ես ապահարզան կպահանջեմ։ Կյանքս նորից կսկսեմ։* (Կնոջը բռթելով): *Արի՛։ Գնանք կորչե՛նք այստեղից։* (Կնոջը հապշտապ դուրս է տանում պանդոկից):

ԲԼԻՔ— (Հայացքով ուղեկցում է նրանց: Քիթիին): *Ուրեմն էսպես։ Նորից սկսենք, բայց լավ իմանաս, ձեռիցս չես պրծնի, եթե ճիշտը չասես։ Անունդ ի՞նչ է։*

ՔԻԹԻ— *Քիթի Դյուվալ։*

ԲԼԻՔ— *Որտե՞ղ ես ապրում։*

ՔԻԹԻ— *Մինչև էս իրիկուն ապրում էի «Նյու Յորք» հյուրանոցի քսանմեկերորդ սենյակում։ Բայց հիմա տեղափոխվել եմ Սուրբ Ֆրանցիսկոսի հյուրանոց։*

ԲԼԻՔ— *Պա՛հ, Սուրբ Ֆրանցիսկոսի հյուրանոց։ Լավ էլ տեղ ես գտել։ Որտե՞ղ ես աշխատում։*

ՔԻԹԻ— *Աշխատանք եմ փնտրում։*

ԲԼԻՔ— *Ի՞նչ մասնագիտություն ունես։*

ՔԻԹԻ— *Արտիստուհի եմ։*

ԲԼԻՔ— *Ո՞նց չէ։ Ո՞ր կինոնկարներում ես խաղացել, ասա մի մենք էլ իմանանք։*

ՔԻԹԻ— *Ես էստրադային արտիստուհի եմ։*

ԲԼԻՔ— *Ստում ես։*

Ռեսլին տագնապահար ու անխոս վրդովմունքով՝ լի՝ վեր է կենում տեղից։

ՔԻԹԻ— (Սրտակեղեք, ինչպես պիեսի սկզբում)։ *Չէ, ճիշտ եմ ասում։*

ԲԼԻՔ— *Ի՞նչ գործ ունես էստեղ։*

ՔԻԹԻ— *Եկա իմանամ՝ չե՞մ կարող էստեղ աշխատանք գտնել։*

ԲԼԻՔ— *Ի՞նչ աշխատանք։*

ՔԻԹԻ— *Երգել... ու... պարել։*

ԲԼԻՔ— *Դու ոչ երգել գիտես, ոչ էլ պարել։ Ինչո՞ւ ես ստում։*

ՔԻԹԻ— *Գիտեմ։ Ես երգել ու պարել եմ էստրադային ներկայացումներում, ամբողջ երկրով մեկ հյուրախաղեր տվել։*

ԲԼԻՔ— *Փչում ես։*

ՔԻԹԻ— *Բանաստեղծություններ էլ եմ արտասանել։*

ԲԼԻՔ— *Ասում ես՝ պարե՞լ ես էստրադային ներկայացումներում։*

ՔԻԹԻ— *Հա։*

ԲԼԻՔ— *Շատ լավ։ Հապա մի ցույց տուր, թե ոնց ես պարում։*

ՔԻԹԻ— *Չեմ կարող։ Էստեղ երաժշտություն չկա, համ էլ բեմական հագուստով չեմ։*

ԲԼԻՔ— *Երաժշտություն կա՛։* (Ռեպլիին)։ *Մի հինգ սենթանոց գցիր էդ նվագարկիչի մեջ։*

Ռեսլին տեղից չի շարժվում։

Քեզ հետ չե՞մ, շո՛ւտ արա։ Մի հինգ սենթանոց գցիր նվագարկիչի մեջ։

Ռեսլին ենթարկվում է։

(**ՔԻԹԻՆ**)։ *Ուրեմն էսպես։ Բարձրացիր բեմ՝ ու էստրադային մի համար ցույց տուր, հավեսին մի բան։*

Քիթին վեր է կենում։ Դանդաղաքայլ բարձրանում է բեմ, բայց ի վիճակի չէ որևէ շարժում անել։

Մտնում է Ջոն՝ ձեռքին երեք կտոր գիրք։

Դե՛, գործի անցիր։ Ցույց տուր մի տեսանենք, թե էդ ոնց ես պարում՝ որ ամբողջ երկրով մեկ հյուրախաղեր ես տվել։

Քիքին փորձում է էստրադային մի համար կատարել: Ստացվում է ոգբեռ-զականորեն գեղանի մի պար:

Ապրե՜ս, ապրե՜ս, Դե՛, հիմա սկսիր շորերդ հանել, ո՞ւմ ես սպասում:

Քիքին հանում է գլխարկը, ապա սկսում ժակետը հանել:

ՋՈ— (Զարմացած, փութկոտ մոտենում է բեմին): *Ցած իջիր էդտեղից:* (Գրկում իջեցնում է Քիքիին):

Քիքին, նրան սեղմված, լալիս է:

(Բլիֆին): *Էս ի՞նչ ես անում, գրողը տանի:*

ՈՒԵՍԼԻ— (Փոքրիկ տղայի պես, զայրույթից դողալով): *Այ, սա էր՝ Բլիքը: Սա՛ ստիպեց, որ շորերը հանի: Ծերուկին էլ շան ծեծ տվեց:*

Բլիքը, Ուեսլիին քաշկռտելով, գցում է խոհանոց: Հենց այդ պահին մտնում է Թոմը: Բլիքն սկսում է ծեծել Ուեսլիին:

ԹՈՄ— *Էս ի՞նչ է, Ջո: Բա՞ն է պատահել:*

ՋՈ— *Մեքենայո՞վ ես:*

ԹՈՄ— *Հա, բայց ի՞նչ է պատահել: Քիթին նորից լա՞ց է լինում:*

ՋՈ— *Սան Դիեգո՞ ես գնում:*

ԹՈՄ— *Հա, Ջո: Բայց նա ի՞նչ է անում խեղճ սևամորթին:*

ՋՈ— *Գնա: Սա էլ քեզ փող: Ամեն ինչ կարգի կընկնի:* (Քիքիին): *Մեքենայում կհագնվես: Վերցրու էս գրքերը:*

ՈՒԵՍԼԻԻ ՁԱՅՆԸ— *Չխփե՛ք, չխփե՛ք, ասում եմ: Սա ձեզ վրա էժան չի նստի: Ա՛յ, կտեսնեք:*

ԹՈՄ— *Ջո, ախր նա տղային կայլանդակի: Ես դրա հոգին քթից կհանեմ:*

ՋՈ— (Դուրս հրելով Թոմին): *Գնացեք էստեղից: Սան Դիեգոյում կամուսնանաք: Կհանդիպենք ձեր վերադառնալուց հետո:*

Թոմն ու Քիքին գնում են:
Մտնում է Նիքը և կանգնում վաճառասեղանի մոտակա ծայրում:

(Հանում է գրպանից ատրճանակը, նայում): *Վաղուց էի ուզում մեկնումեկին սպանել, բայց չգիտեի՝ ում:* (Քաշում է հրահանը, շրջկվում, ատրճանակը ձեռքի մեջ ամուր սեղմելով՝ ուղղում իր դիմաց և գնում դեպի խոհանոցի դուռը: Մի պահ կանգնում է՝ նայելով Բլիֆին, ուշի-ուշով նշան է բռնում և ձգանը սեղմում):

Կրակոց չկա:

ՆԻՔ— (Վրա է հասնում, խլում ատրճանակը և Ջոյին մի կողմ հրում)։ *Ինչ ես անում, հո չե՞ս գժվել։*

ՋՈ— (Անփույթ, բայց զայրալից)։ *Այ քեզ հիմարի գլուխ։ Իր արևին վեցլիցքանի ատրճանակ է առել. մի անգամ էլ չի կրակում։* (Նրատում է՝ աշխարհում ամեն ինչի նկատմամբ քար անտարբերությամբ լցվելով)։

Խոհանոցից դուրս է գալիս հնասպառ Բլիֆը։

ՆԻՔ— (Նայելով Բլիֆին, բառերը դանդաղ արտաբերելով)։ *Բլի՛ք, ես քեզ զգուշացրի, որ էստեղ չերևա՛ս։ Դե հիմա փաստափուսադ քաշիր ու գնա՛։* (Բլիֆի օձիքը բռունն է հավաքում և բռունցքները սեղմած՝ նրան քարշ տալիս դեպի դուռը)։ *Թե որ մեկ էլ կոտրած գդալի պես մեջտեղ ես ընկել, ես քեզ քաշ կտամ էն նույն սենյակը, որտեղ ծեծում էիր սևամորթին ու հոգիդ հանելով՝ խեղդամա՛հ կանեմ, այ էս ձեռներովս։ Կորի՛ր աչքիցս։* (Դուրս է շպրտում Բլիֆին։ Հարիին)։ *Գնա տերությունս արա էդ սևամորթ տղային։*

Հարին վազում է խոհանոց։

Վերադառնում է Ռիլին և առանց որևէ բան նկատելու մոտենում խաղամեքենային։ Մի ինչ սենթանոց է խցկում մեքենայի ճեղքը, բայց ըստ երևույթին այնքան շեշտակի շարժումով. որ, ոչ այս, ոչ այն, խաղամեքենայի միջից նորից դուրս է պրծնում ազգային դրոշը։ Ռիլին ապշահար կանգնում է զգաստ ու պատիվ տալիս։ Դրոշակը ցած է իջնում։

ՌԻԼԻ— (Գլուխն է օրորում։ Մտախոհ)։ *Թե ինձ մնա, ես աշխարհում մենակ մի երկիր եմ ընդունում՝ մերը։ Ինձ որ հարցնեք, Եվրոպան թեկուզ գրողի փա՛յ դառնա։* (Մի նոր մետաղադրամ է գցում մեքենայի ճեղքը, հենց այն է ուզում է լծակը սեղմել, երբ դրոշակը նորից դուրս է պրծնում։ Կատաղությունից իրեն ուտելով՝ կանգնում է զգաստ, պատիվ տալիս։ Նիֆիին, աղերսագին)։ *Այ Նիք, էս մեքենան շարքից դուրս է եկել։*

ՆԻՔ— (Մռայլամած)։ *Բռունցքով խփիր կողքին։*

Ռիլին ամբողջ ուժով մի հարված է հասցնում մեքենայի կողին։ Հետևանքը լինում է այն, որ դրոշակն անընդմեջ բարձրանում-իջնում է։ Ռիլին էլ շարունակ պատիվ է տալիս։

ՌԻԼԻ— (Պատիվ տալով)։ *Այ Նիք, ախր բան է փչացել։*

Հանկարծ խաղամեքենան ինքն իրեն հանդարտվում է։ Ռիլին գաղտագողի, ասես մեքենայից թաքուն, մի ուրիշ ինչ սենթանոց է մտցնում ճեղքը և նոր խաղ սկսում։

Հեռվից լսվում է ատրճանակի կրակոց, որին ճիշտ հաշվարկված ընդմիջումով հաջորդում է երկրորդը: Նիքը վազում է դուրս:

Մտնում է Լրագրավաճառ տղան, գալիս է Ջոյի սեղանի կողմը: Ջգում է, որ մի վատ բան է պատահել:

ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌ— (Կամացուկ): *Թերթ չե՞ք ուզում, միստր։*

Ջոն չի լսում նրան: Տղան ճետ է քաշվում, ուշադիր նայում Ջոյին՝ նրա տրամադրությունը բարձրացնելու ցանկությամբ լեցուն: Աչքն ընկնում է նվագարկիչին, մոտենում է, մի մետաղադրամ գցում ճեղքը՝ նույս ունենալով, թե երաժշտությունը սիրտ կտա Ջոյին: Նստում է: Աչքերը ճառում է Ջոյին:

Լսվում են երաժշտության առաջին ճնշյունները: «Միսուրի» վալսն է:

Մտնում է Հարբեցողը, դեսուդեն պտտվում: Ի վերջո, նստում է:

Վերադառնում է Նիքը:

ՆԻՔ— (Հրճվանքով): *Ջո, Բլիքին սպանե՞լ են։ Ինչ-որ մեկը կրակել է նրա վրա, իսկ ոստիկանները չեն էլ փորձում պարզել, թե ով է եղել։*

Ջոն չի լսում:

(Հետ-ճետ է գնում՝ հայացքը Ջոյից չկտրելով: Գոչում է): *Ջո՛։*

ՋՈ— (Աչքերը բարձրացնելով): *Ի՞նչ կա։*

ՆԻՔ— *Բլիքին սպանել են։*

ՋՈ— *Բլիքի՞ն։ Սպանե՞լ են։ Ինչ լա՜վ է։ Թե չէ էս գրողի տարած ատրճանակից բան դուրս չէր գա։ Ախր Թոմին զգուշացրել էի, որ լավը առնի։*

ՆԻՔ— (Վերցնում է ատրճանակն ու նայում): *Ջո, չէ՞ որ դու էլ էիր ուզում էդ մարդուն սպանել։*

Խոնանոցից դուրս է գալիս Հարին: Ջոն ատրճանակը վերցնում է Նիքից և դնում պիչակի գրպանը:

Իմ կողմից մի շիշ շամպայն եմ դնում։ (Գնում է վաճառասեղանի կողմը):

Ջոն վեր է կենում, կախիչից վերցնում է գլխարկն ու վերարկուն: Լրագրավաճառ տղան ցատկում է տեղից, օգնում նրան վերարկուն հագնելու:

ՆԻՔ— *Ի՞նչ է պատահել, Ջո։*

ՋՈ— *Ոչինչ։ Ոչինչ։*

ՆԻՔ— *Բա շամպա՞յնը։*

ՋՈ— *Շնորհակալ եմ։* (Գնալով դեպի դուռը):

ՆԻՔ— *Դեռ տասնմեկը չկա։ Ո՞ւր ես գնում, Ջո։*

ՋՈ— *Ջգիտեմ։ Ոչ մի տեղ։*

ՆԻՔ— *Վաղը կհանդիպե՞նք։*

ՋՈ— *Չգիտեմ։ Հազիվ թե։*

Մտնում է Քիտ Քարսոնը, մոտենում Ջոյին։ Առանց խոսքի իբար հասկանալով՝ Ջոն ու Քիտ Քարսոնը նայում են միմյանց։

ՋՈ— *Հենց նոր ինչ-որ մեկը մարդ է սպանել։ Ո՞նց եք։*

ՔԻՏ ՔԱՐՍՈՆ— *Կյանքումս սրանից լավ երբեք չեմ եղել։* (Բարձրաձայն, պարծենկոտությամբ, բայց խոժոռադեմ)։ *Ժուկով-ժամանակով, դու էլ իմ որդին ես, մի մարդ սպանեցի։ Սան Ֆրանցիսկոյում էր։ Երկու փամփուշտով գետին փռեցի։ Վայ թե 1939 թվին էր։ Հոկտեմբեր ամսին։ Անունը Բլիք էր, թե Գլիք էր, միտս չեմ պահել։ Հենց որ տեսա, թե ոնց է կանանց հետ հորդ ու բորդ անում, էլ չհամբերեցի։ Գնացի տուն, հին-հին օրերից հիշատակ մնացած սադափե կոթով ատրճանակս վերցրի ու սկսեցի ճամփա պահել Փասիֆիք փողոցում։ Տեսնեմ՝ գալիս է։ Երկու անգամ, իրար հետևից որ չթրիկացրի, ինքն իր հացը կերավ։ Սիրուն ատրճանակ ունեի, բայց ճա՞րս ինչ՝ ջուրը գցեցի։*

Հարին, Նիմը, Արաբն ու Հարբեցողը խմբվել են Քիտ Քարսոնի շուրջը։ Ջոն պրպտում է գրպանները, հանում ատրճանակը, դնում Քիտ Քարսոնի ձեռքը, հիացմունքով ու սիրով նայում նրան։ Դանդաղաքայլ մոտենում է փողոց տանող աստիճաններին, շուռ գալիս ու թափահարում ձեռքը։ Քիտ Քարսոնը, ապա և մյուսները, մեկ առ մեկ թափահարում են ձեռքերը։

Խաղամեքենան նորից սկսում է իր գեղապանծ, նայրենասիրական ընտել հանդիսանքը։ Դրոշակը դուրս է ցցվում, լույսերն առկայծում են, ճնշում է «Ամերիկա» երգի մեղեդին։

Վրա է հասնում պիեսի ավարտը։

Վարագույր

ՀԵՂ, ՈՎ ԿԱ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Տղա
Աղջիկ
Տղամարդ
Երկրորդ տղամարդ
Կին

Գործողությունը կատարվում է Թեքսասի նահանգի Մատադոր քաղաքում։

Գավառական քաղաքի փոքրիկ բանի խցում մի տղա, գդալն առած, մեջքեղ-մեջ թխկթխկացնում է ճատակը: Մի քիչ թխկթխկացնելով, ասես ճգնում էր ինչ-որ բան հեռազրել, նա վեր է կենում ու գնում-գալիս խցում: Ի վերջո, կանգնում է խցի մեջտեղը և երկար ժամանակ մնում քարացած: Շոշափում է գլուխը, կարծես վիրավոր լինի: Նայում է շուրջը կողմը, ապա աղաղակում:

ՏՂԱ— *Հե՜յ, ո՞վ կա...*

Դադար:

Հե՜յ... ո՞վ կա...

Երկարատև դադար:

Հե՜յ... ո՞վ կա, գոնե մեկնումե՜կը...

Մի աղջկա ձայն է լսվում, քաղցր ու անուշ ձայն·

ՁԱՅՆԸ— *Էհե՜յ...*

ՏՂԱ— *Դո՞ւ ես, Քեյթի:*

ՁԱՅՆԸ— *Չէ... ես Էմիլին եմ:*

ՏՂԱ— *Ո՞վ:* (Անհամբեր): *Հե՜յ, ո՞վ կա:*

ՁԱՅՆԸ— *Էմիլին:*

ՏՂԱ— *Ի՞նչ Էմիլի: Ես Էմիլի անունով աղջիկ չգիտեմ: Չլինի՞ Սալինասում տեսածս աղջիկն ես, մի երեք տարի առաջ հանդիպեցինք, հիշո՞ւմ ես, Սեմի բարում:*

ՁԱՅՆԸ— *Չէ... ես Էստեղի ճաշ եփողն եմ: Խոհարարուհին: Սալինասում երբեք չեմ եղել: Չգիտեմ էլ որտեղ է:*

ՏՂԱ— *Ասում ես՝ Էստեղի ճաշ եփո՞ղն ես:*

ՁԱՅՆԸ— *Հա:*

ՏՂԱ— *Է՜, բա ինչո՞ւ չես մի համով բան եփում, որ մարդ մատները հետն ուտի:*

ՁԱՅՆԸ— *Ինչ որ կարգադրում են, էն էլ եփում եմ:* (Դադար): *Տխրո՞ւմ ես մենակ:*

ՏՂԱ— Անտեր շան նման։ Չե՞ս լսում ոնց եմ կոկորդս պատռում։ Հե՜յ, ո՞վ կա։

ԶԱՅՆԸ— Ո՞ւմ ես կանչում։

ՏՂԱ— Է՜հ... երևի ոչ ոքի։ Անընդհատ մտածում էի ում նամակ գրեմ, բայց ոչ մեկը միտքս չընկավ։

ԶԱՅՆԸ— Բա Քեյթի՞ն։

ՏՂԱ— Քեյթի անունով աղջիկ չգիտեմ։

ԶԱՅՆԸ— Էլ ինչո՞ւ էիր ասում. «Դո՞ւ ես, Քեյթի»։

ՏՂԱ— Քեյթին լավ անուն է։ Ինձ միշտ դուր է եկել։ Չնայած երբեք էլ Քեյթի անունով աղջիկ չեմ ճանաչել։

ԶԱՅՆԸ— Իսկ ես ճանաչել եմ։

ՏՂԱ— Ճի՞շտ։ Ինչ տեսակ աղջիկ էր։ Բարձրահասա՞կ էր, թե՞ փոքրիկ-մոքրիկ։

ԶԱՅՆԸ— Փոքրիկ-մոքրիկ էր։

ՏՂԱ— Հե՜յ, լսո՞ւմ ես ինձ։ Իսկ դո՞ւ ինչ աղջիկ ես։

ԶԱՅՆԸ— Ա՜հ, ի՞նչ իմանամ։

ՏՂԱ— Քեզ ոչ ոք չի՞ ասել։ Ոչ մեկը նման բաների մասին հետդ չի՞ խոսել։

ԶԱՅՆԸ— Ի՞նչ բաներ։

ՏՂԱ— Դու գիտես։ Չի՞ խոսել։

ԶԱՅՆԸ— Չէ, չի խոսել։

ՏՂԱ— Այ քեզ դմբոներ, ո՜նց էլ չեն խոսել։ Ես ձայնիցդ գլխի ընկա. դու հրաշալի աղջիկ ես։

ԶԱՅՆԸ— Գուցե էդպես է, գուցեև չէ։

ՏՂԱ— Ես դեռ ոչ մի անգամ սխալված չկամ։

ԶԱՅՆԸ— Հա՞։ Երևում է։ Դրա համար էլ հիմա բանտում ես։

ՏՂԱ— Եղած-չեղածը թյուրիմացություն է։

ԶԱՅՆԸ— Բա ասում են բռնաբարություն է։

ՏՂԱ— Չէ... Սուտ է։

ԶԱՅՆԸ— Ախր խոսքները մեկ արած՝ ասում են ճիշտ է։

ՏՂԱ— Հիմարի գլուխներ։

ԶԱՅՆԸ— Է՜, ուրեմն կրակի մեջ ես ընկել։ Վախենո՞ւմ ես։

ՏՂԱ— Մահու չափ։ (Հանկարծ)։ Հե՜յ, ո՞վ կա։

ԶԱՅՆԸ— Ի՞նչ ես անընդհատ նույն բանը գոռում։

ՏՂԱ— Տխրում եմ մենակ։ Տխրում եմ, տխրում անտեր շան նման։ (Երկար ու ձիգ)։ Հե՜յ... ո՞վ կա...

Կողքից, բանտախցի դիմաց, հայտնվում է մի աղջիկ։ Հասարակ աղջիկ է՝ հասարակ շորերով։

ԱՂՋԻԿ— Ես էլ եմ տխրում։

ՏՂԱ— (Շրջվում է, նայում նրան)։ Հա՞..., ձի՞շտ ես պսում։ Դու է՞լ ես տխրում։

ԱՂՋԻԿ— Ըհը... Ես էլ եմ տխրում անտեր շան նման։

ՏՂԱ— Ո՞ւմ համար ես տխրում։

ԱՂՋԻԿ— Չգիտեմ։

ՏՂԱ— Ես էլ չգիտեմ։ Հենց որ քեզ խոթում են սրա պես մի ծակուռ, ինչքան ծանոթ ու անծանոթ աղջիկ կա, միտքդ ես բերում ու տրխ-րում ես ուզես-չուզես։

ԱՂՋԻԿ— Դե, պարզ է, բա ի՞նչ։

ՏՂԱ— Ո՛ւհ, սիրտդ պատռվում է։ (Դադար)։ Իսկ դու սիրուն աղջիկ ես, գիտե՞ս։

ԱՂՋԻԿ— Ասում ես, էլի։

ՏՂԱ— Չէ, լուրջ եմ ասում... սիրուն ես։ Կույրն էլ կտեսնի։ Դու երևի աշխարհի ամենասիրուն աղջիկն ես։

ԱՂՋԻԿ— Իսկի էլ ամենասիրունը չեմ... դու լավ գիտես։

ՏՂԱ— Չէ, հենց ամենասիրունն ես։ Էսքան թափառել եմ, բայց քեզնից սիրուն աղջիկ կյանքումս չեմ տեսել։ Ես գիտեի, որ Թեքասում բախտս կբերի։

ԱՂՋԻԿ— Բախտդ կբերի՞։ Ախր բանտ ես ընկել։ Մի ամբողջ ո՛հմակ վրադ ատամ է կրճտացնում։

ՏՂԱ— Ա՛հ, շատ պետքս է։ Մի կերպ դուրս կպրծնեմ։

ԱՂՋԻԿ— Ո՞վ իմանա։

ՏՂԱ— Չէ, ամեն ինչ լավ կլինի, մանավանդ սրանից հետո։

ԱՂՋԻԿ— Ինչո՞ւ մանավանդ սրանից հետո։

ՏՂԱ— Որովհետև հանդիպեցի քեզ։ Հիմա գոնե մի թանկ բան ունեմ։ Գիտե՞ս, մինչև էստեղ ընկնելս հաստ ու բարակ ինձ համար մի գին էր։ Հոգնել էի արդեն։ (Դադար)։ Հոգնել էի լավ կյանքի հետևից վազ տալով, ձեռքս էդպես էլ ոչ մի բան չընկավ։ Բայց հիմա հոգնա-ծությունս միանգամից անցավ։ (Հանկարծ)։ Հե՛յ, ո՞վ կա։

ԱՂՋԻԿ— Ո՞ւմ ես կանչում։

ՏՂԱ— Քեզ։

ԱՂՋԻԿ— Բայց ես էստեղ եմ։

ՏՂԱ— Գիտեմ։ (Կամացուկ)։ Հե՛յ, ո՞վ կա։

ԱՂՋԻԿ— Էհե՛յ։

ՏՂԱ— Ախ, իմ անուշ աղջիկ։ (Դադար)։ Ես ուզում եմ ամուսնանալ քեզ հետ։ Ուզում եմ երկուսով գնանք էստեղից։ Քեզ կտանեմ

Սան Ֆրանցիսկո։ Ես մորիցս նոր ծնվեցի։ Տես ի՞նչ փողեր եմ շփելու։ Խելքս ոնց որ պետքն է գլուխս կհավաքեմ ու շահածս փողը չեմ տա քամու բերան։ Մենք ինչքան ասես փող կունենանք։

ԱՂՋԻԿ— Հաստա՞տ։

ՏՂԱ— Հաստատ, հաստատ։ Անունդ ի՞նչ է։

ԱՂՋԻԿ— Էմիլի։

ՏՂԱ— Գիտեմ։ Բայց էմիլի ի՞նչ։

ԱՂՋԻԿ— Էմիլի Սմիթ։

ՏՂԱ— Ազնիվ խո՞սք։

ԱՂՋԻԿ— Ազնիվ խոսք, իմ անունը էմիլի Սմիթ է։

ՏՂԱ— Ախ, դու աշխարհի ամենաանուշիկ աղջիկն ես։

ԱՂՋԻԿ— Ինչո՞ւ։

ՏՂԱ— Չգիտեմ ինչու, բայց դու աշխարհի ամենաանուշիկ աղջիկն ես, պրծավ գնաց։ Որտե՞ղ ես ծնվել։

ԱՂՋԻԿ— Թեքսասի Մատադոր քաղաքում։

ՏՂԱ— Իսկ դա որտե՞ղ է։

ԱՂՋԻԿ— Հենց էստեղ։

ՏՂԱ— Մատադորը սա՞ է։

ԱՂՋԻԿ— Հա, սա է։ Քեզ Ուիլինգից են էստեղ բերել։

ՏՂԱ— Ուրեմն ես... Ուիլինգո՞ւմ եմ եղել։

ԱՂՋԻԿ— Չես էլ իմանո՞ւմ որ քաղաքում ես եղել։

ՏՂԱ— Բոլոր քաղաքները իրար նման են։ Ոչ մի տարբերություն։ Ուիլինգն ինչքա՞ն է հեռու էստեղից։

ԱՂՋԻԿ— Տասնվեց-տասնյոթ մղոն կլինի։ Դու գլխի չընկա՞ր, որ քեզ տեղափոխում են։

ՏՂԱ— Ո՞նց գլխի ընկնեի, խելքս մաղվել էր... ուշագնաց էի։ Չգիտեմ ով էր, կապարե խողովակով թե ինչով գլխիս հասցրեց։ Չհասկացա ինչու խփեց։

ԱՂՋԻԿ— Բռնաբարության համար... էդպես էին ասում։

ՏՂԱ— Ինչե՞ր են հնարել։ (Նվարած, կարծես իմիֆն իրեն)։ Նա ինձանից փող էր ուզում։

ԱՂՋԻԿ— Փո՞ղ։

ՏՂԱ— Հա։ Որ իմանայի էդ տեսակ կին է, ճիշտ եմ ասում, սուսուփուս կթողնեի, կգնայի, ինձ համար զբոսայգում մի տեղ կճարեի, մուշմուշ կքնեի։

ԱՂՋԻԿ— Ուրեմն նրա ուզածը դա՞ էր... փո՞ղ։

ՏՂԱ— Հա։ Ամբողջ երկիրը ոտնատակ ես տալիս, թե բախտիդ դուռը

մի օր պիտի բացվի, մի քոսոտ քաղաքից մյուսն ես քարշ գալիս ինչ է՝ մի բարի մարդու պատահես, իսկ սա արի տես, ուզում է քեզնից փող պլոկած լինել։ Ես մտածում էի՝ նա էլ է տխրում։ Ինքն էր ասում։

ԱՂՋԻԿ— Գուցեև տխրում էր։

ՏՂԱ— Չէ, նա ուրիշ պտուղ էր։

ԱՂՋԻԿ— Բայց որ ամեն ինչ էդպես չստացվեր, երևի երբեք էլ չհանդիպեի քեզ։

ՏՂԱ— Է՛հ, ի՞նչ իմանաս... միգուցե ես հենց էս կողմերը գայի ու հանդիպեի քեզ քաղաքում մի տեղ։ Միանգամից կճանաչեի։

ԱՂՋԻԿ— Կճանաչեի՞ր։ Ի՞նձ։

ՏՂԱ— Բա ո՞նց։ Հերիք է աչքս քեզ վրա ընկներ, տեղնուտեղը կճանաչեի։

ԱՂՋԻԿ— Ասենք թե ճանաչեիր, դրանից ի՞նչ կփոխվեր։

ՏՂԱ— Դու կդառնայիր իմը, այ թե ինչ կփոխվեր։

ԱՂՋԻԿ— Ազնիվ խո՞սք։

ՏՂԱ— Ազնիվ խոսք, երդվում եմ։

ԱՂՋԻԿ— Բանտում ես, դրա համար էլ էդպես ես ասում։

ՏՂԱ— Չէ, դա կապ չունի։ Դու կազմ ու պատրաստ ինձ սպասիր։ Մենք էստեղից կպոկվենք ուղիղ Սան Ֆրանցիսկո։

ԱՂՋԻԿ— Դու պարզապես տխրում ես մենակ։

ՏՂԱ— Ամբողջ կյանքումս էլ տխրել եմ մենակ... դրան ճար ու հնար չկա... Բայց ես ու դու՝ երկուսով, գիտե՞ս ինչ կյանք կանենք։ Դու բախտիս կապված դոնները կբացես։ Գիտեմ, կբացես։

ԱՂՋԻԿ— Ինչի՞դ է բախտը, որ ընկել ես հետևից։

ՏՂԱ— Ես խաղամոլ եմ, բախտախնդիր։ Աշխատելը իմ գործը չի։ Բախտս պիտի բերի, թե չէ բանի պետք չեմ։ Տարին տասներկու ամիս բախտս չի բերել։ Արդեն երկու տարի է, դեսուդեն եմ ընկել։ Ի՞նչ օգուտ. բախտս կապվել է ու կապվել։ Դրա համար էլ Ուիլինգում գլխիս փորձանք եկավ։ Հո պատահականություն չէ՞ր։ Չար բախտն ամենուր հետևում է ինձ։ Դրա երեսից է, որ հիմա էստեղ եմ ու դեռ քիչ էր մնում գլուխս էլ ջնջեն։ Կա-չկա նրա քոփակի արածն է։

ԱՂՋԻԿ— Հո՞ր։

ՏՂԱ— Չէ, մարդու։ Նրա պես կին ունենայի, մի օր չէի պահի, դուրս կշպրտեի։

ԱՂՋԻԿ— Կարծում ես, որ ես քո կողքին լինեմ, բախտդ կբերի՞։

ՏՂԱ— Իհարկե, կբերի։ Ի՞նչ մի լավ բան է թրև գալ փողոցներում ու անընդհատ փնտրել մեկին, առանց իմանալու՝ կգտնե՞ս, թե չէ։

Միշտ մեկնումեկը պիտի լինի կողքիդ, թե՛ ձմռան ցրտին, թե՛ գարնան ծաղկունքին, թե՛ ամռան շոգին, երբ լողանալն է սրտիդ ուզածը. տարվա բոլոր եղանակներին, անձրևին, ձյանը, ուզածդ ժամանակ, միշտ մեկնումեկը պիտի լինի կողքիդ, որ քայլի քեզ հետ մինչև մահվան դուռը։ Լավ մարդ պիտի լինի. մեկը, որ վաղուց ճանաչում է քեզ։ Միշտ էլ մեկը պիտի լինի կողքիդ, որ թեկուզ գիտի՝ դու վատն ես, լավը չես, բայց սիրում է քեզ։ Ես վատն եմ, ի՞նչ արած։ Եթե գաս ինձ հետ, կդառնամ ամենալավ մարդը։ Էլ վատը չեմ լինի։ Հասկանո՞ւմ ես, հենց որ փողի տեր ես դառնում, էլ վատը չես կարող լինել... դու կարգին մարդ ես, որովհետև քո փոխարեն արդեն փողն է խոսում։ Ես շատ փող կունենամ, իսկ դու կլինես աշխարհի ամենաչքնաղ աղջիկը։ Քեզ թևանցուկ արած՝ հպարտ-հպարտ ման կգամ Սան Ֆրանցիսկոյում, ու մարդիկ շրջվելով՝ կնայեն մեզ։

ԱՂՋԻԿ— Կարծում ես կնայե՞ն։

ՏՂԱ— Քիթս կկտրեմ, թե չնայեն։ Հենց հագնեմ-կապեմ ու քեզ թևանցուկ անեմ, կտեսնես, Քեյթի, թե ոնց կշրջվեն։ Նայելուց չեն կշտանա։

ԱՂՋԻԿ— Քեյթի՞։

ՏՂԱ— Հա, սրանից հետո անունդ Քեյթի է։ Դու առաջին աղջիկն ես, որին Քեյթի եմ ասում։ Էս անունը հենց քեզ համար էի պահել։ Լավ չի՞։

ԱՂՋԻԿ— Լավ է։

ՏՂԱ— Ես վաղո՞ւց եմ էստեղ։

ԱՂՋԻԿ— Երեկ գիշերվանից։ Բայց մինչև առավոտ ուշքի չէիր գալիս։

ՏՂԱ— Ժամը քանի՞սն է։ Ինը կլինի՞։

ԱՂՋԻԿ— Տասի կողմն է արդեն։

ՏՂԱ— Էս քնձոոտ խցի բանալին մո՞տդ չի։

ԱՂՋԻԿ— Չէ, ոչ մի բանալի ինձ չեն վստահում։

ՏՂԱ— Չե՞ս կարող մի հնարքով ճարել։

ԱՂՋԻԿ— Չէ, չեմ կարող։

ՏՂԱ— Միգուցե փորձե՞ս։

ԱՂՋԻԿ— Ինձ բանալիներին մոտ էլ չեն թողնում։ Իմ անելիքը եփելթափելն է, թե բանտարկյալ է լինում։ Հավաքում եմ, մաքրում, գործ-մորթ եմ անում։

ՏՂԱ— Ախր ուզում եմ դուրս գալ էստեղից։ Ո՞վ է էս որջի տեր-տիրականը, դու չե՞ս ճանաչում։

ԱՂՋԻԿ— Ճանաչում եմ, բայց նա բաց չի թողնի քեզ։ Ասում են քեզ ուրիշ քաղաք են տանելու։

ՏՂԱ— Հա՞։ Ինչի՞ համար։

ԱՂՋԻԿ— Որովհետև վախենում են։

ՏՂԱ— Ի՞նչ կա վախենալու։

ԱՂՋԻԿ— Վախենում են ուիլինգցիները գիշերը վրա տան ու ներս թափվեն բանտ։

ՏՂԱ— Չէ մի։ Ինչի՞ համար պիտի վրա տան։

ԱՂՋԻԿ— Իբր չգիտես, թե ինչի համար։

ՏՂԱ— Դե, ասենք թե գիտեմ։

ԱՂՋԻԿ— Չե՞ս վախենում։

ՏՂԱ— Պարզ է, վախենում եմ։ Մարդ ոչ մի բանից էնքան չի վախենում, ինչքան անհայտությունից, երբ չգիտի, թե գլխին ինչ է գալու։ Խելոքի հետ կարող ես վիճել, բայց հիմարների հետ ի՞նչ լկիտի վիճես. թեկուզ պայթես էլ, իրենց էշն են քշում։ Մի բան արա, դուրս գամ էստեղից։

ԱՂՋԻԿ— Ի՞նչ կա իմ ձեռքին։

ՏՂԱ— Գոնե գտիր բանտապետին, ասա, որ հետը խոսելիք ունեմ։

ԱՂՋԻԿ— Նա տուն է գնացել։ Բոլորը գնացել են։

ՏՂԱ— Ուրեմն ես էստեղ մեն-մենա՞կ եմ մնացել։

ԱՂՋԻԿ— Հա, էդպես է դուրս գալիս... եթե ինձ չհաշվենք։

ՏՂԱ— Խելա՞ռ են, ի՞նչ են... մեկնումեկը պիտի մնա էս անտեր տեղը, չէ՞։

ԱՂՋԻԿ— Ոչ ոք էլ չի մնում, բոլորը տուն են գնում։ Ես էլ եմ հավաքում-մաքրում ու տուն գնում։ Էս իրիկուն մի քիչ ոտքս կախ գցեցի։

ՏՂԱ— Ինչո՞ւ։

ԱՂՋԻԿ— Ուզում էի հետդ խոսել։

ՏՂԱ— Ինչի՞ մասին։

ԱՂՋԻԿ— Է՛հ, չգիտեմ։ Գիշերը աչքս չէի կտրում քեզնից։ Քնի մեջ խոսում էիր։ Համ էլ ասացիր՝ քեզ դուր եմ գալիս։ Բայց մտքովս չէր անցնում, թե ուշքի գալուցդ հետո էլ դուր կգամ քեզ։

ՏՂԱ— Ճի՞շտ։ Ինչո՞ւ պիտի դուր չգայիր։

ԱՂՋԻԿ— Ի՞նչ իմանամ։

ՏՂԱ— Ո՞նց թե։ Ախր դու հրաշք աղջիկ ես, գիտե՞ս։

ԱՂՋԻԿ— Ոչ ոք ինձ էդ տեսակ խոսքեր չի ասել։ Քաղաքի բոլոր տղերքը... նրանք... (Լռում է)։

ՏՂԱ— Ի՞նչ։ (Դադար)։ Ի՞նչ են անում նրանք։ Դե ասա... մի լռիր։

ԱՂՋԻԿ— *Ինձ ձեռ են առնում։*

ՏՂԱ— *Քե՞զ են ձեռ առնում։ Խելքները շա՞տ է հասնում։ Գնա ունեցած-չունեցածդ հավաքիր ու արի էստեղ։ Ես կտանեմ քեզ Սան Ֆրանցիսկո։ Քանի՞ տարեկան ես։*

ԱՂՋԻԿ— *Օ՜, արդեն մեծ եմ։*

ՏՂԱ— *Քանի՞ տարեկան... Սուտ չասե՛ս։ Տասնվե՞ց։*

ԱՂՋԻԿ— *Տասնյոթ։*

ՏՂԱ— *Դե լավ, հորդ ու մորդ էլ բեր։ Գնալուց առաջ մենք կամուսնանանք։*

ԱՂՋԻԿ— *Նրանք չեն թողնի, որ գամ։*

ՏՂԱ— *Ինչո՞ւ։*

ԱՂՋԻԿ— *Չգիտեմ, բայց չեն թողնի։ Հաստատ չեն թողնի։*

ՏՂԱ— *Հորդ ասա հիմարություն չանի, լսեցի՞ր։ Նա ի՞նչ է, ապարա-կապա՞ն։*

ԱՂՋԻԿ— *Չէ... ոչ մի բան էլ չի։ Պետությունից մի քիչ նպաստ է ստանում որպես հաշմանդամ, ինչ-որ վնասվածք ունի։ Ասում է՝ կողքն է ցավում։ Չգիտեմ ինչ է։*

ՏՂԱ— *Ի՜հ, փչանի մեկն է։ Չէ, ես կտանեմ քեզ էստեղից, հասկացա՞ր։*

ԱՂՋԻԿ— *Աշխատածս փողն էլ ձեռքիցս խլում է։*

ՏՂԱ— *Իրավունք չունի։*

ԱՂՋԻԿ— *Գիտեմ, բայց խլում է։*

ՏՂԱ— (Կարծես ինքն իրեն)։ *Ինչ էլ որ լիներ, դու էս քաղաքում չպիտի ծնվեիր ու էդ տեսակ հայր էլ չպիտի ունենայիր։*

ԱՂՋԻԿ— *Մեկ-մեկ էնպես մեղքս է գալիս։*

ՏՂԱ— *Իբր մարդ ես գտել, մեղքդ էլ գալիս է։* (Մատը ցցելով)։ *Մի օր, ոնց որ պետքն է, կխոսեմ հորդ հետ։ Երկու խոսք կասեմ։*

ԱՂՋԻԿ— *Դու կասես, երևում է։*

ՏՂԱ— (Հանկարծ)։ *Հե՜յ, ո՞վ կա... Է՜հ, ուր էր թե կարենայիր բանտապետին բերել էստեղ, գար, բաց թողներ ինձ։*

ԱՂՋԻԿ— *Ի՞նչ անեմ, չեմ կարող։*

ՏՂԱ— *Ինչո՞ւ չես կարող։*

ԱՂՋԻԿ— *Ոչ ոք ինձ էստեղ բանի տեղ չի դնում... օրական հիսուն սենթ են տալիս ու վերջ։ Իսկ ես տանջվում-չարչարվում եմ... պատահում է, տասներկու ժամ ոտքի վրա եմ լինում։ Մեկը չկա, որ ինձ բանի տեղ դնի։*

ՏՂԱ— *Ինչքա՞ն են փող տալիս։*

ԱՂՋԻԿ— *Հիսուն սենթ։*

ՏՂԱ— (Ասես արար աշխարհին դիմելով)։ *Ո՞վ է լսել։ Հենց մենակ քեզ*

տեսնելու համար նրանք պիտի փող տան։ Քո շնչած օդը շնչելու համար։ Չեմ հասկանում։ Մեկ-մեկ ուղղակի հավատս չի գալիս, թե էս բոլորի վերջը պիտի գա։ Քեյթի, մի բան ա՛րա, դուրս գամ էստեղից։ Ես վախենում եմ։

ԱՂՋԻԿ— *Չգիտեմ ինչ անեմ։ Տեսնես՝ չե՞մ կարող դուռը կոտրել։*

ՏՂԱ— *Չէ, ուժդ չի պատի։ Մուրճից բանից չկա՞։*

ԱՂՋԻԿ— *Ավելից բացի, ուրիշ բան չկա։ Երևի ավելն էլ են փակի տակ դրել։*

ՏՂԱ— *Գնա տես ոչ մի բան չե՞ս կարող գտնել։*

ԱՂՋԻԿ— *Լավ։* (Գնում է):

ՏՂԱ— *Հե՜յ, ով կա...* (Դադար): *Հե՜յ... ո՞վ կա... գոնե մեկնումե՜կը...* (Դադար): *Բանտարկե՜լ են։* (Արհամարհանքով): *Բռնաբարությո՜ւն։ Էդ իրենք են բռնաբարում լույս աշխարհ եկած ամեն մի լավ բան։* (Հանկարծ): *Հե՜յ, ո՞վ կա...*

ԱՂՋԻԿ— (Վերադառնալով): *Ոչ մի բան չեն թողել։ Ամեն ինչ փակել, գնացել են։*

ՏՂԱ— *Գոնե ծխելու բան լիներ։*

ԱՂՋԻԿ— *Ամեն ինչ փակ է. բոլոր դարակները, պահարանի դռները... ամեն, ամեն ինչ։*

ՏՂԱ— *Վա՛յ, ո՞նց եմ ուզում ծխել, ուշքս գնում է։*

ԱՂՋԻԿ— *Միգուցե կարենամ մի տուփ սիգարետ ճարել։ Դեղատունը բաց կլինի։ Էստեղից մի մղոն է։*

ՏՂԱ— *Մի մղո՞ն։ Չեմ ուզում էդքան երկար մենակ մնալ։*

ԱՂՋԻԿ— *Ես վազեվազ կգնամ, վազեվազ էլ հետ կդամ։*

ՏՂԱ— *Դու ամենալավ աղջիկն ես աշխարհի երեսին։*

ԱՂՋԻԿ— *Ի՞նչ սիգարետ ես ուզում։*

ՏՂԱ— *Ա՜հ, ինչ որ լինի... «Չեսթերֆիլդ», «Քեմըլ», թեկուզ «Լաքի Սթրայք»... ինչ կպատահի։*

ԱՂՋԻԿ— *Ես բոպեիս կբերեմ։* (Շրջվում է, որ վազի):

ՏՂԱ— *Բա փո՞ղը։*

ԱՂՋԻԿ— *Մոտս մի քիչ կա։ Քսանհինգ սենթ հոգեպահուստ ունեմ։ Ես ամբողջ ճանապարհը վազեվազ կգնամ։* (Ուզում է գնալ):

ՏՂԱ— *Սպասիր, մոտ արի։*

ԱՂՋԻԿ— (Մոտենալով նրան): *Ի՞նչ է եղել։*

ՏՂԱ— *Տուր ձեռքդ։* (Բռնում է աղջկա ձեռքը և ժպիտը դեմքին նայում նրա ձեռքին: Մոտեցնում է շուրթերին ու համբուրում): *Մահու չափ վախենում եմ։*

ԱՂՋԻԿ— *Ես էլ եմ վախենում։*

ՏՂԱ— *Վախենում եմ, որ էլ ոչ ոք չի գա էս խուլ, կորած-մոլորած քաղաքը ու չի գտնի քեզ։ Վախենում եմ, որ դու վարժվես ամեն ինչ չին ու հարմարվես։ Վախենում եմ երբեք չգնաս Սան Ֆրանցիսկո ու չստիպես մարդկանց, որ շուտ գան, քեզ նայեն։ Ի՞նչ կլինի... ինձ համար մի ատրճանակ ճարիր։*

ԱՂՋԻԿ— *Չգնա՞մ հորս ատրճանակը բերեմ։ Գիտեմ որտեղ է պահում։*

ՏՂԱ— *Գնա բեր։ Թքած սիգարետի վրա։ Վազիր ինչքան ոտքերումդ ուժ կա։*

Աղջիկը շրջվում է, դուրս վազում։ Տղան երկար ժամանակ մնում է խցի մեջտեղում կանգնած։ Աղջիկը վազեվազ հետ է գալիս։

ԱՂՋԻԿ— (Արտասվախեղդ)։ *Վախենում եմ։ Վախենում եմ էլ չտեսնեմ քեզ։ Եթե հետ գամ, ու դու էստեղ չլինես, ես...*

ՏՂԱ— *Հե՛յ, ո՞վ կա... գոնե մեկնումե՛կը...*

ԱՂՋԻԿ— *Քաղաքն էնպես ամայի է։ Ոչ մի շունչ չկա, մենակ քամին է տխուր-տրտում ոռնում։ Ես կմնամ էստեղ։ Չեմ թողնի քեզ տանեն։*

ՏՂԱ— *Լսիր, Քեյթի։ Ինչ ասում եմ՝ արա։ Գնա վերցրու ատրճանակն ու հետ արի։ Միգուցե նրանք էս գիշեր չգան։ Միգուցե ընդհանրապես չգան։ Ես ատրճանակը կպահեմ։ Հենց որ ինձ բաց թողնեն, էլի կտանես, կդնես տեղը։ Հետո երկուսով կգնանք էստեղից։ Դե՛, շուտ արա...*

ԱՂՋԻԿ— *Լավ։* (Դադար)։ *Քեզ մի բան եմ ուզում ասել։*

ՏՂԱ— *Ասա։*

ԱՂՋԻԿ— (Անհուն քնքշանքով)։ *Եթե հետ գամ, ու դու էստեղ չլինես, գոնե ատրճանակը ձեռքիս կլինի, գիտեմ ինչ կանեմ։*

ՏՂԱ— *Դու կրակել գիտե՞ս։*

ԱՂՋԻԿ— *Գիտեմ։*

ՏՂԱ— *Գժություն չանես։* (Առձակում է կոշիկը, միջից փող հանում)։ *Լսո՞ւմ ես, գժություն չանես։ Ըհը՛ ես փող ունեմ։ Ութսուն դոլար է։ Վերցրու էս փողը ու գնա Սան Ֆրանցիսկո։ Չորս կողմդ կփնտրես, կգտնես մեկնումեկին։ Հասկանո՞ւմ ես, խելքը գլխին մեկին, որ գոնե մի քիչ մարդու նման լինի։ Խոսք տուր. եթե հետ գաս ու ինձ էստեղ չգտնես, ատրճանակը դեն կշպրտես ու կգնաս Սան Ֆրանցիսկո։ Չորս կողմդ կփնտրես, կգտնես մեկնումեկին։*

ԱՂՋԻԿ— *Ես ոչ մեկին չեմ ուզում գտնել։*

ՏՂԱ— (Հապշտապ, հուսակտուր)։ *Դե՛, արա ինչ ասում եմ։ Կհանդիպենք Սան Ֆրանցիսկոյում։ Մյուս կոշիկիս մեջ էլ մի քիչ փող ունեմ։ Սան Ֆրանցիսկոյում ես քեզ կգտնեմ։*

ԱՂՋԻԿ— (Տարակուսանքով): *Սան Ֆրանցիսկոյո՞ւմ։*

ՏՂԱ— *Հա, հենց Սան Ֆրանցիսկոյում։ Դա է մեր տեղը։*

ԱՂՋԻԿ— *Ես միշտ ուզեցել եմ Սան Ֆրանցիսկոյի պես մեծ քաղաք գնալ... բայց ո՞նց պիտի մենակ գնայի։*

ՏՂԱ— *Դե, հիմա էլ մենակ չես, պա՞րզ է։*

ԱՂՋԻԿ— *Գոնե մի քիչ պատմիր, թե ինչ քաղաք է։*

ՏՂԱ— (*Հապնեպ, սկզբում գրեթե համբերատար, բայց հետզհետե ավելի դանդաղ, հուշերով տարված, ժպտադեմ*): *Դե, ամենակարևորը՝ խաղաղ օվկիանոսի ափին է... որ կողմդ նայես՝ շուր է։ Ջով, մշուշ ու ճայեր։ Աշխարհի բոլոր ծայրերից եկած նավեր։ Քաղաքը փռված է յոթ բլուրների վրա։ Նեղլիկ փողոցներով մեկ բարձրանում ես վեր, մեկ իջնում ներքև, ոլոր-մոլոր պտույտներ տալիս։ Ամեն գիշեր նավերի շչակները ոռնում են մշուշի մեջ։ Բայց մենք ականջ չենք դնի նրանց ոռնոցին։*

ԱՂՋԻԿ— (Տղայի խոսելու ընթացքում կամաց-կամաց մոտեցել է նրան): *Իսկ մարդիկ ուրի՞շ են Սան Ֆրանցիսկոյում։*

ՏՂԱ— *Մարդիկ ամեն տեղ էլ նույնն են։ Հենց սկսում են սիրել մեկնումեկին, նոր արդեն փոխվում են։ Սերը միակ բանն է, որ մարդկանց ուրիշ է դարձնում։ Իսկ Սան Ֆրանցիսկոյում շատերն են սիրում, բա՛։*

ԱՂՋԻԿ— *Ոչ մեկին աշխարհում էնքան չեն սիրում, ինչքան որ ես եմ քեզ սիրում։*

ՏՂԱ— (Շշուկով, ասես աշխարհին է դիմում): *Քո խոսքերը լսելուց հետո մարդ, թեկուզ մեռնի էլ, իրեն բախտավոր կզգա։ Դե, հիմա շտապիր։ Ու չմոռանաս. եթե հետ գաս ու ինձ էստեղ չգտնես, ե՛ս քեզ կգտնեմ Սան Ֆրանցիսկոյում։*

Աղջիկը մի պահ նայում է նրան, ապա հետ-հետ գնալով՝ շրջվում է ու վազում: Տղան տագնապահար ժպիտը դեմքին, անթարթ նայում է նրա հետևից: Հանկարծ նստում է ու գլուխը ձեռքերի մեջ առնում: Հեռվից լսվում է մոտեցող մեքենաների աղմուկ: Տղան ականջ է դնում: Մեքենաների դռները շրխկ-թրխկոցով բացվում են: Ինչ-որ մեկը բանալիով բացում է փայտե դուռը, ապա շրխկացնում, միջանցքից ոտնաձայներ են հասնում: Զգույշ քայլերով, կարծես անվստահ, բայց և ամբարտավան տեսքով, մտնում է մի տղամարդ:

ՏՂԱ—(Անսպասելիորեն վեր է թռչում տեղից և այնպես գոռում տղամարդու վրա, որ քիչ է մնում սրան սրտապատառ անի): *Դու ի՞նչ բանտապետ ես, տո գրողի՛ տարած։ Քո փոխարեն գործդ ո՞վ պիտի անի։ Դրա համար փող ես ստանում, չէ՞։ Դե շո՛ւտ, բաց թող ինձ։*

ՏՂԱՄԱՐԴ— *Բայց ես բանտապետը չեմ։*

ՏՂԱ— *Հա՞։ Բա ո՞վ ես, որ բանտապետը չես։*

ՏՂԱՄԱՐԴ— *Ամուսինը։*

ՏՂԱ— *Ամուսի՞նը որքա՞ն է, ես ոչ մի ամուսին-մամուսին չգիտեմ։*

ՏՂԱՄԱՐԴ— *Շատ լավ էլ գիտես։*

ՏՂԱ— *Հա՜, սպասիր, սպասիր...* (Դադար։ Տղամարդուն տնտղելով)։ *Դու չէի՞ր, որ երեկ գիշեր գլխիս հասցրիր։*

ՏՂԱՄԱՐԴ— *Հենց ես էի։*

ՏՂԱ— (Արդարացի վրդովմունքով)։ *Ի՞նչ է, քեզ ուրիշ անելիք չունե՞ս, որ բռնում ես, մարդկանց գլխին հասցնում։*

ՏՂԱՄԱՐԴ— *Ո՞վ իմանա։ Իսկ դո՞ւ, ի՞նչ է, ուրիշ անելիք չունե՞ս, որ... գլխիցդ մեծ գործեր ես բռնում։*

ՏՂԱ— (Գլուխը շոշափելով)։ *Քիչ էր մնում գլուխս երկու կես անեիր։ Քեզ ո՞վ է իրավունք տվել, որ մարդկանց գլուխը ջարդես։*

ՏՂԱՄԱՐԴ— (Հանկարծ զայրույթից պոռթկալով)։ *Դու իմ հարցի՛ն պատասխանիր։ Ի՞նչ ես գլխիցդ մեծ գործեր բռնում։*

ՏՂԱ— *Լսիր, է՛յ... ի՞նչ ես վրաս գոռում, փակի տակ եմ, դրա՞ համար։ Քո արևին ամուսին ես։ Կինդ կի՞ն է, որ ամուսին լինես։*

ՏՂԱՄԱՐԴ— (Հանում է ատրճանակը)։ *Ձենդ կտրի ը...*

ՏՂԱ— *Դե՛, կրակիր, ո՞ւմ ես սպասում...* (Հանդարտ)։ *Հարամ արա բոլորիդ ուրախությունը։ Ի՞նչ կասեն ընկերներդ։ Բա քեֆերը չի կոտրվի՞։ Ի՞նչ հաճույք է կախել արդեն մեռած մարդուն։*

Տղամարդը պահում է ատրճանակը։

Ես գիտեմ, եկել ես ասելու, թե ինչ պիտի անեք ինձ։ Բայց ասելու կարիք չկա։ Գիտեմ ինչ եք անելու։ Թերթ եմ կարդում, գիտեմ։ Բոլորը թափվում են մի մարդու վրա ու շանսատակ անում, չէ՞։ Շորերը ծվատում են ու ոտնակոխ տալիս, չէ՞։ Կանայք ու երեխաներն էլ աչքերը չորս արած նայում են։ Ի՞նչ է, էդպես չի՞։ Բայց քանի չեք սկսել ձեր տոնահանդեսը, արի ծուռ նստենք, շիտակ խոսենք։ Դուք գտնում եք, որ ձեզ անպատվություն են հասցրել։ Որտեղից որտեղ մի անծանոթ է եկել ձեր քաղաքը ու պատվազուրկ արել ձեր պարկեշտ, առաքինի ու անբասիր կանանց։ Դուք պարտավոր եք ամեն ինչ իր տեղը դնել։ Ախր դուք եք ընտանիքի սուրբ պահապանները, կրթում-դաստիարակում եք ձեր զավակներին։ (Հանկարծ)։ *Լսի՛ր... Ես չգիտեի, որ նա կինդ է։ Մտքովս էլ չէր անցնում, թե մեկնումեկի կինն է։*

ՏՂԱՄԱՐԴ— *Սո՛ւտ ես ասում։*

ՏՂԱ— *Մեկ-մեկ պատահում է... բայց հիմա ճիշտ եմ ասում։ Ուզո՞ւմ ես իմանալ, թե բանը ոնց եղավ։*

Տղամարդը չի պատասխանում։

Շատ լավ, ես քեզ ճշմարտությունը կասեմ, սուտ ասողը թող գետինը մտնի։ Նրա հետ ծանոթացա բարի կանգնակի մոտ։ Ներս մտավ թե չէ, եկավ, նստեց կողքիս։ Ինչքան ասես ազատ տեղեր կային, բայց նա նստեց իմ կողքին։ Չգիտեմ ով էր, փող գցեց նվագարկիչի մեջ, մի տղամարդ սկսեց երգել «Նյու Սան Անտոնիոյի վարդը»։ Նա էլ խոսք բացեց էդ երգի մասին։ Ինձ թվաց բարմենի հետ է խոսում։ Տեսա՝ չէ, սա նրան չի պատասխանում, ասի՝ ես պատասխանեմ։ Էդպես էլ ծանոթացանք։ Ոչ միտքս ծուռ էր, ոչ բան։ Երկուսով դուրս եկանք, սկսեցինք ման գալ։ Ու լսածս առաջին խոսքը սա էր. «Այ, էստեղ եմ ապրում»։

ՏՂԱՄԱՐԴ— *Ինչ պտուղն ես, է՞ ստերի տոպրակ։*

ՏՂԱ— *Ճշմարտությունը չե՞ս ուզում իմանալ։*

Տղամարդը չի պատասխանում։

Ասեմ քեզ։ Ինձ տուն հրավիրեց։ Միգուցե մտքին բան կար, միգուցե և չկար։ Է՛հ, ինձնից ի՞նչ էր գնում, ինձ համար մեկ էր. ի՞նչ տարբերություն՝ տխրում էր մենակ, թե ուրիշ բան էր մտքով անցկացնում։

ՏՂԱՄԱՐԴ— *Ինչ էլ պոչավոր ստե՞ր ես շարում։*

ՏՂԱ— *Ես ճիշտ եմ ասում։ Երևի կինդ էլ է դուրսը՝ ընկերներիդ հետ։ Կանչիր, թող գա։ Ես նրա դեմ ոչինչ չունեմ, ոչ էլ քո... կամ ձեզնից մեկնումեկի։ Կանչիր, հարցրու։ Դու սիրո՞ւմ ես նրան։*

Տղամարդը չի պատասխանում։

Հա՜, գործդ վատ է։

ՏՂԱՄԱՐԴ— *Մտքինդ ասա։*

ՏՂԱ— *Դե ի՞նչ ասեմ. դժվար թե սա առաջին անգամը լինի։*

ՏՂԱՄԱՐԴ— (Փութկոտ)։ *Ձենդ կտրի՛ր...*

ՏՂԱ— *Է՜, դու ինձնից լավ գիտես։ Միշտ էլ իմացել ես։ Ուղղակի ընկերներիցդ ես վախենում, ուրիշ ոչ մի բան։ Նա փող էր ուզում։ Դա էր ուզածը։ Եթե նրան փող տված լինեի, հիմա ի՞նչ էի կորցրել էստեղ։*

ՏՂԱՄԱՐԴ— (Բառերը դժվարությամբ արտասանելով)։ *Ինչքա՞ն էր ուզում։*

ՏՂԱ— *Չհարցրի՝ ինչքան։ Ասի՝ սխալվել եմ, իրեն մարդու տեղ եմ դրել։ Նա սպառնաց, որ ձայնը աշխարհով մեկ կանի, եթե փող չտամ։ Իսկ ես տալ-առնել չեմ սիրում, ոչ էլ սիրում եմ, որ ինձ սպառնում են, դրա համար էլ ասի, որ գրողի ծոցը կորչի։ Մեկ էլ ի՞նչ տեսնեմ. դուրս թռավ տանից ու հո չի ճվում-ճչում։* (Դադար)։ *Դե՛ հիմա դուրս արի ու նրանց ասա, որ ինձ ուրիշ բանտ տանեն... Դու էլ գնա տուն, եղած-չեղածդ հավաքիր ու հեռացիր նրանից։ Դու լավ մարդ ես, ուղղակի ընկերներիցդ ես վախենում։*

Տղամարդը ճորից է ճանում ատրճանակը։ Անհ ու դողի մեջ է։ Մի քայլ է անում տղայի կողմը, ապա երեք անգամ կրակում։ Տղան ընկնում է ծնկների վրա։ Տղամարդը շուտ է գալիս, փախչում։

ՏՂԱ— *Հե՛յ... ո՞վ կա...* (Երկտակվում է)։

Ներս է վազում աղջիկը և մեխվում տեղում՝ աչքերը տղայից չկտրելով։

ԱՂՋԻԿ— *Փողոցում էնքան մարդ է իրար գլխի լցվել. էլ տղամարդիկ, էլ կանայք, էլ երեխաներ... Ճարս կտրված՝ հետնաբակի լուսամուտով մտա։ Ատրճանակը չգտա։ Ամեն ինչ տակնուվրա արի, չկա ու չկա։ Քեզ ի՞նչ է եղել։*

ՏՂԱ— *Ոչինչ... ոչինչ։ Ամեն ինչ կարգին է... Լսիր։ Լսի՛ր, Քեյթի։ Հեռացի՛ր էստեղից։ Մտածդ տեղով դուրս արի ու վազիր... Ինչքան ուժ ունես, վազի՛ր... ամբո՞ղջ գիշեր վազիր։ Գնա ուրիշ քաղաք ու գնացք նստիր։ Լսո՞ւմ ես...*

ԱՂՋԻԿ— *Ի՞նչ է եղել։*

ՏՂԱ— *Փախիր... շո՛ւտ արա, փախի՛ր էստեղից։ Ինչ գնացք էլ պատահի, նստիր... Սան Ֆրանցիսկո հետո կգնաս։*

ԱՂՋԻԿ— (Հեկեկոցից խեղդվելով)։ *Առանց քեզ ոչ մի տեղ չեմ ուզում գնալ։*

ՏՂԱ— *Ես չեմ կարող գալ։ Բան է պատահել։* (Նայում է աղջկան)։ *Քեյթի, ես կգտնեմ քեզ Սան Ֆրանցիսկոյում... որովհետև սիրում եմ քեզ... Մյուս կոշիկիս մեջ էլ փող ունեմ պահած... Իսկ թե փող ունես, ամեն ինչ էլ կարող ես անել...* (Ընկնում է երեսնիվայր)։

Աղջիկը մնում է տղայի մոտ կանգնած, ապա կամացուկ հեծկլտալով՝ նրանից հեռանում։ Քաշվում է մի կողմ, լացը կտրում է ու ականջ դնում։ Դրսի ամբոխն ավելի ու ավելի է աղմկոծվում։ Ներս է վազում տղամարդը իր երկու ընկերների հետ։ Աղջիկը, անենկատ մնալով, հետևում է նրանց։

ՏՂԱՄԱՐԴ— *Հրես շան որդին։*

ԵՐԿՐՈՐԴ ՏՂԱՄԱՐԴ— *Եղավ։ Բաց արա խցի դուռը, Հարի։*

Երկրորդ տղամարդը մոտենում է խցի դռանը, բանալիով բացում ու դուռը բափով բաշում: Վազելվազ ներս է ընկնում մի կին:

ԿԻՆ— *Ո՞ւր է։ Ես ուզում եմ տեսնել նրան։ Մեռե՞լ է։* (Նայում է տղայի՛ն, մինչ տղամարդիկ շրջում են նրա դի՛ն): *Նա է։* (Դադար): *Հա, հենց նա է, որ կա։*

ՏՂԱՄԱՐԴ— (Արհամարհանքով նայում է կնոջը, ապա աչքերը հառում անկենդան տղայի՛ն): *Դե լավ... վերջացնենք գնա։*

ԵՐԿՐՈՐԴ ՏՂԱՄԱՐԴ— *Ճիշտ ես ասում, Ջորջ։ Օգնիր, Հարի։*

Վերցնում են տղայի դի՛ն:

ԱՂՋԻԿ— (Հանկարծ մոլեգին): *Ցա՜ծ դրեք նրան...*

ՏՂԱՄԱՐԴ— *Սա՞ ինչացու է։*

ԵՐԿՐՈՐԴ ՏՂԱՄԱՐԴ— *Դու ի՞նչ ունես էստեղ։ Ինչո՞ւ մյուսների հետ փողոցում չես։*

ԱՂՋԻԿ— *Ցած դրեք նրան ու կորե՛ք էստեղից...* (Նետվում է տղամարդկանց կողմը):

ԿԻՆ— (Բռնում է նրան): *Դու էիր պակաս, սրա արած բաների՞ն նայեք։*

ԱՂՋԻԿ— *Բա՛ց թող ինձ։ Դուք նրան տանելու իրավունք չունե՛ք...*

ԿԻՆ— *Պա՛հ, սրա՛ն տեսեք...* (Ապտակում է աղջկան և հրում գցում գետի՛ն): *Էս մի մատ լրբի բերնի խոսքերի՞ն...*

Գնում են՝ տանելով տղայի դի՛ն:

ԱՂՋԻԿ— (Դանդաղ վեր է կենում, էլ լաց չի լինում: Նայում է շուրջը, ապա շշնջում): *Հե՛յ... ո՞վ կա...*

ՍՈՎՅԱԼՆԵՐԸ

Փոքրիկ սենյակ Մանհաթենի երբանցքներից մեկում: Սենյակում մի սեղան է դրված, վրան՝ հնաոճ նվագարկիչ ու ձայնապնակներ, մի աթոռ և թախտ:

ԳՐՈՂԸ սեղանի մոտ մեքենագրում է:

Ամառային անձրևոտ օր է, ժամը չորսի մոտ:

Ներս է մտնում ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԸ: Գրողը շարունակում է մեքենագրել, երիտասարդ կապիտալիստը շրջում է սենյակում:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Չէի՞ք ցանկանա արդյոք «Սաթըրդեյ իվնինգ փոսթ» բաժանորդագրվել։*

ԳՐՈՂ— *Մի խանգարեք։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— (Ինքն իրեն): *Ի՞նչ է գրում։* (Գրողին): *Ի՞նչ եք գրում։* (Ոչ մի պատասխան): *Դեմ չե՞ք լինի, եթե ես մի փոքր երաժշտություն լսեմ։ Դրսում անձրև է։*

ԳՐՈՂ— *Ասացի՝ մի խանգարեք։*

Երիտասարդ կապիտալիստը մոտենում է նվագարկիչին, տեղադրում է ձայնապնակը և լսվում է երաժշտություն: Մինչ երաժշտությունը շարունակվում է, ներս է մտնում մի երիտասարդ տխրադեմ ՄԵՔՍԻԿԱՅԻ ԱՂՋԻԿ, լսում է երգը, իսկ երիտասարդը նայում է նրան: Աղջիկը դեմքով նման է սրբապատկերի:

ԱՂՋԻԿ— (Լսելով երգը): *Ծանոթ երգ է։ Հիշում եմ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Իմ անունը Ջոն է։ Կարո՞ղ եմ ձեզ որևէ բան վաճառել։*

ԱՂՋԻԿ— *Սուս կացեք։ Սուս։*

ԳՐՈՂ— (Զղայնացած): *Վերջապես թողնելո՞ւ եք աշխատեմ։* (Հանկարծ շրջվում ու տեսնում է երիտասարդ կապիտալիստին և աղջկան: Երիտասարդ կապիտալիստը շատ վատ հագնված 17—18 տարեկան տղա է: Աղջիկը շատ գեղեցիկ է): *Այս ի՞նչ է։* (Տղային): *Ո՞վ եք դուք։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Իմ անունը Ջոն է։*

ԳՐՈՂ— (Աղջկան): *Ներեցեք, ո՞վ եք դուք։*

ԱՂՋԻԿ— *Դոլորեսն եմ։*

ԳՐՈՂ— *Շատ լավ, հիանալի է։ Հիմա գուցե բարի լինեք հանգիստ նստել զրուցել և կամ թե իրար նայել, կամ չքվել էստեղից, կամ մեռնել, կամ ինչ որ կուզեք։ Ես գործ ունեմ անելու։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ինչ ասեք կանեմ, բացի մեռնելուց։*

ԳՐՈՂ— *Շատ բարի։ Նախ անջատեք նվագարկիչը։ Ապրել եք ուզում՝ ապրեք, բայց ինձ այլևս չխանգարեք։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Մի՞թե երաժշտությունը կարող է խանգարել։*

ԱՂՋԻԿ— (Երիտասարդ կապիտալիստին)։ *Գնանք, նա ուզում է մենակ մնալ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ոչ, մնանք։ Դրսում անձրև է։ Նա ասաց, որ մենք կարող ենք նստել զրուցել։*

ԳՐՈՂ— (Դառնալով գրամեքենային)։ *Չեմ հասկանում, այս զարմանալի մարդիկ որտեղի՞ց են անվերջ հայտնվում։ Թե փող ունենայի կամ ուրիշ մի բան, հասկանալի կլիներ։ Բայց ես ոչինչ չունեմ նրանց տալու։* (Շրջվում է դեպի աղջիկը)։ *Հեյ, դուք քաղցա՞ծ եք։*

ԱՂՋԻԿ— *Այո։*

ԳՐՈՂ— *Էդպես էլ գիտեի։ Ներողամիտ կլինեք, ես ոչինչ չունեմ ձեզ տալու։ Ես ինքս էլ քաղցած եմ։ Շա՞տ եք քաղցած։*

ԱՂՋԻԿ— *Երեկվանից ոչինչ չեմ կերել։*

ԳՐՈՂ— *Իսկ դո՞ւ, Սեմ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ջոն, ոչ թե Սեմ։ Ես էլ քաղցած եմ։*

ԳՐՈՂ— *Բարի, Ջոն։ Երբվանի՞ց է, որ ոչինչ չես կերել։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Չեմ հիշում։ Գիտեմ, որ նախաճաշել եմ երեկ չէ առաջին օրը։ Հաշիվը կորցրել եմ։*

ԳՐՈՂ— *Գուցե թուլություն կամ գլխապտո՞ւյտ ես զգում։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ոչ, միայն թե տագնապի մեջ եմ։ Ոչ ոք չի ցանկանում «Սաթըրդեյ իվնինգ փոսթ» բաժանորդագրվել։ Հազար ու մի խոսակցություններ եմ լսում պատերազմի մասին ու հասկանում եմ, որ աշխարհը քանդվում է։ Կուզեի իմանալ, թե այս ամենի վերջը ինչ է լինելու։*

ԳՐՈՂ— *Պարզ է։ Դու արդեն քաղցից զառանցում ես։ Չեմ կարծում, թե կարողանաս փողոց դուրս գալ ու մուրալ։ Կարո՞ղ ես։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Կամաչեմ։*

ԳՐՈՂ— *Իհարկե, կամաչես, ո՞վ չի ամաչի։ Այնինչ, եթե չմուրաս, հավանական է, որ ի վերջո աշխարհի մտահոգությունից ուշաթափվես ու մեռնես, եթե անշուշտ չգտնվի մեկը, որ քեզ օգնության հասնի։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ես ոչ մի ողորմություն չեմ ուզում։*

ԳՐՈՂ— *Իհարկե ոչ։ Ողորմություն ուզող չկա։ Դու ինչ կցանկանայիր, քույրիկ, սե՞ր թե ողորմություն։*

ԱՂՋԻԿ— *Ի՞նչ։*

ԳՐՈՂ— *Ոչինչ։ Ամենքն էլ կհասկանան, որ քո ուզածը սերն է։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Չգիտեմ, թե ով եք դուք, բայց ձեր վերաբերմունքը շատ տարօրինակ է։ Գրո՞ղ եք, թե նման մի բան։*

ԳՐՈՂ— *Ես գրում էի, երբ դուք սենյակ մտաք։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Կարծեցի թե մեքենագրելու փորձ եք ձեռք բերում, որպեսզի որևէ գրասենյակում աշխատանք ճարեք։ Քոլեջ ավարտած մի ծանոթ ունեմ, որը աշխատանք ստացավ մթերային խանութում, որովհետև մեքենագրել գիտեր։ Ամեն երեկո աշխատանքից հետո տիրոջ համար մի քանի նամակ էր մեքենագրում։*

ԳՐՈՂ— *Ես գրող եմ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Պետք է որ հարուստ լինեք։*

ԳՐՈՂ— *Ունեցած-չունեցածս ահա այս սենյակում է։ Եվ այդպես արդեն յոթ տարի։ Ուտել ուզո՞ւմ եք։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Այո։*

ԳՐՈՂ— (Ծածկելով մեքենան)։ *Շատ լավ։ Վերցրու էս գրամեքենան, տար դիմացի տունը և մեկնումեկին ծախիր։ Ես կուզարկեի քեզ քաղաք, որ մեքենան գրավ դնես, բայց հինգ սենթ անգամ չունեմ, մետրոյի համար, իսկ ոտքով չի լինի, հեռու է։ Մինչև հետ գաս, էս աղջիկը շատ հնարավոր է քաղցից մեռնի։ Եվ դու էլ նույնը։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ոչ, ես չեմ մեռնի, ոչ էլ նա։ Չէ՞։*

ԱՂՋԻԿ— *Չգիտեմ։ Ես այնքան երկար եմ երազել, որ չգիտեմ, թե ինչ է կատարվում շուրջս։ Կուզենայի մի քիչ երաժշտություն լսել։ Դա ինձ հիշեցնում է բաներ, որոնք ավելի կարևոր են, քան թե ունենալը կամ չունենալը։*

ԳՐՈՂ— (Դնում է նոր ձայնապնակ)։ *Շատ լավ։ Ահա ձեզ երաժշտություն։* (Գրամեքենան տալիս է Ջոնին)։ *Վազիր դիմացի տունը և բոլոր դռների զանգը տուր։ Աշխատիր հնարավորին չափ թանկ ծախել։ Հինգ տարի առաջ գինը վաթսուն դոլար էր։ Ծախիր հինգով, եթե հաջողվի, եթե չէ՝ աշխատիր չորսով ծախել, թե չորսով էլ չըստացվի, երեքով, թե երեքով էլ չեղավ...*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Կծախեմ երկուսով։ Իսկ եթե մի դոլար անգամ չտա՞ն։*

ԳՐՈՂ— *Հետ բեր անիծվածը։ Դոլարից մի պենս էլ պակաս չենք*

ծախի։ Էս փոքրիկ խարխուլ մեքենայով ես ստեղծել եմ մի քանի գրվածքներ, որ աշխարհի լավագույն չհրապարակված գործերից են։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ես նման բան դեռ չեմ արել։* (Աղջկան)։ *Ցտեսություն։*

ԱՂՋԻԿ— *Ցտեսություն։*

ԳՐՈՂ— *Փողոցն անցնելիս զգույշ եղիր։ Լա՞վ ես տեսնում։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Հիանալի եմ տեսնում։ Ի՞նչ անեմ, եթե հանկարծ շատ փող ստացա, ասենք թե հինգ դոլար։*

ԳՐՈՂ— *Վազիր խանութ և ուտելու լիքը բան բեր։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Լավ։ Ուզում եմ իմանաք, որ անչափ երախտապարտ եմ ձեզ։*

ԳՐՈՂ— *Չարժե։ Ես էլ քաղցած եմ։ Եթե ապրեմ, նորից կշարունակեմ գրել։ Կուզենայի մի բան խմել, այսինքն վիսկի կամ նման մի բան, եթե իհարկե փող ձեռք բերիր։ Փոքր շշերն արժեն տասից երեսունհինգ սենթ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Շատ բարի։ Ցտեսություն։*

ԳՐՈՂ ԵՎ ԱՂՋԻԿ— *Ցտեսություն։*

Որոշ ժամանակ երկուսով երաժշտություն են լսում։

ԱՂՋԻԿ— *Ես հաց եմ սիրում, իսկ դո՞ւք։*

ԳՐՈՂ— *Ես էլ։ Խնձոր սիրո՞ւմ ես։*

ԱՂՋԻԿ— *Ի՞նչ հիանալի բան է խնձորը։ Ոչինչ չկա խնձորից լավ։*

ԳՐՈՂ— *Ես խաղող էլ եմ սիրում։ Խաղողը հատուկ նշանակություն ունի։*

ԱՂՋԻԿ— *Իսկապե՞ս։ Իսկ ո՞րն է դրա նշանակությունը։*

ԳՐՈՂ— *Խաղողից գինի են ստանում, իսկ դու գիտե՞ս, թե ինչ է նշանակում գինին։*

ԱՂՋԻԿ— *Երանի՜ իմանայի։*

ԳՐՈՂ— *Գինին կյանք է, այժմ և հավիտյան։ Հավերժական կյանք։ Ահա թե ինչ է նշանակում գինին։ Երբ խաղող ես ուտում, զգում ես, թե ինչ հրաշալի է աշխարհի երեսին ապրելը։*

ԱՂՋԻԿ— *Օ, շնորհակալ եմ։*

ԳՐՈՂ— (Զբաղվում է նվագաւ՛գիչով)։ *Որտե՞ղ կուզենայիր լինել։*

ԱՂՋԻԿ— *Մի արևոտ տեղ։*

ԳՐՈՂ— *Դու քաղցած ես, ահա թե ինչ։ Անձրևոտ եղանակը ամենից հաճելին է։ Անձրևն արցունք է, իսկ արտասվելիս մաքրվում են։ Մի ծիծաղելի պատմություն պատմե՞մ։*

ԱՂՋԻԿ— *Պատմեք, բայց չեմ խոստանում ծիծաղել՝ շատ եմ տխուր։*

ԳՐՈՂ— *Ես ինքս էլ չեմ խոստանում ծիծաղել։ Բայց դե պատմությունը ծիծաղելի է։ Երբ տասը տարեկան էի, մի օր գյուղ գնացի և գտա խաղողի մի մեծ այգի, հոյակապ կարմիր խաղողներով։ Անցնում էի՝ նայելով մի թփից մյուսը, չդիպչելով նույնիսկ մի հատիկ խաղողի։ Հանկարծ այգու տերը տեսավ ինձ ու «գող» ասաց։ Ու վազեց խաղողի այգուց։*

ԱՂՋԻԿ— *Դա՞ է պատմությունը։*

ԳՐՈՂ— *Այո։*

ԱՂՋԻԿ— (Սկսում է լաց լինել)։ *Ցավում եմ, բայց ասացի, չէ՞, որ չեմ խոստանում ծիծաղել։*

ԳՐՈՂ— *Ես էլ կուզենայի մեկ-մեկ այդպես լաց լինել։*

ԱՂՋԻԿ— *Չե՞ք կարողանում լաց լինել։*

ԳՐՈՂ— *Ոչ։*

ԱՂՋԻԿ— (Լաց է լինում ավելի դառը լացով)։ *Իսկ ես կարող եմ։*

ԳՐՈՂ— *Գիտեմ, որ կարող ես։ Քեզանից ավելի լավ լացող չեմ տեսել։ Մի անգամ կարդացի մի աղջկա մասին, որը տասնմեկ տարի շարունակ լաց է եղել։ Սիրածին սպանել էին պատերազմում, դրա համար էլ լաց էր լինում։*

ԱՂՋԻԿ— *Հետո ի՞նչ եղավ։*

ԳՐՈՂ— *Չգիտեմ։ Երևի դադարեց լաց լինելուց։*

ԱՂՋԻԿ— *Այդքա՞ն բան։*

ԳՐՈՂ— *Այո։*

ԱՂՋԻԿ— (Նորից ճեկեկալով)։ *Լաց լինելուց ի՞նչ օգուտ։*

ԳՐՈՂ— *Ինչ որ իմաստով երևի բարերար է։ Կարծում եմ, դա նման է անպատասխան սիրո։ Նրբացնում է մարդուն։*

ԱՂՋԻԿ— *Չեմ հավատում։*

ԳՐՈՂ— *Ես էլ չեմ հավատում, բայց մի անգամ գրել եմ, որ դա է արցունքների իմաստը։*

ԱՂՋԻԿ— *Եթե դուք մեկին սիրեք, իսկ նա չսիրի ձեզ, մի՞թե ձեր լացը չի գա։*

ԳՐՈՂ— *Ոչ։*

ԱՂՋԻԿ— *Անսիրտ մարդ եք։*

ԳՐՈՂ— *Անսի՞րտ։ Ո՞ւմ հանդեպ։*

ԱՂՋԻԿ— *Աղջկա։ Ես սիրում եմ ձեզ։ Ինչո՞ւ լաց չեք լինում։*

ԳՐՈՂ— *Ես կարծում էի, թե դու նրան ես սիրում։*

ԱՂՋԻԿ— *Նրա՞ն։ Ո՞ւմ։*

ԳՐՈՂ— *Այն տղային։ Ջոնին կամ Սեմին, ի՞նչ էր նրա անունը։ Նա սիրում է քեզ։*

ԱՂՋԻԿ— Ի՞նչ իմացաք։

ԳՐՈՂ— Ես գրող եմ։ Ես տեսա, թե նա ինչպես էր քեզ նայում։ Նա քաղցած է, ինչպես և դու... Նա սիրում է քեզ, որովհետև դու շատ լավիկն ես։ Դու նրան հիշեցնում ես մի բան, որը նա չի կարող մտաբերել՝ խաղող կամ գուցե մի ուրիշ բան։ Հանկարծակի նա կհիշի և այն ժամանակ կասի, որ սիրում է քեզ։

ԱՂՋԻԿ— Ես ձեզ եմ սիրում։

ԳՐՈՂ— Դու պարզապես քաղցած ես։

ԱՂՋԻԿ— (Լաց լինելով)։ Դուք շատ անսիրտն եք։ Դուք ինձ չեք սիրում։

ԳՐՈՂ— Սիրում եմ Սիրում եմ քեզ շա՛տ, շա՛տ։

ԱՂՋԻԿ— Ոչ, դուք ինձ չեք սիրում։

ԳՐՈՂ— Բայց ես իրոք սիրում եմ։ Ես էլ նրա պես քաղցած եմ։ Նրանից էլ քաղցած։ Միայն նրա պատճառով է, որ մինչև հիմա չեմ ասել, թե որքան սիրելի ես ինձ համար։

ԱՂՋԻԿ— Հենց այնպես ասում եք։

ԳՐՈՂ— Լաց չլինես այլևս։ Սպասիր մինչև որ մի բան ուտես։ Տեսնո՞ւմ ես էս փոքրիկ քարերը։ Ես դրանք հավաքել եմ խաղաղ օվկիանոսի ափերից։ Առաջ ապրում էի Սան Ֆրանցիսկոյում։ Մի տես թե ի՞նչ սքանչելի քարեր են։ Դու էլ այս քարերի նման դուրեկան ես։

ԱՂՋԻԿ— Ինձ չեք սիրում։

ԳՐՈՂ— Անհանգիստ եմ այդ տղայի համար։ Գրամեքենան ծախե՞ց, թե ոչ։ Սա է խնդիրը։

ԱՂՋԻԿ— Հուսով եմ, որ չի ծախել։ Եվ ոչ էլ կծախի։ Հուսով եմ, որ նա կգողանա մեքենան և այլևս չի գա։

ԳՐՈՂ— Ի՞նչ ես ասում, ուշքի եկ, ես սովից մեռնում եմ, դու նույնպես։

ԱՂՋԻԿ— Նույնիսկ եթե նա վերադառնա ուտելիքով, ես ոչինչ չեմ ուտի։

ԳՐՈՂ— Պարզ է։ Իսկ ես կուտեմ։

ԱՂՋԻԿ— Դուք շատ անսիրտն եք։ Ես էլ կուտեմ։

ԳՐՈՂ— Հիմարություն կլիներ չուտելը։

ԱՂՋԻԿ— Ինչո՞ւ եք այստեղ ապրում, ինչո՞ւ չեք տեղափոխվում մի ուրիշ տեղ, ուր ավելի լուսավոր է։

ԳՐՈՂ— Լույսն այստեղ բավական է։ Տեսնո՞ւմ ես այս քարերը։ Դու էլ սրանց պես...

ԱՂՋԻԿ— Ինչո՞ւ եք էլի նույնը ասում։

ԳՐՈՂ— Այս քարերը միակ բանն է սենյակում, որ ինձ է պատկանում, որ աստված ինձ տվել է։ Դու սրանցից յուրաքանչյուրի պես լավն ես։ Ապա նայիր դրանց, ի՞նչ ես տեսնում։

ԱՂՋԻԿ— *Ոչինչ։*

ԳԻՌՂ— *Աստված իմ, մի՞թե էդքան քաղցած ես։*

ԱՂՋԻԿ— *Այո։*

ԳԻՌՂ— *Ցավում եմ։*

ԱՂՋԻԿ— *Ինչո՞ւ։*

ԳԻՌՂ— *Որովհետև սիրում եմ քեզ։*

ԱՂՋԻԿ— *Ձեք սիրում։*

ԳԻՌՂ— *Անձրևը դեռ գալիս է։ Միգուցե նա վա՞յր է ընկել փողոցում։ Դու դեռ քաղցա՞ծ ես։*

ԱՂՋԻԿ— *Ոչ։*

ԳԻՌՂ— *Ես էլ քաղցած չեմ։*

ԱՂՋԻԿ— *Ես ձեզ սիրում եմ։*

ԳԻՌՂ— *Լավ։ Մոռացիր։*

ԱՂՋԻԿ— *Ես կսիրեմ ձեզ հավիտյան։*

ԳԻՌՂ— *Քո տարիքի աղջկա համար դա շատ երկար ժամանակ է։ Քանի՞ տարեկան ես։*

ԱՂՋԻԿ— (Լաց լինելով)։ *Դուք ծիծաղում եք ինձ վրա։ Տասնյոթ տարեկան եմ։*

ԳԻՌՂ— *Ներիր։ Հիասքանչ աղջիկ ես։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— (Վերադառնում է՝ գրամեքենան ձեռքին։ Թեմքը թրջված։ Ժպտում է)։ *Ձեր գրամեքենան ուզող չեղավ։*

ԳԻՌՂ— *Դե ի՞նչ, մնում է փող ձեռք բերելու մի ուրիշ հնար գտնել։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *«Սաթըրդեյ իվնինգ փոսթ» բաժանորդագրվող էլ չկա։*

ԱՂՋԻԿ— *Մենք բոլորս կմեռնենք։ Շատ ուրախ եմ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ուրա՞խ։*

ԱՂՋԻԿ— *Այո։*

ԳԻՌՂ— (Ջոնին)։ *Մի անհանգստացիր, մենք չենք մեռնի։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ես նույնիսկ մի տարի սովորել եմ բարձրագույնում։*

ԳԻՌՂ— (Գրամեքենան դնում է սեղանի վրա, մի թերթ թուղթ է տեղադրում և սկսում տպել։ Դիմելով աղջկան)։ *Եթե հիսուն սենթ ունենայիր, ի՞նչ կնախընտրեիր՝ տապակած մի՞ս, թե՞ հավ։*

ԱՂՋԻԿ— *Ես ոչինչ չեմ ուզում։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Թե փող ունենայի, ի՞նչ կուզենայիր, որ առնեի քեզ համար։*

ԱՂՋԻԿ— *Ոչինչ չէի ուզենա։ Շնորհակալություն։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ի՞նչ է պատահել։*

ԱՂՋԻԿ— *Շատ հիմարն ես։*

ԳՐՈՂ— (Վեր է թռչում ու դիմում աղջկան)։ *Էս քարերին նայիր.... Դու բոլորովին նման չես դրանց։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Նրան ի՞նչ է պատահել։*

Աղջիկը ճորից սկսում է լաց լինել։

ԳՐՈՂ— *Պարզապես քաղցած է։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— (Աղջկան)։ *Քեզ ի՞նչ է պատահել։*

ԱՂՋԻԿ— *Նա ինձ վիրավորեց։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Վիրավորե՞ց։ Ի՞նչ ասաց։* (Գրողին)։ *Լսեք, դուք շատ բարի գտնվեցիք, թույլ տալով մեզ պատսպարվել անձրևից, բայց չհամարձակվեք իմ ներկայությամբ վիրավորել աղջկան։*

ԳՐՈՂ— *Նստիր։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Դուք այդ իրավունքը չունեք։*

ԳՐՈՂ— *Նստիր։ Երկուսով նստեք, երաժշտություն լսեք, մի բանով զբաղվեք։ Ի՞նչ է, չե՞ք տեսնում, որ ջանում եմ գործս առաջ տանել։*

Ներս է մտնում մի ՄԵՐ ԿԻՆ՝ սխուր ժպիտը մանկական դեմքին։

ԿԻՆ— *Թույլ կտա՞ք մնալ այստեղ մինչև անձրևը կտրվի։*

ԳՐՈՂ— (Առանց շրջվելու)։ *Իհարկե։ Բայց ոչինչ չունեմ ուտելու։*

ԿԻՆ— (Երիտասարդ կապիտալիստին)։ *Հա՞յրդ է։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ոչ։*

ԱՂՋԻԿ— *Դուք տեղ չունե՞ք մնալու։*

ԿԻՆ— *Ոչ։*

ԱՂՋԻԿ— *Ես էլ։*

ԳՐՈՂ— *Շատ բարի։ Բոլորդ էլ կարող եք էստեղ մնալ։ Եթե միայն մի քանի րոպե լռեք, մնացեք ինչքան որ սրտներդ ուզի։ Անձրևը անվերջ չի տևելու։ Երբ դադարի, կարող եք գնալ ուր որ ցանկանաք։ Վստահ եմ, որ կկարողանաք գտնել...*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— (Կնոջը)։ *Չե՞ք ցանկանա բաժանորդագրվել։*

ԿԻՆ— *Ի՞նչ բաժանորդագրվել։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *«Սաթբրդեյ իվնինգ փոսթ»։*

ԿԻՆ— *Ոչ։*

ԳՐՈՂ— *Ահա թե ինչ. ես կբաժանորդագրվեմ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— (Վեր ցատկելով)։ *Իսկապե՞ս։ Առաջիկա վեց ամիսը դուք ոչինչ չեք վճարի։*

ԳՐՈՂ— *Վեց ամի՞ս։ Քեզ ի՞նչ օգուտ դրանից։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Սկզբում՝ ոչինչ։ Բայց եթե հաջողվի հա-*

վաքել բաժանորդագրման մի քանի թերթիկներ, ես կներկայանամ գրասենյակ և հնարավոր է մեկնումեկը ինձ պարտքով կես դոլար տա։

ԳՐՈՂ— *Այդ դեպքում ես ութ-տասը անգամ կբաժանորդագրվեմ, տարբեր անուններով ու տարբեր հասցեներով։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Շատ շնորհակալություն։ Լրացրած թերթիկները մեծ տպավորություն կթողնեն։ Ինչո՞ւ պիտի ձեզ նման բարեսիրտ մարդը վիրավորի սրա նման հիանալի աղջկան։*

ԱՂՋԻԿ— *Ո՞ւմ է ով վիրավորել։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— (Հանելով թերթիկները)։ *Գուցե դո՞ւ էլ բաժանորդագրվես։*

ԱՂՋԻԿ— *Իհարկե։ Ութ-տասը անգամ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Չգիտեմ թե ինչպես շնորհակալություն հայտնեմ։*

ԱՂՋԻԿ— *Չարժե։ Դու դեռ քաղց զգո՞ւմ ես։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Ոչ առաջվա պես։ Կարծում եմ, մեկնումեկը մի քիչ փող կտա ինձ պարտքով։ Հետո կվերադարձնեմ։* (Ծեր կնոջը)։ *Դուք ևս չէի՞ք ցանկանա բաժանորդագրվել։*

ԿԻՆ— *Իհարկե։*

Գրողը, աղջիկը, ծեր կինը լրացնում են յուրաքանչյուրը ութ-տասը թերթիկներ և տալիս են երիտասարդ կապիտալիստին։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Արդեն ինձ լավ եմ զգում։ Կարծում եմ կարիք չկա հուսահատվելու։*

ԳՐՈՂ— *Ինձ էլ է այդպես թվում։*

ԱՂՋԻԿ— *Եվ ինձ։*

ԿԻՆ— *Եվ ինձ։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Կարծում եմ ամեն ինչ լավ կլինի։*

ԳՐՈՂ— *Ես էլ եմ այդպես կարծում։*

ԱՂՋԻԿ— *Անձրևը դեռ գալի՞ս է։*

ԿԻՆ— *Կարծեմ դադարել է։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Շնորհակալություն, շա՛տ, շա՛տ շնորհակալություն։ Մնաք բարով։*

ԲՈԼՈՐԸ— *Գնաք բարով։*

ԿԻՆ— (Աղջկան)։ *Դու նրան ճանաչո՞ւմ ես։*

ԱՂՋԻԿ— *Ոչ։*

ԳՐՈՂ— (Ծեր կնոջը)։ *Մենք իրար սիրում ենք, քաղցից իհարկե, բայց սերը՝ սեր է, ինչից էլ որ ծագի։*

ԿԻՆ— *Թե այդպես է, ես գնամ։*

ԳՐՈՂ— *Մի շտապեք։*

ԱՂՋԻԿ— *Գնացեք, խնդրեմ։ Վախենում եմ, որ չկարողանամ երկար դիմանալ։*

ԿԻՆ— *Մնաք բարով։* (Գնում է։ Աղջիկը արագ մոտենում է գրողին։ Մեր կինը վերադառնում է)։ *Կարծում եմ, պետք է ձեզ ասել. նա ընկած է աստիճաններին։*

ԳՐՈՂ— *Ո՞վ։*

ԿԻՆ— *Այն երիտասարդը։ Դե, մնաք բարով։* (Նույնպես բնկնում է)։

ԳՐՈՂ— *Մնաք բարով։*

ԱՂՋԻԿ— (Գրողին)։ *Ողջույն։*

ԳՐՈՂ— *Ողջույն։* (Գրկում է աղջկան)։

ԿԻՆ— *Չէի կարծում, որ այդքան մոտ եմ մահվանը։ Ներեցեք ինձ։*

ԳՐՈՂ— *Ոչինչ, ոչինչ։*

ԱՂՋԻԿ— *Սիրո՞ւմ եք ինձ։*

ԳՐՈՂ— *Դու այս քարերի նման հիասքանչ ես։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— (Ներս է մտնում)։ *Ես այստեղ ոչինչ չե՞մ թողել։*

ԳՐՈՂ— *Չեմ կարծում, բայց կարող ես նայել։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— (Նայում է շուրջը և հանկարծ տեսնում աղջկան)։ *Գիտեի, որ մի բան թողել եմ։ Չե՞ս գա ինձ հետ։*

ԱՂՋԻԿ— *Խնդրում եմ, հեռացիր, մեռիր։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Լավ, ես կհեռանամ, բայց չեմ մեռնի։ Իմ առջև մեծ ապագա կա։ Մնաք բարով։*

ԿԻՆ— *Գնաս բարով։ Թերթիկները չմոռանաս վերցնել։*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՊԻՏԱԼԻՍՏ— *Չեմ մոռանա։*

Բոլորը, բացի գրողից, ընկնում են գետին։ Գրողը վերադառնում է իր աշխատանքին։ Ներս է մտնում ՄԱՀԸ։ Նա բարի դեմքով մի մարդուկ է։

ՄԱՀ— *Այստեղ կենդանի մարդ կա՞...*

ԳՐՈՂ— *Ես ամբողջ ժամանակ ջանում եմ կենդանի մնալ... Ո՞վ եք դուք։*

ՄԱՀ— *Ես մահն եմ։*

ԳՐՈՂ— *Ինչպե՞ս եք։*

ՄԱՀ— *Լավ եմ, շնորհակալություն։ Այս դիակները ես կտանեմ։* (Բարձրացնում է ծեր կնոջ դին, դուրս է տանում և գցում։ Լսվում է տարօրինակ ձայն։ Տանում է նաև երիտասարդ կապիտալիստին։ Հետ է գալիս աղջկան տանելու և գտնում է նրան գրողի գրկում։

Երկուսն էլ փոված են գետնին): *Հիմա բոլորն էլ մեռած են։ Գործս թեթևացավ։ Հետաքրքիր է, ի՞նչ էր գրում։* (Մոտենում է գրամեքենային, հանում է թուղթը և նայում): *Ոչինչ չկա այս էջում։* (Նայում է մյուս էջերին): *Այստեղ էլ ոչինչ չկա։ Բոլոր էջերն էլ մաքուր են։*

ԳՐՈՂ— (Աղջկան): *Դու որևէ բան հիշո՞ւմ ես։*

ԱՂՋԻԿ— *Քարերն ու խաղողը։ Իսկ դո՞ւք։*

ԳՐՈՂ— *Ես քեզ եմ հիշում։*

ԱՂՋԻԿ— *Դուք երջանի՞կ եք։*

ԳՐՈՂ— *Այո։ Ամենից շատ որտե՞ղ կուզենայիր լինել հիմա։*

ԱՂՋԻԿ— *Ես միշտ երազել եմ կյանքումս գոնե մի անգամ լինել Նյու Յորքում։*

ԳՐՈՂ— *Նյու Յորքում մեկ անգամ եղել եմ, կպատմեմ քեզ դրա մասին։*

ՄԱՀ— *Մի քիչ երաժշտություն լսեմ։* (Դնում է ձայնապնակը։ Լույսը խավարում է, մահը պառկում է հատակին)։

ԳՐՈՂ— *Նյու Յորքը շատ հեռու է, նույնիսկ երբ այնտեղ ես։ Եվ ամեն բանից մեծ է, հսկայական, նույնիսկ երբ աչքովդ ես նայում ու տեսնում։ Եվ դա աշխարհի ամենախավար ու ամենալուռ տեղն է։* (Բեմը միանգամից մթնում է, երաժշտությունը դադարում): *Ձմռանը ամբողջ քաղաքը ծածկված է ձյունով և մարդիկ մեռնում են, ինչպես և ամռանը...*

ՏԱՐԵԿԱՆԻ ԱՐՏՈՒՄ*

Մի մեծ սենյակ, որից այն կողմ երևում է անսահման տիեզերքը՝ լույսի ու շարժման ողջ բազմազանությամբ: Արևը, յուսինը, մոլորակներ, աստղեր, համաստեղություններ և այլն: Սենյակը շատերից մեկն է, սա ամերիկացիների սենյակն է, և համապատասխան նշումը այդպես էլ վկայում է:

Այս սպասասրահում գոնվողներից յուրաքանչյուրը արդեն ձևավորված մարդ է ու սպասում է ծնվելուն: Ամեն մեկն ստացել է իր վերջնական կերպարանքն ու «ես»-ը, այսինքն՝ այնպես է, ինչպես որ լինելու է իր կյանքի վերջին ժամերին կամ աշխարհին մնաս բարով ասելու օրը: Նրանց դեմքերը, ովքեր դեռ լրիվ չեն ձևավորվել, կարծես ամռան երկնքի ներքակ ամպամուլաներ են: Խոսում է հանդիսավոր ձայնով, բայց սրամիտ մեկը:

---

* *Վերնագիրը մի տող է շոտլանդացի բանաստեղծ Ռոբերտ Բըրնսի (1759—1796) «Այգու դուռը թաքուն բացել» բանաստեղծությունից, որի հետ պիեսը սյուժետային ու թեմատիկ աղերսներ ունի: Ստորև բերվում է Բըրնսի բանաստեղծությունը.*

Այգու դուռը թաքուն բացել,
Արտն է մտել տարեկանի,
Ոտից գլուխ ջուր է դարձել,
Ձենին ուրիշ ճար չունի:

Խեղճ աղջիկը ցուրտ է առել,
Դողում է ու սրթսրթում,
Դե, փեշ ու մեշ թաց է արել
Տարեկանի արտում:

Բայց եթե մեկն ինչ-որ մեկին
Տարեկանի արտը կանչել
Ու սեղմել է նրան կրծքին,
Ի՞նչ կարող ես անել:

Ու ի՞նչ ցավն է մեր ամենքի,
Թե ինչ-որ մեկը մթնում
Համբուրել է ինչ-որ մեկին
Տարեկանի արտում:

ՁԱՅՆԸ— Դե՛, ժողովուրդ, ձեր ժամանակն էլ վրա հասավ։ Ուր որ է դուք էլ աշխարհ դուրս կգաք։ Աշխարհն աչքներիդ տարօրինակ տեղ կերևա։ Հրահանգներ չկան։ Հիմա դուք գիտեք ձեր ճակատագիրը, բայց հենց աշխարհ ելնեք, շունչ քաշեք, ամեն ինչ կմոռանաք։ Ասեմ, որ դրա համար կարող եք աստծուց շնորհակալ լինել։ Ձեզնից ամեն մեկին սպասում են լավ ու վատ բաներ։ Աշխարհը դեռ նոր է, և ձեզ այնտեղ ուղարկելու միտքը առայժմ չի արդարացրել իրեն։ Ցնայած ժամանակին երևի կարդարացնի։ Ձեր հանգրվանը Ամերիկան է։

Հայրենասիրական երգի մի կտոր։

Հետաքրքիր տեղ է։ Մյուս վայրերից ոչ լավն է, ոչ էլ վատը, եթե, իհարկե, խոսքն արտաքին փայլի մասին չի, որին ամերիկացիները, այսպես թե այնպես, շատ են տուրք տալիս։ Կլիման ամենուրեք բարենպաստ է, տեղ-տեղ՝ հոյակապ։ Ինչ որ անեք, կկարծեք ձեր սեփական արածն է։ Դրա համար էլ պիտի աստծուց շնորհակալ լինեք։ Կապրեք այնքան, ինչքան որ ապրելու եք։ Ոչ ավել։ Ցորս կողմը ժխոր ու շիլաշփոթ կտեսնեք՝ նույնիսկ քնած ժամանակ, չնայած մեկ-մեկ էլ երազում համարյա թե հետ կդառնաք այստեղ, բայց ոչ անվերադարձ։ Աշխարհի երեսին ոչ մի կարևոր բան չկա։ Անկարևոր բան էլ չկա։ Շատ բաներ կթվան կարևոր, շատ բաներ էլ՝ անկարևոր։ Մի քանի վայրկյանից դուք մարդաշարք կմտնեք։ Այստեղ երկրային ժամանակով ինն ամիս սպասել եք։ Մի քանիսդ՝ ավելի քիչ։ Սրանից հետո մարմնով մեն-մենակ կլինեք, ամեն ինչից ակնհայտորեն անջատ։ Ձեզ կթվա, թե հոգով էլ եք մենակ։ Բայց դա պատրանք է։ Ձեզնից ամեն մեկը ուրիշ երկու հոգու շարունակությունն է, որոնցից ամեն մեկը եղել է մի ուրիշ երկուսի շարունակությունը, սրանցից ամեն մեկն էլ՝ ևս երկուսի և այդպես ան-

ընդհատ։ (Զվարթ)։ Ես կարող եմ երկու-երեք տարի խոսել, բայց դրանից ոչ մի բան չի փոխվի։ Եվ այսպես, դուք ճամփա՞ եք ընկնում։ Խո՞ր շունչ քաշեք։ (Իրամատիկորեն)։ Շունչներդ պահե՞ք։ Դուք ելնում եք աշխարհ։ Լավ, Ջո, բա՛ց թող նրանց։

Երաժշտական մի բանի ելևէջ։ Ոմանք դուրս են ելնում։ Մտնում են Բուչը՝ ինճամյա մի տղա և միստր Քերոլը՝ յոթանասնամյա մի տղամարդ։ Բուչը, մոմի հետ ընկած, թեթեսի մի հին գեղակ է զարկում գետնին, բռնում։

ԲՈՒՉ— Է՛հ, սրանից հետո մեր հերթն է, միստր Քերոլ։ Ծնվելը սրտո՞վդ է։

ՔԵՐՈԼ— Վա՛հ, իհարկե, Բուչ։ Բա ծնվելու, շունչ առնելու պես ուրիշ էլ ի՞նչ կա։

ԲՈՒՉ— Չգիտեմ՝ ես բախտավո՞ր եմ, թե՞ անբախտ։ Սթիվն ասում է՝ բախտս բերել է, որ աշխարհի երեսին շատ չեմ մնալու, իսկ միսս Քուիքլին... ասում է՝ լավ չի ստացվում։

ՔԵՐՈԼ— Ի՞նչը չի լավ ստացվում։

ԲՈՒՉ— Որ պիտի ծնվեմ ինչ է թե՝ մի ինը տարի ապրելու եմ։ Իսկի չորս կողմս չտեսած՝ արդեն հետ պիտի դառնամ, էլ գնալուցս ի՞նչ օգուտ։ Հիմա ես էնպես եմ, ոնց որ մեռնելուս օրն եմ լինելու, դու էլ ես էնպես, ոնց որ մեռնելուդ օրը։ Բայց ես ինը տարեկան եմ, իսկ դու մեծ մարդ ես։

ՔԵՐՈԼ— Բուչ, տղաս, էդ ինը տարին չտեսնված կանցնեն։

ԲՈՒՉ— Ո՞վ իմանա։ Միսս Քուիքլին ասում է՝ մի հինգ-վեց տարի կքաշի, մինչև մարդահաշիվ ընկնեմ։ Թո՛ւ, տակն էլ ի՞նչ է մնում. երեք տարի։ Իսկի բեյսբոլի կարգին թիմերի խաղերն էլ չեմ տեսնի։

ՔԵՐՈԼ— Միգուցե տեսնես։

ԲՈՒՉ— Ոչ էլ կտեսնեմ, դրա հերն անիծած։ Էդ ո՞նց պիտի Թեքսասի եսիմ ինչ կորած-մոլորած քաղաքից գնամ հասնեմ Նյու Յորք։

ՔԵՐՈԼ— Ի՞նչ կա որ, կարող է հասնես։

ԲՈՒՉ— Է՛, իմ հույսն էլ է էդ, բայց միսս Քուիքլին... Սթիվին ասել է՝ թե լավ չի ստացվում։

ՔԵՐՈԼ— Ինչո՞ւ որ։

ԲՈՒՉ— Մինչև իմ ծնվելը, հերս մեռնում է, մերս սոված-ծարավ է մնում ու մի տարի հետո ինքն է մեռնում։ Միսս Քուիքլին ասում է՝ կաչկա ինձ մանկատուն են տալու։ Մանկատո՞ւնն ինչ ցավս է։

ՔԵՐՈԼ— Ինչքան գիտեմ՝ որբանոցն է։ Ինձ լսիր, Բուչ, ոչ մի բանի համար էլ դարդ մի անի։ Էստեղից դուրս եկար թե չէ, էնտեղ ամեն ինչ հրաշք է որ կա։

ԲՈՒՉ— Էդ ո՞նց է լինում որ։

ՔԵՐՈԼ— Դե, հենց դուրս եկար, արդեն կենդանի մարդ ես, ոնց որ էստեղ, մենակ ուրիշ ձևով։ Էդ նույն բոպեին էլ էնտեղ սկսում ես։

ԲՈՒՉ— Ի՞նչն ես սկսում։

ՔԵՐՈԼ— Ապրել... ու մեռնել։ Երկուսն էլ գեղեցիկ են, Բուչ։ (Երջանիկ)։ Ապրելն ու մեռնելը աշխարհում։ Էդ հսկայական, մեծ, փոքր, պըստլիկ տեղում։ Ու հենց առաջին անգամ շունչ քաշեցիր, չէ՞, արդեն ինչ-որ մեկն ես՝ դո՛ւ։

ԲՈՒՉ— Է՛, ես հիմա էլ եմ ես։

ՔԵՐՈԼ— Դա նրանից է, որ հիմա սպասում ես էստեղ։ Բայց վաղ թե ուշ պիտի ճամփա ընկնես։ Ահագին ժամանակ է անցնում, մինչև ճամփա ես ընկնում։ Օրինակ՝ ես... է՛հ, չգիտեմ երկրի ժամանակով ինչքան է անցել... բայց վաղուցվանից եմ սպասում։

ԲՈՒՉ— Սթիվն ասում է՝ աշխարհը զզվելի է։

ՔԵՐՈԼ— Խոսք չունեմ, Սթիվը խելքով տղա է։ Լավ տղա է, բայց աշխարհի մասին սխալ կարծիքի է։ Աշխարհը մեր միակ տեղն է, ու մեզնից ամեն մեկը շատ բախտավոր է, որ դնում է էնտեղ։

ԲՈՒՉ— Իսկ ի՞նչ է լինում, հենց որ աշխարհից հեռանում ենք։

ՔԵՐՈԼ— Հետ ենք դառնում։

ԲՈՒՉ— Էստե՞ղ։ Ու էլի սպասո՞ւմ։

ՔԵՐՈԼ— Չէ, հենց էստեղ չէ։ Մենք էստեղ սպասում ենք, հետո ճամփա ընկնում։ Իսկ երբ աշխարհից հեռանում ենք, հետ ենք դառնում էնտեղ, ուր եղել ենք մինչև էստեղ գալը։

ԲՈՒՉ— Բա էդ մի տե՞ղը որ գրողի ծոցն է։

ՔԵՐՈԼ— Դա ոչ էլ տեղ է, Բուչ։ Ու ոչ էլ սպասելու հետ որևէ կապ ունի։ Էս է սպասելու տեղը։

ԲՈՒՉ— Օ՜ֆ, ասիմ, երևի լավ կլինի, էլի։ Բայց եղած-չեղածը՝ ինը տարի։ Ախր դրա հերն անիծած, բա կհասցնե՞մ գոնե մի բան տեսնեմ։

ՔԵՐՈԼ— Բուչ, աշխարհում մի օրն էլ է երկար ժամանակ, ինչ մնաց թե ինը տարին։ Ամեն մի օրը քսանչորս ժամ ունի։ Ամեն ժամն էլ՝ վաթսուն րոպե։

ԲՈՒՉ— Ի՞նչ պիտի անես, որ դուրս գաս, միստր Քերոլ։

ՔԵՐՈԼ— (Մի ծաղելով)։ Է՜հ, էնքան բա՜ն կա անելու, մեկը մյուսի հետևից։

ԲՈՒՉ— Հա՞, օրինակ՝ ի՞նչ։

ՔԵՐՈԼ— Դե, հիմա նայիր։ (Մի թղթի կտոր է հանում և ուշի-ուշով նայում)։ Տես ինչ է ասված էստեղ. «Թոմաս Քերոլ։ Մայրը՝ Էյմի Ուո-

լիս Քերոլ։ Հայրը՝ Ջոնաթան Քերոլ։ Ծնվելով՝ կդառնա. որդի, եղբայր, եղբորորդի, մորաքրոջ տղա, թոռ և այլն»։

ԲՈՒՉ— Եղբա՞յր։

ՔԵՐՈԼ— Հա, երևի ես էնտեղ քույր ու եղբայր ունեմ, միգուցե երկու եղբայր, երկու քույր։

ԲՈՒՉ— Ես մտածում էի, թե մենք բոլորս էլ եղբայրներ ենք։ Մտածում էի՝ ամեն մեկն էլ մյուսի բարեկամն է։

ՔԵՐՈԼ— Հա, իհարկե, բայց էս տեսակ եղբայրությունը ավելի մոտիկ է։ Ով էլ որ լինի եղբայրս, իմ հայրն ու մայրը նրա հայրն ու մայրն էլ են։

ԲՈՒՉ— Է՛հ, ի՞նչ տարբերություն, դրա հերն անիծած։ Ես մտածում էի՝ մենք բոլորս իրար բարեկամ ենք։

ՔԵՐՈԼ— Հա, ճիշտ է, բայց աշխարհի երեսին ընտանիքներ կան։ Նրանք բոլորը իրականում մի ընտանիք են, բայց ընտանիքը աշխարհում բաժան-բաժան է լինում. քեզ ծնող մարդիկ նոր ընտանիք են կազմում, քեզնից ծնվողները՝ մի ուրիշ։ Ու գնալով՝ էդպես խճճվում-բարդանում է։

ԲՈՒՉ— Բայց ամենքն էլ նույն ընտանիքից են, չէ՞։

ՔԵՐՈԼ— Դե հա, բայց աշխարհում ամենքն էլ դա միառժամանակ մոռանում են։

ԲՈՒՉ— (Հանում է իր թղթի կտորը, որը շատ ավելի փոքր է, քան Քերոլինը)։ Սրա հերն անիծած, իսկի մտքովս էլ չի անցել, որ գոնե մի անգամ նայեմ։ Ե՞ս ինչ եմ լինելու։ (Քարտը կարդալով)։ «Ջեյմս Նելսոն, մականունը՝ Բուչ»։ Արևս վկա, էդպես էլ գրած է։ «Մականունը՝ Բուչ», բայց իմ իսկական անունը Ջեյմս Նելսոն է։ Տեսնեմ ի՞նչ եմ լինելու (կարդում է)։ «Որդի։ Լրագրավաճառ։ Դպրոցական»։ (Մտածկոտ)։ Որդի։ Բա եղբայր բան չունե՞մ։

ՔԵՐՈԼ— Է՛հ, ոնց որ թե՝ չէ, Բուչ։

ԲՈՒՉ— Ախր ինչի՞ չէ, դրա հերն անիծած։

ՔԵՐՈԼ— Թեքսասում ինչ տեսակ տղա առես, որ չի լինի։ Բոլորն էլ քեզ եղբայրություն կանեն։

ԲՈՒՉ— Սուտը մեռնի՛։

ՔԵՐՈԼ— Հազար անգամ։

ԲՈՒՉ— (Նորից է կարդում)։ «Լրագրավաճառ»։ Էս ի՞նչ է նշանակում։

ՔԵՐՈԼ— Դե, իմ կարծիքով, թերթ ես ծախելու։

ԲՈՒՉ— Դա լա՞վ է։

ՔԵՐՈԼ— Ոչ մի բանի համար էլ գարդ մի անի, Բուչ։

ԲՈՒՉ— *Դե լավ։ Հերն էլ անիծած։* (Պահում է թղթի կտորը)։

ՔԵՐՈԼ— (Կոտրվածով)։ *Ցցիր բռնեմ գնդակը, Բուչ։*

ԲՈՒՉ— (Հիացմունքով)։ *Հանաքը դե՞նը։*

ՔԵՐՈԼ— *Վա՜հ, հանաքը ո՞րն է, ես «Նյու Հեյվնի ոսկեսարյակներ[ի]» կազմում բեյսբոլ եմ խաղալու։*

ԲՈՒՉ— (Նետելով գնդակը, որը Քերոլը փորձում է բռնել)։ *Էդ ովքեր են ո՞ր, հարցնելն ամոթ չլինի։*

ՔԵՐՈԼ— *Մեր թաղի մի խումբ տղերք։* (Գնդակը հետ է շպրտում)։

Մտնում է Սթիվը։ Մոտ քսանչորս տարեկան է, սթափ է ու լուրջ, բնե՛ հարբեցող է։ Բուչը բռնում է գնդակն ու նայում Սթիվին։

ԲՈՒՉ— (Մոտենում է նրան)։ *Սթիվ։ Ասա թող ինքն էլ իմանա պատերազմի... ու էն մնացածի մասին։*

ՍԹԻՎ— (Բուչի վրա գրեթե ուշ չդարձնելով, մտքերի գիրկն ընկած)։ *Ո՞ւմ ասեմ, ի՞նչ ասեմ։*

ԲՈՒՉ— *Միստր Քերոլին։ Պատերազմի մասին։*

ՍԹԻՎ— (Քերոլին նայելով, ժպտադեմ)։ *Էն պառավ տիկնոջ հետ էի խոսում...*

ԲՈՒՉ— *Միսս Քուիքլիի հետ է։*

ՍԹԻՎ— *Հա։*

ԲՈՒՉ— (Քերոլին)։ *Բա որ ամեն մեկը մյուսի եղբայրն է, էլ ինչի՞ համար են պատերազմ անում, դրա հերն անիծած։*

ՔԵՐՈԼ— *Դե, գիտես, Բուչ...*

ՍԹԻՎ— (Մռայլ ծիծաղով)։ *Դժվար թե էդ հարցին մի խելքը գլխին պատասխան գտնես, չեֆ։*

ԲՈՒՉ— (Հիացմունքով)։ *Դե սուտը մեռնի՛, Սթիվ։*

ՔԵՐՈԼ— *Է՜, բա եզա՞վ, Սթիվ, դու լավ գիտես, որ աշխարհը հրաշալի տեղ է։*

ՍԹԻՎ— (Պարզորեն)։ *Կներես, բայց իմ կարծիքով, աշխարհը զզվելի է։ Իմ կարծիքով, մարդկային ցեղը պիղծ է ու գարշելի։ Իմ կարծիքով, սոորությւն է, որ մարդկանց դուրս են գցում աշխարհ։*

ՔԵՐՈԼ— *Չէ, չէ։ Սխալվում ես, Սթիվ։*

ՍԹԻՎ— *Բա էլ ի՞նչ է։ Քեզ գցում են աշխարհ, չորս կողմդ՝ օտարներ, ինչքան կրակ ու ցավ կա, գլխիդ է գալիս, վերջն էլ ոտքերդ մի կերպ քաշ տալով՝ հետ ես դառնում։ Տիեզերքի չգիտես որ խուլ անկյունում ընկած մի թիզ տեղ, որ օրեցօր լցվում է շոր ու կոշիկ հագած ահավոր, կեղտոտ անասուններով։*

ՔԵՐՈՒ— Էդ անասունները մի քանի զարմանահրաշ քաղաքակրթություններ են ստեղծել ու հենց հիմա էլ զբաղված են մի նոր քաղաքակրթություն ստեղծելով։ Մեծ պատիվ է դրան մասնակից լինելը։

ԲՈՒՉ— (Հիացմունքով)։ Բեյսբոլի՞ց եք խոսում, աշխարհի խաղերի՞ց։

ՍԹԻՎ— (Հոգնած)։ Դե լավ, շեֆ։ Թող քո ասածը լինի։

ՔԵՐՈՒ— Կներես, Սթիվ, կարելի՞ է քեզ մի հարց տալ։

ՍԹԻՎ— Ինչ մտքովդ անցնի։

ՔԵՐՈՒ— Քեզ ի՞նչ է սպասում։

ՍԹԻՎ— Որոշ բաներ։

ՔԵՐՈՒ— Չե՞ս ասի, թե ինչ։

ՍԹԻՎ— (Բուշին)։ Դիտե՞ս ինչ, պստիկ։ Գնա, մի քանի բոպեից կգաս։

ԲՈՒՉ— Ախր դրա հերն անիծած, ես էլ եմ ուզում լսեմ։ Մեկ է, դեռ չեմ ծնվել։

ՍԹԻՎ— Եղածը մի բան չի։ Ես ու դու հետո՝ առանձին կխոսենք։

ԲՈՒՉ— (Հնազանդաբեն գնալով մի կողմ)։ Դե որ ասում ես, Սթիվ։

ՔԵՐՈՒ— Ի՞նչ է քո ճակատագիրը, Սթիվ։

ՍԹԻՎ— (Դադար)։ Մարդասպան։

ՔԵՐՈՒ— (Ապշահար)։ Մարդասպա՞ն։

ՍԹԻՎ— (Խանդաղ)։ Հա։ Ես մարդ եմ սպանելու։

ՔԵՐՈՒ— Վայ, սիրտս շուռ ածեցիր, Սթիվ։

ՍԹԻՎ— Նա էլ է էստեղ։

ՔԵՐՈՒ— Էստե՞ղ։ Ո՞վ է։

ՍԹԻՎ— Չգիտեմ՝ տեսած կլինես, թե չէ։ Ես տեսել եմ։ Անունը Հեսթինգս է։

ՔԵՐՈՒ— (Ցնցված)։ Ռայֆ Հե՞սթինգսը։

ՍԹԻՎ— Հա։

ՔԵՐՈՒ— Վա՜հ, լավ էլ տղա է։ Հաստատ գիտե՞ս, որ չես սխալվում։

ՍԹԻՎ— Չէ, չեմ սխալվում։

ՔԵՐՈՒ— Վա՜յ, տեր աստված։ Մարդու սիրտը դող է ընկնում։ Բայց ինչո՞ւ։ Ախր ինչո՞ւ ես էդ անում։

ՍԹԻՎ— Էշություն է, էլի։

ՔԵՐՈՒ— Ի՞նչը, Սթիվ։

ՍԹԻՎ— Հասկանո՞ւմ ես, նա հարուստ է լինում։ Էն տեսակ բաներ է անում, որ սև է բերում աղքատների գլխին, դե ես էլ... Թե մարդկանց օր-կյանքը պիտի սևացնի, էլ նրա ծնվելն ի՞նչ միտք ունի։ Թե իմ անելիքը նրան սպանելն է լինելու, իմ ծնվե՞լը ինչ միտք ունի։

ՔԵՐՈԼ— *Սիրտս ցավում է քեզ համար, Սթիվ։ Հենց աշխարհ դուրս եկար, գլխիդ գալիքը էլ չես իմանա։*

ՍԹԻՎ— *Դա, իհարկե, մի կողմից լավ է, բայց մեկ է, գնալու միտքը սրտովս չի։ Բա դո՞ւ ինչ ես անելու, շեֆ։*

ՔԵՐՈԼ— *Ա՛հ, առանձնապես ոչ մի բան։*

ՍԹԻՎ— *Մարդ չե՞ս սպանելու։*

ՔԵՐՈԼ— *Չէ, ի՞նչ ես ասում, Սթիվ։ Ես սովորական բաներ եմ անելու։*

ՍԹԻՎ— *Տուն-տե՞ղ ես դնելու։*

ՔԵՐՈԼ— (Բերկրանքով, բայց ամոթխած): *Էհ, բա ո՞նց։ Երեք տղա եմ ունենալու։ Երեք էլ աղջիկ։ Տեսակ-տեսակ թոռներ։*

ՍԹԻՎ— (Անկեղծորեն): *Էլի դա սրտի մխիթարանք է։*

ՔԵՐՈԼ— *Սրտի մխիթարա՞նք։ Ի՞նչը։*

ՍԹԻՎ— *Դե, որ աստված մի ձեռքով առնում է, մի ձեռքով տալիս է։*

ՔԵՐՈԼ— *Իսկ դու ամուսնանալո՞ւ ես, Սթիվ։*

ՍԹԻՎ— *Ոչ էն է՝ հա, ոչ էն է՝ չէ։*

ՔԵՐՈԼ— (Փոքր-ինչ շփոթված արտացավորեն): *Էդ ո՞նց։*

ՍԹԻՎ— *Ես ինչքան ասես սիրուհիներ եմ ունենալու, բայց ոչ մեկի վրա սիրտս չի տաքանալու։ Ջնայած տարեկան մեկին փոխելու եմ։ Մենակ վերջում է սիրտս մեկին կպչելու։ Նա էլ է էստեղ։* (Ժպիտով): *Մի քիչ ամաչում եմ։*

ՔԵՐՈԼ— *Ի՞նչ կա ամաչելու։*

ՍԹԻՎ— *Ախր էդ աղջիկը Փեգին է։*

ՔԵՐՈԼ— (Ցնցված): *Փեգի՞ն։*

ՍԹԻՎ— *Երևի էդ ժամանակ նա ինձ ձեռ է տալու։*

ՔԵՐՈԼ— *Միգուցե Փեգին իրոք լավ աղջիկ է, բայց ոնց որ մի տեսակ...*

ՍԹԻՎ— *Ես նրան լավ չեմ ճանաչում։*

Մտնում է միսս Քուիքլին՝ երեքից մինչև տասներեք տարեկան յոթ երեխայի հետ: Սեամոբ Ռուզվելթը երեք տարեկան է, էլիսը՝ հինգ, Լորին՝ յոթ, մեթոթիկացի Պեդրո Գոնսալեսը՝ ութ, իտալացի Ջոնի Գալանտին՝ ինը, Հենրիետան՝ տասներեք: Բուչն էլ է նրանց հետ:

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— *Դե՛, երեխաներ, ի՞նչ անենք. երգե՞նք, թե՞ ներկայացում տանք։*

ՈՄԱՆՔ— *Երգենք։*

ՄՅՈՒՍՆԵՐԸ— *Ներկայացում տանք։*

ՌՈՒԶՎԵԼԹ— (Շեշտված, ասես ոխով): *Ոչ մի բան էլ չանե՛նք։*

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— *Ոչ մի բա՞ն, Ռուզվելթ։ Ի՞նչ է, դու իրոք չե՞ս ուզում երգել։*

ՌՈՒԶՎԵԼԹ— *Չէ։*

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— *Ուզո՞ւմ ես ներկայացում տանք։ Հա՞։*

ՌՈՒԶՎԵԼԹ— *Չէ։*

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— *Ուզում ես...*

ՌՈՒԶՎԵԼԹ— *Չէ։ Ոչ մի բան էլ չեմ ուզում։*

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— *Բայց ինչո՞ւ, Ռուզվելթ։*

ՌՈՒԶՎԵԼԹ— *Որովհետև։*

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— *Որովհետև ի՞նչ։*

ՌՈՒԶՎԵԼԹ— *Որովհետև չեմ ուզում։*

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— *Դու չե՞ս ուզում ուրախանալ։*

ՌՈՒԶՎԵԼԹ— *Չէ։*

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— (*Համբերատարությամբ*)։ *Բայց ինչո՞ւ, փոքրիկ։*

ՌՈՒԶՎԵԼԹ— *Որովհետև։*

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— *Օֆ-օ՜ֆ։*

ՍԹԻՎ— (*Ձայն տալով*)։ *Արի էստեղ, Ռուզվելթ։*

ՌՈՒԶՎԵԼԹ— (*Սթիվի մոտ գնալով*)։ *Նա ուզում է՝ հա կապիկություններ անենք։*

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— (*Ուրախացած, Սթիվին*)։ *Ախ, շնորհակալ եմ, Սթիվ։ Դե լավ, երեխաներ, երգենք։*

ՌՈՒԶՎԵԼԹ— (*Սթիվի գիրկը գնալով*)։ *Երգելո՞ւ են։ Երեխեքին զոռում է, որ երգեն կամ մի բան անեն։* (*Միսս Քուիքլիին նայելով*)։ *Ամո՞թ քեզ։*

ՍԹԻՎ— *Դու ինձ մոտ մնա, իմ ընկերն ես, չէ՞։*

ՌՈՒԶՎԵԼԹ— *Ուզում է կապիկություն անեն։*

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— (*Կտրուկ*)։ *Դե՛, երեխաներ։* (*Տոն տալով*)։ *Սթիվն Ֆոսթեր. «Գեղեցիկ երազողը»։ Պատրաստ։ Մեկ, երկու, երեք. սկսեցի՛ք։*

Միսս Քուիքլին ու երեխաները երգում են։

Շատ լավ էր, ապրեք, երեխաներ։ Դե՛, Ռուզվելթ, չե՞ս ուզում երգել։

ՌՈՒԶՎԵԼԹ— (*Աչքերը շռելով*)։ *Ամո՞թ քեզ... ո՞նց է խոսում ինձ հետ։*

ՄԻՍՍ ՔՈՒԻՔԼԻ— *Մեղա՜ աստծու։ Գնացի՛ք, երեխաներ։*

Նրանք քաշվում են մի կողմ։

Մտնում է Հեսքինգսը, նայում չորս կողմը։ Սա լավ հագնված, վայելուչ երիտասարդ է՝ Սրիվի հասակակիցը, բայց ավելի շահել է երեսում։

ՀԵՍԹԻՆԳՍ— (Աչքերը ճառում է սեամորթ տղային, շոյում գլուխը)· *Ո՞նց է մեր տղան։*

ՌՈՒՅՎԵԼԹ— *Չէ։*

ՀԵՍԹԻՆԳՍ— (Ծիծաղելով): *Ի՞նչը՝ չէ։*

ՌՈՒՅՎԵԼԹ— *Ամեն ինչն էլ՝ չէ։*

ՍԹԻՎ— (Նրան ճանգստացնելով): *Դե լավ, լավ, ճստոր։*

ՌՈՒՅՎԵԼԹ— (Բարկությամբ): *Մենակ Սթիվն է իմ ընկերը։*

ՀԵՍԹԻՆԳՍ— *Դե հա, իհարկե։*

ՌՈՒՅՎԵԼԹ— *Սթիվը ամենա՜-ամենալա՜վն է։*

ՀԵՍԹԻՆԳՍ— (Սթիվին ժպտալով): *Իհարկե, ամենալա՜վն է։*

ՔԵՐՈԼ— (Տխուր-տրտում գնում է երիտասարդներին): *Է՜հ, միստր Հեսթինգս, էս էլ մենք։*

ՀԵՍԹԻՆԳՍ— *Աստծու կամքով էստեղ սպասում ենք մինչև լույս աշխարհ ելնենք, մարդ մահկանացու դառնանք։ Գոհ չե՞ք, միստր Քերոլ։*

ՔԵՐՈԼ— *Աչքս ջուր կտրեց, էլ սպասելու համբերություն չունեմ։*

ՀԵՍԹԻՆԳՍ— *Իսկ դո՞ւ, Սթիվ։*

ՍԹԻՎ— (Պարզապես): *Էստեղ եմ, էլի։*

ՀԵՍԹԻՆԳՍ— *Ես էլ։* (Դադար): *Դե՛...*

ՍԹԻՎ— *Լսիր։ Զգիտեմ՝ տեղյակ ես, թե չէ, բայց եթե դու...*

ՀԵՍԹԻՆԳՍ— *Ճիշտն ասած, շատ լավ էլ տեղյակ եմ, բայց գրո՛ղը տանի...*

ՍԹԻՎ— *Ուզում եմ իմանաս...*

ՀԵՍԹԻՆԳՍ— (Ուրախ-զվարթ): *Ամեն ինչ լավ է։*

ՔԵՐՈԼ— (Մտախոհ): *Էստեղ մի սխալ կա, ինչ ուզում եք ասեք։*

ՀԵՍԹԻՆԳՍ— *Չէ, սխալ չկա։ Ամեն ինչ կարգին է։ Ի՞նչ արած, Սթիվ։ Երևի ինձ համար էլ դա է պահված։*

ՍԹԻՎ— *Ես էդ կարծիքին չեմ։*

ՀԵՍԹԻՆԳՍ— *Աստված որ մեկի առաջ դռները փակում է, դրա տեղը մի ուրիշի առաջ է բացում։ Դե, ինձ էլ բաժին է ընկել, որ իմ առաջ փակի։*

ՍԹԻՎ— *Դրա համար էլ ասում եմ, որ աշխարհը զզվելի է։*

ՀԵՍԹԻՆԳՍ— *Ի՞նչ իմանաս. կապրենք, կտեսնենք։*

ՍԹԻՎ— (Անկեղծորեն): *Շնորհակալ եմ։* (Քերոլին): *Այ, հիմա նա էնպես է, ոնց որ իր մահվան օրն է լինելու, ես էլ եմ էնպես, ոնց որ իմ մահվան օրը։ Պարզ է, որ մեղավորը նա չի, ոչ էլ ես, ուրեմն աշխարհն է։*

ՀԵՍԹԻՆԳՍ— *Մենք դեռ մարդ չենք դարձել։*

ՍԹԻՎ— *Ուզում ես ասել՝ դեռ տմարդի չենք դարձել։*

ՔԵՐՈԼ— *Է՜հ, տղերք, տղերք։*

ՀԵՍԹԻՆԳՍ— (Կենսուրախ): *Բա՛, միստր Քերոլ։* (Սթիվին): *Ինչքան էլ որ ապրում եմ չեմ ապրում, ուղածիս պես կյանք եմ քաշում։ Իսկ դո՞ւ։*

ՍԹԻՎ— (Մի ծաղում է, ընդհատում ծիծաղը): *Ես էլ չեմ պակաս մնում։*

Մտնում է Փեգին, ճայում չորս կողմը, մոտենում տղամարդկանց: Պարզապես կանգնում է նրանց մոտ:

Գիտե՞ս... դու ինձ դուր ես գալիս, Փեգի։ Նույնիսկ էստեղ, թեկուզ ծուռ ճանապարհի վրա ես ընկել։

ՓԵԳԻ— *Ո՜ւֆ, մարդու զահլա է գնացել... Հենց դրանից եմ էսպես վառվում-տապակվում։ Ոչ անելիք կա։ Ոչ մի հուզող բան կա։ Ե՞րբ եմ էստեղից պրծնելու, վերջանա գնա։ Սիրտս պարել է ուզում... Մի նոր երգ եմ լսել...* (Երգում է): *«Չեմ ուզում աշխարհը կրակի մատնել...»։*

Քերոլն ու Հեսթինգսը հեռանում են:

ՍԹԻՎ— *Դե լավ, հա, Փեգի... կպրծնես, էլի։*

ՓԵԳԻ— *Իմ ուզածը մենակ մի բան է. որ էս բոլորը վերջանա գնա։ Էլ չեմ դիմանում՝ շտապում եմ։ Ախր ե՞րբ ենք ճամփա ընկնում։*

ՍԹԻՎ— (Ռուզվելթին մյուս երեխաների մոտ դնելով): *Ժամանակը կգա, ճամփա կընկնենք... Է՜հ, ամեն րոպե էլ կարող է գնանք։ Քիչ առաջ մի խումբ բաց թողին։ Հաջորդը մենք ենք։* (Դադար: Ժպտում է Փեգիին): *Քո կողքին, Փեգի, ես էլ չեմ դիմանում՝ շտապում եմ։* (Ձեռքերը դնում է աղջկա ուսերին):

ՓԵԳԻ— (Տարակուսանքով): *Էստե՞ղ։*

ՍԹԻՎ— *Ի՞նչ տարբերություն՝ էստեղ, թե էնտեղ։ Ես քեզ շատ եմ սպասել։* (Գրկում է նրան ու համբուրում): *Գիտե՞ս, Փեգի, դու լավը չես, ու ես դրա համար եմ քեզ սիրում։ Որովհետև ես էլ լավը չեմ։ Չգիտեմ ինչու, բայց էդպես է։ Է՜հ, մինչև դա իմանալը, մենք բաժանված ենք լինելու, ու ես երկար ժամանակ քեզ չեմ տեսնելու։ Հիշիր ինձ, որ ճանաչես՝ ով եմ, երբ նորից հանդիպենք։*

ՓԵԳԻ— *Ես հիշողությունից թույլ եմ, բայց մեկ է՝ հենց որ տեսնեմ, քեզ, կճանաչեմ։*

ՍԹԻՎ— (Նրան նորից համբուրելով): *Կճանաչես, անհոգ մնա։*

Նրանք կանգնած համբուրվում են:

ԶՍՅՆԸ— *Դե՛, ժողովուրդ, գնալու ժամանակն է։ Ամբողջ ճառս նորից*

չկրկնեմ։ Դուք ելնում եք աշխարհ, ուզեք թե չուզեք, այնպես որ ճամփա ընկեք և հաջողություն՞ն ձեզ։

Բոլորը գնում են: Միայն Սթիվն Փեգին են մնացել կանգնած՝ համբուրվելիս:

Դո՛ւք, երկո՛ւսդ... ճամփա ընկեք։

Փեգին փորձում է Սթիվից պոկվել, բայց Սթիվը չի թողնում, որ գնա:

Դե՛, եկեք, եկեք, ամերիկացի սիրահարներ, եկեք ճամփա ընկեք։

Փեգին ազատվելու ճիգեր է թափում: Սթիվը բռնել է նրան: Փեգին վայր է ընկնում: Սթիվը նրան ափցանի մեջ է առել:

ՓԵԳԻ— (Շշնջալով): *Թող գնամ... խնդրում եմ, թող գնամ։*

Նրանք կատաղի քաշքշում են իրար:

ԶԱՅՆԸ— *Սա ի՞նչ բան է։ Ի՞նչ է կատարվում այստեղ։*

Լսվում է սուլիչի ձայն, ասես ոստիկան է սուլում, բայց Սթիվը կառչել է Փեգիից: Ի վերջո, Փեգին դուրս է պրծնում, ոտքի կանգնելով՝ շրջվում ու վազում: Սթիվը վեր է կենում, իմաստուն ժպիտով հայում շորսբոլորը: Շտկվում է: Մինչ նա կանգնած է, լսվում է նորածնի ճիչ, կարծես դա հենց ինքն է, որ արդեն ծնվել է: Նա հայացքը պտտեցնում է չորս կողմը, հանգիստ շրջվում է ու քայլում դեպի դուրս։

ՍԹԻՎ— *Դե լավ, լավ, գնում եմ։*

ՊԻՆԳ-ՊՈՆԳ ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ

Սենյակ։
Իրիկնամուտ։
Մի աղա և աղջիկ պինգ-պոնգ են խաղում։

ՏՂԱ— (Մի միավոր շահելով)։ *Կներես։*

ԱՂՋԻԿ— *Էլի դու տարար։*

ՏՂԱ— *Չէ, օյինը չի վերջացել։ Հաշիվը քսան-տասնինն է։*

ԱՂՋԻԿ— *Բայց դու կտանես։*

ՏՂԱ— *Աշխատիր դու տանել։*

ԱՂՋԻԿ— *Ահ, կաշվիցս դուրս եմ գալիս։ Բայց անընդհատ դու ես տանում։ Իմ համեմատ շատ լավ ես խաղում։*

ՏՂԱ— *Հաշիվը համարյա հավասար է։*

ԱՂՋԻԿ— *Ավելի վատ։ Ամեն անգամ քիչ է մնում տանեմ։ Բայց հետո տարվում եմ։*

ՏՂԱ— *Կներես։ Ես հիմարի մեկն եմ։*

ԱՂՋԻԿ— *Չէ, ինչո՞ւ։*

ՏՂԱ— *Դե, կարող էի էնպես դասավորել, որ մի անգամ էլ գոնե դու տանես։*

ԱՂՋԻԿ— *Ես կվիրավորվեի։*

ՏՂԱ— *Հենց դրանից էլ վախենում էի։ Դու մյուս կանանց նման չես, գիտե՞ս։*

ԱՂՋԻԿ— *Ի՞նչ ես ուզում դրանով ասել։*

ՏՂԱ— *Ուզում եմ ասել, որ չես սպասում քեզ զիջումներ անեն։ Փաստորեն դո՛ւ ես զիջումներ անում։*

ԱՂՋԻԿ— *Չէ, ես ոչ մի զիջում չեմ անում։*

ՏՂԱ— *Անում ես։ Համոզված եմ, որ ուզածդ օյինը կարող էիր տանել։ Դու ինձանից հազար անգամ լավ ես խաղում։*

ԱՂՋԻԿ— *Չէ։ Դու ես լավ խաղում։ Դու համառ ես ու համբերատար։ Դրա համար էլ չես տարվում։*

ՏՂԱ.— Չէ, դու ուղղակի բարի ես։ Բարությունը քո միս ու արյունն է դարձել։ Էնքան խորն է արյանդ մեջ մտել, որ չես էլ գիտակցում։

ԱՂՋԻԿ— Ա՛հ, չէ՞ մի։ Ի՞նչ ես քեզանից բաներ հնարում։

ՏՂԱ.— Ոչ մի բան էլ չեմ հնարում։

ԱՂՋԻԿ— Շատ լավ էլ հնարում ես։

ՏՂԱ.— Բայց ինչո՞ւ ես էդ կարծիքին, է՛։

ԱՂՋԻԿ— Աշխարհում ամենից շատ ուզում էի գոնե մի անգամ քեզ հաղթել... թեկուզ էս հիմար, չնչին խաղի մեջ։ Բայց էդպես էլ ուժս չպատեց։

ՏՂԱ.— Հաղթելու ցանկությունը միանգամայն բնական բան է։ Չարժի խաղալ, եթե մարդ հաղթելու ցանկություն չունի։

ԱՂՋԻԿ— Ախր շատ-շատ էի ուզում։

ՏՂԱ.— Քեզ թվում է՝ ես չէի՞ ուզում։

ԱՂՋԻԿ— Չէ, չէիր ուզում։ Դու էնպես ես խաղում, ասես դա քեզ համար ոչ մի նշանակություն չունի։ Բացարձակապես ոչ մի։ Դրա համար էլ տանում ես։ Որովհետև քեզ համար մեկ է։ Որովհետև սիրտդ չի էլ նեղվի, եթե տարվես։ Նույնիսկ եթե բոլոր օյինները տարվես։

ՏՂԱ.— Է՛հ, ինձ ապուշավարի եմ պահել։ Կներես։

ԱՂՋԻԿ— Քեզ հաղթելու համար խելքս իմը չէր։ Ճիշտն ասած, հիմա ամոթից գետինն եմ մտնում։

Տղան աչքերը հառում է նրան։

Արի էս օյինը կիսատ թողնենք։ Ու էլ չխաղանք։

ՏՂԱ.— Լո՞ւրջ։

ԱՂՋԻԿ— Աղաչում եմ։

ՏՂԱ.— Է՛, գլխիս վրա։ Ես միշտ էլ ատել եմ էս խաղը։ Կարծում էի քեզ է դուր գալիս։

ԱՂՋԻԿ— Չէ, ես էլ եմ ատում։

ՏՂԱ.— Ո՛ւխ, ինչ լավ է։ Ուրեմն գլուխներս էլ չե՞նք ցավացնի։

ԱՂՋԻԿ— Սա մեր վերջին խաղն է։

ՏՂԱ.— Արի ջարդենք սեղանն ու էս փոքրիկ, ախմախ գնդակները ցիրուցան անենք։

ԱՂՋԻԿ— Արի։

ՏՂԱ.— (Գնդակը հատակին զարկելով)։ Մի բան պիտի քեզ ասեմ։

ԱՂՋԻԿ— (Մի ուրիշ գնդակ հատակին զարկելով)։ Ասա։

ՏՂԱ.— Ինձ միշտ թվացել է, թե քեզ սիրում եմ։ Հիմա հաստատ գիտեմ, որ սիրում եմ։ (Մոտենում է աղջկան և հայացքը հառում նրա երեսին)։ Ո՞ւր էիր մինչև հիմա։

ԱՂՋԻԿ— Աստված իմ, ես էլ կուզեի իմանալ. չգիտեմ, ճիշտն ասած։ Մի ահավոր բան եմ ուզում ասել։ Հա, անպայման պիտի ասեմ։

ՏՂԱ— Ի՞նչ կա որ, ասա։

ԱՂՋԻԿ— Չես պատկերացնի քեզ ո՞նց էի ատում։

ՏՂԱ— Վախ, ինչ հրաշալի է։ Ինչ լավն ես հիմա։ Գիտե՞ս ինչ։

ԱՂՋԻԿ— Ի՞նչ։

ՏՂԱ— Ես քո մորն էլ եմ սիրում։

ԱՂՋԻԿ— Նրա՞ հետ ինչ գործ ունես։

ՏՂԱ— Հա, նրան էլ եմ սիրում։ Ախր ինձ չտեսնված լավություն է արել։

ԱՂՋԻԿ— Ի՞նչ լավություն։

ՏՂԱ— Քեզ աշխարհ է բերել։

ԱՂՋԻԿ— Ամեն մարդու էլ մեկնումեկը աշխարհ է բերում, էլի։

ՏՂԱ— Չէ, ես հենց մորդ եմ սիրում, որ քեզ է աշխարհ բերել։ Հորդ էլ եմ սիրում։ Հորդ մորն ու հորն էլ։ Մորդ հորն ու մորն էլ։ Բոլորին սիրում եմ։ Առաջ չէի սիրում։ (Գնդակներից մեկը հատակին է զարկում)։ Դու էլ գիտես, որ խղճուկ մարդիկ են։

ԱՂՋԻԿ— Ինչ հիմարություն է, չէ՞, որ մարդ վախենում է տհաճ լինելուց։

ՏՂԱ— Պիտի լինես էն, ինչ որ կաս, համ լավը, համ վատը, թե չէ անիմաստ բան է ստացվում։ Ուզո՞ւմ ես կռվենք։ Մենք երբեք չենք կռվել։ Միշտ էլ էնքան սիրալիր ենք եղել ու ծիծաղելի. ցցվել ենք դեմ-դիմաց՝ պինգ-պոնգի սեղանի հակառակ ծայրերում, էս փոքրիկ հիմար գնդակը դեսուդեն գցել ու աչքներս չորս արած հետևվել, որ չլինի թե սահմանից դուրս թռչի, ինչ է՝ մեկնումեկս մի միավոր շահենք։ Մի անմիտ միավոր անմիտ խաղի մեջ։ Արի իսկականից կռվենք։

ԱՂՋԻԿ— Շատ լավ։ Արի գոռգոռանք մեկս մյուսի վրա ու տուրուդըմփոց սարքենք, շուն ու կատվի պես իրար միս ուտենք ու մեզ յոթերորդ երկնքում զգանք։

ՏՂԱ— Անուշիկս, դու լրբի մեկն ես։ Այ, սիրտս փառավորվեց։

ԱՂՋԻԿ— Սիրելիս, ո՞նց ես համարձակվում հետս էդ ձևով խոսել։

ՏՂԱ— (Ձայնը բարձրացնելով)։ Քեֆս տալիս է, էսպես եմ խոսում։ Ինչ ուզեմ, էնպես էլ կխոսեմ հետդ։

ԱՂՋԻԿ— (Սառնությամբ)։ Ո՞նց ես համարձակվում։

ՏՂԱ— Որ ասում եմ՝ լիրբ ես, ուրեմն լի՛րբ ես, էլի։

ԱՂՋԻԿ— Մի սրան տես, է՛, էս դդում գլխին, տո անճոռնի մեյմո՛ւն, մարդ զզվում է, թե երեսիդ նայի։

ՏՂԱ— Հիանալի է։ Շան աղջիկ, դեռ խոսում է՞լ ես, անզգամի մեկը, ոտից-գլուխ ոչնչություն ես, քիչ չի, հետն էլ չբեր ես։

ԱՂՋԻԿ— Ես գնում եմ մորս մոտ։

ՏՂԱ— Գրողի ծո՛ցը գնաս մորդ հետ միասին։

ԱՂՋԻԿ— Չբե՞ր։ Էդ բա՞ռն ինչու ասացիր։

ՏՂԱ— Կռվում ենք, չէ՞։ Սիրելիս, արի սկսածը կիսատ չթողնենք։ Դու իսկականից էլ չես կարող...

ԱՂՋԻԿ— Կարող եմ։

ՏՂԱ— Քեզ անխելք կնկա տեղ մի դիր։ Չես կարող։

ԱՂՋԻԿ— Կարող եմ։

ՏՂԱ— Անամոթի պես ստում ես։

ԱՂՋԻԿ— Չէ, ճիշտ եմ ասում։ Մտքիս որ լիներ...

ՏՂԱ— Սուտ ես ասում։

ԱՂՋԻԿ— Չէ, իրոք։ Ես չէ՛ի ուզում։ Ստելությամբ էի լցված։ Չէի կարողանում էն մտքի հետ հաշտվել, որ քեզ նման մեկն էլ է լինելու։

ՏՂԱ— Ախ, ինչ լավ է, փչոցներդ ուղղակի հոյակապ են։ Արի իսկապես մի այլանդակ գզվռտոց սարքենք։ Խփե՞մ քեզ։ Մի վախենա, կամաց կխփեմ։

ԱՂՋԻԿ— Թե ուզում ես, խփիր, սիրելիս, թեկուզ ամբողջ ուժով։

ՏՂԱ— Ո՜ւհ, ծիծաղից մարդ կմեռնի։ (Մոտենում է աղջկան, պատրաստվում խփել։ Ձեռքը թափով վրա է բերում ու դիտմամբ վրիպում)։

ԱՂՋԻԿ— Է՜հ, սիրելիս, ախր դու կարող ես դա ավելի լավ անել։

ՏՂԱ— Ձեռքս չի գնում քեզ խփեմ։

ԱՂՋԻԿ— Ասացիր՝ կխփես։ Ասացիր, չէ՞։ Խնդրում եմ, վախկոտ մի լինիր։

ՏՂԱ— Չէ, ինքս ինձանից էնքան կզզվեմ։

ԱՂՋԻԿ— Աղաչում եմ, խոսքիդ տերը եղիր։

ՏՂԱ— (Ճիգ թափելով)։ Չեմ կարող։ Ազնիվ խոսք, չեմ կարող։ Ես քեզ սիրում եմ։

ԱՂՋԻԿ— Թե սիրում ես, խփիր։

ՏՂԱ— Բայց դրա համար գոնե մի առիթ պիտի տաս։

ԱՂՋԻԿ— Ես անհավատարիմ եմ եղել քեզ։

ՏՂԱ— Օ՜հ, դու իսկական հրաշք ես։

ԱՂՋԻԿ— Չէ, իսկապես։ Դավաճանել եմ։

ՏՂԱ— Վախ, ինչ հետաքրքիր է։ Ո՞ւմ հետ ես դավաճանել։

ԱՂՋԻԿ— Է՜, ամենագարշելի մարդկանց։ Տականքների հետ։ Դու պիտի խոսքիդ տերը լինես։

ՏՂԱ— Մտքովս երբեք չի անցել, որ դու կարող ես էսքան սքանչելի լինել։

ԱՂՋԻԿ— Դու պիտի խփես ինձ, թեկուզև զզվես ինքդ քեզանից։

ՏՂԱ— (Նորից ճիգ թափելով)։ Չեմ կարող։ Ազնիվ խոսք, չեմ կարող։

ԱՂՋԻԿ— Նա քեզանից չի։ Հիմա կխփե՞ս։

ՏՂԱ— Ի՞նչը չի ինձանից։

ԱՂՋԻԿ— Լսո՞ւմ ես, քեզանից չի։

ՏՂԱ— Ինչ հրաշալի է։ Ես համարյա թե հավատում եմ քեզ։

ԱՂՋԻԿ— Ես ճշմարտությունն եմ ասում։

ՏՂԱ— Արևս վկա, հենց էդպես էլ հնչում է։ Ո՞նց էլ էդքանը բստրում ես։

ԱՂՋԻԿ— Խնդրում եմ, հավատա ինձ։

ՏՂԱ— Ինչ է, չե՞նք կռվում։

ԱՂՋԻԿ— Կռվում ենք, բայց ես ճշմարտությունն եմ ասում։ Դու պիտի թողնես ինձ կամ էլ ջարդս տաս, որ ես ստիպված նրան փչացնեմ։ Նա քեզանից չի։

ՏՂԱ— Ինչե՞ր ես ասում։

ԱՂՋԻԿ— Նա քեզանից չի։

ՏՂԱ— Ո՞նց թե ինձանից չի։

ԱՂՋԻԿ— Ուրիշից է։ Դու պիտի խփես ինձ, եթե սիրում ես։

ՏՂԱ— Չեմ կարող քեզ խփել։ Գիտե՞ս, դու մարդու սրտաճաք կանես։

ԱՂՋԻԿ— (Ապտակում է տղային)։ Ես հղի եմ։ Բայց նա քեզանից չի։ Քանի՞ անգամ պիտի նույն բանը ասեմ։

ՏՂԱ— (Աղջկան թափ տալով)։ Լսեցի, խուլ չեմ։ Դե՛, գնա գործդ տես, լույս աշխարհ բեր էդ լրբի լակոտին։ Ա՜յ թե դրամատիկ տեսարան է, չէ՞։

ԱՂՋԻԿ— Օ՜, տեր աստված։

ՏՂԱ— Հիմա ի՞նչ՝ իսկապես բարկանա՞մ վրադ։

ԱՂՋԻԿ— Ի՞նչ բարկանալ, պիտի սև բերեիր գլխիս։

ՏՂԱ— Վերջ չտա՞նք դերասանությանը։

ԱՂՋԻԿ— Ուզում ես՝ վերջ տանք։

ՏՂԱ— Չնայած զվարճալի էր, չէ՞։

ԱՂՋԻԿ— Կյանքումս էսքան զվարճացած չկայի։

Մտնում է աղջկա մայրը։

ՄԱՅՐ— Ականջովս գոռգոռոց ընկավ։ Ի՞նչ է պատահել։

ԱՂՋԻԿ— Կռվում էինք։

ՄԱՅՐ— Ի՞նչ ունեք կռվելու։

ԱՂՋԻԿ— *Ես հղի եմ։* (Մի հայացք գցելով տղայի վրա)։ *Բայց երեխան ամուսնուցս չի։*

ՄԱՅՐ— *Մեղա՛ քեզ աստված, էդ ի՞նչ ես դուրս տալիս։*

ԱՂՋԻԿ— *Ճշմարտությունն եմ ասում։*

ՏՂԱ— *Ինչ հրաշալի է, չէ՞։*

ՄԱՅՐ— *Հրաշալի՞։ Խելքդ հե՞տ ես տվել։*

ՏՂԱ— *Մենք որոշեցինք մի կարգին կռիվ սարքել։ Էնքան լավ էր, չեք պատկերացնի։ Գնամ, մի քանի շիշ գարեջուր բերեմ, խմենք ու լավ ժամանակ անցկացնենք։* (Գնում է)։

ՄԱՅՐ— *Էս ի՞նչ բան է, մի ասա տեսնեմ։ Լեղիս ջուր կտրեց։*

ԱՂՋԻԿ— (*Խոժոռված*)։ *Ես հղի եմ, բայց երեխան նրանից չի։*

ՄԱՅՐ— *Բա ումի՞ց է։*

ԱՂՋԻԿ— *Չգիտեմ։*

ՄԱՅՐ— *Ո՞նց թե։*

ԱՂՋԻԿ— *Հենց էդպես։ Մեկը չէր, որ ասեմ, մի քանիսն էին։ Չորս հոգի։ Աշխարհի ամենաայլանդակ մարդիկ։*

ՄԱՅՐ— *Սուտ ես ասում, չէ՞։*

ԱՂՋԻԿ— *Չէ։ Ճիշտ եմ ասում։ Նա էլ չի հավատում։*

ՄԱՅՐ— *Ա՜խ, մարդ ձեր ձեռքին կխելագարվի։ Ի՞նչ ես անելու։*

ԱՂՋԻԿ— *Չգիտեմ։ Երևի ինչ որ նա ասի։*

ՄԱՅՐ— *Խելքի արի։ Նա քեզ չի հավատում։*

ԱՂՋԻԿ— *Պարտավոր է հավատալ։*

ՄԱՅՐ— *Ոչ մի դեպքում։*

ԱՂՋԻԿ— *Ես սիրում եմ նրան։ Իրոք սիրում եմ։ Առաջ չեմ սիրել իսկականից։ Կեղտոտի մեկն եմ եղել։ Նա պիտի հասկանա ինչ է կատարվել։ Ոնց որ ասի, էնպես էլ կանեմ։*

ՄԱՅՐ— *Նա չպիտի իմանա։*

ԱՂՋԻԿ— *Ես ուզում եմ ասի, որ պիտի փչացնեմ երեխային։ Այ, դրանից հետո իսկական մարդ ու կին կդառնանք։ Մինչև հիմա ես չգիտեի, թե ինչքան եմ սիրում նրան։*

ՄԱՅՐ— *Եթե նրան ասես, հետդ երբեք չեմ խոսի։ Տեղնուտեղը կթողնեմ, տուն կգնամ։*

ԱՂՋԻԿ— *Խնդրեմ, ճամփադ բաց է, մայրիկ։ Գնա տուն ու երբեք հետս մի խոսիր։ Երբեք։*

ՄԱՅՐ— *Չէ, դու իրոք որ կեղտոտի մեկն ես։* (Գնում է)։

Աղջիկը մոր հետևից մի գնդակ է նետում։ Մայրը շրջվում է, սառնորեն չափչըփում նրան, ապա հեռանում։ Աղջիկն աչքերը հառում է պինգ-պոնգի սեղանին, հետո շոտ տալիս սեղանն ու մի քանի անգամ ռաքետով հարվածում, մինչ

տղան վերադառնում է մի սպասավորի հետ, որը գարեջրի շշերով բեռնված մատուցասեղան է քշելով բերում։ Սպասավորը գնում է։

ՏՂԱ— *Քեֆներիս քեֆ չի հասնի։*

ԱՂՋԻԿ— *Սիրելիս...*

ՏՂԱ— *Ի՞նչ է։*

ԱՂՋԻԿ— *Մայրս...*

ՏՂԱ— *Մայրդ՝ ի՞նչ։*

ԱՂՋԻԿ— *Տուն գնաց։*

ՏՂԱ— *Ինչո՞ւ։ Հենց հիմա՞ պիտի գնար, նոր էր սիրտս մտել։*

ԱՂՋԻԿ— *Ես նրան ասացի։*

ՏՂԱ— *Ի՞նչ ասացիր։*

ԱՂՋԻԿ— *Ճշմարտությունը։*

ՏՂԱ— *Ի՞նչ ճշմարտություն, որ սի՞րտս է մտել։*

ԱՂՋԻԿ— *Չէ, որ ես հղի եմ, բայց երեխան քեզանից չի։*

ՏՂԱ— *Խեղճը ապշահար եղած կլինի։ Իզուր ես ասել։*

ԱՂՋԻԿ— *Խնդրում եմ, լսիր։*

ՏՂԱ— *Ի՞նչ կա։*

ԱՂՋԻԿ— *Սա ճիշտ է։ Ես սուտ չեմ ասում։*

ՏՂԱ— *Ախր մեզ համար զվարճանում էինք, էլի։ Բեր համը չհանենք։ Արի գարեջուր խմենք ու իսկականից կապներս կտրենք։ Խաղը չփչացնենք։*

ԱՂՋԻԿ— *Երևի բան դուրս չգա։*

ՏՂԱ— *Ինչո՞ւ։*

ԱՂՋԻԿ— *Որովհետև ասածներս ճիշտ են։*

ՏՂԱ— *Կատակ չե՞ս անում։*

ԱՂՋԻԿ— *Չէ։*

ՏՂԱ— *Օհո՜։* (Դադար։ Ուղղում է պինգ-պոնգի սեղանը։ Մի գնդակ է հատակից վերցնում, պատրաստվում խաղալու)։ *Պատրա՞ստ ես։*

ԱՂՋԻԿ— *Պատրաստ եմ։*

ՏՂԱ— (Գնդակին հարվածելով)։ *Ումի՞ց է։*

ԱՂՋԻԿ— *Չգիտեմ։* (Մի միավոր է շահում)։

ՏՂԱ— *Սիրտս կտրատվում է, գիտե՞ս։*

ԱՂՋԻԿ— *Գիտեմ։ Ներիր ինձ։*

ՏՂԱ— *Քո կարծիքով ես ի՞նչ պիտի անեմ։*

ԱՂՋԻԿ— *Ճիշտն ասած, չգիտեմ։*

ՏՂԱ— *Ես չեմ թողնի քեզ։ Ես քեզ սիրում եմ։ Մեկ է, սիրում եմ։*

ԱՂՋԻԿ— *Դու պիտի թողնես ինձ։ Զզվելի բան է։*

ՏՂԱ— *Չէ, իրոք. չեմ կարող։* (Մի միավոր է շահում):

ԱՂՋԻԿ— *Հնարավոր չի։*

ՏՂԱ— *Ոչ թե քեզ համար եմ ասում, որ չեմ թողնի քեզ, ինձ համար եմ ասում։ Ես քեզ սիրում եմ։*

ԱՂՋԻԿ— *Օ՜հ, դու պիտի թողնես ինձ։*

ՏՂԱ— *Չէ։*

ԱՂՋԻԿ— *Ա՜հ, սիրելիս, արի վերջ տանք էս տափակ խաղին։*

ՏՂԱ— *Դե լավ։* (Մոայլ): *Չկարծես թե հեշտ է լինելու...*

ԱՂՋԻԿ— *Նա իմն է... ինչ էլ որ լինի։*

ՏՂԱ— *Հա, իհարկե... Բայց ես կուզեի, որ իմն էլ լիներ։* (Ձգմում է գրնդակը):

ԱՂՋԻԿ— *Ես էլ կուզեի։ Աշխարհում ամենից շատ։* (Մի կողմ է հրում սեղանն ու ոտքով հարվածում):

Երկուսն էլ լուռումունջ իրար են նայում:

ՏՂԱ— *Է՜հ, ինչ արած։*

ԱՂՋԻԿ— *Սիրելիս...*

ՏՂԱ— *Ի՞նչ է։*

ԱՂՋԻԿ— *Նա քոնն է։*

ՏՂԱ— *Ի՞մը։*

ԱՂՋԻԿ— *Հա։ Ես միշտ էլ հավատարիմ եմ եղել քեզ։*

ՏՂԱ— *Դու գժվելու լիրբ ես։*

ԱՂՋԻԿ— *Օ՜հ, սիրելիս։*

ՏՂԱ— (Գարեջուր է խմում): *Հիմա արդեն սրտներս ուզածի պես կզվարճանանք։*

ԱՂՋԻԿ— (Գարեջուր է խմում): *Հա։*

ՏՂԱ— *Ամենից առաջ պինգ-պոնգի էս սեղանը ջարդուփշուր կանենք։*

ԱՂՋԻԿ— (Սեղանի ոտքը ջարդելով): *Օհ, սիրելիս։*

ՏՂԱ— *Իսկ հետո մի լավ կխմենք։ Ճիշտ ես ասում, թե սուտ, մեկ է, ես սիրում եմ քեզ, որովհետև դու իմն ես, և ինչ որ քոնն է, իմն էլ է։ Աշխարհում ոչ մի բան չի կարող դա փոխել։ Արի գնանք, մի ուրախ տեղ գտնենք, խմենք ու ամբողջ գիշեր դուրսը անցկացնենք։*

Թև թևի տված գնում են:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Տեսարան առաջին

Ավտոկանգառին հարող Քրուիշընֆի խորտկարանում Արշի Քրուիշընֆը, քսան տարի առաջ Լոնդոնից այստեղ տեղափոխված վաքսունին մոտ մի տղամարդ, աշխի է անցկացնում ինչ-որ թղթեր, միաժամանակ շտկելով սեղանի կողքի աթոռը: Ներս է մտնում դեռատի մի կին:

ԱՐՉԻ— *ԷՀ ում ճարն է կտրվել։ Ի՞նչ եք ուզում ինձանից։*

ԱՂՋԻԿ— *Այ քեզ բա՜ն, Արշի։ Հաճախորդին այդպիսի հա՞րց կտան։ Մի խմելու բան եմ ուզում, ի՜նչ պիտի ուզեմ։*

ԱՐՉԻ— *Խմելու բան կուզես, բա չէ՞։ Հապա մի նայիր այս ցուցանակին։* (Մատնացույց է անում):

ԱՂՋԻԿ— (Կարդում է): *«Դատարան»։ Այսինքն ի՞նչ։*

ԱՐՉԻ— *Այսինքն այն, որ քո մտադրությունը չի իրագործվի։ Համենայն դեպս՝ ոչ էստեղ։*

ԱՂՋԻԿ— *Դե լավ, Արշի, ձևեր մի թափի։ Անցիր քո տեղն ու ինձ մի հատ վիսկի լցրու, ինչպես դա անում էիր համարյա ամբողջ մի տարի։*

ԱՐՉԻ— *Կանցնեմ, բա չէ՞։ Ես քեզ դո՜ւրս կանեմ էստեղից, ահա՛ թե ինչ։*

ԱՂՋԻԿ— (Ապշած): *Ես չէի կարծում, Արշի, թե բոլորի պես դու էլ ես գռեհկացել։ Ես քեզ միշտ իմ բարեկամն եմ համարել, իսկ քո խորտկարանը՝ բարեկամի տուն։ Բայց եթե դու էլ ես ուրիշների պես դարձել, քո գործն է... Ես կգնամ ու ինքս ինձ կասեմ՝ «Ինչ արած, ես մի հոգի մյուս բոլորի պես դարձավ...»։*

ԱՐՉԻ— *Ինչ կլինի գլուխս չտանես։ Տեսա՞ր դռան վրայի ցուցանակը։ Ուրեմն էլ ինչո՞ւ ներս մտար։ Էստեղ հիմա դատարան է, դատարան։*

ԱՂՋԻԿ— *Ես տեսա, բայց կարծեցի երևի մեկնումեկը կպցրել է քեզ ձեռ առնելու կամ հանաք անելու համար։ Համ էլ այդ ցուցանակն առանձնապես մեծ չի, իսկ քոնը դեռ իր տեղում է և շատ ավելի է աչքի ընկնում՝ ՔՐՈՒԻՔՇԸՆՖԻ ԽՈՐՏԿԱՐԱՆ։*

ԱՐՉԻ— *Մեկ է, էստեղ հիմա դատարան է։*

ԱՂՋԻԿ— *Սրբվանի՞ց։*

ԱՐՉԻ— *Գիշերվա ժամը երեքից, երբ եկան ինձ քնից հանեցին ու տեղ-նուտեղն էլ իմաց տվին։ Նրանք ինձ հանձնեցին էս տպագիր հրահանգները, ապա բանավոր հրահանգներ տվին, ակնարկեցին նաև ուրիշ հրահանգներ ու ամեն կերպ ինձ ինչ որ պետքն է հասկանալ տվին։*

ԱՂՋԻԿ— *Ովքե՞ր, Արչի։*

ԱՐՉԻ— *Ովքե՞ր։* (Մատնանշում է ցուցանակը)։ *Ինքդ կարդա, թե ովքեր։ Հիմա ուր որ է պիտի գան։ Ես ժամացույցն ուղղել եմ ճիշտ նրանց հրահանգի համաձայն։ Դատարանը բացվում է ժամը տասին։ Հիմա քառորդ է պակաս, էնպես որ լավ կանես՝ գնաս։*

ԱՂՋԻԿ— *Թույլ տուր մնամ, Արչի, թույլ տուր նայեմ։ Ես երբեք դատավարություն չեմ տեսել։ Ասում են, թե դրանց փաստաբաններն իսկի փաստաբան էլ չեն, դատավորներն էլ դատավոր չեն ու ոչ մեկի խելքը ոչինչ չի կտրում, բայց մեկ է, դատում են այնպես, կարծես գիտեն, թե ինչ են անում։ Աստված օգնի նրան, ում բախտը չքերի ու դրանց ձեռքն ընկնի։*

ԱՐՉԻ— *Այ, հենց դու էլ կընկնես։*

ԱՂՋԻԿ— *Ինչո՞ւ, ես հո Հանրապետության թշնամի՞ չեմ։*

ԱՐՉԻ— *Չե՞ս... իսկ դու տեսե՞լ ես նրանց կողմից թշնամի համարվող մարդկանց ցուցակը։ Խնդրեմ, ինքդ աչքի անցկացրու։* (Մատը սահեցնում է ցուցակն իր վար ու հանկարծ ընդհատում)։

Ինքդ կարդա ու տես։

ԱՂՋԻԿ— *Սրանց լեզուն ինձ դուր չի գալիս։ Ըստ իս, կարելի էր երևի ավելի հիրթ ձևեր ընտրել։ Բոլոր դեպքերում նրանք ոչ մի բան չեն կարող ապացուցել։ Թույլ տուր մնամ ու նայեմ։*

ԱՐՉԻ— *Աղջի, սա քեզ համար թամաշա չի։*

ԱՂՋԻԿ— *Չէ՞ որ մենք բարեկամներ ենք, Արչի։ Եթե խմել չի կարելի, թող գոնե մնամ ու նայեմ։ Աստված վկա, ես շատ միայնակ եմ, Արչի։ Ես ուրիշ գնալու տեղ չունեմ՝ իմ միակ հույսը քեզ մոտ մի քիչ շունչ առնելն էր։*

ԱՐՉԻ— *Սա այլևս քո ասած տեղը չի։ Վեր կաց գնա, քանի դրանց ձեռքը չես ընկել։*

ԱՂՋԻԿ— *Արչի, դու ոսկի սիրտ ունես՝ եթե իմ մասին չմտածեիր, անշուշտ կթողնեիր, որ մնամ։ Ես դա գնահատում եմ, շատ եմ գնահատում։*

ԱՐՉԻ— *Դե որ գնահատում ես, շարժվիր, էլ ի՞նչ ես ուզում։*

ԱՂՋԻԿ— Դե լավ, Արշի։ (Շրջվում է, որ հեռանա)։ Մնաս բարով։ Ես շատ եմ կարոտելու այս տեղը։

ԱՐՉԻ— Կարոտելո՞ւ, ինչի՞ համար։ (Քրքրում է թղթերը)։ Հո հավիտյան չե՞ս գնում։ Չեմ կարծում, թե էստեղ գրած լինի, որ այդ ամենը մի օրից ավել կտևի։

ԱՂՋԻԿ— Իսկ գրվա՞ծ է, թե միայն մի օր կտևի։

ԱՐՉԻ— Ոչ։

ԱՂՋԻԿ— Ուրեմն ինչքան ուզեն, այնքան էլ կտևի։ Թեկուզ հավիտյան։

ԱՐՉԻ— Չէ, դա լինելու բան չի։ Չէ՞ որ ես իմ փոքրիկ, բայց շահավետ գործն եմ բացել և հաճախորդներ ունեմ։ Չէ, ինչ ես ասում, իհարկե, մի օրից ավել չի տևի։

ԱՂՋԻԿ— Աստված տա, Արշի։

ԱՐՉԻ— Դե լավ, գնա, գնա՛։ Լույսը չբացված հոգիս մի պղտորիր։

ԱՂՋԻԿ— Այդ ե՞ս եմ պղտորում... Մի տես, թե ով-ում ի՞նչ է ասում։ Ճշմարտությունից փախչելն իմաստ չունի՝ այդ դու ես նրանց ձեռքն ընկել, Արշի։

ԱՐՉԻ— Լավ եմ արել, ընկել եմ, քե՞զ ինչ։

ԱՂՋԻԿ— Բայց տեսնես ինչո՞ւ են հենց այստեղ եկել, փոխանակ դատարանի համար մի ավելի հարմար տեղ գտնելու։

ԱՐՉԻ— Կողքի ավտոկանգառի պատճառով՝ իրենք ասացին։ Ավելի շուտ՝ կանգառի շուրջ եղած պահեստների աղյուսե բարձր պատերի պատճառով, ա՛յ թե ինչու։

ԱՂՋԻԿ— Կանգառն ու բարձր պատերը նրանց ինչի՞ն են պետք։

ԱՐՉԻ— Գիշերը լապտերներով եկել՝ չափում-ձևում էին։ Դատավորն իմ տեղն է կանգնելու։ Փաստաբանները կնստեն սեղանների մոտ ու բարի դիմաց հետ ու առաջ կանեն, իսկ բանտարկյալներին հերթով կկանգնեցնեն այ, էնտեղ։

ԱՂՋԻԿ— Իսկ ավտոկանգա՞ռը։

ԱՐՉԻ— Ի՞նչ իմանամ։ Երևի էնտեղ էլ բանտարկյալներին պահեն։ Ինչ էլ որ լինի, դու լավ կանես՝ թողնես գնաս։

ԱՂՋԻԿ— Վախենում եմ, Արշի։ Հիմա այնքան շատ են ինքնասպան լինում՝ զենքով, հաբեր խմելով, շենքերից գցվելով, մեքենաներն իրար խփելով կամ անդունդ գլորելով։ Շատերն իրենց հետ երեխաներին, ամուսիններին ու ծնողներին են սպանում։ Ամեն անգամ թերթում մի հինգ-վեց այդպիսի դեպքի եմ հանդիպում։ Անծանոթ մարդիկ են, բայց դե նրանք էլ ամուսին են, ծնող կամ զավակ։ Վախենում եմ, Արշի։

ԱՐՉԻ— Լավ, լա՛վ, շատ մի հուզվիր։

ԱՂՋԻԿ— Ես ինձ դրսում շատ եմ մենակ զգում, Արշի։ Միշտ մի տեղ եմ փնտրում, որ մի քիչ շունչ քաշեմ, ու սա իմ գտած միակ այդպիսի տեղն էր։ Իմ սենյակը սրտ պես չի և երևի ինքնասպան լինողների սենյակներին է նման։ Հենց որ սենյակում մենակ եմ մնում, Արշի, աստված վկա, մտածում եմ, որ ես էլ նույնը կանեմ։ Ստիպված կլինեմ անել, ուրիշ ոչինչ չի մնա անելու, որովհետև բանը բանից անցել է, էլ ոչինչ օգուտ չունի։ Բայց հետո հիշում եմ այս տեղն ու ինքս ինձ ասում՝ մի քանի ժամից Արշին դուռը կբացի, արի մի անգամ էլ փորձեմ՝ ինչ իմանաս, վաղը գուցե հենց լավ օր լինի, մի նոր բան մեջտեղ գա, կամ մեկնումեկը հայտնվի։ Զզվել եմ այս ամենից, Արշի։ Առավոտյան, դեռ ոտքս ներս չդրած, վրաս գոռացիր, դու երբեք այդպիսի բան չէիր արել։

ԱՐՇԻ— Իմ սրահն էլ դեռ երբեք դատարան չէին սարքել։ Վեր կաց, գնա։

ԱՂՋԻԿ— Վախենում եմ, Արշի, մի՞թե դու չես հասկանում, վախենում եմ, որ եթե գնամ, ուրեմն՝ ընդմիշտ ու... չեմ ուզում։ Իսկապես չեմ ուզում։ Ես գիտեմ, որ սարք ու կարգով սրանից լավ տեղեր էլ կան։ Կարելի է, ասենք, եկեղեցի գնալ, բայց դա ինձ համար չի։ Տեղեր կան, ուր մարդիկ առևտուր են անում, բայց դա էլ սրտովս չի։ Կան ուրախ-զվարթ պուրակներ՝ տեսակ-տեսակ ծաղիկներով ու ծիտիկներով, որոնք պիտի որ նույնպես ուրախ լինեն, բայց՝ ոչ ինձ հ մար։ Խաղաղ գրադարաններ կան՝ լիքը գրքերով, ուր ես ինձ հարմար ոչ մի գիրք չեմ գտել։ Սա իմ գտած միակ տեղն է, Արշի, որն ինձ համար է, նաև ինձ համար։ Այստեղ տուն չի, բայց տան պես է։ Համենայն դեպս ես միշտ գալիս էի այստեղ ու խաղաղվում։ Ես այստեղ հավատում էի, Արշի, վիսկին ինձ օգնում էր հավատալ, թե դեռ ապավինելու ինչ-որ բան կա, մի բան, հանուն որի արժե ապրել։ Ես շատ ուրիշ տեղեր եմ վիսկի խմել, բայց դա ինձ համար երբեք նույնը չի նշանակել, ինչ որ այստեղ։ (Հուսահատ)։ Արշի՛։

ԱՐՇԻ— Ո՛ւֆ, քեզ ի՞նչ պատահեց։

ԱՂՋԻԿ— Բոլորիս էլ ինչ-որ բան է պատահել։ Բոլորիս ինչ-որ սարսափելի բան է պատահել, ու ես մահու չափ վախենում եմ դրանից։ Աստված տար այսքան տկար չլինեի, գուցե սպասուհի կամ դրա պես մի բան աշխատեի, բայց ես թույլ եմ, Արշի, շուտ եմ հոգնում։ Մեջքս կոտրվում է, ոտքերս նվում, ձեռքերս թուլանում, գլուխս պտչթում։ Մի կես ժամից քիչ է մնում ուշաթափվեմ։ Ու չգիտեմ, թե ինչից։ Երևի պարզապես տկար եմ։ Թույլ ու վախեցած։ Չեմ ուզում գնալ, Արշի, վախենում եմ։

ԱՐՉԻ— Վախենալու բան չկա։ Նրանք էստեղ միայն այսօր կմնան, իսկ վաղը կարող ես հետ գալ ու ամեն ինչ նորից լավ կլինի։

ԱՂՋԻԿ— Նրանք չեն գնա, Արչի, որ եկան՝ կմնան։ Եթե գործը հասել է խորտկարաններին, եթե բոլոր դպրոցները, եկեղեցիները ու թանգարանները զբաղված են դատարաններով ու բանը հասել է խորտկարաններին՝ նրանք կմնան, Արչի։

ԱՐՉԻ— Տես, հա, ուրիշների մոտ էդպես չէ։

ԱՂՋԻԿ— Գիտեմ, Արչի, ես գիտեմ, թե ուրիշներին ինչ է պետք ասել, բայց ես հիմա քեզ հետ եմ խոսում և ասում եմ, որ կմնան։

ԱՐՉԻ— Աստծո սիրույն, աղջի, դռան մոտ արդեն մարդ կա, շտապիր, դուրս արի։

ԱՂՋԻԿ— Մնաս բարով, Արչի, հաջողություն։

Ներս են մտնում սվիճավոր նրացաններով երկու պահակազորային, որոնց հետևում է նույն համազգեստով, բայց բազմաթիվ շքանշաններ փակցրած վաքսունին մոտ բարձրահասակ ու նիհար մի տղամարդ։ Նկատում է աղջկան։

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱ— Պետք է ենթադրել, որ սա ձեր դո՞ւստրն է, միստր Քրուքշընք։ Դե ինչ, մենք նրա համար էլ գործ կգտնենք։

ԱՐՉԻ— Հասկանում եք, գեներալ...

ՊԱՇՏՈՆՅԱ— Եթե դեմ չեք, միստր Քրուքշընք, ես կօգտվեմ նաև ձեր դստեր ծառայություններից։ Ձեր անո՞ւնը, միստ։

ԱՂՋԻԿ— Ռոուզ։

ՊԱՇՏՈՆՅԱ— Ռոուզ Քրուքշընք։ Ձեր զբաղմո՞ւնքը, մասնագիտությո՞ւնը, աշխատա՞նքը։

ՌՈՈՒԶ— Ես... Ես հայրիկին եմ օգնում։

ՊԱՇՏՈՆՅԱ— Շատ բարի։ Այժմ, միստ Քրուքշընք, կանգնեք, խնդրեմ, այստեղ և ստանձնեք Հանուն ժողովրդի վկայի պարտականությունները։ Մենք արմատախիլ ենք արել դատավարության ժամանակ վատնող հին սիստեմը, բայց պատեհ առիթներով երբեմն դիմում ենք Հանուն ժողովրդի վկայի ծառայություններին։ Բարձրացրեք, խնդրեմ, ձեր աջ ձեռքը։ (Աղջիկը ենթարկվում է)։ Կրկնեք հետևյալ բառերը՝ ես, Ռոուզ Քրուքշընքս, երդվում եմ, որ իմ կյանքն անմնացորդ նվիրված է ոչ թե ինձ, այլ ամբողջ ժողովրդին։

ՌՈՈՒԶ— (Հապճեպ fրթմնչալով)։ Ես, Ռոուզ Քրուքշընքս, երդվում եմ, որ իմ կյանքն անմնացորդ նվիրված է ոչ թե ինձ, այլ ամբողջ ժողովրդին։

ՊԱՇՏՈՆՅԱ— Շատ բարի։ (Դիմելով Արչիին)։ Ինչպես երևում է, միստր Քրուքշընք, ամեն ինչ կարգին է։

ԱՐՔԻ— *Ես կուզենայի...*

ՊԱՇՏՈՆՅԱՆ— *Այո՞*

ԱՐՔԻ— *Ես կուզենայի իմանալ, թե որքա՞ն ժամանակով պատիվ կունենամ...*

ՊԱՇՏՈՆՅԱՆ— *Որքան ժամանակո՞վ։ Պարզ չէ՞՝ մինչև որ արդարությունը հաստատվի։*

ԱՐՔԻ— (Շշմած): *Այո, սըր։*

ՊԱՇՏՈՆՅԱՆ— *Պահակախումբ, ներս հրավիրեք Ատյանի կազմը և թերեք առաջին ամբաստանյալին։* (Պահակախումբը դուրս է գնում: Պաշտոնյան մոտենում է քարին: Ներս են մտնում Ատյանի անդամները և մի երիտասարդ, որն առաջին ամբաստանյալն է):

ՊԱՇՏՈՆՅԱՆ— (Դիմելով ամբաստանյալին): *Դուք կկանգնեք այստեղ։*

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— *Լսում եմ, սըր։* (Անցնում է քարի հետևը):

ՊԱՇՏՈՆՅԱՆ— *Դատը կընթանա սովորականի պես։ Ամբաստանյալները սպասում են դրսում, այնպես չէ՞։*

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— *Այո, սըր։*

ՊԱՇՏՈՆՅԱՆ— (Դիմելով ներս մտածներից մեկին): *Սա ժողովրդական դատախազի սեղանն է։* (Մյուսին): *Սա ամբաստանյալի դատապաշտպանի սեղանն է։* (Ամենքը մոտենում են իրենց սեղաններին): *Իսկ սա կատարածուի սեղանն է։ Ժողովրդական դատախազը կտեղեկացնի Ատյանին ամբաստանյալի հանցանքի բնույթի մասին։ Ամբաստանյալի դատապաշտպանը հանդես կգա վերջինիս օգտին։ Կատարածուն կտանա Ատյանի որոշումը, կկնքի դատավճիռը և ամբաստանյալն այս դռնով դուրս կբերվի ազատականգառ։ Զինվորներն այնտեղ են, այդպես չէ՞։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Ճիշտ այդպես։*

ՊԱՇՏՈՆՅԱՆ— *Յուրաքանչյուր գործի ավարտից հետո նրանք անմիջապես կանցնեն իրենց պարտականությունների կատարմանը։ Իսկ այժմ ամբաստանյալը թող անցնի այստեղ։* (Այս ասելով նա դիմում է իր կարծիքով ակնհայտորեն մյուսներից ավելի հանցավոր տեսք ունեցող մի մարդու):

ԴԱՏԱՎՈՐ— (Յույց տալով քարի հետևում կանգնած երիտասարդին): *Ամբաստանյալը նա է, սըր։*

ՊԱՇՏՈՆՅԱՆ— *Իսկ դուք ո՞վ եք։*

ԴԱՏԱՎՈՐ— *Ես դատավորն եմ, սըր։*

ՊԱՇՏՈՆՅԱՆ— *Դե լավ։* (Ամբաստանյալին): *Խնդրում եմ կանգնեք այստեղ։* (Դատավորին): *Իսկ դուք անցեք քարի հետևը։* (Բոլորին): *Միստր Քրուքշընքը և իր դուստրը կմնան դատարանում, հայրը կհո-*

գա Ատյանի պետքերը, իսկ դուստրը հանդես կգա որպես Հանուն ժողովրդի վկա։ Կարծում եմ, այսքանը բավական է։ (Դատավորին)։ Դե, սկսեք։

ԴԱՏԱՎՈՐ— Առաջին ամբաստանյալի գործը, խնդրում եմ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— (Թղթապանակից մի քանի թերթ հանելով)։ Էդվերդ Էլինգթոն։ Դա ձե՞ր անունն է։

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— Այո, սըր։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— Ամբաստանյալը քսանյոթ տարեկան է։ Ամուրի։ Երեխա չունի։ Մահափորձ է կատարել Աշխատանքի տեղավորման գրասենյակի ծառայողի վրա։ (Կարուկ լռում է)։

ԴԱՏԱՎՈՐ— Շարունակեք, խնդրեմ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— Այսքանն է, սըր։

ԴԱՏԱՎՈՐ— Ի՞նչ զենք է օգտագործել։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— Զենք չի հիշատակված։

ԴԱՏԱՎՈՐ— Ամբաստանյալի դատապաշտպան։

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— Լսում եմ, սըր։

ԴԱՏԱՎՈՐ— Գործի անցեք։

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— (Ամբաստանյալին դիմելով)։ Սեփական բառերով ինքներդ տեղեկացրեք Ատյանին, թե ինչ է կատարվել։

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— Ի՞նչ ասեմ՝ ես ինձ համար մի գործ էի ճարել ու աշխատում էի, մեկ էլ աշխատանքի գրասենյակից մի ծառայող է հայտնվում ու ինձ հանել է տալիս, ասելով, թե պետք է աշխատանքի տեղավորվել միայն իրենց գրասենյակի միջոցով։ Երեք ամիս իրար վրա գնում էի էնտեղ ու սպասում առավոտյան յոթից մինչև երեկոյան յոթը, բայց ծառայողն ինձ ոչ մի գործ չէր առաջարկում։ Վերջը մի օր ես նրան հարցրի. «Բա ե՞րբ պիտի աշխատանք ստանամ», նա էլ, թե. «Որքանով որ դա կապ ունի ինձ հետ՝ երբեք»։ Հարցրի. «Ինչո՞ւ»։ Ասաց. «Դու արդեն երեք անգամ ապօրինի կերպով աշխատանքի ես տեղավորվել, իսկ ես հրահանգ ունեմ ապահովել միայն օրինական ձևով աշխատանք փնտրողներին»։ Հարցրի. «Իսկ ես ո՞նց եմ ապրելու»։ Նա թե՝ «Ոչ էլ ապրի»։ Էստեղ ես փրփրեցի, որովհետև ամեն կերպ աշխատել էի օրենքով շարժվել, էնպես որ ասացի. «Որ էդպես է, ոչ էլ դու ապրի»։ Ուսերից բռնեցի ու իր տեղից դուրս քաշեցի։

ԴԱՏԱՎՈՐ— Շարունակեք։

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— Նա ճվճվում էր ու քացի տալիս։ Վերջը միասին փըռվեցինք գետնին։ Հենց էդտեղ ոստիկաններն եկան մեկը մահակով խփեց դրա գլխին։ Հետո նրան վերցրին տարան։ Դե ես էլ

տուն գնացի։ Մի բոքոնի մնացորդով ընթրեցի ու պառկեցի քնելու։ Իսկ էսօր, գիշերվա կեսին, ուրիշ ոստիկաններ եկան ու ինձ տարան։

ԴԱՏԱՎՈՐ— Ժողովրդական դատախազ, ամբաստանյալին հանցավոր ճանաչում ե՞ք։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— Միանգամայն։

ԴԱՏԱՎՈՐ— Ամբաստանյալի դատապաշտպան, իսկ դո՞ւք։

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— Ես կցանկանայի Ատյանի ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ ամբաստանյալը գրասենյակի ծառայողի գլխին չի հարվածել։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— Նա ինքը խոստովանեց, որ ուսից քաշել է տուժողին, այդպես չէ՞։

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— Նա վրդովված էր։ Ես կասկածում եմ, թե նա իսկապես մտադիր է եղել ծառայողին սպանել։

ԴԱՏԱՎՈՐ— Ամբաստանյալի դատապաշտպան, թույլ տվեք Ատյանն իր վճիռը կայացնի։

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— Լսում եմ, սըր։

ԴԱՏԱՎՈՐ— (Ամբաստանյալին)։ Ի՞նչ կկամենայիք ասել։

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— Ես չէի ուզում սխալ բան անել, ուզում էի օրենքով ապրել, օրինական աշխատանք ճարել, որ հետո չկորցնեմ, ախր ես ամուսնանալ ու ընտանիք կազմել էի ուզում։

ԴԱՏԱՎՈՐ— Ուրի՞շ։

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— Ես չէի ուզում գլխիս շառ բերել։

ԴԱՏԱՎՈՐ— Ուրեմն նա ձեզ ասաց՝ «Ոչ էլ ապրի», իսկ դուք պատասխանեցիք՝ «Որ էդպես է, ոչ էլ դու ապրի» և հարձակվեցիք վրան։ Ճի՞շտ է։

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— Ես պարզապես նրան իր տեղից դուրս քաշեցի։

ԴԱՏԱՎՈՐ— Հանցավոր է։ (Կարճ դադար)։ Պահակախո՛ւմբ։

ՊԱՇՏՈՆՅԱ— Մեկ վայրկյան։ Ամբաստանյալին իրավունք է վերապահվում իր վերջին ցանկությունը հայտնել։ (Դիմելով ամբաստանյալին)։ Սովորաբար ծխախոտ են խնդրում։ Սակայն տվյալ պայմաններում կարելի է նաև խմիչք։ Ո՞րն է ձեր վերջին խնդրանքը։

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— Մի լավ ուտել։

ՊԱՇՏՈՆՅԱ— Այդքան ժամանակ չունենք։ Ծխախո՞տ թե խմիչք։

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— Խմիչք, հետո ծխախոտ։

ՊԱՇՏՈՆՅԱ— Կարծում եմ, կարելի է։ Միստր Քրուքշընքը դրանով կբզբաղվի։

ԱՐՉԻ— (Մոտենալով բարին)։ Ի՞նչ կխմես, որդիս։

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— Կոնյակ։

ՊԱՇՏՈՆՅԱ— *Միստր Քրուքշընք, խմիչքների հաշիվը խնդրում եմ կազմել ըստ երեք հարյուր երեսուներեք ձևի, կառավարության կողմից հատուցում ստանալու համար։*

ԱՐՉԻ— (Կոնյակը լցնելով, մեկնում է ամբաստանյալին, որն իսկույն նեթ կոնծում է)։ *Մեկն է՞լ։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Միստր Քրուքշընք, կառավարությունն ամեն ամբաստանյալի հաշվով միայն մեկ բաժակի ծախք է հատուցելու։ Այնուհանդերձ, եթե ցանկանաք, կարող եք երկրորդն առաջարկել ձեր հաշվին։*

ԱՐՉԻ— (Մի բաժակ էլ է լցնում, տալիս ամբաստանյալին, սա նորից է կոնծում)։ *Ի՞նչ ես ծխում։*

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— *Էս բոպեիս՝ ինչ պատահի։ Շնորհակալ եմ, միստր Քրուքշընք։* (Արչիի պարզած տուփից մի գլանակ է վերցնում։ Արչին ծխախոտը վառում է)։

ՊԱՇՏՈՆՅԱ— *Շատ լավ։ Պահակախո՛ւմբ։* (Պահակախումբը դուրս է տանում ամբաստանյալին)։ *Ամեն մի գործ սովորականի պես ընթանալու է մինչև տվյալ ամբաստանյալի ուղղումը, այնուհետև ներս կբերվի հաջորդը։ Պա՞րզ է։*

ԲՈԼՈՐԸ— *Այո, սըր։*

ՀՈՒԺԿՈՒՅ ԶԱՅՆ— (Դրսից)։ *Հանրապետության պաշտպաններ, հանո՛ւն ժողովրդի։*

ՄԻ ԽՈՒՄԲ ԶԱՅՆԵՐ— (Դրսից)։ *Հանո՛ւն ժողովրդի։*

Համազարկ։

ՊԱՇՏՈՆՅԱ— *Շարունակենք։*

ԴԱՏԱՎՈՐ— *Ներս բերեք հաջորդ ամբաստանյալին։* (Պահակախումբը ներս է բերում զառամյալ մի ծերունու)։

ՊԱՇՏՈՆՅԱ— *Շատ բարի։ Ընդմիջելու ենք ժամը մեկից մեկն անց կես։ Միստր Քրուքշընքը կհոգա մեր սննդի հարցը, որի համար կառավարությունից հատուցում կստանա։ Նիստը կավարտվի ժամը հինգին։ Հիմա, երբ արդեն ամեն ինչ կարգավորվեց, դուք անհամեմատ ավելի արագ կգործեք։ Դա ձեր պարտքն է, որը բխում է երկրի արտակարգ դրությունից։ Ներս բերել, դուրս տանել, ներս բերել, դուրս տանել։ Շարունակեք։*

ԱՐՉԻ— *Ներեցեք, սըր, ես կուզենայի թույլտվություն ստանալ նիստերից հետո գործս վերսկսել։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Սա, եթե չեմ սխալվում, խորտկարա՞ն է։*

ԱՐՉԻ— *Այո, սըր։*

ՊԱՇՏՈՆՅԱ.— *Սենյակնե՞ր էլ ունեք։*

ԱՐՉԻ— *Ոչ, սըր։*

ՊԱՇՏՈՆՅԱ.— *Ուրեմն վերևում միայն դուք և ձեր դո՞ւստրն եք ապրում։*

ԱՐՉԻ— (Խանդաղ)։ *Այո, սըր։*

ՊԱՇՏՈՆՅԱ.— *Նիստը տևում է ժամը տասից հինգը։ Հինգից մինչև գիշերվա մեկը, այսինքն ամեն քսանչորս ժամից ութը, դուք կարող եք զբաղվել ձեր սովորական գործունեությամբ։ Սակայն դուք, միստր Քրուքշընք, պարտավոր եք հետևել, որ ամեն առավոտ ճիշտ ժամը տասին այս վայրը պատրաստ լինի մեզ ընդունելու։*

ԱՐՉԻ— *Լավ, սըր։*

ՊԱՇՏՈՆՅԱ.— *Շարունակենք, ուրեմն։*

ԾԵՐՈՒՆԻ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— *Իսկ ե՞ս, ի՞նձ ինչ եք անելու։ Ես հանցանք չեմ գործել։ Ես յոթանասունևերկու տարեկան եմ։ Ո՞րն է իմ մեղքը։*

Տեսարան երկրորդ

Հինգին պակաս է երկու րոպե: Դատավորը, փաստաբանները, ռետինե կնիքով կատարածուն և պանակախումբը գրավել են իրենց տեղերը:

ՁԱՅՆ— *Հանրապետության պաշտպաններ, հանո՛ւն ժողովրդի։*

ՄԻ ԽՈՒՄԲ ՁԱՅՆԵՐ— *Հանո՛ւն ժողովրդի։*

Համազարկ:

ԴԱՏԱՎՈՐ— *Ներս բերեք հաջորդ ամբաստանյալին։*

ԱՐՉԻ— *Հաջորդին ժամանակը չի հերիքի։ Հինգին երկու րոպե է պակաս։*

ԴԱՏԱՎՈՐ— *Պահակախումբ, խնդրում եմ ներս բերել հաջորդ ամբաստանյալին։* (Պահակախումբն արագ դուրս է գալիս): *Միստր Քրուքշընք, հիմա դուք կտեսնեք, թե որքան բան կարելի է անել երկու րոպեի ընթացքում։ Կառավարության համար այդ երկու րոպեի արժեքը...* (Պահակախմբի ուղեկցությամբ ներս է մտնում դատավորին, փաստաբաններին, կատարածուին և մնացած բոլորին արհամարհանքով նայող բարկացած մի երիտասարդ):

Խնդրում եմ արագացնել։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ.— *Ջոզեֆ Մուր։ Երեսունմեկ տարեկան։ Հանցանքի բնույթը՝ հասարակական պարտքի անտեսում։ Ամուրի։ Երեխա չունի։ Ինքնասպանության փորձ է կատարել։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Ավելի արագ, խնդրում եմ։ Ի՞նչ միջոցով է ինքնասպանություն փորձել։*

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Անզուսպ հարբեցողության։*

ԴԱՏԱՎՈՐ— *Ամբաստանյալի դատապաշտպան։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Գիտականորեն չի ապացուցված, թե որքան է անհրաժեշտ խմել, որպեսզի...*

ԴԱՏԱՎՈՐ— *Պարզ արտահայտվեք...*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Բավական է մի հայացք նետել ամբաստանյալին, որպեսզի ակնհայտ դառնա, որ...*

ԴԱՏԱՎՈՐ— *Հանցավոր է։* (Ամբաստանյալին)։ *Որևէ ասելիք ունե՞ք։*

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— *Այո։* (Կարճ դադար)։

ԴԱՏԱՎՈՐ— *Դե, ասեք, ուրեմն, ի՞նչ կա սպասելու։*

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— *Երջանիկ ծնունդ։*

ԴԱՏԱՎՈՐ— *Երջանիկ ծնո՞ւնդ։ Մենք հանելուկների ժամանակ չունենք։ Կառավարությունը ձեզ մեծահոգաբար ժամանակ է շնորհում խոսելու համար, բայց ոչ՝ հանելուկներով։ Ի՞նչ է ձեր ասելիքը։*

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— *Երջանիկ ծնունդ։*

ԴԱՏԱՎՈՐ— *Կարող եք խմիչք և ծխախոտ ստանալ։*

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— *Երջանիկ ծնունդ։*

ԴԱՏԱՎՈՐ— *Պահակախումբ, գործի։* (Պահակախումբը հապճեպ դուրս է տանում երիտասարդին)։

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ— (Դռան սեմին շուռ գալով)։ *Խնդրում եմ, մեկնումեկդ, գոնե մեկնումեկդ հիշեք...*

ԴԱՏԱՎՈՐ— *Պահակախո՛ւմբ։* (Պահակախումբը երիտասարդին դուրս է հրում)։

ՁԱՅՆ— *Հանրապետության պաշտպաններ, հանո՛ւն ժողովրդի։*

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼԻ ՁԱՅՆԸ— *Երջանիկ ծնո՛ւնդ...*

ՄԻ ԽՈՒՄԲ ՁԱՅՆԵՐ— *Հանուն ժողովրդի։*

Համազարկ։

ԴԱՏԱՎՈՐ— *Դատական նիստը կշարունակվի վաղը, առավոտյան ժամը տասին։* (Դուրս է գալիս բարի հետևից)։ *Տեսնո՞ւմ եք, միստր Քրուքշընք, որ երկու րոպեն միանգամայն բավական է։ Երկու րոպեն շատ ժամանակ է։ Ուրեմն, մինչև առավոտյան ժամը տասը։* (Մնացածների հետ դուրս է գալիս։ Ռոուզը վազում է ավտոկանգառ տանող դռան մոտ. Արչին շշմած կանգնած է սրահի կենտրոնում)։

ՌՈՈՒԶ— *Ի՞նչ ենք անելու, Արչի։*

ԱՐՉԻ— *Անելո՞ւ։ Իսկ ի՞նչ պիտի անենք։ Ես որ մինչև գիշերվա ժամը*

մեկը գործս եմ բացելու, եթե, իհարկե, սրանից հետո որևէ մեկն ընդհանրապես համարձակվի էստեղ գալ։

ՌՈՈՒԶ— Իսկ ինչո՞ւ ես կարծում, թե չեն գա։

ԱՐՉԻ— Քեզ չի՞ թվում, որ բոլորը կվախենան, բացի, երևի, մի երկու հոգուց, որ չգիտեն կամ որոնց վեջն էլ չի։

ՌՈՈՒԶ— Կամ էլ մի երկու հոգու, որոնց կուզարկեն լրտեսելու, կուղարկեն, չէ՞, Արչի։ Չէ, դու իսկապես նրանց ձեռքն ես ընկել, ես էլ հետդ։ Բայց ես երբեք այնպես հպարտ չեմ եղել, ինչպես հիմա, Արչի։ Կարծում էի, դու նրանց կասես, որ ես քո աղջիկը չեմ։

ԱՐՉԻ— Ինչպե՞ս ասեի։ Ի՞նչ իմանայի խելքներին ինչ կփչի։ Կարող էին քեզ էլ հանգիստ գցել էն խեղճերի մոտ։

ՌՈՈՒԶ— Նրանցից ոչ մեկը ոչ մի բանում մեղավոր չէր։ Եթե նրանց սպանեցին, Արչի, ուրեմն, աստված վկա, շուտով իմ հերթն էլ կհասնի։ Բայց մինչ այդ ես հպարտ եմ քո դուստրը լինել, Արչի, և ամաչում եմ ապրելուց, երբ ուրիշներին սպանում են։

ԱՐՉԻ— Ավելի լավ է վիսկիդ խմես։

ՌՈՈՒԶ— Շնորհակալ եմ, Արչի։ Ճիշտ որ վիսկիի կարիք եմ զգում։ (Արչին իրենց համար վիսկի է լցնում։ Ռոուզը մեկնում է իր բաժակը՝ Արչիի բաժակին խփում)։ Չգիտեմ, թե ինչ ասեմ, Արչի, երևի՝ «Աստված մեզ օգնական» կամ «Ողորմած եղիր, տեր», կամ՝ «Ներիր մեզ, աստված»։ Տեր իմ, Արչի, դողս բռնեց ու լացս գալիս է։ Կարելի՞ է լաց լինեմ։ Կարելի՞ է, սա խմեմ ու այստեղ մի տեղ նստեմ լաց լինեմ։ Իմ սենյակում վախենում եմ լաց լինել, իսկ ուրիշ տեղ անհարմար է։

ԱՐՉԻ— Վիսկիդ խմիր, աղջիկս, խմիր, որ նորից լցնեմ։ (Երկուսով խմում են։ Արչին նորից է լցնում)։ Հանգիստ լաց եղիր։ (Խմում է իր բաժակը։ Ռոուզը վերցնում է իր վիսկին ու նստում սեղանների մեկի մոտ)։ Էստեղ էլ ոչ մի կարգին մարդ ոտք չի դնի։ Երևի արժի այս ամենը թողնեմ ու գնամ, թքած, թե էս բոլորն իրենց կմնա։

ՌՈՈՒԶ— Թողնե՞ս։ Դու հո չե՞ս կարող փախչել, Արչի։ Ուր էլ գնաս, մեկ է՝ նույնը կլինի։

ԱՐՉԻ— Ոնց էլ լինի, գնալու մի տեղ կգտնվի։

ՌՈՈՒԶ— Ամեն տեղ նույնն է։ Սա գոնե քո տունն է, սրանի՞ց ուր պիտի փախչես։ Միակ բանը, որ կարող ես անել, հինգից մինչև գիշերվա մեկը խորտկարանդ բաց պահելն է։

ԱՐՉԻ— Ես էստեղ էլ ոչ մեկին չեմ կարողանա լավություն անել։

ՌՈՈՒԶ— Բայց վնաս էլ չես տա, իսկ լավություն անելու հնար, միևնույն է, ոչ մի տեղ չի մնացել։

ԱՐՉԻ— Ինչ կլինի, գոնե հետս էնպես մի խոսիր, ասես իսկական աղջիկս լինես։

ՌՈՈՒԶ— Իսկ դու վրաս մի գոռա, հասկացա՞ր։ (Վեր է կենում ու մոտենում խոհանոցի դռանը)։

ԱՐՉԻ— Լավ, լավ, արի նստենք ու խելքը գլխին խոսենք։

ՌՈՈՒԶ— Խոսելն օգուտ չունի։ Գնամ խոհանոցը կարգի բերեմ։ Իսկ դու լավ կմտնես խմիչքը դուրս գրես ըստ նրանց տված ձևի։

ԱՐՉԻ— Ես էդ խմիչքի փողը չեմ ուզում։

ՌՈՈՒԶ— Դա նրանց գործը չի գա, Արչի։ Ավելի լավ է լրացնես էդ թուղթը, ուտելիքինն էլ հետը։ Դու պիտի խորտկարանդ առաջվա պես բաց պահես, եթե չես ուզում քեզ էլ թշնամի հանեն։

ԱՐՉԻ— Նրանք հո գիտեն, որ ես թշնամի եմ։ Շատ լավ գիտեն, որ բոլորն էլ թշնամի են։

ՌՈՈՒԶ— Համենայն դեպս նրանց ձեռ է տալիս, որ դու ձևացնես հակառակը, և լավ կլինի որ հենց էդպես էլ անես։ Ես հիմա խոհանոցը կմաքրեմ, իսկ դու ձևերը լրացրու։ Ամեն դեպքում մթերք ու խմիչք պատվիրելու համար քեզ փող է պետք։ (Դուրս է գնում)։

ԱՐՉԻ— (Ուսումնասիրելով հաշիվների թղթերը)։ Շնորհավոր Ծննդյան տոնը։ Երջանիկ ծնունդ։ (Գոռում է)։ Ռո՞ուզ։

ՌՈՈՒԶ— (Հայտնվում է խոհանոցի շեմին)։ Ի՞նչ եղավ, Արչի։

ԱՐՉԻ— Ի՞նչ էր ուզում ասած լինել։

ՌՈՈՒԶ— Նա արդեն մեռած է, էնպես որ մենք երևի էլ չիմանանք։ Մի տեսնեիր, թե խոհանոցում ինչ է կատարվում։ Այդ խառնաշփոթի տեսքից ես արդեն հոգնում եմ, բայց մեկ է, կյանքում գոնե մի անգամ պիտի գործս անեմ։ (Դադար)։ Արչի։

ԱՐՉԻ— Ի՞նչ։

ՌՈՈՒԶ— Դու չե՞ս փոշմանել, որ ինձ քո աղջիկն անվանեցիր։

ԱՐՉԻ— Ուրիշ ելք չունեի, չէ՞։

ՌՈՈՒԶ— Բայց հո չե՞ս փոշմանել։

ԱՐՉԻ— Չէ, Ռոուզ, չեմ փոշմանել։

ՌՈՈՒԶ— Ուզում եմ ասել, հո չե՞ս ամաչում։

ԱՐՉԻ— Գիտես ինչ, այսօրվա դեպքերից հոգիս տակնուվրա է եղել, ես հիմա իմ ամբողջ կյանքից եմ ամաչում, իմ ապրած հիմար կյանքից։ Եթե էդ մարդիկ մեղավոր էին, ուրեմն ես շատ ավելի մեղավոր եմ։ Բայց ես երբեք չեմ ամաչի մեկի համար, ով չի ուզում իր նմանին վնաս պատճառել։ Ոչ, ես չեմ ամաչում, որ քեզ իմ աղջիկն անվանեցի։

ՌՈՌԻՉ— Շնորհակալ եմ, Արշի։ Գիտե՞ս, ես հայր չեմ ունեցել, հոտն էլ դեռ չհասցրի առնել՝ արդեն չքվել էր։

ԱՐՉԻ— Իսկ ես երբեք հայր չեմ եղել։ Ճիշտ է, էս աշխարհում ինչ-որ տեղ ես էլ զավակներ ունեմ, բայց քանի որ նրանց մորն ատում էի, քսան տարի առաջ բոլորին թողի-գնացի։

ՌՈՌԻՉ— Ես չէի իմանում, Արշի, կներես։

ԱՐՉԻ— Աստվա՜ծ գիտի ինչ եղան խեղճ կինը, տղաս ու երկու աղջիկները։

ՌՈՌԻՉ— Օ, կներես, Արշի, ես շատ ցավում եմ քո խեղճ անհայր բալիկների համար։

ԱՐՉԻ— Տղաս վեց տարեկան էր, մեծ աղջիկը՝ չորս, փոքրիկը՝ երկու։ Ես նրանց համարյա չեմ հիշել մինչև այսօր։ Ես երբեք հայր չեմ եղել։

ՌՈՌԻՉ— Ես լավ զավակ կլինեմ, Արշի։ Ու առաջվա պես էլ երբեք չեմ հոգնի։ (Մտնում է խոհանոց)։

ԱՐՉԻ— Եթե նրանք տուն ունենային, հայր ու մայր ունենային, երբեք չեղած տեղն իրենց չէին թողնի սպանել։

ՌՈՌԻՉ— (Դուռն սեմին)։ Ինչե՞ր ես ասում, Արշի։ Ես լիքը գործ ունեմ, բայց չեմ կարողանում անել, երբ դու խոսում ես, իսկ ես չեմ լսում։ Ես ուզում եմ քո բոլոր ասածները լսել։ Ի՞նչ ես ասում, Արշի։

ԱՐՉԻ— Ասում եմ, որ նրանք չէին սպանվի-գնա, եթե իսկական հայրեր ու մայրեր ունեցած լինեին, եթե էն գլխից, որը չմեծանային, ա՛յ թե ինչ։

ՌՈՌԻՉ— Արշի, լուրջ բան չես ասում։ Մի կարգին մտածիր, թե ինչ ես ասում։ Քեզ որ լսես, ավելի լավ է մարդասպան լինել, քան սպանվել, բայց ախր դու լավ գիտես, որ դա էդպես չի։ Ոչ մեկն է մի բան, ոչ մյուսը, մենք բոլորս էլ որբ ենք, թե էդպես նայես։ Եթե դա է քո ասածը, ուրեմն բոլորս էլ նույն օրին ենք, և ոչ թե՝ միայն ամեն օր սպանվողները։ Բոլորն էլ հայր ու մայր են ունեցել՝ մի տղամարդ ու մի կին, ոմանցն ավելի հաջողակ, ոմանցը՝ պակաս, ըստ դիրքի, հարստության կամ դրա պես պատահական մի բանի։ Արշի, մենք բոլորս ենք նույն օրին։ Թեկուզ հենց նա, ով ասաց, որ ես քո աղջիկն եմ, դատ բացողն ու գնդակահարել տվողը... Ինչ ես կարծում, ո՞վ է նա, Արշի, հը՞։

ԱՐՉԻ— Ով է նա՞։ Շատ ես ուզում, կասեմ՝ շունչանորդու մեկն է, ուրիշ ոչինչ։

ՌՈՌԻՉ— Իսկ չե՞ս կարծում, որ ուրիշների պես մի մարդ է, և խիղճն ու մարդկությունը վերջնականապես չի կորցրել, չնայած գիտի, որ

իր հիմնադրած Ատյանը բոլորին հանցավոր է ճանաչելու։ Ո՞վ է նա, ի՞նչ ես կարծում։

ԱՐՉԻ— Ինչի՞ ես ուզում ինձ շփոթեցնել։

ՌՈՈՒԶ— Սխալ չհասկանաս, Արչի, ես էլ եմ նրան ատում, բայց ախր նա ի՞նչ անի, ասա, որ շունչանորդուց լավը դառնա։

ԱՐՉԻ— Ինչ անի՞... ո՞նց թե... դե... թող...

ՌՈՈՒԶ— Չէ՞ որ նա էլ է հրաման կատարում։

ԱՐՉԻ— Էնպես ես մարդասպաններից խոսում, կարծես թե խեղճուկրակ անզոր գառներ լինեն ու իրենց արածը զղջան։

ՌՈՈՒԶ— Իսկ եթե դա ճիշտ է, եթե նրանք իսկապես անզոր են և նույնիսկ զղջում են իրենց արածի համար, ինչո՞ւ ձև անենք, թե էդպես չի։

ԱՐՉԻ— Սպանությունների համար ինչ-որ մեկը պատասխան պիտի՞ տա, թե ոչ։ Չի կարելի ասել, թե անզոր ես ու զղջում ես՝ հերթով բոլորին գնդակահարելով։ Ինչ-որ մեկը պիտի՞ հրաժարվի հրամանը կատարել։

ՌՈՈՒԶ— Արչի։

ԱՐՉԻ— Լսիր, Ռոուզ, հոգուս հետ մի խաղա, մի բորբոքիր ինձ, առանց այդ էլ ես զայրացած եմ։ (Վիսկի է կոնծում ճենց շշից)։ Ասածդ ի՞նչ է։

ՌՈՈՒԶ— Մի՞թե դու ինքդ հրաման չես կատարում։ Ես քեզ բորբոքել չեմ ուզում, բայց չէ՞ որ դա ճիշտ է, Արչի։

ԱՐՉԻ— Իմ հարցն ուրիշ է։ Ես մի փոքրիկ խորտկարանի տեր եմ։ Ես ոչ քաղաքական գործիչ եմ, ոչ էլ՝ կառավարության անդամ։ Հենց նրանք էլ թող հրաժարվեն հրամաններ կատարելուց։

ՌՈՈՒԶ— Բայց չէ՞ որ դրանով նրանք իրենց մահվան կդատապարտեն։

ԱՐՉԻ— Նրանք որ ուզեն կարող են հեռանալ կառավարությունից։ Ինչ է, չե՞ն կարող։

ՌՈՈՒԶ— Այդպես միայն թվում է, Արչի։ Մի՞թե դու կարծում ես, թե ամեն ինչ այդքան հեշտ է։

ԱՐՉԻ— Ոչինչ էլ հեշտ չէ, ինչո՞ւ պիտի հեշտ լինի։

ՌՈՈՒԶ— Ինչո՞ւ՝ որովհետև բոլորն էլ ուզում են, որ ամեն ինչ հեշտ լինի։

ԱՐՉԻ— Նրանցից գոնե մեկը պիտի քաջություն ունենա՞ սեփական կյանքի գնով հրաժարվել հրամանը կատարելուց։

ՌՈՈՒԶ— Բայց ինչո՞ւ պիտի դա նրանցից մեկն անի, և ոչ թե՝ մեզանից մեկը։

ԱՐՉԻ— Ռոուզ, դու ինձ համբերությունից հանում ես։ Քո երեսից ես

ինձ իսկապես մեղավոր եմ զգում այսօր էստեղ կատարված ամեն մի սպանության համար։ Միայն թե եթե ես թեկուզ ծպտուն հանեի, ինձ էլ կսպանեին, չէ՞։

ՌՈՈՒԶ— *Այո, Արչի, կսպանեին։*

ԱՐՉԻ— *Դե, ուրեմն, հոգիս մի պղտորիր և անընդհատ երեսովս մի տուր, որ խորտկարանս սպանդանոց դարձնելուն պես ես առաջինը չեմ գնդակահարվել։ Ու մի փորձիր ինձ համոզել, թե մարդասպաններին ու նրանց զոհերին պետք է խղճալ հավասարապես, ինձ ու քեզ էլ՝ հետը։ Եթե պիտի բոլորին անխտիր խղճաս, էլ ո՞ւմ է պետք էդպիսի խիղճը։ Չէ՞ որ բոլորին խղճալը անիմաստ է։ Ոմանց պետք է սիրել, իսկ ոմանց՝ ատել։*

ՌՈՈՒԶ— *Սիրելն ու ատելը հեշտ է, Արչի։ Շնչելու պես հեշտ։ Հետո՞ ինչ։ Դրա իմաստը ո՞րն է։ Ես քեզ սիրում եմ կամ ատում եմ քեզ, դու էլ ինձ ես սիրում կամ ատում, մենք սիրում ենք սպանվածներին ու ատում դահիճներին... հետո՞ ինչ։ Ախր ո՞վ է նրանց սպանել՝ դատախա՞զը, դատավո՞րը, թե՞ կնիք դնող կատարածուն, իսկ գուցե պահակախո՞ւմբը կամ վաշտի պե՞տը, որը գոռում էր. «Հանրապետության պաշտպաններ, հանո՞ւն ժողովրդի», թե՞ այդ պաշտպաններն իրենք, որ «Հանո՞ւն ժողովրդի» բացականչելով, հենց այդ ժողովրդից մեկնումեկին սպանում էին։ Հանուն ո՞ր ժողովրդի։ Չլինի՞ թե երկու ժողովուրդ կա։ Չէ, ժողովուրդը մեկն է, միակը... էնպես որ սիրելն ու ատելը դժվար բան չեն, Արչի, և իմ սիրտն արդեն խառնում է այդ ամենից։*

ԱՐՉԻ— *Ուրեմն ի՞նչ է դուրս գալիս՝ ես նրանց խաբեմ, ասեմ, որ դու իմ աղջիկն ես, իսկ դու գաս ու ամեն ինչ փչացնես, համոզելով, թե իմ վիճակն անհո՞ւյս է։*

ՌՈՈՒԶ— *Միայն քոնը չէ անհույս, Արչի, իմն էլ է։ Ումը որ ուզես՝ բոլորինը։ Եթե ոչ մի հույս չկա, ուրեմն բոլորիս համար, բայց մի՞թե իսկապես ոչ մի հույս չկա։ Մի՞թե գոյություն չունի այս ամենի պատասխանը։*

ԱՐՉԻ— *Հապա փորձիր դրանց պատասխանել, տեղնուտեղը կտանկսպանեն։*

ՌՈՈՒԶ— *Նրանց չէ, Արչի, մեզ։ Մի՞թե մենք չենք կարող ինքներս մեզ պատասխան տալ։*

ԱՐՉԻ— *Ասածդ ի՞նչ է, վաղն առավոտ լույսով վեր կենամ ու արտահերթ գնդակահարվե՞մ։ Մեղադրյալներին պաշտպանե՞մ։ Մեղադրողներին ձաղկե՞մ, հրահանգներին չենթարկվեմ ու զոռով սպանվե՞մ։ Դա՞ է ուզածդ։*

ՌՈՈՒԶ— Չգիտեմ, Արչի, ես այս ամենը միայն քեզ չէի ասում, ես ինձ էլ նկատի ունեի։ Մտքերս խառնվել են, ինքս իմ ասածը չեմ հասկանում։

ԱՐՉԻ— Բա որ ինքդ էլ չես հասկանում, ինչո՞ւ ես կպել՝ տրամադրությունս իզուր գցում ես։ Ես իմ գարն ապրել եմ, վաթսուներկու տարին հանաք բան չի։ Հիմա դու պետք է ինձ օգնության ձեռք մեկնես։ Ասա, որն է իմ պարտքը, և երդվում եմ՝ կկատարեմ։ Գուցե պետք է սպանել հենց այստեղ, իմ տեղում կանգնող դատավորի՞ն։

ՌՈՈՒԶ— Վստահ եմ, որ դա չի քո անելիքը։

ԱՐՉԻ— Գուցե պետք է նրանց խնդրել, որ ինձ գնդակահարեն մի ուրիշի, ավելի ջահելի փոխարե՞ն... Թեկուզ հենց այն վերջինի պես մեկի... Դա է պետք, Ռոուզ։

ՌՈՈՒԶ— Արդյո՞ք քեզնից հետո նրան էլ չէին սպանի։

ԱՐՉԻ— Չգիտեմ, ես քեզ եմ հարցնում։

ՌՈՈՒԶ— Եթե խնդրեիր քեզնով մեկնումեկին փոխարինել, նրանք քեզ ոչ միայն կմերժեին, այլև, Հանրապետության թշնամի հռչակելով, հաջորդ օրն իսկ կդատեին ու կգնդակահարեին։

ԱՐՉԻ— Որ էդպես է, երևի հարկավոր է նրանց ուտելի՞քը թունավորել։ Դատավորի, կատարածուի, փաստաբանների, պահակախմբի, գնդակահարողների ու մնացած բոլորի, հը՞։

ՌՈՈՒԶ— Նրանք կմեռնեն, Արչի, բայց դատերն ու մահապատիժները դրանից չեն վերանա։ Դրանից մենք կսկսենք միայն ավելի շատ մեղադրել ու սպանել իրար։

ԱՐՉԻ— Ուզում էիր ասել՝ նրա՞նք կսկսեն, չէ՞։ Նրա՞նք կսկսեն մեզ ավելի շատ մեղադրել ու սպանել։ Դա՞ էիր ուզում ասել։

ՌՈՈՒԶ— Ոչ, մենք բոլորս նույնն ենք։ Մենք և՛ մեղադրում ու սպանում ենք, և՛ մեղադրվում ու սպանվում։

ԱՐՉԻ— Աստված սիրես, այ աղջիկ, քեզնից ի՞նչ մեղադրող, ի՞նչ սպանող։

ՌՈՈՒԶ— Ինչ իմանաս, Արչի, հնարավոր է...

ԱՐՉԻ— Հնարավոր չէ։ Այդ նրանք են դատապարտում ու սպանում։ Մենք պարզապես սուսուփուս սպասում ենք, հույսներս դրած, թե մեզ չեն մեղադրի ու մենք բախտ կունենանք ծերությունից մեռնել։ Հիմա մեզ բոլորիս արդեն նույն բանն է սպասում, ուրիշ ոչինչ։

ՌՈՈՒԶ— Երևի դու ճիշտ ես, Արչի։

ԱՐՉԻ— Լավ, էդ ո՞նց եղավ։ Ու հիմա ի՞նչ անենք՝ էս հարցը պիտի լուծել։ Վերջապես հո՞ չենք կարող բերաններս բաց կանգնել ու սպասել։

ՌՈՈՒԶ— Կարող ենք երգել կամ դրա պես մի բան անել։

ԱՐՉԻ— *Երգե՞լ։ Ի՞նչ օգուտ։*

ՌՈՈՒԶ— *Գուցե հասկանանք, որ պարտադիր չէ ինքներս մեզ կոտորենք։*

ԱՐՉԻ— *Երգենք-չերգենք՝ իմ խեղճ խորտկարանն այլևս ոչ ոք ոտք չի դնի, ես կսնանկանամ, էդ մեկը՝ հաստատ։ Այսուհետև ես խմիչք եմ առաջարկելու մահապարտներին ու ճաշ մատուցելու մարդասպաններին։ Հաճախորդներս հիմա մեռելներն են, և այն էլ՝ ապառիկ։*

ՌՈՈՒԶ— (Ավտոկանգառ պանող դռնից դուրս նայելով)։ *Ահա մեռած ու լքված մի թշվառ՝ առավոտյան նրան էստեղից կտանեն։ Հազիվ իրենց գարշելի գործն արած՝ թողել գնացել են։ Դա նրանց էլ է սպանում, Արչի, նրանք էլ են նողկում իրենց արածից։* (Հանկարծ սարսափահար)։ *Տե՛ր իմ աստված, Արչի՛։*

ԱՐՉԻ— (Դռանը մոտենալով)։ *Ի՞նչ եղավ, աղջի։*

ՌՈՈՒԶ— *Աստծո՜ւ սիրույն, Արչի, էստեղ նայիր։ Նա ուզում է վե՞ր կենալ, թե՞ ես եմ զառանցում։ Նայի՛ր, Արչի։*

ԱՐՉԻ— *Գթա մեզ, ամենազոր տեր, նա արդեն չորեքթաթ է։* (Գոռում է)։ *Ա՛յ մարդ, մի՛ արա, հալովդ մնա՝ պառկի։*

ՌՈՈՒԶ— *Թույլ տուր նրան օգնեմ, Արչի։*

ԱՐՉԻ— (Բռնում է Ռոուզի թևից)։ *Աղջի, հո չե՞ս գժվել։*

ՌՈՈՒԶ— *Թող գնամ, Արչի, նա չի մեռել, պետք է օգնել նրան։*

ԱՐՉԻ— *Մենք նրան ոչնչով չենք կարող օգնել։ Շուտ ներս արի, դուռը կողպեմ։ Նա հիմա նորից կընկնի։*

ՌՈՈՒԶ— *Թող գնամ, Արչի, թող ինձ։* (Դուրս է պրծնում, բայց Արչին նորից է բռնում նրան)։

ԱՐՉԻ— *Ուշքի գալո՞ւ ես, թե չէ։*

ՌՈՈՒԶ— *Ես պիտի օգնեմ նրան, Արչի, եթե նրան նույնիսկ մի բոպե է մնացել ապրելու, մեկ է, ես նրան կօգնեմ։*

ԱՐՉԻ— (Ամոթահար)։ *Դե լավ, լավ, ես ինքս նրան կօգնեմ ու ներս կբերեմ, իսկ դու փողոցի դռանը նայիր, տես մարդ չլինի։ Դե, շուտ։* (Ռոուզը վազում է դրսի դռան մոտ, Արչին դուրս է գալիս ավտոկանգառ։ Մտնում է Մեյ Ֆոլին։ Ռոուզը փորձում է նրան դուրս անել)։

ՌՈՈՒԶ— *Չի կարելի։ Փակ է։*

ՄԵՅ— *Ես Մեյ Ֆոլին եմ, օրիորդ։ Արչին իմ հին բարեկամն է։ Ես քաղաքում չէի, նոր եմ եկել։* (Արչին վերադառնում է, ներս քաշելով երիտասարդի թուլացած, արնաշաղախ մարմինը)։

ԱՐՉԻ— *Աստված սիրես, Ռոուզ, սրան շուտ կոնյակ հասցրու։*

ՌՈՈՒԶ— (Առաջ է նետվում, նրա հետևից՝ Մեյ Ֆոլին՝ սպանիչ զգեստով, հիսունին մոտ մի կին): *Խե՜ղճ թշվառական։ Խե՜ղճ թշվառական։*

ՄԵՅ— (Օգնելով Արշինին): *Էստեղ բեր, Արշի։* (Երկու սեղան իրար է կցում): *Դիր սրանց վրա։* (Երիտասարդին պառկեցնում են սեղանների վրա): *Ես հիմա քեզ կօգնեմ, խե՜ղճ ջահել։* (Ռոուզի ձեռքից վերցնում է կոնյակի բաժակը, Արշին պահում է երիտասարդի գլուխը: Մեյը կամաց-կամաց կոնյակը նրա բերանն է լցնում): *Սա ո՞ւմ արածն է։*

ԱՐՉԻ— *Ժամանակ գտար, Մեյ։ Դուռը կողպիր, Ռոուզ։* (Երիտասարդին): *Մենք բարեկամներ ենք, լսո՞ւմ ես, դու բարեկամների մոտ ես։ Մեյ, ի՞նչ կարող ենք անել։*

ՄԵՅ— *Արի նորից կոնյակ տանք։ Ո՞վ է էս խեղճ տղան։*

ԱՐՉԻ— *Նրան կես ժամ առաջ գնդակահարել են։* (Մեյը նորից է կոնյակ տալիս երիտասարդին):

ԵՐԻՏԱՍԱՐԴ— (Դժվարությամբ): *Երջանիկ ծնունդ։*

ԱՐՉԻ— *Ի՞նչ ես ասում, այ մարդ։ Ասա մեզ, մտքինդ ի՞նչ է։* (Երիտասարդի մարմինը հանկարծ պրկվում է, ցնցվում, ապա ծանրացած ընկնում է ցած): *Աստվա՜ծ իմ։*

ՄԵՅ— (Երիտասարդի ձեռքերը կրծքին ծալելով): *Հանցանք է սրա պես մարդուն սպանելը։ Ո՞վ է արել, Արշի։*

ԱՐՉԻ— *Ես նրան պիտի հետ տանեմ։ Պիտի քարշ տամ նույն տեղը, քանի դեռ ոչ ոք չի եկել։* (Շալակում է երիտասարդին):

ՄԵՅ— *Թույլ տուր օգնեմ։ Դու արդեն նրա տարիքին չես, չնայած կենդանի ես, իսկ նա՝ մեռած։* (Երկուսով դեպի դուռն են տանում երիտասարդին): *Դե հիմա ինձ ասա, թե այդ ինչ «երջանիկ ծնունդ» էր։*

ԱՐՉԻ— *Ես ի՞նչ իմանամ, նա այդպես ասաց դատավորին, ասաց իրեն գնդակահարողներին, նա նույնիսկ այնքան ապրեց, որ էլի մի անգամ նույնը ինձ ու քեզ ասաց։* (Դուրս են գալիս: Ռոուզը վազում է նրանց հետևից):

Տեսարան երրորդ

Գիշերվա ժամը մեկին պակաս է տասը րոպե: Արշին կանգնած է բարի հետևում, Մեյ Ֆոլին՝ բարի եզրին: Ռոուզը ավլում է խոհանոցի մուտքը:

ԱՐՉԻ— *Խնդրեմ, ութ ժամը լրացավ և ոչ մի հաճախորդ, չհաշված գեբեզմանից ելած այն թշվառականին։ Էս աշխարհից՝ ոչ ոք։*

ՄԵՅ— *Ասում ես, էլի, իսկ ես քո կարծիքով ո՞ր աշխարհից եմ։*

ԱՐՉԻ— Քեզ չհաշված, Մեյ։ (Նայում է նրան)։ Այսօր գնդակահարված երեսունինը հոգուց մեկը քեզ էր հիշեցնում։

ՄԵՅ— Լինելու բան չի։ Ինձ նման ուրիշ կին գոյություն չունի։ Ես կյանքի բավական մեծ փորձ ունեմ և պիտի ասեմ, որ ինձ նմանին դեռ չեմ հանդիպել։ Ուրիշ որտե՞ղ ես տեսել ինձ պես հազնվող մի կին, հը՞։ Թանկ շորեր էլ չեն, որ ասեմ... Եթե ես փողերս շորերի վրա շաղ տայի, կյանքում չէի կարողանա սրտիս ուզածի պես խմել։ Իսկ դու հո գիտե՞ս, որ ես միշտ եղածի լավագույնն եմ խմում։ Ոչ էլ կկարողանայի ճամփորդել էնպես, ինչպես հիմա եմ ճամփորդում։ Ես ինքս ինձ մեքենա առա, քշել սովորեցի, ու ամբողջ երկրով ծերից-ծեր ման եկա։ Երեք տղաներիս էլ տեսա։ Բան չեմ ասում, նրանք ինչ-որ չափով օտարացել են, երևի նույնիսկ շփոթվել ու քաշվում էին իմ ներկայությունից, բայց ոչ մեկն ինձանից երես չդարձրեց։ Եվ ես կասեմ, թե ինչու, Արչի։ Որովհետև մայրը միշտ մայր է մնում, այդքան բան, նույնիսկ եթե խոսքն իմ մասին լինի։ Նրանք, իհարկե, ապշել էին։ Հայրը նրանց ինձնից փախցրեց այն ժամանակ, երբ մեծն ընդամենը հինգ տարեկան էր, իսկ ես քսանմեկ, թե քսաներկուս էլ չկայի։ Բայց ես նրանց հետքը չէի կորցնում։ Նրանք լավ տղաներ են՝ երեքն էլ ամուսնացել են, իրենց զավակներն ունեն։ Բայց, աստված իմ, նրանք, միևնույն է, դժբախտ են։ Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ասում, Արչի։ Չնայած իրենց հաջողություններին ու երջանկությանը՝ դժբախտ են։ Ես դա նրանց աչքերից հասկացա, իմ խե՜ղճ բալիկներ։ Դե, լավ, խոսքդ կտրեցի, կարծեմ ինչ-որ բան էիր ուզում պատմել։

ԱՐՉԻ— Ե՞ս էի ուզում, այդ դու ես ամբողջ գիշեր ճամփորդական հուշերդ պատմում, կարծես գնացել սուրբ նշխար ես գտել կամ դրանից էլ լավ մի բան։ Դու չես էլ հասկանում, թե ինչ է կատարվել էստեղ, ախր իմ խորտկարանը սպանդանոց են սարքել։ Այսօր գընդակահարված երեսունինը հոգուց մի կին շատ էր հիշեցնում քեզ։ Երբ նրան վերջին խոսքի իրավունք տվին, ասաց. «Ես մի տեղ տղա ունեի, ի՞նչ է լինելու նրա հալը...»։ «Քանի՞ տարեկան է ձեր տղան», հարցրեց դատավորը։ «Երեսունին մոտ», ասաց կինը, «խեղճ տղան հիմա ի՞նչ է անելու»։ Հետո էդ կնոջն էլի հարցեր տվին ու պարզվեց, որ երեսուն տարի առաջ ծնված նրա տղան երեք տարեկանում մեռել է։ Կինը հանկարծ հիշեց դրա մասին ու սկսեց լաց լինել։ Սովորաբար վերջում նրանց թույլ են տալիս մի բաժակ խմել ու ծխել։ Թունդ խմող էր երևում՝ կրկնակի կոնյակ լցրի։ Խմելուց առաջ լացը կտրեց ու ասաց. «Ողջ լինեք»։ Կարծես մի պահ մո-

ռացել էր, որ պիտի գնդակահարվի։ Վերջին րոպեներին անընդհատ մի բան հիշում էր, մի բան՝ մոռանում։ (Դադար)։ *Ամբողջ երեկո ոչ մի հաճախորդ։ Վախեցած են իհարկե, ես չեմ կարող նրանց մեղադրել։*

ՄԵՅ— *Իսկ նա ի՞նչ էր արել։*

ԱՐՉԻ— *Ո՞վ։*

ՄԵՅ— *Այն կինը, Արչի, որի մասին պատմում էիր։ Ի՞նչ էր նրա հանցանքը։*

ԱՐՉԻ— *Սատանան գիտի, չեմ հիշում։ Նրանցից ոչ մեկն էլ հանցավոր չէր։ Ռոուզ, ի՞նչ էր արել իր տղայի մասին հարցնող էն կինը, հիշո՞ւմ ես, իսկ հետո պարզվեց, որ նրա տղան երեսուն տարի առաջ է մեռել։ Ո՞րն էր նրա հանցանքը։ Չե՞ս հիշում՝ ընդմիջումից հետո էր, մի քիչ էլ Մեյին էր նման։*

ՌՈՈՒԶ— *Նրա անունը Մարգրեթ Քաթքըրթ էր, հիսունհինգ տարեկան։ խանութներից բան-ման թռցնող էր։ Հագին լայնեզր գլխարկ ուներ, ժանեկազարդ զգեստ ու երկար ձեռնոցներ։ Ինչ-որ մեկի տուն էր մտել, օրորոցից հանել քնած երեխային ու փորձել դուրս գալ։ Տղան արթնացել ու լաց էր եղել։*

ԱՐՉԻ— *Հիշեցի, այնքան շատ էին, որ մոռանում ես, թե ով ինչ էր արել։ Դե լավ, հիմա ինձ լսեք, արդեն ուշ է, լավ կանեք՝ գնաք։* (Ռոուզը զարմանքով նայում է Արչիին, վերջինս՝ նրան)։

ՄԵՅ— *Իմ տունն էստեղից մոտիկ է, Ռոուզ, բայց ես հաճույքով քեզ կուղեկցեմ։*

ՌՈՈՒԶ— (Վախեցած է)։ *Դուք շատ բարի եք, Մեյ։*

ԱՐՉԻ— *Հա, քիչ էր մնում մոռանայի, Մեյ, վաղը հինգից շուտ չգաս։*

ՄԵՅ— *Ինչո՞ւ, իսկ մինչև հինգն ի՞նչ եմ անելու։ Չէ, երբ ուզենամ, կգամ։*

ԱՐՉԻ— *Չի կարելի, քեզ չասացի՞, որ էստեղ ժամը տասից հինգը դատարան է։ Հինգից շուտ չգաս, վերջ։*

ՄԵՅ— *Դե լավ, որ ասում ես...*

ԱՐՉԻ— *Գնալուց առաջ մի-մի բաժակ էլ չգցե՞նք։ Վերցրու, Ռոուզ։*

ՄԵՅ— (Բաժակը վերցնելով)։ *Էհ, ձե՞զ տեսնեմ։*

ՌՈՈՒԶ— *Բախտավոր լինեք։* (Բոլորը խմում են։ Մեյն ու Ռոուզը հրաժեշտ են տալիս ու դուրս գնում։ Արչին կողպում է դուռը, լույսերն անջատում ու գլուխը կախ մտասուզված կանգնում սրահի կենտրոնում։ Ավտոկանգառի կողմի դռանը թույլ թակոց է լսվում։ Արչին սառնասիրտ շուռ է գալիս։ Դռան բռնակը պտտվում է։ Արչին հետ է ընկնում։ Դուռը դանդաղ բացվում է և ներս է մտնում

այն կինը, որի մասին նա ինչ ասաց պատմում էր: Կինն իսկապես ինչ-որ բանով հիշեցնում է Մեյին):

ԿԻՆ— *Ի՞նչ է լինելու իմ տղայի հալը։*

ԱՐՉԻ— *Ձեր տղան մեռել է։*

ԿԻՆ— *Նա չի մեռել։ Ես նրան տեսա։ Ես գրկել էի նրան։ Երբ նրան ինձ-նից խլում էին, լաց եղավ։ Ի՞նչ է լինելու իմ խեղճ մանչուկին։*

ԱՐՉԻ— *Նա լավ է, նրան ոչինչ չի լինի։*

ԿԻՆ— *Ես չեմ ուզում նրան մի վատ բան պատահի։*

ԱՐՉԻ— *Ոչինչ չի պատահի, նա լավ մարդկանց մոտ է։*

ԿԻՆ— *Ես շատ եմ անհանգստանում տղայիս հանար և... խմել եմ ուզում։ Մի թունդ բան, որ քունս տանի։ Քնել չեմ կարողանում։* (Արշին դողացող ձեռքով մի բաժակ է լցնում, մեկն էլ՝ իրեն: Երկուսով վերցնում են բաժակները): *Չգիտեմ վերջերս ինձ ինչ է պատահել։ Ջղերս լարված են, ամեն չնչին բանից լեղիս ճաքում է։* (Նայում է ձեռքի բաժակին, հետո՝ Արշինին): *Ինչևէ, ձեր կենացը։* (Խմում են):

ԱՐՉԻ— *Նրան բան չի պատահի, հանգիստ եղեք։ Քնեք։*

ԿԻՆ— *Դուք վստա՞հ եք, վստա՞հ եք, որ նա լավ կլինի, մի՞շտ, հավիտյա՞ն։*

ԱՐՉԻ— *Այո, վստահ եմ։*

ԿԻՆ— *Սիրտս տեղն ընկավ, կարծես թե արդեն ինձ լավ եմ զգում։* (Դուրս է գնում, դուռն իր հետևից ծածկելով: Արշին մի բաժակ էլ է լցնում, արագ խմում ու մոտենում դռանը: Փորձում է կողպեքը՝ փակ է: Մոտենում է փողոցի դռանն ու հուզված կանգ առնում: Քիչ անց դուռը կամաց թակում են):

ԱՐՉԻ— *Ո՞վ է։*

ՌՈՈՒԶԻ ՁԱՅՆԸ— *Ես եմ, Արշի, Ռոուզը։* (Արշին բացում է դուռը, Ռոուզը ներս է մտնում, ձեռքին մի փոքրիկ ճամպրուկ):

ՌՈՈՒԶ— *Ես չէի կարող չգալ, Արշի, կներես։ Տանը մնալ չկարողացա, պարզապես չդիմացա։ Դու ինձ հո չե՞ս մեղադրում, որ էսպես ստացվեց։ Չկարծես, թե մտքիս դրել էի, որ էսպես ստացվի, պարզապես հոգնած էի, շատ էի հոգնած։ Բայց հիմա էլ հոգնություն չեմ զգում՝ ես քեզ համար տունդ կարգի կբերեմ։ Չես ամաչում, չէ՞։ Արշի։ Երբ ինձ քշեցիր, ամաչում էիր, բայց հիմա չես ամաչում, չէ՞։*

ԱՐՉԻ— *Չէ, Ռոուզ, չէ։ Վաղը Մեյին ամեն ինչ կասեմ։*

ՌՈՈՒԶ— *Ի՞նչ կասես, Արշի։*

ԱՐՉԻ— *Կասեմ, որ դու իմ աղջիկն ես, բոլորին կասեմ։*

ՌՈՈՒԶ— *Չի ստացվի, Արշի, նրանք ինձ ճանաչում են, դու չես կարող այդ անել, ես քեզ չեմ թողնի։*

ԱՐՉԻ— *Գիշերը չկարողացա նրան ասել, բայց վաղն անպայման կասեմ։* (Դադար)։ *Կասեմ, որովհետև դա ճիշտ է՝ ինչ-որ անորսալի ձևով դա ճիշտ դուրս եկավ։* (Ռոուզը դանդաղ մոտենում է նրան։ Արչին հոր պես գրկում է աղջկան։ Երկուսն էլ շփոթված են, վախեցած)։ *Աշխարհով մեկ անտուն մեռելներ են շրջում, անտուն մեռելներ ու նաև՝ անտուն ապրողներ։ Հիմա ես էլ եմ վախենում, Ռոուզ։*

ՌՈՈՒԶ— *Պինդ կաց, Արչի, մի վախենա։ Ես ամեն ինչ կանեմ, որ քո տանը լավ լինի։* (Վերցնում է ճամպրուկն ու բարձրանում վերև։ Արչին, բարի մոտ կանգնած, նրան է նայում)։

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Տեսարան առաջին

Հաջորդ օրն առավոտյան ժամը տասին քառորդ կամ քսան է պակաս: Վերևի հարկից իջնում է Արշի Քրուիշընքը, բացում է փողոցի դուռը, դուրս նայում, ապա անցնում է բարի հետևն ու սկսում ուսումնասիրել դարակների բովանդակությունը: Խոհանոցից դուրս է գալիս նոր զգեստ հագած Ռուզը: Դիմաներկ չի գործածել, բայց մազերը հարդարել է նոր ձևով: Թարմ ու խոհեմ տեսք ունի, «տուն-տուն» խաղացող աղջկա նման: Սկուտեղի վրա երկու գավաթ սուրճ է բերում:

ԱՐՉԻ— *Կա-չկա մի կարգին չես էլ քնել, հա՞։*

ՌՈՈՒԶ— *Ասացի շուտ արթնանամ, որ զբաղվեմ խոհանոցով։* (Սուրճով գավաթը դնում է Արշիի առջև): *Ոսպով ապուր եմ եփել, գուցե հավանեն։*

ԱՐՉԻ— *Ո՞վ, ճաշի ժամին դեռևս կենդանի մնացած թշվառնե՞րը։*

ՌՈՈՒԶ— *Այո։*

ԱՐՉԻ— *Կհավանեն, էն էլ ինչպես։*

ՌՈՈՒԶ— *Խոհանոցում ինչ կար-չկար գործածեցի։ Առանձնապես բան չէր մնացել։*

ԱՐՉԻ— *Ինչ էլ լինի՝ կհավանեն, որովհետև դա նրանց վերջին ճաշն է լինելու։*

ՌՈՈՒԶ— *Բայց չէ՞ որ նրանք այդ մասին չգիտեն։*

ԱՐՉԻ— *Գիտեն, բայց չեն հավատում։ Նրանք ձև կանեն, թե դա մի հերթական քնձոռոտ ապուր է, որ ստիպված են ուտել, մինչև լավ օրերը գան ու հերթը հասնի այն սքանչելի կերակուրներին, որ իրենց կարծիքով մի օր պիտի ճաշակեն։ Այսպես կոչված՝ խորհրդավոր ճաշին։*

ՌՈՈՒԶ— *Խորհրդավոր ճաշի՞ն։ Այդպիսի բա՞ն էլ կա, Արշի։*

ԱՐՉԻ— *Իհարկե, ամբողջ կյանքում այն առջևս է եղել, բայց այդպես էլ համը չեմ առել։*

ՌՈՈՒԶ— *Խորհրդավոր ճաշն ի՞նչ է, Արշի։*

ԱՐՉԻ— Ինչպես ասեմ, նախ և առաջ մարդ պետք է դրան պատրաստ լինի։ Ամեն բան պիտի կարգին լինի։ Հոգիդ՝ խաղաղված։ Տանը և ամենուր բոլորը պիտի առողջ լինեն։ Եվ ահա սքանչելի զով մի օր իրիկնադեմին կնոջդ ու երեխաներիդ հետ դու զբոսանքից տուն ես վերադառնում։ Մինչև կինդ ընթրիքն է պատրաստում, դու այգում դիզում ես թափված չոր տերևներն ու վառում։ Երեխաներդ կողքիդ են, այրվող տերևների հոտ է գալիս։ Երեխաները լավ են, կինդ օրեցօր գեղեցկանում է։ Նա քեզ համար բազում երեխաներ է ծնել, ոչ թե մեկ, երկու, կամ երեք, այլ՝ յոթ-ութ և դեռևս գեղեցկուհի է։ Երեխաները սիրում են նրան, իսկ նա՝ երեխաներին, որոնցից ամեն մեկը մյուսից տարբեր է։ Նրանք ձեզ ահագին հոգսեր են պատճառում, բայց այդ հոգսերից ձեր սիրտը չի նեղվում։ Ավագ քույրերը տանն օգնում են մորը՝ սիրո, ամուսնության, տղաների մասին խոսում։ Դրսում տղաներդ խոսում են ամուսնանալուց ու լուրջ մարդ դառնալուց առաջ մնացած իրենց անելիքներից՝ ասենք, շուրջերկրյա ճամփորդության, չէ՞ որ պետք է ամեն ինչ տեսնել, ու դրա պես բաներից։ Կինդ մոտենում է այրվող տերևների կույտին ու մի բաժակ սառը գինի է մատուցում քեզ, մյուսն իր ձեռքում է, դուք չխկացնում եք բաժակներն ու իրար նայելով՝ ժպտում, որովհետև գիտեք, որ իրար եք պատկանում, և դա ձեզ դուր է գալիս՝ ամեն ինչով հանդերձ։ Երեխաներն աչքի տակով ձեզ են նայում ու նույնպես ժպտում, որովհետև նրանք էլ են իրար պատկանում ու նաև՝ ձեզ, ու դա նույնպես նրանց դուր է գալիս՝ ամեն ինչով հանդերձ։ Գինին խմելուց հետո դուք ներս եք մտնում ու բոլորով նստում սեղանի շուրջը։ Ուտելիքն իհարկե նշանակություն ունի, բայց տվյալ դեպքում ուտելիքը չէ կարևորը։ Իմ պատկերացումով դա տնական նոր թխած հաց պիտի լինի, թարմ կարագ, խորոված տավարի միս՝ կարտոֆիլով։ Պանիր։ Թեյ ու սուրճ՝ կաթով։ Եթե փոխարենը ոսպով ապուր է, ոչինչ, ոսպով ապուրն էլ սքանչելի է։ Ահա այն ամենը, ինչ ես միշտ երազել եմ մի օր վայելել։ Իսկ այսօր ոսպով ապուր ուտող թշվառներից ամեն մեկը ձևացնելու է, թե մի հերթական քնձռոտ ապուր է ուտում, քանի դեռ լավ օրերը չեն եկել ու չի հասել այն չնաշխարհիկ ուտելիքի հերթը, որը մեռնելուց առաջ դեռ պիտի մի օր ճաշակեն։ Բայց այն երբեք նրանց բաժին չի ընկնի, և ոչ էլ՝ ինձ։ Երևի ընդհանրապես՝ ոչ մեկին։

ԳՈՈՒՉ— Ախր դա կարող է այնքան հեշտ իրագործվել, Արչի։

ԱՐՉԻ— Երևի կարող է, բայց երբեք չի լինում։ Ապրես, լավ սուրճ էր։

(Ռոուզը տանում է գավաթները: Արշին աթոռն է ուղղում: Մտնում է Մեյ Ֆոլին):

ՄԵՅ— (Զվարթ): *Տես, Արշի, չհամարձակվես ինձ նկատողություն անել ու քշել։ Ես քեզ ասելիք ունեմ։*

ԱՐՇԻ— *Միևնույն է՝ ստիպված կլինես գնալ։*

ՄԵՅ— *Մինչև ասելիքս չլսես, չեմ գնա։*

ԱՐՇԻ— *Մեյ, ուր որ է նրանք կդան։ Ինչ կլինի, հինգից հետո արի ու ամեն ինչ պատմիր։*

ՄԵՅ— *Որ չպատմեմ, կպայթեմ։ Գիշերվա կեսին մեկը դուռս ծեծեց։ Լեղաճաք վեր թռա։ Կյանքում էդպես չէի վախեցել, բայց ձայն չհանեցի, հույսս դրած, թե կգնա։ Չգնաց։ Մեկ էլ տեսնեմ՝ դուռը բացվեց ու դռան մեջ մի ջահել տղա է կանգնած։*

ԱՐՇԻ— *Երա՜զ է եղել։*

ՄԵՅ— *Երդվում եմ, երազ չէր, Արշի։ Երազ լիներ, կճչայի։ Նրան տեսնելուն պես վախս անցավ՝ սովորական մի տղա էր, մոլոր ու մենակ։ Մոտեցավ անկողնիս, ծունկի իջավ ու սկսեց հեկեկալ։ Էն ծես իմ տղան լիներ։ «Լա՜վ, լա՜վ, ասացի, բան չկա,ոչինչ»։*

ԱՐՇԻ— *Ո՞վ էր։*

ՄԵՅ— *Չգիտեմ, Արշի, ես փորձում եմ քեզ բացատրել՝ նա շատ նման էր գիշերը քո էստեղ բերած ու մեռած այն տղային։*

ԱՐՇԻ— *Իսկ ի՞նչ էր ասում։*

ՄԵՅ— *Բանն էլ հենց դա է՝ մի բառ չասաց։ Պարզապես հեկեկում էր, հետո վեր կացավ, դուրս գնաց ու դուռն իր հետևից ծածկեց։* (Դադար): *Մնացածը չեմ հասկանում, Արշի։ Մոտեցա, որ դուռը փակեմ, տեսնեմ՝ բանալիով կողպված է։ Երդվում եմ, Արշի։ Ինչո՞ւ հենց ինձ հետ պիտի նման բան պատահեր։ Լեղիս ճաքել էր, Արշի, բայց երբ նրան տեսա, մի տեսակ հպարտությամբ լցվեցի։ Հպարտ էի, որ նա ինձ մոտ էր եկել, ինձ պես պառավիս, կարծես թե իր մայրը լիներ։ Դու ինձ հավատում ես, չէ՞, Արշի։*

ԱՐՇԻ— *Իհարկե հավատում եմ։ Մենակ թե շուտ արա գնա, քանի բանը բանից չի անցել։*

ՄԵՅ— *Գնացի։* (Շուռ է գալիս և երես առ երես հանդիպում Աստյանի անդամների հետ ներս մտնող դատավորին):

ԴԱՏԱՎՈՐ— *Բարի առավոտ, միսիս Քրուքշընք։ Սա ձեր կի՞նն է, միստր Քրուքշընք։*

ԱՐՇԻ— (Աշխատելով շուշացնել): *Այո, այո, կինս է։*

ԴԱՏԱՎՈՐ— *Հիանալի է։ Միսիս Քրուքշընք, երեկ մենք ձեր պակասը զգալու առիթ ունեցանք, մանավանդ ընդմիջման ժամին։ Դուք իհար-*

կե կոդնեք մեզ, անշուշտ՝ համապատասխան վարձատրությամբ։ Տեսնում եմ, որ ամեն ինչ կարգին է։ Պարոնայք, խնդրում եմ զբաղեցնել ձեր տեղերը։ (Ռոուզը դուրս է գալիս խոհանոցից)։ *Միս Քրուքշընք։* (Ռոուզը թեթևակի գլխով է անում)։

ՌՈՈՒԶ— (Ցածրաձայն)։ *Բարի առավոտ։*

ԴԱՏԱՎՈՐ— *Անցեք ձեր տեղը, խնդրեմ։* (Դիմելով Մեյին)։ *Իսկ դուք, միսիս Քրուքշընք, կարող եք կանգնել ձեր ամուսնու կողքին։* (Ռոուզն ապշահար հայացք է նետում նրանց կողմը)։

ՄԵՅ— *Լսում եմ, սըր։*

ԴԱՏԱՎՈՐ— (Դրավելով իր տեղը)։ *Դուք լա՞վ նախաճաշ եք պատրաստել։*

ՄԵՅ— *Այո, իհարկե, սըր։*

ՌՈՈՒԶ— *Ոսպով ապուր։*

ՄԵՅ— *Այո, ոսպով ապուր։*

ՌՈՈՒԶ— *Մեզ որոշ մթերքներ են պետք։*

ԴԱՏԱՎՈՐ— *Հիանալի է, միսիս Քրուքշընքին թույլ է տրվում զբաղվել գնումներով։*

ՌՈՈՒԶ— *Ահա անհրաժեշտ մթերքների ցուցակը։* (Մեկնում է Մեյին)։ *Իսկ սա մթերային կտրոններն են։*

ԱՐՉԻ— *Վախենամ, թե դրամարկղի փողը չհերիքի, մենք երեկ ոչ մի հաճախորդ չենք ունեցել։*

ԴԱՏԱՎՈՐ— *Իսկ դուք լրացրե՞լ եք երեք հարյուր երեսուներեք ձևը։*

ԱՐՉԻ— *Անշուշտ, ահա այն։* (Մեկնում է դատավորին. վերջինս արագ աչքի է անցկացնում)։

ԴԱՏԱՎՈՐ— (Դիմելով կատարածուին)։ *Կարծես թե ամեն ինչ կարգին է։ Կարող եք հաշիվը փակել։* (Կատարածուն վերցնում է թուղթը, դրամը հաշվում ու տալիս է Արչիին, սա դրամի մի մասը մեկնում է Մեյին)։ *Հիանալի է։ Միսիս Քրուքշընք, ձեզ թույլ է տրվում զբաղվել գնումներով։*

ՄԵՅ— *Լսում եմ, սըր։* (Դուրս է գնում)։

ԴԱՏԱՎՈՐ— *Մեր տրամադրության տակ դեռևս մեկ րոպե կա։ Ցավում եմ, միստր Քրուքշընք, որ երեկ հաճախորդ չեք ունեցել։ Ի՞նչ է, բոլորովի՞ն մարդ չեկավ։*

ԱՐՉԻ— *Ոչ ոք։*

ԴԱՏԱՎՈՐ— *Դա լավ նշան է։ Զափից շատ խմելը ոճիր է ժողովրդի հանդեպ։*

ԱՐՉԻ— *Ես ուտելիք էլ եմ մատուցում, ուստի և իմ հաճախորդները երբեք համը չեն հանում։*

ԴԱՏԱՎՈՐ— *Դատական նիստը բացված է։ Ներս բերեք, խնդրեմ, առաջին ամբաստանյալին։* (Պահակախումբը գնում է և ներս է բերում մոտ վաթսունհինգ տարեկան աչքի ընկնող արտաքինով մի մարդու, որը սպիտակ մուշտուկով ծխախոտ է ծխում)։

ԺՈՒԼՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Ջեֆրի Ջոնսըն։ Վաթսունյոթ տարեկան։ Ներեցեք, ձերդ ազնվություն, այստեղ մասնագիտության տակ գրված է՝ թատրոն։*

ՋԵՖՐԻ— *Թատրոնի քննադատ։ Ինչևէ, դա իմ բուն զբաղմունքը չէ։*

ԺՈՒԼՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Դուք ձեր ապրուստը թատրոնի քննադատությա՞մբ չեք վաստակում։*

ՋԵՖՐԻ— *Ամենևին։ Ես հենց այնպես եմ թատերախոսություններ գրում, հաճույքի համար։ Տասնմեկ տարեկանից ի վեր ես ապրում եմ իմ ունեցած արժեթղթերի տոկոսներով։*

ԺՈՒԼՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Եթե ձեր մասնագիտությունը թատերական քննադատ չէ, ապա ի՞նչ է։*

ՋԵՖՐԻ— *Մարդ արարածի էության ուսումնասիրությունը։*

ԴԱՏԱՎՈՐ— (ժողովրդական դատախազին)։ *Շարունակեք։*

ԺՈՒԼՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Ամբողջ կյանքի ընթացքում ցուցաբերել է ցինիզմ, անտարբերություն և անպատասխանատվություն։*

ՋԵՖՐԻ— *Բացի այդ օրական երկու անգամ լոգանք եմ ընդունում՝ առավոտյան և քնելուց առաջ, թերևս նաև ավելացնեք, որ հավի ճուտ տանել չեմ կարող։*

ԺՈՒԼՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Դա չի հանգեցնում ժողովրդի թշնամի լինելուն։*

ՋԵՖՐԻ— *Ես թքած ունեմ, թե դա ինչի է հանգեցնում։ Ես զզվում եմ հավի ճտերից, ինչպես նաև բոլոր նրանցից, ովքեր հավի ճտերից չեն զզվում։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Մեկ վայրկյան, ես ձեզ կարգի եմ հրավիրում։*

ՋԵՖՐԻ— *Հրավիրել պետք չէ, ինձ մոտ միշտ ամեն ինչ կարգին է։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Տվյալ պահին դուք խախտում եք կարգը։*

ՋԵՖՐԻ— *Գլուխ մի տարեք։*

ԴԱՏԱՎՈՐ— *Ես ստիպված եմ պնդել, որ սահմանված ռիթմը չխախտվի։ Ժողովրդական դատախազ, բարի եղեք շարունակել։*

ԺՈՒԼՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Ամբաստանյալն իր հոդվածներից մեկում դրական կարծիք է հայտնել նոր ներկայացման մեջ խաղացող գեղեցիկ մի դերասանուհու մասին, մինչդեռ այդ աղջիկը իրականում տաղտկալի է խաղացել։*

ՋԵՖՐԻ— *Դատարկ բան եք ասում՝ սքանչելի կատարում էր։*

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Դեռ ավելին, այդ դերասանուհին նրա սիրուհին է եղել։*

ՋԵՖՐԻ— *Ծղել է։* (Ներս է վազում երիտասարդ մի աղջիկ)։

ԱՂՋԻԿ— *Ջեֆրի...* (Գրկում է նրան)։

ՋԵՖՐԻ— *Նա հիմա էլ է իմ սիրուհին։*

ԱՂՋԻԿ— *Այդ ի՞նչ օրն են քեզ գցել։*

ՋԵՖՐԻ— *Իսկ ո՞ւր է Բիսմարքը։ Ինչո՞ւ հետդ չբերեցիր։ Նա մեզ մի լավ կզվարճացներ, սրանցից մեկնումեկին կծելով։*

ԱՂՋԻԿ— *Նա միախավ։*

ՋԵՖՐԻ— *Փախա՞վ։ Այ քեզ բա՜ն։ Լսիր, բա ինչո՞ւ նրա հետևից չգնացիր։*

ԱՂՋԻԿ— *Ես քեզ էի փնտրում, Ջեֆրի, մտքովս ինչ ասես չանցավ։ Ես ինչպե՞ս կարող էի Բիսմարքին փնտրել, երբ դու էիր կորել։*

ՋԵՖՐԻ— *Շատ լավ էլ կարող էիր։ Որտե՞ղ ես նրան վերջին անգամ տեսել։*

ԱՂՋԻԿ— *Հենց հյուրանոցի առաջ։*

ՋԵՖՐԻ— *Բարի եղեք, խնդրեմ, տաքսի կանչել։ Իմ շունը կորել է։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Մեկ վայրկյան, դուք իրավունք չունեք...*

ՋԵՖՐԻ— *Ես ձեզ կդիմեմ, երբ իմ խելքին մի զվարճալի բան փչի։ Ինձ համար զվարճալի։ Իսկ մինչ այդ կարող եք ձեր ուղեղը զբաղեցնել... դե, ինչով որ...*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Ձերդ ազնվություն, ըստ իս, ամբաստանյալը լիովին չի գիտակցում իր...*

ԴԱՏԱՎՈՐ— *Մի բոպե, պահակախումբ, տաքսի կանչեք։*

ՋԵՖՐԻ— *Շնորհակալ եմ։* (Հանում է դրամապանակն ու դատավորին թղթադրամ է մեկնում)։ *Գնանք, սիրելիս։ Տրամադրությունդ իզուր է ընկել, մենք անպայման Բիսմարքին կգտնենք։ Վստահ եմ, որ նա դռան առաջ մեզ է սպասում։*

ԴԱՏԱՎՈՐ— *Պարոն կատարածու, սույն Ատյանն իրավասու է ժողովրդի շահերից ելնելով, հետաձգել ամբաստանյալի ուղղումը։ Ձեզ հանձնարարվում է կազմակերպել ամբաստանյալի և նրա մեղսակցի հսկողությունը։ Խնդրում եմ նկատի ունենալ ժողովրդի՝ իր թշնամիների բացահայտման գործում ցուցաբերած բացառիկ հնարամտությունն ու հեռատեսությունը։* (Թղթադրամը նետում է կատարածուին)։ *Խնդրում եմ մուտքագրել ժողովրդական ֆոնդի օգտին։ Ներս բերեք հաջորդ ամբաստանյալին։* (Հաջորդ ամբաստանյալը թատերական ֆենադատի տարիքի մի մարդ է)։

ԴԱՏԱՎՈՐ— *Ժողովրդական դատախազ, լսում ենք։*

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Էնդրյու Էբբրնիթի։ Վաթսունմեկ տարեկան։ Զբաղմունք չունի։*

ԷԲԲՐՆԻԹԻ— *Ճիշտ չէ, ես փող եմ սարքում, երեսուն տարուց ավելի է, ինչ փող եմ սարքում։*

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— (Առհամարհելով)։ *Կեղծ փող։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Կարելի՞ է տեսնել։* (Էբբրնիթին իր բոլոր գրպաններից թղթադրամների ճոճոան փաթերթեր է հանում)։

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Ձերդ ազնվություն, այս մեկում հազար դոլարանոցներ են, սրանք՝ հինգ հազարանոցներ, սրանք՝ տասը հազարանոցներ, իսկ այս մեկում՝ քսան հազարանոցներ։*

ԷԲԲՐՆԻԹԻ— *Այստեղ համարյա երեք հարյուր միլիոն դոլար կա։*

ԴԱՏԱՎՈՐ— *Մոռանում ենք ռիթմը։ Եկեք երեկվա ռիթմը չկորցնենք։ Առաջ անցեք։*

ԷԲԲՐՆԻԹԻ— *Կարելի՞ է մի բան ավելացնել։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Ոչ, ձեր հերթը դատապաշտպանից հետո է։*

ԷԲԲՐՆԻԹԻ— *Ես կուզեի խոսել նրա հետ։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Դա նպատակահարմար չէ։ Նա լիովին ընդունակ է ձեզ պաշտպանել առանց ձեր միջամտության։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Խոսք չկա, որ ամբաստանյալն իսկական դրամանենգ չէ։ Ահա նրա մեկ միլիոնանոց թղթադրամներից մեկը։ Թղթի և տպագրության որակը գերազանց են։ Բայց և այնպես մի կողմի վրա տեղադրված է ոմն «Իմ հոր» դիմանկարը, իսկ մյուս կողմում՝ «Հորս տունը» նկարը։ Մյուս թղթադրամը նույն տիպի է, միայն թե մի կողմին «Իմ մայրը» դիմանկարն է, իսկ մյուսին՝ «Մորեղբայրս»։*

ԷԲԲՐՆԻԹԻ— *Նա մեռավ քսանյոթ տարին չբոլորած և դրանով կոտրեց մորս սիրտը։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Ատյանը կտեղեկացնի ձեզ, թե երբ է պետք խոսել։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Ձերդ ազնվություն, ես մեկ հարց և ես կավարտեմ։* (Ամբաստանյալին)։ *Ձեր կեղծած դրամից որքա՞նն եք ծախսել։*

ԷԲԲՐՆԻԹԻ— *Մոտ վեց միլիոն դոլար։ Պարտքերս շատ էին։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Վախենում եմ, թե ստիպված կլինեմ նիստի ռիթմը փոքր-ինչ խախտել... Կարճ ասած, կուզեի իմանալ, թե ինչի՞ց էին առաջանում այդ պարտքերը։*

ԷԲԲՐՆԻԹԻ— *Թղթախաղից։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Ձերդ ազնվություն, անհրաժեշտ է իմանալ, թե ամբաստանյալն ո՞ւմ է այդքան դրամ տանուլ տվել։*

ԷԲԸՐՆԻԹԻ— *Մորս։ Գիտեի, իհարկե, որ նա դաղալություն է անում, բայց դե ախր ինձ հաղթելիս այնքան էր ուրախանում, որ ձայն չէի հանում և միշտ վճարում էի։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Ինչպե՞ս էր ձեր մայրն այդ գումարը տնօրինում։*

ԷԲԸՐՆԻԹԻ— *Մեծ մասը բաժանում էր, դրամական հարցերում նա շատ էր անփույթ։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Ո՞ւմ էր բաժանում։*

ԷԲԸՐՆԻԹԻ— *Ազգականներին։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Նրա՞նք ինչ էին անում։*

ԷԲԸՐՆԻԹԻ— *Ողջամիտները պահում էին, թեթևամիտները՝ ոչ։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Երբևէ փորձե՞լ եք այդ դրամով որևէ բան գնել։*

ԷԲԸՐՆԻԹԻ— *Ոչ, դրա կարիքը չի եղել։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Եթե այդպես է, ապա դրամն ի՞նչ նպատակով էիք արտադրում։*

ԷԲԸՐՆԻԹԻ— *Ես դեռ մանկուց որոշել էի աշխարհի ամենահարուստ մարդը դառնալ։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Այդ մեկն իզուր ասացիք։* (Դատավորին)։ *Ես վերջացրի։*

ԴԱՏԱՎՈՐ— *Ավելացնելու բան չունե՞ք։*

ԷԲԸՐՆԻԹԻ— *Այսի՞նքն։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— (Պարապությունից մի թղթադրամ ուսումնասիրելով)։ *Այս մեկի վրա էլ «Սոնյայի մայրն» է պատկերված։ Ո՞վ է Սոնյան։*

ԷԲԸՐՆԻԹԻ— *Սոնյան և նրա մայրը որոշ ժամանակ մեր հարևաններն էին։*

ԴԱՏԱՎՈՐ— *Մենք ռիթմից ընկնում ենք։ Հանցավոր է։*

ԷԲԸՐՆԻԹԻ— *Ախր ինչո՞ւ։ Սոնյայի համա՞ր։ Նա քրոջ պես էր...*

ԴԱՏԱՎՈՐ— *Կարող եք խմիչք և ծխախոտ պահանջել։ Ո՞րն եք նախընտրում։*

ԷԲԸՐՆԻԹԻ— *Մի բաժակ ջուր։* (Արշին լցնում է բաժակը, էբըրնիթին ագահորեն խմում է)։

ԴԱՏԱՎՈՐ— *Պահակախումբ։* (Պահակախումբը մոտենում է էբըրնիթիին)։

ԷԲԸՐՆԻԹԻ— *Ես իմ փողերը հետ եմ պահանջում։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Այս մեկին գրված է «Մայքի մայրը»։ Մայքն ո՞վ է։*

ԷԲԸՐՆԻԹԻ— (Համբերությունը կորցնելով)։ *Ձեր ի՞նչ գործն է։ Ինքներդ պարզեք Մայքն ով է։ Ձեզնից ոչ մեկը փողից բան չի հասկանում։ Ես իմ բոլոր փողերը հետ եմ պահանջում։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Ես այս մեկը՝ «Սյուզիի հայրը», կուզենայի պահել։*

ԷԲԸԲՆԻԹԻ— *Ո՞չ մի դեպքում։*

ԴԱՏԱՎՈՐ— *Կատարածու, վերադարձրեք ամբաստանյալին իր դրամը։* (Դրամը հավաքում ու հանձնում են էբրբենիթիին։ Պահակախումբը նրան դուրս է հրում, մինչ խեղճը փորձում է փողերը գրպաններ խոթել)։

ԴԱՏԱՎՈՐ— *Մենք դատավարության ռիթմը կորցրինք և ես հարկադրված եմ պնդել, որ այն վերականգնվի։ Պարոն դատապաշտպան, հարկ եմ համարում նշել, որ ամբաստանյալի նկատմամբ անձնական հետաքրքրասիրության բավարարումը նիստի ընթացքում հանձնարարելի չէ։ Դուք պարտավոր եք սովորականի պես արագ կատարել ձեր պարտքը և վերջ։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Լսում եմ, ձերդ ազնվություն։*

ԶԱՅՆ— *Հանրապետության պաշտպաններ, հանո՞ւն ժողովրդի։*

ՄԻ ԽՈՒՄԲ ԶԱՅՆԵՐ— *Հանուն ժողովրդի։* (Համազարկ)։

ԴԱՏԱՎՈՐ— *Ներս բերեք, խնդրեմ, հաջորդ ամբաստանյալին։* (Հաջորդ ամբաստանյալը մի պառավ կին է, որ ժպտադեմ աղջնակի տեսք ունի)։

ԾԵՐ ԿԻՆ— *Հանցավոր եմ։ Գնա՞մ։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Ձեր խոսելու հերթը կգա, սպասեք։*

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Էլինբը Մորիարթի։ Ցոթանասուներկու տարեկան։ Գործազուրկ։ Մուրացիկ։ Այսքանը։*

ԴԱՏԱՎՈՐ— *Այ դա լավ էր։* (Դատապաշտպանին)։ *Դո՞ւք։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Այդքանը։*

ԴԱՏԱՎՈՐ— *Հիանալի է։* (Էլինբրին)։ *Որևէ ասելիք ունե՞ք։*

ԷԼԻՆԲՐ— *Կարելի՞ է գնալ։*

ԴԱՏԱՎՈՐ— *Հանցավոր է։ Պահակախո՛ւմբ։* (Պահակախումբը պատրաստ է կնոջը դուրս տանել)։

ԱՐՁԻ— *Իսկ խմի՞չքը։*

ԴԱՏԱՎՈՐ— *Դուք միանգամայն իրավացի եք, միստր Քրուքշընք։ Ամբաստանյալը խմիչքի իրավունք ունի։*

ԱՐՁԻ— *Ի՞նչ կցանկանայիք։*

ԷԼԻՆԲՐ— (Երեխայի պես)։ *Օ՜։*

ԱՐՁԻ— *Գուցե կոնյա՞կ։*

ԷԼԻՆԲՐ— *Օ՜։* (Արշին լցնում է, կինը խմում, պահակախումբը նրան դուրս է բերում. ամեն ինչ տեղի է ունենում ըստ սահմանված ռիթմի)։

ԴԱՏԱՎՈՐ— *Ներս բերեք հաջորդ ամբաստանյալին։ Ռիթմը չմոռանաք։* (Այս անգամ ամբաստանյալը մի երիտասարդ է)։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Էդվըրդ Հոքինզ։ Քսաներեք տարեկան։ Գործազուրկ։ Ոտանավորներ է գրում։ Խանութներից ուտելիք է գողանում։ Այսքանը։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Այդքանը։*

ԴԱՏԱՎՈՐ— *Որևէ ասելիք ունե՞ք։*

ԷԴՎԸՐԴ— *Ես թոշակ էի հայցել, որպեսզի ավարտի հասցնեմ իմ չափածո հերոսական եռերգությունը, որը նվիրված է մարդու հավերժական մաքառումին՝ հանուն ճշմարտության և իմաստի։ Առաջին, արդեն սկսված, երգը պատկերում է մարդու հարատև մաքառումը հանուն խաղաղության և անդորրի։ Երկրորդ, ուրվագծված, երգը պատկերում է մարդու հարատև մաքառումը հանուն սեփական տան և օջախի։ Երրորդ, դեռևս մտահղացման վիճակում գտնվող, երգը պատկերելու է մարդու հարատև մաքառումը հանուն հանդարտության հացի։*

ԱՐՉԻ— *Սիրտդ ի՞նչ է ուզում։*

ԷԴՎԸՐԴ— *Կաթով սուրճ ու թխվածք։*

ԱՐՉԻ— *Ավելի լավ է կոնյակ խմես ու ծխես։* (Բանաստեղծը խմում է Արչիի լցրած բաժակը և վերցնում նրա վառած ծխախոտը)։

ԷԴՎԸՐԴ— *Ես գիտեմ, որ եթե այդ թոշակը ստանամ, անպայման հիշարժան մի բան կստեղծեմ։*

ԴԱՏԱՎՈՐ— *Պահակախումբ։* (Պահակախումբն իր մեջ է առնում երիտասարդին)։

ԷԴՎԸՐԴ— *Ես անչափ երախտապարտ կլինեմ, եթե արժանանամ այդ թոշակին։ Այն ինձ մեծապես կնպաստի։ Ես պետք է մորս պահեմ։ Ճիշտ է, ինձ երկու անգամ տպագրել են «Փոիթրի» հանդեսում, բայց դե ո՞վ չգիտի, որ դրանով մորդ չես պահի։* (Պահակախումբը դուրս է տանում նրան, նետևում է ուղղիչ ծանոթ գործողությունը)։

ԴԱՏԱՎՈՐ— *Ներս բերեք հաջորդ ամբաստանյալին։* (Ամբաստանյալը մի փոքրիկ տղա է)։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— (Թղթերին նայելով)։ *Ջոն Դելըմիր։ Երեք տարեկան ինը ամսական։ Մասնագիտություն չունի։ Հայրը Հանրապետության պաշտպան է։ Մայրը ծառայում է Ինքնապաշտպանության Կանացի ստորաբաժանումներում։* (Կարճ դադար)։ *Մեղադրվում է ծնողների հանդեպ հրապարակայնորեն ատելություն և անարգանք ցուցաբերելու մեջ։* (Նայում է խոժոռ, անմեղ ու միայնակ տեսք ունեցող տղային և նվաղած ձայնով ավելացնում)։ *Այսքանը։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Այդքանը։*

ԱՐՉԻ— *Լսեք, գիտեք ինչ... Դուք իմ խորտկարանը սպանդանոց սարքեցիք ու ես ձայն չհանեցի, թուլամորթությանս պատճառով ու իմ քոսոտ քնից ու նախաճաշից զրկվելու վախից։ Բայց եթե դուք բացի զառամյալներից, ցանցառներից, դժբախտներից, անտուններից ու հիվանդներից հիմա էլ պիտի սկսեք երեխաներ մորթել, ուրեմն ինձ էլ դատեք ձեր քստմնելի Ատյանով... Ես չեմ ուզում ձեզ հետ նույն աշխարհում ապրել...* (Կանգնում է փոքր տղայի կողքին՝ մեղադրյալի տեղում)։

ԿԱՏԱՐԱՉՈՒ— *Դուք կարգ եք խախտում, անցեք ձեր տեղը։*

ԱՐՉԻ— *Ե՞ս եմ խախտում, տո դո՜ւ պնդաճակատ ռետինե գլուխ...*

ՌՈՈՒԶ— *Աստված սիրես, Արչի, հետ արի, քանի դեռ ուշ չի։*

ԴԱՏԱՎՈՐ— *Մի վայրկյան, միսս Քրուքշընք, խնդրում եմ ձեզ։* (Շինծու բարեսրտությամբ նայում է Արչիին)։ *Միստր Քրուքշընք...*

ԱՐՉԻ— *Դու էլ քեզ դատավորի, արդարության պաշտպանի տեղ ես դրել, հա՞։ Ու կարծում ես, թե կկարողանաք ապրել ձեր իսկ ստեղծած ահ ու սարսափով լի էս կեղծ աշխարհո՞ւմ։ Ուր խուճապի եք մատնվել նույնիսկ էս մանչուկից, որը հիմա կգնդակահարվի ու չի էլ հասկանա, թե ինչ կատարվեց, ինչպես չհասկացան բոլոր մյուսները, որոնք, չնայած տարիքին, սրանից ոչնչով ավելի մեղավոր չէին։ Ախր դուք էս երեխայի չափ էլ խելք չունեք։ Մի՞թե կարծում եք, թե պիտի հանգիստ ապրեք ձեր ստեղծած նոզկալի աշխարհում։ Չէ՞ որ դուք էլ ուրիշների պես ծնողներ ունեք, գուցե նույնիսկ՝ զավակներ։ Ի՞նչ խղճով եք ապրելու էս աշխարհում։*

ԴԱՏԱՎՈՐ— (Համբերատար)։ *Միստր Քրուքշընք...*

ԱՐՉԻ— *Իմ խելքը ձեզնից ավել չի կտրում, բայց ո՞վ չգիտի, որ զորությունը բանականության ու բարության հասանելիքն է։ Որ զորությունը չի կարելի տխմարությանը կցել։ Չէ՞ որ դուք լավ գիտեք, որ տխմար եք, էլ ինչպե՞ս կարող էիք դրանից հետո իշխանություն բանեցնել։*

ՌՈՈՒԶ— *Աստծու սիրույն, մի թողեք խոսի։*

ԱՐՉԻ— *Եթե ձեզ վիճակված է տգետ լինել, աշխատեք գոնե բարի սիրտ ունենալ։*

ԴԱՏԱՎՈՐ— *Պահակախումբ, կտրե՛ք դրա ձայնը։* (Պահակազորայիններից մեկը նշան է բռնում Արչիի վրա)։

ԱՐՉԻ— *Երիտասարդ, ես երբեք չեմ մոռանա, թե դու ինչպես հրացանը բարձրացրիր վրաս։ Դու նույնպես չես մոռանա։*

ԴԱՏԱՎՈՐ— (Ձայնանալով)։ *Պահակախումբ, վերջ տվեք։*

ՌՈՈՒԶ— (Գնդակի ճանապարհը փակելով): *Ոչ։ Նա չգիտի ինչ է անում։ Չէ՞ որ նա էլ հայր է, դրանից խելքը կորցրել է։*

ԱՐՉԻ— *Մի կողմ քաշվիր, աղջիկ։*

ԴԱՏԱՎՈՐ— *Կատարածու, հետ քաշեք նրան։* (Կատարածուն փորձում է Ռոուզին հետ քաշել, բայց նա չի ենթարկվում):

ՌՈՈՒԶ— *Բաց թողեք ինձ, նա իմ հայրն է, նա լավ մարդ է, չհամարձակվեք նրան սպանել։* (Ներս է մտնում նպարեղենով լի պայուսակներով բեռնված Մեյ Ֆոլին):

ՄԵՅ— *Գրողը տանի, այս ի՞նչ է կատարվում։ Ես լիքը լավ-լավ բաներ եմ բերել, մի բան էլ ավել պատվիրել, որ կարգին քեֆ անենք, իսկ դուք... Սա ի՞նչ իրարանցում է։* (Նկատում է մանչուկին): *Վա՜յ... Իսկույն երևում է, որ էս տղան մեծ մարդ կդառնա։* (Ցած է դնում պայուսակներն ու տղային գրկում): *Արի, բալիկս, արի, դու մենակ չես էս աշխարհում. որ կինն էլ լինի, եթե գեթ կիսով չափ կին է մնացել, քեզ կնայի հարազատ մոր պես։ Քո թախծոտ սևուկ աչքերով ամեն ինչին էդպես մի նայիր։ Հա, հասկացա, ես քեզ համար կարկանդակ կթխեմ, ձևը կսովորեմ ու կթխեմ։ Թե անուշիկ սրտիկդ կարկանդակ ուզի, անպայման կթխեմ։ Կարկանդակ կուզե՞ս։*

ՏԻԼԱ— *Ես ոչ մի բան չեմ ուզում։*

ՄԵՅ— *Ո՞վ է համարձակվել այնքան դառնացնել էս մանչուկին, որ խեղճն արդեն ոչ մի բան չի ուզում։ Բերեք ապտակեմ էն սրիկային, որը սրա սերն ատելության է վերածել։* (Ներս է մտնում Պետական պաշտոնյան):

ԴԱՏԱՎՈՐ— (Կատաղությունը զսպելով): *Միսիս Քրուքշընք, բարի եղեք ամբաստանյալին իր տեղը դնել։*

ՄԵՅ— *Ո՞ւմ, սա՞ է ամբաստանյալը... Ես հիմա կվատանամ... Ասում եք, տեղը դնեմ, հա՞, ա՜յ, սա է նրա միակ տեղը՝ կրծքիս։ Թող հուլունքներս խառնի, թող զգա իսկական կնոջ օծանելիքի բույրը։ Դեռ շատ վաղուց չէր, որ ես ինքս երեք սքանչելի տղաներ ծնեցի, չնայած նրանք սրա պես չէին։ Եթե էս մանչուկն ատում է, ուրեմն դուք շան պես գիտեք, որ պատճառ ունի։ Ես նրան կդնեմ իր իսկական տեղը, ես նրա մայրը կլինեմ, իսկ Արչին՝ հայրը։ Ես նրան ցած կդնեմ իր տանը՝ վերևում։ Էնտեղ նրան բոլորը կսիրեն։ Իսկ դուք, ինչ էլ որ էստեղ անելու լինեք՝ վերջ տվեք։* (Հպարտորեն շրջվում է, որ գնա: Կատարածուն բռնում է նրան): *Վերջ տվեք, ասացի։* (Հետ է հրում կատարածուին ու ապտակում):

ՏԻԼԱ— (Հրճվանքով): *Մի հատ էլ։*

ՄԵՅ— *Թող փորձի մեկ էլ մեզ կպչել, տես ոնց եմ մի հատ էլ հասցնելու։* (Հանդիսավոր բարձրանում է վերև, դուռն իր հետևից շրխկացնելով։ Բոլորը զարմանքից բերանները բաց են մնացել։ Այդ թվում նաև՝ Արշին։ Լուռ ամբոխի միջով բարին է մոտենում Պետական պաշտոնյան։ Բոլորը նրան են նայում։ Ինքն իրեն մի բաժակ խմիչք է լցնում ու մի շնչով կոլ տալիս)։

ՊԱՇՏՈՆՅԱ— *Ես նոր հրահանգ եմ ստացել։ Բարի եղեք բերաններդ փակել և գրավել ձեր տեղերը։ Ներկա իրավիճակում մայրական ցասումը չպետք է ձեզ զարմանք պատճառեր։* (Գրպանից մի փաստաթուղթ է հանում, բացում և որոշ ժամանակ ուսումնասիրում։ Ապա նկատում է հրացանը Արշիի վրա պահած պահակազորայինին)։ *Սիրելիս, կամ հրացանը ցած դրեք, կամ ձգանը քաշեք։* (Վերջինս թեթևացած շունչ է առնում ու հրացանը ցած է դնում)։

ԴԱՏԱՎՈՐ— *Անհրաժեշտ եղավ հրամայել, որ միստր Քրուքշընքին լռեցնեն։ Նա խռովություն էր հրահրում, սակայն պահակազորայինը չենթարկվեց հրամանին։*

ՊԱՀԱԿԱԶՈՐԱՅԻՆ— *Այս երեխան իմն է։ Ես չհանդգնեցի ձայն բարձրացնել նրա օգտին, բայց հո չէի՞ կարող սպանել մի մարդու, որը չվախեցավ այդ անել։ Տղաս իսկապես ատում է ինձ, իր մորն էլ է ատում, բայց առաջ այդպես չէր, միայն՝ վերջին ինը ամիսների ընթացքում։*

ԴԱՏԱՎՈՐ— *Ուզում եք ասել՝ Հանրապետության հաստատման ինը ամիսների ընթացքո՞ւմ։ Դուք հասկանո՞ւմ եք, ինչ եք ասում։*

ՊԱՀԱԿԱԶՈՐԱՅԻՆ— *Այո, Հանրապետության ինը ամիսներին։ Այո, հասկանում եմ, թե ինչ եմ ասում։*

ԴԱՏԱՎՈՐ— (Դիմելով Պետական պաշտոնյային, որը մի նոր բաժակ է մոտեցնում բերանին)։ *Այս ամենի պատասխանատուն միստր Քրուքշընքն է։*

ՊԱՀԱԿԱԶՈՐԱՅԻՆ— *Ոչ, նա՛ չէ, տղաս է։*

ՊԱՇՏՈՆՅԱ— (Խմիչքը կոնծելով)։ *Սա էլ երկրորդը։ Միստր Քրուքշընք, խնդրում եմ հաշիվը լրացնել ըստ երեք հարյուր երեսուներեք ձևի։* (Նայում է դատավորին)։ *Խնդրում եմ բոլորիդ բերաններդ փակ պահել, մինչև նոր հրահանգի ընթերցումը։* (Կարդում է)։ *«Հանրապետության ժողովրդի ծառաներին։ Սույն հրահանգն անհրաժեշտ է կետ առ կետ ի կատար ածել նրա հրապարակումից անմիջապես հետո։ Հանրապետության բոլոր Ատյանների անդամները, որոնք՝ դատավորը, կատարածուն, ժողովրդական դատախազը, ամբաստանյալի դատապաշտպանը և պահակախումբը, պարտավոր են իրենց*

տեղերը զիջել հերթական վեց ամբաստանյալներին։ Առաջին ամբաստանյալը կստանձնի դատավորի պարտականությունները, երկրորդը՝ կատարածուի, երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ ամբաստանյալները համապատասխանաբար կստանձնեն ժողովրդական դատախազի, ամբաստանյալի դատապաշտպանի և պահակախմբի պարտականությունները։ Նույն հերթականությամբ Ատյանի նախկին անդամները կենթարկվեն դատի»։ Այսքանը։

ՀԱՅՐ ՊԱՀԱԿԱԶՈՐԱՅԻՆ— *Ես բան չունեմ ասելու։ Կուզեի միայն գրնդակահարվելուց առաջ տղայիս գրկել, ուրիշ ոչինչ։*

ԴԱՏԱՎՈՐ— *Չեմ հասկանում։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Հասկանալը պարտադիր չէ։ Ես էլ առանձնապես բան չեմ հասկանում, իսկ իմ վերաբերյալ ամենից վատ կանխազգացումներն ունեմ։* (Խմում է ևս մի բաժակ)։ *Միստր Քրուքշընք, սա եղավ երեք։ Ի՞նչ արած, հրահանգ է։*

ԴԱՏԱՎՈՐ— *Կարելի՞ է հարցնել, թե որտեղի՞ց է ծագում այդ հրահանգը։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Կարելի է։ Կարելի է և պատասխանել՝ այս հրահանգը ծագում է այն նույն աղբյուրից, որից, Հանրապետության ինը ամիսների ընթացքում, ծագել են մնացած բոլոր հրահանգները։ Ես երբեք կասկածի չեմ ենթարկել նախորդ հրահանգներն արձակելու այդ աղբյուրի իրավունքը։ Չեմ կարող կասկածել նաև այս անգամ։*

ԴԱՏԱՎՈՐ— *Բայց մի՞թե ես հավատարմորեն չեմ ծառայել Հանրապետությանը, մշտապես նախապատվությունը տալով ժողովրդի խորախորհուրդ ու նվիրական շահերին։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Անշուշտ, նույնը կարելի է ասել նաև իմ մասին, չնայած վայել պահին ես կնախընտրեի պանդոկապան լինել։ Ինչևէ, այժմ երկուսս էլ ստիպված ենք նախապատվությունը տալ ժողովրդի խորախորհուրդ ու նվիրական շահերին, ինչպես այդ պարտադրում է սույն հրահանգը։ Ուստի և դուք պարտավոր եք գրավել ամբաստանյալի տեղը։* (Դատավորը շրջանցում է բարը և կանգնում է Արշիի fիշ առաջ զբաղեցրած տեղը)։ *Կատարածու, կարդացեք հաջորդ վեց ամբաստանյալների անունները և դուք նույնպես անցեք հրահանգի կատարմանը։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— (Թղթերին նայելով)։ *Սթիվըն Լոքհեդ։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Սթիվըն Լոքհեդ, առաջ անցեք։* (Սթիվըն Լոքհեդը հիսունին մոտ ընկճված դեմքով մի տղամարդ է)։

ՍԹԻՎԸՆ— *Մթե դեմ չեք, եկեք ավելորդ չխոսենք, ինձ իմ հասանելիք*

խմիչքն ու գլանակը տվեք, տարեք մյուսների պես պատի տակ խփեք։

ՊԱՇՏՈՆՅԱ— *Անցեք, խնդրում եմ, բարի այն կողմը։ Որպես ատենապետ այժմ դուք վարելու եք հաջորդ վեց գործը։*

ՍԹԻՎԼԷՆ— *Ինչ խմի՞չքը։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Հրահանգում այդ մասին ոչինչ չի ասված... ինչպէ, վերցրեք։* (Ինքն է լցնում բաժակը, որը Սթիվլենը տեղնուտեղը կոնծում է)։

ՍԹԻՎԼԷՆ— *Մեկն էլ չէր խանգարի։ Քսանչորս ժամ է բերանս չեմ թրջել, քիչ է մնում մարմինս դող ընկնի։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Բարի։ Միստր Քրուքշենք, խնդրում եմ հաշիվը պահեք։* (Եվս մի բաժակ է լցնում, որը Սթիվլենը նորից կոնծում է)։

ՍԹԻՎԼԷՆ— *Անում եք, ո՞ւր կանգնեմ։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Մի փոքր աջ քաշվեք։* (Կատարածուին)։ *Երկրորդ ամբաստանյալը։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Էնթընի Բիքըն։* (Պահակախումբը ներս է բերում տասնյոթ-տասնութ տարեկան մի տղայի, որն ինչպես երևում է տկարամիտ է)։

ՊԱՇՏՈՆՅԱ— *Էնթընի Բի՞քըն։*

ԷՆԹԸՆԻ— *Ի՞նչ։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Դուք Էնթընի Բի՞քընն եք։*

ԷՆԹԸՆԻ— *Ո՞վ։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Կանգնեք, խնդրեմ, այ այնտեղ նստած մարդու կողքին։*

ԷՆԹԸՆԻ— *Ի՞նչ։*

ՊԱՇՏՈՆՅԱ— (Խնամքով նրա ձեռքից բռնելով տանում-կանգնեցնում է կատարածուի կողքին)։ *Երևում է խոպ է։* (Կլխով է անում տղայի կողմը)։

ԷՆԹԸՆԻ— (Արագ-արագ)։ *Ի՞նչ եք ինձնից ուզում, ի՞նչ եք ինձնից ուզում։ Ի՞նչ եք ինձնից անընդհատ ուզում։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Կատարածու, երրորդ ամբաստանյալը։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Գորդըն Փիլըմ։* (Պահակախումբը ներս է բերում արհամարհական ժպիտը դեմքին, անխնամ տեսքով մի մտավորականի, որը շատ ցածր է խոսում)։

ԳՈՐԴԸՆ— *Երևում է ինձ իսկի նախաճաշ էլ չի հանի։ Շատ էի ուզում գոնե մի անգամ էլ ուտել։ Վաղուց մոռացել եմ ինչ շշմելու բան էր ուտելը։ Ինչ էլ որ լիներ, վերջին անգամ կվայելեի։ Որտե՞ղ կհրամայեք կանգնել։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Ահա այստեղ, սըր։ Դուք ստանձնում եք ժողովրդական դատախազի պարտականությունները։*

ԳՈՐԻԼՆ— *Ներեցեք, ի՞նչ։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Նոր հրահանգ է, քիչ հետո կբացատրեմ։*

ԳՈՐԻԼՆ— *Մի հարց կարելի՞ է։ Ինձ նախաճաշ կհասնի՞, թե ոչ։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Կհասնի։ Չորրորդ ամբաստանյալը։*

ԿԱՏԱՐԱՏՈՒ— *Դորա Լիվինգստընն։* (Պահակախումբը ներս է բերում խանհինգ տարեկան, խոպոտ բարձր ձայնով մի կնոջ)։

ԴՈՐԱ— *Սպանում եք՝ սպանեք։ Ես հասարակ փողոցային եմ, ինձնից պարկեշտ մի բան դուրս չեկավ, բայց ես ատում եմ ձեզ, ոտքից գլուխ ատում եմ ձեզնից ամեն մեկիդ։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Միսս Լիվինգստընը կստանձնի ամբաստանյալի դատապաշտպանի պարտականությունները։ Բարեհաճեք կանգնել այստեղ, միսս Լիվինգստըն։*

ԴՈՐԱ— *Դու էիր պակաս գլխիս հանաքներ անեիր... Ձեռ քաշեք ինձնից, հանգիստ թողեք։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Միսս Քրուքշընք, խնդրում եմ միսս Լիվինգստընին բացատրեք, որ մենք կատակ չենք անում։*

ԲՈՈԻԶ— *Սրանք նոր հրահանգ են ստացել։ Դու դատապաշտպան ես լինելու։*

ԴՈՐԱ— *Չէ մի չէ՛, պոզեր։ Ոչ ոքի էլ չեմ պաշտպանի։ Ես կյանքում էստեղ չեմ եղել, բայց թե մեկնումեկդ հիշում եք Ջո Թրընքրին,— նա երկար ժամանակ էս կողմերում բար էր պահում,— իմացեք, որ նա իմ ընկերն էր... Գուցե նրա խաթեր ինձ պարտքով մի բան լցնե՞ք, հը՞։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Իհարկե։* (Մի բաժակ է լցնում ու պարզում Դորային, սա իսկույն խմում է)։ *Իսկ հիմա չէի՞ք բարեհաճի կանգնել այստեղ։* (Դորան ենթարկվում է)։ *Հինգերորդ ամբաստանյալը։*

ԿԱՏԱՐԱՏՈՒ— *Սեմյուըլ Քրաֆիթ։* (Պահակախումբը ներս է բերում մոտ քսաներկու տարեկան չղջային մի երիտասարդի)։

ՊԱՇՏՈՆՅԱ— *Սեմյուըլ Քրա՞ֆիթ։*

ՍԵՄՅՈՒԷԼ— *Ես եմ։ Աստված տար, ես չլինեի։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Դուք կստանձնեք պահակազորայիններից մեկի պարտականությունները։ Պահակազորային, հանձնեք նրան ձեր հրացանը։* (Հայր պահակազորայինը ենթարկվում է)։ *Այս կողմն անցեք, միստր Քրաֆիթ։* (Հայր պահակազորայինը գնում կանգնում է դատավորի կողքին)։ *Վեցերորդ ամբաստանյալը։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Լինդըր Լոուֆըրդ։* (Պահակախումբը ներս է բերում մոտ հառասունհինգ տարեկան խունապա՞ար գիրուկ մի մարդու):

ՊԱՇՏՈՆՅԱ— *Լինդըր Լո՞ւֆըրդ։*

ԼԻՆԴԸՐ— *Լսում եմ, սըր։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Դուք կլրացնեք պահակախումբը։ Պահակազորային, հանձնեք նրան ձեր հրացանը։* (Պահակազորայինը ենթարկվում է նրան և կանգնում դատավորի կողքը: Կազմալուծված Ատյանի անդամները միանում են նրանց):

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— *Հիմա ի՞նչ, ուրեմն դատավորը ե՞ս եմ։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Ճիշտ այդպես։*

ՆՈՐ ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Ե՞ս ինչ եմ։ Իսկ ե՞ս ինչ եմ։ Ի՞նչ եք անվերջ ինձանից ուզում։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Դուք նոր կատարածուն եք։*

ՆՈՐ ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Ի՞նչ։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Շարունակում եմ կարդալ հրահանգը։ Ուշադրություն, խնդրում եմ։* (Կարդում է): *«Ատյանի կազմը հաստատելուց հետո, երբ նախկին ամբաստանյալները գրված կլինեն մեղադրողների տեղը, առաջին ամբաստանյալը, նախկինում՝ դատավորը, ենթակա է դատվելու ժողովրդի հանդեպ գործած այն հանցանքի համար, որը մինչև այդ վերագրվել էր Ատյանի նրա տեղը գրված անդամին»։* (Դիմելով նոր ժողովրդական դատախազին): *Կարդացեք, խնդրեմ, մեղադրականը։*

ՆՈՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Սթիվըն Լոքհեդ։ Հիսուն տարեկան։ Ամուսնալուծված է։ Երեք երեխա ունի։ Մասնագիտությունը՝ դերասան։ Հարբեցողություն, հասարակական պարտքի անտեսում։ Հրապարակորեն պարսավել է Հանրապետությունը, ծաղրի ենթարկել նրա նվաճումները, բացի այդ՝ թքել է ժողովրդի բարձրաստիճան ծառաներից մեկի աչքին։*

ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐ— *Այդ ամենն ի՞նձ է հարուցվում։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Այո, առաջ անցեք։ Ժողովրդական դատախազ, վստահ եմ, որ դուք գիտակցում եք ձեր պարտքը՝ համոզիչ կերպով Ատյանին ներկայացնել ամբաստանյալի հանցավորությունը։*

ՆՈՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Հասկանում եմ, ըստ ամենայնի դա Հանրապետության հանդեպ իմ պարտքն է, և իմ կողմից անմտություն կլիներ այն անտեսելը։ Բայց և այնպես ես առաջին հերթին կիրագործեմ իմ խղճի հանդեպ ունեցած պարտքը։ Ամբաստանյալն անշուշտ լավ մարդ չէ, ինչպես և ես, համենայն դեպս՝ իսկակա՛ն իմաստով լավ մարդ չէ։ Դրանով հանդերձ, ես կասկածի եմ ենթար-*

կում որևէ հանրապետության՝ ցանկացած անհատին պատժելու իրավունքը։ Հանրապետությունը կարող է մարդուն կյանքից զրկել, որն, ըստ իս, ամենևին չի համապատասխանի ժողովրդի շահերին, թեև կարող է շահավետ լինել Հանրապետության վարչական մեքենայի համար։ Այս մարդուն վերագրվող մեղադրանքների հիման վրա նրան դատելու փոխարեն ես նախընտրում եմ նրա գործի քննությունն ամբողջովին հանձնել հենց իր ձեռքը։ Նա ինքն իրեն բոլորից լավ է ճանաչում և կանի անհրաժեշտ ամեն բան և՛ իմ, և՛ ժողովրդի փոխարեն։

ՊԱՇՏՈՆՅԱ— *Առարկություն չունեմ։*

ՆՈՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Նկատի ունեցեք, դատից կախված է ձեր կյանքը։ Ջանք մի խնայեք։*

ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐ— *Ես երբեք փափկասիրտ չեմ եղել ամբաստանյալների նկատմամբ։ Ես միշտ հետևել եմ, որ նիստերն անցնեն արագ, իսկ դատավճիռները իսկույն ևթ ի կատար ածվեն։ Ոչինչ չէր փոխվի, անգամ եթե ես հապաղեի և թույլ տայի ի հայտ բերել ամեն մի հանցանքի բուն դրդապատճառը, միևնույն է, ամբաստանյալները գնդակահարվելու էին։ Ուստի ես գտնում եմ, որ իրավասու չեմ իմ ներկա վիճակի պատասխանատվությունը բարդել որևէ հանգամանքի կամ անձի վրա։ Ես այժմ զբաղեցնում եմ ամբաստանյալի տեղը, և, հետևաբար, պետք է մահապատժի ենթարկվեմ։ Որպես այդպիսին ես ոչ միայն պիտանի չեմ, այլև՝ վտանգավոր եմ ժողովրդի համար և այդ իսկ պատճառով ենթակա եմ ոչնչացման։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Իսկ ինձ թվում էր, թե դուք կդիմադրեք։*

ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐ— *Ես երբեք չեմ դիմադրել՝ հիմա էլ չեմ կարող։ Ես պատրաստ եմ։*

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— *Դատավարությունը շարունակվում է անկախ ամբաստանյալի ցանկությունից՝ նրա դատավճիռը կկայացվի հարկ եղած ժամանակ։ Դատապաշտպան, անցեք պաշտպանությանը։*

ԴՈՐԱ— (Նոր դատապաշտպան)։ *Ո՞վ, ե՞ս։*

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— *Այո, պաշտպանեք ամբաստանյալին։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Գրողի ծոցը գնա էդ սրիկան։ Նա հանցավոր է, ճիշտ ասեց։*

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— *Ինչո՞ւմ է հանցավոր։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Ինչո՞ւմ։ Սա չէ՞ր բոլորին գնդակահարել տալիս, ուրիշ ի՞նչ է պետք։*

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— *Նա պաշտպանում էր Հանրապետության և ժողովրդի շահերը։ Մենք չենք դատում ժողովրդին կամ Հանրապետությանը։*

Մենք դատում ենք ամբաստանյալին։ Իսկ նա ընդամենը իր պարտքն է կատարել։

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— Թող էդ պարտքն իր հետևը մտցնի։ Ուրիշներին մոլորեցնելու համար էդ շունչանորդուն սպանելն էլ է քիչ։

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— Շատ լավ։ Այսպիսով դատավճիռը կայացնելու պատասխանատվությունը ամբողջովին ինձ է մնում։ Ես հարկ եմ համարում մի քանի հարց առաջարկել ամբաստանյալին։ Առաջինը՝ դուք ուզո՞ւմ եք ապրել։

ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐ— Կնախընտրեի։

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— Ինչո՞ւ։

ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐ— Տղաս նավատորմում է ծառայում՝ ութ ամիս է, ինչ նրան չեմ տեսել։ Աղջիկս մի քանի ամսից պետք է ծննդաբերի։ Կուզեի տեսնել թոռնիկիս։ Մի ֆերմեր եղբայր ունեմ, որին վերջին անգամ քսան տարի առաջ եմ տեսել։ Գարնանը խոստացել է հյուր գալ, ես նրան շատ էի սպասում։ Ուրիշ պատճառներ էլ կան, բայց ի՞նչ օգուտ։

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— Դուք հենց սկզբի՞ց եք ծառայել Հանրապետությանը։

ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐ— Ես երկար տարիներ մասնակցել եմ այն ընդհատակյա շարժմանը, որի շնորհիվ ինը ամիս առաջ հռչակվեց Հանրապետությունը։

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— Ինչո՞ւ եք մասնակցել այդ շարժմանը։

ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐ— Երկար պատմություն է։ Մի խոսքով, հին կարգերի ժամանակ ես ցածր վարձատրվող մի գրադիր էի, իսկ Հանրապետության օրոք՝ Ատենապետ։ Ես ինձ հանցավոր եմ ճանաչում, իղուր ժամանակ մի վատնեք։

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— Եթե ձեզ աղատ արձակեին, ինչպե՞ս կանցկացնեիք ձեր մնացած կյանքը։

ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐ— Առաջվա նման։

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— Նորից դատավո՞ր կդառնայիք։

ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐ— Համենայն դեպս՝ կփորձեի։

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— Ինչո՞ւ։

ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐ— Չեմ կարող ասել։

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— Իսկ եթե դուք իմ տեղը լինեիք...

ՀԻՆ ԴԱՏԱՎՈՐ— Վաղուց գնդակահարած կլինեի ձեզ։ Դե բավական է, կայացրեք ձեր վճիռը։ Մահապատժից բացի դուք ուրիշ ընտրություն չունեք։ Թող ձեր խիղճը հանգիստ լինի։

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— Ես կայացրել եմ իմ դատավճիռը։ (Կարճ դադար)։ Ամբաստանյալը հանցավոր է ճանաչվում...

ԴՈՐԱ— *Էն էլ ինչպե՞ս հանցավոր, գրողը տանի։*

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— *Հանցավոր է ճանաչվում այն բանում, որ ապրում է։ Դրանում հանցավոր են բոլոր մարդիկ անխտիր։ Վերոհիշյալ հանցանքը հնարավոր չէ հատուցել պատժի արտաքին միջոցներով, այդ իսկ պատճառով Ատյանի կայացրած վճիռը տարածվում է բոլոր վեց ամբաստանյալների վրա։ Ես նրանց դատապարտում եմ կյանքի։* (Պետական պաշտոնյային)։ *Հիմա՞ ինչ պիտի արվի։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Դուք վեց գործերի քննությունն էլ ավարտվա՞ծ եք համարում։*

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— *Այո։ Ամեն մեկն ազատ է ապրելու և մեռնելու հարցում։ Իսկ հիմա՞ ինչ ենք անելու։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Ես պետք է հրահանգը նայեմ։* (Նայում է)։ *Ուշադրություն, խնդրում եմ։ Կարդում եմ հրահանգը. «Ամբաստանյալների կողմից Ատյանի անդամներին դատելուց անմիջապես հետո հայտարարվում է երկուժամանոց ընդմիջում։ Այնուհետև Ատյանը գումարվում է նույն հիմքերով։ Եթե Ատյանի նախորդ կազմից որևէ մեկը մահապատժի չի ենթարկվել, ապա նա պետք է նորից գրավի իր տեղը։ Հակառակ դեպքում փոխարինողները շարունակում են կատարել իրենց պարտականությունները»։* (Բոլորին)։ *Պա՞րզ է։*

ԴՈՐԱ— *Այ դու կեղտոտ սրիկա, դե տես ոնց են հիմա քթներիցս բերելու, ինչ է թե նրանց բոլորին բաց թողիր։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Միանգամայն իրավացի եք։ Կարդում եմ շարունակությունը՝ «Ատյանի կազմում ներգրավված ամբաստանյալների նկատմամբ, հիշյալ բացառություններով, ընդմիջումից հետո կրկին դատ կհարուցվի՝ ըստ համապատասխան հերթականության»։*

ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ— *Ստացվում է, որ ես ինքս իմ ճաշն եփեցի... Ձերն էլ հետը, միսս։ Ներեցեք ինձ։ Ինչ արած, եթե ընդմիջում է, եկեք գոնե մի բան խմենք։*

Տեսարան երկրորդ

Հինգին հինգ է պակաս։ Գիրուկ Լիենդրը Լուֆբրդը գրավել է ամբաստանյալի տեղը։

ԴԱՏԱՎՈՐ— *Որևէ ասելիք ունե՞ք։*

ԼԻԵՆԴԻԼՐ— *Չեմ ուզում գնդակահարվել։*

ԴԱՏԱՎՈՐ— *Միանգամայն հասկանալի է։*

ԼԻԵՆԴԻԼՐ— *Իմ արած-չարածը թույլատրվածից ավելի ուտելիք առնելն էր,*

բայց ես ի՞նչ անեմ, որ ուրիշներից շատ եմ ուտում։ Արժե՞ դրա համար մարդ սպանել։

ԴԱՏԱՎՈՐ— *Ատյանը ծանոթ է ձեր հանցագործության հանգամանքներին։*

ԼԻԵՆԴԻԸՐ— *Երբ մենք էինք ձեզ դատում, բոլորիդ բաց թողեցինք, իսկ դուք հինգ հոգու գնդակահարեցիք։ Գոնե ինձ բաց թողեք։*

ԴԱՏԱՎՈՐ— *Այն դատավարության արդյունքները, որը ես էքսպերիմենտալ կանվանեի, կրկին անգամ ապացուցեցին ժողովրդի կատարյալ հեռատեսությունը, որի շնորհիվ, հարկ է նշել, ես վերագրավեցի իմ բուն պաշտոնը։ Եթե այդ արդյունքներն այլ բնույթ կրեին, ապա հավատը ժողովրդի հեռատեսության հանդեպ կարող էր սասանվել, և, թերևս նույնիսկ, դժբախտ հանգամանքների բերումով, ժողովրդավարությունն իր տեղը զիջեր ռազմական բռնապետությանը։ Պահակախո՛ւմբ։* (Պահակախումբն առաջ է հրում գիրուկին)։

ԼԻԵՆԴԻԸՐ— *Սա անիրավություն է։ Ձեր ասածներն իմաստ չունեն։ Դուք մեքենայի պես եք խոսում և ոչ թե մարդու... Ձեր արածն անարդարություն է, անարդարություն...*

ԴԱՏԱՎՈՐ— *Օրակարգում երկու կետ է մնացել։ Առաջինը՝ միստր Քրուքշընքի կողմից խռովություն հրահրելու հարցը։ Երկրորդը՝ միստր Քրուքշընքի հանցանքի դրդապատճառը հանդիսացած ամբաստանյալի հարցը։*

ՁԱՅՆ— *Հանրապետության պաշտպաններ, հանո՛ւն ժողովրդի։*

ՄԻ ԽՈՒՄԲ ՁԱՅՆԵՐ— *Հանո՛ւն ժողովրդի։* (Համազարկ։ Պահակախումբն իր տեղն է գրավում)։

ԴԱՏԱՎՈՐ— *Կատարածու, զեկուցագիր կազմեք միստր Քրուքշընքի հանցավոր արարքի մասին և այսօր ևեթ հանձնեք Ներքին անվտանգության վարչության պետին, անհապաղ միջոցներ ձեռք առնելու համար։ Առաջին կետի վերաբերյալ առայժմ այսքանը։ Անցնենք երկրորդ կետին։ Ինչպե՞ս էր այն ամբաստանյալի անունը, որի գործն ընդհատվեց միստր Քրուքշընքի միջամտությամբ։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Ջոն Դելըմիր։*

ԴԱՏԱՎՈՐ— *Որտե՞ղ է գտնվում ամբաստանյալը։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Վերևում։*

ԴԱՏԱՎՈՐ— *Պահակախումբն ուղարկեք ամբաստանյալին բերելու։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Պահակախումբ, ձեզ հրամայված է ամբաստանյալ Ջոն Դելըմիրին ներկայացնել դատարան։*

ՀԱՅՐ ՊԱՀԱԿԱԶՈՐԱՅԻՆ— *Ջոն Դելըմիրն իմ տղան է։ Ես նրան լավ հայրություն չեմ արել, բայց երբեք իմ ձեռքով դատարան քարշ չեմ*

տա։ Իմ կյանքն այսօր արդեն մի անգամ խնայել են։ (Մյուս պահակազորայինի հետ միասին հրացանները վեր են բարձրացնում)։ *Կողքիս կանգնածն իմ եղբայրն է։ Ով փորձի տղայիս վնասել, տեղնուտեղը կսպանենք։ Մենք գիտենք, որ հանցանք ենք գործում և պատրաստ ենք կյանքով վճարել դրա համար, բայց տղաս պիտի ապրի։*

ԴԱՏԱՎՈՐ— *Անմիջապես ցած դրեք հրացանները։*

ՊԱՀԱԿԱԶՈՐԱՅԻՆԻ ԵՂԲԱՅՐԸ— *Նա հայր է և ուրեմն՝ ինձնից ավելի զուսպ։ Հիմա դուք տեղնուտեղը Ջոն Դելըմիրին անմեղ կհռչակեք, կատարածուն կարգի կբերի նրա թղթերը, և նա կապրի... Ինչ-որ տեղ այս աշխարհում։*

ԴԱՏԱՎՈՐ— *Կատարածու, ես ձեզ հրամայում եմ ամբաստանյալին ներքև իջեցնել։* (Կատարածուն տեղից չի շարժվում)։

ՊԱՀԱԿԱԶՈՐԱՅԻՆԻ ԵՂԲԱՅՐԸ— *Ջոն Դելըմիրին իսկույն ևթ անմեղ հռչակեք, թե չէ, աստված վկա...*

ԴԱՏԱՎՈՐ— (Գոռում է)։ *Ամբաստանյալը ենթակա է դատվելու ճիշտ այնպես, ինչպես բոլոր մնացած ամբաստանյալները։* (Նայում է ուղիղ եղբայրների աչքերին։ Արշին հետևից մոտենում է նրան և գարեջրի գավաթով հարվածում գլխին։ Դատավորը վայր է ընկնում, Արշին նրա մարմինը մի կողմ է քաշում)։

ԱՐՉԻ— *Հիմա ինձ լսեք՝ բոլորս էլ այստեղ նույն վիճակում ենք։ Դատավորը չի մեռել, բայց դեռ որոշ ժամանակ ուշքի չի գա։ Մեզանից ոչ մեկը ձայն չհանեց, երբ դատում էին ու սպանում չափահաս տղամարդկանց ու կանանց, որոնք ոչ մի բանում մեզնից ավելի մեղավոր չէին։ Ուստի բոլորս էլ մարդասպաններ ենք, քանի որ խոսքով կամ գործով մենք չխանգարեցինք դրան։ Բայց երբ այդ նույնը սպառնաց նաև երեխային, մենք չդիմացանք և ընդվզեցինք... և, ուրեմն, մեր վերջը կանխորոշված է։* (Տիմելով Պետական պաշտոնյային, որը պատրաստվում է հերթական կոնյակն ըմպել)։ *Այդպես չէ՞։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Միանգամայն, միստր Քրուքշընք։* (Կոնծում է կոնյակը)։ *Եթե չեմ սխալվում, սա իններորդն էր։*

ԱՐՉԻ— *Ի՞նչ խոսք, մեզ բոլորիս մահվան կդատապարտեն։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Անկասկած, մեզանից ոչ մեկը դրանից չի խուսափի, ներառյալ ես և նույնիսկ ուշագնաց դատավորը, քանի որ մենք Ատյանում նման միջադեպ ենք թույլ տվել։*

ԱՐՉԻ— *Մեր մասին հոգալն այլևս իմաստ չունի։ Խնդիրը երեխային փրկելն է, բայց ինչպե՞ս։*

ՀԱՅՐ— (Հրացանը ցած դնելով)։ *Նա պետք է փախչի։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Սիրելիս, փախչելու տեղ չկա։ Սա՛ է մեր ապրած աշխարհը՝ տուն լինի, խորտկարան թե դատարան։ Ես այժմ պարտավոր եմ զանգահարել Ներքին անվտանգության վարչության պետին և տեղեկացնել նրան այս ամենի մասին, բայց, հավատացնում եմ ձեզ, ես այդ չեմ անի։ Եվ կասեմ, թե ինչու։ Դա ինձ ոչնչով չի օգնի։ Եթե ներկաներից որևէ մեկն այդ անելու ցանկություն ունի, քաղաքացիական պարտքից դրդված, ինքն իրեն փրկելու հույսով, խնդրեմ, թող անի։ Ո՞վ է ուզում զանգահարել։* (Մի բաժակ է լցնում, կոնծում և սպասում պատասխանի։ Ոչ ոք ձայն չի հանում)։ *Անցավ միաձայն։* (Մոտենում է ավտոկանգառի դռանն ու գոռում)։ *Ատյանի նիստն ավարտված է, կարող եք վերադառնալ զորանոց։* (Մոտենում է բարին և, ժպիտը դեմքին, սկսում զննել կոնյակի շիշը)։ *Ուրեմն, մեր կյանքի վերջին ժամերն այստեղ ենք անցկացնելու՝ միստր Քրուքշընքի աշխարհում։ Ստեղծված իրավիճակում դժվար է վերջին պահերն անցկացնելու համար ավելի հաջող տեղ պատկերացնել։*

ԿԱՏԱՐԱԾՈՒ— *Իսկ մեզ ինչքա՞ն ժամանակ է մնում։*

ՊԱՇՏՈՆՅԱ— *Իմ կարծիքով՝ ամբողջ գիշերն ու վաղվա մի մասը։*

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶ— *Դե ինչ, ես այդ ընթացքում ինչպես հարկն է կոկորդս կթրջեմ, այնպես որ, ահա, միստր Քրուքշընք, գումարը կանխիկ ստացեք։ Ունեցած-չունեցածս սա է։*

ԱՐՉԻ— *Ուտել-խմելն իմ հաշվին է, կարող եմ նաև սենյակ տրամադրել, եթե, իհարկե, մնացող լինի։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Բոլորս էլ ստիպված կլինենք մնալ։*

ԱՐՉԻ— *Ամենևին, իմ տունը բանտ չէ։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Բայց չէ՞ որ դուրս եկողը կարող է մեզ մատնել Ներքին անվտանգության վարչությանը։ Մենք ռիսկի կդիմենք, եթե որևէ մեկին դուրս թողնենք։ Մենք կզրկվենք մեր վերջին մի քանի ժամն ազատ ապրելու հնարավորությունից։*

ԱՐՉԻ— *Չեմ առարկում, բայց սա իմ խորտկարանն է, և այստեղ տնորենը ես եմ։ Եթե որևէ մեկն ուզում է գնալ՝ թեկուզև մեզ մատնելու մտքով, կարող է ցանկացած պահին դուրս գալ։*

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ— *Բայց ախր ինչո՞ւ, միստր Քրուքշընք։*

ԱՐՉԻ— *Ինչո՞ւ, որովհետև ես ուզում եմ, որ աղջիկս գնա։*

ՌՈՈՒԶ— *Ես չեմ ուզում գնալ, Արչի։*

ԱՐՉԻ— *Սա մեր վերջին գիշերն է, և պետք չէ, որ այն լինի նաև քո վերջինը։ Ոչ ոք չգիտի, թե վաղը մեզ ինչ է սպասում։*

ԻՈՍԻՖ— *Թույլ տուր մնամ, Արշի։ Ես գնալու տեղ չունեմ։ Ես վախենում եմ։ Թույլ տուր մի տեղ նստեմ ու խմեմ, ուրիշ ոչինչ չեմ ուզում։*

ԱՐՉԻ— *Նախքան կսկսենք մեր կյանքի վերջին ժամերին ուզածներիս պես քեֆ անել, ամեն ոք, ում մտքով անցնի, կարող է դուրս գալ։ Թող ամեն մեկն իմանա, որ կարող է ուզած պահին առանց բացատրության կամ հրաժեշտի թողնել գնալ։ Ինձ մոտ միշտ այսպես է եղել և այսօր ես որևէ փոփոխություն մտցնելու միտք չունեմ։* (Աստիճաններով իջնում է Մեյ Ֆոլիին, Ջոն Դելըմիրի ձեռքը բռնած)։

ՄԵՅ— *Ո՞վ էր ասում, որ այս մանչուկն ատում է իր հորն ու մորը։* (Հայրը ծունկի է իջնում և ձեռքերը պարզում տղային։ Երեխան նետվում է հոր գիրկը։ Հայր ու տղա, դեմքերն իրար հպած, երջանիկ ժպտում են)։

ՀԱՅՐ— (Մեյ Ֆոլիին)։ *Շնորհակալ եմ, միսիս Քրուքշընք։*

ՄԵՅ— *Շատ լավ երեխա է, խելոք ու բարի։ Էնքան բարի, որ սարսափում ես, մտածելով, թե խեղճն ինչքան պիտի փոխվի մեզ բոլորիս նմանվելու համար։ Քանի քնած էր, կողքին նստած լաց էի լինում։*

ՀԱՅՐ— (Տղային, որը նրա ականջին ինչ-որ բան է փսփսում)։ *Ի՞նչ։ Նորից ասա։* (Տղան կրկնում է)։ *Ուզում է տուն գնալ։ Մորն է ուզում։*

ՄԵՅ— *Էլ ինչո՞ւ քիթդ կախեցիր, պարզ բան է՝ երեխան պիտի իր տունն ուզի, մորն ուզի...*

ՀԱՅՐ— *Բայց ես տուն չեմ կարող գնալ, հիմա էլ չեմ կարող։*

ՄԵՅ— *Արշի, սա ի՞նչ է ասում։*

ԱՐՉԻ— *Մենք բոլորս էլ նեղն ենք ընկել, Մեյ։*

ՄԵՅ— *Այ մարդ, երեխային վերցրու տուն տար։ Երբ մարդ նեղն է ընկնում, նրա կինն ու որդին պարտավոր են ամեն նեղություն հետը քաշել։*

ՀԱՅՐ— *Ես ինքս էլ կուզեի նրան տուն տանել, չգիտեմ էլ ի՞նչ կարող եմ անել նրա կամ ուրիշ մեկի համար։*

ԱՐՉԻ— *Տղայիդ տուն տար, դու ուրիշ անելիք չունես։*

ՀԱՅՐ— *Ոչ ոք դեմ չի՞ լինի։*

ՄԵՅ— *Գնա տուն, ու երեքով մի չքնաղ ընթրիք արեք։*

ՀԱՅՐ— *Երանի իմանայիք, թե դա ինձ համար ի՞նչ է նշանակում, միստր Քրուքշընք, եթե միայն պատկերացնե՞ք, ինչ կնշանակի դա սրա մոր համար... Ի՞նչ ասեմ, բարով մնաք։* (Շուտ է գալիս, որ գնա, բայց դռան սեմին կանգ է առնում)։

ՏՂԱ— *Մնաս բարով, Մեյ Ֆոլի։*

Մեյ.— *Մնաս բարով, Ջոն Դելըմիր։* (Տղան նետվում ու պինդ գրկում է Մեյին, ապա հետ է վազում հոր մոտ։ Հայրը հեռվից ձեռքով հրաժեշտ է տալիս, բոլորը պատասխանում են։ Երկուսով դուրս են գնում)։ *Շատ համով տղա է, էնքան բարի, որ սիրտդ դող է ընկնում նրա համար։ Գթա նրան, տեր աստված։ Դե լավ, ինչ արած... ժողովուրդ, մի բան լցրեք, խմեմ։*

Վերջ։

Հ Ե Ր Ս Ո Տ Ա Ծ Մ Ի Գ Ն Ա

(թատերախաղ երեք գործողությամբ)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Բկլաա Ռիդ
Լմփոշ
Քառակուսի
Փոսիյո
Ճուտո
Գոնշո
Հավաքարար
Դոկտոր Սթարք
Դոկտոր Բոնրն
Ցերեկային բուժքույր
Գիշերային բուժքույր

Գործողության վայրը՝ Սան Ֆրանցիսկոյի քաղաքային հիվանդանոցի երրորդ բաժանմունքի արևի սրահը։

Գործողության ժամանակը՝ ներկան։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Սան Ֆրանցիսկոյի Պատվո Լեգեոնի բլրի վրա գտնվող քաղաքային հիվանդանոցի երրորդ բաժանմունքի արևի սրահում շատ քիչ լույս կա։

«Մոդեռն» ոճով հարդարված սենյակի կոր պատն ամբողջովին ապակուց է։ Հատակը պայծառ դեղին լինոլեումով է ծածկված, պատերը ներկված են սպիտակ ու հարնշագույն խաչված լայն գոլերով։ Նոյեմբերյան խոնավ, մառախլապատ առավոտ է, մերթընդմերթ լսվում է հարևան փարոսի մառախուղի ազդանշանը։ Երբ մառախուղը ցրվի և արև բացվի, ապակե պատից այն կողմ կերևվա հանելի մի տեսարան։ Բլրի ստորոտում ծովախորշի ամբողջ լայնքը կպսակի նրբազեղ Գոլդեն Գեյթ կամուրջը, կերևա Ալքաթրազի կղզին, մյուս ափին կնշմարվեն Մերին Քանթրի զառիթափ զմրուխտե լանջերը, իսկ նրանց վերևում՝ երկինքը։ Կթվա, թե բարձրադիր այդ սենյակն ամփոփված է լայնարձակ մի բնապատկերի մեջ։

Սենյակի կահավորումը որակյալ է, բայց ճնշող, զգացվում է, որ այն հասարակական սեփականություն է։ Կահույքը բաղկացած է երկու ծալովի սեղանից, թղթախաղի կամ պարզապես զրույցի համար, կարմիր կաշեպատ բազմոցից ու թիկնաթոռից, վեց ծալովի աթոռներից ու մի քանի գրադարակներից՝ գրքերով, ամսագրերով ու խաղերով։ Անկյունում փոքր սպիտակ ներկած մի դաշնամուր է դրված, կողքին՝ փայտե պահարանիկով ռադիոնվագարկիչ։ Դրան կից զորշ սեղանիկին ձայնապնակներ են փռված։

Բաժանմունքի հավաքարարը համարյա վերջացրել է իր գործը։ Նա այն ժամանա, պարզասիրտ մարդկանցից է, որոնք միշտ կատարում են հասարակական հիվանդանոցների, բանտերի, ծերանոցների, աղքատանոցների նման վայրերի կեղտոտ աշխատանքը։ Ներ ու պակասավոր մի մարդ է նա, որը դեռ մանկությունից դուրս չի եկել։ Նրա մի ուսը մյուսից ցածր է, մի ոտքը կարծես լավ չի գործում, իսկ ամբողջ մարմինն ասես հավասարակշռությունից զուրկ լինի։ Թվում է, թե նա անընդհատ ինքն իրեն հարցեր է տալիս։ Ձայնը տղայական է։ Երբ անհանգստանում է կամ հուզվում, մարմնի վերևի մասը սկսում է տարուբերվել։

Նվագարկիչի կողքին կանգնած է մոտ վաթսունհինգ տարեկան Փոսիյո անունով փոքրամարմին մի հույն։ Նա կամացուկ Մոցարտ է սուլում ու քրքրում սեղանի ձայնապնակների կույտը։ Մոխրագույն պիժամայի վրա հագած հիվանդանոցային երկար սպիտակ խալաթը նրան սիրողական ներկայացման մեջ հրեշտակի դերը խաղալու համար զգեստավորվածի է նմանեցնում։ Սակայն նրա թե

ձայնն ու անռելի բեղերը հակասում են այդ տպավորությանը: Նա միացնում է իր բնտրած ձայնապնակն ու, ծալովի աթոռին նստելով, սկսում է լսել:

Հավաքարարն ընդհատում է իր գործն ու նույնպես մի քանի վայրկյան ականջ դնում, մարմինն օրորելով ու ինքն իր լսածից զարմանալով: Ապա շարունակում է մաքրել հատակը, մերթընդմերթ աշխատանքը ընդհատելով ու նորից ականջ դնելով: Վերջապես, դույլն ու ջնջոցը վերցնելով, դուրս է գնում:

Երաժշտությունը Մոցարտի Դո մաժոր կոնցերտի երկրորդ մասն է, Andante, դաշնակահար Արթուր Շնաբելի և Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, բայց Փոսիյոն այնքան ցածր է միացրել, որ երաժշտությունը տեղ-տեղ համարյա չի լսվում, և ընդհանրապես հազիվ թե լռության խախտում համարվի: Փաստորեն այն ասես ինքը լռություն լինի: Երբ նվագն ավարտվում է, Փոսիյոն մոտենում է լուսամուտին ու սկսում նայել մառախուղին: Նվագարկիչն այդ ընթացքում ավտոմատ կերպով նորից է միացնում երաժշտությունը:

Ներս է մտնում բացառիկ սև մաշկով քառասունն անց մի սևամորթ, որն իրեն Բիլլատ Ռիդ է կոչում: Դանդաղ նայում է շուրջը ապտակ սանող դուռն իր հետևից խնամքով ծածկում: Նոր վառած մի սիգար է ծխում: Մի պահ նա ականջ է դնում երաժշտությանը, նայելով մեկ Փոսիյոյին, մեկ նվագարկիչին, ապա զգուշորեն նստում է դաշնամուրի առջև, սիգարը դնում վրան ու փորձում կամաց նվագակցել երաժշտությանը: Հանկարծ ամբողջ ուժով նարնակվում է ստեղնաշարի վրա, դաշնամուրից սարսափելի ու անկապ աղմուկ կորզելով: Փոսիյոն շուռ է գալիս, հավաքարարը վերադառնում է տեսնելու, թե ինչ պատահեց, ապա նորից դուրս գնում: Բիլլատ Ռիդն ազդեցիկ մի ճիչումով ավարտում է իր մենանվագը, և նորից լսվում է ձայնապնակի խախծոտ երաժշտությունը: Բիլլատ Ռիդը կանգնում է, երևակայական հանդիսատեսին գլուխ տալիս, ձեռքերի ափերը համբուրում ու առաջ պարզում, հետո խրոխտ քայլերով հեռանում և իսկույն, ասես դժկամորեն, հետ է գալիս, նորից համբույրներ նետելով ու գլուխ տալով: Ապա ծունկի է իջնում, մի քանի անգամ գլուխը հպում հատակին ու հոգնած վեր կենում: Նորից նստում է դաշնամուրի աթոռին՝ շունչը տեղը բերելու: Վերջապես վերցնում է իր սիգարն ու շրջվում Փոսիյոյի կողմը:

ԲԻԼԼԱՏ— *Լսիր, Փոսիյո, մեր բաժնում քո մասին ինչեր ասես որ չեն խոսում... գիտե՞ս, հենց հիմա, անկողնում նստած նախաճաշելուց ինչեր են քեզնից բամբասում։*

ՓՈՍԻՅՈ— *Ինչե՞ր...*

ԲԻԼԼԱՏ— *Ասում են, որ դու լավը չես, Քառակուսին ու Լմփոշը։ Իմ ականջով եմ լսել։ Քեզ պես պստլիկ, անշառ, պուճուր երեխու պես մարդուն ինչի պիտի էդպես բաներ ասեն։ Ինչի՞ դու լավը չես, հը՞, Փոսիյո։*

ՓՈՍԻՅՈ— *Ինչի՞։*

ԲԻԼԼԱՏ— *Որովհետև դու բոլորին ատում ես, Լմփոշն է ասում։ Հասկացա՞ր՝ ատում։ Իսկ ինչի՞ խելքը փչեց հենց քո մասին էդպես ասի։ Ես հո գիտեմ, որ դու ինձ չես ատում։ Ուրեմն ո՞ւմ ես ատում։*

ՓՈՍԻՅՈ— *Ո՞ւմ։*

ԲԿԼԱՏ— Ո՛չ մեկին, ա՛յ թե ում։ Որ ատելու լինեիր, էլ ինչի՞ պիտի էս առավոտ քո ամբողջ նախաճաշն ինձ տայիր, բացի նարինջի հյութից։ Ինչի՞ երեկ ամբողջ ընթրիքդ ինձ տվիր, բացի կարկանդակից։ Ինչի՞ ինձ, ամբողջ բաժանմունքի միակ սևին, տեղ տվիր քո կողքին, երբ ես երեք օր առաջ էստեղ ընդունվեցի։ Փոսիյո, թե որ դու ատում ես, ինչի՞ էիր էդ օրն ամբողջ գիշեր հարազատ հոր նման հետս խոսում։

ՓՈՍԻՅՈ— Չգիտեմ։

ԲԿԼԱՏ— Իսկ մյուս օրն ո՞վ ինձ մի ամբողջ դոլար տվեց սիգար առնելու։ Դու տվիր չէ՞, Փոսիյո։ Ինձ լսիր, ես էս կյանքում արդեն քառասունչորս տարի եմ ապրում, բայց դեռ քեզ պես մարդ չեմ տեսել։ Դու աշխարհի ամենաբարի մարդն ես, ընկած ես մեռնող հիվանդների մեջ, ու նրանք էլ դեռ հետևիցդ խոսում են։ Էդպես չպիտի լինի։ Ես հաստատ գիտեմ, որ դու ոչ ոքի չես ատում։

ՓՈՍԻՅՈ— Չգիտեմ։

ԲԿԼԱՏ— Դե լավ, լավ, դու կյանքում ոչ ոքի չես ատել։ Քո մեջ էդ բանը չկա։ Ես իմ քառասունչորս տարվա մեջ ատելու ահագին առիթ եմ ունեցել, բայց դու իսկի ատողի նման չես։ Գիտե՞ս, Լմփոշն ու Քառակուսին ինչի են հետևիցդ խոսում։

ՓՈՍԻՅՈ— Ինչի՞։

ԲԿԼԱՏ— Նախանձում են, այ թե ինչի։

ՓՈՍԻՅՈ— Նրանք պարզապես հիվանդ են։

ԲԿԼԱՏ— Չէ, նախանձում են, որովհետև քեզ պես ճստոն, որը բոլորի հանդեպ բարի է, պիտի ապրի, երբ որ նրանք մեռնեն։

ՓՈՍԻՅՈ— (Գլուխը տարուբերելով)։ Դու սխալվում ես։

ԲԿԼԱՏ— Չէ մի չէ։ Ջասփերը չմեռա՞վ էս գիշեր, իսկ երեկ ոնց էր լոպազանում, թե պիտի ապրի մինչև մյուս մեծ կռիվն ու ճգնաժամը։ Երեկ չէ՞ր, որ բժիշկները ճաշից հետո եկան հետը խոսեցին, իսկ հետո դրին պատգարակն ու գլորեցին տարան։ Էն Ջասփերը չէ՞ր, որ գնաց ու էլ չեկավ։ Դե հիմա հիշի, թե ով էր քեզ ձեռ առնում, ով էր ասում, թե ինքն էստեղ կլինի, երբ որ դու վաղուց արդեն սառած դիակ լինես։ Հենց Ջասփերն էր։ Ես չեմ ասում, որ նա հիվանդ չէր, բայց հետն էլ նախանձ էր, նախանձ՝ մյուս բոլորի պես։ Նրանց որ լսես, դուրս է գալիս, թե Ջասփերը քո մեղքով շունչը փչեց։ Նրանք կատաղած են քեզ վրա, Փոսիյո։ Քառակուսու աչքերից արցունք է գալիս, ինչ է թե նախրի առաջնորդն էլ կողքները չի, որ իր մեծաբերան լոպազությամբ իրենց սիրտ տա։ Բայց իմ

աչքին դու էդ նախրապետի համար արցունք չես տեսնի, երբեք... (Քիչ անց ցածրաձայն): *Ես ինքս առաջնորդելու նախիր ունեմ։*

ՓՈՍԻՅՈ— *Ի՞նչ ասեմ, Ջասփերն ապրել էր ուզում։*

ԲԿԼԱՏ— *Դա՞ էր ապրելու ձևը։ Գիշեր-ցերեկ մեծ-մեծ խոսելով, հռհռալով ու քեզ նմանների հետ թայֆա կազմելով, ինչ է թե վախեցած ես ու նախա՞նձ։* (Մի պահ լռում է, մինչ սենյակը լցվում է արևի լույսով): *Դու հո տեսա՞ր, թե ես նոր ոնց էի դաշնամուրի առաջ կապիկություն անում՝ մեն-մենակ, էս մենավոր տեղում։ Տեսար, չէ՞, ոնց էի թոկից փախած երեխա դառել... Դա՞ է ապրելու ձև։ Պարզ չի՞, որ Ջասփերն ապրել կուզեր։ Էլի որ նա էլ, Լմփոշն էլ, Քառակուսին էլ... Նույնիսկ նրանք, ովքեր էլ չեն կարող անկողնուց վեր կենալ, բոլորն էլ ապրել են ուզում— բայց մի՞թե ապրելու ձևը դա է՝ ձայնները մեկ արած հռհռալ, մեծ-մեծ խոսել, ոհմակներով ատելության երգը ոռնալ, քո հետևից խոսել մենակ նրա համար, որ դու երեք ամիս է էստեղ ես, իսկ նրանք չեն ու չեն էլ լինի։ Ատել քեզ, ինչ է թե նրանք վախենում են մեռնել, իսկ դու՝ չէ՞։ Հիվանդ նախանձների նախիր։* (Դադար): *Ես քեզ ասելիք ունեմ, Փոսիյո։* (Նորից է լռում: Նայում է ուղիղ Փոսիյոյի աչքերին): *Ես էլ եմ նախանձում։*

ՓՈՍԻՅՈ— *Հա՞։*

ԲԿԼԱՏ— *Հա, նախանձում եմ։ Դու զարմանալու իրավունք ունես, բայց ես չեմ խաբում։ Ես էլ եմ նախանձ, նախանձ ու մահու չափ վախեցած։ Ես նախանձում եմ քո այստեղ ապրած երեք ամսվան, Փոսիյո, ու իմ լեղին ճաքում է էս մեռնելու գործից։ Ախր մինչև էստեղ գալը ես կյանքում մահվան մասին իսկի չեմ էլ հիշել, իսկ հիմա դրանից բացի ուրիշ ոչ մի բանի մասին չեմ մտածում։ Տեսնես ի՞նչ կլինի իմ հալը սրանից երեք ամիս հետո։ Գուցե գաբարդինե նոփնոր կոստյումը հագիս Նյու Յորքում մանգամ, հը՞... Չէ։ Գուցե զբոսայգում նստած նուշ ուտեմ ու գարեջուր խմեմ։ Դժվար թե... էդ մեկը խնդրելն արդեն շատ կլիներ։ Էդքանը հասկանում եմ՝ դրա պես լավ օրեր էլ չեն լինի։ Այ, հիմա էստեղ եմ։ Տեսնես երեք ամիս հետո էլի էստեղ կլինե՞մ, էս սիրուն սենյակում, էս լավ երաժշտությունը լսելիս, Գոլդեն Գեյթ կամուրջին ու Ալքաթրազի կղզուն նայելիս ու սքանչելի սիգարը ծխելիս։ Հը՞, ինչ կասես, Փոսիյո։ Դու հաջողացրել ես, չէ՞, իմ ուզածն էլ հենց նույնն է, մենակ թե մահու չափ վախենում եմ, որ չի ստացվի։ Աստված վկա, Փոսիյո, էսքան բան դուրս տվի մենակ քեզ ջղայնացնելու համար, որ դու նորից անկողին ընկնես ու մեռնես։ Գոնե ես՝ իմ մնացած մի քիչ ժամանակն*

ինձ ավելի լավ կդգայի։ Ես ուզում էի փչացնել քո խաղաղ առավոտն էս սիրուն սենյակում։ Ուզում էի հարամ անել քո լեռած սիրուն երաժշտությունը։ Ուզում էի փչացնել քո ամբողջ օրը, մնացած ամբողջ կյանքդ, Փոսիյո, ես, որի հանդեպ դու այդքան բարի էիր։

ՓՈՍԻՅՈ— Վնաս չունի։

ԻԿԱՍ— Տեսա՞ր, դու նույնիսկ չես ատում մի մարդու, որը քո մահն է ուզում, մենակ թե իր մնացած մի քիչ կյանքն իրեն ավելի լավ զգա։ Մի՞թե դա է ապրելու ձևը։

ՓՈՍԻՅՈ— Վնաս չունի։

ԻԿԱՍ— Չէ, էդ ձևով ապրել չի լինի։ Էդ վախեցած մարդու, ինձ նման մեկի համար է՝ ինձ պես խոշոր, ինձ պես, չգիտես թե ինչի, սև, չգիտես ինչի ժլատ ու չար, միշտ առանց առիթի ատելությամբ լցված... Չէ, էդ մեկը սուտ էր, ես իմ կյանքում մի ճիշտ բան արած չկամ, բայց ատելու լավ առիթներ միշտ ունեցել եմ, երևի աշխարհիս ատելու լավագույն առիթները հենց իմը եղած լինեն։ Ու թեև գիտեմ, որ մեռնելու եմ, պատկերացնո՞ւմ ես, ես դեռ ատում եմ ու դեռ ուզում եմ ինչ-որ մեկից մուռս հանել, և ո՞ւմ ջոկեմ որ լավ լինի՝ քեզ, Փոսիյո, իմ երբևէ տեսած լավագույն մարդուն։ Մի՞թե սա է ապրելու ձևը։ Դու ինձ էնպես չես նայում, ինչպես նայել են ինձ իմ ամբողջ կյանքում, ամեն օր, չնայած ես միշտ ուզել եմ դուր գալ, աշխատել եմ քաղաքավարի ու սիրալիր լինել։ Վախենում էի համբերությունս կորցնեմ ու սպանության դուռը հասնեմ, եթե միշտ կիրթ ու քաղաքավարի չլինեմ, եթե թողնեմ աչքերս նրանց նայեն էնպես, ոնց որ իրենց աչքերն էին ինձ նայում։ Գիտեմ, որ դա չէր ապրելու ձևը, բայց իմ էս սևությամբ ես ուրիշ ո՞նց ապրեմ։ (Դադար)։ Ես կարող էի սպիտակ լինել ու ապրել մի ուրիշ կյանքով, բայց ահա խնդրեմ՝ սև եմ, սև էլ կմնամ, ու էն էլ մահու չափ վախեցած, որ կմեռնեմ մինչև մուռս հանելու որևէ առիթ բացվի։ Ախր, անկարելի բան է, որ մուռս չհանեմ։ Գոնե մեկից, ով ուզում է լինի։ (Հանգիստ)։ Երանի Աֆրիկայում ծնված լինեի՝ կյանքում չեմ տեսել։ Երանի գրա փոխարեն կյանքում Ամերիկայի երեսը չտեսնեի՝ կարծես իմ թշվառությունն ինձ հերիք չէր, դեռ հիմա էլ պիտի էստեղ ընկնեի։ Ո՞նց կուզեի ծնվել ջունգլիներում, թշնամիներս կարգին գազանները կլինեին, ոչ թե խելառ մարդիկ։ Աստվա՜ծ, երանի թե կաշիս բժիշկների փոխարեն վագրը քերթեր։ (Հոգոց է հանում)։ Փոսիյո, դու միակ մարդն ես, որին ես իմ կյանքում ճիշտն եմ ասում։ Ես գիտեմ, որ դու ոչ ոքի չես ատում, բայց ես ատում եմ, ես բոլորին եմ ատում, նույնիսկ քեզ։ Ես քեզ ատում

եմ, որովհետև դու իմ երբևէ տեսած լավագույն մարդն ես։ Ախր էս ծուռ կյանքում դու լավը լինելու ի՞նչ իրավունք ունես։ Ինձ լսիր, էն գլխից եմ ասում, ես մեռնելուց առաջ անպայման մեկն ու մեկին կսպանեմ, էնպես որ, եթե կաշիդ քեզ համար թանկ է, լավ է գնաս իմաց տաս, որ ինձ մենակ պահեն։ Մեկ է, ես ամբողջ կյանքում մենակ եմ եղել։ (Դադար, հանգիստ)։ *Հիմա Լմփոշն ու Քառակուսին անկողնուց վեր են կենում, որ գան արևին տաքանան։ Գնա դիմավորիր ու իմ մասին պատմի, թե չէ հետո կփոշմանես։*

ՓՈՍԻՅՈ— *Չեմ պատմի։*

ԲԿԼԱՏ— *Ինչի՞։*

ՓՈՍԻՅՈ— *Գուցե բախտս բերի։*

ԲԿԼԱՏ— *Դու ինձ չե՞ս հավատում։*

ՓՈՍԻՅՈ— *Հավատում եմ։*

ԲԿԼԱՏ— *Բա ինչի՞ ինձ չես ծախում, ո՞նց ես մարդասպանին ապատ թողնում։*

ՓՈՍԻՅՈ— *Այստեղ ամեն մեկն իր ցավը գիտի, ամեն մեկն իր ասելիքն է ասում, ես էլ մնում եմ իմ գործին, երաժշտություն եմ լսում։*

ԲԿԼԱՏ— *Գիտես ի՞նչ, Փոսիյո, ես վստահ եմ, որ դու մի բան գիտես ու էդ բանը մարդու չես ասում։* (Դեմքին մտերմական ժպիտ է հայտնվում)։ *Ահա գալիս են։*

Մտնում է Լմփոշը, ծանրամարմին, հիսունին մոտ, ձախ աչքն ու դեմքի մի մասը ծածկած, շիկահեր մի տղամարդ։ Նրան հետևում է Քառակուսին՝ քառասունին մոտ մի տղամարդ։

ԲԿԼԱՏ— *Հերիք եղավ անկողնում թավալ տաք, տղերք։ Մի ժամ էստեղ վեր ընկած Փոսիյոյի երաժշտությունն եմ լսում՝ զահլաս գնաց։*

ԼՄՓՈՇ— *Մոցարտ է։*

ԲԿԼԱՏ— *Ես հո չասացի՞, թե Մոցարտ չի, Լմփոշ, իսկն ու իսկը Մոցարտ է, ոչ մի կասկած։ Մաքուր Մոցարտ է, որ Փոսիյոյին անընդհատ ինչ-որ բաներ է ասում։* (Դարակից խաղաթղթերի կապուկը վերցնելով ու խառնելով)։ *Խեղճ Մոցարտը Բկլատին հեչ բան չի ասում։ Քառակուսի, արի էս սիրուն առավոտ հետս մի քիչ կազինո խաղա։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Պատուհանի կողմը գնալով)։ *Ես սաստիկ հոգնած եմ թուղթ խաղալու համար, անտանելի հոգնած ու զզված։*

ԲԿԼԱՏ— (Նայելով նրան)։ *Էդ ո՞նց պատահեց, որ առավոտ գիշերով արդեն էնքան հալից ընկար, որ չես էլ ուզում թուղթ խաղալ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Հոգնած եմ ու զզված նույնիսկ խոսելու համար, լսելու սիրտ էլ չունեմ։*

ԲԿԼԱՏ— *Նախաճաշդ ուտելու համար հեչ հոգնած չէիր, նոր էլ, էնքան հոգնած չէիր, որ խոսելդ չգար։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Այնքան եմ հոգնած, որ նույնիսկ հազիվ եմ նայում Ալ-քաթրազին։ Սիրտս նեղվում է Ալքաթրազին նայելիս, էս Փոսիյոյի երաժշտությունից էլ գլուխս գնում է։*

ԲԿԼԱՏ— *Փոսիյոյի երաժշտությունից գլուխդ կգնա, ոնց չէ, բա քիչ առաջ գլուխդ ոնց չէր գնում քո շունչը փչած ընկերուց համար թնգթնդալու։* (Քառակուսին շուտ է գալիս ու աչքերը ճառում Բկլատի ոտքերին: Բկլատը շարունակում է խաղաթղթերը խառնել այնքան, մինչև Քառակուսին թեքում է հայացքը): *Լմփոշ, դո՞ւ ինչ կասես, արի մի քիչ կազինո խաղանք։*

ԼՄՓՈՇ— *Ես դոկտոր Սթարքին խոստացել եմ լավատես լինել։ Ես ոչ հոգնած եմ, ոչ էլ զզված և իմ տված խոսքը պիտի պահեմ։ Ամեն տեսակի խաղերն իմ ջղերի վրա հոդում են։ Ես հենց այնպես էստեղ կնստեմ ու Պատիկ Աբնարի կոմիքսը կթերթեմ։*

ԲԿԼԱՏ— *Բա ինչարկե, դու քեզ լավ ես նայում ու ծերուկ Սթարքին տված խոստումդ անպայման կպահես։ Ես պարզապես մտածեցի, որ դու կարող էիր հետս լավատեսորեն մի քիչ կազինո խաղալ։*

ԼՄՓՈՇ— (Աչքը կոմիքսների գրքին): *Չէ, ես թուղթ խաղալուց չզայնանում եմ։*

Բկլատը դիտում է, թե ինչպես է Լմփոշը թերթում գիրքը, ապա նայում է մեջքով կանգնած Քառակուսուն, նետում՝ Փոսիյոյին: Այդ ընթացքում մտնում է Ճուտոն, մոտ քսանհինգ տարեկան չինացի մի տղա:

ԲԿԼԱՏ— *Սրտանց շնորհավորում եմ անկողնուց բարձրանալդ, Ճուտո։ Ես գիտեմ, որ դու չես մերժի հետս մի քիչ կազինո խաղալ։*

ՃՈՒՏՈ— (Տկար ձայնով): *Ես կազինո խաղալ չգիտեմ, բայց մի քիչ ջին կխաղամ։*

ԲԿԼԱՏ—(Օգնելով նրան նստել): *Բան չկա, դու հարմար նստի, ուրիշ ոչինչ պետք չի։ Թող ջին լինի, մենակ թե հաշիվը դու պահի, թե չէ ես ձևը չգիտեմ։*

Ճուտոն նստում է: Բկլատը խաղաթղթերը խառնում է ու բաժանում: Ոչ ոք չի խոսում, Լմփոշը կոմիքսներին նայելով սկսում է ծիծաղել. Բկլատը նայում է նրան:

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Լմփոշ, մեկնումեկին գիտե՞ս, որ Ալքաթրազում նստած լինի։*

ԼՄՓՈՇ— *Որտե՞ղ ինչ արա՞ծ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ո՞վ գիտի մեկնումեկին, որ նստած լինի Ալքաթրազում։*

ԲԿԼԱՏ— *Եթե ինձ ես ասում, անունս Բկլատ Ռիդ է, ինքս եմ դրել, որովհետև ողջ կյանքս սոված եմ։ Ալքաթրազում ով ասես չի նստել, երբ ասես չի նստել, ոնց ասես չի նստել՝ ժամանակավոր, ժամկետով, անժամկետ ու դեռ մի բան էլ ավել։*

ՃՈՒՏՈ— *Ջինս լրացավ։*

ԲԿԼԱՏ— *Արդեն հասցրի՞ր։ Սրա՞ն տես, ձեռքիս լիքը թուղթ կա։ Լավ՝ լսիր ոնց եմ հաշվում՝ տասը, քսան, երեսուն, քառասուն, քառասունինը, հիսունյոթ, վաթսունչորս, յոթանասունմեկ, գումարած էս կեղտոտ սրտի մեկնոցը՝ յոթանասուներկու, քսան էլ վրայից ջինի համար՝ իննսուներկու։* (Դիմում է մեջքով կանգնած Քառակուսուն): *Ճի՞շտ է։*

ՃՈՒՏՈ— *Ուղիղ իննսուներկու։ Կյանքում դեռ ոչ մեկին սրա պես տարած չկամ։* (Գրի է առնում հաշիվը, խառնում ու նորից բաժանում):

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Մեղքս գալիս են Ալքաթրազի տղերքը, ամեն օր Սան Ֆրանցիսկոն են տեսնում։*

ԼՄՓՈՇ— *Սան Ֆրանցիսկոն տեսնելը Գոլդըն Գեյթը տեսնելուց վատ չի։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Գոլդըն Գեյթը տեսնելու վա՞տն ինչ է։*

ԼՄՓՈՇ— *Տեսնելուց ծագած մտքերը։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ի՞նչ մտքեր։*

ԼՄՓՈՇ— *Քո կարծիքով կամուրջին նայելիս մարդ ի՞նչ կուզենա անել։ Կուզենա կամրջով անցնել։ Իսկ եթե նստած ես Ալքաթրազում, գիտես, որ երբեք չես անցնի։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ծիծաղս բերում ես։*

ԼՄՓՈՇ— *Բա ինչի չես ծիծաղում։ Ես նստածս րոպեից ծիծաղում եմ էս Պատիկ Աբնըրի նկարների վրա, իսկ քո ծիծաղը դեռ ոչ մի անգամ չի լսվել։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Քե՞զ ինչ է եղել՝ ուզենաս, կամրջով կանցնես։*

ԼՄՓՈՇ— *Բան էլ չի եղել, երբ քեֆս բերի, կգնամ-կանցնեմ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Մեծ-մեծ խոսում ես, էլի։ Էլի որ կանցնես՝ մի անգամ։*

ԼՄՓՈՇ— *Ես էլ, մյուս բոլորն էլ՝ մի անգամ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Մյուս բոլորը կարիք չունեն քեզ պես ոտ ու ձեռ ընկած դրա մասին մտածել։*

ԼՄՓՈՇ— *Բան չեմ ասում։ Ես կամուրջը չեմ անցնի, մինչև խելքս չփչի։ Հենց հիմա, օրինակ, բոլորովին ցանկություն չունեմ, որովհետև գիտեմ, որ երբ քեֆս ուզենա՝ կանցնեմ։ Ես գիտեմ, որ ազատ եմ։ Ալքաթրազի ժողովուրդը գիտի, որ ազատ չի։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Լավ, ես էլ քեզ հետ դրա մասին խոսելու գլուխ չունեմ, դու պարզապես տեղովդ կենսուրախ մարդ ես, էդքան մի բան։*

ԼՄՓՈՇ— (Նայելով Բկլատին ու Փոսիյոյին): *Եթե ուզում եք ասել, թե ես պիտի վատ զգամ, որովհետև Ջասփերը երեկ մեռավ, ուրեմն իմացեք, որ ես բոլորովին չեմ կարծում, թե պարտավոր եմ վատ զգալ։ Ի՞նչ էիք ուզում, որ նա աներ՝ ապրե՞ր։ Ի՞նչ էին ուզում բոլորը Ռուզվելտից, որ ապրե՞ր։ Իսկ Մուսոլինիից, Հիտլերից ու ամեն մի օր մեռնող մնացած բոլորի՞ց։ Ի՞նչ է, ուզում եք, որ բոլորն ապրեին։ Է հա՜, ասենք թե ամեն մեկը քիչ թե շատ ապրեց։ Բայց Պստիկ Աբները նրանցից շատ կապրի, չնայած իսկի իրական էլ չի։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Փոսիյո, քո երաժշտությունն էս խեղճ մարդու վրա չի գալիս, արի մի ուրիշ բան դնենք։*

ՓՈՍԻՅՈ— *Դեմ չեմ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Իսկ ի՞նչ կասես, որ հենց առաջին պատահածն էլ դնենք։ Մեկ էլ տեսար Լմփոշը դրանից Ռուզվելտի, Պստիկ Աբների ու ամեն օր մեռնող մարդկանց մասին նոր մտքերով բեղմնավորվեց։*

ԼՄՓՈՇ— *Ինչ կուզեք նվագեք՝ ես գիտեմ, թե ինչ եմ ասում։ Ես գիտեմ, որ իմ լինել-չլինելուց առանձնապես ոչինչ չի փոխվի։ Նույնիսկ ինքը՝ Ջո Ստալինը էլի ըստ էության ոչ մի բան չի փոխի։ Պարզապես ես ինձ համար էստեղ նստած փորձում եմ կռահել, թե այսօր ճաշին ինչ կտան։ Ամենից հավանական է, որ լափ լինի, դա էլ ոչինչ, չնայած զզվում եմ, բայց հաճույքով կուտեմ, որովհետև էդպես է պետք մինչև առողջանամ ու պատրաստ լինեմ կամուրջն անցնել։ Ամեն դեպքում այս հիվանդությունն ինձ չի ստիպի մայմունություն անել։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Գոնե սպասեիր նոր երաժշտություն դնեինք, հետո մեջտեղ բերեիր մայմունությունդ։*

ԼՄՓՈՇ— *Դրեք, դրեք տեսնենք։*

Քառակուսին ասեղն իջեցնում է սկավառակին ու լսվում է «Հարբէյզ» մեղեդին Թեդ Վիմզի նվագախմբի կատարմամբ:

ԲԿԼԱՏ— *Այ քեզ բան, էլի Մոցարտ, ոնց որ ուրիշ բան չկար, Մոցարտ հա Մոցարտ։* (Շուռ է տալիս ձեռքի թղթերն ու շրխկացնում սեղանին): *Ճուտո, Մո՛ցարտ։*

ՃՈՒՏՈ— *Ջի՞ն։*

ԲԿԼԱՏ— *Էն էլ ո՜նց։ Իսկ և իսկը ջին։ Այ հիմա էդ Մոցարտն ինձ էլ է բան ասում, օրինակի համար մի քիչ էլ իմ լեզվով խոսեց։* (Ծափ է տալիս ու ցատկոտում սեղանի շուրջը, երաժշտության հետ քթի տակ

երգելով): *Մո-ցարտ, Մո-ցարտ, ես էլ եմ քեզ լսում, հոգիս։* (Նայում է Ճուտոյի թղթերին): *Ձեռքիդ ինչքա՞ն մնաց։*

ՃՈՒՏՈ— *Քսանմեկ, քսան էլ չինի համար՝ քառասունմեկ։* (Գրի է առնում հաշիվը: Բկլատը նորից նստում է ու սկսում խաղաթղթերը խառնել):

ԲԿԼԱՏ— *Փոսիյո, գիտե՞ս Մոցարտն ինձ հիմա ինչ է ասում։ Ասում, է ապրե՛ս, տղաս։ Հա, հենց էդ, նորից ու նորից։* (Վերցնում է թղթերն ու արագ աչքի է անցկացնում): *Էդ Մոցարտն աշխարհիս ամենամեծ սուտասանն է։*

ՓՈՍԻՅՈ— *Հա՞։*

ԲԿԼԱՏ— *Ճիշտ եմ ասում, Փոսիյո։ Մոցարտն ինձ ասում է՝ ապրես, թղթերն ասում են՝ չէ՞ մի չէ՞։ Երաժշտությունն ինձ ասում է՝ մեկ էլ տեսար... թղթերն ասում են՝ հույս չունենաս։ Թմբուկն ասում է՝ բա ո՞նց, բժիշկն ասում է՝ հե՛չ։* (Զզվանքով նայում է ձեռքի թղթերին): *Հեչ։* (Հավաքում է թղթերը, դնում սեղանին ու աչքերը սառած նստում մինչև երաժշտության ավարտը: Նայում է շուրջն ու նկատում, որ Լմփոշը գլուխը ձեռքերին դրած քնել է: Սպասում է, մինչև Քառակուսին նոր ձայնապնակ դնի, ապա մոտենում ու անջատում է նվագարկիչը: Քառակուսին դաշնամուրի աթոռին նստած նայում է ստեղնաշարին: Ճուտոն խաղաթղթերը ձեռքին սպասում է Բկլատին: Բկլատը նայում է Փոսիյոյին, կարծես փորձելով հասկանալ նրա գաղտնիքը, ապա հանգիստ ու դանդաղ խոսում է):

ԲԿԼԱՏ— *Փոսիյո, ասա, ի՞նչ ես թաքցնում։ Ես հո գիտեմ, որ դու մի բան թաքցնում ես։*

ՓՈՍԻՅՈ— *Չգիտեմ։*

ԲԿԼԱՏ— *Բա սա՞ է ապրելու ձևը։ Միշտ սրա պես հերսոտած ու բանից անտեղյակ։ Առանց էս աշխարհից գնալուց առաջ մի ճիշտ բան անե՞լ։ Ինչի՞ ես թաքցնելիքդ թաքցնում, Փոսիյո։*

ՓՈՍԻՅՈ— *Չգիտեմ։ Մոռացել եմ։*

ԲԿԼԱՏ— (Կարծես մի մեծ գաղտնիք իմանալով): *Մոռացե՞լ։* (Դադար): *Դա՞ էր գաղտնիքը, Փոսիյո։ Դա՞ էիր թաքցնում։ Դա՞ է ապրելու ձևը։ Մոռանամ ու վե՞րջ։ Թողնեմ ամեն ինչ կորչի-գնա՞։ Անո՞ւնս մոռանամ, մոռանամ, որ էստեղ եմ, մոռանամ գո՞ւյնս, մոռանամ, որ երբևէ ծնվե՞լ եմ։ Սա՞ է ձևը, Փոսիյո։ Ո՞նց ես սովորում մոռանալ։* (Վերցնում է ձայնապնակն ու նայում վրան): *Մոցարտի՞ց ես սովորում։ Երաժշտությունի՞ց։ Սուտ, ես առավոտից էս երաժշտությունն եմ լսում։ Էս երաժշտությունն ինձ մոռանալ չի սովորեցնում։* (Ձայնապնակը տեղն է դնում): *Սրանից ես ավելի ուժեղ*

եմ հիշում։ Էն, ինչ որ ամբողջ կյանքում ուզել եմ մոռանալ։ Հիշում եմ, թե քանի՞-քանի տեսակ մարդ եմ եղել, քանի՞-քանի տեսակ կյանքեր եմ ապրել։ Հիշում եմ էն բոլոր տարիները, երբ փորձել եմ գտնել ապրելու ձևը, անելիքս։ Էն ժամանակն եմ հիշում, երբ կարծում էի, թե գիտեմ որն է անելիքս՝ ապրել ավետարանով։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Ապշած)։ *Այ քեզ բա՜ն։* (Լմփոշը մի հայացք է նետում Քառակուսուն, որը ոչ ոք չի նկատում)։

ԲԿԼԱՏ— *Հիշում եմ ամբողջ կյանքումս մոռանալու տվածը՝ վայելել կյանքն ու ապրել հաճույքի ավետարանով։ Ջնայած վայելելու համար արդեն ուշ է։ Ավետարանով արդեն չես ապրի, բայց ես գնալուց առաջ գոնե մի ճիշտ բան պիտի անեմ, մի բան, որ ինձ մոռանալ սովորեցնի։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Աստվա՜ծ իմ։*

ԲԿԼԱՏ— *Երանի կարդալ իմանայի՝ մի մեծ գիրք կվերցնեի ու կկարդայի։ Կթաղվեի աշխարհի ամենամեծ գրքի մեջ, կկարդայի ու ամեն ինչ կմոռանայի։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Դու ոչ մի գրքի մեջ էլ չես թաղվի, դու կթաղվես սովորական արկղի մեջ, ճիշտ Ջասփերի ու մեր բոլորի նման։ Իսկ այդ արկղում արդեն հաստատ ամեն ինչ կմոռանաս։*

ԲԿԼԱՏ— (Մոտենում է Քառակուսուն, Լմփոշը դիտում է նրանց)։ *Հերիք եղավ, դու արդեն վաղուց ես ինձ ձեռ առնում։ Ես վաղուց լսում եմ քո ամեն մի ծաղրական խոսքը, բայց ձեն չեմ հանում, որովհետև չեմ ուզում առանց էն էլ կիսամեռ մարդուն վնաս տալ։ Սրանից հետո հետս կխոսես, երբ ես քեզ դիմեմ, և լավ կանես՝ հարգանքով խոսես։ Ես քեզ հրավիրում եմ թուղթ խաղալու, որովհետև ուզում եմ քաղաքավարի լինել։ Կարող ես չխաղալ, թե չես ուզում, բայց դու էլ քաղաքավարի եղիր։ Այսուհետև հետս խոսելուց մարդավարի ի՛նձ կնայես և ոչ թե ուրիշ կողմ, որ ես իմանամ, որ մենք նույն բանի մասին ենք խոսում։ Իմանամ, որ խոսքդ իմ գույնի մասին չի։ Ես հենց հիմա տեսնում եմ, ոնց են աչքերդ ինձ «սևաքամակ» ասում։ Կխեղդեմ, երդվում եմ, կխեղդեմ, եթե մեկը, ով ուզի լինի, հիմա ինձ «սևաքամակ» ասի։ Լսեցի՞ք։* (Դադար)։ *Ես Փոսիյոյի հետ էի խոսում, ոչ թե քեզ։ Քեզ ո՞վ էր ասում առավոտ գիշերով հոգիս պղտորեիր։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Քե՞զ ինչ եղավ, այ մարդ։ Հանաք էր, էլի։*

ԲԿԼԱՏ— *Հերիք եղավ ինձ հետ հանաք անեք։ Ծնվել եմ, չեմ ծնվել՝ էս երկրով մեկ հանաք են անում իմ գույնի, հոտի, գլխի ձևի, տգիտու-*

Բյան, քայլելու ու սատանան գիտի էլ ինչի վրա։ Հերիք եղավ, նե էստեղ հանաքներ չեմ ուզում։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Մի բան էր, ասացի, էլի։ Ամեն մարդ էլ մեկ-մեկ խոսելու կարիք ունի։ Մեկը հենց դու՝ իմ մտած պահից գոնե մի բոպե չես լռել։* (Դադար)։ *Ես իմ մաշկով չեմ հպարտանում։*

ԲԿԼԱՏ— *Բա էլ ինչո՞վ ես հպարտանում։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ես չեմ հպարտանում։*

ԲԿԼԱՏ— *Մի բան ասա հասկանանք։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ես ընդհանրապես ոչ մի բանով չեմ հպարտանում։ Ինձ թվում է, որ չարժե աջ ու ձախ սպառնալիքներ շաղ տալ միայն նրա համար, որ դու սև ես ծնվել ու քո գույնի հանդեպ այդքան զգայուն։*

ԲԿԼԱՏ— *Ասածդ ի՞նչ է։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Բացի այդ ես համարյա երբեք խոսակիցներիս չեմ նայում։ Ես հիշում եմ նրանց տեսքը, այնպես որ նայելու կարիք չունեմ։ Նայելիս ես սկսում եմ դիմացինիս խղճալ ու մի տեսակ անհարմար զգալ։ Եթե ուզում ես իմանալ, ես քո գույնը չէի էլ նկատել։*

ԲԿԼԱՏ— *Զգում եմ, որ ինձ էլ ձեռ չես առնում, բայց թե ասածդ ինչ է՝ չեմ հասկանում։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ասածս այն է, որ ես ինձ կամ ուրիշներին վերաբերող մանրուքներ նկատելու ժամանակ չունեմ։ Մաշկի գույնն այն մանրուքներից է, որ երբեք իմ ուշադրությունը չի գրավել։*

ԲԿԼԱՏ— *Ուզում ես ասել, որ իմ վրա չէի՞ր ծիծաղում։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ես ինձ վրա էի ծիծաղում, ծիծաղում էի լավ ճանաչածս մեկի վրա, որն անհամ մարդ դուրս եկավ։ Եթե ես քո ջղերի վրա ազդում եմ, մի մոռանա, որ դու էլ իմ ջղերին ես ազդում, ինչպես նաև Փոսիյոն ու մնացած բոլորը։ Դոկտոր Սթարքը ջղերիս ազդում է։ Հատակը մաքրող հավաքարարը ջղերիս ազդում է, ես ինքս ջղերիս ազդում եմ, հետո՞ ինչ։ Դրա համար հո ինձ չե՞մ սպանում։ Դու էլ կարիք չունես դրա համար բոլորին ահաբեկելու, չէ՞։*

ԲԿԼԱՏ— *Հաստատ գիտե՞ս, որ սուտ չես ասում։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Սրանից ճիշտ լինել չէր կարող։*

ԲԿԼԱՏ— *Որ էդպես է, կներես, երդվում եմ, փոշմանեցի քեզ սպառնալու համար։*

Լմփոշը ներից գլուխն իջեցնում է ծալած ձեռքերին։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Եթե դեմ չես, էլ աչքերիդ չեմ նայի, թե չէ սկսում եմ մեզանից ամաչել։* (Քիչ անց, մեղմորեն)։ *Միայն կենդանիների աչ-*

քերում կա մարդկանց երազած արժանապատվությունն ու անգորրը, մանավանդ առյուծի ու վագրի պես վայրի գազանների աչքերում։ Մարդկանց աչքերը կառչում են մանրուքներից, իսկ գազանները դրանք չեն էլ նկատում։ Երանի դու իմ ուշադրությունը քո մաշկի գույնին շեղած չլիներիր։ (Վեր է կենում): *Շատերն Աստվածաշունչը լավ գիրք են համարում, գուցե դա՞ է քո փնտրած գիրքը։*

ԲԿԼԱՏ— *Անչափ երախտապարտ եմ. իսկ ի՞նչ է, դրանից մեծ գիրք չկա՞։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Բառարանն էլ փոքր չի։*

ԲԿԼԱՏ— *Աստվածաշնչից մե՞ծ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Երկու-երեք անգամ։*

ԲԿԼԱՏ— *Ուրեմն դա հենց իմ ուզած գիրքն է։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Բայց մեջը բառերից բացի ուրիշ բան չկա։*

ԲԿԼԱՏ— *Ոչինչ, բառերը հենց ճիշտ իմ ուզած բաներն են, աշխարհի բոլոր բառերը։* (Մոտենում է գրադարակին): *Սրանցից ո՞րն է բառարանը։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ամենամեծը։ Ես գնացի, ինքս ինձնից հոգնել եմ ու զզվել։* (Բկլատին): *Քեզնից էլ եմ հոգնել ու զզվել։*

ԲԿԼԱՏ— *Տես, Քառակուսի, հերսոտած մի գնա։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ես հերսոտած չեմ։*

Քառակուսին դուրս է գնում: Բկլատը դարակից վերցնում է բառարանը, բացում ու նայում էջերին:

ԲԿԼԱՏ— *Փոսիյո, լսեցի՞ր դրան։ Տեսա՞ր ինչ ասեց։ Ինքն իրենից հոգնել է ու զզվել, ինձնից էլ հետը։ Երևի նա վատ մարդ չի, Փոսիյո։ Երևի ես եմ բութ, որ ոչ ոքի չեմ հասկանում։ Ես էլ կարծում էի, թե նա գոռոզանում է, ինձ վերևից է նայում։ Դու մի ասի նա բոլորին է էդպես նայում, նույնիսկ ինքն իրեն։ Ասեց, որ գույնս չէր նկատել, և հավատա՝ սուտ չէր ասում։ Ես էլ գիտեի, թե ինձ ատում է, մտքում «սևաքամակ» է ասում, դրա համար ես էլ իրեն էի ատում։ Չէ, հերիք եղավ հարիֆ մնամ, պիտի սովորեմ, ատելությունից բացի ուրիշ բաներ էլ սովորեմ, որ մի բան հասկանամ։ Ես էդ մարդուն իմ ամենավատ թշնամու տեղ էի դրել, իսկ դուրս եկավ, որ նա հեչ էլ թշնամի չի։ Ընկեր չի, բայց թշնամի էլ չի։ Պարզապես շատ է հոգնած ու զզված՝ թշնամի կամ ընկեր լինելու համար։ Է՜, ոնց որ երևում է, դեռ շատ հաց ու պանիր ունեմ ուտելու։ Ոչինչ, էս մեծ գիրքը՝ էս սուրբ բառարանը ձեռքիս, աշխարհիս բոլոր բառերը մեջը, ես իմ նպատակին կհասնեմ։* (Բառարանը դնում է խա-

դասեղանին): *Ճուտո, դու դպրոց ես գնացել, ուզես-չուզես կարդալ կիմանաս, ինձ համար էս բառարանը չե՞ս կարդա։*

ՃՈՒՏՈ— *Ամբո՞ղջը։*

ԲԿԼԱՏ— *Էլի որ՝ կարդա էս սուրբ բառարանի բոլոր բառերը՝ մեկիկ-մեկիկ։ Ես ուտելիքի բկլատ եղել եմ, փողի, շորի, կանանց ու մնացած ամեն ինչի բկլատ, հիմա էլ բառի բկլատ եմ, խելքի բկլատ։ Մի տես ինչ լավ բառեր են էս առաջին էջին, հատիկ-հատիկ, սիրուն։ Ճուտո ջան, լավություն արա, կարդա։*

ՃՈՒՏՈ— *Մի ամիս կտևի։*

ԲԿԼԱՏ— *Ի՞նչ մի ամիս՝ երեք, մեկ էլ տեսար՝ չորս։ Բառարանի հետ անցկացրած երեք-չորս չքնաղ ամիս։ Արի կարդա առաջին բառը, բառերը թղթախաղից լավ են, Ճուտո։ Բառերը մեզ ասում են, ով ենք, ինչ ենք անում, ուր ենք գնում։* (Ճուտոն հավաքում է խաղաթղթերը): *Դե կարդա, այ էս առաջին բառը, էս մեկը, ի՞նչ է։*

ՃՈՒՏՈ— (Կարդում է): *Ա։*

ԲԿԼԱՏ— (Հիացած): *Ա՜։ Վերջապես սկսեցինք։ Ա-ի մասին կարդա, Ա-ն ի՞նչ է նշանակում։*

ՃՈՒՏՈ— (Կարդում է): *Ա։ Ետնալեզվային միջին բարձրացման ձայնավոր։ Այբուբենի առաջին տառը աշխարհի լեզուների մեծ մասում։ Այսուհանդերձ եթովպերենում այն տասներեքերորդն է։*

ԲԿԼԱՏ— *Սպասի, ինչերենո՞ւմ։*

ՃՈՒՏՈ— *Եթովպերենում, երևի էլի լեզու է։*

ԲԿԼԱՏ— *Ի՞նչ լեզու է։*

ՃՈՒՏՈ— *Եթովպերեն, էլի։*

ԲԿԼԱՏ— *Հո էն աֆրիկացու լեզուն չի՞։*

ՃՈՒՏՈ— *Ի՞նչ աֆրիկացու։*

ԲԿԼԱՏ— *Էն լղար, մազոտ երեսով աֆրիկացու։ Փոսիյո, էդ աֆրիկացին ո՞վ էր։*

ՓՈՍԻՅՈ— *Ես ինչ իմանամ։*

ԲԿԼԱՏ— *Բա չե՞ս հիշում, կովից առաջ Մուսոլինին ոնց Աֆրիկայում էդ ոսկրոտի ձեռքից իր երկիրը խլեց։*

ՃՈՒՏՈ— *Որտեղի՞ց հիշեմ։*

ԲԿԼԱՏ— (Լմփոշին ցնցելով): *Լմփոշ, քնա՞ծ ես։*

ԼՄՓՈՇ— (Կարուկ նստելով): *Ի՞նչ է եղել։*

ԲԿԼԱՏ— *Ճուտոն ինձ համար բառարան է կարդում, առաջին բառի վրա ենք։*

ԼՄՓՈՇ— *Լսիր, դու հո... Ես ինձ համար քաղցր քնած, երազում կոկակոլա էի խմում, դու էիր պակաս... Լավ, ասածդ ասա։*

ԲԿԼԱՏ— Ո՞վ էր էն աֆրիկացի ոսկրոտ մարդը, որ Մուսոլինին իր բանակով հարձակվեց ու տունը-տեղը, վագրերն ու երկիրը ձեռից խլեց։

ԼՄՓՈՇ— Ի՞նչ ես դուրս տալիս, ինչ տո՞ւն, ինչ վա՞գր, ինչ երկի՞ր... Ուզում ես ասել Հայլե Սելասի՞ն։

ԲԿԼԱՏ— Հա, հենց ինքը։ Եթովպերենն նրա լեզո՞ւն էր։

ԼՄՓՈՇ— Երևի, հետո՞ ինչ։

ԲԿԼԱՏ— Նա Աֆրիկայում սեամորթների թագավորն էր, ուրեմն էդ եթովպերենը սևերի լեզուն է, չէ՞։

ԼՄՓՈՇ— Ավելի ճիշտ նրանց որոշ մասի, դո՞ւ ինչու ես այդքան հուզվում։

ԲԿԼԱՏ— Ճուտո, Ա-ի մասին նորից կարդա, որ Լմփոշն իմանա, թե ես ինչի եմ հուզվում։

ՃՈՒՏՈ— (Կարդում է)։ Ա։ Ետնալեզվային միջին բարձրացման ձայնավոր։ Այբուբենի առաջին տառը աշխարհի լեզուների մեծ մասում։ Այնուհանդերձ եթովպերենում այն տասներեքերորդն է։

ԲԿԼԱՏ— Լսեցիր, Լմփոշ, դե հիմա ասա, տասներեքերորդն ինչ է նշանակում։

ԲԿԼԱՏ— Լսեցի՞ր, Լմփոշ, դե հիմա ասա, տասներեքերորդն ինչ է նշանակում։

ԲԿԼԱՏ— Բոլորն էլ սնապաշտ են։

ԼՄՓՈՇ— Եթե մարդ սնապաշտ չի, ամեն թիվ էլ դժբախտ է։

ԲԿԼԱՏ— Ո՞նց թե ամեն թիվ, նոր չասացի՞ր դժբախտը տասներեքն է։

ԼՄՓՈՇ— Թող քնեմ, էլի, ես ինձ համար ամռանը դռան սեմին նստած լսում էի։ Թե ոնց են հյուսները տուն շինում, հեռվում ինչ-որ տեղ մեխ խփում, ես էլ, մի շիշ կոկա-կոլա ձեռքիս, կամաց-կամաց խմում էի։ Իսկ դու եկար ու իմ կյանքի լավագույն երազի կեսին սկսեցիր ինձ թափ տալ։

ԲԿԼԱՏ— Կներես, որ քո սիրուն երազը խանգարեցի, Լմփոշ, բայց դու վստա՞հ ես, որ տասներեքը դժբախտ թիվ չի։

ԼՄՓՈՇ— Համոզեցիր, դժբախտ թիվը տասներեքն է, դե հիմա ինձ հանգիստ թող։

ԲԿԼԱՏ— Լավ, լավ, մի հերսոտի։

ԼՄՓՈՇ— (Մոլորեն)։ Քունս փախավ, էդ բառարանը կարդացեք, ես էլ լսեմ։

ԲԿԼԱՏ— Կներես, որ սիրուն երազդ փչացրի, Լմփոշ։

ԼՄՓՈՇ— Անցավ գնաց։ Եթե քունս չխանգարեիր, գուցե ես էդ երազը չհիշեի ու էնպես էլ կորչեր գնար։

ԲԿԼԱՏ— *Հիմա լա՞վ ես։*

ԼՄՓՈՇ— *Էլի որ։*

ԲԿԼԱՏ— *Տասներեքի մասին կպատմե՞ս։*

ԼՄՓՈՇ— *Ինչո՞ւ չէ...*

ԲԿԼԱՏ— *Էդ թիվն ի՞նչ է նշանակում։ Մինչև չիմանամ, մյուս բառերը չենք կարդա։ Ի՞նչ է նշանակում։*

ԼՄՓՈՇ— *Ոչինչ։ Տասներեքը տասներկուսի ու տասնչորսի միջև ընկած թիվն է։*

ԲԿԼԱՏ— *Ուրիշ ոչի՞նչ։*

ԼՄՓՈՇ— *Ոչինչ։*

ԲԿԼԱՏ— *Սնապաշտություն չե՞ս անում։*

ԼՄՓՈՇ— *Ոչ մի դեպքում։ Տասներեքը սովորական մի թիվ է, մյուս թվերից ոչ լավ, ոչ վատ։*

ԲԿԼԱՏ— *Ոչ մեկի՞ց, ոչ երեքի՞ց, ոչ քսանմեկի՞ց, ոչ էլ երեսուներեքի՞ց։*

ԼՄՓՈՇ— *Ոչ էլ երկուսից կամ չորսից, քսաներկուսից կամ քառասունչորսից։*

ԲԿԼԱՏ— *Ուրեմն, եթե եթովպերեն այբուբենում Ա տառն առաջինի փոխարեն տասներեքերորդն է, դա չի՞ նշանակում, որ սեամորթները դժբախտ են։*

ԼՄՓՈՇ— *Իհարկե չի նշանակում։*

ԲԿԼԱՏ— *Տես հա, խոսքիդ հավատում եմ։ Ճուտո, մյուսը կարդա։*

ՃՈՒՏՈ— *Ա-ի մասին էլի կա։*

ԲԿԼԱՏ— *Էլի՞։*

ՃՈՒՏՈ— *Իսկ Ա-ից հետո լիքը բառեր կան, որ ես կյանքում չեմ էլ լսել։*

ԲԿԼԱՏ— *Ի՞նչ բառեր։*

ՃՈՒՏՈ— (Դանդաղ կարդալով)։ *Աբբահայր, աբարբի, աբեթ։ Դու հո չե՞ս ուզում, որ ես բոլոր բառերը հերթով կարդամ։*

ԲԿԼԱՏ— *Ամեն դեպքում մեծ մասը պիտի կարդաս։ Կարող ես աբբահորն ու նման բառերը բաց թողնել։ Աբբահորը չկարդալուց հաստատ ոչ մի վնաս չի լինի։ Ասում ես Ա-ի մասին ուրիշ ի՞նչ կա։*

ՃՈՒՏՈ— (Դանդաղ կարդալով)։ *Ա-ն հանդիսանում է այբուբենի առաջին տառը, որովհետև այն ներկայացնում է մարդկային օրգանների բնականորեն արտաբերած առաջին ձայնավորը։ Այն կազմվում է բերանի հասարակ բացվածքով, առանց պրկման կամ շուրթերի դիրքը և ձևը փոխելու ճիգի։* (Հոգնած ընդհատում է)։

ԼՄՓՈՇ— (Բկլատին)։ *Բան հասկացա՞ր։*

ԲԿԼԱՏ— *Բա ոնց։ Ճիշտ գրքում գրածի պես՝ մարդու առաջին ասելիքն է։ Ճուտո, էլի կարդա։* (Մեղմորեն)։ *Ի՞նչ եղավ, Ճուտո։*

ՃՈՒՏՈ— Չգիտեմ, լավ չեմ զգում։ (Դանդաղ կարդում է)։ Նույն պատճառով Ա տառը հաճախ է հանդես գալիս մանուկների արտասանած այն բառերում, որոնք սովորաբար ամենից էական հասկացություններն են նշանակում՝ կանացի կուրծքը, հորը, մորը։ Օրինակ՝ եբրայերենում Ամ նշանակում է մայր, Աբ՝ հայր։ Խալդերենում, ասորերենում և արաբերենում հայրը կոչվում է Աբբա, եթովպերենում՝ Բապպա, ուելսերենում՝ Բադ, հին հունարենում ու գոթերենում՝ Աթթա, կանտաբրիերենում՝ Այթա, Աֆրիկայի շիլհյան ու մելինդենյան բարբառներում՝ բաբա, իսկ պապա ձևը լայնորեն տարածված է շատ լեզուներում։

ԲԿԼԱՏ— Սա հենց մեր ուղած գիրքն է, Ճուտո։ Դու հա կարդա ու կարդա։ Ա-ի մասին էլի կա՞։

ՃՈՒՏՈ— Կա։ (Կարդում է)։ Այստեղից լատիներեն կանացի կուրծք նշանակող մամմա բառը շատ լեզուներում գործածվում է մայր իմաստով։ Այս ցանկը կարելի է շարունակել, սակայն բերված օրինակները բավական են ապացուցելու, որ Ա-ն մարդու առաջին բնական ձայնավորն է և այսպիսով այբուբենում ըստ արժանվույն գրավում է առաջին տեղը։ Եբրայերենում, ասորերենում, խալդերենում և արաբերենում Ա տառն ունեցել է նաև մեկ, առաջին թվական արժեքը, ինչպես նաև մարմնավորել է միասնության գաղափարը։

ԲԿԼԱՏ— Գրողը տանի։ Հիմա մի քիչ սպասի, Ճուտո, մինչև էդ բոլորը հիշեմ։ (Դադար)։ Եղավ։ Գրքի առաջին բառը պրծանք՝ պապա, մամա։ Մյուսը կարդա։

ՃՈՒՏՈ— Ոչի՞նչ, որ իմ ասած մի քանի բառը բաց թողնեմ։

ԲԿԼԱՏ— Որ մտածում եմ, թե ինչեր ենք կորցնելու, սիրտս մղկտում է... Բայց մյուս կողմից, եթե հիմա որոշ բառեր բաց թողնենք, գիրքը պրծնելուց հետո նորից կարդալիք կմնա ու մենք ապավինելու բան կունենանք։

ԼՄՓՈՇ— (Ճուտոյին նայելով)։ Մենք ամեն դեպքում միշտ էլ ապավինելու բան կունենանք։

ԲԿԼԱՏ— Էդ ո՞րն է՝ աստվա՞ծը։

ԼՄՓՈՇ— Ճիշտն ասած ես նկատի ունեի քնելը, բայց թող քո ասածը լինի՝ մենք միշտ էլ կարող ենք ապավինել աստծուն։

ԲԿԼԱՏ— Լմփոշ, դու հավատացյա՞լ ես։

ԼՄՓՈՇ— Այն էլ ինչպես։

ԲԿԼԱՏ— Աստծու մասին է՞լ ես հավատում։

ԼՄՓՈՇ— Ինչո՞ւ չէ։

ԲԿԼԱՏ— Աստծու մասին ինչի՞ն ես հավատում։

ԼՄՓՈՇ— Ինչ որ ասում են։

ԲԿԼԱՏ— Ի՞նչ են ասում։

ԼՄՓՈՇ— Ասում են, որ նա ամեն մեկիս սիրում է։

ԲԿԼԱՏ— Դրան է՞լ ես հավատում։

ԼՄՓՈՇ— Հավատում եմ։

ԲԿԼԱՏ— Է՞լ ինչ են ասում։

ԼՄՓՈՇ— Ասում են՝ ամեն մեկիս պատահող բաների համար ասված իր պատճառներն ունի։

ԲԿԼԱՏ— (Մտածելով)։ Իսկ դրախտին հել հավատո՞ւմ ես։

ԼՄՓՈՇ— Բավականին։

ԲԿԼԱՏ— Դրախտի ինչի՞ն ես հավատում։

ԼՄՓՈՇ— Ինձ թվում է, թե դրախտը լավ գաղափար է։

ԲԿԼԱՏ— Դու վստա՞հ ես, որ էնտեղ կընկնես։

ԼՄՓՈՇ— Վստահ եմ։ (Դադար։ Ցածրաձայն)։ Արի մյուս բառը լսենք։

ԲԿԼԱՏ— Ճիշտ որ։ Քո դո՞ւրն էլ եկան բառերը, Լմփոշ։

ԼՄՓՈՇ— Իհարկե։

ԲԿԼԱՏ— Հիմա ո՞ր բառն ես կարդալու, Ճուտո։

ՃՈՒՏՈ— Աթոռաթող լինել։

ԲԿԼԱՏ— Վայ, ես էդ բառը մի անգամ լսել եմ, երբ որ Անգլիայի թագավորն ինչ-որ պարուհու հետևից էր ընկել։ Ամեն դեպքում հաճելի է նորից լսել։ Աթոռաթող լինել նշանակում է գործից փախչել, երբ գործդ թագավոր լինելն է։ Գրքո՞ւմ ինչ են ասում։

ՃՈՒՏՈ— Ընդհանուր իմաստով՝ հրաժարական տալ, հետ կանգնել, մերժել։

ԲԿԼԱՏ— Հա, ճիշտ է, ուրիշ բան չի՞ ասում։

ՃՈՒՏՈ— Պաշտոնը թողնել առանց օրինական հրաժարականի կամ պաշտոնատուի համաձայնության։ Նաև՝ ուրանալ արքայական գահը, առանց պատշաճ արարողության։ Բլաքսթոն։

ԲԿԼԱՏ— Է՞դ ով էր։

ՃՈՒՏՈ— Բառը հորինողը։

ԲԿԼԱՏ— Մարդ ինչքան խելոք պիտի լինի էդպիսի մի բառ հնարելու համար։ Է՞լ ինչ կա գրած։

ՃՈՒՏՈ— Պաշտոնաթող լինել նախքան պաշտոնավարության ժամկետի լրանալը։

ԲԿԼԱՏ— Պաշտոնաթող լինել... Համա թե բառ է, հա՜։ Բայց ամեն դեպքում մինչև հիմա եղածներից էդ բառարանի լավագույն բառերը մամ-ան ու պապան են։ Լսո՞ւմ ես, Փոսիյո, տեսա՞ր, ինչ լավ գործ

եմ գտել ինձ ու Ճուտոյի համար՝ ես ձեզնից ոչ մի գաղտնիք չեմ պահում։ Մյուսը կարդա, Ճուտ՛ կ։

ՃՈՒՏՈ— *Աղավաղել։*

ԲԿԼԱՏ— *Ի՞նչ կուզի ասել։*

ՃՈՒՏՈ— (Կարդում է)։ *Որևէ երևույթ ներկայացնել թերի կամ թյուր ձևով, սխալներով վերարտադրել, դեպի վատը փոփոխել, խեղաթյուրել։*

ԲԿԼԱՏ— *Խնդրում եմ էդ մեկն էլի կարդա։ Ոնց որ ինձ դուր եկավ։*

ՃՈՒՏՈ— (Դանդաղ)։ *Որևէ երևույթ ներկայացնել թերի կամ թյուր ձևով, սխալներով վերարտադրել, դեպի վատը փոփոխել, խեղաթյուրել։*

ԲԿԼԱՏ— *Այ, դա հենց էն բանն է, որ մենք էստեղ էլ ոչ մի դեպքում չենք անի... Մինչև հիմա ինչ ասես որ չենք աղավաղել։ Բայց սրանից հետո էլ ոչ մի աղավաղել։ Ամեն ինչ պիտի պարզ ու հասկանալի լինի։ Ամբողջ բառարանը հերթով կկարդանք, չէ՞, Ճուտո։ Մյուս բառն ի՞նչ է։*

ՃՈՒՏՈ— *Ամայանալ։*

ԲԿԼԱՏ— *Ի՞նչ է նշանակում։*

ՃՈՒՏՈ— (Կարդում է)։ *Անմարդաբնակ, անշեն դառնալ, դատարկվել, անբովանդակ, անիմաստ դառնալ, անուշադրության մատնվել, ավերվել։*

ԲԿԼԱՏ— *Իսկը ժամանակն է, որ ես մի երկու նոր բառ սովորեմ, գոնե մի քիչ կրթություն ստանամ, բառապաշար հավաքեմ։ Չէ, դո՛ւ ասա, Ճուտո, ի՞նչ սքանչելի զբաղմունք գտա, հը՞... Ճուտո ջան, երբ մենք էս սենյակն անուշադրության մատնենք՝ հանուն նախաճաշի, դու մեր կարդալիք էջն անպայման կպահես, էնպես որ մեր... հետ գալու համար ի՞նչ լավ բառ կա։*

ՃՈՒՏՈ— *Վերադառնա՞լ։*

ԲԿԼԱՏ— *Հա, էնպես որ մեր... սպասի, վերադառնալուց ավելի համալ բառ չկա՞ր, անուշադրության մատնելու պես սիրուն մի բան։*

ՃՈՒՏՈ— *Չէ, կարծես թե հետ գալու համար միակը վերադառնալն է։ Լմփոշ, հետ գալու տեղն ուրիշ բառ չգիտե՞ս։*

ԼՄՓՈՇ— *Վերածնվելը որոշ կապ ունի հետ գալու հետ, միայն թե՝ ոչ նախաճաշից։*

ԲԿԼԱՏ— *Բա ինչի՞ց։*

ԼՄՓՈՇ— *Այլ կյանքից։ Ոմանք հավատում են, թե ամեն մարդ վերածնվել է մի այլ կյանքից։*

ԲԿԼԱՏ— *Հանաքը դեն։*

ԼՄՓՈՇ— Շատերն են հավատում, թե մենք այդպես անընդհատ գնում-գալիս ենք։

ԲԿԼԱՏ— Ես որտեղի՞ց եմ գալիս։

ԼՄՓՈՇ— Երևի շատ վաղուց՝ Աֆրիկայից։

ԲԿԼԱՏ— Իսկ ո՞ւր եմ գնալու։

ԼՄՓՈՇ— Դժվար է ասել, քանի որ երբ մեզանից մեկնումեկը պատրաստ լինի հետ գալ, թերևս էլ հետ գալու տեղ չմնա։

ԲԿԼԱՏ— Ո՞նց թե չի մնա։

ԼՄՓՈՇ— Եթե երկրի վրա այլևս կյանք չլինի, էլ ո՞ւր պիտի հետ գանք։

ԲԿԼԱՏ— Իսկ ո՞վ ասեց, որ երկրի վրա էլ կյանք չի մնա, որ։

ԼՄՓՈՇ— Շատերն են ասում։ Դու դիտե՞ս, որ մենք միակ մեռնողները չենք, ամբողջ մարդկությունն է մեր օրին։

ԲԿԼԱՏ— Ինչի՞ց պիտի ամբողջ մարդկությունը մեռնի որ։

ԼՄՓՈՇ— Սովից, անտնությունից, ուժասպառվելուց, վախից, կատաղությունից, անձկությունից, վհատվելուց, ջղայնությունից, հոգնելուց, տագնապից։

ԲԿԼԱՏ— Ուզում ես ասել, թե էդ բոլոր բաները մահացո՞ւ են։

ԼՄՓՈՇ— Թերթերում կարդացածս եմ ասում։ Ռադիոյով էլ են նույն բանն ասում։

ԲԿԼԱՏ— Ուրեմն հիմա ամբողջ աշխա՞րհն է մեռնում։

ԼՄՓՈՇ— Ասում են։

ԲԿԼԱՏ— Էհ, դու դա երևի հենց էնպես էս ասում, որ ես ինձ լավ զգամ։ Ինձ որ հարցնես, աշխարհը ոնց որ կար, էդպես էլ կմնա։

ԼՄՓՈՇ— Չէ, չի մնա։

ԲԿԼԱՏ— Չլինի՞ թե դու էդ ախմախ Ադամի ռումբից ես խոսում... գնա մա՜ն արի, մի քնձոոտ Ադամի ռումբը մարդկության հախից չի կապրա գա։

ԼՄՓՈՇ— Գուցեև չի գա, բայց մեծապես դրան կնպաստի։ Դիտե՞ս, որ հիմա հիվանդությունից էլ են զենք սարքել։

ԲԿԼԱՏ— Ոչ մի հիվանդությունից ու ոչ մի ռումբից մարդկությունն աշխարհի երեսից չի ջնջվի։ Եթե մենք պիտի մի օր հետ գանք, ուրեմն հետ գալու տեղ անպայման կլինի։ Մնում է իմանանք, թե էդ հետ գալը ճի՞շտ է, թե չէ։

ԼՄՓՈՇ— Շատ մարդիկ են հավատացել, թե հետ կգան։ (Դադար)։ Ինձ-յած, իմ կարծիքով, նախաճաշից հետ գալու համար լավագույն բառն, այնուամենայնիվ, վերադառնալն է։

ԲԿԼԱՏ— Էդ մի բառը ես վաղուց գիտեմ, բայց ոչինչ, կուտվի։ Ճուտիկ, երբ որ մենք էս սենյակն անուշադրության մատնենք, դու բառա-

բանի տեղն անպայման պահի, որ նախաճաշից վերադառնալուց հետո կարողանանք նույն տեղից սկսել։

ՃՈՒՏՈ— *Եղավ։*

ԲԿԼԱՏ— *Դե շուտ մյուս բառը կարդա, թե չէ անհամբերությունից կտրաքվեմ։*

ՃՈՒՏՈ— (Կարդում է): *Անհողդողդ։*

ԲԿԼԱՏ— *Ճուտո, քո էդ բառերով պարզապես քեֆս բերում ես... էլ չեմ ասում, որ մենք դեռ մի լիքը բառարան ունենք։* (Հանկարծ): *Փոսիյո, էդ ի՞նչ ես էդտեղ քուջուջ անում, քո երաժշտությունն ամենավերեվինն է։ Թե մեր բառերին չես դիմանում, խնդրեմ, միացրու։*

ՓՈՍԻՅՈ— *Ես բառերը հավանում եմ, պարզապես ուրիշ երաժշտություն էի փնտրում։*

ԲԿԼԱՏ— *Ցավդ տանեմ, Փոսիյո, միացրու, թող բառերի հետ նոր երաժշտություն լսենք։ Ուր հասա՞նք, ան-ի՞նչ՝ կարդա, Ճուտ։*

ՃՈՒՏՈ— (Կարդում է): *Անհողդողդ։ Աներեր, կայուն, հաստատուն, անխախտ, դիմացկուն, տոկուն, ամուր։*

ԲԿԼԱՏ— *Ուռա՜, ես արդեն իմացա ապրելու ձևը, Փոսիյո։ Ես ու Ճուտոն եղած-չեղածի լավագույնն ենք ձեռք գցել՝ բառերը։ Հիմա մենք բառեր ունենք, ոչ թե հենց էնպես բառեր, այլ՝ շիտակ բառեր, իրենց խոսքի տեր բառեր։*

Մտնում է դոկտոր Սթարքը, հոգնած, դանդաղաշարժ, մեղմածայն, կարմիր դեմքով մի տղամարդ։ Նրան ուղեկցում է ցերեկային բուժքույրը՝ տարեց մի կին։ Բկլատը լռում է։ Բժիշկը գլխով բարևում է բոլորին ու սկսում զննել ձեռքի քարտերից մեկը, ապա մոտենում է Փոսիյոյին։

ՍԹԱՐՔ— *Ինչպե՞ս ես այս առավոտ, Փոսիյո։*

ՓՈՍԻՅՈ— *Շնորհակալություն, շատ լավ։*

ՍԹԱՐՔ— *Լա՞վ ես քնել։*

ՓՈՍԻՅՈ— *Քիչ-միչ։*

ՍԹԱՐՔ— *Ուժեղ ցավեր եղե՞լ են։*

ՓՈՍԻՅՈ— *Շատ չէ։*

ՍԹԱՐՔ— (Քրոջը): *Շարունակել նույն բուժումը։* (Մոտենում է Լմփոշին): *Դո՞ւ ինչպես ես, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— (Ասես հավասարին դիմելով): *Բանից բեխարար, բայց սոված։*

ՍԹԱՐՔ— (Փորձելով ժպտալ): *Ես ու դու իրար հետ լավ յոլա կգնայինք՝ ես էլ համարյա երբեք քաղցած չեմ լինում։* (Քրոջը): *Նույնը։* (Մոտենում է Բկլատին): *Ինչպե՞ս ես քեզ զգում այս առավոտ։*

ԲԿԼԱՏ— *Լավ։*

ՍԹԱՐՔ— *Լա՞վ ես քնել։*

ԲԿԼԱՏ— *Երկու օրվա մեջ էս գիշեր քնել եմ։*

ՍԹԱՐՔ— *Չե՞ս արթնացել։*

ԲԿԼԱՏ— *Երկու-երեք անգամ, բայց տեղն ու տեղն էլի քնել եմ։*

ՍԹԱՐՔ— *Արթնանալուց ցավ չե՞ս զգացել։*

ԲԿԼԱՏ— *Արդեն սովորական դարձածից ոչ ավել։*

ՍԹԱՐՔ— *Վախենո՞ւմ ես։*

ԲԿԼԱՏ— (Ամաչելով)։ *Մի քիչ։*

ՍԹԱՐՔ— *Լավ է։*

ԲԿԼԱՏ— *Վախենալը լա՞վ է, բժիշկ։*

ՍԹԱՐՔ— *Դա ինձ օգնում է քեզ համար ճիշտ բուժում ընտրել։* (Ինչ-որ բան է գրում առանձին թղթի վրա, հանձնում Բոչը ու դառնում Ճուտոյին)։

ԲԿԼԱՏ— *Բժիշկ...*

ՍԹԱՐՔ— (Հերթական թարտը զննելով)։ *Այո՞։*

ԲԿԼԱՏ— (Համարյա կակազելով)։ *Ի-ինչքան կտևի...*

ՍԹԱՐՔ— *Ելնելով մինչև այժմ իմ իմացածից, ես կասեի, որ քո վիճակը վատ չի։*

ԲԿԼԱՏ— (Խաղաղված)։ *Շնորհակալություն, բժիշկ։*

ՍԹԱՐՔ— (Բկլատին նայելով)։ *Աշխատիր հաճելի ժամանց ունենալ։ Շատ մի գրգռվիր, տագնապը ցանկացած հիվանդությունից ավելի վատ է սպանում։*

ԲԿԼԱՏ— (Ցածրաձայն)։ *Այո, սըր։*

ՍԹԱՐՔ— (Ճուտոյին)։ *Ինչպե՞ս ես, Ճուտո։*

ՃՈՒՏՈ— *Երևի լավ։*

ՍԹԱՐՔ— *Անկողնուց դժվարությա՞մբ բարձրացար։*

ՃՈՒՏՈ— *Այո, սըր։*

ՍԹԱՐՔ— *Գիշերը լա՞վ ես քնել։*

ՃՈՒՏՈ— *Ոչ, սըր։*

ՍԹԱՐՔ— (Քարտին նայելով)։ *Ընդհանրապես քնե՞լ ես։*

ՃՈՒՏՈ— *Մի քիչ... երևի...*

ՍԹԱՐՔ— *Ինչո՞ւ քրոջը չես կանչել։*

ՃՈՒՏՈ— (Դանդաղ)։ *Չգիտեմ։ Երևի վախեցել էի։ Ինձ թվաց, որ եթե քնաբեր խմեմ, էլ չեմ զարթնի։ Վերջերս վատ երազներ եմ տեսնում՝ հետևիցս ինչ-որ գազաններ են ընկնում։* (Լռություն)։

ՍԹԱՐՔ— (Քրոջը)։ *Ես կխնդրեի ստուգել դոկտոր Բոհրնը դեռ բաժնո՞ւմ է, թե ոչ։* (Քույրը դուրս է գալիս։ Բժիշկը նկատում է բառարանը)։ *Բառարա՞ն եք կարդում։*

ԲԿԼԱՏ— *Առաջինից մինչև վերջին բառը։*

ՍԹԱՐՔ— *Քանի՞ բառ եք կարդացել։*

ԲԿԼԱՏ— *Ճուտոն արդեն ինձ համար մի հինգ-վեց հատ կարդացել է։ Համ կարդում ենք, համ էլ բառերի մասին խոսում։*

ՍԹԱՐՔ— *Հավանո՞ւմ եք։*

ԲԿԼԱՏ— *Սքանչելի զբաղմունք է։ Բառերը շատ սիրուն են, եթե սկսում ես նրանց իմաստը հասկանալ։*

ՍԹԱՐՔ— (Ճուտոյին)։ *Դո՞ւ ինչ կասես։*

ՃՈՒՏՈ— *Ի՞նչ ասեմ, Բկլատն ինձ խնդրեց, որ իր համար բառարան կարդամ։*

ՍԹԱՐՔ— *Բկլա՞տ։* (Բկլատին)։ *Ո՞վ է քեզ այդ անունը տվել։*

ԲԿԼԱՏ— *Ինքս եմ դրել, բժիշկ։*

ՍԹԱՐՔ— *Վաղո՞ւց, թե վերջերս։*

ԲԿԼԱՏ— *Շատ վաղուց։ Ես էն գլխից մի՛շտ բկլատ եմ եղել։*

ՍԹԱՐՔ— *Լավ անուն է... ցանկացած մարդու համար։* (Ճուտոյին)։ *Դոկտոր Բոհրենն ու ես թերևս փորձենք մի քիչ թեթևացնել քո վիճակը, եթե դեմ չես։*

Լռություն։

ՃՈՒՏՈ— *Բժիշկ, ես գազաններից եմ վախենում։*

ՍԹԱՐՔ— *Գիտեմ, իհարկե։ Եթե չես ուզում՝ կարող ենք ամեն ինչ թողնել ինչպես որ կա։*

ՃՈՒՏՈ— (Դանդաղ)։ *Հնարավո՞ր է գոնե մի ամիս սրա պես թողնել։*

ՍԹԱՐՔ— *Վախենամ քեզ լավ չես զգա։*

ՃՈՒՏՈ— *Իսկ ինչքա՞ն ժամանակ է պետք վիճակս թեթևացնելու համար։*

ՍԹԱՐՔ— *Եթե ամեն ինչ լավ ընթանա, մի երկու ժամ, ամենաշատը՝ երեք։*

ՃՈՒՏՈ— *Իսկ եթե ո՞չ։*

ՍԹԱՐՔ— *Եթե ոչ... Երևի ինքդ գիտես, որ կարող է բախտներս չբերել։ Գուցե չփորձե՞նք։*

ՃՈՒՏՈ— *Այո, սըր։*

Մտնում են բուժքույրն ու դոկտոր Բոհրենը՝ կտրուկ ու արագաշարժ մի երիտասարդ։ Դոկտոր Սթարքը նրան է հանձնում քարտը։ Վերջինս որոշ ժամանակ զննում է այն։

ՍԹԱՐՔ— *Ի՞նչ եք կարծում։*

ԲՈՀՐԵՆ— *Ես կփորձեի։* (Ճուտոյին)։ *Ի՞նչ կասես, Ճուտո։ Վերջին խոսքը*

քոնն է։ Դու մեզ շատ օգնած կլինեիր, եթե որոշումդ հիմա ընդունեիր։ (Նայում է ձեռքի ժամացույցին):

Լռություն:

ՃՈՒՏՈ— (Բկլատին): *Չգիտեմ ինչ ասեմ։ Ես երևի կուզենայի էլի կարդալ բառարանը։ Ամեն դեպքում գոնե որոշ մասը կարդալ։* (Դադար): *Ի՞նչ ասեմ։*

Երկար լռություն:

ԲԿԼԱՏ— (Ցածրաձայն): *Ճուտո, գուցե համաձայնվես, հը՞։* (Նայում է մի բժշկին, հետո մյուսին): *Գուցե լավ կլինի թողնես, որ բժիշկները վիճակդ մի քիչ թեթևացնեն։ Ախր մենք դեռ պիտի բառարան կարդանք, չէ՞... Արի փորձի, հը՞։*

ՃՈՒՏՈ— (Երկար լռությունից հետո, բժշկին): *Երևի փորձեմ։* (Ուզում է տեղից վեր կենալ: Քույրը դուրս է գալիս):

ՍԹԱՐՔ— *Մի վեր կենա, միևնույն է, ոտքով գնալու համար հեռու է։* (Փոսիյոյին, մինչ քույրը ներս է գլորում պատգարակը): *Փոսիյո, մի բան դիր մի քիչ լսենք։*

ԲԿԼԱՏ— (Օգնելով Ճուտոյին պառկել պատգարակին): *Իսկը որ, Փոսիյո, մի երաժշտություն դիր, որ հենց բժիշկները Ճուտոյին կարգի բերեն, քո երաժշտության տակ էլի միասին բառեր կարդանք։*

Ճուտոյին օգնում են պառկել, Փոսիյոն ասեղն իջեցնում է սկավառակին: Զայնագրությունը Խաչատրյանի «Գիմակահանդես» սյուիտի վալսն է: Ներս է մտնում Քառակուսին ու, Լմփոշի հետ Բկլատի հետևում կանգնած, նայում է Ճուտոյին:

ԲԿԼԱՏ— *Ես էլ կուզեի գալ, որ Ճուտոյի կողքին մնամ։*

ՍԹԱՐՔ— *Ավելի լավ է այստեղ մնա՝ ու քիթդ չկախես։*

ԲԿԼԱՏ— (Համարյա խլացնելով երաժշտությունը): *Ճուտո, լսո՞ւմ ես, հանգիստ գնա՝ թող բժիշկները քեզ կարգի բերեն և իսկույն հետ արի, իմացա՞ր։ Ես էստեղ բառարանի հետ քեզ եմ սպասում։ Ո՞նց ենք միասին ամբողջ գիրքը կարդալու... Հիշո՞ւմ ես, չէ՞, ոնց են տարբեր մարդիկ բոլորը մամա ու պապա ասում։ Գնա ու շուտ արի, ես էստեղ նստած, բառարանը դեմս դրած քեզ եմ սպասում։ Արի, որ մեր կիսատ թողած տեղից էլի սկսենք բառեր կարդալ։* (Քույրն ու բժիշկները պատգարակը դուրս են գլորում): *Հետ կգաս, լսո՞ւմ ես, Ճուտո, անպայման հետ կգաս։ Ուղիղ էստեղ կգաս։*

Վարագույր

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մայրամուտ: Սենյակը համարյա մութ է, եթե չհաշվենք օվկիանոսի մեջ սուզվող արևի կարմրավուն փայլը, որը սակայն չի ջերմացնում ու երկար չի տևում: Մարդիկ սովորականից փոքր են թվում ու ավելի ճնշված, թերևս նրա համար, որ իրենցից երկար ստվերներ են գցում: Բոլորը տարօրինակ ու անբացատրելի տեսք ունեն. ասես առաջին անգամ տեսնելիս լինենք նրանց: Ամբողջ սենյակը մի տեսակ անհույս սառնությամբ է պարուրված: Մուտալուտ մանվան պաղ շունչը համարյա շոշափելի է դարձել: Չնայած աչք ծակող հարդարանքին, սենյակը կյանքի վերջին ժամերն անցկացնելու համար նախատեսված անիրական մի վայրի տրամադրություն է թողնում:

Փոսիյոն նվազարկիչի առջև նստած իր սիրած երաժշտությունն է լսում: Լմփոշը սեղանի մոտ նստած կոմիքս է թերթում: Քառակուսին հանդարտ հետ ու առաջ է անում լուսամուտի մոտ: Նա մերթընդմերթ կանգ է առնում, դուրս նայում և կամ զարմացած հայացք նետում նստածներից մեկին:

Բկլատը, սեղանի առջև նստած, սպասումից ակնհայտորեն հեղվելով, նայում է բաց բառարանի բառերին, որոնք չի կարող կարդալ: Նա քթի տակ ինչ-որ բաներ էմբրմրթում, ամենայն հավանականությամբ «մամա, պապա»: Ապա պարզած աջ ձեռքի ափը դանդաղ տարուբերում է գրքի վրա, այդ շարժումից ակնհայտորեն վերազտնելով իր սովորական տրամադրությունը:

ԲԿԼԱՏ— *Մի էս կողմ նայի, Լմփոշ։ Նայի։* Նորից է ձեռքը շարժում): *Դե ասա, ո՞վ է էսպես անում։*

ԼՄՓՈՇ— *Էլի արա։*

ԲԿԼԱՏ— *Լավ նայի։* (Նորից է անում): *Ո՞ւմ ես տեսել էսպես անելուց։*

ԼՄՓՈՇ— *Դժվար թե որևէ մեկին տեսած լինեմ նման բան անելիս։*

ԲԿԼԱՏ— *Հռոմի պապը, Լմփոշ։ Վերջին նորությունների մեջ եմ տեսել։*

ԼՄՓՈՇ— *Ճի՞շտ։*

ԲԿԼԱՏ— *Հորս արև, հենց էսպես։* (Հանդիսավոր կերպով ցույց է տալիս): *Ինչի՞ է էդպես անում։ Ինչքան պապին տեսել եմ, միշտ էդ բանն է անում։ Ի՞նչ է ուզում ասել։*

ԼՄՓՈՇ— *Երևի օրհնության պես բան է։*

ԲԿԼԱՏ— *Հա, երևի։ Գիտե՞ս, էդ շարժումը շատ լավ զգացում է տալիս։ Էդ ո՞նց է որ բոլորը չեն անում։*

ԼՄՓՈՇ— *Բոլորը հո Հռոմի պապ չե՞ն։*

ԲԿԼԱՏ— *Ես ինձ շատ լավ եմ զգում էդպես անելուց, գիտե՞ս։* (Նորից

է կրկնում շարժումն ու ծիծաղում)։ Պապը դրա նման ուրիշ ի՞նչ է անում։

ԼՄՓՈՇ— Պապը նաև աղոթում է՝ ես մի անգամ ռադիոյով եմ լսել, երեսունինը թվին, կռվից առաջ։ Լատիներեն ինչ-որ բաներ էր ասում։

ԲԿԼԱՏ— Ճուտոն կարծեմ էս առավոտ լատիներենի մասին ինչ-որ բան կարդաց։ Լատիներենն ի՞նչ է։

ԼՄՓՈՇ— Մեռած լեզու։

ԲԿԼԱՏ— Հանաքը դեն, Լմփոշ, դու մեռած լեզվով խոսե՞լ գիտես։

ԼՄՓՈՇ— Չէ մի չէ... Այդ լեզվով ոչ ոք խոսել չգիտի, էդպես մարդ չի մնացել, բայց ոմանք լատիներեն գրել ու կարդալ գիտեն։

ԲԿԼԱՏ— Եթե մարդ չկա, որ հետը խոսես, պապն էլ ո՞ւմ հետ է խոսում։ Չլինի թե աստծու հետ, հը՞։

ԼՄՓՈՇ— Ինձ թվում է՝ այո։ Ամեն դեպքում ասում են՝ հոյակապ լեզու է։

ԲԿԼԱՏ— (Եռազկոտ)։ Էլի որ... Պիտի որ հրաշալի լեզու լինի, եթե դրանով պապն է խոսում։ Կյանքում էդ լեզվի մասին չէի լսել։ Բայց պապին էս բանն անելիս տեսել եմ։ (Կրկնում է ձեռքի շարժումը)։ Հազիվ եմ դիմանում մինչև Ճուտոն գա ու էդ բոլոր բաների մասին կարդանք։ (Դադար)։ Պապի պես մեծ մարդն աղոթելուն հավատում է։ Իսկ դո՞ւ։

ԼՄՓՈՇ— Ինձ թվում է, աղոթելն իսկի բան չանելուց լավ է, բայց ոչ ավելի։

ԲԿԼԱՏ— Բան չանելուց լավ, բայց՝ ոչ ավելի։ (Նորից է կրկնում ձեռքի շարժումը)։ Ճիշտ ցավոտ տեղին կպար, համա թե էդ տեղն էնքան մեծ է, որ ոնց էլ խփեիր, կկպներ։ Իհարկե աղոթելը չաղոթելուց լավ է, բայց ոչ շատ լավ։ Հռոմի պապն ինձանից լավն է, բայց ոչ շատ, չէ՞։

ԼՄՓՈՇ— Ինձ այդպես է թվում։

ԲԿԼԱՏ— Քեզ միշտ ամեն ինչ թվում է։ «Ինձ էս է թվում, ինձ էն է թվում...» Ինձ թվում է, որ մենք բոլորս էստեղ ենք ընկել, որովհետև ինձ թվում է, որ ինձ թվում է։ (Նորից է կապկում պապի շարժումն ու պոռթկում)։ Լսիր, ես քո պես մարդ դեռ չեմ տեսել։ (Հանկարծ)։ Ես քեզ լսելուց սոված մնում եմ։

ԼՄՓՈՇ— Ինչո՞ւ հենց սոված մնում։

ԲԿԼԱՏ— Որովհետև ինձ թվում է, որ թվում է... քու էդ ձևերից սիրտս խառնում է ու ժամանակից շուտ մեռնելս գալիս։ Սկսում եմ մտածել, որ իմ քնձռոտ կյանքն իսկի իմն էլ չի։ Ինձ թվում է, որ թվում է։ Ո՞րն էի ես, ո՞ւր՝ ես չէի, ո՞ւր եմ ես հիմա, ո՞ւր՝ չեմ։ (Կարճ լռություն)։ Դե պատասխանի, Լմփոշ։

ԼՄՓՈՇ— Գլուխս տարար։ Հերիք չի էս առավոտ իմ լավագույն երազը փչացրիր, հիմա էլ իրար վրա տխմար հարցեր ես տալիս։

Լռություն։

ԲԿԼԱՏ— Ուզում ես ասել. էն կոկա-կոլայի երա՞զը։

ԼՄՓՈՇ— Հա, հենց կոկա-կոլայի։ Երևի ժամանակին ես մի անմահական կոկա-կոլա եմ խմել, ոչինչ թվացել է, թե երբեք չեմ մեռնի ու անգետ չեմ մնա... ու հիմա, երբ մեռնելու ժամանակս հասել է, ես նույն անգետն եմ, ավելին էլ չի լինում, ու միայն էդ չքնաղ պահն է մնացել հիշելու արժանի...

ԲԿԼԱՏ— Ինձանից էլ հո անգետ չե՞ս։

ԼՄՓՈՇ— Հարիֆ եմ, բա ի՞նչ եմ... Ուրիշ էլ ո՞ւմ ես տեսել, որ հասնի իր կյանքի ավարտին, տարված կոկա-կոլայի մասին իր միակ հաճելի հիշողությամբ։

ԲԿԼԱՏ— Կոկա-կոլայի եղա՞ծն ինչ է։ Ուզո՞ւմ ես հենց հիմա ներքևի սրահի ավտոմատից քեզ համար մի շիշ բերեմ։

ԼՄՓՈՇ— Պետք չի, ես այսօր արդեն մի շիշ խմել եմ։ Նույնը չի։ Այսինքն կոկա-կոլան երևի նույնն է, ես եմ ուրիշ։ (Դադար)։ Այ, երազիս մեջ ես նույնն էի՝ լսում էի, թե ոնց են հյուսները մեխ խփում՝ կես մղոն այն կողմ տուն շինում։ Իսկ ես դռան սեմին նստած ինձ համար շնչում ու ոչնչի մասին չէի մտածում։ Պարզապես այնտեղ էի։

ԲԿԼԱՏ— Քանի՞ տարեկան էիր։

ԼՄՓՈՇ— (Հստակ)։ Մի օրական էի, այդ մի օրվա չափ։ Հավերժ էի՝ առաջնային։ Հիմա էլ առաջնային չեմ։

ԲԿԼԱՏ— Իսկ ո՞վ է առաջնային։

ԼՄՓՈՇ— Օ՜, աշխարհով մեկ ցրված մի երկու հարյուր միլիոն երեխա, որոնք արևոտ պայծառ օր են վայելում, ու ես ինչ ասես կտայի, որ նրանք արևից չզրկվեն։

ԲԿԼԱՏ— (Ապշած)։ Ես էլ։

ԼՄՓՈՇ— Լսիր, Բկլատ, դու ուզում ես, չէ՞, որ Ճուտոն հետ գա։

ԲԿԼԱՏ— (Ցածրաձայն)։ Դու հո շատ լավ գիտես, որ ուզում եմ, Լմփոշ։ Դու շատ լավ գիտես, որ ես ինչքան վատ զգամ, էնքան շատ եմ դիմանում, պապի պես ձեռքս շարժելով ու բան չհասկանալով։ Տեսնում ես, որ էստեղ նստած, կարդալ չիմանալով բառարան եմ նայում և ամեն րոպե Ճուտոն է մտքիս, թեև դեսից-դենից խոսում եմ, նույնիսկ՝ ծիծաղում։ Ես ի՞նչ իրավունք ունեմ ծիծաղելու, ինչի՞ եմ ծիծաղում, հը՞ Լմփոշ, ախր հեչ ծիծաղելու ժամանակը չի։

ԼՄՓՈՇ— *Որովհետև տրամադրությունդ լավ է։*

ԲԿԼԱՏ— *Չէ, մեծ մասամբ բանի պետք չի, Լմփոշ։ Մենակ թե պապի պես անելուց, ոնց որ հիմա* (ցույց է տալիս), *լավ եմ զգում։ Երևի նրա համար, որ ինքը մեծ մարդ է, իսկ ես պուճուր, բայց նույն բանն եմ անում։ Հռոմի պապերը միշտ երկար են ապրում, բայց վերջում, ուզեն-չուզեն պիտի հոգիներն ավանդեն՝ ճիշտ նույն ձևով, ոնց որ աշխարհի ամենից ողորմելի մարդը, ու էդ մտքից սիրտս հովանում է։ Դրանից է, որ յոլա եմ գնում ու մեկ-մեկ էլ ծիծաղում, չնայած գիտեմ, որ ճիշտը դա չի։*

ԼՄՓՈՇ— *Առանձնապես սխալ էլ չի։ Ինչ որ է, եթե ուզում ես, որ Ճուտոն հետ գա, լավ կանես նրա համար աղոթես։*

ԲԿԼԱՏ— *Հա, կաղոթեմ, ճիշտ է, սպասիր, ո՞նց էր...*

ԼՄՓՈՇ— (Սգնելով)։ *Հայր մեր...*

ԲԿԼԱՏ— *Չէ, չէ, էդ Ճուտոյի աղոթքը չի։ Ես պիտի նրա էս առավոտ կարդացած մամայի ու պապայի բառերը հիշեմ։* (Փորձելով հիշել)։ *Պապա* (վերև է նայում, ասես աղոթելով), *օգնիր սառը սեղանի վրա մենակ քնած Ճուտիկին. օգնիր, որ նա կռվում հաղթող դուրս գա, օդ ու լույս տուր նրան։* (Կրկնում է Հռոմի պապի շարժումը, ապա դառնում Լմփոշին)։ *Լսեցի՞ր, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Լսեցի, մի քիչ էլ աղոթիր։*

ԲԿԼԱՏ— *Մամա, թող Ճուտոն անհողդողդ մնա, թող աներեր, կայուն, հաստատուն, անխախտ, դիմացկուն, տոկուն, ամուր լինի։ Թեթևացրու նրա վիճակը... աստվա՜ծ, ինչ լա՜վ է, որ գոնե ես ամուր եմ, փա՜ռք քեզ, աստված։*

ԼՄՓՈՇ— *Լավ, լավ, մի ընդհատիր։*

ԲԿԼԱՏ— *Չէ, Լմփոշ, հանկարծ մտքովս անցավ՝ հետաքրքիր է, էդ ո՞նց է լինում, ո՞նց մարդ չի տեսնում իր ունեցած-չունեցածը, մինչև ամեն ինչ կորցնելու դռանը չկանգնի։*

ԼՄՓՈՇ— *Հասկացա, ուզում ես ասել, թե դու անհողդողդ ես։ Քիչ առաջ կարծեմ Ճուտոյի համար էիր աղոթում։*

ԲԿԼԱՏ— (Անկեղծորեն)։ *Ճիշտ է։ Ես պիտի կարողանամ ինքս ինձ մոռանալ, որ խեղճ Ճուտոյի համար լավ աղոթեմ։* (Վերև է նայում, ասես աղոթելով)։ *Մամա ու պապա, միասին, վերադարձրեք ինձ իմ ընկերոջը, որ մենք մեզ մնացած ժամանակում հասցնենք կարդալ էս գիրքն ու սովորենք գնալու ձևը։* (Լռում է և՝ ասես ամոթխած, դանդաղ գլուխը կախում)։

Քառակուսին նրան է մոտենում, Փոսիյոն դիտում է։ Պարզ լսվում է երաժշտությունը։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ի՞նչ է եղել։*

ԲԿԼԱՏ— (Շուտ է գալիս ու ճանգիստ պատասխանում)։ *Ես զվարճանում էի, Քառակուսի, իսկ հիմա ամաչում եմ։ Հենց հիմա Ճուտոն կռիվ է անում մի երկու բոպե ավել ապրելու համար, իսկ ես էստեղ հանգիստ յոլա եմ գնում, ոնց որ առողջ մարդ լինեմ։ Երևի ես ինձ հեչ չեմ կարողանում զսպել։ Կյանքումս դեռ էնքան վատ չեմ զգացել, ոնց որ հիմա, ու խնդրեմ՝ զվարճանում եմ։* (Հանկարծ)։ *Բա սա՞ է ապրելու ձևը, Փոսիյո։ Ինձ ի՞նչ է եղել։*

ՓՈՍԻՅՈ— *Ի՞նչ։*

ԲԿԼԱՏ— *Ես միշտ կարծում էի, թե իմ դժբախտությունն ու ցավը սև լինելն է, պարզվեց, որ սևությունը կապ չունի։ Ինչքան ասես լավ մարդ կա սպիտակ, կարմիր կամ ուրիշ գույնի։ Դու մի ասի՝ մաշկի գույնը ոչ ինձ, ոչ էլ ուրիշներին ոչինչ չի արել։ Ինձ ուրիշ բան է պատահել՝ ինչ-որ մեկն ինձ ձեռ է առնում, ինչ-որ մեկը ստիպում է հաշտվել, զավզակություն անել էս տխուր տեղում, սրա պես ժամանակ։ Ո՞վ է, ո՞վ։*

ՓՈՍԻՅՈ— *Ո՞վ։*

ԲԿԼԱՏ— *Երանի թե իմանայի ով է ինձ էս օրը գցել, ով ու ինչի։ Ընկերոջս համար մարդավարի աղոթելու փոխարեն աղոթում եմ էնպես, կարծես ամեն ինչի վրա թքած ունեմ՝ ընկերության, լավության։ Գլուխ եմ գովում իմ ունեցած էն բաներով, որ ուրիշները չունեն։ Հերիք եղավ ինչ-որ մեկը գլխիս տիրություն անի, էսօրվանից ես եմ էս սև մարդու տերը, և հրամայում եմ, որ հենց հիմա՝ էս բոպեիս ծունկի գա ու մարդավարի աղոթի Ճուտոյի համար։* (Ծունկի է իջնում սեղանի մոտ)։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ճուտոյին բան չի լինի։*

ԲԿԼԱՏ— (Անկեղծորեն)։ *Ինչ լավ արիր, Քառակուսի, որ էդ ասեցիր։ Իհարկե, նրան բան չի լինի, ուրեմն ինձ էլ բան չի լինի։ Ես ուրիշ բան էլ կիմանամ, ընկերության էն թունդ գաղտնիքը, որ բոլորն ուզում են գտնել, ու շնորհակալություն կասեմ աստծուն վերջին բոպեին ինձ էդ գաղտնիքը բացելու համար։ Ես էդ գաղտնիքով ընկերությունը մնացած ամեն ինչից խոր ու լավ կհասկանամ ու էլ չեմ ատի ու ինձ չեմ կոտորի, որ մուռս հանեմ։ Ումի՞ց հանեմ, մարդկանցի՞ց։ Մեկը լիներ՝ մարդկանց համար աղոթեր... Ամեն մարդ էլ դրա կարիքն ունի, նույնիսկ էսպես անող պապը* (կրկնում է պապի շարժումն առանց ճաճույք ստանալու)։ *Պապի հալը իսկի մերից լավ չի՝ ամբողջ եկեղեցին վզին։ Հիմիկվանից իմ տերը ես եմ, ուրիշ*

ոչ ոք։ Ինչ որ տերն ասիլ էն էլ կանեմ. հիմա պսում է՝ Ճուտոյի համար աղոթի։ (Մտնում է բուժքույրը, սպիրտով լցված բաժակի մեջ դրված ջերմաչափեր բերելով)։ *Քույր ջան, ես հիմա պիտի Ճուտոյի համար աղոթեմ, բայց մինչև էդ ասա՝ լա՞վ է։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Հանգամանքների ներածին չափով։*

ԼՄՓՈՇ— *Ուզում ես ասել՝ մեռնո՞ւմ է։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— (Լմփոշի բերանը ջերմաչափ դնելով)։ *Կարիք չկա Ճուտոյի վիճակի շուրջն իրարանցում ստեղծել։ Նա լավ բժիշկների ձեռքում է, և եթե անգամ նվազագույն հնարավորություն լինի, դոկտոր Բոհընը նրան կփրկի։* (Ջերմաչափեր է դնում Փոսիյոյի, Քառակուսու ու Բկլատի բերանները)։

ԼՄՓՈՇ— *Առանց Բոհընի էլ նա մի ամբողջ ամիս կապրեր։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Ցարժե ջերմաչափը բերանում խոսել։ Կարող եք մի երկու րոպե դիմանալ, մինչև ձեր ջերմությունը չափեմ։* (Հերթով բրոնում է բոլորի դաստակներն ու նայում ժամացույցին, ապա հանում է ջերմաչափերը, զննում և գրառումներ անում ամեն մեկի քարտում, սկսելով Լմփոշից)։

ԼՄՓՈՇ— *Ի՞նչ եք կարծում, Ճուտոյի համար հույս կա՞։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Հանգստացիր, Լմփոշ, ես չեմ ասել, թե հույս չկա։*

ԼՄՓՈՇ— (Բկլատին)։ *Թե աղոթելու ես, լավ կանես սկսես ու կարգին աղոթես։*

Բկլատը փորձում է ինչ-որ բան ասել։

ԲՈՒԺՔՈՒՅՐ— (Հանում է ջերմաչափը Փոսիյոյի բերանից ու դառնում Քառակուսուն)։ *Մի քիչ էլ դիմացեք։* (Զննում է Փոսիյոյի ջերմաչափը, ապա հանում Քառակուսունը, զննում, զարմացած նայում Քառակուսուն, ապա նորից ջերմաչափին և վերջապես ձեռքը հպում Քառակուսու ճակատին)։ *Լավ կանեք՝ պառկեք։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Բան չկա, օրվա այս ժամին ջերմությունս միշտ էլ մի քիչ ավել է։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Վախենամ, թե այս անգամ խոսքը «մի քիչի» մասին չէ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ամեն երեկո էլ լինում է, վախենալու բան չկա։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Դուք ձեր անկողնու տեղը գիտեք, և ես վստահ եմ, որ շուտով կպառկեք։ Քիչ հետո ես ձեզ համար հաբեր կբերեմ։ Մնացած բոլորին խնդրում եմ չաղմկել։ Փոսիյո, երաժշտությունը սրանից բարձր միացնել չի կարելի։*

ԼՄՓՈՇ— *Մենք Փոսիյոյի երաժշտությանն այնքան ենք սովորել, որ արդեն չենք էլ լսում։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Համենայն դեպս ես լսում եմ և պիտի ասել, որ շատ հաճելի է։* (Հանում է Բկլատի ջերմաչափը)։ *Ի՞նչ է։*

ԲԿԼԱՏ— (Անհանգիստ ու մռայլ)։ *Մոցարտ։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Մի՞թե։ Նորից եմ խնդրում, բոլորդ ձեզ լավ պահեք։ Փոսիյո, դուք կրկին ձեր ընթրիքը չեք կերել, ո՞ւմ եք տվել։*

ԲԿԼԱՏ— (Դպրոցականի պես ձեռքը բարձրացնելով)։ *Ինձ՝ Բկլատ Ռիդին։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Փոսիյոյին անհրաժեշտ է ավելի շատ ուտել։ Ամեն ինչ ինքդ խժռելու փոխարեն դու պարտավոր ես հետևել, որ նա գոնե մի քիչ ավել ուտի...*

ԲԿԼԱՏ— *Շատ բարի։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Փոսիյո, բարի եղեք առավոտյան նախաճաշն ուտել։ Քառակուսի, թերևս արդեն ձեր անկողին մտնելու ժամանակն է։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Չէ, չէ, ես լավ եմ զգում։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Լմփոշ, Քառակուսուն կհետևեք, եղա՞վ։ Եթե դոկտոր Բոհրենն այդքան հոգնած չլիներ, ես թերևս նրան խնդրեի վիրահատությունից հետո ձեզ քննել։ Ուրիշ հարցեր կա՞ն։* (Դադար)։ *Ուրեմն պայմանավորվեցինք՝ առանց ավելորդ իրարանցման։* (Դուրս է գալիս, դուռը ետևից սահուն ծածկելով)։

ԼՄՓՈՇ— *Քառակուսի, քեզ ի՞նչ եղավ։*

Լռություն։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ես ձեզ չէի՞ պատմել, որ սիրողական հեծանվավազքի եմ մասնակցել։*

ԼՄՓՈՇ— *Երբեք չես ասել։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Դե իմացեք։*

ԼՄՓՈՇ— *Շատ լավ ես արել։ Ինչի՞ չես նստում։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Ուղիղ իր առջև նայելով, հափշտակված)։ *Սպրինտին սիրտս այնքան էլ չէր կպչում, բայց երկար տարածությունները շատ էի սիրում՝ հիսուն, հարյուր, երկու հարյուր մղոն։ Որ ասեմ, հաղթելն էլ վեջս չէր, երևի չեք հավատա՝ պարզապես սիրում էի հեծանիվ քշել։ Մի ամառ, երբ տասնվեց թե տասնյոթ տարեկան էի, ինսունիններորդ մայրուղով Ֆրեզնոյից Սան Ֆրանցիսկո մըրցում անցկացվեց՝ երկու հարյուր մղոն։ Ես այնքան հաջող պոկվեցի տեղից, որ Մըդիրային հասնելիս ինձ ամենամոտ հեծանվորդն արդեն կես մղոն հետ էր մնացել։ Օգոստոսյան շոգ առավոտ էր ու ամեն ինչ այնքան լավ, որ քիչ էր մնում ուրախությունից ուժովս մեկ գոռայի։ Թվում էր, ինչքան քշեմ, չեմ հոգնի։ Մինչև հասա*

Մբրսիդ, հետևս էլ մարդ չէր երևում, լրիվ մենակ էի ու քեֆս էլ տեղը։ Բայց քիչ անց սկսեցի մենակությունից ձանձրանալ ու մի քիչ դանդաղեցի, մինչև հետ մնացածներից երեք հոգի եկան ու ինձ հավասարվեցին։ Իրար հետ քշում էինք, ասում-խոսում ու կատակներ անում։ Բայց շուտով դրանից էլ ձանձրացա ու նորից առաջ պոկվեցի։ Մոդիսթոյի մոտ նրանք արդեն չէին երևում, իսկ ես դեռ չէի էլ սկսել հոգնել, պարզ էր, որ հեշտությամբ մրցումը կշահեմ։ Սան Հոաքին հովտի լավ կիրակիներից էր՝ շոգ, հանդարտ ու կիսաքուն։ Հեռվի ձայները լսվում էին այնպես, կարծես քթիս տակ լինեին՝ դռան թխկոցը, երեխաների աղմուկը։ Մոդիսթոյում մի փոքր այգի կա, ուր ամեն ամառ կիրակի օրերը նվագախումբը համերգներ էր տալիս։ Դեռ այդ այգին չհասած, ես արդեն մի հինգ րոպե է, ինչ լսում էի նվագի ձայնը։ Ծանոթ մի մեղեդի էին նվագում, որը վաղուց չէի լսել, այգին աղջիկներով լիքն էր։ Առնը-վազն մի երեսուն-քառասուն աղջիկ կար այնտեղ՝ ամերիկուհիներ, մեքսիկուհիներ, ճապոնուհիներ, սեամորթներ, ու ես, մրցումը շարունակելու փոխարեն, սկսեցի պտտվել այգով մեկ ու նայել աղջիկներին։ Ուզում էի հիշել այդ մեղեդու բառերը ու վերջապես հիշեցի։ (Փորձում է երգել)։ *«Շատ տարիներ սպասել եմ այն օրվան, երբ մենք համբուրվեցինք...»։* (Սուլում է)։ *Քիչ անց, հետ մնացած տղաներն էլ ինձ հասան ու, վրաս ծիծաղելով, քշեցին-գնացին, իսկ ես մնացի այգում, որովհետև միանգամից սիրահարվել էի այգու բոլոր աղջիկներին։* (Դադար)։ *Այ, հիմա նույն զգացումն ունեմ։* (Երգը սուլելով նայում է շուրջը, ապա դուրս է գալիս և դուռը ծածկում։ Բոլորը մի պահ լուռ են մնում, Փոսիյոն ուժեղացնում է երաժշտությունը, որն այժմ պարզ լսվում է)։

ԼՄՓՈՇ— (Հանկարծ դիմելով Բկլատին, որը դեռ ծունկի է իջած սեղանի մոտ)։ *Լսեցի՞ր, քույրն ինչ ասեց։ Եթե աղոթելու ես, քանի դեռ ուշ չի, սկսիր։*

ԲԿԼԱՏ— (Ցածրաձայն)։ *Ես վաղուց եմ սկսել, ես հիմա էլ եմ աղոթում։*

ԼՄՓՈՇ— *Ինչ-որ չի լսվում։*

ԲԿԼԱՏ— *Էս անգամ ես բառերով չեմ աղոթում, Լմփոշ։ Իմ տերն ասում է, որ ես իմ ունեցած-չունեցած ամեն ինչով աղոթեմ, ու էդ աղոթքը բառերով չի։ Ես Քառակուսու ասածները լսեցի հեծանիվի, այգու ու աղջիկների մասին՝ ոնց որ աղոթք լիներ։ Ճուտոն որ գա ու բառարանը կարդա, ես երևի էնպես բառեր սովորեմ, որ հերիքի իսկական մի աղոթք ասելու բոլորի համար՝ սպիտակների, սեվերի, կարմիրների, տղամարդկանց, կանանց, հարուստների, աղ-*

քատների, ուժեղների ու թույլերի։ Բայց հիմա դրա պես աղոթքի համար բառերս չեն հերիքում։

ԼՄՓՈՇ— (Կանգնելով)։ *Դե լավ, լավ։ Ես քեզ համար կկարդամ, մինչև Ճուտոն գա։ Աչքիս վիճակը մի բան չի, բայց բառարանից մի կերպ գլուխ կհանեմ։*

ԲԿԼԱՏ— *Շնորհակալ եմ, Լմփոշ։ Դու գիտես, որ ես մեռնում եմ մնացած բառերը լսելու համար, բայց ես իմ ընկերոջը հուսախաբ անել չեմ կարող։ Էլ ինչ ընկեր եմ, որ թողնեմ ուրիշը կարդա, երբ որ նա կյանքի-մահու կռիվ է անում։ Ճուտոյից բացի ուրիշ ոչ ոք ինձ համար բառերը չի կարդա։*

ԼՄՓՈՇ— *Ճուտոն կարող է և չգալ։*

ԲԿԼԱՏ— *Ինչի՞ էդ ասեցիր, Լմփոշ, ախր աչքով կտաս, չէ՞։ Ես էստեղ ամբողջ հոգով աղոթում եմ, որ նրան բան չլինի, իսկ դու... ինչի՞ ես նույնիսկ մտածում, թե Ճուտոն կարող է չգալ, դա լինելու բան չի, Լմփոշ, նա անպայման կգա։*

ԼՄՓՈՇ— *Համենայն դեպս բառարան կարդալը նրա գաղափարը չէր, դա քո գաղափարն էր։*

ԲԿԼԱՏ— *Էդ ի՞նչ կապ ուներ։*

ԼՄՓՈՇ— *Շատ մեծ։ Ես այս առավոտ քեզ անհատի հարատևման տեսությունը չպատմեցի՞։*

ԲԿԼԱՏ— *Չէ, դու միայն ասեցիր, որ բոլոր մարդիկ վաղուց ինչ-որ ուրիշ տեղից են եկել, ու բոլոր գնացողները մեկ էլ տեսար՝ հետ եկան։*

ԼՄՓՈՇ— *Դա հենց անհատի հարատևման տեսություններից մեկն է։ Բայց կա նաև մի այլ տեսություն ուրիշ բանի մասին։*

ԲԿԼԱՏ— *Ի՞նչ տեսություն։ Ինչի՞ մասին։*

ԼՄՓՈՇ— *Տեսություն՝ մեռնելու մասին։ Ըստ այդ տեսության, ոչ ոք չի մեռնում, մինչև որ ինքը չուզենա մեռնել։ Ի՞նչ գիտես, թե անկախ քո աղոթելուց Ճուտոն հիմա մեռնել չի ուզում։ Ես չեմ խոսում մեր դրսից տեսած Ճուտոյի մասին, իմ ասածը ներսինն է, մեր չտեսածը, որին դու տեր ես կոչում։ Իմ ասածը Ճուտոյի ներսի այն մարդն է, որն այնքան անգամ է աշխարհ եկել, որ արդեն հոգնել է ու զզվել։ Մարդ պիտի կյանքում մի բան ունենա, որ իրեն պահի, չթողնի, որ մեռնել ուզես։ Ըստ այդ տեսության, քանի դեռ այդ բանը կա, մարդը պարզապես չի կարող մեռնել, ինչքան ուզում է հիվանդ լինի։ Այլ կերպ ասած, մարդ մեռնում է միայն, երբ ինքն է ցանկանում, դրանից ոչ շուտ, ոչ ուշ, նույնիսկ՝ պատահմամբ։ Իհարկե, սա միայն տեսություն է, բայց մի՞թե*

այն ամենն, ինչին մենք հավատում ենք, տեսություն չի։ Իսկ եթե այդպես է, ապա պատկերացրու, որ Ճուտոն այս կյանքում այլևս իրեն պահող ոչ մի բան չունի, ոչինչ չի խանգարում, որ նա մեռնել ուզենա։ Պատկերացրու, որ բառարան կարդալը նրան առանձնապես չի հետաքրքրում, համենայն դեպս ոչ այնքան, որ ապրելու ցանկություն ծնի։ Ինչո՞ւ ինքներս մեզ խաբենք՝ գուցե էլ ոչինչ նրա վեջը չի։

ԲԿԼԱՏ— Լմփոշ, մի՞թե կարծում ես, որ ինձ պես հավատացյալ մարդը, էն էլ ծնկաչոք աղոթելուց, քո ասածը պիտի հասկանա։ Հավատացյալ մարդն ուղեղ չունի, իմ ունեցած-չունեցածն ընկերությունն է, ու ես աղոթում եմ, որովհետև Ճուտոյին խոսք եմ տվել։ Տերս ասում է, որ խոսքս չուրանամ, ասում է, որ աղոթեմ Ճուտոյի համար, աղոթեմ, մինչև որ նա գա, ու ես տիրոջս չեմ հակաճառում։ Ճուտոյից բացի ոչ ոք բառարանը չի կարդա։

ԼՄՓՈՇ— (Նստելով)։ Դե լավ, թող քո ասածը լինի, բայց քեզ չի՞ թվում, թե դրանով դու քո մյուս ընկերոջը զրկում ես իր խեղճուկրակ կյանքում գոնե մի շռայլ ու անձնուրաց բան անելու հնարավորությունից։

ԲԿԼԱՏ— Էդ ո՞ւմ եմ զրկում։

ԼՄՓՈՇ— Ինձ։ Չե՞ս կարծում, որ բառարան կարդալով քեզ երջանկացնելու հնարավորությունը շատ կթեթևացներ իմ կյանքի վերջին ժամերը։

ԲԿԼԱՏ— Լմփոշ, իմ պես աղոթող մարդը միանգամից էդքան հատուկ ընկերություն չի հասկանում։ Բառարանն էն գլխից իր համար դարակում դրած էր, ու ոչ ոքի մտքով չէր էլ անցնում մի հատ բաց անի։ Երբ ես ուզեցի գնալուցս առաջ մի ճիշտ բան անել ու բառարանը գտա, ոչ ոք չառաջարկեց ինձ համար կարդալ։

ԼՄՓՈՇ— Ճուտոն ի՞նքը քեզ առաջարկեց։

ԲԿԼԱՏ— Չէ, բայց իր հիվանդ հալով տեղն ու տեղը համաձայնվեց ու կարդաց։ Երբ ես էս առավոտ քեզ ու Քառակուսուն կանչեցի կաղինո խաղալու, երկուսդ էլ մերժեցիք, որ ես ինձ սև ու անպետք զգամ։ Ես էդ քո ասած ընկերությունը չեմ հասկանում։

ԼՄՓՈՇ— Պարտադիր չի, որ մարդ երեկոյան նույնը լինի, ինչ որ՝ առավոտը։ Ես պարզապես կկարդամ բառարանի մի մասը, ոչ թե լրիվ։ Հենց որ Քառակուսու ջերմությունն իջնի, նա էլ գուցե մի քիչ կարդա, իսկ ես կհանգստանամ ու կլսեմ։ Հետո երբ Ճուտոն հետ գա, ինքն էլ կկարդա, ինչքան որ ուզի կամ կհանգստանա, մինչև մենք կարդանք։ Մենք բոլորս էլ ընկերներ ենք։

ԲԿԼԱՏ— Լավ ես խոսում, Լմփոշ, բայց ասածդ ճիշտ չի։ Տերս ասում է, որ ճիշտ չի։ Ասում է՝ Ճուտոյին տված խոսքդ չուրանաս, թե կարդալ ուզող լինի, թող ինչ ուզում են կարդան, բայց բառարանը չտաս։ Ես ոնց խոստացել եմ, էդպես էլ էստեղ, բաց բառարանի առաջ կաղոթեմ, որ Ճուտոն իրա կռիվը հաղթի ու հետ գա կարդալու։

ԼՄՓՈՇ— Երևում է, որ էս առավոտ կարդացած բառերից դու ոչինչ չես սովորել։

ԲԿԼԱՏ— Էդ ինչի՞ որ։

ԼՄՓՈՇ— Դու նույն մարդն ես, ինչ որ միշտ։ Դու պարզապես չես ուզում, որ քեզանից բացի ինչ-որ մեկին լավ բան պատահի։ Դու հաճույք ես ստանում Ճուտոյի համար աղոթելով ու ինձ չթողնելով, որ բառարանը կարդամ։ Դու դեռ մուռ ես հանում։ Բառարանը Ճուտոյի համար պահելը պարզապես մուռ հանելու մի ուրիշ ձև է, այդքան մի բան։ Դա ոչ ընկերությունից է գալիս, ոչ էլ մի բան հասկանալուց, քո արածը սովորական վրեժխնդրություն է։ Դու, իսկական կրոնամոլների նման, միայն քեզ ես խղճում, քո վեջն էլ չի, թե ուրիշներին ինչ կպատահի, դու ուզղակի ուզում ես ինքդ քեզ համար սովորել մոռանալու ձևը։ Ես էլ եմ այդ ուզում, չնայած քիչ ժամանակ ունեմ։ Հետո ինչ, որ բառարանը դու ես գտել, դա չի նշանակում, թե չպետք է թողնես, որ ես կարդամ։ (Անսպասելի)։ Եթե, իհարկե, ընդհանրապես ուզում ես, որ այն քեզ համար կարդան, և եթե այդ ամենը չես հնարել Ճուտոյին, քեզ քիչ թե շատ քեզ պես մաշկ ունեցողներին խղճալը վայելելու համար։ Միգուցե դու բառարանի բառերը իսկի չես էլ ուզում լսել։

ԲԿԼԱՏ— Լսիր, Լմփոշ, ինչի՞ ես էդքան ուզում ինձ խեղճացնել։ (Անկեղծ տառապանքով)։ Ես Ճուտոյին խոստացել եմ, էլ ինչի՞ ես ամեն ինչ շուռ տալիս։ Ես ինձ արդեն համարյա լավ էի զգում, փորձելով էս մի քանի բոպեն աղոթել, իսկ դու ամեն ինչ փչացնում ու ինձ նեղն ես գցում... Տերս ասում է՝ չի կարելի... Դու միամիտ մարդու գլխին խաղ ես խաղում, Լմփոշ։

ԼՄՓՈՇ— Ես խաղ չեմ խաղում, դու ես խաղում։ Դու մի կողմ ես քաշվում և ինձնից ու Քառակուսուց անջատվում։ Խոզություն ես անում և բառարանը պահում, ինչ է թե քո և Ճուտոյի մաշկը մերինից մուգ է ստացվել ու հպարտանում ես, այո, քիթդ տնկում, որ դու, անգրագետ սևամորթդ, գտել ես այս թշվառ վայրում սրտնեղած մարդու համար միակ մխիթարական զբաղմունքը՝ միակ բանը, որ նրան թույլ է տալիս կամովին հեռանալ այս աշխարհից, փոխանակ կյանքը նրանից խլեն, ասես նա միջատ լինի, կամ բոլորովին ապրած չլինի։

ԲԿԼԱՏ— *Դու գիտես, որ ճիշտ չես ասում, Լմփոշ։ Հա խոսում ես ու խոսում և ինձ խեղճացնում, բայց մեկ է՝ ճիշտ չես։ Բառարան կարդալը Ճուտոյի գործն է, և ուրիշ ոչ մեկինը։ Դու հո տեսա՞ր նա ոնց պատգարակում նստեց ու շուռ եկավ, երբ էս առավոտ նրան դուրս էին տանում։ Ինձ էր նայում, ասում էր, որ ես խոսքս պահեմ և նայում էր բառարանին, որ նրա հետ գալուց նույն տեղում լինի։ Ես էլ ոչինչ չեմ ասի, էլ չեմ էլ լսի քեզ, Լմփոշ։ Ես հիմա կաղոթեմ ու դու կտեսնես՝ քույրը կգա ու կասի, որ Ճուտոյին բան չի եղել ու նա շուտով հետ կգա։* (Փակում է աչքերը, ձեռքերը ծալում կրծքին ու գլուխը կախում)։

ԼՄՓՈՇ— (Ցածրաձայն)։ *Ասված տա հետ գա՝ թեկուզ քեզ համար։*

ԲԿԼԱՏ— (Աչքերը փակ)։ *Կգա, հել մի մտածի։* (Փոսիյոն անշատում է նվագարկիչը։ Բկլատն առանց աչքերը բացելու ճանգիստ ճարցնում է)։ *Ինչի՞ անջատեցիր, Փոսիյո։*

ՓՈՍԻՅՈ— *Գնում եմ պառկեմ։* (Դուրս է գալիս)։

Լռություն։

ԲԿԼԱՏ— (Ցածրաձայն)։ *Էլ չեմ կարողանում աղոթել։ Ճուտո, ես փորձում եմ, բայց առանց Մոցարտի, Քառակուսու հեծանիվի ու աղջիկներին սիրահարվելու պատմության ոնց որ չի ստացվում։ Չի ստացվում նույնիսկ առանց Լմփոշի գլուխ հարթուկելու, որ թողնեմ բառարանը կարդա։ Դու մի ասա՝ առանց օգնության մարդ կարգին աղոթք էլ չի կարող ասել։ Մենակ ոչինչ չի ստացվում, ես գնացի օգնության, ամե՜ն։* (Բացում է աչքերը, վեր կենում, բառարանը սեղանի վրա շտկում ու նկատում կոմիքսների մեջ խորասուզված Լմփոշին)։ *Լմփոշ, թե աղոթելիս մի սխալ բան ասեցի, կներես։*

ԼՄՓՈՇ— (Ցրված)։ *Ի՞նչ։*

ԲԿԼԱՏ— *Ասում եմ՝ կներես։*

ԼՄՓՈՇ— (Գրքից չկտրվելով)։ *Ինչի՞ համար։*

ԲԿԼԱՏ— *Աղոթելուց ասած բաների համար։* (Դանդաղ)։ *Առանց Մոցարտի, Փոսիյոյի, Քառակուսու ու Ճուտոյի ոնց որ ահագին ցրտեց։ Դողս բռնել է, էնքան ցրտեց։ Ցուրտ է ու մութ։ Կուզե՞ս լույսը վառեմ, որ նայածդ տեսնես։*

ԼՄՓՈՇ— *Կարիք չկա, ես սովոր եմ մթանը, իսկ նկարները համարյա անգիր գիտեմ։*

ԲԿԼԱՏ— *Գնամ քրոջը Ճուտոյի մասին հարցնեմ։ Քեզ ի՞նչ բերեմ, կոկա-կոլա կուզե՞ս։*

ԼՄՓՈՇ— *Պետք չի։*

ԲԿԼԱՏ— *Ես ինչ կարողացա, արի։*

ԼՄՓՈՇ— *Ի՞նչ։*

ԲԿԼԱՏ— *Ուզում եմ ասել՝ Ճուտոյի համար աղոթելս։ Համա թե ցուրտ է, հա՞։ Հո չե՞ս հերսոտել վրաս, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Որտեղի՞ց խելքդ փչեց։*

ԲԿԼԱՏ— *Շատ եմ մրսում, Լմփոշ, ոնց որ մեկը վրաս հերսոտած լինի։*

ԼՄՓՈՇ— *Ես չեմ։ Քրոջ ասածն ինձ էլ կասես։*

ԲԿԼԱՏ— *Եղավ։* (Դադար): *Իսկ դու ինչի՞ քեզ էդքան լավ զգացիր բանվորների մեխ խփելը լսելուց։*

ԼՄՓՈՇ— *Արդեն ասել եմ, չէ՞՝ ես հավերժ էի, առաջնային։ Շուրջս ամեն ինչ իմն էր, ինձ համար էր ստեղծված։*

ԲԿԼԱՏ— *Հա։* (Դադար): *Շատ եմ մրսում, Լմփոշ։ Էս անտեր տեղը ոնց որ մրսելու ու մեռնելու համար լինի։* (Դուրս է գալիս: Լմփոշը սպասում է, մինչև դուռը ծածկվի, ապա կտրուկ վեր է կենում ու մոտենում բառարանին: Նայում է բառերին, փորձում է մթան մեջ տարբերել, ապա շտապում է անջատիչի մոտ ու վառում վերին թույլ լույսը: Վերադառնում է բառարանի մոտ ու նորից փորձում կարդալ, գլուխն ավելի ու ավելի մոտեցնելով բացված էջին: Հանկարծ շտկվում է, գլուխը թափ տալիս, տրորում աչքն ու նորից փորձում կարդալ, բայց բառերն ակնհայտորեն իրարից չի տարբերում: Մի պահ մտածում է, ապա մոտենում իր սեղանին, նստում ու նորից վերցնում կոմիքսների գիրքը՝ Քառակուսու երգը սուլելով: Մոնում է Քառակուսին, դուռը ծածկում, մոտենում լուսամուտին ու դուրս նայում: Լմփոշը հետաքրքրությամբ նայում է նրան):

ԼՄՓՈՇ— *Կարծում էի արդեն պառկել ես։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Չեմ պառկել։*

ԼՄՓՈՇ— *Կարծում էի էլ էստեղ եկողը չես։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Հա՞։*

ԼՄՓՈՇ— *Քույրը վախեցրեց, քո պատմությունն էլ հետը... Միակ բանը, որ մինչև քո գալն ինձ կենդանի էր պահում, խեղճ Բկլատի ջղերի հետ խաղալն էր։ Նա դուրս եկավ Ճուտոյի վիճակն իմանալու։ Քո գալուց հետո ես ինձ էլ այնքան վատ չեմ զգում։* (Կարճ դադար): *Ուրիշ պատմություններ չունե՞ս։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Չէ, էդ մեկն էր։*

ԼՄՓՈՇ— *Թվում է, թե բոլորս էլ պիտի լիքը պատմություններ ունենանք։ Վերցնենք թեկուզ էն քսան տարին, երբ ես իմ ապրուստը խաղալով եմ վաստակել՝ օր չի եղել, որ ինձ մի շշմելու բան չպատահեր ու չմտածեի՝ ա՜յ թե հետո պատմելու բան կլինի։ Գետի-*

նը մտնեմ, թե դրանցից մեկնումեկն արժենար հիմա պատմել։ (Սպասում է, որ Քառակուսին մի բան ասի, ապա շարունակում)։ Օ՛ֆարըլ փողոցում մի տեղ կար, ուր ես ուզածս ժամանակ մի երկու հարյուր դոլարի հավատ ունեի։ Սովորաբար գրպանս դատարկ նստում էի բաց պոկեր խաղալու ու մի հինգ ժամից դուրս գալիս՝ գրպանումս մի տարվա մսխելու փող... Միշտ երազել էի իմ քեֆին ապրել ու առաջին կարգով ճամփորդել, բայց երբեք չէր ստացվում։ Մի երեք օրից մնում էի առանց մի ցենտի։ (Կարճ դադար)։ Արի ու տես, որ այդ ամենից հիմա պատմելու արժանի ոչ մի բան չի մնացել։ Բայց ես միշտ երազել եմ ճամփորդել ու լավ կյանք անել։ (Դառնում է լուսամուտից դուրս նայող Քառակուսուն ու կրկնում)։ Ասում եմ, միշտ երազել եմ իմ քեֆին ապրել ու ճամփորդել։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Լսեցի։ (Լռություն)։

ԼՄՓՈՇ— Ջես ուզում՝ մի խոսիր։ Մեկ է, ես ուրախ եմ, որ դու վեր ես կացել և դեռ չես գնում։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Շնորհակալ եմ։ (Լռություն)։

ԼՄՓՈՇ— Փոսիյոն երաժշտությունն անջատեց ու գնաց պառկի, բայց չեմ կարծում, թե մի լուրջ բան պատահած լինի։ Երևի վաղն, ամեն օրվա պես, առաջինն էստեղ կլինի։ (Մի պահ սպասում է Քառակուսու կողմից հետաքրքրության որևէ դրսևորման, ապա շարունակում, որոշելով նրան տեղից շարժել)։ Ամեն դեպքում ես երբեք հիսուն տարուց ավել ապրելու ախորժակ չեմ պահել։ Քսան տարեկանում ես անկեղծորեն կարծում էի, թե ամենաշատը էլի մի երկու տարի հազիվ ապրեմ՝ հենց էդ ժամանակ էլ սկսեցի խաղալ։ Խաղամոլի մի գիշերն ահագին կյանք արժե, իսկ մի տարին, մի տարում ինչ ասես գլխովդ չի անցնում... Բայց քառասունից հետո սկսեցի հավատալ, որ կապրեմ ինչքան որ քեֆս բերի, որովհետև ամեն մի օրը ճիշտ ու ճիշտ նախորդի նման էր, ու ես արդեն ժամանակը չէի նկատում, ինչպես ջահել օրերին։ Երբ զգացի, որ արդեն բավական երկար ոչինչ չեմ նկատում, հասկացա, որ ճանապարհին մի կարևոր բան եմ կորցրել։ Ոչ թե ժամանակ կամ փող՝ ուրիշ մի բան։ Ու խաղալուն վերջ տվի։ Ես, իհարկե, չգիտեի, որ վերջ եմ տվել, պարզապես նկատեցի, որ ժամանակն անցնում է, իսկ ես չեմ խաղում։ Սկսեցի առաջվանից շատ քնել։ Պատահել էր, որ խաղացել էի երեսունվեց ժամ անընդմեջ՝ կորցրածս հետ բերելու կամ մի քիչ շահելու համար, էնպես որ պարզ է, որ քնի կարոտ էի մնացել։ Երբ քունս հետ բերեցի, սկսեցի կարդալ՝ սկզբում թերթերը՝ ծայրից-ծայր, իսկ հետո՝ ամեն տեսակի ամսագրեր և վեր-

ջապես, գրքեր՝ հանրային գրադարանից էի վերցնում։ Երևի կորցրածս էի փնտրում։ Հիշում եմ, որ մի անգամ մանրէաբանության մասին մի ամբողջ գիրք կարդացի։ Մեջը մի մարդ կար, անունը Նոզուչի, որն ինչ-որ բան գտնելու համար իր կյանքն էր զոհել։ Զարմանալի էր ու մի տեսակ... սիրուն, որ մարդ կարող էր այդ աստիճան մի բանի նվիրվել։ Ու ես հասկացա, թե ինչու խաղալուն վերջ տվի։ Որովհետև ատում էի ամեն տեսակի ստրկացումը, մանավանդ՝ ապրուստի համար աշխատելու անհրաժեշտությունը՝ հանուն փողի, որ փորդ կուշտ ու տաք մնա, ինչ է թե... ստրկացումդ մի քիչ էլ երկարի։ Ես հենց դա էի ատում, ու դրա համար էլ խաղալը թողեցի։ Հետո հասկացա, թե այդ տարիների ընթացքում ինչ էի կորցրել՝ պայծառ օրը վայելելու զգացումը, նույնիսկ դրա հուշը։ (Համարյա ծիծաղելով)։ *Թվում է, թե կորցրածս մի բան չէր, բայց դա շատ մեծ բան է՝ երևի ամենակարևորը։ Այսօր երազում կոկա-կոլա խմելիս ես նորից գտա այդ զգացումը։ Երևի մտածում ես, թե մահվան դռանը հասած մարդը պիտի որ ավելի լավ բան հիշի, չէ՞։* (Կարճ դադար)։ *Լսո՞ւմ ես։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Այո, լսում եմ։*

ԼՄՓՈՇ— *Կուզե՞ս ձայնս կտրեմ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Չէ, ոչինչ, շարունակիր։*

ԼՄՓՈՇ— *Երբեք չեմ մոռանա երդվյալ խաղամոլների կծու ակնարկները մի որևէ անփորձ թշվառի հասցեին, որ դատարկ գրպանով թողնում էր սեղանը։ Չէին հոգնում «ոնց ձեռն ընկավ, էդպես էլ գնաց» կամ դրա պես բաներ ասելուց։ Մեկ-մեկ, շաբաթվա ռոճիկը քամուն տված մի բեռնակիր կամ բանվոր էր լինում՝ տանը լիքը սոված երեխա։ Սեղանից վեր էր կենում ու ջանում ինքն էլ այդ խոսքերի վրա ծիծաղել, բայց երևում էր, որ սիրտը տակնուվրա է լինում։ Ես միշտ խղճում էի խաղ ու պարով փող վաստակել փորձող բանվորներին...*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Հետո՞։*

ԼՄՓՈՇ— *Հետո՝ հետո։ Պարզապես ես ատում եմ ամեն տեսակի ստրկացումը, ուրիշ ոչինչ։* (Կարճ դադար)։ *Գուցե իսկապե՞ս քրոջ ասածը լսես ու գնաս պառկես։ Վիճակդ կարող է քո կարծածից վատ լինի։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Չէ, լավ եմ։*

ԼՄՓՈՇ— (Ամեն գնով խոսակցությունը պահպանելու ցանկությամբ, արագ)։ *Համենայն դեպս քույրն էդ կարծիքին չէր։ Ի՞նչ իմացար, որ լավ ես։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ես զգում եմ, որ լավ եմ, համենայն դեպս՝ հիմա։*

ԼՄՓՈՇ— *Հիմա՞։ Ի՞նչ իմացար հիմա, որ չգիտեիր ջերմությունը չաֆփելիս։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Գիտեմ, թե ոնց եմ անցկացնելու մնացած կյանքս։*

ԼՄՓՈՇ— *Ո՞նց։* (Լռություն)։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Կկանգնեմ էստեղ մինչև Ալքաթրազի լույսերը վառվեն։*

ԼՄՓՈՇ— *Էհ, հիմա ուր որ է կվառվեն։ Հետո՞ ինչ ես անելու։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Հետո կնստեմ դաշնամուրի մոտ։*

ԼՄՓՈՇ— *Իսկ դրանի՞ց հետո։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Հետո նորից կնայեմ Ալքաթրազին։*

ԼՄՓՈՇ— *Ինչի՞ ես անվերջ Ալքաթրազին նայում։* (Խոսակցությունը սպառվում է։ Երկար լռություն)։ *Բան չհասկացա։ Ասում եմ, ինչի՞ ես միշտ Ալքաթրազին նայում։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ես էլ ասացի, որ լսողությանս բան չի պատահել։*

ԼՄՓՈՇ— *Դու ջերմությունից բացի ուրիշ բան էլ կունենաս, քե՞զ ինչ եղավ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Դու քո խղճուկ խաղերը Բկլատի գլխին խաղա, հիմա նա կգա։*

ԼՄՓՈՇ— *Երևում է վիճակդ մի բան չի։ Ես ոչ մի խաղ էլ չեմ խաղում, ինչո՞ւ մենք չենք կարող նույն լեզվով խոսել։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Չգիտեմ, երևի որովհետև դու ոչ ոքի հետ չես կարող լեզու գտնել, նույնիսկ ինքդ քեզ հետ։*

ԼՄՓՈՇ— *Դրա մասին հոգ մի տար, ես ինձ լավ էլ հասկանում եմ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Եթե հասկանում ես, գնա ինքդ պառկիր, փոխանակ էստեղ ժամանակ ձգձգելու։ Քո վիճակը պառկածներից ոչ մի բանով լավ չի։ Դու պարզապես ժամանակի չարչիություն ես անում։ Մի ասող լինի, թե քո ինչի՞ն է պետք էդ ժամանակը։*

ԼՄՓՈՇ— *Նախ՝ ես Ճուտոյի վիճակն եմ ուզում իմանալ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ճուտոն մեռել է։ Ես էլ գիտեմ, դու էլ՝ ո՞ւմ ես խաբում։*

ԼՄՓՈՇ— *Միգուցե մեռել է, բայց կարող է և մեռած չլինել։ Ես ուզում եմ հաստատ իմանալ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Դու պարզապես ամորձիք չունես մեղա գալու համար, էդքան մի բան։*

ԼՄՓՈՇ— *Ինչի՞ չես նստում դաշնամուրի առաջ, չասացի՞ր, թե կնստես, հենց որ Ալքաթրազի լույսերը վառվեն։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ես չտեսա, թե ինչպես վառվեցին, քո խոսեցնելու պատճառով բաց թողեցի։ Հիմա արդեն վառված են, բայց վառվելը ես չտեսա։ Թե որ անընդհատ ինձ հարցնում ես՝ ինչո՞ւ այս կամ այն չեմ անում, դե ասա, դո՞ւ ինչու չես մի ամիս առաջ էստեղ եկած*

օրվա շորերդ հագնում ու ուզածդ ժամանակ թողնում-գնում, ինչպես առավոտն էիր ասում։

ԼՄՓՈՇ— *Որովհետև դեռ չեմ ուզում, առայժմ Պստիկ Աբների նկարներն եմ ուզում նայել։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Սո՜ւտ, երբեք չես համոզի, թե նայել ես էդ նկարները։ Ո՞վ էր Պստիկ Աբների սիրածը։*

ԼՄՓՈՇ— *Ա՛լիսը։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Չէ մի չէ, Ալիսը... Դեյզին էր։ Պստիկ Աբների ալգանունն ի՞նչ էր։*

ԼՄՓՈՇ— *Քըսի՛դի։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ազգանունը Ցոքըմ էր։* (Հանկարծ, հուսահատված): *Գրողը տանի, մի՞թե մենք էստեղից դուրս չենք գալու։ Արի Քըսիֆիք փողոցի մի բար գնանք ու սատկելու չափ լակենք։*

ԼՄՓՈՇ— *Գլուխ մի տանի, նստիր։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ձահլաս գնաց դիմանալով ու հաշտվելով։ Ձահլաս գնաց քո ամենօրյա դավադրություններից, ինչ է թե ինձ ստիպես յոլա գնալ։ Ախր ինչո՞ւ ես էդ անում։ Երբեք շաբաթ առաջ ես էստեղ եկա միակ ցանկությամբ՝ պառկել ու սպասել՝ ինչ ուզում է լինի, բայց դու ինձ ամեն առավոտ անկողնից դուր։ Ես քաշում, բերում էս աստծու լքած սենյակն ու ստիպում մոռանամ, որ դիակ եմ։*

ԼՄՓՈՇ— *Մի խելքը գլխին մարդ պիտի լինի՞ որ հետը խոսեմ։ Որ դոնե ինձ հասկանա։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Սրանից հետո ուրիշին կընտրես։ Վաղն ինձ անկուլնուց էլ չես հանի։*

ԼՄՓՈՇ— *Կտեսնենք... Այսօր ո՞նց հանեցի։ Տեսա՞ր, Փոսիյոյի մասին ինչեր հնարեցի, որ Բկլատն էլ վեր կենա։ Ես ուզում եմ, որ էս բաժինն ընկնող ամեն մեկն ինչքան կարելի է քիչ պառկի։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Աստված իմ... երանի Քըսիֆիք փողոցի բարերից մեկում լինեի։*

ԼՄՓՈՇ— *Կլինես, անպայման կլինես...* (Քառակուսին նստում է դաշնամուրի առաջ ու սկսում նվագել իր երգը): *Չգիտեի, որ դու դաշնամուր ես նվագում։* (Ականջ է դնում: Հանկարծ Քառակուսին փորը բռնած վեր է ցատկում: Լմփոշը կանգնում է): *Մի հուզվի, բանի տեղ չդնես, հիմա կանցնի։ Դաշնամուրից բռնիր։* (Քառակուսին փրլվում է դաշնամուրի վրա ու աշխատում է շոնֆալ): *Այ, էդպես, դիմացիր։ Ցավն անվերջ չի տևելու։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Անասելի տառապանքով): *Աստված տար հիմա Քըսիֆիք փողոցի մի պոռնկանոցում լինեի։*

ԼՄՓՈՇ— Բանի տեղ մի դիր, հիմա կանցնի։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Աստված իմ, արդեն ուշ է։ (Հանկարծ)։ Օգնիր ինձ, օգնիր՝ հասնեմ անկողնուս, խնդրում եմ։

ԼՄՓՈՇ— Ասացի հիմա կանցնի, չէ՞։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Չէ, չէ, օրհասս եկավ, աստված իմ, էսքան ցավին մի մարդ ո՞նց դիմանա։

ԼՄՓՈՇ— Դու դեռ չգիտես ցավն ինչ բան է։ Պիտի գլխումդ լիներ, որ հասկանայիր։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Վերջացրու, գոնե մի խոսիր, տաք տեղից ես... Վա՜խ (Ցավից գալարվելով)։ Վախ, մամա՜ ջան, մամա... (Շշնջում է)։ Օգնիր հասնեմ անկողնուս, Լմփոշ, ի սեր աստծո, օգնիր անկողնուս հասնեմ։ Գոնե քրոջը կանչիր, մի ցավազրկող տա։ Խոստանում եմ վաղը վեր կենալ, միայն թե կանչիր...

ԼՄՓՈՇ— Հարիֆ գտար, չես խաբի... Թե շունչդ փչելու ես, էստեղ փչիր, տղամարդու պես, և ոչ թե անկողնում կաղկանձելով, որ մաման գա քեզ նանիկ ասի։ Քո վերջը դեռ չի եկել, բայց եթե քրոջ տված հաբերը խմես, մեղքը քո վիզը։ Արդեն թեթևացավ, չէ՞։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Ցավից ոռնալով)։ Չէ, չէ, աստված, վա՜խ։

ԼՄՓՈՇ— Իմ էդ ցավերը սկսվեցին մի երկու շաբաթ առաջ։ Առաջին անգամ շատ ես վախենում, բայց... ուրիշ ոչինչ։ Դեռ շատ ժամանակ ունես։ Բայց, եթե քեզ չպահեցիր, կորած մարդ ես։ Քրոջը կամ ուրիշ մեկին ոչ մի դեպքում պետք չի ասել։ Պիտի ինքդ քեզ պահես։ Մինչև հասցնես մի բան անել, ինքն իրեն կանցնի։ Սպասիր, կտեսնես ու նոր միայն կհասկանաս կյանքի համը։ Սա դեռ առաջինն էր, մինչև վաղը կամ նույնիսկ մյուս օրվա գիշերը էլ չի ցավի, բայց ամենաքիչը դեռ մի վեց-յոթ նոպա ունես, էնպես որ քեզ պինդ պահիր։ Ես Ճուտոյին ցանկացած բժշկից ավելի երկար կպահեի, եթե նրա հետ խոսելու ձևն իմանայի։ Ով ասես գիտի, որ մեր մարմնին այլևս չես օգնի, բայց ոչ ոք օգնության ուրիշ ձև չգիտի։ Իսկ ես կարծես թե գտել եմ ձևը... Համենայն դեպս ինձ կարողանում եմ օգնել։ Թե դու ատամներդ սեղմես ու ինձ լսես, կարող եմ քեզ էլ օգնել։ Աստված վկա, կարող եմ։ Ի՞նչ ունես կորցնելու։ Բայց հերիք է հանձնվես բժիշկներին՝ հարցերդ կլուծվեն։ Էնպես որ ոչ մեկին բան չասես։ Մի պառկիր ու մեռի, մնա էստեղ։ Ես քեզ օգնելու ձևը կասեմ, լա՞վ։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Խոսիր, Լմփոշ, ի սեր աստծո, մի լռիր, պարզապես խոսիր, ուզում ես՝ այբուբենն ասա, ինչ կուզես ասա, միայն թե խո-

սիր, որ լսեմ։ Խելքս բան չի կտրում, բայց ինձ ժամանակ է պետք, մի քիչ էլ... էնպես որ՝ խոսիր։ (Ցավից ոռնալով)։ Վա՜խ, ապտված, աստվա՜ծ...

ԼՄՓՈՇ— Իհարկե, ժամանակ է պետք։ Մարդ երբեք սրա պես ժամանակի կարիք չի զգում։ Ժամանակն իմաստ չունի, մինչև որ սրա պես չլինի՝ ժամանակ, որ մենք ինքներս ենք մեզ համար ստեղծում մեր սեփական ջղերից ու փորոտիքից։ Ամեն մեկիս մեջ սրա պես խենթ ու մղկտացող պահերի համար լիքը ցավազրկող ուժ կա, ու դա միակ միջոցն է, որն ազդում է, երբ մարմնին արդեն ոչնչով չես օգնի։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Խոսիր, Լմփոշ, միայն թե խոսիր, աստված իմ, փո՜րս։

ԼՄՓՈՇ— Մի նվնվա, խոսում եմ։ Գիտես, որ ես էլ իմ ցավն ունեմ հաղթելու։ Քո ցավը վատ տեղում է, բայց իմին չի հասնի՝ հենց գըլխիս մեջ է։ Մի աչքս արդեն կերել է ու հիմա, տե՜ր աստված, հիմա մյուսի հետևից է ընկել։ Հիմա ես ու դու նույն պետությանն ենք պատկանում՝ մեր կառավարությունը ցավն է, իսկ սպեղանին՝ գոռոզությունը, արհամարհանքն ու ատելությունը։ Ատելություն ամեն ինչի ու ամենքի հանդեպ, ուրիշ ոչինչ։ (Նայում է, թե ինչպես է Քառակուսին աստիճանաբար ուղղվում։ Նրա դեմքը բաց է ու գունատ։ Լմփոշը մեղմորեն շարունակում է)։ Հիմա դու արդեն առնվազն քսանչորս ժամ լավ կզգաս, գուցե նույնիսկ երեսունվեց կամ քառասունութ։ Դա բավական շատ ժամանակ է, Քառակուսի, և այդ ժամանակը ես եմ քեզ տվել։ (Ցավը դեմքին)։ Տվել եմ, որովհետև դու միակ շան որդին ես, որի հետ կարող եմ էստեղ խոսել, ու միակը, որն ինձ կօգնի, երբ ես արդեն ինքս չկարողանամ ինձ օգնել։ Երբ ես ամենից շատ ունենամ դրա կարիքը։ (Կարճ դադար)։ Ո՞նց ես։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Մի քիչ թեթևացավ, շնորհակալ եմ։ Աղիքներս դեռ ցավում են, բայց ոչ առաջվա պես։ Կարծես մեկն ինձ ներսից բզիկբզիկ աներ։ Ոնց էի վախեցել, թուքս չորացել էր։ (Մոռեցնում է լուսամուտին)։

ԼՄՓՈՇ— Մի երկու րոպեից դա՜ էլ կանցնի։ (Երկար լռություն)։ Հիմա՞ ոնց ես։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Հավատալս չի գալիս, որ դեռ կենդանի եմ՝ շատ էի վախեցել, Լմփոշ։ Երևի արդեն լավ եմ, բայց ի՞նչ օգուտ։ Ես միշտ ժամանակի կարիք եմ ունեցել, միշտ կարծել եմ, որ կյանքիս ամենալավ բանը դեռ պիտի լինի ու հիմա փշաքաղվում եմ էդ մտքից, որովհետև գիտեմ, որ ինձ սպասող միակ բանն այժմ ցավի նոր

նոպան կլինի, և էն էլ՝ սրանից վատը։ Առայժմ լավ եմ, բայց հետո՞ ինչ, Լմփոշ, ի սեր աստծո, հետո՞ ինչ։ (Վերադառնում է դաշնամուրի մոտ ու նստում)։ Կարճ ասած, լավ եմ։

ԼՄՓՈՇ— Երևում է։ Իսկ ես լավ չեմ, հասկացա՞ր։ Ես քեզ քո առաջին նոպայից դուրս բերի, բայց սա իմ իններորդ թե տասներորդն է։ Դու ճիշտ ես՝ ամեն մեկը նախորդից վատն է լինում։ Իմը հիմա ավելի շատ է ցավում, քան քոնը երբևէ կարող է ցավել, բայց ոչինչ։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Կարեկցում եմ, Լմփոշ։

ԼՄՓՈՇ— Բան չկա։ Ես դեռ գիտեմ ինձ կենդանի պահելու ձևն ու դեռ կարող եմ դիմանալ առանց քո կամ մեկ ուրիշի օգնության։ Վաղը կամ մյուս օրը, երբ դու նոր նոպա ունենաս, ես նորից կաշխատեմ քեզ սիրտ տալ։ Իսկ ես կգնամ միայն էն ժամանակ, երբ ինքս արդեն կաղամ պատրաստ լինեմ։ Ես կգնամ, երբ որ սիրտս ուզի, և ոչ թե՝ երբ որ քամակիս հասցնեն։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Ես կօգնեմ քեզ, Լմփոշ, երդվում եմ, եթե թողնես, քեզ համար ամեն ինչ կանեմ։ Իմ մտքով էլ չէր անցել, որ քո վիճակն էդքան ծանր է, ես անպայման քեզ կօգնեմ։

ԼՄՓՈՇ— Օգնես-չօգնես, ես շարունակելու եմ ատել, որովհետև գիտեմ, թե ես... Թե ամեն մարդ ինչ է իրենից ներկայացնում՝ գարշելի ու նենգ մի արարած, որն անկեղծորեն հավատում է, թե իր քնձռոտ որդնած առողջությունն իրեն հավերժական կյանքի իրավունք է տալիս։ Իսկ երբ առողջությունն արդեն չկա, սկսում է նվնվալ ու կաղկանձել ու ինքն իրեն օրորում մամայի մեծ ու տաքուկ գրկում։ Ես կգնամ, հիշելով, որ տիրել եմ հավերժությանը՝ կոկա-կոլա խմել ինձ համար հեշտ ու հանգիստ շնչել։ Կգնամ, երբ իմ ուզած ամեն ինչն արդեն արած կլինեմ, իսկ ես դեռ մի երկու բան անել ուզում եմ։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Անկեղծ կարեկցանքով, ցածրաձայն)։ Իհարկե։

ԼՄՓՈՇ— Քե՞զ ինչ, դու քեզ համար լուսամուտի մոտ կանգնած Ալքաթրազին նայիր ու ինքդ քեզ խղճա։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Զարմացած նրան է նայում, ցածրաձայն)։ Ես լուսամուտի մոտ չեմ, Լմփոշ։

ԼՄՓՈՇ— Կեղտո՛տ սուտասան։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Ես դաշնամուրի մոտ եմ նստած, Լմփոշ։

ԼՄՓՈՇ— (Զայրացած, ձեռքը պարզելով լուսամուտի կողմը)։ Դու ճիշտ լուսամուտի կողքին ես, ես տեսնում եմ քեզ։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ախր չէ, Լմփոշ, ազնիվ խոսք, ես էստեղ եմ, դաշնամուրի մոտ։*

Երկար լռություն։

ԼՄՓՈՇ— (Համարյա շշուկով)։ *Թե ճիշտ ես ասում, ստեղներին ձեռք տուր։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Իհարկե, Լմփոշ։* (Շատ ցածր մի երկու տակտ է նվագում իր երգից, ապա դադարում։ Լմփոշը շուռ է գալիս դաշնամուրի կողմը, մի պահ լարված նայում, ապա դանդաղ նստում)։

ԼՄՓՈՇ— (Շշնջալով)։ *Տե՛ր աստված։* (Երկար լռություն։ Ապա խոսում է ուժգին ու զայրացած)։ *Պարզ է, ուրեմն էլ չեմ տեսնում, կուրացել եմ։ Բայց լավ իմացիր, իմ բոլոր ասածներն ուժի մեջ են։* (Քառակուսին կանգնում է)։ *Հիմա վեր կացար, չէ՞։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Այո։*

ԼՄՓՈՇ— *Ուրեմն այդքանը դեռ տեսնում եմ։ Հիմա նստիր ու նվագածդ վերջացրու։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ես քեզ կօգնեմ, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Նստիր, նստիր։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ես կողքիդ կլինեմ, Լմփոշ։* (Նստում է)։

ԼՄՓՈՇ— *Նստելդ էլ տեսա։ Դեռ մի քիչ տեսնում եմ։ Դե նվագիր։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Նվագում եմ։*

Քառակուսին մի կես բոպե նվագում է, ապա դադարում, քանի որ նեռս է մտնում բուժքույրը, ուղեկցելով մոտ հիսուն տարեկան փոքր ու երկչոտ մի մարդու (Գոնչո), որը քիչ է մնում կորած երեխայի պես լաց լինի։

ԲՈՒԺՔՈՒՅՐ— (Գոնչոյին)։ *Սա մեր արևասրահն է։ Այս ժամին առանձնապես տպավորիչ չէ, բայց օրվա ընթացքում շատ գեղեցիկ է, իսկ պատուհանից բացվող տեսարանը ճիշտ և ճիշտ հոգնած աչքերի համար է։*

Լմփոշը ցնցվում է։

ԳՈՆՉՈ— *Այո, մեմ։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Տղաներից շատերն այլևս այստեղ չեն երևում, այնպես որ դուք, այս երկուսը և էլի մի երկու հոգի կարող եք հանգիստ վայելել այս սրահը՝ դաշնամուրը, ռադիոն, նվագարկիչը, գրքերն, ամսագրերը, խաղերը, տեսարանն ու մնացածը։ Դուք դաշնամուր նվագել գիտե՞ք։*

ԳՈՆՉՈ— *Ոչ, մեմ։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Համենայն դեպս՝ դաշնամուր կա։* (Ժպտադեմ)։ *Եվ մի*

ամաչեք, խնդրեմ, այստեղ բոլորը ձեզ պես սովորական մարդիկ են։ (Դիմում է Լմփոշին ու Քառակուսուն)։ *Տղաներ, ծանոթացեք...* (Ջենում է ձեռքի քարտը նորեկի անունը պարզելու համար)։

ԳՈՆՉՈ— (Ամաչելով)։ *Տղաս ինձ Գոնչո է ասում։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Մենք երեք ազատ տեղ ունենք։ Տղաներ, խնդրում եմ Գոնչոյին օգնեք իր համար տեղ ընտրել, և ցույց տվեք դրսի հագուստը հանձնելու և հիվանդանոցայինը ստանալու տեղը։ Դուք, իհարկե, ամեն ինչ կանեք, որ նա այստեղ որքան կարելի է շուտ ընտելանա, այնպես չէ՞։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Իհարկե։*

ԳՈՆՉՈ— (Տագնապահար, համարյա կակազելով)։ *Ես կուզեի, եթե կարելի է, իմ շորերով մնալ, գոնե մինչև քնելը։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Դա հակասում է մեր կանոններին, բայց կարծում եմ, որ առանձնապես պարսավելի չէ։ Քնելու ժամը ինն է, այնպես որ ութն անց երեսունի կողմերն այնուամենայնիվ թող տղաները ձեզ ամեն ինչ ցույց տան։*

ԳՈՆՉՈ— *Այո, մեմ։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— (Հանկարծ, չափից ավելի զվարթ)։ *Լմփոշ, այսօր մի տեսակ հանգիստ ես երևում։ Քառակուսի, տեսնում եմ, որ դեռ չես պառկել։ Չե՞ս վատանա։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ոչ մի դեպքում։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Եթե այդքան վստահ ես, ուրեմն ամեն ինչ լավ է։ Գիշերային քույրն արդեն եկել է, անհրաժեշտության դեպքում կարող եք դիմել նրան։ Հուսով եմ առավոտյան բոլորիդ ողջ և առողջ տեսնել։*

ԼՄՓՈՇ— *Իսկ Բկլատն ո՞ւր է։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Անկողնում, էլ ո՞ւր պիտի լինի։ Քիչ առաջ ինքս եմ տեսել։*

ԼՄՓՈՇ— *Ինչքա՞ն ժամանակ է պառկած։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Չգիտեմ, Լմփոշ։ Ինչո՞ւ ես հարցնում։*

ԼՄՓՈՇ— *Մենք այս առավոտ երկու ազատ տեղ ունեինք։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— (Մեղմորեն)։ *Այո, դու ճիշտ ես. Լմփոշ։*

Լռություն։

ԼՄՓՈՇ— *Ե՞րբ պատահեց։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Մոտ մեկ ժամ առաջ։* (Դադար)։ *Խնդրում եմ գիշերային քրոջը տեղյակ պահեք, թե Գոնչոն որ տեղն ընտրեց, եղա՞վ։*

ԼՄՓՈՇ— *Անպայման։ Երևի Ճուտոյի տեղն ընտրի, լուսամուտի մոտ։*

ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Ուրեմն բարի գիշեր։* (Հեռանում է։ Գոնչոն լուսամուտից դուրս է նայում։ Քառակուսին մոտենում է բառարանի սեղանին, նայում է գրքին, ապակյա դռանը, ապա Լմփոշին ու Գոնչոյին և նորից գրքին)։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Կարդում է)։ *Ապավինել՝ վստահել, հենվել, հուսալ...* (Ծածկում է բառարանը)։ *Գոնչո, ուզո՞ւմ ես ռադիո լսել։* (Գոնչոն նրան չի լսում։ Դիմում է Լմփոշին)։ *Իսկ դո՞ւ, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Շնորհակալ եմ, ես Պստիկ Աբների նկարներն եմ նայում։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Իհարկե, իհարկե, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Դո՞ւ ինչ ես անելու։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Կշարունակեմ վստահել, հենվել, հուսալ։*

ԼՄՓՈՇ— *Նստիր «Թայմ» կարդա, մի բանով զբաղվիր։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Ճիշտ ես ասում։* (Դարակից վերցնում է «Թայմ» հանդեսի համարն ու նստում Լմփոշի դիմաց)։ *«Թայմ»։*

ԼՄՓՈՇ— *Մեջն ի՞նչ կա։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Մի քանի էջ թերթելով)։ *Նամակներով է սկսվում։*

ԼՄՓՈՇ— *Ի՞նչ են ասում նամակներում։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Դժվարությամբ կարդում է)։ *«Սըր, ըստ «Թայմ»-ի սահմանման, Տարվա Ամենաերևելի Դեմքի կոչմանն արժանանում է տվյալ տարվա ընթացքում մեծագույն ճանաչման հասած մարդը, նա, ով, ավելի քան որևէ մեկը, դրական կամ բացասական առումով փոխում է համաշխարհային իրադարձությունների բնույթը։ Ըստ իս, այդ մարդը պետական քարտուղար Ջորջ Մարշալն է։ 1947-ի ընթացքում նա աննախադեպ առաջընթաց ապրեց՝ ռազմական հանճարից մինչև համաշխարհային դեմոկրատիայի ջատագովի վսեմ դերը։ Նրա անունը կրող ոգեշունչ ծրագիրը 1947-ի ամենաազդեցիկ հակամիջոցն է ռուսների համաշխարհային տիրապետության հասնելու ձգտումների ճանապարհին։ Մարշալն անկասկած տարվա ամենաերևելի դեմքն է, իսկ նրա ծրագիրը՝ մարդկության հույսն ու ապավենը»։* (Ընդհատում է, ասես նորից ցավից տառապելով)։

ԼՄՓՈՇ— *Շատ բարի, էլի կարդա։ Ի՞նչ պատահեց։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Ցածրաձայն)։ *Ես այս տարի ոչինչ չեմ արել, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Մի վհատվիր, սա երևի իսկապես Մարշալի տարին էր։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— *Չգիտեմ։* (Հանկարծ ցավից վեր է ցատկում, փորը բռնելով)։ *Լսիր, Լմփոշ, արի ռադիոս էստեղից քաշենք ու մարդավարի մեռնենք։* (Բացում է խալաթի փեշը, ցույց տալով փոդֆեռը մինչև ծունկը ոլորած շալվարով թեթև կոստյումը)։ *Ես իմ հա-*

գուստը թոցրել եմ, քոնն էլ կբերեմ՝ կարող ես ինձ պես զուգարանում հագնել։ Ես քսան դոլար ունեմ, դու էլ երևի մի քիչ կունենաս՝ էլ ինչի՞ն ենք սպասում, գրողը տանի։ Արի մարդավարի մեռնենք, Լմփոշ։ Մենք հո դեռ ազատ մարդիկ ենք, չէ՞... Արի մեռնենք էնպես, կարծես ոչ էլ հիվանդ ենք եղել։ Ես Նորթ Բիչում մի հինգ-վեց լավ տեղ գիտեմ, արի գնանք։ Էլ չեմ դիմանում էստեղ, չեմ դիմանում մահվան էս ապուշ հոտին։ Ուզում եմ փողոց դուրս գալ, կյանքի հոտն առնել։ (Կխվում է, լուռ սեղմելով փորը և ցավից աչքերը փակելով):

ԼՄՓՈՇ— *Շատ լավ։ Ուրի՞շ ինչ են գրում, կարդա, լսում եմ։* (Դադար): *Հիմա՞ ինչ եղավ։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Ցավից հազիվ շշնջում է՝ հայացքը Լմփոշին հառած): *Մի՞թե չես տեսնում, Լմփոշ, մի՞թե բան չես տեսնում։ Ի սեր աստծո, Լմփոշ, մի՞թե ոչինչ չես տեսնում, որ ինձ մի քիչ օգնես։ Ախր ինձ գոնե ինչ-որ մեկը պիտի մեկ-մեկ օգնի։*

ԼՄՓՈՇ— *Բանի տեղ մի դիր, սովորի բանի տեղ չդնել։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Համարյա արտասվելով): *Մի՞թե դու բոլորովին ոչինչ չես տեսնում, Լմփոշ։ Ես պետք է դուրս պրծնեմ էստեղից։ Ես դեռ ազատ մարդ եմ, մի՞թե չես տեսնում, որ ես...*

ԼՄՓՈՇ— (Խիստ, շշուկով): *Քառակուսի, մի բոպե ինձ լսիր։* (Կարճ դադար): *Ոչ դու ես ազատ լինելու պտուղ, ոչ էլ ես։ Եթե լինեինք, էն գլխից էստեղ չէինք ընկնի։ Մենք այլևս մարմին չենք։ Բան չեմ ասում, մարմինը կեղտի տոպրակ է, բայց դա միակ տեղն է, ուր մենք ուզած-չուզած պիտի անցկացնենք մեր մնացած կյանքը։ Մենք այլևս բանտ չենք, մենք բանտարկյալ ենք։ Ալքաթրազի տղերքի պես մեզ մնում է սոսկ նայել Սան Ֆրանցիսկոյին ու Գոլդեն Գեյթին։ Մենք չենք կարող փախչել, մինչև պատրաստ չլինենք անցնել կամուրջը։ Իսկ դու լավ գիտես, որ իմ ասած կամուրջը Սան Ֆրանցիսկո չի տանում։ Դու շան պես գիտես, որ եթե նույնիսկ հասնես Ֆրիսքո, ոչ մի հաճույք չես ստանա, որովհետև կմնաս քո սեփական Ալքաթրազի ստրուկը։ Մեր հաջորդ քայլը կամուրջն է, բայց ես դեռ պատրաստ չեմ այն անցնել։ Հիմա, խավարի մեջ, ես քո կարիքն ամենից շատ եմ զգում, Քառակուսի, էնպես որ քեզ կարգի բեր ու պինդ կաց։*

ՔԱՌԱԿՈՒՍԻ— (Սթափվելով): *Դե իհարկե, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Գնա զուգարան, դրսի շորերդ հանիր ու դիր տեղը։ Մենք մեր ուղուց էլ ոչ մի կողմ չենք շեղվի։* (Կարճ դադար): *Գնա Բկլատին անկողնուց հանիր։ Փոսիյոյին էլ բեր էստեղ։ Մենք դեռ էնքան ժա-*

մանակ ունենք, ինչքան աշխարհի երեսին ապրող ցանկացած մեկը, էնպես որ գնա տղերքին կանչիր։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Իհարկե, Լմփոշ։

ԼՄՓՈՇ— Իսկ ես առայժմ կզրուցեմ Գոնչոյի հետ։ Կաշխատեմ ամեն ինչ անել, որ նա էստեղ շուտ ընտելանա։ (Կարճ դադար)։ Լսիր, Քառակուսի, դու քիչ առաջ նոր նոպա ունեցար։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Մեծ բան չէր։

ԼՄՓՈՇ— Կարող ես դեղ խմել ու պառկել, գիտե՞ս։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Նման ցանկություն չունեմ։

ԼՄՓՈՇ— Թե մտքովդ անցնի, չքաշվես, չարժե իմ պատճառով մնալ։ Դրանում ոչ մի ամոթալի բան չկա՝ պարզապես ցավը կվերանա։ Ես չգիտեմ, թե քո վիճակը ինչքանով է վատ։ Իմ նոր ցավն ինձ անզգա է դարձրել, բայց դու հիմարություն մի արա, գնա պառկիր, եթե ուզում ես, ես չեմ նեղանա։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Ես չեմ ուզում պառկել, Լմփոշ։

ԼՄՓՈՇ— Եթե էդպես է, ուրեմն շնորհակալ եմ քեզնից, շատ եմ շնորհակալ։ Առանց քեզ ես ինձ էստեղ ավելի վատ կզգայի։ Ես էլ ոչինչ չեմ տեսնում ու կուզեի, որ դու էլի նվագեիր։ Աստված վկա, ես ու դու միշտ նույն լեզվով ենք խոսել, Քառակուսի։ Ազնիվ խոսք։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Իհարկե, Լմփոշ։

ԼՄՓՈՇ— Կուրանալուս համար վրաս հո չե՞ս զայրացել։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Չէ։

ԼՄՓՈՇ— Ես քեզ կսպասեմ։ (Քառակուսին սրտանմվիկ մի հայացք է նետում իր շուրջը, շարժվում է դեպի դուռը, ապա ընկնում մի ծրենկի վրա, փորը բռնում և փորձում գոռոցը զսպել։ Լմփոշը շուտ է գալիս)։ Քառակուսի՞։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Ի՞նչ։

ԼՄՓՈՇ— Լա՞վ ես։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Իհարկե։

ԼՄՓՈՇ—— Գա՞մ հետդ։

ՔԱՌԱԿՈՒՍԻ— Կարիք չկա։ (Դժվարությամբ ոտքի է կանգնում, կառչելով դռան բռնակից։ Մի կողմ է հրում դուռը, դուրս գալիս, դուռը հետ հրում և մյուս կողմը կանգնած երկար հերս է նայում՝ ցավից դեմքը ջղաձգված։ Ապա հեռանում է։ Երկար լռություն)։

ԼՄՓՈՇ— (Ցածրաձայն)։ Գոնչո՞։ (Դադար, ավելի բարձր)։ Գոնչո՞։

ԳՈՆՉՈ— (Շուտ գալով)։ Այո՞։

ԼՄՓՈՇ— Լաց էիր լինում, չէ՞։ (Լռություն)։

ԳՈՆՉՈ— Ինչ մեղքս թաքցնեմ։

ԼՄՓՈՇ— Առաջին օրը բոլորն էլ լաց են լինում, երբ հասկանում են, թե կյանքն ինչ հիմար ձևով կարող է վերջանալ։

ԳՈՆՉՈ— Տղայիս եմ կարոտել։

ԼՄՓՈՇ— Երջանիկ մարդ ես՝ տղա ունես։

ԳՈՆՉՈ— (Սեղանին մոտենալով): Գոնե մի անգամ էլ նրան տեսնեի, ուրիշ բան չեմ ուզում, հանգիստ կմեռնեի։

ԼՄՓՈՇ— Ե՞րբ ես վերջին անգամ տեսել։

ԳՈՆՉՈ— (Դանդաղ): Երկու տարի առաջ, հինգ տարեկան էր, երբ նրա մայրն ինձ լքեց։ Ես նրան չեմ մեղադրում։ Ես ուշ ամուսնացա և, ընդհանրապես, միշտ էլ մի քիչ ծիծաղելի եմ եղել։ «Ամերիկյան բանկի» Սանսեթի բաժանմունքում էի աշխատում։ Կինս դուրս գալիս էր, բայց այս աշխարհում իմ երբևէ սիրած մարդը տղաս է։ Կինս իր տարեկիցների շրջապատը նախընտրում էր ինձ, բայց ես չէի առարկում, նույնիսկ երբ նա տանը չէր գիշերում։ Ինձ հերիք էր, որ տղաս հետս է, մենք ամբողջ հինգ տարի միասին էինք։ Ինձ լքելիս կինս հղի էր... (Դադար): Ուզում եմ ասել, ես գիտեի, որ երեխան իմը չի, բայց, միևնույն է, խնդրեցի, որ կինս մնա։ Երևի նա ինձ արդեն տանել չէր կարող։ Պիտի որ, թե չէ այդպես վրաս չէր գոռա... (Ցածրաձայն): Նա ասաց, որ տղաս իմը չի։ Ես գիտեի, որ ատելությունից է այդպես ասում, բայց երանի թե ասած չլիներ... Անցյալ տարի նա ամուսնացավ Օրթիգա փողոցի բարում աշխատող մեկի հետ։ Ես արդեն թողել էի աշխատանքս, երբ նա տղայիս հետ տեղափոխվեց այդ մարդու մոտ։ Այսինքն, ինձ գործից հանել էին։ (Գրպաններից մանր-մունր իրեր է հանում ու զարմացած զննում: Լռություն): Արդեն բանի պետք չէի։ Ես վաղուց գիտեի, որ առողջությանս մի բան է պատահել, բայց չէի էլ փորձում պարզել, թե ինչ։ Երևի վախենում էի։ Իսկ տղաս որ ծնվեց, արդեն էլ վեջս չէր։ Նա որ հետս էր, ինձ ուրիշ բան պետք չէր, ու ես այլևս դրանով չզբաղվեցի... Երբ կինս ինձ լքեց, նոր միայն հետաքրքրվեցի ու իմացա։ Հենց այդ ժամանակ էլ ինձ գործից հանեցին, բայց ես չէի դժգոհում։ Ես կնոջս նամակ գրեցի, խնդրելով, որ թողնի տղայիս տեսնեմ, բայց նա նամակներիս չէր պատասխանում։ Այնպես որ, մի գիշեր գնացի այդ բարը, որ հետը խոսեմ։ Կինս ինձ բոլորի ներկայությամբ խայտառակ արեց, իսկ նրա մարդն ինձ դուրս վռնդեց։ Չնայած, այն ժամանակ դեռ ամուսնացած էլ չէին։ (Դադար): Նա ինձ գոտկատեղից բռնեց ու դուրս շպրտեց։ (Դադար): Այդ օրվանից ես անընդհատ շարժման մեջ էի։ Սկզբում ոտքով իջա քաղաքի կենտրոն, որովհետև ամոթից չէի կարողա-

նում մի բան նստել, հետո նստեցի Ռինո գնացող ավտոբուսը, քանի որ ավտոկայանի միակ ավտոբուսն այնտեղ էր գնում։ Իսկ երբ տեղ հասա, որոշեցի ճանապարհը շարունակել։ Ախր ես միշտ երազել եմ Նյու Յորք ընկնել։ Երբ Նյու Յորքում փողերս վերջացան, հանրախանութում գործի ընդունվեցի, բայց աշխատելու համար շատ էի հոգնած ու մաշված, այնպես որ երկար չդիմացա։ Առաջին գործիս տեղում քսանյոթ տարի էի աշխատել, կհասկանաս, որ շատ էի հոգնած։ Նորից ավտոբուսով ճամփա ընկա ու անցյալ շաբաթ վերջապես էլի եկա Սան Ֆրանցիսկո։ Փորձեցի տղային տեսնել, բայց երևի լավ չփորձեցի։

ԼՄՓՈՇ— Ինչո՞ւ։

ԳՈՆԶՈ— Չգիտեմ, վախեցա։ Վախեցա իմ կնոջից, նրա նոր ամուսնուց։(Դադար, մեղմորեն): Ճիշտն ասած, երևի վախեցա, որ տղաս ինձ չհիշի։

ԼՄՓՈՇ— Հա։

ԳՈՆԶՈ— Մի ամբողջ օր տան առաջ թրև եկա, մտածելով, որ նա տղայի հետ դուրս կգա, բայց նա դուրս չեկավ, ու ես կողքի դեղատնից զանգ տվեցի։ Լսափողը տղաս վերցրեց։ Սկզբում հուզմունքից խոսել չէի կարողանում, հետո ասացի՝ «Հայրդ է խոսում» (Դադար): Տղաս ասաց՝ «ո՞վ»... հետո մոտեցավ այդ մարդն, ու ես լսափողը կախեցի։

ԼՄՓՈՇ— Ինչո՞ւ էստեղ եկար։

ԳՈՆԶՈ— Բերեցին։ Ես մնացել եմ առանց մի ցենտի, և, ինչպես տեսնում ես, շատ հիվանդ եմ։

ԼՄՓՈՇ— Շա՞տ է ցավում։

ԳՈՆԶՈ— Շատ։ Վաղուց էր ցավում, բայց այստեղ գալուց հետո ուժեղացավ։

ԼՄՓՈՇ— Եթե փող ունենայիր, ի՞նչ կանեիր։ (Դադար): Ուզում եմ ասել՝ հենց հիմա։

ԳՈՆԶՈ— Կգնայի տղային տեսնելու։

ԼՄՓՈՇ— Ճիշտ է, ես էլ նույնը կանեի։ Ինչո՞ւ էր նա քեզ Գոնչո ասում։

ԳՈՆԶՈ— Ե՛ս էի իրեն այդպես ասում, մենք ձև էինք անում, թե նույն մարդն ենք, ու նա էլ ինձ սկսեց Գոնչո ասել։ Ինձ միշտ թվացել է, որ մենք իսկապես նույն մարդն ենք։

ԼՄՓՈՇ— Այո։

ԳՈՆԶՈ— Բայց երբ ես ասացի՝ «Հայրդ է խոսում», նա ընդամենը ասաց՝ «ո՞վ» (Դադար): «Ո՞վ»։ Հավատալս չի գալիս, թե ինձ մոռացել է։

ԼՄՓՈՇ— *Ինչո՞ւ դու էլ նրան չես մոռանում։ Նրան բան չի եղել, ողջ և առողջ իր համար ապրում է։*

ԳՈՆՉՈ— *Չեմ կարող մոռանալ։ Ինչպե՞ս կարող է հայրն իր որդուն մոռանալ։ Եթե գոնե մի անգամ էլ նրան գրկեի, ինձ այսքան մենակ չէի զգա։ Ես շատ եմ մենակ՝ այսպես մեռնել չի լինի։ Թե իմանայի, որ սիրում է ինձ, իսկի չէի զգա, որ մեռնում եմ, նույնիսկ ուրախ կլինեի թողնել-գնալ։ Բայց այսպես գնալ չի լինի։ Ես ատում եմ այս տեղը։ Ես ամեն ինչ ատում եմ, բացի իմ որդուց։*

ԼՄՓՈՇ— *Էդ տեսակ մտքերով դու նրան կխրտնեցնես։*

ԳՈՆՉՈ— *Գիտեմ, բայց ոչինչ չեմ կարող անել, ուզում եմ մի անգամ էլ նրան գրկել, որ հանգիստ մեռնեմ։*

ԼՄՓՈՇ— *Լավ կլինի մոռանաս նրան, իմաստ չունի աշխարհի քո միակ սիրածդ էակին վախեցնել։*

ԳՈՆՉՈ— (Խենթի պես)։ *Նա պիտի առաջվա պես սիրի ինձ, որ ես ինձ այսքան մենակ չզգամ ու գնալուց չվախենամ։ Նա իմ տղան է ու պետք է սիրի ինձ։*

ԼՄՓՈՇ— *Գուցե նա այլևս չի՞ կարող քեզ սիրել։ Գուցե նա քո նախկին կնոջ ամուսնո՞ւն է սիրում։*

ԳՈՆՉՈ— (Հանգիստ)։ *Ուրեմն ես այդ մարդուն կսպանեմ։*

ԼՄՓՈՇ— *Ինքդ գիտես, որ չես սպանի։*

ԳՈՆՉՈ— (Ցածրաձայն)։ *Գիտեմ, որ կսպանեմ։*

ԼՄՓՈՇ— *Ինչպե՞ս։*

ԳՈՆՉՈ— (Գրպանից մի փոքր ատրճանակ հանելով)։ *Սրանով։* (Դադար)։ *Մեկն ինձ ավտոբուսում առաջարկեց։ Փող չուներ, իմ ամբողջ ունեցվածքն էլ երեք դոլար էր։ Ասացի, որ իրեն պահի, բայց նա վախենում էր ատրճանակն իր մոտ պահել։*

ԼՄՓՈՇ— *Ատրճանա՞կ։ Ի՞նչ գիտես, որ փչացած չի։*

ԳՈՆՉՈ— *Փորձել եմ, փչացած չի։ Ես ուզում էի համոզվել, որովհետև հետ գալուց որոշել էի... Ուզում էի սենյակ վարձել ու ամեն օր որդուս հետ տեսնվել, մինչև որ վերջս գար։ Հետո կգնայի օվկիանոսի ափն ու սա կբանեցնեի։* (Երկար լռություն)։

ԼՄՓՈՇ— *Դեռ ժամանակ ունես, շորերդ էլ վրադ են։*

ԳՈՆՉՈ— (Զեռքի կոճակին նայելով)։ *Բայց էլ փող չունեմ։*

ԼՄՓՈՇ— (Խալաթի ներսի գրպանից մի քանի թղթադրամ հանելով)։ *Էստեղ մի քիչ փող կա։ Մի վեց-յոթ օրվա հյուրանոցի ու սենդի կհերիքի։*

ԳՈՆՉՈ— (Փողը վերցնելով)։ *Եթե էլ չտեսնվենք՝ անոմս Հարի Վեսթ է։ Չէի սպասում, որ այսքան բարի մարդ կգտնվի։ Երանի կարո-*

զանայի քեզ համար մի բան անել։ (Փորփրում է գրպանները)։ *Մոտս որդուս երկու լուսանկարը կա, կուզեի մեկը քեզ տալ։* (Նայում է նկարներից մեկին ու դնում Լմփոշի առաջ)։ *Ես գնացի, շնորհակալություն։*

ԼՄՓՈՇ— *Հուսով եմ, որ տղադ քեզ կհիշի։*

Գոնչոն դուրս է գալիս։ Լմփոշը վերցնում է լուսանկարն ու փորձում տեսնել, թե վրան ինչ կա, բայց չի կարողանում։ Մոտենում է դռանն ու, դուրս նայելով, լսում։ Ապա շարժվում է դաշնամուրի կողմը, ներքով դիպչում մի քանի ստեղների ու նորից նստում իր աթոռին, անկասկած արդեն բոլորովին կուրացած։ Շարունակում է նայել լուսանկարին, երբ մտնում է Փոսիյոն։

ԼՄՓՈՇ— *Դո՞ւ ես, Քառակուսի։*

ՓՈՍԻՅՈ— *Քառակուսին շատ վատ է, Լմփոշ։* (Լմփոշին շոկոլադ է մեկնում)։ *Շոկոլադ կուզե՞ս։*

ԼՄՓՈՇ— *Շնորհակալ եմ։* (Պարզում է ձեռքը, գտնում շոկոլադն ու, թուղթը պատռելով, կեսը կծում)։ *Փոսիյո, ես էլ ոչինչ չեմ տեսնում։*

ՓՈՍԻՅՈ— *Ես կօգնեմ քեզ։*

ԼՄՓՈՇ— (Ցածրաձայն)։ *Քառակուսուն ի՞նչ է պատահել։*

ՓՈՍԻՅՈ— *Զուգարանում ձեռքի դաստակն ածելիով կտրել է։ Պատգարակով տարան։*

ԼՄՓՈՇ— *Աստված իմ։* (Դադար)։ *Բկլատի՞ն ինչ եղավ։*

ՓՈՍԻՅՈ— *Լաց է լինում։*

ԼՄՓՈՇ— *Լա՞ց է լինում։*

ՓՈՍԻՅՈ— *Լաց է լինում, որովհետև Ճուտոն մեռել է։* (Ցածրաձայն)։ *Էլի շոկոլադ կուտե՞ս։* (Լմփոշին նոր շոկոլադ է առնում։ Վերջինս փաթեթը բացում ու սկսում է ուտել)։

ԼՄՓՈՇ— *Ես Քառակուսու համար ամեն ինչ արի, նա խոստացել էր դիմանալ, խոստացել էր օգնել ինձ։*

ՓՈՍԻՅՈ— *Ես կօգնեմ քեզ, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Շատ, շատ շնորհակալ եմ։* (Դադար)։ *Լսիր, Փոսիյո։* (Նրան է պարզում Գոնչոյի թողած լուսանկարը)։ *Սրա վրա ի՞նչ կա։*

ՓՈՍԻՅՈ— *Տղա է։*

ԼՄՓՈՇ— *Ի՞նչ տեսակ տղա։*

ՓՈՍԻՅՈ— *Փոքրիկ տղա։*

ԼՄՓՈՇ— *Ի՞նչ կասես նրա մասին։*

ՓՈՍԻՅՈ— *Լավ տղա է երևում։*

ԼՄՓՈՇ— *Թե քո տղան լիներ ու դու նրան շատ սիրեիր, ի՞նչ կանեիր, եթե նա քեզ չսիրեր։*

ՓՈՍԻՅՈ— (Երկար մտածմունքից հետո): *Ոչինչ։ Ի՞նչ կարող եմ անել։*

ԼՍՓՈՇ— *Եթե նա աշխարհում երբևէ քո սիրած միակ մարդը լիներ և համարյա հինգ տարի ջերմորեն քեզ սիրած, իսկ հետո նրա մայրը քեզ ասեր, որ նա քո տղան չի, ի՞նչ կանեիր։*

ՓՈՍԻՅՈ— (Մտածելով): *Ոչինչ։*

ԼՍՓՈՇ— *Եթե կինդ նրան քեզանից խլեր, ի՞նչ կանեիր։*

ՓՈՍԻՅՈ— (Ավելի արագ): *Ոչինչ։*

ԼՍՓՈՇ— *Եթե ուզեիր գոնե մեկ անգամ էլ նրան գրկել, իսկ կնոջդ նոր ամուսինը քեզ չթողներ, կսպանեի՞ր նրան։*

ՓՈՍԻՅՈ— *Չէ։*

ԼՍՓՈՇ— *Ինչո՞ւ չէ։*

ՓՈՍԻՅՈ— *Չգիտեմ։*

ԼՍՓՈՇ— (Հանկարծ): *Դուռը մի կողմ հրիր, լա՞վ։*

ՓՈՍԻՅՈ— (Դուռը բացելով): *Ի՞նչ պատահեց։*

ԼՍՓՈՇ— *Մի ձայնապնակ դիր ու բարձր միացրու։*

ՓՈՍԻՅՈ— *Ախր բոլորը քնած են։*

ԼՍՓՈՇ— *Բկլատը քնած չի։ Բկլատը լաց է լինում, իսկ ես չեմ ուզում որ նա լաց լինի։ Բարձր երաժշտությունը նրան էստեղ կբերի, ու ես նրան կարգի կգցեմ։* (Փոսիյոն մթացնում է նվագարկիչը: Երաժշտությունը Խաչատրյանի «Դիմակահանդեսի սյուիտ»-ի մազուրկան է): *Եղավ, շատ լավ է։*

Երկուսով լսում են: Քիչ անց մտնում է Բկլատը՝ դռան հետևից ծածկելով Անօգնական տեսքով մոտենում է նվագարկիչին, նստում ծալովի աթոռին և նու սահատ լսում՝ մինչև երաժշտության ավարտը: Այդ անշատում է սարքն ու մոտենում բառարանի սեղանին:

ԲԿԼԱՏ— (Ցածրաձայն, համարյա ինքն իրեն): *Ո՞վ փակեց բառարանը*

ԼՍՓՈՇ— *Քառակուսին փակեց, երբ որ իմացավ Ճուտոյի մասին։*

ԲԿԼԱՏ— *Ո՞վ էր նրան ասում բառարանը փակեր։ Ո՞վ էր ասում ձեռ քը կտրեր։*

ԼՍՓՈՇ— *Ոչ ոք չէր ասում։*

ԲԿԼԱՏ— *Նա ի՞նչ իրավունք ուներ բառարանը փակելու։*

ԼՍՓՈՇ— *Նա չգիտեր ինչ է անում։*

ԲԿԼԱՏ— *Նա տեղը կորցրել է, մենք արդեն «անհողդողդին» էինք հասել...* (Հանկարծ): *Անտեր մնա իմ սև բախտը։* (Մտնում է գիշերային բուժքույրը, մոտ հիսուն տարեկան ծանրամարմին մի կին: Նա անկասկած շփոթված է, բայց փորձում է ինքն իրեն զսպել) *Քույր, Ճուտոն ո՞ւր է։*

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Ինչի՞ մասին ես խոսում։*

ԲԿԼԱՏ— *Առավոտն էստեղ էր, հիմա՞ ուր է։*

ԼՄՓՈՇ— *Ինչպե՞ս է Քառակուսու վիճակը, լա՞վ է։*

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Մի բոպե լռեք, երկուսդ էլ։* (Քարտին նայելով)։ *Ո՞ւր է Հարի Վեսթը, նոր հիվանդը։ Ցերեկային քույրն ինձ ասաց, որ նրան այստեղ կգտնեմ։*

ԼՄՓՈՇ— *Գնաց հագուստը փոխելու։*

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Խնդրում եմ նրա գալուն պես ինձ տեղյակ պահել։*

ԼՄՓՈՇ— *Անպայման։* (Կարճ դադար)։ *Քառակուսին կլավանա՞։*

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Վախենամ թե՝ ոչ։* (Կարճ դադար)։ *Նա պիտի որ սոսկալի ցավեր ունեցած լիներ այդ բանն անելու համար։*

ԼՄՓՈՇ— *Ասում էր, թե մեկը կարծես աղիքները պատառոտում է։*

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Նա պետք է ինձ դիմած լիներ, չպետք է սպասեր, մինչև ցավն անտանելի դառնար։*

ԼՄՓՈՇ— *Դուք ի՞նչ կարող էիք անել։*

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Թերևս դոկտոր Բոհրենը կարողանար օգնել նրան։*

ԼՄՓՈՇ— *Քառակուսին արդեն երեք շաբաթ է էստեղ էր։ Դոկտոր Բոհրենը նրան օգնելու ահագին ժամանակ ուներ։*

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Վերջացրեք, խնդրում եմ։ Կարիք չկա դոկտոր Բոհրենին կծել, նա հրաշքներ չի գործում, բայց, համենայն դեպս, կարող է ժամանակավորապես թեթևացնել ցավը։*

ԼՄՓՈՇ— *Ճուտոյի ցավը նա թեթևացրեց մեկընդմիշտ։*

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Մի բոպե, ձեր վիճակում բոլորիդ համար իհարկե բնական է անշնորհակալ լինելը, սակայն ես խորհուրդ կտայի ձեր անարժան մտքերը ձեզ պահել։ Եթե դուք չգիտեք, թե ձեզ ինչ բախտ է վիճակվել՝ արժանանալ դոկտոր Բոհրենի խնամքին, ապա ես այդ լավ գիտեմ և չեմ հանդուրժի, որ նրան ինչ-որ հեքիմի տեղ դնեն։*

ԼՄՓՈՇ— *Ի՞նչ եք ասում... Մենք իհարկե անչափ բախտավոր ենք նրա խնամքին արժանանալու համար, բայց ոչ այնքան, որքան ինքը՝ մեզ պես հիվանդներին էշի տեղ դնելով։ Երեկ Ջասփերը, այսօր Ճուտոն, վաղը Բկլատը։*

ԲԿԼԱՏ— *Վաղը Բկլա՞տը։ Թող հլա մեկը փորձի վաղը Բկլատին էշի տեղ դնել։*

ԼՄՓՈՇ— *Կամ Քառակուսուն, կամ ինձ, կամ մեր բաժանմունքի ցանկացած ուրիշ հիվանդին։*

ԲԿԼԱՏ— *Վաղը չէ մյուս օրն էլ Բկլատին ոչ ոք էշի տեղ չի դնի։*

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Վերջ տվեք, խնդրում եմ։*

ԲԿԼԱՏ— *Դոկտոր Բոհրնը Բկլատին էշի տեղ չի դնի, ինչ է թե Բկլատը սևամորթ է։ Թող որևէ մեկը փորձի Բկլատին էշի տեղ դնել։*

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Վերջ տվեք, ասացի։* (Կարճ դադար): *Լմփոշ, դուք պետք է որ մեզ աջակցեիք։*

ԼՄՓՈՇ— *Քի՞չ եմ աջակցել։ Ես Քառակուսուն երեք շաբաթ կենդանի պահեցի, ես նրան այսօր էլ փորձեցի օգնել, բայց...* (Լռում է):

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— (Մեղմորեն): *Պետք է ինձ զգուշացրած լիներիք։* (Կարճ դադար)։ *Երբ նոր հիվանդը գա, խնդրում եմ ինձ ասեք։* (Դուրս է գնում: Երկար լռություն):

ԲԿԼԱՏ— (Ցածրաձայն): *Լմփո՞շ, չե՞ս փոշմանել բառարանը կարդալու մտքից, էսօր ուզում էիր, չէ՞։*

ԼՄՓՈՇ— *Ես հիմա էլ եմ ուզում։*

ԲԿԼԱՏ— (Բառարանը Լմփոշի առջև դնելով): *Շնորհակալություն, Լմփոշ։ Մենք «անհողդողդին» էինք հասել։ Մյուս բառը ո՞րն է, ի՞նչ է նշանակում։*

ԼՄՓՈՇ— (Բառարանը բացելով ու փորձելով կարդալ): *Մյուս բառը...* (Տրորում է բաց աչքն ու նորից փորձում): *Մյուս բառը...*

ԲԿԼԱՏ— *Դե կարդա, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Ուզում եմ, բայց երևի էլ չեմ տեսնում։*

ԲԿԼԱՏ— *Էհ, Լմփոշ, նորից փորձի, լավ նայի, «անհողդողդի» մյուս բառը ո՞րն է։*

ԼՄՓՈՇ— *Ապավինել։*

ԲԿԼԱՏ— *Ճի՞շտ, ի՞նչ է նշանակում։*

ԼՄՓՈՇ— *Հուսալ։*

ԲԿԼԱՏ— *Շատ լավ, ուրի՞շ ինչ է նշանակում։*

ԼՄՓՈՇ— *Ցոլա գնալ, յոլա գնալ ու էլի յոլա գնալ։*

ԲԿԼԱՏ— *Էդպես գի՞րքն է ասում։*

ԼՄՓՈՇ— *Ես եմ ասում։ Ես էլ չեմ կարող գիրք կարդալ, ես ոչինչ չեմ տեսնում։ Ես նույնիսկ դեմքդ չեմ տեսնում, ինձ համար ամեն ինչ սավեր է դարձել։*

ԲԿԼԱՏ— (Հուսահատ): *Անիծվի իմ սև բախտը... Աչքս մեկնումեկն ինձ համար պիտի կարդա բառարանը, թե չէ չի լինի։ Փոսիյո, ինչ կլինի, կարդա «անհողդողդի» մյուս բառը։*

ՓՈՍԻՅՈ— *Ես կարդալ չգիտեմ։*

ԲԿԼԱՏ— *Ձևեր մի թափի, պարզ չի՞, որ գիտես։*

ՓՈՍԻՅՈ— *Միայն հունարեն։*

ԲԿԼԱՏ— *Լմփոշ, ո՞ւր է նոր հիվանդը։ Նա հաստատ կիմանա կարդալ։ Ո՞ւր գնաց։*

ԼՄՓՈՇ— *Չգիտեմ։*

ԲԿԼԱՏ— *Գնամ գտնեմ, բերեմ։ Նոր հիվանդը կկարդա բառարանը։* (Դուրս է գալիս։ Դադար։ Լմփոշը կամաց ծիծաղում է)։

ՓՈՍԻՅՈ— (Կամաց)։ *Ես քեզ կօգնեմ, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Շնորհակալ եմ, Փոսիյո։* (Կարճ դադար)։

ՓՈՍԻՅՈ— *Ջասփերի մահն ինձ վրա ազդեց։*

ԼՄՓՈՇ— *Հա, մազալու տղա էր, իր հեգնանքով ու հնարանքներով։*

ՓՈՍԻՅՈ— *Ճուտոյի մահն էլ ազդեց։*

ԼՄՓՈՇ— *Հաճելի էր ամեն առավոտ նրա պես խաղաղ մարդ տեսնելը՝ չինաստանցի մարդ։*

ՓՈՍԻՅՈ— *Գիտես, Քառակուսու...*

ԼՄՓՈՇ— *Այո, նա լավ ընկեր էր։* (Լռություն)։

ՓՈՍԻՅՈ— *Բկլատն ինձ առավոտյան պատմեց, որ դու ասել ես, իբր ես բոլորին ատում եմ։*

ԼՄՓՈՇ— *Բոլորն էլ բոլորին ատում են, Փոսիյո։ Իսկ ես դա ասացի, որ նա պառկած չմնա ու ապրի։ Եթե ասեի, թե դու բոլորին սիրում ես, էլի ճիշտ կլիներ, բայց դա նրան անկողնուց չէր հանի։ Բոլորն էլ բոլորին սիրում են, ի՞նչ է եղել որ։ Բայց մեր կռիվը կենդանի մնալու համար է, իսկ ո՞վ չգիտի, որ երբ սպառվում է ատելությունը, էլ պայքար չի կարող լինել։ Ես դա ասացի, որովհետև գիտեի, որ դու ինձ կհասկանաս։ Դու մեզնից մեծ ես ու մյուսներից շատ ես էստեղ եղել։ Բկլատին պետք է այն դեղը, որ աշխարհի ոչ մի հիվանդանոցում չես գտնի։ Մենք բոլորս էլ դրա կարիքն ունենք։ Հասկանում ես, չէ՞։*

ՓՈՍԻՅՈ— (Մեղմորեն)։ *Հասկանում եմ։* (Կարճ դադար)։ *Մարդը մազալու բան է։ Ինչքան ատի՝ կօգնի, ինչքան սիրի՝ կվնասի։ Ախր ո՞վ ում օգնի՝ հա՞յրը՝ որդուն, ամուսի՞նը՝ իր կնոջը, մա՞յրը՝ աղջկան, եղբա՞յրը՝ եղբորը, ընկե՞րն՝ ընկերոջը։ Չէ։ Ոչ ոք ոչ ոքի չի օգնում։ Որովհետև մարդը մարդ է, մարդը հիմարության տոպրակ է, մարդը տոզաած ու փուչ կատակ է։ Ճիշտ է, ես Ջասփերի մահից վատ զգացի, բայց, սուտ չեմ ասում, Լմփոշ, նաև ուրախացա։* (Կարճ դադար)։ *Հասկանո՞ւմ ես։*

ԼՄՓՈՇ— *Հասկանում եմ։*

ՓՈՍԻՅՈ— *Հասկանալը հեշտ չի, Լմփոշ։ Ես շատ եմ փորձում, բայց բան դուրս չի գալիս, խճճվում եմ, սկսում եմ ոչինչ չհասկանա-*

և երաժշտությունն եմ միացնում։ Բայց հիմա երաժշտությունից էլ եմ հոգնել։ Գնամ քնեմ, Լմփոշ, վաղը երևի տեսնվենք։

ԼՄՓՈՇ— Բարի գիշեր, Փոսիյո։ (Փոսիյոն դուրս է գնում)։ Բարի գիշեր, Քառակուսի։ Բարի գիշեր, Ճուտիկ։ Բարի գիշեր, Գոնչո։

ԲՂԼԱՏ— (Շնչակտուր ներս է ընկնում)։ Չեկա՞վ նոր հիվանդը։ Ամբողջ բաժանմունքը տակնուվրա արի։ Էստեղ չի՞ մտել։

ԼՄՓՈՇ— Չէ։

ԲՂԼԱՏ— (Համարյա հեկեկալով)։ Ախր մեկն ինձ համար պիտի կարդա՞ բառարանը, թե չէ, Լմփոշ։ Ճուտոյին որ տարան, արդեն «անհողդողդին» էինք հասել։ Ամեն ինչ լավ էր, մինչև որ բժիշկները նրան տարան ու սպանեցին։

ԼՄՓՈՇ— (Ցածրաձայն)։ Բժիշկները չեն սպանել նրան։

ԲՂԼԱՏ— Բա ի՞նչ են արել։

ԼՄՓՈՇ— Նրանք ուզում էին Ճուտոյի վիճակը թեթևացնել։

ԲՂԼԱՏ— Բժիշկները գիտեին, որ Ճուտոն անհույս էր, էլ ինչի՞ նրան էշի տեղ դրին։

ԼՄՓՈՇ— (Ցածրաձայն)։ Փոսիյոն Ճուտոյին խորհուրդ չտվեց, որ փորձի։ Փոսիյոն բերանը փակ պահեց՝ իսկական ընկերոջ պես։

ԲՂԼԱՏ— Ասածդ ի՞նչ է։

ԼՄՓՈՇ— Ես Ճուտոյին չասացի, որ փորձի, ես էլ բերանս փակ պահեցի։

ԲՂԼԱՏ— Ուրեմն ի՞նչ։

ԼՄՓՈՇ— Դե ուրեմն դու էլ կարող էիր բերանդ փակ պահել։

ԲՂԼԱՏ— Ե՞ս եմ մեղավոր, որ Ճուտոն մեռավ։

ԼՄՓՈՇ— Կարող էիր բերանդ փակ պահել։

ԲՂԼԱՏ— (Լմփոշի կոկորդից բռնելով)։ Տես հա, մենակ թե չասես, թե ես եմ իմ ընկերոջը սպանել, մենակ թե էդպես բան չասես։

ԼՄՓՈՇ— (Հանգիստ)։ Ես չեմ ասել, որ նրան դու ես սպանել։ Նրան ոչ ոք չի սպանել։

ԲՂԼԱՏ— (Բաց թողնելով նրան)։ Ոչ ոք չասի, թե ես սպանել եմ իմ ընկերոջը։ Բժիշկներն են նրան սպանել։

ԼՄՓՈՇ— Նա չպիտի փորձեր։ Նա առանց դրա էլ բավական ժամանակ ուներ բառարանը կարդալու համար։

ԲՂԼԱՏ— Չէ, էդպես բան մի ասի, Լմփոշ, դու հո գիտես, որ սուտ ես ասում։

ԼՄՓՈՇ— Ես սուտ չեմ ասում։ Ի՞նչ գիտես, թե նա առանց դրա էլի մի երեք ամիս չէր ապրի։ (Լռություն)։

ԲԿԼԱՏ— (Նորից համարյա հեկեկալով)։ Բժիշկներն ինձ խաբեցին, Լմփոշ, նրանք ձև էին անում, թե Ճուտոյի համար ինչ-որ հույս կա։

ԼՄՓՈՇ— Բժիշկներից նեղանալն իմաստ չունի։ Նրանք ինչ որ կարող էին, արին։ Քեզանից ընդամենը պահանջվում էր բերանդ փակ պահել։ Ճուտոն չէր ուզում ռիսկի դիմել։

ԲԿԼԱՏ— Լսիր, ես հո բժիշկ չեմ։ Նրանք էնպես են իրենց պահում, կարծես գիտեն, թե ինչ են անում։ Ես ուզում էի օգնել Ճուտոյին։

ԼՄՓՈՇ— Պարզ է, որ չէիր ուզում վնասել, բայց մեկ է՝ պետք չէր բերանդ բացել, հանկարծ ու բժիշկները չգիտեին, թե ինչ են անում։ Իմացիր՝ բժիշկներն ուրիշներից էնքան էլ շատ բան չգիտեն։

ԲԿԼԱՏ— Ես ի՞նչ իմանայի, Լմփոշ։ Ես կարծում էի բժիշկներն ամեն ինչ գիտեն, թե չէ մի ծպտուն էլ չէի հանի։ Բայց նրանք իրենց էնպես էին պահում, կարծես ամեն ինչ գիտեն, ու երբ Ճուտոն ինձ հարցրեց, ես ասացի, որ փորձի։ (Դադար)։

ԼՄՓՈՇ— Գուցեև ճիշտը դու ես։

ԲԿԼԱՏ— Այսի՞նքն։

ԼՄՓՈՇ— Գուցե նրանք իսկապես գիտեին, թե ինչ են անում։ Համենայն դեպս՝ ջահելը։

ԲԿԼԱՏ— Չհասկացա, հիմա՞ ինչ ես ասում։

ԼՄՓՈՇ— Նա գիտեր, որ Ճուտոն անհույս է։

ԲԿԼԱՏ— Էլ ինչի՞ էր հակառակը ձևացնում։

ԼՄՓՈՇ— Ո՞վ գիտի։ Երևի ուզում էր մեր հիվանդության մասին մի բան ավել իմանալ։

ԲԿԼԱՏ— Ու Ճուտոյին սպանեց, որ իմանա՞։

ԼՄՓՈՇ— Ե՞ս ինչ գիտենամ։ Համենայն դեպս էստեղ բոլոր վիրահատությունները նա է անում։

ԲԿԼԱՏ— Մեր բժիշկը չի՞ անում։

ԼՄՓՈՇ— Էլ չի անում։ Նա չի ուզում ռիսկի դիմել, ուրիշներին է խընդրում։ Ինչ որ է՝ բերանդ բացելու կարիք չկար։

ԲԿԼԱՏ— (Հուսահատ)։ Չգիտեմ բախտս ինչի է թարսվել։ Չգիտեմ ինչի բերանս փակ չեմ պահում, Լմփոշ, բայց բժիշկներն ինձ էշի տեղ դրին, ու ես Ճուտոյին համոզեցի փորձել, որովհետև ուզում էի, որ նա բառարանն առանց ցավի կարդա։ Ես ամբողջ սրտով հավատում էի, որ նրանք Ճուտոյի վիճակը կթեթևացնեն, ու քեֆս գալիս էր էդ մտքից՝ ուզում էի պապի նման ձեռքով անել։ Կյանքում առաջին անգամ ինձ էնքան լավ էի զգում, որ ոչ ոքից չէի ուզում մուռ հանել։ Էնքան լավ էր, որ ծնկաչոք աղոթում էի ու կարծում, թե աստված իմ աղոթքը կլսի։ Բայց նա չլսեց, Լմփոշ, նա թողեց,

որ Ճուտոն գնա։ Ինչի՞ համար, որովհետև ես սև՞ եմ։ Որովհետև Ճուտոն չինացի՞ էր։ Ախր շատ բան չէի խնդրել՝ մի անցավ ամիս ընկերոջս համար, որ մենք միասին կարողանանք բառարանը կարդալ։ Ինչի՞ աստված ինձ մերժեց, էն էլ՝ հենց հիմա, երբ ես նոր էի սկսում ինչ-որ բան հասկանալ, նոր էի սկսում էս անտեր կյանքը սիրել։ Ծիծաղում էի սևությանս վրա, որովհետև նոր էի սկսում հասկանալ, որ դա իսկի կարևոր չի։ Սկսում էի հասկանալ ապրելու ձևը։ Ինչի՞ աստված ինձ մերժեց, Լմփոշ։

ԼՄՓՈՇ— *Չգիտեմ։*

ԲԿԼԱՏ— *Շատ է ցրտել, Լմփոշ։ Զգում եմ, թե ցուրտը ոնց է մտնում ոսկորներս, ոնց է սպանությունն իմ արյան մեջ մտնում։*

ԼՄՓՈՇ— (Սթափ)։ *Ես կուրացել եմ ու արդեն բանի պետք չեմ։ Հոժարությամբ կընդառաջեմ ինձ սպանելու ցանկություն հայտնող ամեն մի մարդու։*

ԲԿԼԱՏ— *Չէ, ես մահամերձ մարդուն սպանողը չեմ, Լմփոշ։ Կներես, որ վիզդ էդպես բռնեցի։ Իմ ձեռքերի ու արյան մեջ մտած մահը քեզ համար չի, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— (Կանգնելով)։ *Որ էդպես է, օգնիր հասնեմ անկողնուս։*

ԲԿԼԱՏ— (Օգնելով)։ *Իհարկե, Լմփոշ։ Ես քեզ միշտ էլ կօգնեմ՝ քանի կամ, կօգնեմ։ Չէ՞ որ դու կույր ես, իսկ ես՝ սև։* (Առհամարհանքով)։ *Գրողի ծո՜ցն աղոթելը։ Աստված իմ բարեկամը չի։ Իմ աղոթքի համար նա շատ է գոռոզ՝ պապի աղոթքները լսելով է զբաղված։ Գրողի ծոցը կորչի քաղաքավարի լինելը, ձեռքիս մնացած մի քիչ լավությունն էս օրվանից միայն ինձ նմանների համար է՝ հիվանդների, հարիֆների ու անճոռնիների համար։ Բայց ձեռքիս մահն ու ատելությունը մնացածների համար է՝ ուժեղների, գոռոզների ու խելոքների, որովհետև նրանք չգիտեն, Լմփոշ, չգիտե՜ն, ու միշտ ապահով են, բոլո՜ր, բացի մեկից, ու էդ մեկի հախից ես եմ գալու, Լմփոշ, քանի դեռ կենդանի եմ...* (Երկուսով դուրս են գալիս)։

Վարագույր

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Փոսիյոն մենակ նստած իր սիրելի ծայնապնակն է լսում: Օրը նորից խոնավ է ու մառախլապատ: Թվում է, թե մառախուղի փարոսի ազդանշանը առաջվանից ավելի ուժեղ և մոտիկից է լսվում: Դույլն ու ջնջոցը ձեռքին մտնում է հավաքարարը:

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Փոսիյո, քույրն ասում է, որ վերադառնաս հիվանդասենյակ։* (Փոսիյոն նրան չի լսում: Հավաքարարը սկսում է մաքրել դաշնամուրի շուրջը, ապա կանգ է առնում, հենվում ջնջոցի փայտի կոթին ու ականջ դնում երաժշտությանը): *Քույրն է կանչում։* (Նստում է բառարանի սեղանին, մի էջ թերթում ու նորից դիմում Փոսիյոյին): *Ուզում է, որ դու նախաճաշդ ուտես։* (Կարճ դադար): *Էդ ի՞նչ ես անում։*

ՓՈՍԻՅՈ— (Ցածրաձայն): *Ինչ ասացի՞ր։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— (Լրջորեն): *Էդ ի՞նչ ես անում։*

ՓՈՍԻՅՈ— (Բարյացակամ): *Ինչի՞ ես հարցնում, թե ինչ եմ անում։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Ի՞նչ։*

ՓՈՍԻՅՈ— *Ուզածդ ի՞նչ է։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— (Վեր կենալով ու հատակը մաքրելով): *Քույրը խնդրեց քեզ ասեմ, որ վերադառնաս ու նախաճաշդ ուտես։* (Կարճ դադար): *Փոսիյո, քեզ ի՞նչ է եղել։*

ՓՈՍԻՅՈ— (Համարյա ծաղրելով): *Ինչ է եղե՞լ։ Իսկապես, ի՞նչ է եղել։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Նա ինձ ասեց, որ քեզ ասեմ, ես էլ ասի, լավ, կասեմ, էդքան բան։ Երբ որ ինձ խնդրում են մեկին մի բան ասեմ, ես ասում եմ, ուրիշ ոչինչ։ Քույրն էլ խնդրեց, որ քեզ ասեմ, ես ի՞նչ մեղք ունեմ, մնացածն իմ գործը չի։ Ինչ որ ասում են, էն էլ անում եմ։ Ես չեմ ուզում, որ ինձ թարս նայեն։ Բոլորն էստեղ նեղացկոտ են դառել, բոլորն իրար թարս են նայում։ Դու էլ արդեն նույնը չես, Փոսիյո, ես ամեն առավոտ տեսնում եմ քեզ, բայց ոչ սրա պես։ Էսօր ոնց որ հերսոտած լինես, ես քեզ ի՞նչ եմ արել։ Ամեն*

առավոտ քեզ համար անդարդ էստեղ նստած էիր, բայց էսօր մի տեսակ կարծես էլ անդարդ չես։ Ինչի՞ ես հերսոտել ինձ վրա։

ՓՈՍԻՅՈ— *Ես չեմ հերսոտել։* (Դադար)։ *Դու գիտե՞ս մահն ինչ է։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Ոչ էլ ուզում եմ իմանալ։*

ՓՈՍԻՅՈ— *Մահն ու Փոսիյոն էս գիշեր մեծ կռիվ ունեցան։ Դու նոր հիվանդին գիտե՞ս։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Ի՞նչ նոր հիվանդ։*

ՓՈՍԻՅՈ— *Ճուտոյի տեղինը։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Ասենք թե, հետո՞ ինչ։*

ՓՈՍԻՅՈ— *Երեկ գիշերն եկավ, իսկ հետո թողեց գնաց, ժամը երեքին հետ եկավ՝ վրան իսկի հալ չկար։ Քույրը նրան ցնցեց, ցնցեց, վերջը լացացրեց, հետո դեղ տվեց, որ քնի։ Այս երաժշտությունը գիտե՞ս։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Իհարկե, Փոսիյո։*

ՓՈՍԻՅՈ— *Ես այս երաժշտությունը երեք ամիս առաջ գտա, երբ նոր էի էստեղ եկել։ Ամեն առավոտ լսում եմ։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Գիտեմ, բայց ինչի՞ ես էդպես անում։*

ՓՈՍԻՅՈ— *Այս երաժշտությունն ամեն առավոտ մղկտում էր ու լաց լինում, ու ես չգիտեի, թե ինչու։ Հիմա գիտեմ։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Ինչո՞ւ։*

ՓՈՍԻՅՈ— *Որովհետև մարդ իր ուզածը երբեք չի լինում։ Ոչ ոք չգիտի, թե ի՞նչ է ուզում լինել։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Ես գիտեմ։*

ՓՈՍԻՅՈ— *Գիտես, թե բոլորն ինչ են ուզում լինե՞լ։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— (Դադար, անշտապ)։ *Գիտեմ։*

ՓՈՍԻՅՈ— *Դե ասա, ի՞նչ են ուզում լինել։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— (Դադար, մտածելով)։ *Տաք, փափուկ ու ծածկված։ Չեն ուզում աչք ունենալ։ Ոչ էլ՝ ձեռ ու ոտ։ Ուզում են տաքուկ, կլորիկ ու փոքրիկ լինել։ Դրա համար էլ բոլորը հերսոտել ու իրար թարս են նայում։* (Դռան մոտ մաքրում է հատակը, ջնջոցը դուրս հրում, նայում Փոսիյոյին)։ *Ես մեղք չունեմ։* (Դուրս է գալիս՝ դուռը հետևից ծածկելով։ Պարզ լսվում է երաժշտությունը։ Քիչ անց ցերեկային բուժքույրը դուռը բացում և ներս է նայում)։

ՑԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— (Ներս է գալիս, դուռը բաց թողնելով)։ *Նաբընջի հյութը դեռ նախաճաշ չէ։ Իսկույն ևեթ վերադարձեք ու բարի եղեք ամբողջ նախաճաշն ուտել։ Չի կարելի առավոտյան մի քանի բոպե առանձնանալու համար ամեն անգամ զոհել նախաճաշը։ Դուք շատ եք նիհարել։ Երեկ դոկտոր Բոհրենն այդ մասին էր խոսում։*

ՓՈՍԻՅՈ— *Մի՞թե։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Այո, Փոսիյո։*

ՓՈՍԻՅՈ— *Դոկտոր Բոհրընն ուզում է, որ ես չաղանա՞մ։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Իհարկե ոչ, բայց սրանից ավելի նիհարել չի կարելի։*

ՓՈՍԻՅՈ— *Ինչո՞ւ։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Օհ, Փոսիյո, պարզապես ուտելն անհրաժեշտ է, ուրիշ ոչինչ։*

ՓՈՍԻՅՈ— *Ես ուտում եմ։* (Կարճ դադար): *Ամեն օր քիչ-միչ ուտում եմ։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Բայց դա նորմայի կեսն էլ չի անում։* (Կարճ դադար): *Ինչո՞ւ չեք ուտում, Փոսիյո։*

ՓՈՍԻՅՈ— *Քաղցած չեմ։*

Մտնում է հիվանդանոցային հագուստով Գոնչոն: Շլմած է: Քույրը կշտամբանքով նայում է նրան ու շարունակում:

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Մի մոռացեք, որ այս կյանքում ուրիշների մասին էլ է պետք մտածել։ Մեկ-մեկ անհրաժեշտ է անել նաև այն, ինչ ուրիշներին է ուրախություն պատճառում։*

ԳՈՆՉՈ— (Զարմացած, կամաց): *Ի՞նչ։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Ես ձեզ հետ չեմ խոսում։ Այսուհետև բարի եղեք ձեզ պատշաճ պահել։* (Նորից դիմում է Փոսիյոյին): *Փոսիյո, մի՞թե չեք տեսնում, որ ձեր չուտելն ինձ վշտացնում է։*

ՓՈՍԻՅՈ— *Այո՞։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Այո, Փոսիյո, ես վշտանում եմ, քանի որ, երբ դուք չեք ուտում, դոկտոր Բոհրընն է վշտանում։ Ձեր դեպքը նրան շատ բան է թույլ տվել հասկանալ։ Այս կյանքում հարկավոր չէ ուրիշներին վշտացնել։*

ՓՈՍԻՅՈ— *Այս կյանքն իմ դուրը չի գալիս։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Զարժե այդպիսի բաներ անել, Փոսիյո, այդքան եսասեր մի եղեք։*

ՓՈՍԻՅՈ— *Ուրեմն դուք ուզում եք, որ ես նախաճաշն ուտե՞մ։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Իհարկե, որովհետև ուզում եմ, որ դուք հնարավորին չափ երկար ապրեք։ Դա կերջանկացնի դոկտոր Բոհրընին, ուրեմն նաև՝ ինձ։ Դոկտոր Բոհրընը շատ կվշտանա, եթե դուք էլ մեզնից գնաք։*

ՓՈՍԻՅՈ— *Ինչո՞ւ։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Մի՞թե չեք հասկանում, որ դոկտոր Բոհրընն ամեն հիվանդից նոր բաներ է սովորում։ Եթե իմանայիք, թե ինչ-*

քան եք ամեն մեկդ արդեն նրան օգնել։ Նա ինչքան շատ իմանա, այնքան ավելի շուտ կօգնի մյուս հիվանդներին։ Իսկ եթե դուք չուտեք, էլ ինչպե՞ս պիտի կենդանի մնաք։

ՓՈՍԻՅՈ— *Իսկ դոկտոր Բոհրընի մտքով չի՞ անցել, որ եթե ես շատ ուտեմ, էլ չեմ նիհարի, բայց գուցե ավելի շուտ մեռնեմ։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— (Ապշած)։ *Փոսիյո, մի՞թե ուզում եք ասել, թե քիչ ուտելով ավելի շատ կապրեք։*

ՓՈՍԻՅՈ— *Չգիտեմ։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Դուք այստեղ արդեն բոլորից շատ եք դիմացել, ուրեմն պատճառը չուտե՞լն է։*

ՓՈՍԻՅՈ— *Չգիտեմ։* (Կարճ դադար)։ *Հիմա ի՞նչ եք ասում, նախաճաշն ուտե՞մ։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Ծաղրո՞ւմ եք ինձ, Փոսիյո։*

ՓՈՍԻՅՈ— *Ի՞նչ իմանամ։ Եթե պնդում եք, որ ուտեմ՝ կուտեմ։*

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ— *Հըմ, տվյալ հանգամանքներում թերևս էլ չեմ պնդում։ Ավելի լավ է տեղյակ պահեմ դոկտոր Բոհրընին և իմանամ նրա կարծիքը։* (Դառնում է լուսամուտի մոտ կանգնած Գոնչոյին, խիստ)։ *Ինչ վերաբերում է ձեզ, երիտասարդ, այսուհետև ձեզ կարգին պահեք, լսեցի՞ք։ Գիշերը ձեր պատճառով ամբողջ հիվանդանոցն իրար էր անցել։ Շնորհակալ եղեք աստծուն, որ մենք ձեզ հետ ընդունեցինք։ Սա ձեզ համար ակումբ չի, որ երբ ուզեք գնաք-գաք։ Մենք այստեղ ծանր հիվանդներ ենք խնամում, և դուք հենց նրանց թվին եք պատկանում։ Ես նույնիսկ վստահ չեմ, թե ձեզ ամբողջական ռեժիմ չի հասնում։ Այնպես որ խելոք մնացեք, մինչև դոկտոր Բոհրընն առավոտյան համայցին ձեր նշանակումները որոշի։* (Նուիցց մեղմաձայն դիմում է Փոսիյոյին)։ *Նա շատ հիվանդ է, Փոսիյո, ուշադրություն դարձրեք նրան։* (Դուրս է գնում։ Փոսիյոն մոտենում է Գոնչոյին)։

ՓՈՍԻՅՈ— *Արի բազմոցին նստիր։*

ԳՈՆՉՈ— (Շուռ է գալիս)։ *Ի՞նչ։* (Քիչ է մնում ընկնի։ Փոսիյոն նրա թեվատակից բռնում ու նստեցնում է կաշվե բազմոցին)։

ՓՈՍԻՅՈ— *Ի՞նչ եղավ։*

ԳՈՆՉՈ— (Ցածրաձայն)։ *Տուն եմ ուզում։*

ՓՈՍԻՅՈ— *Հանգստացիր, մի քիչ երաժշտություն լսիր։*

Գոնչոն փորձում է խոսել, բայց սկսում է ցածրաձայն հեկեկալ, ձեռքերով դեմքը ծածկելով։ Մոնում է Բկլատը, մի պահ նայում Գոնչոյին, ապա դիմում Փոսիյոյին։

ԲԿԼԱՏ— (Փոնչոյին ցույց տալով)։ *Ինչի՞ է լաց լինում։*

ՓՈՍԻՅՈ— *Չգիտեմ։* (Անջատում է նվագարկիչը)։

ԲԿԼԱՏ— (Փոնչոյի գլխավերևում կանգնելով)։ *Ինչի՞ ես լաց լինում։*

ԳՈՆՉՈ— (Ձեռքերը դեմքից հեռացնելով)։ *Ի՞նչ։* (Մի պահ նայում է Բկլատին ու նորից դեմքը թաղում ձեռքերի մեջ)։

ԲԿԼԱՏ— *Լաց մի լինի, ախպեր, երեսդ մի ծածկի։ Տես, Ճուտոյին սպանեցին, բայց ես լաց չեմ լինում։*

ԳՈՆՉՈ— (Նորից գլուխը բարձրացնելով)։ *Ի՞նչ։*

ԲԿԼԱՏ— *Ասում եմ՝ Ճուտոյին սպանեցին։*

ԳՈՆՉՈ— *Ո՞ւմ։*

ԲԿԼԱՏ— *Ճուտոյին, ախպեր, Ճուտոյին։ Հենց էստեղ նստած ինձ համար բառարան էր կարդում, երբ որ տարան ու սպանեցին։*

ԳՈՆՉՈ— *Ո՞վ սպանեց։*

ԲԿԼԱՏ— *Ես գիտեմ, թե ով։ Լմփոշն ինձ երեկ ամեն ինչ բացատրեց։*

ԳՈՆՉՈ— *Լմփո՞շը։*

ԲԿԼԱՏ— *Հա, հիմա նա կգա։ Երևի նա մեր բաժնի ամենահիվանդ մարդը լինի. հիմա էլ աչքի լույսը կորցրեց, բայց մեկ է, շուտով կգա։ Հիմա նա առաջվանից վատ է, որովհետև նրա ընկերը, Քառակուսին, ինքնասպան եղավ։*

ԳՈՆՉՈ— *Քառակուսի՞ն։ Ինքնասպա՞ն։*

ԲԿԼԱՏ— *Հա, Լմփոշն ու Քառակուսին երեկ էստեղ սպասում էին, որ իմանան Ճուտոյին ինչ եղավ։ Բայց Ճուտոն մեռավ։ Ու հիմա ես գիտեմ, թե նրան ով է սպանել։*

ԳՈՆՉՈ— *Ի՞նչ։*

ԲԿԼԱՏ— *Լսիր, քնա՞ծ ես ինչ ես։ Ես ասում եմ, որ գիտեմ, թե Ճուտոյին ով է սպանել։*

ԳՈՆՉՈ— (Շշմած ու թմրած)։ *Տուն եմ ուզում։*

ԲԿԼԱՏ— *Այ մարդ, քեզ ի՞նչ եղավ։ Պրծա՜վ, տան մասին մոռացիր։ Ոչ էլ արժի դրա մասին մտածել։ Մենք էստեղ բոլորս էլ նույն օրին ենք։ Բոլորիս օրհասն էլ եկել է, բոլորս էլ քեզ պես անտուն ենք ու կարոտից հալումաշ եղած։ Էսօր, վաղը կամ մյուս օրը բոլորս էլ գնալու ենք, ինչպես միշտ անգետ ու մե՜ն-մենակ... Բայց ինձ հետևից ոչ ոք չի բրդի, իսկ թե բրդելու հաշիվ բացվի, բրդողը ես ինքս կլինեմ։ Ու ես չեմ բրդի իր ճամփան անցած խեղճուկրակ մի մարդու, ես կբրդեմ նրան, ով կարծում է, թե դեռ երկար իր քեֆին ման է գալու։*

ԳՈՆՉՈ— *Բրդե՞ս։ Ինչի՞ համար։*

ԲԿԼԱՏ— *Ո՞նց թե ինչի համար։ Բա նոր քեզ ի՞նչ էի պատմում։ Ճու-*

տոյին նա է սպանել։ Գիտես, Փոսիյո, ես էս մեռնելուց էլ վախ չունեմ, որովհետև գտել եմ էն մարդուն, որից պիտի մուռս հանեմ, ու իմ էդ իրավունքն իմ ձեռքից էլ ոչ ոք չի խլի։ Էսօր, վաղը կամ մյուս օրը ես էդ մարդուն կսպանեմ։

ԳՈՆՉՈ— Չէ, չի կարելի, դա արդարացի չէ։

ԲԿԼԱՏ— Դու ի՞նչ ես հասկանում արդարությունից։

ԳՈՆՉՈ— Սպանելն անարդար է։

ԲԿԼԱՏ— Այ, կգնաս ու Ճուտոյին սպանողին հենց էդպես էլ կասես։ Էդ հիվանդ ու մահամերձ մարդկանց սպանող մարդուն։ Էն մարդուն, որ սպանում ու մյուս առավոտ, կնոջ ու երեխայի հետ նըստած, հանգիստ նախաճաշ է անում։

ԳՈՆՉՈ— Չէ, սպանելը ճիշտ չի։

ԲԿԼԱՏ— Վերջապես ես իմ վրեժին արժանի մարդ գտա, Փոսիյո, գտա ու էլ ձեռքիցս բաց չեմ թողնի։ Ես արդեն ճամփիս ծայրին եմ, բայց դա կլինի նաև նրա ճամփի ծայրը։ (Գոնչոյին)։ Ես չեմ ասում, որ ներելը լավ չի։ Չեմ ասում, որ սիրելը լավ չի։ Ոչ էլ ասում եմ, որ վատ է միայնակ պառկել-մեռնելն ու մխիթարվելը, թե մեռնողը մենակ դու ես։ Ես պարզապես ուզում եմ ասել, որ ճամփիս վերջում պատեպատ չեմ ընկնի, ինչ է թե ապրելու կարգն էդպես էլ չգտա։ Ես մեռնելուց ձևեր չեմ թափի, որովհետև քառասունչորս տարվա կյանքից հետո վերջապես գտել եմ մուռս հանելու մարդուն։ Ես պինդ կպել եմ նրանից, ոնց որ իմ հիվանդությունն ինձանից, բայց էդ մարդը դեռ չգիտի իր սոսկալի հիվանդության անունը՝ Բկլատ Ռիդ։

ԳՈՆՉՈ— (Հուզված կանգնելով)։ Ոչ, դու չգիտես, թե ինչեր ես խոսում։ Ասա, ո՞վ է էդ մարդը, որ ես կարողանամ նրան զգուշացնել։

ԲԿԼԱՏ— Էդ մեկը չեղավ, ինձ իմ վրեժից էլ ոչ ոք չի զրկի։

ԳՈՆՉՈ— Ինչի՞ վրեժից։

ԲԿԼԱՏ— Քո գործը չի, ես գիտեմ, թե ինչի։

ԳՈՆՉՈ— Թույլ տուր օգնեմ քեզ. ասա, ո՞վ է էդ մարդը, որ նրան զգուշացնեմ։ Քեզ համար եմ ասում։

ԲԿԼԱՏ— Ասեցի քո գործը չի, չէ՞։ Դու նստի, երեսդ ձեռքով ծածկի ու լաց եղի։ Նստի ու լաց եղի։

ԳՈՆՉՈ— (Փոսիյին))։ Ո՞վ է էդ մարդը։ Դուք պարտավոր եք ասել։ (Բկլատին)։ Ի սեր աստծո, ասեք, ո՞վ է էդ մարդը։ (Ոչ nf չի նկատում, թե ինչպես է ներս մտնում Լմփոշը։ Նա տկար ու ճնշված տեսք ունի)։

ԼՄՓՈՇ— Փոսիյոն չգիտի, թե նա ով է։

ԳՈՆՉՈ— *Չեմ հավատում։* (Փոսիյոյին)։ *Ես ուզում եմ օգնել նրան։ Ես իրավունք չունեմ նստել ու նայել, թե ինչպես է նա մարդ սպանում։ Դուք իրավունք չունեք ինձ չասել։ Շատ եմ խնդրում, նա ո՞ւմ է ուզում սպանել։*

ԼՄՓՈՇ— *Գոնչո, դո՞ւ ես։*

ԳՈՆՉՈ— (Ապշած)։ *Գոնչո՞։ Իմ անունը Հարի Վեսթ է։*

ԼՄՓՈՇ— (Նստում է սեղանի մոտ ու կոմիքսը վերցնում)։ *Գիտեմ, երեկ արդեն ասել ես։*

ԳՈՆՉՈ— (Համարյա կակազելով)։ *Երե՞կ։* (Հապշնեպ)։ *Էս մարդն ուզում է սպանություն գործել։ Ես պարտավոր եմ խանգարել նրան, ես իրավունք չունեմ նրան չխանգարել։*

ԼՄՓՈՇ— *Տղայիդ տեսա՞ր։*

ԳՈՆՉՈ— (Ապշահար)։ *Ի՞նչ։*

ԼՄՓՈՇ— *Տղայիդ, Գոնչո։* (Գրպանից հանում է Գոնչոյի տղայի լուսանկարը)։ *Այ, էս տղային։ Տեսա՞ր։* (Գոնչոն դանդաղ մոտենում է Լմփոշին, վերցնում է լուսանկարն ու երկար նայում։ Ապա նստում է կաշվե բազմոցին ու դեմքը թաղում ձեռքերի մեջ)։ *Մի ամսվա՛ Գոնչո, ես գիտեի, որ դու դա չես անի։ Ինչո՞ւ պիտի աշխարհում քո սիրած միակ էակին վախեցնեիր։ Անմեղ մի մանկան, որին չի կարելի մեղադրել երկու տարվա մեջ որևէ մեկին մոռանալու համար։ Ինչո՞ւ պիտի ատեիր խեղճ երեխայի մորը։ Ամեն մարդ իրավունք ունի մայր ունենալ։ Ինչո՞ւ պիտի ատեիր նրա ամուսնուն... միևնույն է, դու կնոջդ երբեք չես սիրել, իսկ եթե նույնիսկ սիրեիր, ապա նա քեզ չէր սիրում։ Իհարկե, դու ուզում էիր մի անգամ էլ որդուդ գրկել։ Մարդիկ շատ բան են ուզում անել, որ արդեն չեն կարող։ Ամոթ չի խոստովանել, որ կորցրածն էլ երբեք հետ չես բերի։ Դա մարդկանց խղճուկ արժանապատվության միակ հենարանն է։ Ես գիտեի, որ դու հետ կգաս, Գոնչո։ Ես քեզ փող տվի ու ուղարկեցի սեփական աչքերով տեսնելու, որ քո սիրած տղան այլևս չկա։ Ես ուզում էի, որ դու նրան հանգիստ թողնես։ Ուզում էի հասկանաս, որ քո սերը տղայիդ հանդեպ, որը քեզ անծանոթի տեղ է դնում, քեզ մահվան ժամին հանգստություն պարգևող միակ բանը կլինի։ Ես ուրախ եմ, որ դու ողջ ու առողջ հետ եկար, Գոնչո։ Կարող ես հանգիստ լաց լինել, մենք էստեղ բոլորս ընկերներ ենք։*

ԳՈՆՉՈ— (Հուզված շշնջում է Բկլատին)։ *Ինձ լսիր, քանի դեռ ուշ չի։ Ուրիշի կյանքի դեմ դավեր մի նյութիր։ Մարդավարի պառկիր ու հանգիստ մեռիր, առանց սրտումդ ատելություն պահելու։ Եթե ուզում ես ճիշտ բան անել, ոչինչ մի արա։ Ոչինչ։ Ոչինչ մի սիրիր։ Ոչինչ*

մի ատիր։ Ոչինչ մի եղիր։ Պառկիր ու մոռացիր, որ երբևէ ապրել ես։ Ճիշտը դա է։ Մնացած ամեն ինչը սխալ է։

ԲԿԼԱՏ— (Լրջորեն)։ *Սա ի՞նչ է ասում, Լմփոշ։* (Յածրաձայն)։ *Սիրտս կոտրեց էս մարդը։* (Գոնչոն դեմքը թաղում է ձեռքերի մեջ)։ *Ըհը, խնդրեմ, էլի երեսը ծածկեց։ Թե ուզում ես ինձ օգնել, էլ ինչի՞ ես երեսդ ծածկում ու լաց լինում, ախպերս...*

ԳՈՆՉՈ— (Կանգնում է)։ *Տուն եմ ուզում։* (Հուսահատ շուրջն է նայում)։ *Ուզում եմ պառկել իմ տանը, իմ սեփական անկողնում ու մոռանալ, որ ապրել եմ։* (Դուրս է գալիս)։

ԲԿԼԱՏ— (Խորապես ազդված)։ *Էս մարդը սիրտս կոտրեց, Լմփոշ։ Կյանքում սրա պես մարդ չէի տեսել։ Ինչի՞ էր երեսը ծածկած լաց լինում։*

ԼՄՓՈՇ— *Իսկ դու ի՞նչ կանեիր, եթե աշխարհում քո սիրած միակ մարդը քեզ չսիրեր։ Ի՞նչ կանեիր, եթե քո տղան նույնիսկ չհիշեր քեզ։ Ինչ կանեիր, եթե կինդ ասեր, որ քո տղան քոնը չի։*

ԲԿԼԱՏ— *Դրա համա՞ր էր երեսը ծածկած լաց լինում։*

ԼՄՓՈՇ— *Ի՞նչ կանեիր,, եթե կնոջդ ամուսինը բոլորի առաջ քեզ խայտառակ աներ, ինչ է թե նրան խնդրեիր թույլ տա հարազատ որդուդ տեսնես։ Ի՞նչ կանեիր, եթե դու Գոնչոյի պես փոքր, հիվանդ ու տարիքով լինեիր, իսկ էդ մարդը՝ ջահել, ուժեղ ու առողջ ու քո գոտկատեղից բռնած քեզ կնոջդ ու ուրիշների աչքի առաջ իր քնձոտ բարից դուրս շպրտեր։ Ի՞նչ կանեիր, եթե համարձակություն չհերիքեր տղայիդ սերը քեզնից գողացող մարդկանց երեսին թքելու։ Դու էլ երեսդ ծածկած լաց կլինեիր, չէ՞։ Կուզեիր անկողին մտնել ու մոռանալ, որ ապրել ես, չէ՞։ Չէի՞ր ուզի։*

ԲԿԼԱՏ— *Տե՜ր աստված։ Ես ի՞նչ գիտեմ ինչ կուզեի։ Եթե էդ բոլորն ինձ պատահեր, ես հաստատ կգժվեի։ Գոնչոն երևի ճիշտ է անում, որ մտնում է անկողինն ու մեռնում, բայց ես հաստատ սխալ բան կանեի։ Կկատաղեի ու կխեղդեի, կսպանեի էդ շան որդուն։*

ԼՄՓՈՇ— *Չէիր սպանի։ Պարզապես վատ կզգայիր, մի քիչ էլ կապրեիր ու կմեռնեիր, ինչպես մյուս բոլորը, ինչպես հիմա Գոնչոն։ Ես լավ գիտեմ։*

ԲԿԼԱՏ— *Որտեղի՞ց գիտես, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Գոնչոն երեկ չէր ուզում էստեղ մնալ, ուզում էր տուն գնալ ու իր տղային տեսնել։ Գրպանում ավտոբուսի մեջ ինչ-որ մեկից գնած մի ատրճանակ ուներ ու ասում էր, որ կսպանի իրեն խանգարել փորձողին։ Բայց նա փող չուներ, ու ես նրան տվի իմ ամ-*

բողջ փողը, որ էստեղից դուրս գա։ Ես ուզում էի, որ նա իր տղայի՛ն տեսնի։ Բայց ամենից շատ ուզում էի, որ նա իր կնոջն ու տղայի՛ն խլած մարդուն սպանի, էն մարդուն, որի պատճառով պիտի էստեղ շան պես սատկեր, փոխանակ իր սեփական տանը, սեփական անկողնում, իր տղայի՛ն գրկած մեռնելու։ Նա փոքր ու թույլ մարդ է, բայց ես կարծում էի, թե գուցե այդ անի։ Ուզում էի հավատալ, որ քաջությունը կհերկքի ուժեղների հետ ճակատ տալու, բայց սխալվեցի։ Նա հետ եկավ, չարեց այդ, որովհետև մարդն ատելու ընդունակ չի։ Ես միշտ կարծել էի, թե ընդունակ է, բայց պարզվում է, որ ոչ։ Մարդը սիրելու էլ ընդունակ չի։ (Կանգ է առնում):

ԲԿԼԱՏ— *Իսկ ինչի՞ է ընդունակ, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— (Ցածրաձայն): Շնչելու...

ԲԿԼԱՏ— *Ու վե՞րջ։*

ԼՄՓՈՇ— *Ու վերջ։ Բայց նույնիսկ դա էլ արվում է էնպես, ինչպես բոլոր մնացած կենդանիներն են անում։ Մարդը կարող էր նույն հաջողությամբ ոչխար լինել։ Ես հոգնել եմ մարդ լինելուց։ Ես նույնիսկ արդեն չեմ կարող ձևացնել, որ ատում եմ։ Երբ դոկտոր Բոհրենը համայցի գա, կխնդրեմ, որ գլխիս համար մի ճար գտնի։*

ԲԿԼԱՏ— *Չխնդրես, Լմփոշ, նա քեզ կսպանի։*

ԼՄՓՈՇ— *Գիտեմ, որ չի օգնի, բայց իմ վերջն արդեն եկել է, էնպես որ ձևեր թափելն էլ իմաստ չունի։*

ԲԿԼԱՏ— *Լմփոշ, դու դեռ լիքը ժամանակ ունես. մեր վերջը չի եկել։*

ԼՄՓՈՇ— *Քոնը գուցեև չի եկել, որովհետև դու դեռ կարող ես ձևացնել, բայց ես էլ ոչինչ ձևացնել չեմ կարող։*

ԲԿԼԱՏ— *Ի՞նչ ես ասում, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Դու դեռ կարող ես ձևացնել, թե ուզում ես ինչ-որ մեկը քեզ համար բառարան կարդա։ Դու դեռ կարող ես ձևացնել, թե բառերն իսկապես քեզ համար ինչ-որ իմաստ ունեն։ Դու դեռ կարող ես ձևացնել, թե գիտես կյանքիդ մնացորդն անցկացնելու ձևը։ Կարող ես ձևացնել, թե ատում ես։ Ձևացնել, թե դու դու ես, ամբողջական մի մարդ, և ոչ թե մարդկություն կոչված անբուժելի հիվանդության չնչին մի մասնիկ։ Մեր այս վիճակը պարզապես այդ հիվանդության բազմաթիվ դրսևորումներից մեկն է, ու ես այլևս ուժ չունեմ ձևացնելու, թե դրա մասնիկը չեմ։ Հիմա իմ միակ ցանկությունն իմ գլուխն ու պարտքով վերցրած մնացած մասերը տանել հանձնելն է՝ միևնույն է, լավ չեմ գործածել։ Թող ասված օգնական լինի մեզ մեր այս կույր ու տկլոր մենակության մեջ։*

ԲԿԼԱՏ— *Լմփոշ, ինչ ուզում ես արա, մենակ թե էդ Բոհրենին մի հանձ-*

նրվի ու ինձ մենակ մի թող։ Թե մի քիչ էլ մնալու համար անպայման պիտի մի բան ձևացնես՝ ձևացրու, լմփոշ, մի բան ձևացրու։

ԼՄՓՈՇ— Գլուխս վառվում է, աչքերս մթնել են, էլ ձևացնելու ուժ չունեմ։

ԲԿԼԱՏ— Ունես, ունես, լմփոշ։ Մի թողնի գնա, երբ դու ինձ ամենից շատ ես պետք։ Մի բան ձևացրու ու հետս մնա, ձևացրու, թե չենք մեռնում, լմփոշ, ձևացրու, թե նոր պիտի ծնվենք։

ԼՄՓՈՇ— Չեմ կարող, շատ եմ ուզում, բայց արդեն չեմ կարող։

ԲԿԼԱՏ— Ուրեմն ինձ ասա ինչ անեմ։ Ես չեմ կարող իմ անգիտության դեմ մենակ կռվել։ (Վերցնում է բառարանը)։ Բառերը, լմփոշ, իմ միակ հույսը բառերն են։ (Զայնն ընդհատվում է նեկեկոցներով)։ Չեմ ուզում անգեմ մեռնել։ Չեմ ուզում ատել, չեմ ուզում սպանել։ Մի բան ձևացրու լմփոշ, մի քիչ էլ հետս մնա, ցույց տուր ինձ հարիֆությունը հաղթելու ձևը։

ՀԱՎԱՔԱՐԱՐ— (Ներս է մտնում՝ ձեռքին թերթեր ու հանդեսներ)։ Նոր կոմիքսներ կան, լմփոշ։ Ո՞վ է ուզում առավոտյան թերթը։

ԼՄՓՈՇ— Առաջին վերնագիրն ի՞նչ է։

ՀԱՎԱՔԱՐԱՐ— (Թերթը բացելով կարդում է)։ «Սպանություն փողոցում»։

ԼՄՓՈՇ— Ո՞ր փողոցում։ Շուկայի մո՞տ։

ՀԱՎԱՔԱՐԱՐ— (Թերթին նայելով)։ Չէ, Օրթիգա փողոցում։

ԼՄՓՈՇ— Օրթի՞գա, ապա մի լավ նայիր։

ՀԱՎԱՔԱՐԱՐ— Հա էլի, գրած է՝ Օրթիգա փողոցում։

ԼՄՓՈՇ— Ո՞վ է ում սպանել։

ՀԱՎԱՔԱՐԱՐ— Ինչ որ մեկը սպանել է Ջեյմս Վալենթի անունով մի բարմենի։

ԼՄՓՈՇ— Ո՞վ է սպանել։

ՀԱՎԱՔԱՐԱՐ— Հայտնի չի։ Ոչ ոք ոչինչ չի տեսել։ Բարմենը գիշերվա երկուսին գործից հետո տուն գնալիս է եղել և ինչ-որ մեկը կրակել է վրան։ Ուրիշ ոչինչ հայտնի չի։ Համենայն դեպս կողոպուտ չի, որովհետև բարմենի դրամապանակը չեն տարել։

ԼՄՓՈՇ— (Հապճեպ)։ Նկարներ կա՞ն։

ՀԱՎԱՔԱՐԱՐ— Գրած է, որ նկարները տասներկուերորդ էջում են։ (Գրտնում է համապատասխան էջը)։ Խնդրեմ՝ միստր Ջեյմս Վալենթին, միսիս Վալենթին, նրանց տղան ու նորածին աղջիկը։

ԼՄՓՈՇ— Ուրիշ նկարներ չկա՞ն։

ՀԱՎԱՔԱՐԱՐ— Չկան։

ԼՄՓՈՇ— Կարելի՞ է թերթը վերցնել։

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Խնդրեմ, Լմփոշ։ Ո՞վ է «Թայմ» կամ «Լայֆ» ուղում։*

ԼՄՓՈՇ— *Բոլորն ինձ տուր։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— (Ամբողջ կապոցը Լմփոշի առջև դնելով)։ *Ով էլ որ սպան-նած լինի, երևի լուրջ պատճառ է ունեցել։ Ոչ ոք չեղած տեղը գլուխը շառի տակ չի դնի։* (Գնում է դռան կողմը)։

ԼՄՓՈՇ— *Բաժանմունքում ի՞նչ կա։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Ոնց որ թե ամեն ինչ տեղն է ընկել։ Իններորդ մահճակալին պառկած մարդն անցյալ գիշեր մեռավ։ Քույրը խնդրեց օգնեմ, որ գնի պատգարակին ու գլորեց-տարավ։*

ԼՄՓՈՇ— *Փոսիյո, իններորդին ո՞վ էր պառկած։*

ՓՈՍԻՅՈ— *Սրանից վե՞ց, թե յոթ օր առաջ եկած մարդը, միշտ քնած էր։*

ԼՄՓՈՇ— *Իմացա, նավաստին էր, Սթոնհիլը։* (Դիմում է հավաքարարին)։ *Շնորհակալություն թերթերի համար։*

ՀԱՎԱՔԱՐԱՐ— *Երանի ոստիկանները նրան չգտնեն, պետք է որ լավ պատճառ ունեցած լինի դրան խփելու համար։* (Դուրս է գալիս)։

ԼՄՓՈՇ— *Փոսիյո, մի էս նկարին նայիր։* (Փոսիյոն նայում է)։ *Ի՞նչ կասես։*

ՓՈՍԻՅՈ— *Չգիտեմ։ Երևի։*

ԼՄՓՈՇ— *Լավ նայիր։*

ՓՈՍԻՅՈ— *Ոնց որ թե նույն տղան է։*

ԼՄՓՈՇ— *Բարմենն ինչի՞ է նման։*

ՓՈՍԻՅՈ— *Ջահել, պինդ մարդ է։*

ԼՄՓՈՇ— *Իսկ կի՞նը։*

ՓՈՍԻՅՈ— *Պինդ կին է։*

ԼՄՓՈՇ— *Ի՞նչ ես կարծում, բարմենին սիրո՞ւմ էր։*

ՓՈՍԻՅՈ— *Երևի։*

ԼՄՓՈՇ— *Կարծում ես էնքան էր սիրում, որ ոստիկանությանն օգնի՞։*

ՓՈՍԻՅՈ— *Ինչի՞ օգնի։ Պինդ կին է երևում։ Ինչի՞ օգնի, մեկ է՝ նա մեռած է։*

ԼՄՓՈՇ— *Գուցե նա նույնիսկ ուրա՞խ է։*

ՓՈՍԻՅՈ— *Գուցե։*

ԼՄՓՈՇ— (Վստահ ձայնով)։ *Նա ոստիկանությանը չի օգնի։* (Դադար)։ *Ոչ էլ մենք կօգնենք, չէ՞, Փոսիյո։*

ՓՈՍԻՅՈ— *Ի՞նչ գործ ունենք։*

ԼՄՓՈՇ— *Բկլատ, մենք նրանց չենք օգնի, չէ՞։*

ԲԿԼԱՏ— *Ի՞նչ ես խոսում, Լմփոշ։*

ԼՄՓՈՇ— *Դու գիտե՞ս, որ Գոնչոն կարդալ գիտի, և կարող է բառարանը կարդալ։*

ԲԿԼԱՏ— *Գոնչո՞ն։ Ուզում ես ասել՝ էդ ճստո՞ն է բարմենին սպանել։*

ԼՄՓՈՇ— *Իհարկե չեմ ուզում։ Գոնչոն եկել է էստեղ բառարանը կարդալու համար։ Մենք չգիտենք, թե ով է սպանել բարմենին։ Ոստիկանությունն էլ չգիտի։ Գոնչոն էլ չգիտի։ Մենք միայն գիտենք, որ Գոնչոն էստեղ է։*

ԲԿԼԱՏ— (Աշխուժացած ու հույսով լի։ Մոտենում է սեղանին)։ *Մի էդ բարմենին ինձ ցույց տվեք։* (Նայում է)։ *Գրողը տանի։ Ինչ կասեք, հը՞։ Մի երեսուն տարեկան կլինի։ Սիրուն էլ է։ Ուժեղ ու գոռոզ։ Ինչ որ է՝ ես նրանից շատ ապրեցի։* (Ցնծությունից կչկչալով՝ նկարի վրա ձեռքի շարժումն է անում)։ *Գոնչոն եկել է մեզ համար բառարան կարդալու։ Ինչ էլ ճիշտ ժամանակին եկավ, հա՞։*

ԼՄՓՈՇ— *Դու նրան մի աչքով մի նայիր, նա խելոք մարդ է, բանկում է աշխատել։*

ԲԿԼԱՏ— *Պա՜հ, պահ, պահ՝ բանկիրը մեզ համար բառարան պիտի կարդա։ Լիքը փող տեսած մարդը։ Գնամ շուտ նրան բերեմ։ Ասեմ, որ ուրիշի կյանքի դեմ էլ դավեր չեմ նյութի։ Ասեմ, որ էլ ոչ ոքի չեմ սպանի։ Բերեմ, որ կարդա։*

ԼՄՓՈՇ— *Սպասիր, ժամանակ տուր, որ ընտելանա։ Չե՞ս հիշում՝ քեզ ինչքան անտեր էիր զգում, երբ առաջին անգամ էստեղ եկար։ Նա էլ հիմա նույն վիճակում է։ Կարիք չկա նրան շտապեցնել՝ մենք ոչ մի տեղից չենք ուշանում։ Նրան ժամանակ է պետք, որ հասկանա, որ Նյու Յորքից եկել-հասել է էստեղ մեր բառարանը կարդալու համար։ Կարծում էր, թե եկել է իր տղային տեսնելու, բայց նա խելոք մարդ է ու կհասկանա, թե ինչի համար է իսկապես եկել։ Նա հիմա շատ վատ է զգում, բայց հենց որ իմանա, որ ընկերների մեջ է, իսկույն կլավանա։*

ԲԿԼԱՏ— *Էլի որ ընկերների մեջ է։ Էսօրվանից էստեղ ամեն ինչ ընկերական է լինելու։* (Մի ձեռքով գրկում է Լմփոշին, մյուսով Փոսիյոյին ու ծիծաղում)։ *Քիչ առաջ Գոնչոն սիրտս կոտրեց, բայց հիմա նա ինձ հույս ու հպարտություն է տալիս։ Իսկական հույս, Լմփոշ, բոլորի համար, ամեն մի անբուժելի մարդու։*

ԼՄՓՈՇ— (Ուրախ)։ *Ճիշտ է։*

ԲԿԼԱՏ— *Ես հիմա հպարտ եմ, որ անբուժելի եմ, հպարտ եմ, որ մենակ եմ, նույնիսկ հպարտ եմ, որ սև եմ, ու էդ բոլորը նրա պատճառով։* (Անջատվում է ու կանգնում մենակ)։

ԼՄՓՈՇ— *Դա էլ է ճիշտ։*

ԲԿԼԱՏ— *Ես հիմա էնքան լավ եմ, Փոսիյո, որ գիտե՞ս, ինչ կանեմ։*

ՓՈՍԻՅՈ— *Ի՞նչ։*

ԲԿԼԱՏ— *Սիգար կծխեմ։* (Սիգար է վառում)։

ԼՄՓՈՇ— (Արագ): *Հիմա ի՞նձ լսեք. ուշադի՞ր, դու էլ, Փոսիյո։*

ԲԿԼԱՏ— *Հա, Փոսիյո, դո՛ւ էլ լսիր։*

ՓՈՍԻՅՈ— *Լսում եմ։*

ԼՄՓՈՇ— *Գոնչոն մեզ պետք է, շա՛տ է պետք։*

ԲԿԼԱՏ— *Նա պիտի մեզ համար բառարան կարդա։*

ԼՄՓՈՇ— *Նա եկել է մեզ մոտ, ու մենք չենք ուզում, որ նորից թողնի ու գնա։*

ԲԿԼԱՏ— *Այո՛, չենք ուզում։*

ԼՄՓՈՇ— *Մենք չենք ուզում, որ նա ոստիկանության, դոկտոր Բոհրնի կամ ուրիշ որևէ մեկի ձեռքն ընկնի։*

ԲԿԼԱՏ— *Ոչ, սրբ։ Մենք ուզում ենք, որ նա բառարան կարդա։ Մենք չենք ուզում, որ նա անկողնում պառկած մնա կամ դրա պես մի բան։*

ԼՄՓՈՇ— *Դե լսեք՝ սրանից շատ առաջ ես կարծում էի, թե իմ վերջն արդեն եկել է,— ճիշտ այս առավոտվա նման։ Հետո եկավ Քառակուսին, ու ես դեռ էստեղ եմ։ Եթե մի անդամ ցվեց, ո՞վ է ասում, թե էլի չի ստացվի։*

ԲԿԼԱՏ— *Էլի որ, ո՞վ է ասում։*

ԼՄՓՈՇ— *Ո՞վ է ասում, թե բոլորիս մոտ էլ չի ստացվի։ Քանի դեռ ապրում ենք, մենք նույնքան ժամանակ ունենք, ինչքան ցանկացած ուրիշ մարդ, իսկ մենք դեռ ապրում ենք։*

ԲԿԼԱՏ— *Ճիշտ է, երեկ բարմենը դեռ ապրում էր, իսկ էսօր արդեն չկա։ Քե՞ֆս բերում է էդ Գոնչոն։*

ԼՄՓՈՇ— *Լսեք։ Երբ նա գա, թողեք հետը ե՛ս խոսեմ, եղա՞վ։*

ԲԿԼԱՏ— *Լսեցի՞ր, Փոսիյո, թող Լմփոշը խոսի, նա գիտի, ինչ ասի։*

ՓՈՍԻՅՈ— *Ես չեմ խոսի։*

ԼՄՓՈՇ— *Երաժշտությունդ էլ չմիացնես։*

ԲԿԼԱՏ— *Ճիշտ է, չմիացնես։*

ԼՄՓՈՇ— *Եկեք մի քիչ էլ ռադիո լսենք։ Եկեք դուրս պրծնենք էս վանդակից լույս աշխարհ։*

ԲԿԼԱՏ— *Ճիշտ է ասում։*

ԼՄՓՈՇ— *Ու եկեք այսօրվանից էնպես անենք, կարծես մնացած բոլորից էլ շատ ենք ապրելու, որովհետև, ո՞վ գիտի, գուցե հենց էդպես էլ լինի։ Փոսիյո, ռադիոն միացրու։*

ԲԿԼԱՏ— *Փոսիյո, տեսնենք ռադիոն ի՞նչ է ասում։*

ՓՈՍԻՅՈ— *Շատ լավ։* (Միացնում է ռադիոն։ Բոլորը սպասում են, մինչև սարքը տաքանա։ Քիչ անց լսվում է «Քո աչքերն ասացին» երգը)։

ԼՄՓՈՇ— *Սքանչելի է։ Միայն թե մի քիչ ցածրացրու։* (Դադար)։ *Լավ է։*(Երգը հազիվ է լսվում)։ *Հիմա պետք է նայել, թե բաժնում ի՞նչ է կատարվում։*

ԲԿԼԱՏ— (Նետվելով դեպի դուռը)։ *Ես կնայեմ։*

ԼՄՓՈՇ— *Գոնչոն ի՞նչ է անում։*

ԲԿԼԱՏ— *Պառկած է, ոնց որ ասել էի։*

ԼՄՓՈՇ— *Ուրիշ ո՞վ կա։*

ԲԿԼԱՏ— *Անկողնայինները, ուրիշ ոչ ոք։*

ԼՄՓՈՇ— *Եղավ։ Մնա էդտեղ ու ինձ ամեն ինչ ասա։*

ԲԿԼԱՏ— *Կասեմ, Լմփոշ։*

Լռություն։

ԼՄՓՈՇ— *Փոսիյո, լա՞վ ես։*

ՓՈՍԻՅՈ— *Լավ եմ։*

ԼՄՓՈՇ— *Կուզե՞ս «Լայֆ»-ը նայել։*

ՓՈՍԻՅՈ— *Կուզեմ։* (Մոտենում է Լմփոշի սեղանին ու վերցնում հանդեսը)։

ԼՄՓՈՇ— *Հիմա նստիր ռադիոյի մոտ, երբ որ ասեմ, ձայնը բարձրացրու կամ անջատիր։*

ՓՈՍԻՅՈ— (Նստելով)։ *Եղավ։*

ԼՄՓՈՇ— *Հո չե՞ս նեղանում, որ էլ Մոցարտ չենք լսում։*

ՓՈՍԻՅՈ— *Ոչինչ։*

ԼՄՓՈՇ— (Բկլատին)։ *Բաժնում ի՞նչ կա։*

ԲԿԼԱՏ— *Ամեն ինչ նույնն է։ Գոնչոն սկսեց շուռումուռ գալ։*

ԼՄՓՈՇ— *Շատ լավ է։ Փոսիյո, «Լայֆ»-ում ի՞նչ կա։*

ՓՈՍԻՅՈ— (Հանդեսը թերթելով)։ *Գլխի վրա կանգնած մարդ։*

ԼՄՓՈՇ— *Հեռո՞։*

ՓՈՍԻՅՈ— *Բութ մատը քթին դրած տատիկ։*

ԼՄՓՈՇ— *Այ քեզ բա՜ն։*

ՓՈՍԻՅՈ— (Թերթելով)։ *Աղջիկներ։*

ԼՄՓՈՇ— *Ուրի՞շ։*

ՓՈՍԻՅՈ— *Լաց լինող երեխա։*

ԲԿԼԱՏ— *Գոնչոն էլի շուռումուռ է գալիս։*

ԼՄՓՈՇ— *Շատ լավ է։*

ԲԿԼԱՏ— (Իրար անցած)։ *Վեր է կենում։*

ԼՄՓՈՇ— (Իմիջիայլոց)։ *Ուրեմն բառարանը պատրաստիր։*

ԲԿԼԱՏ— (Դռնից ցատկելով դեպի բառարանը)։ *Բառարանը բաց է, Լմփոշ։ Սպասում է, որ կարդան։* (Վերադառնում է դռան մոտ)։ *Գալիս է, Լմփոշ։ Գալիս է բառարանը կարդա, Փոսիյո։ Սկզբից մինչև վերջ*

կկարդանք, ամեն բառի իմաստը կիմանանք ու հա կապրենք ու կապրենք, մինչև չմեռնենք։ (Մոտենում է դաշնամուրին, ցածրաձայն): *Ես դաշնամուրին հենված ինձ համար սիգար կծխեմ։* (Շշուկով): *Արդեն դռան մոտ է։*

Գոնչոն դուռը մի կողմ է հրում ու մտնում ներս: Լմփոշը շուտ է գալիս: Գոնչոն հերթով նայում է ամեն մեկին: Բոլորը ժպտում են: Լավում է ռադիոյի մեղմ երգը: Գոնչոն երկչոտ մոտենում է Լմփոշին: Խոսում է շատ ցածր:

ԳՈՆՉՈ— *Դուք երեկ շատ բարի էիք իմ նկատմամբ։ Երբ ես ձեր տված փողով դուրս եկա, չէի կարծում, թե նորից կտեսնվենք։ Քանի որ հիմա ես վերադարձել եմ, ապա ուզում եմ, որ դուք իմանաք, թե ինչ է եղել։*

ԼՄՓՈՇ— *Ես գիտեմ, թե ինչ է եղել, Գոնչո, կարիք չկա ինձ պատմել։*

ԳՈՆՉՈ— *Ես կարծեցի, որ եթե փորձեմ բացատրել, թե ինչ է եղել և ինչպես է եղել, գուցե դեռ կարողանամ...*

ԼՄՓՈՇ— *Մենք դեռ շատ ժամանակ ունենք, Գոնչո։*

ԲԿԼԱՏ— (Չկարողանալով իրեն զսպել): *Նստի, Գոնչո, նստի ու հանգըստացի։ Քեզնից բացի էստեղ ոչ ոք էս գիրքը կարդալ չի կարող։ Լմփոշն արդեն ոչինչ չի տեսնում։ Փոսիյոն մենակ հունարեն է կարդում։ Իսկ ես էն գլխից անգրագետ եմ, էնպես որ գիրքը դու պիտի կարդաս։*

ԳՈՆՉՈ— *Սա բառարա՞ն է։*

ԲԿԼԱՏ— *Ճիշտ է, ու մենք չորսով պիտի հենց էստեղ սկզբից մինչև վերջ էս գիրքը կարդանք։ «Անհողդողդից» սկսած, Գոնչո, տես դրանից հետո ո՞ր բառն է նշած։*

ԳՈՆՉՈ— *Բայց ինչո՞ւ, ի՞նչ օգուտ բառարանը կարդալուց։*

ԲԿԼԱՏ— *Քեզ է օգուտ, Գոնչո, ինձ է օգուտ, Լմփոշին է օգուտ։ Փոսիյոյին է օգուտ։ Շատ եմ խնդրում, կարդա, էլի։*

ԳՈՆՉՈ— (Փնտրելով): *«Անհողդողդից» հետո նշած բառը... Դուռ* (Կարդում է): *Ապավինել։*

ԲԿԼԱՏ— (Ցնծությանը սահման չկա): *Ճիշտ է, ճիշտ է, հենց էդ բառն է։ Դե կարդա, ի՞նչ է նշանակում։*

ԳՈՆՉՈ— (Կարդում է): *Մեկի, մի բանի վրա հույս դնել, հենվել, պատրսպարվել։*

ԲԿԼԱՏ— *Գրողը տանի, լսեցի՞ր, Լմփոշ։ Տեսա՞ր ինչ կարդաց, Փոսիյո։ Գոնչո, հիմա հարմար նստի ու կարդա, մենք դեռ լիքը ժամանակ ունենք հույս դնելու, հենվելու ու նման բաներ անելու։ Մնում է, որ դու խելոք աշակերտի պես նստես ու ամբողջ բառարանը կար-*

դաս։ Հիմա արդեն ճաշի ժամն է, գիշերը կդադարենք ու կհիշենք մեր կարդացած բառերը, իսկ վաղը նախաճաշից հետո նորից կգանք էստեղ ու կկարդանք։ Դրանից հետո ի՞նչ բառ կա, Գոնչո։

ԳՈՆՉՈ— (Կարդում է)։ *Ատակ։*

ԲԿԼԱՏ— *Ատակ։ Երևի շատ լավ բառ է։ Կարդա տեսնենք գիրքն ի՞նչ է ասում։ Ատակն ի՞նչ է նշանակում։*

ԳՈՆՉՈ— (Կարդում է)։ *Ջորավոր, հղոր։*

ԲԿԼԱՏ— *Այո՜։*

ԳՈՆՉՈ— (Կարդում է)։ *Ընդունակ, ձեռնհաս, ճարտար, հաջողակ։*

ԲԿԼԱՏ— (Ուրախությունից գլուխը կորցրած)։ *Կարդա, կարդա՛, Գոնչո, ճիշտ ես կարդում։*

ԳՈՆՉՈ— (Կարդում է)։ *Ուշիմ, ճարպիկ, հնարամիտ։*

ԲԿԼԱՏ— (Կանգնելով և գլուխը դարձնելով ընդունիչի կողմը)։ *Սպասիր, էս ի՞նչ եմ լսում։ Ձայնը բարձրացրու, Փոսիյո։*

Փոսիյոն բարձրացնում է ձայնը. լսվում է Կոկա-կոլա ընկերության երաժշտությունը։

ՌԱԴԻՈՅԻ ՁԱՅՆԸ— *Ուր էլ լինեք, ով էլ լինեք, ինչ էլ անեք, եթե թարմանալ եք ուզում, հիշեցեք կոկա-կոլան, որովհետև կոկա-կոլան կարող է թարմացնել ձեր կյանքի ցանկացած պահը։ Իսկ սառնորակ կոկա-կոլա կարելի է գտնել ամենուր...*

ԲԿԼԱՏ— *Լսեցի՞ր, Լմփոշ։ Լսեցի՞ր, ինչ ասաց։ Ցա՜վդ տանեմ, Գոնչո, մյուս բառը կարդա։*

Երաժշտության ձայնը բարձրանում է։

Վարագույր

ԷՊԻՖԱՆԻՈՍՅԱՆ

ԻՄ ԱՆՈՒՇ ՓՈՔՐԻԿ

Սենյակը մեծ էր՝ Սան Ֆրանցիսկոյի «Բլեքսթոուն» հյուրանոցի յոթերորդ հարկում։ Թե նվագարկիչը, մի հատիկ ձայնասպնակն ու խավարը չլինեին, այդ սենյակը մազաչափ չէր ձգի իրեն։

Ներս մտավ ժպտադեմ ու դեսուդեն էր գնում՝ անելիքը չիմանալով։ Դեռ վեց ժամ ուներ ու հետո էլ այնքան ժամանակ, որ դրա մասին անգամ չէր ուզում մտածել։

Աչքը սենյակում էլ բան չէր տեսնում։ Ցերեկը միակ պատուհանի վարագույրն իջեցրել էր. լորս կողմը մութ էր։ Գիշերն էլ վառել էր լոգարանի լույսն ու դուռը կիսաբաց արել, որ գոնե մի քիչ լույս ընկնի սենյակ, թե չէ պիտի գնար-գար, դիպներ այստեղ-այնտեղ։ Չնայած մեկ է՝ էլի դիպչում էր։ Բանն աչքերը պատած մթան քողը չէր։ Ուղղակի առաջվա պես մեն-մենակ էր ու չէր նայում շուրջը։ Նայելը էլ միտք չուներ։

Ամեն ինչ մտաբերեց։

Ու ամեն ինչի մեջ նրա հիշատակն էր։

Կամացուկ քայլում էր, շուռ գալիս, դիպչում դռներին, աթոռներին, սենյակի կահ-կարասուն. ուշքը վրան չէր, աչքերը շաղվել էին հուշերից։ Հանկարծ կանգ առավ, հանեց գլխարկն ու պիջակը, ձգվեց ու գլուխը թափահարեց, ինչպես ռինգում էր անում գլուխը մթնելիս։

Ինչ էր եղե՞լ որ։

Կարող էր կյանքի հունն ընկած՝ իր համար ապրել, կարծես նրան երբեք չէր ճանաչել։ Կարող էր ասել-խոսել, ձայնը գլուխը գցած ծիծաղել ու մի օր նորից լավ կզգար իրեն։ Կարող էր ուրիշների պես ապրել աշխարհում, բայց չէր իմանում՝ ուզո՞ւմ է այդպես ապրել։ Լաձերին ասաց, որ սրանից լավ մարզավիճակում ինքը երբեք չի եղել, բայց Լաձերին չգիտեր այն ամենը, ինչ ինքը գիտեր։ Միտքը եկան նրա մազերի բուրմունքը, շուրթերի համն ու նրա կերպարանքը։ Սիրտը մոմի պես հալվեց։ Ժպիտը դեմքին նստեց մահճակալին։ Մի վայր-

կյան անց վեր կացավ տեղից, մոտեցավ նվագարկիչին, միացրեց ու ասեղը դրեց ձայնապնակին։ Հետո երեսնիվայր փռվեց մահճակալին ու ականջը պահեց երաժշտությանը՝ հիշելով նրան ու մրմնջալով. «Իմ անուշ փոքրիկ, քեզ հիշելը միակ իսկական բանն է, որ գիտեմ, քեզ ճանաչելը՝ կյանքիս միակ հրաշքը։ Սրտումս մեն-մի ժպիտ եմ պահել, սրտիդ ժպիտը, երբ մենք երկուսով էինք՝ սիրտ սրտի տված»։

Հենց որ հեռախոսը զանգեց, իսկույն գլխի ընկավ, որ Լաձերին է։ Վեր կացավ ու նվագարկիչն անջատեց։

— Ջո՞,— ասաց Լաձերին։

— Հա։

— Լա՞վ ես։

— Բա ո՞նց։

— Ասածս մի՞տդ է։

— Ինչ ես ասե՞լ որ։

— Ուզում եմ հանդիստ մնաս։

— Էդպես էլ անում եմ։

— Քեզ մի կորցրու։

— Պարզ է։

— Բա՞ն է պատահել։

— Քնած էի։

— Հա՜,— ասաց Լաձերին,— դե լավ։ Իննին կհանդիպենք։

— Եղավ։

— Վայ թե բան է պատահել,— ասաց Լաձերին։

— Խելքդ հացի հե՞տ ես կերել։

— Չէ, բան է պատահել,— նորից ասաց Լաձերին։— Էս բոպեիս գալիս եմ վերև։

— Քնած էի,— ասաց Ջոն։— Իննին կհանդիպենք։

— Ոնց որ մի տեսակ ես,— ասաց Լաձերին։

— Լավ եմ, լավ։

— Մոտդ մարդ-մուրդ չկա, չէ՞։

— Չէ։

— Ջո,— ասաց Լաձերին,— բա ի՞նչ է պատահել։

— Իննին կհանդիպենք,— ասաց Ջոն։

— Հո էլի գլուխս չե՞ս յուղում։

— Չէ։

— Եղավ,— ասաց Լաձերին։— Որ լավ ես՝ լավ ես. էդ կուզեի իմանալ։

— Հա, լավ եմ,— ասաց Ջոն։

— Եղավ,— ասաց Լաձձերին։— Դե որ ուզում ես մենակ մնալ, ի՞նչ ասեմ։ Քեզ մի կորցրու, էդքան բան։

— Իննին կհանդիպենք,— ասաց Ջոն։

Հետ դարձավ Նվագարկիչի մոտ, մի բացրեց, բայց հետո որոշեց էլ երաժշտությունը չլսել։ Այ թե ինչ կանի։ Էլ երաժշտությանը ականջ չի կախի։ Ձայնապնակը կշարդի։ Նվագարկիչն էլ ռադ կանի։ Վարագույրը կբարձրացնի։ Ինչքան որ լույս կա, բոլորը կվառի ու աչքերը լայն կբացի։ Սենյակ կգա միայն քնելու։ Կգնա Թուրքական փողոցի բիլիարդանոցն ու մի երկու տղա կգտնի։ Ջոզն առած՝ բիլիարդի գնդակները դեսուդեն կգցի ու ականջ կանի, թե տղերքն ինչ են պատմում թղթախաղի, ձիերի ու իրենց մյուս հոգսերի մասին։ Կգնա լավ իմացած տեղերից մի երկուսը, կգտնի ծանոթ աղջիկներին, նրանց համար խմիչք կառնի, կհարցնի՝ ոնց են, ինչ են ու ականջ կանի, թե սրա՞նք ինչ են պատմում իրենց հոգսերից։ Էլ մենակ չի լինի։

Ծիծաղը եկավ, սկզբում կամաց էր ծիծաղում, հետո՝ բարձրաձայն։ Իր վրա էր ծիծաղում, իր վշտի թշվառ կատակերգության վրա։ Հետո ծիծաղեց բոլոր ապրողների վրա ու զգաց, որ ամեն ինչ առաջվա պես դեպի լավն է գնում։ Թե ծիծաղում ես, ուրեմն կարող ես ապրել։ Թե անցած-դարձածին այդ ձևով ես նայում, ուրեմն ամեն ինչին էլ կարող ես դիմանալ։ Ծիծաղելիս, իր ձայնի հետ մեկտեղ, ականջին ընկավ նրա՞ ծիծաղը, այնքան պարզ, ասես նա էլ էր սենյակում։ Սիրտը կուչ եկավ, ծիծաղը մարեց շուրթերին. ի՞նչ օգուտ ծիծաղելուց։

Հիշեց նրան, կարծես նա դեռ ողջ էր, քայլում էր իր կողքին անթիվ քաղաքներից մեկի անթիվ փողոցներից մեկով, հիշեց նրա մանկական ու լրշախոհ դեմքը, նրա ամաչկոտ ու անմեղ շարժուձևը, ձայնը՝ այնքան բարալիկ ու անուշ, որ ինքը կանգնում էր որտեղ պատահի, իր գիրկն առնում նրան, իսկ նա լուրջ-լուրջ ասում էր. «Ջո, մարդիկ նայում են»։

Հիշեց իրենց՝ անթիվ սենյակներից մեկում, երբ երկուսով էին լինում. նրա ներկայությունը առաջին լավ ու սիրուն բանն էր իր կյանքում։ Հիշեց նրա քաղցր շուրթերի համը ու նրա սրտի մեղմ տրոփյունը, որ հանկարծ փոխվում էր ասես հեծկլտոցի ու իր հոգում բուռն քնքշանքի պոռթկում արթնացնում, մի մոլեգին քնքշանք, որ ինքը միշտ ղսպել էր՝ չէր գտել մեկնումեկին, թե բաժին հաներ։

Քայլում էր մութ սենյակում ու միտքը բերում, թե նրա հետ ինչքան դաժան վարվեց, երբ իրիկունը տուն գալով՝ տեսավ ձայնապնակը լսելիս։ Մատը տնկեց Նվագարկիչի վրա ու ասաց. «Սա՞ որտեղից ծլեց»։

Հիշեց, թե նա ինչպես վազեվազ եկավ, փաթաթվեց իրեն, իսկ ինքը մի կողմ հրեց նրան։ Հիշեց, թե ինչպես նա հեռու քաշվեց, ասաց. «Փողը լրիվ չեմ տվել, ապառիկով է։ Չես ուզում՝ թող գան հետ տանեն։ Կարծում էի սրտովդ կլինի»։ Ձայնապնակը նվագում էր, ու չնայած ինքը գիտեր, որ այդ երաժշտությունը սրտովն է, չնայած ինքն էլ զգում էր դրա կարիքը ու վաղուց-վաղուց պիտի լսած լիներ, էլի շարունակում էր իրեն կոշտուկոպիտ պահել։ Նա լացակումել էր ու չէր իմանում՝ ուր գնա, ինչ անի։ Երկչոտ քայլերով մոտեցավ նվագարկիչին, ուզում էր անջատել, բայց ինքը գոռաց, որ չանջատի։ Նա հապճեպ, համարյա վազելով՝ ընկավ մյուս սենյակը, իսկ ինքը առանց գլխարկը հանելու կանգնեց նվագարկիչի առաջ ու ձայնապնակը մինչև վերջ լսեց։ Հետո նվագարկիչն անջատեց, դուրս եկավ տանից ու վերադարձավ միայն առավոտվա հինգին։ Նրան քնած գտավ։ Գլուխը չէր մտնում, թե ինքը ինչ իրավունք ունի ճանաչելու նրան, խոսելու հետը, նույն տանն ապրելու, դիպչելու նրան։ Կռացավ, կամացուկ համբուրեց շուրթերը ու տեսավ, թե աչքերն ինչպես բացվեցին։ «Խնդրում եմ, ներիր»,— ասաց։

Նա ժպտալով նստեց ու գրկեց իրեն, իսկ ինքը համբուրում էր նրա շուրթերը, քիթը, աչքերը, ականջները, ճակատը, վիզը, ուսերը, ձեռքերը, մատները, համբուրում էր ու շշնջում. «Միշտ հիշիր, փոքրիկս։ Ինչ էլ որ ասեմ, ես քեզ սիրում եմ։ Մեկ-մեկ կարող է խելքս կորցնեմ, բայց մի մոռացիր, որ քեզ սիրում եմ։ Հիշիր, խնդրում եմ»։

Հանվեց, մտավ անկողին ու քնեց։ Հենց որ նա պառկեց կողքին, արթնացավ ու նրան գիրկն առավ ծիծաղելով, իսկ նա շշնջում էր իր անունը այնպես տխուր ու լուրջ, ինչպես միշտ, երբ գիտեր, որ ինքը լավ է զգում իրեն։

Վենտուրայում սենյակ էին վարձել, որովհետև մոտերքում երեք խաղ ուներ. մեկը՝ Լոս Անջելեսում, մեկը՝ Հոլիվուդում, մեկն էլ՝ Փիսմո Բիչում։ Հնդկացի Պստիկ Ֆուենտեի հետ Հոլիվուդում մրցելու իրիկունը համաձայնեց նրան հետը խաղի տանել, որովհետև գիտեր, թե նա ինչքան է ուզում իրեն ռինգում տեսնել։ Նրան ռինգին մոտիկ մի տեղ նստեցրեց, ու խաղից հետո նա պատմում էր, որ նստած է եղել Ռոբերտ Թեյլորի և Բարբարա Սթենուիքի կողքին, ու սրանք երկուսն էլ շատ սիրալիր են եղել։

— Հույս ունեմ, որ ինքնագիր չես խնդրել,— ասաց ինքը, իսկ նա շփոթվեց ու ասաց.

— Հա, խնդրեցի, Ջո։

— Է՜հ,— ասաց ինքը,— նրա՜նք պիտի քեզնից ինքնագիր խնդրեին։

— Օ՜ երկուսն էլ շատ լավն էին։ Դու անպայման նրանց դուր եկար։

— Բա իհարկե,— ասաց ինքը։— Անպայման, անպայման։ Էդ դդում հնդկացին ինձ սպանեց թողեց։ Չհասկացա էլ, թե ոնց հաղթեցի։ Երևի հոգնել էր ուժ ու կող անելուց։ Գլխիս էնքան հարվածներ կերա, որ մի երեք-չորս ամիս խելքս տեղը չի գա։

— Ռինգում դու հոյակապ էիր,— ասաց աղջիկը։

Այդ խաղը միտքը եկավ, որովհետև դրա մասին նա շատ էր խոսում։ Վեց ռաունդից էր։ Չորրորդում հնդկացին համարյա թե իրեն նոկաուտ էր անելու։ Աղջիկը գիտեր դա ու անընդհատ խոսք էր գցում խաղից, բայց մի օր էլ ասաց.

— Լացս հազիվ էի զսպում։

— Ինչի՞ մասին ես խոսում,— ասաց ինքը։

— Խաղի ժամանակ, էլի,— ասաց նա։— Բոլորը գոռում-գոչում էին, չէի հասկանում քո կողմն են, թե դեմ, լացս հազիվ էի զսպում։

— Էդ ե՞րբ,— ասաց ինքը։

— Ի՞նչ իմանամ,— ասաց նա։— Գլուխս կորցրել էի։ Քեզ գցել էր անկյուն ու խփում էր գազանի նման, բոլորը վեր էին թռել տեղներից ու բղավում էին։ Կարծես ինձ խփելիս լիներ։

Միտքը բերեց, թե ինչպես էր ընկել անկյուն ու ծանր հարվածների տարափ էր, որ ուտում էր, չէր կարողանում դրանց առաջն առնել, չգիտեր՝ պարտվում է, թե ինչ, ու ինքն իրեն ասում էր. «Էսպես որ գնա, աչքդ չթարթած՝ գլխիդ խելք չի մնա»։ Անընդհատ փորձում էր մի կողմ քաշվել, բայց շարժվելու տեղ չկար, ու հանկարծ հնդկացու հարվածները դանդաղեցին, արդեն հոգնել էր, ու նա հիշում էր, որ ինքն ասաց։ «Դե՛, Պատիկ, քոնն էլ էստեղ հատավ»։ Գիտեր, որ արդեն իր բանն աջ կգնա, որովհետև ռաունդի ավարտին մի տասնհինգ վայրկյանից ավել չէր մնացել։ Մինչև ռաունդի վերջը ինչ կարող էր՝ արեց։ Հնդկացին ուժասպառ էր եղել, ձեռքից բան չէր գալիս ու հենց գոնգից առաջ մի ուժեղ հարված հետ մղելով, փռվեց մեջքը վրա, ապշահար հայացքը գամել էր իր դեմքին՝ չէր հասկանում, թե մարդ ինչպես կարող է այդքան ծանր հարվածներ ուտել ու էլի ուժ առնել։

Գոնգը փրկեց հնդկացուն, բայց մինչև մարտի ավարտը նա էլ բանի նման չէր, ու ինքը վերջին երկու ռաունդում էլ նրան նոկդաուն արեց։

— Տեղս նեղ էր,— ասաց աղջկան։— Ճիշտը որ վերցնենք, ես պիտի շարքից դուրս եկած լինեի, բայց հնդկացին արդեն հոգնել էր։ Հնարավոր չի ռաունդի կեսին կատաղածի պես էդքան հարվածներ հասցնել ու հույս ունենալ, որ մինչև ռաունդի վերջը էդպես կդիմանաս։

— Տեսքդ հոյակապ էր,— ասաց աղջիկը,— չէր երևում, թե սիրտդ լցվել է։

— Լցվե՞լ,— ասաց ինքը։— Սի՞րտս ինչու պիտի լցվեր։ Էդ խեղճ հնդկացին գլուխը ցավի տակ է դրել, որ օրվա հացին կարոտ չմնա։ Ես էլ նույնը։ Ոչ նա իմ դեմ բան ունի, ոչ էլ ես՝ նրա։ Թե նա կարենա ինձ գետին գցել, կգցի, թե ես կարենամ, ես կգցեմ։

— Է՛հ,— ասաց աղջիկը,— լացս հազիվ էի զսպում։ Տեսքդ էնքան լավ էր, բայց հենց որ անկյուն ընկար, աչքս մենակ մի բան էր տեսնում. որ ինչ-որ մեկը քեզ հա խփում է, խփում։

— Իմ սրտով էլ չէր,— ասաց ինքը։

Ուրախ էր, որ նա չի տեսել իր ծանր մարտերը՝ առաջվա կտտանքները, երբ հարված հարվածի հետևից էր ուտում։ Հետո արդեն գլուխը կրակը չգցելու խորամանկ հնարքները ականջին օղ արեց։ Հազարից մեկ էր օգտվում հակառակորդին աբցանի մեջ առնելու հնարավորությունից, բայց հենց որ բանը բանից անցնում էր, ու էլ ոչինչ չէր մնում անելու, դրան էլ էր դիմում, մի ակնթարթում շունչը տեղն էր բերում ու փորձում որոշել իր անելիքը մինչև ռաունդի վերջն ընկած վայրկյաններում։ Սովորաբար ամեն մի ռաունդ շենք-շնորհքով էր ավարտում, թեկուզ վնասվածք էլ ունենար, իրեն հավաքում էր։ Ինչ խոսք, տիրապետում էր հեռահար հարվածների, ոտքերն ամուր էին, ու նույնիսկ վնասվածք ունենալիս, միշտ էլ հաստատուն կանգնած էր մնում։

Պատիկ Ֆուենտեի հետ ունեցած իր մարտից հետո աղջիկն էլ ոչ մի խաղ չէր ուզում տեսնել։ Այդ օրերին նա իրեն հիվանդ էր զգում, մտնում էր անկողին ու աղոթք անում։ Միացնում էր նվագարկիչն ու ականջ դնում երաժշտությանը, որն իրենցն էր դարձել, երկուսի համատեղ կյանքի երգը։ Ու երբ ինքը տուն էր գալիս, նրան տեսնում էր գունատ ու հիվանդ, արտասուքն աչքերին՝ երգը լսելիս։ Նրան երկար-երկար պահում էր գրկի մեջ ու ականջ անում սրտի թպրտոցին, որ կամաց-կամաց դանդաղելով՝ դառնում էր սովորական զարկերի նման, ու հետո նրան ձեռքերի մեջ պահած՝ նայում էր աչքերին, իսկ նա ժպտում էր, ու հետո ինքն ասում էր. «Փոքրիկս, եղած-չեղածը լրացուցիչ հիսուն դոլարի հաշիվ էր, բայց ես հաղթեցի»։ Աղջիկը գիտեր, որ ինքը զուրկ է փառասիրությունից, հասկանում էր իր խոսքերի իմաստը ու հարցնում էր՝ ի՞նչ տա։ Ապուխտով ձվածե՞ղ։ Սոդայով վիսկի՞։ Սիրտն ի՞նչ է ուզում։ Ու գոգնոցը կապած՝ արագ-արագ դեսուդեն էր գնում, ուտելիք սարքում, ափսեները հանում, ինչ որ կա չկա շարում սեղանին։

Ինքը միշտ ուտում էր նրա սարքածը, թեկուզ քաղցած էլ չլիներ։ Բայց տարվելիս՝ չէ։ Հենց որ տարվում էր, կոպիտ էր դառնում, սիրան

այնքան նեղված էր լինում, որ նրան կոպտում էր, իսկ նա չէր իմանում ինչ անի, բայց հանկարծ ինքը կոպտությունը մի կողմ էր դնում ու բարձրաձայն ասում. «Հիմարություն չանես՝ ասածներս սրտիդ մոտ ընդունես։ Խելքս գլխիս չի։ Ի՞նչ խաղ, ի՞նչ բան, շիլափլավ էի արել»։

Երբ Նյույորքցի Սեմի Քոֆմանի հետ ունեցած մարտից տուն եկավ, կարգին վնասվածքներ ուներ։ Գլուխը քարի պես ծանրացել էր, շրթունքներն ուռել էին, ձախ աչքը խաղում էր, բոլոր մկանները ցավից նվում էին. երդում-պատառ էր լինում, որ վերջ է տալու, չնայած մարտը հաջող էր անցել ու հաղթանակն իրենն էր։

Այդ իրիկուն նրա հետ կոպիտ չէր, նա էլ ասաց. «Ջո, ի՞նչ կլինի, ձեռ քաշիր դրանից։ Կարող ես փող աշխատելու ուրիշ ձև գտնել։ Մենք շատ փողի կարիք չունենք»։

Ինքը քայլում էր սենյակում ու քթի տակ քրթմնջում։ Հետո հանկարծ խաղաղվեց, լույսերը հանգցրեց, ձայնապնակը դրեց նվագարկիչին ու նրա հետ նստեց իրենց երգը լսելու։ Դա մի հատված էր Յան Սիբելիուսի «Քրիստիան թագավորը» սյուիտից՝ «Եղերերգ» անունով։ Ձայնապնակը երեք անգամ դրեց, ու քունը հոգնածությունից տարավ, իսկ նա նվագարկիչը միացրած էր թողել, մինչև որ ինքը մի կես ժամից արթնացավ։ Ժպտալով նրան ասաց. «Փոքրիկս, ես կուզեի վերջ տալ, բայց փող աշխատելու ուրիշ ձև չգիտեմ»։

Հաջորդ շաբաթ բախտը թղթախաղի մեջ փորձեց, բայց բան դուրս չեկավ։

Նորից բռնցքամարտի պոչը բռնեց։ Երկուսով օվկիանոսի ափը վերից վար կտրեցին անցան, հասան հյուսիս՝ Սան Ֆրանցիսկո, Սակրամենտո, Ռինո, Փորթլենդ ու Սիեթլ, հետո էլ՝ հարավ՝ առափնյա ու ավելի խորն ընկած քաղաքները, որոնք բռնցքամարտի առաջնակարգ վայրեր էին՝ Հոլիվուդ, Լոս Անջելես, Սան Դիեգո... Հենց այստեղ էլ դա իմացավ։ Սկզբում մահու չափ վախեցավ, չնայած սիրտը թունդ առավ հրճվանքից։ Ամեն ինչ անում էր, որ վախը անցնի ու նրա տրամադրությունը փորձում էր բարձր պահել, բայց շարունակ անհանգիստ էր։ Ախր նա տեղով երեխա էր։ Ախր շատ փոքր էր։ Ինքը մոլորվել մնացել էր։ Միտքն ընկավ, թե ինչպես մի իրիկուն նա ասաց.

— Ի՞նչ կլինի, Ջո, թող բերեմ։ Էնպե՞ս եմ ուզում։

— Ուրեմն չուզողը ե՞ս եմ,— ասաց։— Գիտես չե՞մ ուզում ունենաս։ Դա հենց իմ ուզածն է։ Միակ երազս։

Հետո սկսեց քթի տակ մրմնջալ, խոսում էր ինքն իրեն։

— Ի՞նչ, Ջո,— ասաց նա։

— Քեզ լա՞վ ես զգում,— ասաց։— Սիրտդ ի՞նչ է վկայում. կկարողանա՞ս։ Հո չե՞ս վախենում։

— Մի քիչ վախենում եմ,— ասաց նա,— բայց առաջին անգամ երևի բոլորն էլ վախենում են։

Սպասման ամիսները իր կյանքի ամենաերջանիկ օրերն էին։ Ինչքան լավ բան կար հոգում, հեղեղի պես դուրս էր հորդում, թեպետ անհանգստությունից սիրտը բլթբլթում էր։ Նույնիսկ ռինգում իրեն առաջվանից փայլուն էր զրսևորում։ Մարտերը բոլորն էլ հաջող էին, բացի մեկից՝ չեմպիոն Քորբեթի հետ ունեցած հանդիպումից. ճիշտ է, առավելությունը իր կողմն էր եղել, բայց ընչին տարբերությամբ. որոշ սպորտային մեկնաբաններ ասում էին, որ ինքն է հաղթել, մյուսներն էլ պնդում էին, թե Քորբեթն է հաղթողը, ու ամենքն էլ մի երկրորդ հանդիպման ցանկությամբ էին լցված, մանավանդ լաձձերին։

Այնպես որ իրիկունը Քորբեթի հետ նորից էր մրցելու։ Դեռ վեց ժամ ուներ։ Թե մարտը շահեր, ինքն ու լաձձերին վերջապես գրպանները կլցնեին։ Հավատում էր, որ ինքն է տանելու, բայց որ տարավ՝ ի՞նչ։ Հիմա ինչի՞ն է փողը։ Ասենք թե՝ հաղթեց։ Մարտից հետո ո՞ւր գնար։

«Ես մեռած եմ,— ասաց ինքն իրեն։— Ուրիշից պահեմ, ինձնից ի՞նչ պահեմ»։ Աղջկան մտաբերելով՝ քուն մտավ ու հենց արթնացավ, մոտեցավ հեռախոսին, առանց երկար-բարակ մտածելու հյուրանոցի հերթապահին խնդրեց Ռայանի մարզարանում գտնել Քորբեթին ու կանչել հեռախոսի մոտ։ Քիչ անց հեռախոսը զանգեց։ Լսափողը վերցնելուն պես՝ լսեց Քորբեթի ձայնը.

— Ալո՛, դո՞ւ ես, Ջո։

— Ռալֆ,— վրա բերեց Ջոն,— ասեմ քեզ՝ իրիկունը ես եմ տանելու։ Իմ կարծիքով, իսկը ժամանակն է, որ հետ քաշվես։

Հեռախոսալարի մյուս ծայրում Քորբեթը քահ-քահ ծիծաղեց ու ընկերոջը խոստացավ իտալերեն.

— Հոգդ ինձ վրա, Ճստիկ։ Գիտես, որ գլխից ձեռ քաշածների համար խելքս իմը չի։

— Հետո չասես, թե չզգուշացրի,— ասաց Ջոն։

— Կհանդիպենք ռինգում,— ասաց Քորբեթը։

Ռինգում, հենց որ իրար ձեռք սեղմեցին, Ջոն ասաց.

— Սա քո վերջին մարտը կլինի։

Քորբեթը գլխի չընկավ, որ նա ինքն իր հետ է խոսում։

— Շատ լավ, Ջո,— ասաց։

Առաջին ռաունդը սրընթաց էր ու կատաղի։ Նույնիսկ սպորտային մեկնաբանները բան չհասկացան։ Լաձերին դիվոտել էր։

— Ջո,— ասաց,— իբր էս ի՞նչ ես անում։ Էդ ձևով հո Քորբեթի հախից չե՞ս գա։ Քեզ հանգիստ պահիր։ Հակագրոհի անցիր։

Երկրորդ ռաունդը առաջինից սրընթաց էր ու կատաղի։ Երևի երկուսն էլ հավասար էին, բայց միայն այն պատճառով, որ ինքը դեռ չէր հոգնել։ Երաժշտությունը մեղմ մրմունջի պես անդադար հնչում էր հոգում՝ ձուլվելով ամբոխի աղմուկ-աղաղակին ու տարածվելով ամբողջ մարմնով մեկ, իսկ սիրտը շարունակում էր խոսել աղջկա հետ, երազներ էր հյուսում, թե նա դեռ ողջ է, տանը՝ իրենց երգն է լսում ու սպասում իրեն, որ տուն դառնա ու նրան իր գիրկն առնի։

Երկրորդ ռաունդից հետո Լաձերին քիչ էր մնում քոթակի իրեն։

— Ջո,— ասաց նա,— ականջդ բո՞ւրդ է մտել, հակագրոհի անցիր։ Թե չէ Քորբեթը լեշդ կփռի։

(«Ավելի լավ,— ասում էր սիրտը։— Ավելի լավ, իմ անուշ փոքրիկ»)։

Երրորդ ռաունդը թերևս առաջինից ու երկրորդից էլ կայծակնային էր, ու իր բազուկների աքցանից դուրս պրծնելով՝ Քորբեթը ասաց.

— Քո արևին էս ի՞նչ ես անում, Ջո։

— Ի՞նչ պիտի լինի, քեզ նոկաուտ եմ անում,— ասաց Ջոն։

Քորբեթը ծիծաղեց, ու իրենք նորից երես առ երես՝ իրար վրա հասան, իսկ սպորտային մեկնաբանները նայում էին մեկմեկու՝ փոր ձելով հասկանալ, թե ինչ է կատարվում։

Լաձերին կատաղությունից իրեն ուտում էր։

— Ջո,— ասաց նա,— հետդ չեմ խոսում։ Վեց տարի վրադ աշխատանք եմ թափել։ Անփորձ կաթնակերից քեզ մեծ բոնցքամարտի եմ դարձրել։ Չեմպիոնի կոչումը ձեռքիցդ բաց ես թողնում... Էսքա տարի դրա համար ենք չարչարվել։ Դու հողին հավասար կլինես, Ջ։ Հաջորդ ռաունդում նա քեզ գետին կփռի, այ կտեսնես։

Չորրորդ ռաունդում ամեն ինչ գլխիվայր շուռ եկավ։ Քորբեթ ձախ աչքը վնասվել էր, արյուն է որ գնում էր, նա շփոթված էր երևվում ու ոչ այնքան ուժեղ, ինչպես սկզբում։

(«Գրողը տանի,— ասում էր իր սիրտը,— չլինի՞ Քորբեթը մի է։ պիսի պահի գլուխը կորցնելու է»)։

Ռաունդից հետո Լաձերին ասաց.

— Ջո, իմ կարծիքով, նրան բուռդ ես հավաքել... բայց հետո կխոսենք։ Հաջորդ հանդիպումդ «Մեդիսոն Սքուեր Գարդընում» է լինելու։ Մի որոշ ժամանակով գնալու ենք Ֆլորիդա։ Բայց հետո կխոսենք։

Հինգերորդ ռաունդում Քորբեթը դանդաղաշարժ էր, հարվածները թույլ էին, ու նա մոլորված էր թվում։ Ռաունդի վերջում ընկավ ու մինչև ինը հաշվելը մնաց մի ծնկի վրա։

— Սա քո ամենագեղեցիկ մարտն է,— ասաց Լաձերին։— Սպորտային մեկնաբանները վրդ խելքամաղ են լինում։ Դու իսկական չեմպիոն ես, Ջո։

Վեցերորդ ռաունդի վերջը չհասած՝ մարտը դադարեցվեց, որովհետև Քորբեթի աչքը շատ վատ վիճակում էր։

Լաձերին ուրախությունից խելքը թռցրել էր, բայց գլխի չէր ընկնում, թե ինչն ինչոց է։ Պարզ էր, որ Ջոն հոյակապ խաղ է ցույց տվել, նրա խաղաոճը այս մարտի համար ուղղակի անթերի էր։ Բայց և այնպես, Լաձերին հասկանում էր, որ ինչ-որ բան կարգին չի։

— Ջո,— ասաց նա տաքսիում,— հիմա դու չեմպիոն ես։ Էդ ի՞նչ որդ է սիրտդ կրծում։

— Մի երեք-չորս ամիս շունչ կքաշեմ, չէ՞,— ասաց ինքը։

— Ոնց էլ լինի, երկու-երեք ամիսը կա ու կա,— ասաց Լաձերին։— Ինչո՞ւ։

— Էնքան փող ունենք հիմա, որ առաջ երբեք չենք ունեցել, չէ՞։

— Ամենաքիչը մի երկու տարի երկուսիս կհերիքի,— ասաց Լաձերին։— Բայց ինչո՞ւ ես հարցնում։ Ի՞նչ է մտքինդ։

— Հեչ,— ասաց ինքը։ («Իմ անուշ փոքրիկ»,— շշնջում էր սիրտը)։— Իմ կարծիքով իրավունք ունեմ հաղթանակս մի թեթև նշելու։

— Բա ո՞նց,— ասաց Լաձերին։— Իսկի կթողնե՞մ, որ թթվես։ Ուզածդ ի՞նչ է։

— Ուրախանալ եմ ուզում,— ասաց ինքը։— Ես բարձրանամ սենյակս։ Դու մի երկու աղջիկ ճարիր։ Վիսկի էլ կբերես։ Ուրախանալ եմ ուզում։

— Աչքիս վրա,— ասաց Լաձերին։— Աչքիս վրա, Ջո։ Մի պուճուր քեֆ կսարքենք։ Տնաշեն, էնպես լեղաճաք արիր, որ էսքան բանից հետո ինձ էլ է ուրախանալ պետք։

Սենյակ մտնելուն պես՝ նա բոլոր լույսերը վառեց, ձայնապնակը վերցրեց նվագարկիչի վրայից ու մի պահ մտքով անցավ, թե ջարդուփշուր չանի՞։ Բայց ձեռքը չգնաց։ Ասես աչքից կորցնելու համար ձայնապնակը մտցրեց մահճակալի տակ։ Այնքան հետ ու առաջ արեց սենյակում, որ կարոտը նորից սիրտը մորմոքեց, միայն թե հիմա ցավն անտանելի էր, և նա նստեց մահճակալին ու սկսեց լալ։

Երբ Լաձերին երկու աղջիկներին առած ներս մտավ, սենյակում

մութ էր, ընդամենը լույսի մի բարակ շերտ էր լոգարանից ընկնում։ Զայնապնակը նվագում էր, իսկ բոնցքամարտիկը, գլուխը ձեռքերի մեջ առած, նստել էր մահճակալին ու լաց էր լինում։

— Կորեք գրողի ծոցը,— ասաց նա կամացուկ։

Լաճձերին առանց ծպտուն հանելու աղջիկներին դուրս տարավ սենյակից։

— Վերջը լավ կլինի,— ասաց։

— Իմ անուշ փոքրիկ,— մրմնջում էր բոնցքամարտիկը նորից ու նորից։

ՉԵՍԱՓԻՔԻ ԾՈՑՈՒՄ ՍՊԱՍՈՂ ԱՌԱԳԱՍՏԱՆԱՎԸ

«Դե՛, քեզ տեսնեմ, Նենսի, ամենալավ զգեստդ հագիր»,— ծոր էր տալիս ռադիոյով երգող տղամարդը։ Նրա սովորական, ռնգային ձայնը շատ էր սազում երգին։ Թեև երգիչը անհասկացողի մեկն էր թվում, բայց երգը ինքնին մի արտասովոր, անհուն տրտմություն էր սփռում։

— Սիրելի Նենսի,— շշնջաց հիվանդասենյակի տղան։— Անուշիկ Նենսի։

Արդեն կիրակի էր, բայց անձրևը դեռ չէր կտրվել։ Հինգշաբթի օրվա իրիկվանից սկսած, երբ իրեն բերեցին հիվանդանոց, հեղեղի պես թափվում էր ու թափվում։ Հիմա Արևելքում, ուր տղամարդը իր երգն է գեղգեղում, երևի փաթիլ-փաթիլ ձյուն է գալիս։ Ցմեռ է, և ամբողջ երկրով մեկ՝ ինչքան աչքդ կտրի, փողոցները թաց են ու ցուրտ, բայց ինչ-որ տեղ՝ Արևելքում, ռադիոկայանի տաքուկ սենյակում, մարդը արի տես՝ Նենսիի զովքն է անում։ Նա համոզում է, որ Նենսին հագնի ամենալավ զգեստը։ Արևելյան ծովեզրի կողմերը կլինի՝ Չեսափիքի ծոցի առափնյա փոքրիկ մի քաղաք, լուրթ երկնքի տակ փռված կապույտ ծովածոց։ Քսան տարի առաջ այդ փոքրիկ քաղաքի փողոցով ժամադրության էր գնում մի աղջկա հետ։

Տղան աչքի պոչով նայեց հիվանդապահուհուն։ Սա մազալափ նման չէր երգի աղջկան։ Դրանից տգեղ աղջիկ կյանքում չէր տեսել։

— Իմ բախտը,— մրմնջաց նա։— Իմ սև բախտը։

Հիվանդապահուհին մի հաստափոր գիրք էր կարդում։ Առավոտյան ժամը ութից սկսել էր, իսկ հիմա իրիկնադեմ էր։

— Ինչի՞ մասին է,— հետաքրքրվեց տղան։

— Ռեդ Բաթլեր անունով մեկի,— ասաց հիվանդապահուհին։

— Ինչ է անում ո՞ր։

— Հարավցիների կյանքից է։

— Պատմիր նրանց մասին,— թախանձեց տղան։

— Կարդում եմ, կարդում, վերջը չի երևում,— ասաց հիվանդապահուհին։— Սարսափելի ձգձգված գիրք է։

— Է՜հ,— հառաչեց տղան,— ուրեմն երբեք էլ չեմ իմանա, թե ինչն ինչոց է։

— Մի մտածիր, լավ կլինես։

— Հիմա էլ եմ լավ։

— Քեզ համար հանգստացիր։

— Անընդհատ հանգստանում եմ,— ասաց տղան։— Հանդիստ եմ, աշխարհի հետ կռիվ բան չունեմ։ Հիմա արդեն հուշերով եմ ապրում։

— Դու ժպտում է՞լ ես։

— Ինչու չժպտա՞մ որ։

— Խիղճդ չի՞ տանջում։

— Տանջում է։ Իրոք տանջում է։

— Բա էլ ո՞նց ես ժպտում։

— Չգիտեմ։

— Խե՜ղճ լինի մայրդ,— հոգոց հանեց հիվանդապահուհին։

— Խե՜ղճ լինի մայրս,— հոգոց հանեց տղան։— Խե՜ղճ լինի մայրս։

— Այ, դա ուրիշ բան է,— ասաց հիվանդապահուհին՝ նրա աչքերին արցունքներ տեսնելով։

Դրանք մանչուկի արցունքներ էին, մանչուկի, որի խիղճը իրոք տանջում է արածի համար, ու թեև հիվանդապահուհուն նա սկզբից ևեթ դուր չէր եկել հենց իր արարքի և վիրահատությունից առաջ դուրս տված խոսքերի համար, աղջիկն զգում էր, որ ներողամտությամբ է լցվում նրա նկատմամբ։

— Էդպես ավելի լավ է,— ասաց հիվանդապահուհին։

— Ես մորս համար չեմ լալիս,— բարկացած վրա բերեց տղան։— Իմ այլանդակ, գարշելի բախտն եմ լացում, էդ տեսակ բախտի էսենցն ու էնենցը...

Հիվանդապահուհին ոտքի թռավ՝ զայրույթից դողալով։

— Նստիր,— ասաց տղան։— Նստիր ու աչքդ տնկիր, թե երբ եմ մեռնելու։ Հենց դրա համար են քեզ գլխիս պահակ կարգել։

Նա հանկարծ ժպտաց։

— Բանի տեղ մի դիր,— ասաց։— Ուղղակի չեմ սիրում, որ ինձ

խղճում են, պրծավ գնաց։ Առանց էդ էլ վատ է, որ ինքս ինձ խղճում եմ։

— Դու պիտի ամոթից գետինը մտնես,— ասաց հիվանդապահուհին։

Տղան կամացուկ ծիծաղեց։

— Մի նեղանա,— ասաց։

Ներս մտան երկու ոստիկան, որ տղային հարցնեն, թե բան չունի՞ մեկնումեկին տալու։

— Չունեմ,— ասաց տղան։

Լավ էր, որ ամեն ինչ այդպես բացահայտ էր, ու ինքը ստիպված չէր ինչ-որ մեկին պաշտպան կանգնել՝ լռություն պահպանելով։ Ոստիկանները, նրա նկատմամբ ատելությամբ լցված, կանգնել մնացել էին, թվում էր՝ ասելու բան ունեն, չեն ասում, գնալու վրա են, չեն գնում, կարծես եկել էին տղայի վերջը տալու։ Ի պատասխան նրանց ատելության, տղան ժպտաց՝ լավ իմանալով, որ այդ ժպիտի համար նրանք ատում են իրեն, միայն թե հիմա դերասանություն չէր անում, չէր ջանում բիրտ ու անզգա երևալ, խիղճն իրոք տանջում էր։ Ինքը չէր ուզում գըլխացավանք դառնալ։ Մտքովն էլ չէր անցել։

Նրա սիրտը ցավում էր ոստիկանների համար, ընկերների, մոր ու հենց իր համար։ Բոլորի համար էլ սիրտը ցավում էր, նույնիսկ հիվանդապահուհու։ Հատկապես խեղճ հիվանդապահուհու համար էր ցավում։

Ոստիկանները կանգնել մնացել էին. նրանք նեղլիկ, սպիտակ հիվանդասենյակ էին բերել իրենց խոնավ շորերի, դրսի աշխարհի բույրը, և դրա համար ինքը շնորհակալ էր։ Լավ տղերք էին։ Ինքը չէր ատում նրանց։ Ոչ ոքի չէր ատում։ Ուղղակի բախտը չբերեց, ուրիշ ոչ մի բան։ Բախտը չբերեց։

— Իսկական անունդ ի՞նչ է,— հարցրեց ոստիկաններից մեկը, որը տղային ամենից շատ էր ատում։ Սա մի հաղթանդամ, կոշտուկոպիտ իռլանդացի էր, բայց հոգու խորքում գուցեև բարի էր։

— Ջո Ռեննա։

— Դու իտալացի չես։

— Բոլոր թղթերս ձեզ մոտ են,— ասաց տղան։— Ջո Ռեննա է անունս։

— Ինչքան ես եմ իտալացի, էնքան էլ դու,— ասաց ոստիկանը։— Ոչ էլ ամերիկացի ես։

— Բա ի՞նչ եմ, որ ամերիկացի չեմ,— ասաց տղան։— Կոլումբոսի պողոտայում եմ ծնվել։

— Տան համա՞ր։

— Գլխիցս թռել է։

— Մայրդ կամ հարազատներիցդ մեկը, ոնց էլ լինի, սրա մասին կուզեն իմանալ,— ասաց ոստիկանը։

Տղայի աչքերը նորից արցունքոտվեցին։

— Բոլորն էլ մեռել են,— ասաց նա։

— Ոչ ոք չունե՞ս, ինչ է,— հարցրեց ոստիկանը։

Տղան մտածեց, թե աղջկա անունը չտա՞։ Իհարկե, նա ամեն ինչ թերթերում կարդացած կլիներ, բայց չէր էլ զանգել։ Այ թե համով կատակ կլիներ, եթե տար աղջկա անունը՝ հավատացնելով, թե իբր նա պիտի սգա իր վրա։

— Բանկում երեք հարյուր դոլար ունեմ,— ասաց տղան։— Պիտի որ հերիքի թաղման համար։ Գրքույկս ձեզ մոտ է։ Ինչ էլ որ ավելանա, փողոցում մի պատահական տղայի տվեք։

— Հագուստ-կապուստիդ հա՞րցն ինչ է լինելու։

Եղածով կբավարարվեմ։ Խելքը գլխին դերձակ որ լինի, տեսքի կբերի։

— Բա տունուտե՞ղդ, ունեցած-չունեցա՞ծդ։

— Ինչ ունեմ-չունեմ, վրաս է։

Ոստիկանները դուրս եկան սենյակից, և արցունքները նորից խեղդեցին տղային։ Լավ բան չի աշխարհից հեռանալը։

Ոստիկանների գնալուն պես՝ հիվանդապահուհին միացրեց ռադիոն։

Հանկարծ Նենսիի դովքն անող տղամարդը սկսեց երգել Զեսափիքի ծոցում սպասող առագաստանավի մասին, և տղան տեղափոխվեց այն ժամանակները, երբ ինքը դեռևս աշխարհ չէր եկել, մի փոքրիկ քաղաք, որը երբեք չէր տեսել։ Ամառային արևաշող փողոցով նա գնում էր մի անծանոթ աղջկա հանդիպելու, բայց իրեն շատ քիչ ժամանակ էր մնացել։

Տղան աչքերը հառեց հիվանդապահուհուն և այնքան նայեց, մինչև որ աղջիկը հայացքը կտրեց գրքից ու վերջապես ՏԵՍԱՎ նրան։

— Արի էստեղ,— ասաց տղան։

— Ի՞նչ ես ուզում,— տեղից վեր կենալով՝ հարցրեց հիվանդապահուհին։

— Ուզում եմ իմանաս, որ ես քեզ սիրում եմ,— ասաց տղան։ (Դե՛, քեզ տեսնեմ, Նենսի, ամենալավ զգեստդ հագիր, մեր առագաստանավը մեզ է սպասում Զեսափիքի ծոցում։ Օ՜հ, ես մարդ եմ սպանել)։

Հիվանդապահուհին մի պահ կանգնեց տղայի գլխավերևը, ապա ձեռքը դրեց նրա ճակատին։

— Ճակատիս չէ,— ասաց տղան,— շուրթերիս։

Հիվանդապահուհին ձեռքը դրեց նրա շուրթերին, և տղան համբուրեց աղջկա ձեռքը։ (Օ՜հ, Նենսի, Նենսի)։

Երգիչը ուր որ է անցնելու էր վերջին կրկներգին։

— Մոտ բեր շուրթերդ,— շշնջաց տղան։

Աղջիկը խոնարհվեց և այնքան մոտեցավ, որ խոսելիս նրանց շուրթերը հպվում էին։

— Եթե ինձ չես սիրում,— շշնջաց տղան,— մի մտածիր, թե ես էլ քեզ չեմ սիրում։ Ես քեզ էնքան եմ սիրում, որ ոչ մի կնոջ էդքան չեն սիրել։

Երգիչն անցավ վերջին կրկներգին։ Տղան փակեց աչքերն ու տենդագին սարսուռով բռնված՝ ընկավ նինջի մեջ. նա անցնում էր ծանոթ ու անծանոթ բազում վայրերով, կանգ էր առնում, շրջվում, չորս կողմը նայում, նետվում դեսուդեն։ Հետո դուրս պրծավ ինչ-որ խառնամբոխի միջից և հայտնվելով արևելյան ծովեզրի փոքրիկ քաղաքում՝ քսան տարի առաջ, զվարթ ու առույգ քայլեց փողոցով. գլխավերևում կապույտ երկինքն էր, շուրթերին՝ սառնորակ ջրի ու սիրեցյալի համբույրի ծարավը, չորսբոլորն աշխարհը՝ սիրո ցնծությամբ լեցուն։

Երբ սարսուռը մարեց, և նա բերանը բաց անշնչացավ, հիվանդապահուհին շտապեց բժշկին բերելու։

ԱՅՆ ՀԵՌԱՎՈՐ ԳԻՇԵՐԸ

Մի գամած օր էր, այն օրերից, երբ արթնանում են հին-հին հիշատակներն ու հին երգերը։ Ամբողջ օրը ես նստած էի տանը՝ ականջս այդ երգերին։ Չորս կողմն ավելի շատ խավար էր, քան լույս, և ես հիշեցի մի երգ, որ ժամանակին երգել էի մի աղջկա համար, ավտոբուսի մեջ։ Մենք արդեն սիրում էինք իրար, բայց հենց որ ավտոբուսը հասավ Թոփիքա, նա իջավ, և ես էլ երբեք չտեսա նրան։ Գիշերվա կեսին, երբ համբուրեցի նրան, աղջիկն արտասվեց, և ես հիվանդացա սիրո տրտմությամբ։ Օգոստոսյան նորահաս գիշեր էր, կյանքումս առաջին անգամ գնում էի Նյու Յորք։ Ես հիվանդացա սիրո տրտմությամբ, որովհետև գնում էի իմ ճանապարհով, իսկ նա՝ իր։

Այդ միգամած օրը նստել էի տանը ու միտք էի անում, թե ինչպես է, մեկի կյանքն ընթանում է մի ճամփով, մյուսներինը՝ ուրիշ, ամեն մեկն իր ճանապարհով է գնում, և ոմանք մեռնում են կես ճանապարհին։ Եթե թեկուզ աշխարհը փոքր լինի, եթե դու այլևս չես տես-

նում նրանց, ուրեմն նրանք մեռած են։ Եթե նույնիսկ ճամփադ թողած՝ հետ գաս, փնտրես նրանց և գտնես, կգտնես մեռած, որովհետև ինչ ճանապարհով էլ գնաս, միևնույն է, մահը ճանապարհիդ է։

Ավտոբուսը հասավ Թոփիքա, նա իջավ ու կորավ անկյան հետևում, և ես էլ երբեք չտեսա նրան։ Շատ ուրիշներին տեսա, շատերը նույնքան լավն էին ու սիրուն, բայց ոչ մեկը նման չէր նրան, ոչ մեկը չուներ նրա թախծալի, անուշ ձայնը, ոչ մեկը չէր արտասվում այնպես, ինչպես նա արտասվեց։ Էլ երբեք չի լինի նրա պես տխուր ուրիշը։ Էլ երբեք չի լինի այն ամերիկյան գիշերվա պես ուրիշը։ Միգուցե նա հիմա առաջվանից ավելի լավն է, բայց էլ երբեք չի լինի այն գիշերվա տրտմության պես ուրիշը, և էլ երբեք նա կամ մի ուրիշը չի արտասվի այդպես, և նրան համբուրած ոչ մի տղամարդ չի հիվանդանա այն գիշերվա սիրո տրտմությամբ։ Այդ ամենը մնաց այն ամերիկյան գիշերվա գրկում, որը կորած է և էլ երբեք չի գտնվի։ Այդ ամենը մնաց փոքրիկ պատահականություններից հյուսված դարերի խորքում, չնչին, աննշմար պատահականություններ, որոնց կամքով նա նստեց կողքիս, չնչին, աննշմար պատահականություններ, որոնց կամքով նստեցի այնտեղ՝ նրան սպասելու։

Նա եկավ ու նստեց կողքիս, և ես հասկացա, որ այդ բոլոր տարիներին նրան եմ սպասել, բայց երբ Թոփիքայում նա իջավ ավտոբուսից, ես մնացի նստած ու երեք օր հետո արդեն Նյու Յորքում էի։

Ահա և ամենը, եթե մոռանամ, որ ինձանից մի բան դեռևս այնտեղ է՝ ամերիկյան այն հեռավոր տաք գիշերվա գրկում։

Երբ ցերեկվա խավարին փոխարինեց գիշերվա խավարը, ես դրեցի գլխարկս ու դուրս եկա տանից։ Մեգ-մշուշի մեջ բռնեցի քաղաքի ճամփան, և սիրտս հավատարիմ, անմոռուչ շան պես հետս եկավ։ Քաղաքում հանդիպեցի մի քանի մեռյալների, որոնք իմ ընկերներն էին, և ամենասրտակեղեք հեծեծանքից էլ դառն ու մահահունչ ծիծաղը շրթներիս՝ մենք կերանք, խմեցինք, խոսեցինք ու երգեցինք, բայց մտքումս միայն նրա քնքուշ լացն էր, որովհետև փոքրիկ պատահականություններից հյուսված տարիները մեր ճամփաները խաչաձևել էին, և իմ խև սիրտը շշնջում էր ինձ, որ մնամ նրա հետ ու չգնամ ոչ մի տեղ, իմ խև սիրտը շշնջում էր, որ գնալու տեղ չունեմ։

ԳՈՂԱՑԱԾ ՀԵԾԱՆԻՎԸ

1919 թվականի այդ նկարը լի էր հրճվանքի, անհոգության ու սխրանքի տրամադրություններով, և երբ Այք Ջորջը դուրս եկավ կինոթատրոնի շենքից, այդ կինոնկարի եռանդուն, խիզախ ու հաջողակ տղան արդեն ինքն էր։

Եվ քանի որ ինքն արդեն ուրիշ էր և իր արարքը ամենևին էլ սխալ չէր հասկացվի, նա վերցրեց հեծանվակայանում սպասող բոլորովին նոր հեծանիվը և ողջ աշխարհի աչքի առաջ նստեց ու սլացավ։

«Լ» փողոցի իր տան առաջ կանգնած՝ ճապոնացի Քերոյի հեծանրվավաճառ Ջոնի Ֆարագոն անմիջապես նկատեց նոր հեծանիվը։

— Հե՜յ,— կանչեց Ֆարագոն։

Տղան թեքեց ղեկն ու մոտեցավ մայթեզրին։ Նա լավ գիտեր Ջոնին։ Եթե կանչողը նա է, պետք է կանգնես։ Այքի համար դա նույնիսկ հաճույք էր. նրան միշտ հիացրել էր Ջոնին, որն ասես իր տեսած կինոներից լիներ։

— Փառավոր հեծանիվ է,— ասաց Ջոնին,— որտեղի՞ց։

— Միստր Յորքն է նվիրել ծնունդիս,— ասաց տղան։

— «Հերալդ» թերթի տարածման պատասխանատո՞ւն։

— Ըհը։

Տղան իջավ հեծանիվից ու ղեկը հանձնեց իրենից մեծին։ Ջոնին ծանրութեթև արեց հեծանիվը, նստեց ու սկսեց փոքր պտույտներ տալ։

— Քեզ լավ էլ հեծանիվ է տվել, այ տղա։ Անունդ ի՞նչ է։

— Այք։

— Այք ի՞նչ։

— Այք Ջորջ,— ասաց տղան։

— Քուքի Ջորջի ի՞նչն ես։

— Քուքին զարմիկս է։

— Իմ էլ լավ ընկերն է։

— Միշտ մի գլխացավանք ունի,— ասաց Այքը։

— Սա որտեղի՞ց գողացար,— հարցրեց Ջոնին, —ինձ կարո՞ղ ես ասել։

— Չեմ գողացել,— ասաց Այքը։— Միստր Յորքն է նվիրել ծնունդիս։

— Քուքին ընկերս է,— ասաց Ջոնին։— Հեծանիվը քեզ ուրիշն է տվել։ Դու թեկուզ նրա կյանքն էլ փրկեիր, նա քեզ հեծանիվ տվողը չէր։

— Էս հեծանիվն ինձ նա է տվել,— ասաց տղան։

— Բոլորին կասես, որ սա քեզ Քուքին է տվել,— ասաց Ջոնին։— Յորքի ականջն ընկավ՝ տհաճ պատմություն կդառնա։

— Քուքին փող չունի,— ասաց տղան։

— Մեկ ունի, մեկ էլ չէ,— ասաց Ջոնին։— Երեկոյան նրան տեսնելու եմ, ինչ որ պետք է կասեմ, հիմա դու տուն գնա։

Տղան հեծանիվին թռավ ու տուն քշեց։

Երբ հայրը տեսավ հեծանիվը, ասաց.

— Հայկ, քեզ որտեղի՞ց էդ հեծանիվը։

— Քուքին է տվել։

— Քո զարմիկ Գուրգե՞նը։

— Այո,— ասաց տղան։

— Գուրգենը փող չունի,— ասաց հայրը։— Մեկից երևի մի օրով վերցրել ես։

— Չէ,— ասաց տղան,— իմն է։

— Ներս գնա ու հացդ կեր,— ասաց հայրը։

Տղան ներս գնաց, հացը կերավ։ Հինգ րոպե չանցած, երբ նա տնից դուրս եկավ, հայրը բակում քշում էր հեծանիվը։

— Հայկ,— ասաց հայրը,— հեծանիվը տար ու իր տեղը դիր։ Դու գող չես։

— Քուքին է տվել,— ասաց տղան։

Հաջորդ օրը դպրոց նա հեծանիվով գնաց։ Հեծանիվը ինչպես կար, էնպես էլ թողել էր, համարն էլ տեղում՝ 137620 Ռ։ Դասերից հետո քշեց «Իվնինգ Հերալդի» խմբագրություն և բոլորին ասաց, որ հեծանիվն իրեն նվիրել է իր զարմիկ Քուքին ծնունդի առթիվ։

— Ե՞րբ ես ծնվել,— հարցրեց նրա ընկեր Նիք Բոման։

— 1909-ի սեպտեմբերի յոթին,— ասաց տղան։

— Հիմա մայիսն է,— ասաց Նիքը։— Գլխիդ փորձանք ես բերելու, Այք։

Տղան քշեց Մարիփոզայի ու Աչքի փողոցի իր խաչմերուկը և ամբողջ լույս-ցերեկը թերթ վաճառեց։ Երեկոյան եկավ նրա զարմիկ Քուքին։

— Սա՞ է,— ասաց նա։

— Ըհը,— ասաց տղան։

— Քեզ լավ էլ նվեր եմ արել, չէ՞։

— Այո, շնորհակալ եմ։

Հոկտեմբերին նա արդեն մոռացել էր, թե հեծանիվն ինչպես է իր ձեռքն ընկել։ Նոյեմբերին, մեկի հետ չափ մտած սուրալիս, հեծանիվի շղթան տեղից թռավ։ Առջևի անվագոտին ջարդվեց, անիվի ճաղը ծռվեց։

Նոր գոտին տղայի վրա մեկ ու քառորդ դոլար նստեց, նոր ճաղի համար վճարեց մեկ դոլար, հիսուն սենթ էլ՝ աշխատանքի գինը։

Սրանից հետո հեծանիվն իրենն ու իրենն էր։

Ուղիղ մի տարի անց, նույն օրը, տղան հեծանիվը թողեց Լիբերթի թատրոնի առաջ նույն տեղը, դահլիճ մտավ նոր ֆիլմ դիտելու և երբ դուրս եկավ, հեծանիվը չկար։ Տղան տուն գնաց, տեսավ հորն ու ասաց.

— Հեծանիվս գողացան։

— Ոչինչ,— ասաց հայրը։— Ներս գնա հաց կեր։

— Քաղցած չեմ,— ասաց տղան։

Սաստիկ վրդովված՝ նա կանգնել էր հոր առջև, հետո հանկարծ շուռ եկավ ու վազեց։ Ուր ասես իրեն չգցեց, ոտքի տակ տվեց քաղաքի բոլոր փողոցները՝ փնտրելով հեծանիվը։ Մի ժամից տուն եկավ, հաց կերավ ու քնեց։

Նա տասնմեկ տարեկան տղա էր արդեն։

Հետո, օգոստոսյան մի օր ինքն ու իր Նիք Ռոմա ընկերը հեռադրատան պատի հետ ձեռնագնդակ էին խաղում։ Նիքի ապշեցուցիչ հակահարվածից գնդակը թռավ, բախվեց փողոց մտած բեռնատարին ու գլորվեց, գնաց։ Տղան վազեց գնդակը գտնելու։ Աստիճաններով իջավ նեղլիկ անցուղին, ուր աղբի ու մոխրի արկղեր էին շարված։ Գնդակը պիտի որ այստեղ լիներ։ Տղան դեսուդեն նայեց, ներկը քերած մի հեծանիվի հենք տեսավ, բարձրացրեց, շտկեց ու նայեց համարը։ Համարն էլ էին քերել, բայց 13-ը և Ռ-ն դեռ երևում էին։ Նիք Ռոման հարցնելով եկավ.

— Գնդակն ի՞նչ եղավ, Այք։

— Չգիտեմ, կորել է,— ասաց տղան։— Հեծանիվս գտա։ Վրան բան չեն թողել։

— Հենքը կա՞,— ասաց Նիքը։

— Կա,— ասաց տղան,— բայց առանց մնացածի հենքն ինչի՞ս է պետք։

— Պետք կգա,— ասաց Նիքը։

— Ա՜խ թե գողը ձեռքս ընկներ։

Փոլ Արմերն անցնում էր փողոցով, տղաներին տեսավ, կանգնեց, նրանց հետ զննեց հեծանիվի մերկ հենքը։

— Ինչքա՞ն ես ուզում սրա համար, Այք,— հարցրեց նա։

— Չգիտեմ,— ասաց տղան։

Նա զայրացած էր ու սիրտը կտոր-կտոր էր լինում։

— Սա իմ հեծանիվն էր,— ասաց նա Փոլին։— Գողացել էին։ Մենք

ձեռքի գնդակ էինք խաղում, եկա, որ գնդակը գտնեմ՝ սա գտա։ Ամեն ինչ վրայից հանել են, սա էլ գցել էստեղ։

— Գնդակն ո՞ւր կորավ,— ասաց Նիքը։

— Գրողի ծոցը,— ասաց Այքը։

— Սրա համար քեզ մի դոլար տամ,— ասաց Փոլ Արմերը։

— Եղավ,— ասաց տղան։

Մի շաբաթ անց, երբ նա տեսավ արդեն վերանորոգած ու ներկած Հեծանիվը, դարձյալ զայրույթով լցվեց ու ասաց իր մեջ.

— Ա՜խ թե գողը ձեռքս ընկներ։

ՊԱՏԵՐԱԶՄ Է ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ՝

1939-ի սեպտեմբերի 3-ին, Ջոն անունով մի տղա վազելով մտավ Մորագա պողոտայի վրա գտնվող սափրիչի խանութը, որտեղ ես իմ մազերն էի հարդարում։

— Եվրոպայում պատերազմ է հայտարարվել,— ասաց նա։

Միստր Տագալավիան մի ձեռքից սանրը գցեց, մյուսից՝ մկրատը։

— Դո՛ւրս կորիր այս խանութից,— ասաց նա։— Առաջ էլ ասել եմ քեզ։

— Ի՞նչ է անունդ,— ասացի ես տղային։

— Ջոն,— ասաց նա։

— Քանի՞ տարեկան ես,— ասացի։

— Տասնմեկ,— ասաց Ջոնը։

— Դո՛ւրս գնացեք այս խանութից,— ասաց միստր Տագալավիան։

Ես այն տպավորությունն ունեցա, որ միստր Տագալավիան Ջոնին է ուղղում իր խոսքը, բայց այդպես չէր ըստ երևույթին։ Նա ինձ էր ասում։ Հո ինքնիրեն չէ, որ խոսում էր։

Ջոնը խանութից դուրս էր եկել։

Սափրիչն իր գոգնոցը հանեց ու մի կողմ նետեց։

— Ո՞վ,— ասացի ես։

— Դուք,— ասաց միստր Տագալավիան։

— Ինչո՞ւ։

— Ես աշխատում եմ, որ իմ խանութը պատվավոր լինի։

— Ես պատվավոր մարդ եմ։

— Դուք խոսեցրիք այդ հիմար տղային,— ասաց սափրիչը։— Չեմ ուզում, որ ձեզ նման մարդիկ իմ խանութը գան։

— Նա հիմար չէր երևում,— ասացի։

— Հիմար տղա է, հիմա՛ր,— ասաց սափրիչը։— Ես չեմ ուզում, որ հիմար մարդիկ գան այստեղ։

— Գուցե իրոք մի քիչ հիմար բան էր, որ տղայի անունը հարցրի,— ասացի ես։— Կներեք դրա համար։ Ես գրող եմ, գիտե՞ք, և միշտ հարցեր եմ տալիս մարդկանց։ Ներողություն։ Խնդրում եմ, վերջացրեք մազերիս գործը։

— Ոչ,— ասաց սափրիչը։— Պրծա՛վ։

Ես աթոռից վեր կացա ու նայեցի գլխիս։ Դեռ գործի կեսն անգամ չէր եղել։ Գլուխս դեռ պատշաճ ձևը չէր ստացել, բայց այդպես էլ կարող էի անցնել երեք կամ չորս թաղամաս և գնալ մի սովորական սափրիչի մոտ գործը վերջացնելու։ Փողկապս կապեցի և բաճկոնս հագա։

— Ներեցեք,— ասացի,— ի՞նչ է պարտքս։

— Ոչինչ,— ասաց սափրիչը։— Ես ձեզ նման մարդկանցից փող չեմ ուզում։ Եթե անոթի մնամ, եթե ընտանիքս անոթի մնա՝ ոչինչ։ Հիմար մարդկանց փողը պետքս չէ։

— Կներեք,— ասացի,— բայց կարծում եմ, ինչ-որ բան պարտք եմ ձեզ։ Գուցե երեսունհինգ սե՞նթ։

— Ոչ մի պեննի,— ասաց սափրիչը։— Խնդրեմ, դուրս գնացեք։ Արածս թող նվեր լինի ձեզ։ Ես տալիս եմ մարդկանց։ Չեմ վերցնում։ Ես մարդ եմ, ոչ թե հիմար։

Գուցե այդ բոպեին պետք է հեռանայի խանութից, բայց համոզված էի, որ նրա իսկական ուզածը ինձ հետ խոսելն էր։

Ես ունեմ հասկանալու կարողություն, որ սովորականից բարձր է, երբեմն նույնիսկ ահավոր։ Ես հասկանում եմ բաներ, որ ուրիշ մարդիկ, այս կամ այն պատճառով, չեն կարող հասկանալ։

(Երբեմն իմ հասկացածը սխալ է լինում և ինձ գցում է փորձանքի մեջ, բայց ես տակից դուրս գալու ճարը գտնում եմ առհասարակ։ Մի անուշ խոսք։ Ձայնի մեջ բարեկամական շեշտ։ Կյանքը ճանաչող մարդու վերաբերմունք այսպիսի բաների նկատմամբ։ Բոլորս եղբայրներ ենք։ Մեղանից ամեն մեկի վերջը մահ է։ Սիրենք իրար և աշխատենք չարկանալ)։

Հասկացա, որ սափրիչն հուզվել էր կամ ջղայնացել. որ ուզում էր խոսել և լսող ունենալ. և որ իրականում, եթե անշուշտ սխալ չէր իմ ենթադրությունը, նրա ասելիքն ուղղված էր աշխարհին։ Եթե հազարավոր մղոններ էլ ճամփորդեր, նա չէր կարող գտնել մի մարդ, որ ավելի պատրաստ լիներ լսելու նրա ասելիքը և հաղորդելու աշխարհին։

— Մի սիգարե՞տ,— ասացի։

— Ոչինչ չեմ ուզում,— ասաց սափրիչը։

— Գուցե օգնե՞մ սրբիչները դասավորելու։

— Դուրս գնացեք իմ խանութից։

Ահա վերջապես ինձ հավասար մի մարդ, որի նմանին գուցե երբեք չէի հանդիպել։ Ժամանակակից գրականության ընթացքին հետևող կանանցից ոմանք ասել են, թե ես առեղծվածային և անհասկանալի մարդ եմ։ Բայց ես գրող եմ վերջապես։ Կարելի է գրողից սպասել, որ նա տպավորություն գործի առեղծվածային լինելով և այլ նման բաներով, բայց սափրիչից սովորաբար սպասում ես, որ մազերդ հարդարի կամ երեսդ սափրի, կամ էլ անի թե՛ մեկը, թե՛ մյուսը, մի քիչ էլ զբաղեցնի սիրալիր զրույցով, ուրիշ ոչինչ։ Կարդալու ժամանակ ունեցող կանայք երևի կարծում են, որ գրողի համար բնական է այս կամ այն մտասևեռումն ունենալ, իսկ գրողը գուցե աշխարհի միակ մարդն է, որ կարող է նման առանձնաշնորհումներ թույլ տալ սափրիչին։

Գրողները գոռոզ մարդիկ չեն։ Գիտեն, որ իրենք մարդկային արարածներ են և մի օր պետք է մեռնեն ու մոռացվեն։ Գալիս ենք, գնում ենք ու մոռացվում։ Իմանալով այս բոլորը, Գրողը մեղմ ու բարեսիրտ է այնտեղ, ուր մի ուրիշ մարդ խիստ է ու անբարեսիրտ։

Ես որոշեցի սափրիչին առաջարկել մազերը հարդարելու լրիվ արժեքը։ Վաթսունհինգ սենթ՝ երեսունհինգի փոխարեն։ Մարդը միշտ էլ կարող է մազերը հարդարել։ Կան ավելի կարևոր բաներ, քան խաբված չլինելու վստահությունը։

— Ներեցեք,— ասացի,— չեմ կարծում, որ ձեր նկատմամբ ճիշտ բան արած կլինեմ, եթե չվճարեմ։ Ճիշտ է, չեք վերջացրել իմ մազերի գործը, բայց գուցե մի ուրիշ օր։ Ես մոտ եմ ապրում։ Մենք նորից տեսնելու ենք իրար։

— Դուրս գնացեք իմ խանութից,— ասաց սափրիչը։— Չեմ ուզում, որ ձեզ նման մարդիկ գան այստեղ։ Էլ մի՛ եկեք։ Ժամանակ չունեմ։

— Ի՞նչ եք ուզում ասել՝ ինձ նման մարդիկ։ Ես գրող եմ։

— Ի՞նձ ինչ, թե դուք ով եք,— ասաց միստր Տագալավիան։— Դուք խոսեցրիք այդ հիմար տղային։

— Մի քանի բառ միայն,— ասացի։— Չգիտեի, որ դա տհաճ կլինի ձեզ։— Երևում էր, որ տղան հուզված է և շատ է ուզում, որ մեկնումեկը հասկանա իրեն։

— Նա հիմար տղա է, հիմա՛ր,— ասաց սափրիչը։

— Ինչո՞ւ եք այդպես ասում,— հարցրի ես։— Նա անկեղծ էր երևում։

— Ինչու եմ այդպես ասո՞ւմ։ Որովհետև նա իսկապե՛ս հիմար է։

Ահա վեց օր է արդեն, ամեն օր վազում մտնում է իմ խանութը և գոռում՝ պատերա՜զմ, պատերա՜զմ, պատերա՜զմ։

— Չեմ հասկանում,— ասացի ես։

— Չե՞ք հասկանում,— ասաց սափրիչը։— Պատերա՜զմ։ Չգիտեմ դուք ով եք, բայց ձեզ մի բան ասեմ։

— Անունս Դոնալդ Քեննեբեկ է,— ասացի։— Կարող է լսած լինեք իմ մասին։

— Իմ անունը Նիք Տագալավիա է,— ասաց սափրիչը։— Երբեք չեմ լսել ձեր մասին։

Նա լռեց ու նայեց իմ աչքերի մեջ։

— Պատերա՜զմ,— ասաց։

— Այո,— ասացի ես։

— Դուք հիմա՜ր եք,— ասաց սափրիչը։— Մի բան ասեմ ձեզ,— շարունակեց։— Չկա՛ պատերազմ։ Ես սափրիչ եմ։ Չեմ սիրում հիմար մարդկանց։ Հնարած բան է այս ամբողջ աղմուկը։ Ուզում են իմանալ՝ դեռ հիմա՞ր են մարդիկ։ Այո՛, հիմար են։ Մարդիկ երբեք այսքան հիմար չեն եղել։ Տղան վազում գալիս է այստեղ և ասում՝ «Եվրոպայում պատերազմ է հայտարարվել», իսկ դուք խոսում եք նրա հետ։ Քաջալերում եք։ Նա շատ շուտ է հավատում ամեն ինչի, ձեզ նման։

Սափրիչը լռեց և նորից շատ ուշադիր նայեց ինձ։ Ես գլխարկս հանեցի, որպեսզի նա տեսնի, թե որքան է կտրել մազերս և որքանը դեռ չի արել։

— Ի՞նչ եք գրում,— ասաց նա։

— Հուշեր,— ասացի։

— Դուք հիմար եք,— ասաց սափրիչը։— Ինչո՞ւ եք քաջալերում տղային։ Առանց պատերազմների էլ նա բավական գլխացավանք է ունենալու կյանքում։ Ինչո՞ւ եք հարցնում՝ «Քանի՞ տարեկան ես»։

— Ինձ թվաց, թե բավական ժիր տղա է, և պարզապես ուզեցի նրան իմացնել, որ նկատել եմ դա։

— Չեմ ուզում, որ ձեզ նման մարդիկ իմ խանութը գան,— ասաց սափրիչը։

— Ինձ նման մարդի՞կ,— ասացի։— Ես ատում եմ պատերազմը։

— Լռեցե՛ք,— ասաց սափրիչը։— Աշխարհը ձեզ նման հիմարներով է լցված։ Ատո՜ւմ եք պատերազմը, բայց Եվրոպայում պատերազմ կա, չէ՞։

Այս մեկն արդեն բավական տարօրինակ մեղադրանք էր։

— Կներեք,— ասացի,— ես չեմ սկսել պատերազմը։

— Ատո՜ւմ եք պատերազմը,— ասաց նորից սափրիչը։— Ձեզ ասում

են, որ Եվրոպայում պատերազմ կա, դուք էլ ուրեմն հավատում եք, որ պատերազմ կա Եվրոպայում։

— Պատճառ չունեմ հավատալու, որ Եվրոպայում խաղաղություն է,— ասացի ես։

— Ատո՞ւմ եք պատերազմը,— ասաց նա։— Թերթը լույս է տեսնում, վերնագիրը՝ Պատերազմ։ Տղան վազելով գալիս է խանութ։ Պատերա՞զմ։ Դուք գալիս եք մազ հարդարելու։ Պատերա՞զմ։ Ամեն մարդ հավատում է։ Աշխարհը հիմարներով է լցված։ Ինչի՞ց են թափվել ձեր մազերը։

— Տենդից,— ասացի։

— Տենդի՞ց,— ասաց սափրիչը։— Ձեր մազերը թափվել են, որովհետև հիմար եք։ Էլեկտրական մեքենա։ Սանր։ Մկրատ։ Մա՞զ չունեք, որ կտրեմ։ Հնարված բան է այս ամբողջ աղմուկը։ Էլ չեմ ուզում, որ հիմարները գան այստեղ և ինձ ջղայնացնեն։ Պատերազմ չկա՞։

Ճիշտ էի հասկացել, որ սափրիչն ասելիք ուներ և ուզում էր, որ մեկը լսի իրեն։ Շատ գոհ էի։

— Դուք նշանավոր մարդ եք,— ասացի։

— Մի՛ խոսեք,— գոռաց սափրիչը։— Ես տասնմեկ տարեկան հիմար տղա չեմ։ Ես հիսունինը տարեկան եմ։ Նշանավոր մա՞րդ։ Թերթեր։ Քարտեզներ։ Դուք մա՞զ չունեք ձեր գլխին։ Ի՞նչ եմ կտրելու ձեր կարծիքով։ Տղան վազելով ներս է գալիս։ Իսկ դուք չեք կարողանում տեղներդ հանգիստ նստել։ «Պատերազմ է հայտարարվել Եվրոպայում»,— ասում է նա։ «Ի՞նչ է անունդ։ Քանի՞ տարեկան ես»։ Ի՞նչ է պատահել։ Խելագարվե՞լ եք։

— Ես չէի ուզում խռովել ձեր սիրտը,— ասացի ես։— Թույլ տվեք վճարել։

— Երբե՞ք,— ասաց սափրիչը։— Ոչինչ չեմ ուզում։ Դա մազ հարդարել չէ։ Ոչ մի պենսի։ Եթե գլխին մազ ունեցող մեկը գա և նստի այստեղ, ես կվերցնեմ էլեկտրական մեքենան և կհարդարեմ։ Մազերը կընկնեն հատակին։ Ոչ մի խնդիր։ Ոչ մի հուզմունք։ Ոչ մի հիմարություն։ Աթոռից վեր է կենում։ Գլուխը լավ ձև է ստացել։ Ականջները զով են։ Վաթսունհինգ սենթ։ Շնորհակալ եմ։ Ցտեսություն։ Տղան վազելով ներս է գալիս։ Ասում եմ՝ «Դո՛ւրս կորիր իմ խանութից»։ Տղան դուրս է գնում։ Ոչ մի աղմուկ։

— Ուրիշ սափրիչներ հարդարում են իմ մազերը,— ասացի ես։

— Շատ լավ,— ասաց նա։— Գնացեք ուրիշ սափրիչի մոտ։ Խնդրե՞մ, գնացեք ուրիշ սափրիչի մոտ։ Բայց հիշեցեք մի բան։ Չկա՞ պատերազմ։ Էստեղ-էնտեղ պրոպագանդա տարածելով մի՛ զբաղվեք։

Արդեն վստահ էի, որ հաջողությամբ թափանցել էի մարդու զայրույթի խորքը և թարմ ու ինքնատիպ նյութ էի քաղել մի նոր հուշի համար, ուստի, առանց այլևս մի բառ ասելու, դուրս եկա խանութից ու քայլեցի փողոցով։

Զգում եմ, որ նյութն արդյունավետ օգտագործեցի. դրանից ձևեցի մի գործ, որն ավելի կմեծացնի իմ արդեն իսկ մեծ համբավը։

ԿՈԼԻԲՐԻՆ, ՈՐԸ ԴԻՄԱՑԱՎ ԶՄՌԱՆԸ

Ունչնիսկ բնազդը կարող է պարտություն կրել անհատականությունից. նկատի ունեմ, անշուշտ, ոչ թե մարդկանց, այլ մյուս արարածներին։ Համարվում է, որ մարդը կառավարում է իր բնազդները, ճի՞շտ է դա, թե չէ, թող ուրիշները որոշեն։ Մի բան հաստատ է, որ կենդանի արարածների մեծ մասի, գուցեև բոլորի հիմնական բնազդը՝ ապրելու բնազդն է։ Ամեն մի կենդանի էակ ունի բնազդային պաշտպանական միջոցներ այլ էակների, ինչպես նաև տարերքի դեմ։ Թե ինչ է կատարվում կոլիբրիների հետ՝ ես այդպես էլ չկարողացա պարզել ոչ դիտելով նրանց, ոչ էլ կարդալով նրանց մասին։ Անկասկած, նրանք մեռնում են։ Եվ ծնվում են ինչ-որ ձևով, թեև ես երբևէ չեմ տեսել կոլիբրիի ձու կամ կոլիբրիի ձագ։

Անգամ հասունացած կոլիբրին այնքան պստլիկ է, որ նրա ձուն պետք է զարմանահրաշ բան լինի. երևի, դա աշխարհում ամենագողտրիկ, ամենապստլիկ բաներից մեկն է։ Իսկ եթե կոլիբրին լույս աշխարհ է գալիս ոչ թե ձվից, այլ ուրիշ կերպ, այդ դեպքում, խնդրում եմ ընթերցողին ներել ինձ։ Միակ բանը, որ գիտեմ Ագաս, Ագասիկ, Ագասսիկ, Ագաղիկի մասին (նկատի ունեմ ամերիկացի մեծ բնախույզին) այն է, որ նա ժամանակին հետազոտել է կրիայի ձուն և որ անհրաժեշտ տվյալներ ստանալու համար նա պետք է գտներ թարմ ձվեր։ Սա էլ իր հերթին առիթ եղավ բոստոնցի մի երիտասարդի հետաքրքրաշարժ արկածների համար, որոնք նա թղթին հանձնեց, ես էլ վեց-յոթ տարի անց կարդացի դրանք, երբ տասնչորս տարեկան էի։ Իսկ իմ տասնչորս տարին լրացավ 1922-ին, և դա ապացուցում է, թե որքան անկարևոր է մարդու տարիքը, երբ նա գործ ունի որևէ տեսակի ձվի հետ։ Նախանձում եմ նրանց, ովքեր ուսումնասիրում են թռչուններին և հույս ունեմ օրերից մի օր իմանալ այն ամենը, ինչ հայտնի է կոլիբրիների մասին։

Լսել եմ, որ կոլիբրին անցնում է անհավատալի մեծ տարածություն,

ծախսելով անհավատալի քիչ էներգիա. իսկ ի՞նչն է նրան առաջ տանում։ Ոգի՞ն։ Այսուհանդերձ, լավագույնը, որ գիտեմ կոլիբրիների մասին, աչքովս տեսածն է։ Նրանք հայտնվում են արևալից օրերին, երբ շուրջն ամեն ինչ ծաղկում է, ամեն ինչ բուրում։ Անկարելի է, որ նման մի հիասքանչ օր դուք չտեսնեք կոլիբրիին՝ փոքրիկ հրաշքի պես անշարժացած լույսի ճառագայթի մեջ կամ որևէ մեծ ծաղկի և կամ մանրիկ ծաղիկների փնջի վերևում։ Կտեսնեք նաև, թե ինչպես է հանկարծ զվարթ խենթությամբ նետի պես սլանում չգիտես թե ուր, առանց որևէ պատճառի, գուցե պարզապես այն պատճառով, որ ապրում է։ Հիմա ասացեք, հնարավո՞ր է, որ այդ աստիճան քնքուշ ու հրաշագեղ մի խենթ արարած կարողանա ժամանակ գտնել սովորական, հնացած մի զբաղմունքի՝ սերնդի շարունակության համար։ Կամ գործի դնի ինքնապաշտպանական բնազդը։ Ինչևէ. աստծո ողորմածությամբ, թող գա այն լավ օրը, որն իր հետ կբերի կոլիբրիներին։ Բայց, ինչպես ասացի, պատահում է, որ նույնիսկ բնազդը բիոլոգիական այս կամ այն տեսակի մեջ պարզապես չի գործում։ Գուցեև դա վերաբերում է բոլոր տեսակներին։ Ինչ որ է, այսպես թե այնպես, երբ կենդանի էակների որևէ տարատեսակի բոլոր անհատները դառնում, գնում են ուրիշ մի տեղ՝ փրկելու համար իրենց կյանքը, փախչելով ցրտից կամ չգիտեմ թե ինչից, պատահում է, որ նրանցից մեկը չի գնում։ Ինչո՞ւ չի գնում, չեմ կարող ասել։ Գուցե տարօրինա՞կ անհատ է, բայց կարող են և ավելի վեհ պատճառներ լինել. ասենք, ոչ թե վերացական, այլ միանգամայն որոշակի զգացմունք իր տեսակի մեկ այլ, գուցեև մեռած անհատի կամ տվյալ տեղի հանդեպ։ Իսկ գուցե պատճառը հիմարությունը կամ կամակորությո՞ւնն են։ Ինչ իմանաս։

Մի անգամ նման մի կոլիբրի ձմռան ամիսներին չչվեց Ֆրեզնոյում գտնվող մեր տան շրջակայքից։

Պատմեմ ձեզ նրա մասին։

Մեր տան դիմաց ապրում էր Տիգրան անունով, գրեթե կույր, մի ծերունի։ Ութսունից անց էր, իսկ կինը ընդամենը մի քանի տարով էր իրենից ջահել։ Փոքրիկ տնակ ունեին՝ ներսից կոկիկ, իսկ դրսից շատ սովորական, բացի Տիգրանի պարտեզից, որն աշխարհի լավագույն պարտեզն էր։ Բուրալի, սև, տամուկ հողում աճող տնկիները, թփերն ու ծառերը՝ ամեն, ամեն ինչ փթթում էր Տիգրանի հոգացողությամբ։ Երկնքից իջնող բոլոր արարածները սիրում էին մեր խղճուկ շրջակայքի այս անկյունը, և Տիգրանն էլ նրանց էր սիրում։

Խոր ձմռան մի ցուրտ կիրակի, երբ վերադառնում էի կիրակնօրյա դպրոցից, տեսա մեր փողոցի մեջտեղը կանգնած Տիգրանին, որն իր

ձեռքի ափում ինչ-որ բան էր զննում։ Նայելով նրան, կանգնեցի մեր տան աստիճանների վրա, թեև մինչ այդ շտապում էի տուն, վառարանի մոտ։ Ծերուկը հայացքը մեկ դարձնում էր վեր՝ իր ծառերին, մեկ՝ կրկին ձեռքի ափին։ Մոտ երկու րոպե կանգնելուց հետո վերջապես մոտեցավ ինձ։ Ձեռքը մեկնելով, հայերեն հարցրեց.

— Ափիս միջինն ի՞նչ է։

Ես նայեցի։

— Պստլիկ թռչուն է՝ կոլիբրի,— ասացի կես անգլերեն, կես հայերեն։ Կոլիբրին անգլերեն ասացի, քանի որ հայերեն անունը չգիտեի։

— Ի՞նչ բան է,— ասաց Տիգրանը։

— Գիտես դրանց,— ասացի։— Ամռանն են հայտնվում, անշարժ կախվում են օդում ու հետո մեկ էլ սլանում գնում են։ Թևերն էնպես արագ են թափահարում, որ չես էլ տեսնի, հասկանա։ Դրանցից մեկն է ձեռքումդ։ Մեռնում է։

— Հետս եկ,— ասաց ծերուկը։— Աչքերս չեն տեսնում, իսկ պառավն էլ եկեղեցի է գնացել։ Զգում եմ սրա սրտի զարկը։ Մի տես, շա՞տ վատ է։

Ես նորից նայեցի։ Սրտաճմլիկ բան էր։ Ամառվա չքնաղ պստլիկ էակը՝ ծեր գեղջուկի մեծ, կոշտացած ձեռքում։ Ցմռան այս ցրտին՝ բոլորովին անզոր ու խղճալի, ամենաանզորն ու ամենախղճալին և ոչ թե ամառային լույսի ճառագայթի մեջ կախված աշխարհի ամենակենսախինդ էակը։

— Մեռնում է,— ասացի։

Ծերուկը ձեռքը մոտեցրեց բերանին ու իր տաք շնչով ջերմացրեց ափի միջի պստլիկին, որին ինքը նույնիսկ չէր կարողանում տեսնել։— Դիմացի,— ասաց հայերեն։— Շուտով ամառը կգա։ Դիմացի, սիրունիկ թռվռանս։

Մենք մտանք նրա փոքրիկ տան խոհանոցը, ու մինչ իր տաք շընչով նա ջերմացնում էր թռչնիկին, ասում էր, թե ինչ պիտի անեմ ես։

— Գազօջախի վրա ճաշի մի լիքը գդալ մեղր տաքացրու ու լցրու ափիս մեջ, բայց տես, որ շատ տաք չլինի։

Ամեն ինչ արեցի։

Քիչ հետո կոլիբրին սկսեց կենդանության նշաններ ցույց տալ. սենյակի ջերմությունը, տաք մեղրի գոլորշին և, անշուշտ, ծերուկի կամքն ու գորովը իրենցն արեցին։ Շուտով ծերուկն իր ափի մեջ փոփոխություն զգաց, իսկ մեկ-երկու րոպե անց թռչնիկն սկսեց կտցել մեղրը։

— Սա կապրի,— հայտարարեց ծերուկը։— Մնա, կտեսնես։

Կերպարանափոխությունն անհավատալի էր։ Ծերուկը խանդաղա-

տանքով լայն բացեց ափը, և ես սպասում էի, որ անզոր թռչնիկը հիմա ուր որ է կկախվի օդում, ու իմ սիրտն էլ հուզմունքից քիչ մնաց կանգ առներ. հենց այդպե՛ս էլ եղավ։ Սքանչելի էր նոր կյանք առած փոքրիկ թռչունը. նա ճախրում էր նեղլիկ խոհանոցում, մոտենում էր պատուհանին, վերադառնում էր կրակի մոտ, կախվում օդում, պտտվում, կարծես հիմա ամառ էր, և ինքը ողջ կյանքում երբեք իրեն այդքան լավ չէր զգացել։

Ծերուկը նստեց աթոռին. թեև կույր, նա միշտ շատ ուշադիր էր։ Լսողությունը լարել էր և ջանում էր տեսնել, բայց, իհարկե, ոչինչ չէր տեսնում։ Ինձ էր հարցուփորձ անում թռչնիկի մասին, ո՞նց է, չի՞ թուլացել, լա՞վ է զգում իրեն, հո՞ չի նեղվում, անհանգստանում։ Եվ ես նկարագրում էի ամեն ինչ։

Երբ թռչնիկն սկսեց անհանգստանալ և ուզեց դուրս թռչել, ծերուկն ասաց.

— Բա՛ց արա պատուհանը, թող գնա։

— Կապրի՞,— հարցրեցի։

— Հիմա ապրում է ու թռչել է ուզում,— ասաց նա։— Բա՛ց արա պատուհանը։

Ես բացեցի պատուհանը. կոլիբրին իրեն այսուայն կողմ գցեց, երբ զգաց դրսից եկող սառնությունը, ելք փնտրելով, կախվեց բաց պատուհանի առջև, հետո դուրս թռավ։

— Պատուհանը ծածկի,— ասաց ծերուկը։

Մենք մի երկու րոպե խոսեցինք, հետո ես տուն գնացի։

Ծերուկը պնդում էր, թե կոլիբրին ձմռանը ողջ մնաց, բայց ես հավատացած չէի։ Երբ ամառը եկավ, նորից կոլիբրի թռչունների տեսա, բայց մեկին մյուսից զանազանել անհնար էր։

Ամռան մի օր հարցրի ծերուկին.

— Նա ողջ մնա՞ց։

— Թռչնի՞կը։

— Հա,— ասացի։— Որին մեղր տվինք։ Հիշում ես, իհարկե։ Պրստլիկ թռչունը, որ ձմռանը մեռնում էր։ Հիմա ո՞ղջ է։

— Շուրջդ նայիր,— ասաց ծերուկը։— Կոլիբրի տեսնո՞ւմ ես։

— Շատ կոլիբրի եմ տեսնում,— ասացի։

— Դրանցից ամեն մեկը մեր թռչնիկն է,— ասաց ծերուկը։— Դրանցից ամեն մեկը, ամեն մեկը,— ասաց նա արագ ու մեղմաձայն։

ՋԻՄ ՊԱՏՐՈՍԻ ԿՈՒԼԸ ՄԱՀՎԱՆ ՀԵՏ

Ջիմ Պատրոսը մատուցող է Սան Ֆրանցիսկոյի «Օմար Խայամ» ռեստորանում։ Քառասունչորսամյա մի բարեհոգի հույն է, որ շատ ավելի ջահել է թվում։ Միջահասակից մի քիչ ցածր է, բայց ոչ այնքան կարճ, որ կարձլիկ համարես։ Ամրակազմ է ու նրբագեղ վարպետությամբ է սպասարկում սեղանները։ Նա գիտի ինչպես օգտակար լինել առանց գլուխ տանելու, իսկ շարժուձևը ի բնե վայելուչ է։

Համհատ ապրուստի տեր շատ մարդկանց նման՝ Ջիմը խաղամոլ է և հավատում է, թե օրերից մի օր բախտը կժպտա ու ինքն ուղածի չափ փողի կտիրանա։ Ամեն օր նա հետևում է ձիարշավի մրցումներին և մեկ-մեկ էլ նստում պոկեր խաղալու։ Առայժմ աշխարհում ամենահաջողակը չի, բայց յոթ-ութ օրը մեկ նրա անհավանական գուշակությունները ճիշտ են դուրս գալիս, ասել է թե՝ Ջիմի ընտրած ձին առաջինն է տեղ հասնում ու նրա հավատը անսասան պահում։

Եվ շատերի նման, որ քիթ սրբելու ժամանակ չունեն, ինչ մնաց թե պարապ-սարապ ման գան, Ջիմը իր մասին անթիվ-անհամար պատմություններ է անում։

Ինձ ամենից շատ դուր է գալիս 1918 թվին, Փենսիլվանիայի Ջեսթեր քաղաքում գրիպով հիվանդանալու նրա պատմությունը, երբ մազ է մնացել, որ շունչը փչի։

Հիվանդացել էի, պատմում է նա։ Առավոտը վեր կացա թե չէ, պղտցի, որ հալս հալ չի, բայց շորերս հագա, որ գնամ գործի։ Շալվարս հագնելիս՝ փովեցի գետնին, բայց ոտի կանգնեցի։ Դռանը չհասած՝ նոր ց զրխկացի։ Չէի հասկանում գլխիս ինչ օյին է եկել։ Ընկել մնացել էի։ Կարգը էսպես է. եթե պետական հիմնարկի աշխատող ես ու գործ ց հետ ես ընկնում, մարդ են ուղարկում, որ գա իմանա, թե ինչն ինչոց է։ Ուզում էի վեր կենամ, բայց շան օրի էի։ Մի կերպ՝ փորսող տալով, հասա մահճակալիս ու ինձ գցեցի տեղաշորին։ Հաջորդ օրը մի բուժքույր եկավ, թե՝

— Ի՞նչ է պատահել։

— Չգիտեմ,— ասի։— Էսօր չէ, բայց էգուց կգնամ գործի։

Սա քննեց ինձ, թե՝

— Ի՞նչ գործ, ի՞նչ ես խոսում, դու հիվանդանոցի բան ես։

Տեղիցս վեր կացա, ասի.

— Հենց հիմի էլ գնում եմ գործի։

Բայց նորից թրմփացի։ Լավ էր, քույրը վրա հասավ։

— Դե լավ, գոնե պառկած մնա,— ասաց։

Կեսօրին տանտիրուհին եկավ, թե՝

— Ո՞նց ես, որդի։

— Եսթմ,— ասի,— մայրիկ։

Զմյուռնիացի մի հույն բժիշկ կար, ասի.

— Բժիշկին իմաց տուր, թող գա ինձ նայի, մայրիկ։

Զմյուռնիացի բժիշկը էն բոպեին մտավ, երբ որ պետական բժիշկն ու քույրը տանտիրուհու ականջն էին լցնում, թե հիվանդանոցի բան եմ, բայց ես մեջ ընկա, ասի.

— Թողեք հայրենակիցս ինձ նայի։

Հույն բժիշկն էլ քննեց։ Ու հետ դառնա, ի՞նչ ասի.

— Հա, հենց էլ հիվանդանոցի բան ես։

Բա։ Որ հիվանդ եմ, ուրեմն հիվանդանոցի բան եմ բայց ես ասի.

— Չէ։ Ես էստեղ էլ կմնամ։

Սրանք գնացին, բայց մի ժամից պետական բժիշկն ու քույրը ոստիկանական մեքենայով եկան, հետևներից էլ՝ երկու ոստիկան։ Քույրը թե՝

— Վեր կաց։

— Է՛, անունն ի՞նչ դնենք,— ասի։— Ես հո աշխատում եմ, պետությանը օգուտ եմ տալիս։

— Գիտենք,— ասին։— Մենք կարգադրություն ենք ստացել։ Քեզ պիտի հիվանդանոց տանենք։

— Չէ,— ասի,— գնում եմ գործի։

Նորից վեր կացա, բայց չկարեցա թե ոտս ոտիս առաջ դնեմ։ Բա։ Որ հիվանդ ես, ուրեմն հիվանդանոցի բան ես։

— Նավով է, ինչով է, ինձ տարեք Ֆիլադելֆիայի ամենալավ հիվանդանոցը,— ասի։

— Ֆիլադելֆիայի հիվանդանոցներում ասեղ գցես՝ գետնին չի ընկնի,— ասաց բժիշկը։— Մենք քո հոգսը կքաշենք։

Էդ էր ու էդ, ինձ դրին ոստիկանական մեքենան ու տարան հիվանդանոց։ Բայց հիվանդանոցը ո՞րըս է։

Ես ասեմ հիվանդանոց, դուք ախոռ հասկացեք. մի մեծ սենյակ էր՝ երկու կողմից մահճակալներ շարած, մեջտեղից էլ մի նեղ կածան։ Ինձ պառկեցրին մահճակալներից մեկին։ Հիմա սպասում եմ, թե ինչ է գալու գլխիս։ Ուղիղ երեք օր ոչ մի պատառ բան տվին, որ բերանս խաբեմ, ոչ էլ մի կաթիլ ջուր, որ ծարավս կոտրեմ։ Մենակ փշրած սառույց։ Մի իրիկուն տեսնեմ՝ քույրերից մեկը ուտելիք է բերում։ Բայց ի՞նչ բերի, որ լավ լինի. ձկան պոչեր։ Ամանը ցած դրեց, աչքս գցեցի ձկան պոչերին։

— Էս ի՞նչ է,— ասի։

Քույրը թե՝

— Ուտելիք։

— Ուտելի՞ք,— ասի։— Աստված սիրես, դենը կորցրու։

Նայեցի չորս կողմս, հիմա ինձ ու ինձ տալիս եմ առնում։

— Էս ի՞նչ տեղ եմ ընկել,— ասի։— Ձկան պոչերն ի՞նչ են քթիս դեմ անում։

Մի թուխ-թուխ քույր կար, հույնի էր նման, դրա համար էլ նրան կանչեցի։

— Հո՞ւյն ես,— ասի։

— Սերբուհի եմ,— ասաց։

— Էս տեղը սրտովս չի,— ասի։— Սրանք ուզում են հոգիներս սատանեքին շպրտե՞ն։

Աղջիկն ի՞նչ ասի. թե բա՝

— Հոգիներդ՝ չգիտեմ, բայց որ մարդկանց էստեղից հանում են սատանեքին շպրտում, էդ մեկը հաստատ է։

Դու մի ասա, անհույս հիվանդներն էին էդտեղ, ովքեր որ արդեն վերջին շնչումն են։ Բոլոր հիվանդանոցներն էլ բերնեբերան լիքն էին, ամեն տեղ մարդիկ ճանճի պես կոտորվում էին։ Բայց էս քամբախը ամենագեշ տեղն էր։ Թե մեռնելու էի, գոնե տանը մեռնեի, ոչ թե սպանդանոցում։

— Ես հույն եմ,— քրոջն ասի։— Ուզում եմ տուն գնամ։ Մութն ընկնի թե չէ, շորերս բեր, հագնեմ, գլուխս առնեմ գնամ։

— Կբերեմ,— ասաց քույրը,— թեկուզ աշխատանքից էլ զրկվեմ։ Կարո՞ղ ես գնալ։

— Կգնամ,— ասի։— Մենակ թե շորերս բերես, արևիդ մատաղ։

Բա։ Մութն ընկավ թե չէ, նա համ շորերս բերեց, համ էլ օգնեց, որ հագնեմ։ Դեռ ոտի չկանգնած՝ քիչ էր մնում փռվեմ, բայց աղջիկը ինձ օգնության հասավ։ Ջնայած բոլորն էլ հիվանդ մեռնում էին, բայց գլխի էին, թե ինչ եմ անում։

— Ջիմ,— ասում էին,— էդ ո՞ւր ես գնում։

— Տուն եմ գնում,— ասի։— Թե մեռնելու եմ, գոնե տանը մեռնեմ։

Հենց ուզեցի քայլեմ, գետնին շրմփացի, սերբ աղջիկն էլ հոնգուր-հոնգուր լաց է լինում, թե՝

— Ոտքդ ընկնեմ, մի կերպ քայլիր, էլի։

Ինձ տարավ, մինչև դուռը հասցրեց։ Աչքիս առաջ սևացել էր, բան չէի տեսնում, բայց նա մնաց կողքիս, մինչև որ մի քիչ մաքուր օդ շընչեցի։ Հետո արդեն աչքերիս փառն ընկավ, բայց ի՞նչ տեսնեմ, որ լավ լինի։

Զորս կողմը՝ ձյուն ձմեռ։

Աղջիկը թե՝

— Ոնց ես տուն գնալու։

— Կգնամ,— ասի։

Նա դուռը հետևիցս ծածկեց ու գնաց իր գործին։ Նստեցի աստիճաններին, աչքերս իրենց-իրենց փակվում էին։ Էդպես նստել, երնեկ էի տալիս Հունաստանում անցած հին-հին օրերին, երբ սարալանջերին վազ-վազ էի անում, հաղարջ քաղում ուտում ու քչքչան առուների անուշ ջուրը խմում։ Մեկ էլ մի մարդ ձեռը դրեց ուսիս։ Տեսնեմ՝ զինվորական է՝ սպա։

— Բա՞ն է պատահել,— ասաց։

— Տուն եմ գնում,— ասի։

— Էս հիվանդանոցի՞ց ես,— ասաց։

— Սա հիվանդանոց չի,— ասի,— սպանդանոց է։

— Արի քեզ տանեմ իմ գրասենյակը,— ասաց։

Գրասենյակում էլ թե բա՝

— Նստիր։

Զանգեց կարգադրեց, որ Զեսթերի ավտոբուսը գնալու լինի, գա, ինձ էլ վերցնի, ու հենց որ վարորդը մտավ գրասենյակ, սրան ասաց.

— Էս մարդուն հասցրու տուն։ Մինչև շեմքը կտանես։

Ավտոբուսը լիքն էր հազար ու մի տեսակ տուն դարձող բանվորներով։ Քունս տարավ, ընկա մի իտալացու գոգը։ Իտալացին թե՝

— Բան չկա, ախպեր, բան չկա։

Երբ որ վարորդը ինձ քնից հանեց, ավտոբուսը դափ-դատարկ էր։ Մարդը մինչև շեմքը բերեց հասցրեց։ Զմյուռնիացի բժիշկը հույների մեջ տարածել էր, որ հոգուս վրա եմ, դե, մի հույն էլ տանտիրուհուն բռնել էր ասել, թե արդեն հոգիս աստծուն եմ տվել։ Հենց որ տանտիրուհին դուռը բաց արեց, էլ չիմացավ՝ ե՞ս եմ, թե՞ ուրվականս։ Ղազարոսը միտնե՞րդ է։ Այ, Ղազարոսն էի դառել։ Երեսս մենակ մազ ու ոսկոր էր։ Էդ հույնն էլ խեղճ կնկան ասել էր՝ մեռել եմ։ Ասել էր. «էն կարճլիկ մարդը տնվորդ էր, չէ՞։ Էս կոտրած ձեռովս երեկ հողը դրի։ Ողորմածիկ Ջիմ Պատրոսին։ Ջուր տեղը նրան էլ մի սպասիր»։ Տանտիրուհին սրտաճաք կանգնել մնացել էր։ Բա։

— Մի վախենա, մայրիկ,— ասի։— Ես եմ՝ Ջիմ Պատրոսը։ Ջեմ մեռել, ողջ եմ։

— Տղաս,— ասաց,— ո՞նց ես, ի՞նչ ես։

— Հիվանդ եմ, մայրիկ։

Նա ինձ սենյակս տարավ, տեղաշորս բացեց, պառկեցրեց։ Աչքերս փակվում էին, բայց նրա խոսքերը ականջս ընկան։

— Տղաս,— ասաց,— ի՞նչ անեմ քեզ համար։

— Մայրիկ,— ասի,— նեղություն քաշիր, իշիր ներքև ու մի քիչ հավի մսաջուր բեր ինձ համար։

Նա իջավ ներքևի հարկ ու մի թաս հավի մսաջուր բերեց։ Մսաջուրը զլուխս քաշեցի ու աչքերս փակվեցին, քուն եկավ վրաս։ Գիշերը մի սառը բան սկսեց ներսս բարձրանալ, ու էլ մինչև լույս աչքս չկպավ։

Ոնց որ մեկն ինձ բզեր՝ թե զարթուն մնա։ Լուսադեմին տանտիրուհին եկավ, թե՝

— Տղաս, ասա, ի՞նչ անեմ քեզ համար։

— Մայրիկ,— ասի,— նեղություն քաշիր, իշիր ներքև ու մի քիչ հավի մսաջուր բեր։

Նա էլի հավի մսաջուր բերեց։ Մոտ մի ժամ հետո եկավ, թե՝

— Այ տղա, աշխարհի երեսին էն տեսակ բան կա՞, որ սիրտդ ուզի, ասա իմանամ։

Նա լաց էր լինում։ Բա։

— Մի լա, մայրիկ,— ասի։— Թե մեռնելու եմ, կմեռնեմ։ Մարդ աշխարհ է գալիս, որ մի անգամ ապրի։ Նեղություն քաշիր, մի քիչ հավի մսաջուր բեր։

Մինչև մութն ընկնելը, ժամը մեկ, նա հավի մսաջուր բերեց։

Գիշերը հույն բժիշկն ու պետական բժիշկը եկան ինձ նորից քննելու։ Աչքերս որ փակ էին, սրանք իմացան, թե բան չեմ լսում։ Ասին՝ առավոտվա ինների կողմերը կհանգչեմ։ «Է՜հ, ես ի՞նչ գիտեմ,— հառաչեցի մտքումս։— Բժիշկներն իրենք են, երևի գիտեն»։ Նրանց գնալուց հետո տանտիրուհին եկավ ու սկսեց աղի արտասուք թափել։

— Վա՜յ, ա՜յ իմ տղա,— ախուվախ էր քաշում նա։

— Մայրիկ,— ասի,— ինձ համար քունդ կիսատ մի թող։ Գնա պառկիր։ Ես բժիշկների ասածը լսեցի։ Ամեն ինչ լավ է։

Նա գնաց, բայց մի ժամից էլի հետ եկավ։ Ոտնաձայները ականջիս դիպան։

— Տղաս,— ասաց,— ախր ի՞նչ անեմ քեզ համար։

— Ամեն ինչ լավ է, մայրիկ,— ասի։— Գնա քունդ առ։

Էս անգամ արդեն գնաց քնելու։ Ներսիս սառնությունն անընդհատ բարձրանում էր։ Վախից քարացել էի. ախր էդ տեսակ բան ոչ լսել էի, ոչ տեսել։ Չէի հասկանում ինչ է։ Հետո քթիցս սկսեց արյուն գալ։ Սկզբում չգիտեի, որ արյուն է, բայց ձեռս տարա երեսիս թե չէ, տաքացավ ու թրջվեց, արյան հոտն առա։ Շատ վարար էր գալիս։ Կռացա մահճա-

կալիս տակի պետքամանի վրա, ու ահագին ժամանակ արյունը բափվում էր էնտեղ։ Ինչքան թափվում էր, էնքան լավանում էի։ Ամեն ինչ անցավ-գնաց, դուրս եկավ քթիցս արյան հետ մեկտեղ։ Սենյակում մութ էր, բայց արդեն զգում էի, որ աչքերս պարզվում են։ Ներսիս սառնամանիքն էլ հալվեց ու էն կորչելն էր, որ կորավ։ Սոված մեռնում էի, բայց գիշեր էր. ճա՞րս ինչ, տեղաշորում նստած՝ սպասեցի լուսանա։ Մեգը ծեգին տանտիրուհու ոտնաձայները ականջիս հասան. գնում-գալիս էր դռանս մոտով։ Գնաց եկավ, գնաց եկավ ու հենց որ կանգնեց, ասի.

— Ամեն ինչ լավ է, մայրիկ։ Ողջ եմ։ Ներս արի։

Նա ներս եկավ, բայց թուքը ցամաքել էր։ Ցույց տվի արյունը։ Չգիտեի ամոթից որ ծակը մտնեմ, ասի.

— Կներես, մայրիկ։ Չեռիս ճար չկար։

— Տղաս,— ասաց,— ո՞ւց ես։ Լա՞վ ես։

— Սոված մեռնում եմ, մայրիկ։

Նա իջավ ներքևի հարկ ու հավի մսաջուր բերեց։ Բայց դե հո գայլի ախորժա՞կ չէր բացվել. խեղճն ամբողջ առավոտ վերուվար էր անում՝ ինձ հավի մսաջուր հասցնելով։ Բժիշկները որ եկան, տեղաշորում նստած էի։ Սրանք սպասում էին, թե դիակ պիտի տեսնեն։

— Էս ի՞նչ բան է,— խառնվեցին իրար։

Նորից քննեցին ինձ, բայց ես արդեն լավ էի։ Ոչ նրանք դուր եկան ինձ, ոչ էլ ես նրանց դուր եկա։

Պետական բժիշկը իր մատյանի մեջ եսիմ ինչ խզմզեց ու թողեց գնաց։ Զմյուռնիացին սենյակում հետ ու առաջ էր անում։ Մեկ էլ՝ թե՝

— Քեզ մի հարց տամ։ Մենակ ճիշտն ասա։

— Ի՞նչ կա,— ասի։

— Քանի՞ տարեկան էիր, որ հայրենիքը թողեցիր։

— Տասնյոթ,— ասի։

Նա թե՝

— Շատ լավ։ Էս է իմ հարցը. քանի՞ տարեկանից ես կոշիկ հագել։

— Երեք տարեկան էի, որ հերս կոշիկ բերեց,— ասի։— Բայց ես կոշիկները մի ծակ խոթեցի ու վազ տվի բոբիկ՝ սարալանջերին տռճկելու։ Ինչքան ապրել եմ Հունաստանում, կոշիկ չեմ հագել։

— Այ դա է պատճառը,— ասաց նա։

Ու գնաց։

Պա՞րզ է, ասում է Ջիմը։ Հողից ոտքերիս էր անցել հայրենի երկրի ուժը։ Որ հայրենիքում կոշիկ հագած լինեի, հիմի մեռած էի, ոչ թե կենդանի։

ԳԼՈՒԽ 1

Թոմաս Թրեյսին վագր ուներ։

Իրականում դա մի սև հովազ էր, բայց դա կարևոր չէր, քանի որ Թոմասը մտածում էր, որ դա վագր է։

Վագրի ատամները սպիտակ էին։

Ահա թե ինչպես պատահեց, որ Թոմասը գտավ իր վագրին։

Երբ նա երեք տարեկան էր և հնչյուններով էր ընկալում աշխարհը, ինչ-որ մեկը ասաց՝ վա՜գր։ Ինչ էլ որ լիներ այդ «վա՜գրը», Թրեյսին ուզեց իր սեփականն ունենալ։

Մի անգամ հոր հետ քաղաքում զբոսնելիս Թոմասը ինչ-որ բան տեսավ ձկնեղեն հրամցնող ռեստորանի ցուցափեղկում։

— Առ ինձ համար էդ վագրը,— ասաց նա։

— Դա խեցգետին է,— ասաց հայրը։

— Որ էդպես է, չեմ ուզում,— ասաց Թրեյսին։

Մի քանի տարի անց Թրեյսին մոր հետ գնաց գազանանոց ու տեսավ վանդակում իսկական վագր։ Սա ինչ-որ բանով նման էր բառի վագրին, բայց մեկ է՝ իրենը չէր։

Հետագայում Թոմասը ինչ կենդանի ասես չտեսավ բառարաններում ու կտավների վրա, հանրագիտարաններում ու կինոնկարներում։ Դրանց մեջ շատ անգամ էին սև հովազներ հանդիպում, բայց երբեք և ոչ մեկի առթիվ Թրեյսին չմտածեց, որ դա իրենն է։

Ինչևէ, մի օր էլ, երբ արդեն տասնհինգ տարեկան էր, սիգարետ էր փստացնում ու աչքի պոչով նայում աղջիկներին, մենակ հայտնվեց գազանանոցում և միանգամայն անսպասելի դեմ առ դեմ դուրս եկավ իր վագրին։

Դա մի քնած սև հովազ էր, որ հանկարծ զարթնեց, բարձրացրեց գլուխը, շեշտակի նայեց Թրեյսիին, ելավ թաթերի վրա, գոմռաց, ինչպես միայն սև հովազներն են գոմռում՝ արտաբերելով ինչ-որ բան, որ հնչեց մոտավորապես այսպես՝ «էյիջ», մոտեցավ վանդակի ճաղերին, կանգ առավ, մի պահ նայեց Թրեյսիին ու էլի դառավ դեպի հարթակը,

որի վրա քնած էր։ Նորից փռվեց հարթակին և հայացքը ուղղեց դեպի անսահման հեռուները, դեպի անթիվ տարիներ ու մղոններ ամբարած տիեզերքի խորքը։

Իր հերթին Թրեյսին էլ նայում էր սև հովազին։ Նայեց հինգ րոպե, դեն նետեց սիգարետը, մաքրեց կոկորդը, թքեց ու դուրս եկավ գազանանոցից։

— Դա իմ վագրն է,— ասաց նա։

Նա երբեք չվերադարձավ գազանանոց նորից նայելու իր վագրին, որովհետև դրա կարիքը չէր զգում։ Վագրն արդեն իրենն էր։ Նա լիովին իրենը դարձավ այն հինգ րոպեների ընթացքում, երբ Թրեյսին վագրին էր նայում, իսկ նա հայացքը հառել էր դեպի անսահմանություն՝ վագրային մի ահավոր հնազանդությամբ ու հպարտությամբ։

ԳԼՈՒԽ 2

Երբ Թրեյսին քսանմեկ տարեկան էր, վագրի հետ միասին եկավ Նյու Յորք և աշխատանքի ընդունվեց Օտտո Զեյֆանգի սուրճի առևտրատանը, Ուորեն-սթրիթի վրայի Վաշինգտոնյան շուկայում։ Շուրջը մեծ մասամբ բնակչությանը մթերքով ապահովելու վաճառատներ էին, այնպես որ ձրի սուրճից բացի, Թրեյսին օգտվում էր նաև ձրի մրգից ու բանջարեղենից։

Թրեյսին չնչին փող էր ստանում իր վարպետություն չպահանջող գործի դիմաց, բայց աշխատանքը նրան դուր էր գալիս։ Առաջին օրերին Թրեյսիի համար հեշտ չէր ուսի վրա առնել սուրճի հատիկներով լիքը հարյուր ֆունտանոց պարկը և հիսուն յարդ տանել ու տեղ հասցնել, բայց մի շաբաթ հետո իսկի վեջն էլ չէր, և նույնիսկ վագրն էր հիացել, թե Թրեյսին ինչ թեթևությամբ է պարկը ուսին քայլում։

Մի օր Թրեյսին՝ իր ապագան քննարկելու նպատակով գնաց Վալորա անունով մի մարդու մոտ, որը նրա անմիջական վերադասն էր։

— Ուզում եմ սուրճ համտեսող դառնամ,— ասաց Թրեյսին։

— Քեզ ո՞վ խնդրեց,— ասաց Վալորան։

— Ինձ ով խնդրեց ի՞նչ,— ասաց Թրեյսին։

— Ո՞վ խնդրեց համտեսող դառնաս։

— Ոչ ոք։

— Համտեսելու գործից ի՞նչ ես հասկանում,— ասաց Վալորան։

— Սուրճ խմել սիրում եմ,— ասաց Թրեյսին։

— Համտեսելու գործից ի՞նչ ես հասկանում,— նորից ասաց Վալորան։

— Մի քիչ համտեսել եմ համտեսման բաժնում։

— Դու համտեսման բաժնում սուրճ ես խմել, հետն էլ կարկանդակ կերել, ինչպես մնացած բոլորը, ովքեր մասնագետ համտեսող չեն,— ասաց Վալորան։

— Երբ սուրճը լավն էր, զգում էի,— ասաց Թրեյսին։— Ու երբ վատն էր՝ զգում էի։

— Ո՞նց էիր զգում։

— Համտեսելով։

— Մենք երեք համտեսող ունենք՝ Նիմոն, Փիբբրդին և Ռինգերոը,— ասաց Վալորան,— նրանք Օտտո Զեյֆանգի հետ աշխատել են քսանհինգ, երեսունհինգ և քառասունմեկ տարի անընդմեջ։ Որքա՞ն ժամանակ է, որ դու ֆիրմայում ես։

— Երկու շաբաթ։

— Եվ ուզում ես համտեսո՞ղ դառնալ։

— Այո, սըր։

— Ուզում ես բարձր պաշտո՞ն ձեռք գցել։

— Այո, սըր։

— Չե՞ս ուզում սպասել քո հերթին։

— Ոչ, սըր։

Այդ պահին Վալորայի գրասենյակը մտավ ինքը՝ Օտտո Զեյֆանգը։ Վալորան վեր թռավ աթոռից, բայց Օտտո Զեյֆանգը, յոթանասուն տարեկան մի մարդ, չխրախուսեց նրա վեր թռչելը և ասաց.

— Նստիր, Վալորա, և շարունակիր։

— Շարունակե՞մ,— ասաց Վալորան։

— Շարունակիր այնտեղից, որտեղ խոսքդ կտրեցի և քեզ ապուշի տեղ մի դիր,— ասաց Օտտո Զեյֆանգը։

— Մենք խոսում էինք այս նորեկի հաշվով, որն ուզում է համտեսող դառնալ։

— Շարունակիր։

— Երկու շաբաթ է ընդամենը աշխատում մեզ մոտ և ուզում է համտեսող դառնալ։

— Շարունակեք ձեր խոսակցությունը,— ասաց Օտտո Զեյֆանգը։

— Հասկացա, սըր,— ասաց Վալորան ու դարձավ Թրեյսիին։— Ուրեմն, ընդամենը երկու շաբաթ աշխատելուց հետո դու ուզում ես նույն բանն անել, ինչ Նիմոն, Փիբբրդին և Ռինգերոը՝ ֆիրմայում քսան, քսանհինգ, երեսուն տարի աշխատելուց հետո։ Ճի՞շտ է։

— Այո, սըր,— ասաց Թրեյսին։

— Ուզում ես հեշտ-հեշտ գաս տեղավորվես Օտտո Զեյֆանգի մոտ ու ամենալավ գործը ստանաս, չէ՞։

— Այո, սըր։

— Սուրճ համտեսելու գործից լավ հասկանում ես, չէ՞։

— Այո, սըր։

— Ի՞նչ համ ունի լավ սուրճը։

— Սուրճի համ։

— Իսկ ի՞նչ համ ունի ամենալավ սուրճը։

— Լավ սուրճի համ։

— Լավ սուրճը ինչո՞վ է տարբերվում ամենալավից։

— Ռեկլամով,— ասաց Թրեյսին։

Վալորան շրջվեց դեպի Օտտո Զեյֆանգը, կարծես ուզում էր ասել. «Ի՞նչ անես սրա նման գավառացի գիտունի հետ», բայց Օտտո Զեյֆանգը այս անգամ էլ չխրախուսեց Վալորայի բռնած դիրքը։ Նա պարզապես սպասում էր, որ Վալորան շարունակի։

— Թափուր տեղ չունենք համտեսման բաժնում,— ասաց Վալորան։

— Ե՞րբ կունենանք,— ասաց Թրեյսին։

— Կունենանք, հենց որ Նիմոն մեռնի,— ասաց Վալորան,— բայց քեզանից առաջ երեսունինը հոգի հերթագրվել են այդ տեղի համար։

— Նիմոն շուտ չի մեռնի,— ասաց Թրեյսին։

— Կասեմ, որ արագացնի,— ասաց Վալորան։

— Ես չեմ ուզում, որ Նիմոն շուտ մեռնի։

— Բայց դու ուզում ես նրա տեղը գրավել։

— Ոչ, սըր,— ասաց Թրեյսին,— ես ուզում եմ համտեսման բաժնում չորս համտեսող լինի։

— Չորրորդն էլ դու լինես, չէ՞,— ասաց Վալորան,— դու և ոչ թե Շիվլին, որը հերթում առաջինն է։

— Ո՞ր հերթում։

— Սուրճ համտեսողների հերթում,— ասաց Վալորան։— Դու ուզում ես Շիվլիից առաջ անցնել։

— Շիվլիից առաջ անցնել չեմ ուզում,— ասաց Թրեյսին։— Ուզում եմ ուղղակի ընկնել համտեսման բաժին, որովհետև ես կարող եմ սուրճ համտեսել և զգալ, թե որ սուրճն է լավը։

— Ուրեմն, կարո՞ղ ես։

— Այո, սըր։

— Որտեղացի՞ ես,— ասաց Վալորան։

— Սան Ֆրանցիսկոյից,— ասաց Թրեյսին։

— Լավ կանեիր վերադառնայիր Սան Ֆրանցիսկո։

Վալորան շրջվեց դեպի Օտտո Զեյֆանգը։

— Ամեն ինչ պարզ է, չէ՞,— ասաց նա։

Ոչ Վալորան և ոչ էլ Օտտո Զեյֆանգը չգիտեին, որ այսքան ժամանակ իրենց հետ զրուցողը Թրեյսիի վագրն էր, ոչ թե ինքը՝ Թրեյսին։

Մի պահ Օտտո Զեյֆանգի մտքով անցավ անսպասելի մի բան անի, այնպիսի մի բան, ինչպիսին տեսել էր մի անգամ թատրոնի բեմում։ Անսպասելի, իհարկե, Վալորայի և գուցե նաև Թրեյսիի համար։ Բայց տեղնուտեղն էլ որոշեց, որ ինքը բեմում չէ, այլ սուրճի ներմուծման իր գրասենյակում և որ իր նպատակը առևտուրն է, ոչ թե արվեստը։ Նա պատկերացրեց, թե վարձում է մի չորրորդ համտեսող ևս, հենց այդ Թրեյսիին, ինչ է թե Թրեյսին բավականաչափ ուժ էր գտել իր մեջ գալու Վալորայի մոտ և շիփ-շիտակ ասելու, որ ինքը՝ Թրեյսին զգում է լավ սուրճի համը, երբ համտեսում է այն, և որ գլխավորն է՝ տեղյակ պահելու, որ ինքը՝ Թրեյսին գլխում մտքեր ունի։ Հենց թեկուզ ռեկլամի վերաբերյալ։ («Ինչ զվարճալի բան է արվեստը, թե որ մոտիկից նայես,— մտածեց Օտտո Զեյֆանգը։— Ինչ է թե կալիֆոռնիացի մի տղա արագ-արագ պատասխանում է ինչ-որ խելապակասի հարցերին, արվեստում այն կլիներ, որ կտայիր այդ տղային իր ուզածը ու մարդ կդարձնեիր։ Բայց ո՞վ է, ի՞նչ է այս տղան։ Իսկապե՞ս սուրճից հասկացող։ Իսկապե՞ս սուրճով ապրող ու շնչող։ Ոչ։ Պարզապես մեծ-մեծ բրդող մեկը»)։

Ահա թե ինչպես Օտտո Զեյֆանգը եկավ այն եզրակացության, որ անսպասելի ոչինչ պետք չէ անել։

— Ի՞նչ գործի վրա ես,— հարցրեց Օտտո Զեյֆանգը Թրեյսիին։

— Երգեր եմ գրում,— ասաց Թրեյսին։

— Օ՜հ։ Իսկ Օտտո Զեյֆանգի մոտ գործդ ո՞րն է,— ասաց ծերուկը։— Գիտե՞ս, թե ես ով եմ։

— Ոչ, սըր,— ասաց Թրեյսին։— Ո՞վ եք։

— Օտտո Զեյֆանգը։

— Իսկ դուք գիտե՞ք, թե ես ով եմ,— ասաց Թրեյսին։

— Ո՞վ ես։

— Թոմաս Թրեյսին։

(«Ես այս ֆիրման ունեմ,— մտածեց Օտտո Զեյֆանգը,— քառասունհինգ տարի է, ինչ ունեմ։ Քո ունեցածն ի՞նչ է»)։

(«Ես վագր ունեմ»,— մտածեց Թրեյսին ի պատասխան Օտտո Զեյֆանգի մտածածի)։

Մտքերի այս կարճ փոխանակությունից հետո նրանք շարունակեցին զրուցել։

— Ի՞նչ ես անում Օտտո Զեյֆանգի ֆիրմայում,— ասաց ծերունին։

— Պարկեր եմ բեռնաթափում ու տեղափոխում,— ասաց Թրեյսին։

— Ուզո՞ւմ ես մնալ նույն գործին,— ասաց Օտտո Զեյֆանգը։

Թրեյսին գիտեր, թե վագրը ինչ է ասելու և անձկորեն սպասում էր, որ ասի, բայց մեկ էլ տեսավ՝ վագրը ձանձրույթից խոր քուն է մտել։

Եվ Թրեյսին լսեց, թե ինչպես ինքն ասում է.

— Այո, սըր, ուզում եմ մնալ նույն գործին։

— Դե, ուրեմն, գնա գործիդ, գրողը տանի,— ասաց Օտտո Զեյֆանգը։— Ու թե մեկ էլ էստեղ գալով և տխմարություններ դուրս տալով անտեղի զբաղեցնես Վալորային, ես քեզ կազատեմ աշխատանքից։ Առանց քո օգնության էլ Վալորան գիտի ինչպես իր ժամանակը քամուն տա։ Ճի՞շտ է, Վալորա։

— Այո, սըր,— ասաց Վալորան։

Թրեյսին վերադարձավ իր գործին, վագրին թողնելով Վալորայի սեղանի տակ, խոր քնի մեջ։

Երբ վագրն արթնացավ ու գնաց Թրեյսիի մոտ, Թրեյսին չուզեց խոսել հետը։

— Էյիջ,— ասաց վագրը՝ Թոմասի սիրտը շահելու հույսով։

— Շատ պետքս է քո «էյիջը»,— ասաց Թրեյսին։— Լավ օյին խաղացիր ընկերոջդ գլխին։ Ես կարծում էի հիմա կկատաղես ու քեզ ցույց կտաս, իսկ դու խոր քուն մտար։ Երբ նա հարցրեց՝ ուզում եմ նույն գործին մնալ, թե չէ, կարծում էի խելքը գլխին մի բան կպատասխանես։ Եվ դեռ քեզ էլ վագրի տեղ ես դրել...

— Մոիլ,— փնթփնթաց վագրը։

— Մոիլ,— ասաց Թրեյսին,— աչքիցս կորիր։

Օրվա մնացած մասը Թրեյսին աշխատեց մի ջղային լռությամբ, որովհետև երբեք առաջներում վագրը խոր քուն չէր մտել իր վատ սովորությունները դրսևորելու այդպիսի հարմար միջոցին։ Սա դուր չեկավ Թրեյսիին։ Նա խորապես անհանգստացած էր՝ չլինի թե վագրի ցեղ ու տոհմում ինչ-որ ժառանգական կասկածելի գիծ է եղել։

Այդ օրը աշխատանքից հետո Թրեյսին ու Նիմոն միասին գնացին մետրո։ Ամբողջ օրը սուրճ համտեսելուց Նիմոն սաստիկ գրգռված էր։ Նիմոն Օտտո Զեյֆանգի տարիքի մարդ էր։ Նիմոն վագր չուներ ու մտքովն էլ չէր անցկացնում, թե մարդ կարող է վագր ունենալ։ Նիմոյի միակ անելիքը Շիվլիի ճանապարհը փակելն էր։ Շիվլին էլ փակել էր մնացած երեսունութի ճանապարհը, որոնք հերթագրված էին Օտտո Զեյֆանգի մոտ։

Ինչևէ, Թրեյսին իր օրվա աշխատանքն արել էր, այդ ընթացքում էլ մի երեք տող բան էր գրել երգի համար։ Նա կշարունակի աշխատել Օտտո Զեյֆանգի մոտ, մինչև որ օրերից մի օր վագրը խելքի գա, բայց ոչ մեկի ճանապարհը նա չի փակի ու ոչ մի հերթի էլ չի խառնվի։

Երբ Թրեյսին դուրս եկավ մետրոյից ու առաջացավ Բրոդվեյով, ոչոշեց մի գավաթ սուրճ խմել։ Եվ խմեց։ Նա գիտակ համտեսող էր անկասկած և չէր ուզում երեսունհինգ տարի սպասել՝ այդ բանն ապացուցելու համար։ Նա խմեց երկրորդ գավաթը, հետո երրորդը, կումկում համտեսելով։

ԳԼՈՒԽ 3

Թրեյսիի վագրի աչքը շարունակ այս ու այն կողմ էր շրջում այն հույսով, թե որևէ տեղ կհանդիպի մի ջահել վագրուհու, որը գիտի վագրի հետ իրեն պահելու եղանակը, բայց որքան էլ աչքը դես ու դեն էր գցում, համարյա չէր պատահում, որ մի ջահել վագրուհի տեսնի։ Տեսածը փողոցները չափող սովորական աղջիկ կատուներ էին։ Այն սակավ դեպքերում, երբ իսկապես ջահել վագրուհիներ էր տեսնում, միշտ ինչ-որ տեղ շտապելիս էր լինում և հասցնում էր միայն շրջվել ու մի անգամ էլ նայել։ Սա բավական անուրախ վիճակ էր, և վագրը այսպես խոսեց.

— Լյուն,— ասաց նա։

— Այսինքն,— ասաց Թրեյսին։

— Ըլյուն։

— Չհասկացա։

— Ահ լյուն։

— Ի՞նչ։

— Լյունըլյուն։

— Հասկանալու բան չի։

— Ահ լյունըլյուն,— համբերատար ասաց վագրը։

— Անգլերեն խոսիր, թե որ բան ես ուզում ասել,— ասաց Թրեյսին։

— Լա,— ասաց վագրը։

— Դա արդեն ֆրանսերեն է,— ասաց Թրեյսին։— Անգլերեն խոսիր։ Գիտես, որ ես ֆրանսերեն չեմ հասկանում։

— Սոլա։

— Սոլա՞ր։

— Սո,— ասաց վագրը։

— Մի կարճացրու բառերը,— ասաց Թրեյսին,— երկարացրու, որ ես գլուխ հանեմ, թե ասածդ ինչ է։

— Ս,— ասաց վագրը։

— Դա խոսելու ձև չի,— ասաց Թրեյսին,— կարգին խոսիր կամ էլ ձայնդ կտրիր։

Վագրը ձայնը կտրեց։

Թրեյսին սկսեց մտորել վագրի ասածների վրա ու հանկարծ գլխի ընկավ։

Դա պատահեց կեսօրվա նախաճաշի ժամանակ։ Թրեյսին կանգնած էր ֆիրմայի մուտքի աստիճաններին, արևի շողերի տակ ու լսում էր Նիմոյին, Փիբըրդիին ու Ռինգերտին, որոնք խոսում էին սուրճ համտեսելու ասպարեզում ազնիվ ճանապարհով ձեռք բերած իրենց դիրքի ու պատվի մասին։ Ժամանակ առ ժամանակ Թրեյսին փորձում էր խոսք գցել իր հորինած երգի մասին, բայց դա նրան ոչ մի կերպ չէր հաջողվում։

Նա մտորում էր վագրի ասածների վրա, երբ հանկարծ Ուորեն-սթրիթում հայտնվեց մարմինը կիպ գրկած, դեղին գույնի գործած հագուստով մի աղջիկ։ Նրա ճոխ, սև մազերը արձակ թափված էին և այնքան շատ էին, որ ասես ձիու բաշ լինեին։ Նրանք փայլփլում էին ու շնչում կյանքով և ճարճատում իրենց իսկ էլեկտրական լիցքից։ Թրեյսիի վագրի մկանները լարվեցին, նրա նրբագեղ գլուխը ձգվեց դեպի աղջիկը, պոչը վեր տնկվեց ու այդպես էլ մնաց, բռնված գրեթե աննկատելի դողով, և վագրը ցածրաձայն ու կատաղի գոմռաց.

— Էյիջ...

Մասնագիտացած սուրճ համտեսողները, գոմռոցը լսելով, ապշած շրջվեցին դեպի Թրեյսին, քանի որ երբեք նման արտասովոր բան չէին լսել։

— Օ՜,— ասաց Թրեյսին վագրին,— հասկացա։

— Էյիջ,— պատասխանեց վագրը ցավոտ ձայնով, գլուխն է՛լ ավելի առաջ ձգելով, մինչ Թրեյսիի աչքերը սուզվեցին աղջկա աչքերի մեջ։ Գոմռոցն ու աչքերի սուզվելը համընկան իրար։ Աղջիկը լսեց գոմռոցը, աչքերն աչքերի մեջ առավ, մի պահ կարծես հապաղեց, մի պահ կարծես ժպտաց, ավելի ձգվեց իր դեղին գործած շորի մեջ ու խաղացկուն հեռացավ։

Վագրը մեղմ մոլտաց։

— Կալիֆոռնիայում էդ տեսակ բա՞ն են ասում նման դեպքերում,— ասաց Նիմոն։

— Էյիջ,— ասաց Թրեյսին։

— Նորից ասա,— ասաց Փիբբրդին։

Թրեյսին, ուշքը հեռացող աղջկան ու նրա հետևից ոստոստացող վագրին, կրկնեց։

— Լսեցի՞ր, Ռինգերտ,— ասաց Փիբբրդին,— ահա թե ինչ են ասում սրանք Կալիֆոռնիայում, երբ գեղեցիկ աղջիկ են տեսնում։

— Հանգիստ կաց,— ասաց Ռինգերտը,— լսեցի։

— Լսելը լսեցի,— ասաց Նիմոն,— իսկ կարո՞ղ ես ասել։

— Իհարկե, չեմ կարող,— ասաց Ռինգերտը,— և ձեզանից՝ ծերուկ համատեսողներիցդ, ոչ մեկն էլ չի կարող։

Սուրճ համտեսողները ցավով ընդունեցին, որ իրենք չեն կարող էդ տեսակ բան ասել և գնացին ամենքը իրենց գործին, Թրեյսին էլ, վագրը հետևից, գնաց պահեստասենյակի կողմը, որտեղ կիտված էին սուրճի պարկերը։ Կեսօրից հետո Թրեյսին այնպիսի մի թեթևությամբ էր տեղափոխում դրանք, կարծես խաղալիք լինեին։

— Էդ աղջիկը ով էլ լինի,— ասաց Թրեյսին վագրին,— էս կողմերում է աշխատում։ Էգուց նույն ժամին էլի կտեսնեմ նրան, ու մյուս օրն էլ։ Իսկ երրորդ օրը կհրավիրեմ կեսօրվա նախաճաշի։

Ամբողջ օրը Թրեյսին խոսում էր վագրի հետ, բայց միակ պատասխանը գոմռոցն էր։ Ժամանակ առ ժամանակ գոմռոցն ընկնում էր պարկեր տեղափոխող բանվորների ականջը։ Նրանք բոլորն էլ ջահել էին և իրենք էլ փորձում էին էդպես գոմռալ, բայց չէր ստացվում։ Դրա համար պետք է վագր ունենայիր։ Վերջապես նրանցից մեկը՝ Քալանի անունով, մոտեցավ Թրեյսիին ու լկտիաբար ակնարկեց, թե անկարելի է, որ ինքը՝ տեխասցին չկարողանա անել այն ամենը, ինչ անում է կալիֆոռնիացին։

— Երեք օր հետո,— ասաց Թրեյսին վագրին,— ես նրան կհրավիրեմ նախաճաշի։

Ծրագիրը անթերի կատարվեց։

Ահա աղջիկը նստած էր սեղանի մյուս կողմը, Թրեյսիի դիմաց, «Օ քեյ» սրճարանում։ Նրանք ուտում էին, իսկ վագրը պտտվում էր սեղանի շուրջը, աշխատելով չմռնչալ ու չգոմռալ։

— Իմ անունը Թոմ Թրեյսի է,— ասաց Թրեյսին։

— Գիտեմ,— ասաց աղջիկը,— արդեն ասել եք։

— Մոռացա։

— Պարզ է։ Արդեն երեք անգամ ասացիք։ Թոմ ասելով, իհարկե, Թոմասը նկատի ունեք։

— Այո,— ասաց Թրեյսին։— Թոմաս Թրեյսի։ Ահա իմ անունը։ Եղածը դա է։ Այսինքն, անունս դա է։ Մարդու անունը, իհարկե, դեռ ամբողջ մարդը չէ։

— Իսկ միջանկյալ անուն ունե՞ք,— ասաց աղջիկը։

— Ոչ,— ասաց Թրեյսին,— պարզապես Թոմաս Թրեյսի։ Կրճատ՝ Թոմ, եթե, իհարկե, կուզեք կրճատել։

— Ոչ, չեմ ուզում,— ասաց աղջիկը։

— Չե՞ք ուզում,— ասաց Թրեյսին, որի համար այդ պատասխանը կարևոր նշանակություն ուներ՝ նրա սրտին հույս տվող հրաշալի նշանակություն։ Հուզմունքից Թրեյսին չէր էլ նկատել, որ վագրն իր հայացքը հառել է ինչ-որ բանի ու ամբողջ մարմնով թրթռում է, դողում։ Թրեյսին էլ աչքը տարավ վագրի նայածին ու տեսավ, որ դա մի ջահել վագրուհի է։

— Չե՞ք ուզում,— նորից ասաց Թրեյսին։

— Ոչ, չեմ ուզում,— ասաց աղջիկը,— ինձ դուր է գալիս Թոմաս Թրեյսի անունը ինչպես որ կա։ Դուք իմ անունը չե՞ք հարցնելու։

— Իսկապես, ի՞նչ է,— հարցրեց Թրեյսին խուլ ձայնով։

— Լորա Լյութի,— ասաց աղջիկը։

— Օ՜,— տնքաց Թրեյսին,— օ՜, Լորա Լյութի։

— Ձեզ դո՞ւր է գալիս,— ասաց Լորա Լյութին։

— Դուք դեռ հարցնո՞ւմ եք,— ասաց Թրեյսին,— օ՜, Լո՜րա, Լորա Լյութի։

Մինչ Լորա Լյութին ու Թոմաս Թրեյսին նախաճաշում էին, վագրերը պտտվում էին նրանց շուրջը, շարունակեցին պտտվել նաև այն ժամանակ, երբ նրանք վեր կացան սեղանից մոտեցան գանձապահին, և Թրեյսին, մի առ մի զրնգացնելով մետաղադրամները, վճարեց ութսունհինգ սենթ երկու նախաճաշի համար։

Փողն ի՞նչ էր նրա համար։

Փողոցում Թրեյսին մտավ Լորայի թևը, և նրանք անցան Օտտո Չեյֆանգի ֆիրմայի առջևով, դրսում կանգնած Նիմոյի, Փիբբրդիի ու Ռինգերտի առջևով։ Երկու վագրերը հանգիստ քայլում էին կողք-կողքի։ Թրեյսին ուղեկցեց Լորային մինչև գրասենյակ, որը գտնվում էր Ուորենսթրիթի վրա, երկու շենք ցած, նավամատույցի մոտ, ուր Լորան աշխատում էր որպես սղագրուհի։

— Վաղը,— ասաց Թրեյսին, ինքն էլ չիմանալով, թե մտքինն ինչ է, բայց հուսալով, թե աղջիկը գիտի։

— Այո,— ասաց Լորան։

Թրեյսիի վագրը գոմռաց։ Լորայի վագրը թեթևակի ժպտաց, կախեց գլուխը, շրջվեց ու հեռացավ։

Թրեյսին հետ քայլեց դեպի Օտտո Զեյֆանգի ֆիրման, դեպի սուրճ համտեսողները, որոնք կանգնած էին դրսում։

— Թրեյսի,— ասաց Նիմոն,— հուսով եմ՝ կապրեմ այնքան, որ տեսնեմ, թե այս ամենը ինչով կվերջանա։

— Կապրես,— ասաց Թրեյսին բարկացկոտ ու շիտակ ,— կապրես, Նիմո, որովհետև դու պետք է ապրես։

Վագրն այժմ կանգնած էր մայթի մեջտեղում՝ աչքերը հառած դեպի անսահմանություն։

Այդ օրը, աշխատանքից հետո տուն գնալիս, Թրեյսին գտավ վագրին նույն դրության մեջ, մայթի մեջտեղում կանգնած։ Ինքն էլ կանգնեց նրա կողքին՝ խանգարելով գործից տուն շտապող մարդկանց անցուդարձը։ Նա երկար կանգնեց իր վագրի կողքին, հետո շրջվեց ու քայլերն ուղղեց դեպի մետրո։ Վագրը ծուլորեն հետևեց նրան։

ԳԼՈՒԽ 4

Լորա Լյութին ապրում էր Ֆար Ռոքքուեյում։ Շաբաթ և կիրակի օրերը նա անց էր կացնում տանը, մոր հետ։

Լորայի մայրը, թերևս, ավելի գեղեցիկ էր, քան ինքը՝ Լորան, այդ իսկ պատճառով մի թաքուն մրցակցություն էր գնում նրանց միջև տան բոլոր հայելիների առաջ, ինչպես նաև նրանց երկուսի արտահայտած կարծիքներում՝ կինոյի ու թատրոնի դերասանների, տղամարդ հարեվանների և եկեղեցի այցելող տղամարդկանց մասին։ (Եկեղեցին իրենց տան դիմացն էր, այնպես որ նրանք հնարավորություն ունեին մի լավ զննելու ներս ու դուրս անող տղամարդկանց։ Շաբաթ և կիրակի օրերը նրանք միասին էին զննում, իսկ մնացած օրերը Լորայի մայրը զբաղվում էր մենակ, կամ էլ, հնարավորություն ունենալով զննելու նրանց որքան սիրտն ուզեր, չէր էլ օգտվում դրանից։ Ճիշտ է, մեկ-մեկ նրա հայացքը, իհարկե, զուտ պատահականորեն, կանգ էր առնում մի գեղեցիկ, բարեկազմ տղամարդու վրա, որը երեկոյան դեմ մտնում էր եկեղեցի՝ խոստովանելու կամ էլ հանգանակություն անելու)։

Մոր և աղջկա միջև այդ մրցակցությունը գնալով ուժ էր առնում չնայած այն հանգամանքին, որ ամեն երեկո ծառայությունից տուն էր

վերադառնում Օլիվեր Լյութին՝ Լորայի հայրը, որն իր աշխատանքային օրը անց էր կացնում Մանհեթենում և ահա արդեն քսանչորս տարի շարունակ պառկում է քնելու նույն անկողնում միսիս Լյութիի հետ, որի անունը Վիոլա էր։

Միստր Լյութին հաշվառքող էր։ Հաշվառման գործով նա զբաղվում էր այն օրից ի վեր, ինչ միսիս Լյութիի հետ կիսեց նույն անկողինը։ Հենց միսիս Լյութին էլ կապեց նրան այդ աշխատանքին՝ հայտնելով այն միտքը, թե հաշվառքով զբաղվելն ավելի լավ է, քան թե նավով բեռներ փոխադրելը, ինչ միստր Լյութին անելիս էր եղել նախքան ամուսնությունը։

Այնպես որ միստր Լյութին ոչ թե ինքն էր բեռներ փոխադրում, այլ պարզապես կատարում էր դրանց հաշվառումը, բայց Վիոլան միշտ այն պատկերացմանն էր մնում, թե նա ինքն էլ նավով բեռ փոխադրողներից է և փոխադրածն էլ ոչ այլ ինչ է, քան խոշոր անասուններ կամ տրակտորներ կամ գուցե հենց նավեր են որ կան։ Միսիս Լյութիին հաճախ թվում էր, թե մյուսների տպավորությունն էլ դա է, և նա չէր շտապում ցրել այդ խաբուսիկ տպավորությունը։ Ինչևէ, այն շուտով ինքն իրեն ցրվում էր, սակայն կար դրան նախորդող մի փութանցիկ ակնթարթ՝ քաջության, թերևս, կասկածելի փառքի վայելելու ակնթարթը։

Անկարևոր, բայց հաճելի մարդիկ էին հաճախակի այցելում Լյութիներին։ Ինչ-որ հրապուրիչ բան կար այդ մարդկանց մեջ։ Նրանք կարող էին կեղտ ու ոչնչություն թվալ, բացարձակապես տարբեր այն մարդկանցից, որոնց մասին կարդում ես վերնախավի կյանքը ներկայացնող լրագրային էջերում։ Բայց այն պատասխաններից, որ տալիս էին նրանք Վիոլայի սիրալիր հարցերին, հետզհետե պարզվում էր, որ նրանք բնավ էլ ոչնչություն չեն և, թե բախտները բերեր, կարող էին նույնպես հաջողության հասնել բեմերում։

Այս այցելությունները նախապես խնամքով ծրագրվում էին և հիմնականում ընկնում շաբաթ օրվա ցերեկային ժամերին։ Մի անգամ (այս դեպքի մասին Վիոլայից բացի ոչ ոք չիմացավ) Գլիբը անունով մի տղամարդ, լողարանից միջանցք դուրս գալով, դեմ առ դեմ հանդիպեց Վիոլային, որը «Ռիդերզ Դայջեսթ» ամսագրի մի հին համար ձեռքին, իր ննջարանից անցնում էր հյուրասենյակ՝ ցանկանալով միստր Գլիբրի

ուշադրությունը հրավիրել փոխադրումների վերաբերյալ ինչ-որ հոդվածի վրա, միստր Գլիբրն էլ տեղն ու տեղը գրկեց նրան ու դրոշմեց նրա դեմքին համբույր հիշեցնող մի բան։ Միստր Գլիբրից սեն-սենի հոտ էր փչում և կինոյում նրան շատ կսազեր գրասենյակային աշխատանք կատարելը՝ այսինքն հենց իսկ կինոնկարի մեջ։ Իմանալով այն, ինչ ինքը գիտեր, հասկանալով, թե ինչպիսի տպավորություն է թողնում ժիր ու լիարյուն տղամարդու վրա, որը կարող էր և կինոդերասան լինել, Վիոլան երկու տարի շարունակ դժվարությունների առաջ էր կանգնեցնում միստր Լյութիին։ Այդ ընթացքում Վիոլան մոռացավ միստր Գլիբրի արտաքինը և աստված գիտե ինչու մտաբերում էր նրան ոչ թե իբրև Գլիբր, այլ իբրև Շերման։

— Ի՞նչ եղավ այն հետաքրքիր մարդուն՝ Շերմանին,— հարցրեց նա մի օր ամուսնուն, սա էլ պատասխանեց, որ այժմ Շերմանը կանգնած է իբրև արձան Սավաննայի զբոսայգում։

Թոմաս Թրեյսին նույնպես այցելեց Լյութիներին մի կիրակի օր, կեսօրին։

Ամբողջ ճանապարհին վագրը իրեն ուտում էր անհամբերությունից, թե երբ է նորից տեսնելու Լորայի վագրին, իսկ հենց որ նրանք ոտք դրին տան շեմից ներս, մեկը մյուսի հետևից արմանք-զարմանք բաներ կատարվեցին։

Թրեյսին ուշադրություն դարձրեց Լորայի մոր՝ Վիոլայի վրա, Վիոլան էլ ուշադրություն դարձրեց Թրեյսիի վրա։ Այս փոխադարձ ուշադրությունը պատահական չէր։ Թրեյսին, բնականաբար, ուշք կդարձներ Վիոլային, քանի որ սրա մեջ կային շատ այնպիսի բաներ, որոնց վրա անհնար էր ուշք չդարձնել։ Դա նույն ինքը Լորան էր՝ ամենևին չգիրացած տարիների ընթացքում, բայց ավելի չարացած իր ձանձրալի անմեղությունից։

Լորան նկատեց Թրեյսիի և մոր փոխադարձ ուշադրությունը, հետո նկատեց հորը, իսկ հայրն էլ իր հերթին նկատեց, որ դիմացի եկեղեցում ինչ-որ աշխուժություն կա։ Հենց այդ պահին Վիոլան որոշեց ամուսնուն ուղարկել պաղպաղակ բերելու, մի պարտականություն, որը վերջինս ուրախությամբ ստանձնեց, քանի որ ճանապարհին առիթ պիտի ունենար մտնելու եկեղեցի և տեսնելու, թե ինչ է կատարվում այնտեղ։

Երբ նա գնաց, Վիոլան մի տուփ շոկոլադ բերեց և բավական խոր-հըրդավոր ձևով առաջարկեց հյուրասիրվել։ Լորան, ձևացնելով, թե ուրախ է, որ Թրեյսին ու մայրը այդքան անկաշկանդ են իրենց զգում, ներող-ություն խնդրեց ու հեռացավ, ասելով, թե գնում է փնտրելու գեղա-գրության դասընթացն ավարտելու վկայականը, որտեղ իր ազգանունը Լյութիի փոխարեն գրված է Լութի։

Լորան ուրախ-ուրախ դուրս գնաց, իսկ Թրեյսին ու վագրը մնացին մենակ միսիս Լյութիի և շոկոլադների հետ։

Ամեն անգամ, երբ Վիոլան նրան շոկոլադ էր առաջարկում, Թրեյ-սին ընդունում էր. և այսպես նա կերավ վեց հատ, որից հետո, առանց իրեն հաշիվ տալու, վեր կացավ տեղից և ինչ որ կար-չկար՝ մեկեն ըն-դունեց։

Նա զարմացավ՝ տեսնելով, որ իր այդ արարքը անսպասելի չէր և կարծես նույնիսկ կանխատեսված էր։ Նա նույնպես, ինչպես մի ժա-մանակ Գլիբերը, անմեղ կնոջն առավ իր գիրկը և համբույրի նման մի բան դրոշմեց նրա դեմքին։ Նրա շունչը ատամի հոտ ուներ, ինչպես իս-կույն զգաց միսիս Լյութին։ Թրեյսին ճիշտ ժամանակին մի կողմ թռավ, որպեսզի ճամփա տա իր վագրին ու նորից մի կողմ ցատկեց, երբ կա-տաղած վագրը հետ սլացավ։ Դրանից հետո նա որոշեց մեկ անգամ ևս փորձարկել համբույրի իր տեսությունը։ Այդ երկրորդ փորձը հաջողաց-նելու վրա էր, երբ սենյակ վերադարձավ Լորա Լյութին։

Թրեյսին ուզեց ձևացնել, թե իր արածը ամենևին էլ այն չէ, ինչ կարող է թվալ, չնայած բոլորովին չէր պատկերացնում, թե դա ուրիշ ինչ կարող էր լինել։

Լորայի կողքին նա տեսավ նրա վագրուհուն, որը իրեն էր նայում զարմանքով ու ատելությամբ։ Հետո աչք ածեց, թե ուր է իր վագրը, բայց նա անհետացել էր։

Թրեյսին վերցրեց գլխարկը ու դուրս եկավ փողոց։

Նա տեսավ միստր Լյութիին, որը վերադառնում էր եկեղեցու կող-մից պաղպաղակը ձեռքին, բայց արագ հեռացավ հակառակ ուղղու-թյամբ։

Եվ միայն, երբ հասավ Բրոդվեյ ու խառնվեց կիրակնօրյա բազմու-թյանը, վագրը մարդկանց միջև ճամփան հարթելով, եկավ գտավ Թրեյ-սիին ու քայլեց նրա կողքից։

— Էլ երբեք էդպիսի բան չանես,— ասաց Թրեյսին։

Հաջորդ օրը կեսօրվա նախաճաշի ամբողջ ժամը Թրեյսին ցցված մնաց ֆիրմայի մուտքի մոտ՝ հուսալով, թե կտեսնի Լորա Լյուիսին, բայց աղջիկն այնպես էլ չերևաց փողոցում։

Նա չերևաց նաև շաբաթվա մնացած բոլոր օրերին։

ԳԼՈՒԽ 6

— Հը, մի բան ստացվո՞ւմ է,— ասաց Նիմոն Թրեյսիին ուրբաթ օրը կեսօրին։

— Ինչի՛ց, երգի՞ց,— ասաց Թրեյսին։

— Չէ,— ասաց Նիմոն,— ո՞ւմ է հարկավոր քո երգը։ Ես նկատի ունեմ քեզ ու էն վառ դեղին շորերով, սև-սև մազերով գեղեցկուհուն։

— Էյիջ,— ասաց Թրեյսին թշվառ ձայնով։

— Այսի՞նքն,— ասաց Նիմոն։

— Անցյալ կիրակի գնացի Ֆար-Ռոքքուեյ, նրանց տուն և ծանոթացա նրա մոր հետ,— ասաց Թրեյսին։— Մայրը մի տուփ շոկոլադ բերեց, ես էլ վեց հատ կերա։ Շոկոլադ սիրող չեմ, բայց դե մի գլուխ տուփը դեմ էր անում, ես էլ իրար հետևից վերցնում ուտում էի։ Վախենամ՝ էնքան էլ լավ չստացվեց։

— Ինչո՞ւ,— ասաց Նիմոն։

— Դե,— ասաց Թրեյսին,— շոկոլադները կերա հա կերա, հայրը գնաց պաղպաղակ առնելու, աղջիկը՝ գեղագրության վկայականը բերելու, ես էլ գրկեցի մորն ու համբուրեցի։

— Չի կարող պատահել,— ասաց Նիմոն։

— Պատահեց,— ասաց Թրեյսին։

Սուրճ համտեսողն սկսեց ուժեղ զկոտալ։

— Քեզ ի՞նչ եղավ,— ասաց Թրեյսին։

— Չգիտեմ,— ասաց Նիմոն։

— Գուցե ավելի լավ է գնաս տուն ու պառկես,— ասաց Թրեյսին։

— Բան չկա,— ասաց Նիմոն,— ուզղակի պատմիր, թե հետո ինչ եղավ։ Ես պետք է իմանամ։

— Դե էլ ի՞նչ պատմեմ,— ասաց Թրեյսին,— պատմեցի էլի։ Երևի էդ շոկոլադներն էր, որ գլխիս խփեցին։

— Հիմա ի՞նչ ես անելու,— ասաց Նիմոն։

— Մի կերպ պիտի շտկեմ դրությունը,— ասաց Թրեյսին։

— Ինչպե՞ս։

— Էլի մի օր նույն ժամին կկանգնեմ «Օտտո Զեյֆանգի» մուտքի առաջ,— ասաց Թրեյսին,— ու մի ուրիշ աղջիկ, Լորա Լյութիի նման մեկը կանցնի Ուորեն-սթրիթով, ու էս անգամ, երբ հյուր գնամ ու ծանոթանամ մոր հետ, ոչ մի շոկոլադ չեմ ուտի՝ էդքան բան։

— Բայց էլ Լորա Լյութիի նման աղջիկ չի լինի,— ասաց Նիմոն։— Դե, ես գնամ մի քիչ սուրճ համտեսեմ։

— Դեռ քսան րոպե ունես կեսօրվա ընդմիջումից,— ասաց Թրեյսին։

— Չէ, գնամ,— ասաց Նիմոն։— Էլ ի՞նչ օգուտ էստեղ կանգնելուց, ի՞նչ օգուտ սպասելուց։

Նիմոն ներս էր մտնում, երբ լսեց Թրեյսիի տնքոցը։ Նա շրջվեց ու տեսավ սևահեր գեղեցկուհուն։ Նրա կողքից մի անծանոթ երիտասարդ էր քայլում, ակնհայտորեն ոչ կալիֆոռնիացի, տեսքով էլ՝ հաշվապահ։

Նիմոն զզվանքով գլուխը շուռ տվեց, մինչ Թրեյսին նայում էր նրանց՝ չհավատալով աչքերին։

Թրեյսին փորձեց ժպտալ, բայց չկարողացավ։

Լորա Լյութին անցավ գնաց, նույնիսկ հայացքի չարժանացնելով նրան։

Նիմոն շարունակ զկոտում էր ու զկոտում, այնպես որ նրան ժամանակից շուտ տուն ուղարկեցին։ Հաջորդ օրը նա գործի չեկավ։ Երկուշաբթի համտեսման բաժնում վերջապես հայտնվեց Շիվլին իր կիրակնօրյա կապույտ կոստյումով, որովհետև Նիմոն մահացել էր։

ԳԼՈՒԽ 6

Օ՜, սրտեր, որ խորտակվել եք վաղեմի ժամանակներում, օ՜, սրտեր, որ խորտակվում եք ներկայումս, օ՜, սրտեր, որ պիտի խորտակվեք ապագայում, Նիմոն չկա, Լորա Լյութին կորավ, Շիվլին վերջապես համտեսման բաժնում է, Փիբբրդին և Ռինգերտը նրան շան տեղ էլ չեն դնում,

կասկածի տակ առնելով համտեսման նրա ճաշակը և բազմանշանակ հայացքներ փոխանակելով։

Թրեյսիի երգի երեք տողը, ինչպես և ուրիշ շատ ու շատ բաներ, անպետք դուրս եկան։ Երգը ծխի պես ցնդեց, թղթի պատառը, որի վրա Թրեյսին խնամքով գրի էր առել բառերը, կորավ, մեղեդին մոռացվեց։

Մի կիրակի Թրեյսին ու վագրը, երկուսն էլ մի տենդով բռնված՝ ինչ-որ մի անորոշ ու հինավուրց, բայց և կարծես նոր հավատքի տենդով, յուրաքանչյուրը իր,— մարդկային կամ գազանային,— մենակությամբ մենակ, գնացին Հինգերորդ ավենյուի վրա գտնվող Սուրբ Պատրիկի եկեղեցին։

Ներս մտան ու նայեցին շուրջբոլորը։

Հաջորդ շաբաթ օրը Թրեյսին փակեց իր հաշիվները «Օտտո Զեյֆանգի» հետ ու վերադարձավ Սան Ֆրանցիսկո։

Տարիներ անցան։

Օրերից մի օր Թրեյսին քսանյոթ տարեկան դարձավ ու նորից հայտնվեց Նյու Յորքում ու քայլեց փողոցից փողոց, ինչպես վեց տարի առաջ։

Բրոդվեյից թեքվեց Ուորեն-սթրիթ ու քայլերն ուղղեց դեպի «Օտտո Զեյֆանգ», բայց այդ տեղում տեսավ հիմա «Քինիի ապրանքատուն» ցուցանակը։

Մի՞թե սա նշանակում էր, որ սուրճի գործն էլ խափանվեց։ Որ Նիմոյի, Փիբբրդիի, Ռինգերտի, Շիվլիի, Զեյֆանգի բախտը՝ սրանց բոլորի բախտն էլ խափանվեց։

Վագրը լարվեց ամբողջ մարմնով, երբ տեսավ ծանոթ շքամուտքը, քանի որ դա հենց այն տեղն էր, որտեղ նա կանգնած մնաց մի ամբողջ կեսօր՝ նայելով հեռացող Լորա Լյութիի հետևից։

Թրեյսին շտապեց հեռանալ Քինիի ապրանքատան մոտից, տաքսի կանգնեցրեց, նստեց և իջավ հանրային գրադարանի մոտ։

Այստեղից վագրի հետ նորից քայլեցին Հինգերորդ ավենյուով։ Փողոցը լիքն էր կիրակնօրյա բազմությամբ՝ տղամարդկանցով, կանանցով ու երեխաներով։

Լորա Լյութիին փոխարինող մեկին Թրեյսին դեռ չէր գտել։ Նիմոն կանխագուշակում էր, որ Թրեյսին էլ նրա նման աղջիկ չի գտնի և գուցե վերջիվերջո Նիմոն իրավացի էր։

Թրեյսին կանգ առավ Սուրբ Պատրիկի եկեղեցուց մի քանի շենք հեռու անկյունում, և հայացքով հետևեց մի փոքրիկ տղայի ու նրա

քրոջը, որ անցնում էին փողոցը։ Վագրը մոտեցավ ու կանգնեց նրա կողքին։ Թրեյսին ձեռքը դրեց վագրի գլխին։

— Դրանք կարող էին իմ երեխաները լինել,— ասաց Թրեյսին։

— Էյիջ,— ասաց վագրը։

Թրեյսին շարունակեց քայլել, վագրն էլ նրա կողքին։ Հանկարծ նա անասելի զարմանքով նկատեց, որ անցորդներն ահապարանքով անցնում են փողոցի մյուս մայթը։ Նայեց այդ կողմը ու տեսավ՝ մարդիկ հավաքվել իրեն են նայում, ոմանք էլ լուսանկարչական ապարատներով։

Առանց որևէ հետին մտքի, Թրեյսին որոշեց անցնել փողոցն ու պարզել ընդհանուր հուզմունքի պատճառը, բայց դեռ ոտքը մայթից ցած չէր դրել, երբ այն կողմի մարդիկ ցիրուցան եղան՝ ոմանք դոռալով, իսկ մի քանի կին էլ սարսափահար ճչալով։

Թրեյսին շուռ եկավ ու նայեց վագրին։

Բայց դե վագրը իր հետ էր եղել գրեթե ամբողջ կյանքի ընթացքում, և առաջ երբեք նման բան չէր պատահել։

Առաջ երբեք ոչ մեկը վագրին չէր տեսել։

Իսկ հիմա փաստորեն ստացվում է, որ վագրը տեսանելի է նաև ուրիշներին, մնացած բոլորին։

Մի քանի շուն սկսեցին հաչել՝ ձգելով վզների փոկերը, ջանալով իրենց առաջ գցել։ Սա էլ էր նորություն։ Փողոցի մեջտեղում Թրեյսին կանգ առավ՝ ավտոբուսին ճանապարհ տա, և նորից ապշեց՝ այս անգամ վարորդի և ուղևորների դեմքերը տեսնելով։

— Դե, խելքդ ի՞նչ է կտրում,— ասաց Թրեյսին վագրին։— Կա-չկա՝ նրանք տեսնում են քեզ։ Կա-չկա՝ նրանք էլ տեսնում են քեզ, ինչպես ես եմ քեզ տեսել համարյա ամբողջ կյանքիս ընթացքում։ Բայց նայիր դրանց. գլուխները սարսափից կորցրել են, քիչ է մնում վախից մեռնեն։ Աստվա՜ծ իմ, ինչպես չեն հասկանում, որ վախենալու բան չկա։

— Էյիջ,— ասաց վագրը։

— Ապրես,— ասաց Թրեյսին,— դու դեռ էդպես լավ չէիր խոսել էն օրվանից, երբ մենք «Օտտո Ջեյֆանգի» մուտքին կանգնած էինք ու Լորա Լյուիին էլ շորորալով անցնում էր Ուորեն-սթրիթով։

Թրեյսին ու վագրը շարունակեցին քայլել Հինգերորդ ավենյուով, մինչև որ դիմացի մայթին երևաց Սուրբ Պատրիկ եկեղեցին։

Թրեյսին որոշեց ներս մտնել եկեղեցի, ինչպես մտել էր վագրի հետ վեց տարի առաջ, բայց հենց այն է՝ ուզում էր մայթն անցնել, եկեղեցու դռանը կանգնած մարդիկ այլայլված դեմքերով դես ու դեն

փախան։ Հետո էլ եկեղեցու ժողովուրդն սկսեց դուրս թափվել։ Թրեյսին ու վագրը ծամերգությունից ուշացել էին, բայց, միևնույն է, Թրեյսին ուզում էր մտնել եկեղեցի, ուզում էր նորից վագրի հետ քայլել շարքերի միջով, նորից տեսնել այնտեղից գեղեցիկ բաները՝ սքանչելի լուսավոր բարձրությունը՝ գունապակե պատուհանները, գեղաշար սյուները, վառվող մոմերը։

Մարդիկ եկեղեցուց դուրս էին գալիս խաղաղ ու հանգիստ, բայց մի պահ անց մատնվում էին խուճապի, փախչում էին ով ուր կարող էր՝ կողքի փողոցները, Հինգերորդ ավենյուի աջ ու ձախ կողմը, ոմանք էլ հետ, դեպի եկեղեցի, այնտեղ թաքնվելու։

— Անախորժ բան ստացվեց,— ասաց Թրեյսին,— առաջ էսպես բան չէր եղել, դու հո գիտես։

— Էյիջ,— ասաց վագրը։

— Ինչ-որ է, մենք մտնելու ենք եկեղեցի,— ասաց Թրեյսին։

Նա ձեռքը դրեց վագրի գլխին, և այդպես նրանք քայլեցին դեպի եկեղեցու աստիճանները, բարձրացան վեր և մտան ներս, ուր հանդիսավոր գեղեցկություն էր տիրում։

Եկեղեցու ներսը գեղեցիկ էր, բայց այդ նույնը չէիր ասի այնտեղ գտնվող մարդկանց մասին, ներառյալ մի քանի վեղարավորներին։ Նրանք հեռանում էին անպատշաճ աճապարանքով։

Թրեյսին ու վագրը դանդաղ առաջացան կենտրոնական անցուղով։

Թրեյսին նկատեց, թե ինչպես մերթ այստեղ, մերթ այնտեղ փակ դռները բացվում էին ու նեղ ճեղքերից սարսափահար հայացքներ էին նետվում իր վրա, իսկ հետո դռները շրխկոցով փակվում էին ու ներսից կողպվում։

— Ինչ խոսք, գեղեցիկ տեղ է,— ասաց Թրեյսին,— բայց հիշո՞ւմ ես, երբ վեց տարի առաջ եկանք, ամեն ինչ ուրիշ էր։ Եկեղեցին լիքն էր ժողովրդով՝ կանայք, տղամարդիկ, երեխաներ, և բոլորն էլ, չգիտես ինչու, ուրախ էին, և ոչ թե հիմիկվա պես փախչում էին լեղապատառ ու թաքնվում դռների հետևում։ Ի՞նչ է եղել, ինչի՞ց են էդպես վախեցած։

— Էյիջ,— ասաց վագրը։

Թրեյսին ու վագրը կողքի դռներից մեկով դուրս եկան Հիսուներորդ փողոց, բայց դուրս եկան թե չէ, Թրեյսին տեսավ մի զրահապատ մեքենա, որը գնդացիրների փողերն ուղղել էր իր և վագրի կողմը։ Թրեյսին նայեց Մեդիսոն ավենյուի կողմը և տեսավ մի ուրիշ զրահապատ։ Հետո նայեց Հինգերորդ ավենյուի կողմը և անկյունում երկու զրահապատ էլ տեսավ։ Մեքենաների հետևում խռնվել էին սարսափահար մարդիկ ու սպասում էին, թե ինչ կռիվ է լինելու և ինչով է վերջանալու։

Առաջին զրահապատի վարորդը արագորեն բարձրացրեց պատուհանի ապակին, որ ավելի լավ պաշտպանվի վագրից։

— Ի՞նչ է պատահել,— ասաց Թրեյսին։

— Ի սեր աստծո,— պատասխանեց վարորդը,— դու, ինչ է, չե՞ս տեսնում կողքիդ գազանին։

— Իհարկե, տեսնում եմ,— ասաց Թրեյսին։

— Կրկեսից փախած հովազ է,— ասաց վարորդը։

— Ինչե՞ր ես դուրս տալիս,— ասաց Թրեյսին։— Սա կրկեսի կողքով անգամ չի անցել։ Եվ հետո, սա հովազ չէ, այլ վագր։

— Մի կողմ քաշվիր, մարդ աստծո,— ասաց վարորդը,— որ մեր մարդիկ կարողանան կրակել ու սպանել դրան։

— Սպանե՞լ,— ասաց Թրեյսին,— հո չե՞ս գժվել։

Եվ նա Հիսուներորդ փողոցով քայլեց դեպի Մեդիսոն ավենյու։ Զրահապատի վարորդը միացրեց շարժիչը ու դանդաղ ընթացավ կողքից, համոզելով Թրեյսիին, որ մի կողմ քաշվի վագրից։

— Մի կողմ քաշվիր, այ մարդ,— ասաց վարորդը։

— Գործիդ կաց,— ասաց Թրեյսին,— տար մեքենադ գարաժ կամ էլ ուր որ հարկն է։

— Հեռու քաշվիր, մեկ է՝ պիտի կրակենք,— ասաց վարորդը։

— Ձեզ համարձակվի,— ասաց Թրեյսին։

— Դե լավ,— ասաց վարորդը,— մեղքը քո վզին։

Թրեյսին լսեց կրակոցը։ Նայեց՝ հո չդիպան վագրին։ Չէին դիպել, բայց վագրը արդեն կողքին չէր, փախչում էր դեպի Մեդիսոն ավենյու։

Վագրը արագավազ էր, ավելի արագավազ, քան Թրեյսին կենթադրեր։ Երբ նա հավասարվեց երկրորդ զրահապատին, թնդաց մի նոր կրակոց, վագրը վեր ցատկեց ու ընկավ, իսկ երբ նորից վազեց, Թրեյսին տեսավ, որ նա վազում է առջևի աջ թաթը վեր պահած։ Հասնելով Մեդիսոն ավենյու, վագրը անհետացավ անկյունի հետևում։ Նրան հետևվեց մոտակա զրահապատը իր հզոր, դանդաղ ընթացքով։

Թրեյսին սկսեց վազել, որ հասնի վագրին։

Համազգեստավոր երեք մարդ անկյունի մոտ կանգնեցրին նրան, հրեցին երկրորդ զրահապատի մեջ, իրենք էլ հետը տեղավորվեցին, և զրահապատը շարժվեց։

— Ինչո՞ւ եք ուզում իմ վագրին սպանել,— ասաց Թրեյսին։

— Այդ գազանը երեկ երեկոյան փախել է կրկեսից, նախապես հաշմելով ծառայողին։

— Ինչե՞ր եք ասում,— ասաց Թրեյսին։

— Ինչ որ լսեցիր,— ասաց մեկը։

— Էս վագրը համարյա ծնված օրից ինձ է կպած,— ասաց Թրեյսին։

— Ոչ մի վագր էլ ծնվածդ օրից քեզ չի կպած,— ասաց վարորդը,— բայց դե մի բան կպած է, և շուտով կպարզենք, թե ինչ։

ԳԼՈՒԽ 7

Թրեյսին նստել էր «Անգլիական բանկի» աթոռների նման մի աթոռի վրա, ընդարձակ սենյակում, որտեղ լցված էին թղթակիցներ, լուսանկարիչներ, ոստիկաններ, կենդանի վարժեցնողներ և էլի շատ ու շատ ուրիշ մարդիկ։

Եթե այդ վագրը իսկապես նրա վագրը չէր, ինչպես սրանք ասում էին. ապա իր՝ Թրեյսիի վագրն էլ Թրեյսիի հետ չէր հիմա։

Թրեյսին նստած էր մենակ։

Նրա ոտքերի մոտ, հատակին ոչ մի վագր չկար։

Թրեյսին նստած էր աթոռին արդեն ավելի քան մեկ ժամ։

Հանկարծ մի նոր մարդ էլ մտավ սենյակ։

— Դոկտոր Պինգիցերը,— հասավ Թրեյսիի ականջին։

Դա յոթանասունի մոտ մի փոքրիկ մարդ էր, ժպիտը դեմքին։

— Բանն ի՞նչ է,— արագ դիմեց նա ամբոխին։

Մի խումբ փորձագետներ շրջապատեցին նրան, տարան մի կողմ ու պատմեցին, թե բանն ինչ է։

— Ահ-հա՛,— ասաց դոկտորը և արագ մոտեցավ Թրեյսիին։— Տղաս,— ասաց նա,— ես Ռուդոլֆ Պինգիցերն եմ։

Թրեյսին ոտքի ելավ ու թոթվեց Ռուդոլֆ Պինգիցերի ձեռքը։

— Թոմաս Թրեյսի,— ասաց նա։

— Ահ-հա՛, Թոմաս Թրեյսի,— ասաց դոկտոր Պինգիցերը ու շրջվեց դեպի մյուսները,— գուցե ինձ համա՞ր էլ մի այսպիսի աթոռ գտնեիք։

«Անգլիական բանկի» աթոռների նման ևս մի աթոռ շուտափույթ ներս բերեցին դոկտորի համար։

— Ես յոթանասուներկու տարեկան եմ։

— Ես քսանյոթ տարեկան եմ,— ասաց Թրեյսին։

Դոկտոր Պինգիցերը լցրեց ծխամորճը, բավական թութուն թափեց ու նեղություն էլ չկրեց թափ տալու հագուստի վրայից, յոթ լուցկի վառեց ծխամորճը կպցնելու համար, մի տասն անգամ փստփստացրեց, հետո ծխամորճը բերանին՝ ասաց.

— Ես ունեմ կին՝ վաթսունինը տարեկան, տղա՝ քառասունհինգ տարեկան, հոգեբույժ, տղա՝ քառասուներկու տարեկան, հոգեբույժ, տղա՝ երեսունինը տարեկան, հոգեբույժ, աղջիկ՝ երեսունվեց տարեկան, որ հայտարարում է, թե երեսունմեկ տարեկան է, հոգեբույժ, աղջիկ՝ երեսունմեկ տարեկան, որ հայտարարում է, թե քսանվեց տարեկան է, հոգեբույժ, կահավորված բնակարան, նվագարկիչ, դաշնամուր, հեռուստացույց, գրամեքենա, բայց անսարք վիճակում։

— Ինչո՞ւ չեք տալիս վերանորոգման,— ասաց Թրեյսին։

— Ա՜հ,— ասաց դոկտոր Պինգիցերը,— ինքս չեմ օգտագործում։ Թոռներիս համար է։ Հեշ բան է։ Դա է ունեցածս, մեծ մասը՝ հոգեբույժներ։

— Փող ունե՞ք,— ասաց Թրեյսին։

— Ոչ,— ասաց դոկտոր Պինգիցերը,— այդքան հոգեբույժ մի ընտանիքում. վրաս թանկ է նստում։ Ունեմ գրքեր։ Հա՜, մոռացա, ունեմ մահճակալ։ Քնելու համար։ Գիշերը։ Պառկում եմ։ Քնում եմ։ Փոփոխություն է։

— Բարեկամներ ունե՞ք,— ասաց Թրեյսին։

— Շատ,— ասաց դոկտոր Պինգիցերը,— իհարկե, երբ ասում եմ բարեկամներ...— դոկտոր Պինգիցերը արագ-արագ շարժեց մատներն ու տարօրինակ ձայներ հանեց,— այսինքն, դուք հասկանում եք...— նորից տարօրինակ ձայներ,— իհարկե։ Ի՞նչ իմանաս։

— Եկեղեցի հաճախո՞ւմ եք,— ասաց Թրեյսին։

— Ա՜հ,— ասաց դոկտոր Պենգիցերը,— այո։ Զգացմունք։ Սիրում եմ։ Գեղեցիկ է։

Մի լրագրող առաջ եկավ ու ասաց.

— Մտադիր չե՞ք արդյոք ինքներդ հարցեր տալ։

— Ահ-հա՛,— արագ վրա բերեց դոկտոր Պինգիցերը,— երբ դոկտոր Պինգիցերը հարցեր տա, սենյակը լինի դատարկ։

Ոստիկանության մի կապիտան, այդ օրվա պատասխանատուն, անունը Հուզինգա, ասաց կտրուկ.

— Լսեցի՞ք դոկտորի ասածը։ Բոլորը դուրս գան։

Լրագրողների մեջ բավական դիմադրողներ գտնվեցին, բայց Հուզինգային ու նրա մարդկանց հաջողվեց բոլորին հանել միջանք։ Երբ սենյակը դատարկվեց, դոկտորը ամենայն խաղաղությամբ փստփստացրեց ծխամորճը, ժպտաց Թրեյսիին ու ննջեց։ Թրեյսին էլ էր արդեն հոգնած, այնպես որ ինքն էլ ննջեց։ Ծերուկը խռմփացնում էր, իսկ Թրեյսին՝ ոչ։

Քիչ հետո դուռը լայն բացվեց, և մի լուսանկարիչ արագ լուսանկարեց «Անգլիական բանկի» աթոռներ հիշեցնող աթոռների մեջ քնած երկու տղամարդկանց։

Ապա ներս մտավ Հուզինգան և արթնացրեց դոկտորին։

— Ահ-հա՛,— ասաց դոկտորը։

Հենց այն է Հուզինգան ուզում էր արթնացնել նաև Թրեյսիին, դոկտորն ասաց.

— Ոչ։ Շատ կարևոր։

— Լավ, դոկտոր,— ասաց Հուզինգան ու կամացուկ հեռացավ։

Փոքրիկ ծերուկը նստել և ուսումնասիրում էր Թրեյսիի դեմքը։ Քիչ անց Թրեյսին բացեց աչքերը։

— Երազում տեսա իբր Վիեննայում եմ,— ասաց դոկտոր Պինգիցերը։

— Վերջին անգամ ե՞րբ եք եղել այնտեղ,— ասաց Թրեյսին։

— Քսան տարի առաջ,— ասաց դոկտոր Պինգիցերը,— վաղուց, շատ վաղուց։ Պաղպաղակ շատ եմ սիրում։ Հատկապես վանիլով։

— Սուրճ սիրո՞ւմ եք,— ասաց Թրեյսին։

— Սո՞ւրճ,— ասաց դոկտոր Պինգիցերը,— ես Վիեննայից եմ։ Ես սուրճով եմ մեծացել։ Ահ-հա՛։

Եվ նա գոռաց այնպես, որ դռան հետևում լսեն.

— Սո՛ւրճ, խնդրեմ։

Դրսում Հուզինգան անմիջապես կարգադրեց մի սպայի՝ բերել մի սրճաման սուրճ և երկու գավաթ։

— Գիտի իր գործը,— ասաց Հուզինգան սպային,— գիտի ինչ է անում։

— Հիմա սուրճ կխմենք,— ասաց փոքրիկ մարդը։— Բա՞ն է պատահել։ Ես ոչինչ չգիտեմ։

— Նրանք կրակեցին իմ վագրի վրա,— ասաց Թրեյսին։

— Ցավում եմ,— ասաց դոկտոր Պինգիցերը։

— Մենք մտանք Սուրբ Պատրիկի եկեղեցին,— ասաց Թրեյսին,— ինչպես որ մտել էինք վեց տարի առաջ, բայց երբ դուրս եկանք եկեղեցուց, նրանք արդեն սպասում էին մեզ զրահապատով, իսկ մի զրահապատ էլ կանգնած էր Հիսուներորդ փողոցի վրա։ Առաջին կրակոցը չդիպավ, բայց վագրը վախեցած վազեց ու երբ հասավ երկրորդ զրահապատին, էլի կրակեցին ու դիպան ոտքին։

— Վագրը քո՞ վագրն է։

— Այո։

— Ինչո՞ւ։

— Որովհետև կյանքիս մեծ մասը ինձ հետ է եղել։

— Ահ,— ասաց փոքրիկ մարդը,— վագր է, ինչպես շունը՝ շո՞ւն։

— Ուզում եք ասել, թե իսկակա՞ն վագր է, ինչպես լինում են ջունգլիներում կամ կրկեսում,— ասաց Թրեյսին։

— Ճիշտ,— ասաց դոկտոր Պինգիցերը։

— Ոչ, դրանցից չի,— ասաց Թրեյսին,— համենայն դեպս, մինչև այսօր, բայց այսօր նա իրոք իսկական էր, չնայած մեկ է՝ էլի իմ վագրն էր։

— Ինչո՞ւ են նրանք ասում՝ վագրը փախել է կրկեսից։

— Չգիտեմ։

— Հնարավո՞ր է։

— Երևի։ Կրկեսի վանդակից ինչ կենդանի էլ լինի, կփախչի, թե ճար ունենա։

— Դու չե՞ս վախենում այդ վագրից,— ասաց դոկտոր Պինգիցերը։— Այստեղ ինչ-որ լուսանկարներ ունենք, լուսանկարիչների հանածներ։ Իմ փոքրիկ աղջիկը մի ժամանակ խելքը տվել էր լուսանկարչության։ Նկարներ, նկարներ, բոլոր նկարներին հայրը։ Ե՞ս։

Նա շրջվեց դեպի դուռն ու բարձրաձայն ասաց.

— Լուսանկարները, խնդրեմ։

Ներս մտավ Հուզինգան, հավաքեց սեղանի վրայից մի տասը լուսանկար ու պարզեց դոկտորին, որն սկսեց արագ-արագ աչքի անցկացնել դրանք, առանց մեկնումեկի վրա կարգին նայելու։

— Դու այդ գազանից չե՞ս վախենում,— արագ-արագ ասաց նա,— այդ վագրից։ Սա սև հովազ է։

— Գիտեմ,— ասաց Թրեյսին,— բայց, միևնույն է, դա իմ վագրն է։

— Դու «վագր» անո՞ւնն ես տալիս այս գազանին։

— Ես գիտեմ, որ դա սև հովազ է,— ասաց Թրեյսին,— բայց ես դրան միշտ համարել եմ վագր։

— Քո՞ վագրը։

— Այո։

— Եվ դու չե՞ս վախենում այդ վագրից։

— Ոչ։

— Բոլորը վախենում են վագրից։

— Բոլորը շատ բանից են վախենում,— ասաց Թրեյսին։

— Ես վախենում եմ գիշերից,— ասաց դոկտոր Պինգիցերը։— Երբ ես Վիեննայում էի ու ջահել, գիշերները գնում էի որտեղ շատ լույս կար, պայծառություն։ Երբ լույս կա, չեմ վախենում։

Հուզինգան, որը չգիտես ինչու հալչում էր դոկտոր Պինգիցերի առաջ, սուրճը ներս բերեց ու լցրեց գավաթները։

— Դե, փորձենք մեր սուրճը,— ասաց դոկտորը։

— Ես մի ժամանակ ուզում էի սուրճ համտեսող դառնալ,— ասաց Թրեյսին։

— Ահ, իսկապե՞ս,— ասաց դոկտոր Պինգիցերը։— Դե ուրեմն բեր սուրճ խմենք։ Սուրճ վայելենք։ Կյանքը շատ կարճ է։— Նա ձեռքով արեց դեպի դուռը։— Շատ... Շատ... Շատ...— Նա դեմքը ծռմռեց և չկարողացավ ավարտել իր միտքը։

— Այո,— ասաց Թրեյսին։

Նրանք սկսեցին լուռումունջ խմել իրենց սուրճը, և Թրեյսին համտեսում էր այն ջանադիր կերպով, ինչպես վեց տարի առաջ Օտտո Ջեյֆանգի մոտ՝ Նիմոյի, Փիբբրդիի ու Ռինգերտի հետ նստած։

ԳԼՈՒԽ 8

Յուրաքանչյուրը երեք գավաթ սուրճ համտեսելուց հետո, դոկտոր Պինգիցերն ասաց.

— Ահ-հա։ Աշխատանք։ Ատում եմ աշխատանքը։ Ատում եմ հո-

գեբուժությունը։ Միշտ ատել եմ աշխատանքը։ Սիրում եմ ծիծաղ, խաղ։ երևակայություն, հրաշք։

— Հապա էլ ինչո՞ւ եք աշխատում,— ասաց Թրեյսին։

— Ինչո՞ւ,— ասաց դոկտոր Պինգիցերը։— Սխալմունք։— Մի ազահ դոկտորը իր մտքերով ընկավ։— Վիեննայում տեսա այդ աղջկան։ Էլզային։ Էլզա Վարսհոկ։ Ահ-հա։ Էլզան՝ կին, մայր, ասում է՝ «Ո՞ւր է փող ուտելիքի համար»։ Դե ի՞նչ։ Սկսեցի աշխատել։

— Դուք հասկանո՞ւմ եք հոգեբուժությունից,— ասաց Թրեյսին։

— Հոգեբուժությունի՞ց։ Ոչ,— ասաց դոկտոր Պինգիցերը։— Մարդկանց՝ մի քիչ։ Քիչ, քիչ, մի քիչ։ Ամեն տարի, ամեն օր՝ ավելի քիչ։ ավելի քիչ, ավելի քիչ։ Ինչո՞ւ։ Մարդիկ դժվար են։ Մարդիկ մարդիկ են։ Մարդիկ՝ ցավ, մարդիկ՝ հիվանդ, մարդիկ՝ խենթ, վիրավոր, մարդիկ՝ մարդկանց վիրավորող, մարդիկ՝ սպանող, սպանվող։ Ո՞ւր է ծիծաղ, ո՞ւր է խաղ, ո՞ւր է երևակայություն, ո՞ւր է հրաշք։ Ատում եմ հոգեբուժությունը։ Սիրում եմ մարդկանց։ խենթ մարդկանց, գեղեցիկ մարդկանց, վիրավոր ու հիվանդ մարդկանց, կոտրված, փշուր-փշուր եղած մարդկանց, սիրում եմ, սիրում եմ։ Ինչո՞ւ։ Ինչո՞ւ մարդիկ կորցրին ծիծաղը, խաղը, երևակայությունը, հրաշքը։ Ինչի՞ համար։ Ահ-հա։ Փողի՞,— նա ժպտաց,— կարծում եմ՝ էդպես։ Փողը։ Սերը՝ փող։ Գեղեցկությունը՝ փող։ Ծիծաղը՝ փող։ Իսկ ո՞ւր է փող։ Չգիտեմ։ Ծիծաղ՝ չկա։ Խաղ՝ չկա։ Աշխատել։ Աշխատել։ Վագր։ Վագր։

— Դուք գիտե՞ք այդ ոտանավորը,— ասաց Թրեյսին։

— Էդպես ոտանավո՞ր կա,— ասաց դոկտոր Պինգիցերը։

— Դե իհարկե։

— Ի՞նչ ոտանավոր է,— ասաց դոկտոր Պինգիցերը։

Վագրը, օ՜, վագրը, կարմիր հրացոլք,— ասաց Թրեյսին,—
Ո՞վ է ստեղծել մարմինդ, արդյոք,
Կեսգիշերային թավուտի խորքում,
Մարմինդ ճարտար, ճապուկ ու ճկուն։

— Ահ-հա՜։ Էլի կա՞,— ասաց դոկտոր Պինգիցերը։

— Այո, շատ կա,— ասաց Թրեյսին,— եթե միայն չեմ մոռացել։

— Խնդրում եմ, շարունակեք,— ասաց դոկտոր Պինգիցերը։

Երկնքո՞ւմ էր, թե երկրի խորքերում
Քո բոց աչքերի հուրը մլմլում։
Որտե՞ղ, որտե՞ղ էր թաքնված դարեր,
Ո՞ւմ ձեռքն է նրան լույս աշխարհ հանել։

— Հո հո՛,— ասաց դոկտոր Պինգիցերը,— յոթանասուներկու տարի ապրում եմ ու էսպիսի ոտանավոր չէի լսել։ Ո՞վ է գրել։

— Ուիլյամ Բլեյքը,— ասաց Թրեյսին։

— Կեցցե՛ս, Ուիլյամ Բլեյք,— ասաց դոկտոր Պինգիցերը։— Էլի կա՞։

— Այո,— ասաց Թրեյսին,— միայն թե հիշեմ։ Հիշեցի։

Այդ ի՞նչ վարպետ էր, որ հզոր ձեռքով
Գործեց ու հյուսեց պիրկ ջղերը քո
Եվ ձեռքերի մեջ զգաց կոշտապատ
Սրտիդ առաջին զարկերը հաստատ։

— Էլի կա՞,— ասաց դոկտորը։

— Կարծում եմ, որ հիմա լրիվ կարող եմ ասել,— ասաց Թրեյսին։

Ի՞նչ քուրա էր, որ քեզ շիկացրեց,
Ի՞նչ կռան էր, որ քեզ կռեց-կոփեց,
Ո՞վ էր նա, որ պինդ աքցանով սեղմեց
Բոցարձակ, ցասկոտ ուղեղը քո մեծ։

Իսկ երբ աստղալից երկինքն անսահման
Արցունքով ցողվեց, կապեց ծիրաձան,
Ժպտա՞ց արարիչ-աստված, վերջապես,
Իր ստեղծածին այդ հրաշասես։

Մի՞թե նույն ուժը ամենակարող,
Նույն ափը հզոր ու սանձահարող
Ե՛վ գառնուկին է ստեղծել մի օր,
Ե՛վ քեզ, մշտավառ կրակ զորավոր։

Վա՛գրը, օ՜, վա՛գրը, կարմիր հրացոլք,
Ո՞վ է ստեղծել մարմինդ, արդյոք։
Ո՞ւմ անմահ ձեռքն է կերտել ու պահել
Քո գեղեցկատիպ կերպարանքն ահեղ։

Թրեյսին լռեց։

— Ահա և ամբողջ ոտանավորը,— ասաց նա։

— Ահ-հա,— ասաց դոկտոր Պինգիցերը,— շնորհակալ եմ։ Ուրեմն, երեխա ժամանակի՞ց դա գիտես։

— Այո,— ասաց Թրեյսին,— երբ դեռ երեք տարեկան էի, բերանացի գիտեի։

— Դու հասկանո՞ւմ ես այդ ոտանավորը,— ասաց դոկտոր Պինգիցերը։

— Ոչինչ էլ չեմ հասկանում,— ասաց Թրեյսին։— Պարզապես դուր է գալիս։

— Ահ-հա։ Ճիշտ է։

Ծերուկը շրջվեց դեպի դուռը։

— Շատ-շատ-շատ,— ասաց նա։— Հիմա՝ երկու հարց։ Մեկ՝ քո վագրը ո՞րն է։

— Իմն է,— ասաց Թրեյսին։

— Երկու,— ասաց դոկտոր Պինգիցերը,— փողոցի վագրը ո՞րն է։

— Դե-և,— ասաց Թրեյսին,— հնարավոր է, երեկ երեկոյան մի սև հովազ հաշմել է խնամողին ու փախել կրկեսից։ Այդպիսի բաներ պատահում են։ Հնարավոր է, որ հիմա մի վիրավոր սև հովազ արձակ շրջում է Նյու Յորքի փողոցներում։ Հնարավոր է, որ նա հենց միայն վախից մեկին սպանի, եթե դա անհրաժեշտ համարի։ Բայց սև հովազը, որ արձակ շրջում է քաղաքում, նաև իմ վագրն է։

— Իսկապե՞ս։

— Այո։

— Ինչո՞ւ,— ասաց դոկտոր Պինգիցերը։

— Չգիտեմ,— ասաց Թրեյսին,— բայց գիտեմ, որ նա ինձ հետ միասին քայլում էր Հինգերորդ ավենյուով և ինձ հետ էլ մտավ Սուրբ Պատրիկի եկեղեցին։ Նա չհարձակվեց ոչ մեկի վրա։ Նա հանգիստ քայլում էր իմ կողքից։ Նա չէր փախչի, եթե նրա վրա չկրակեին։ Մի՞թե դուք չէիք փախչի, եթե ձեզ վրա կրակեին։

— Շատ արագ,— ասաց դոկտոր Պինգիցերը,— յոթանասուներկու տարեկան, բայց շատ արագ։

Նա մի պահ լռեց՝ պատկերացնելու իրեն արագ վազելիս, հետո ասաց.

— Ոստիկանությունը... նրանք կսպանեն այդ գազանին։

— Կաշխատեն սպանել,— ասաց Թրեյսին։

— Կսպանեն։

— Կաշխատեն սպանել,— ասաց Թրեյսին,— բայց չեն սպանի, որովհետև չեն կարող։

— Ինչո՞ւ։ Ո՞վ ասաց չեն կարող,— ասաց դոկտոր Պինգիցերը։

— Այդ վագրին սպանել չի լինի։

— Մեկ վա՞գր։ Սպանել չի՞ լինի։ Ինչո՞ւ։

— Չի լինի, և վերջ,— ասաց Թրեյսին։

— Իսկ ինքը՝ վագրը կսպանի՞,— ասաց դոկտոր Պինգիցերը։

— Եթե անհրաժեշտ համարի,— ասաց Թրեյսին։

— Եվ ճի՞շտ կանի։

— Չգիտեմ։ Իսկ դո՞ւք ինչ կասեիք։

— Ես էլ չգիտեմ,— ասաց դոկտորը,— ես շատ քիչ բան գիտեմ։ Շատ քիչ, շատ քիչ։ Ահ-հա։ Հիմա հարց հոգեբուժությունից։ Դուք գի՞ժ եք։

— Այո, իհարկե,— ասաց Թրեյսին։

Ներուկը նայեց դռան կողմն ու մատը դրեց շրթունքներին։

— Կամաց,— շշնջաց նա։

— Ես գիժ եմ, որովհետև նրանք վիրավորեցին վագրին,— ասաց Թրեյսին,— ես գիժ եմ, որովհետև նրանք վագրին վանդակ էին դրել։ Ես գիժ եմ, որովհետև վագրին տարել էին կրկես։ Եվ, բացի այդ, ես գիժ եմ ի ծնե։

— Ես էլ եմ գիժ, բայց դա հայտարարելու բան չի,— ասաց դոկտոր Պինգիցերը։ Նա նորից նայեց դռանը։ Հետո հանկարծ ոտքի ելավ։— Ես կասեմ նրանց՝ այս մարդու խելքը տեղն է։ Եվ նրանք կհասկանան։ Ահ-հա։ Աշխատանքը վերջացավ։— Ու նա բարձր կանչեց՝ խնդրեմ, ներս համեցեք։

Առաջինը ներս մտավ Հուդինգան, ապա մյուսները։

Դոկտոր Պինգիցերը զննեց նրանց դեմքերը, բավական սպասեց, որպեսզի բոլորը լռեն և հետո ասաց.

— Ահ-հա։ Այս մարդու խելքը տեղն է։

Մի տղամարդ, որ բոլորովին նման չէր դոկտոր Պինգիցերին, առաջ եկավ ու ասաց.

— Դոկտոր Պինգիցեր, ես դոկտոր Սքեթերն եմ, Մանհեթենի գլխավոր հոգեբույժը։ Կարո՞ղ եմ իմանալ, թե հոգեբուժական ինչպիսի քննության միջոցով հանգեցիք նման եզրակացության։

— Ոչ,— ասաց դոկտոր Պինգիցերը ու շրջվեց դեպի Թրեյսին,— ցտեսություն, տղաս։

— Ցտեսություն,— ասաց Թրեյսին։

Դոկտոր Պինգիցերը մեկիկ-մեկիկ նայեց ներկաներին, հետո քայլերն ուղղեց դեպի դուռը։

Մինչ նա կհասներ դռանը, մի քանի լուսանկարիչներ գործի դրեցին իրենց ապարատները, իսկ նրանցից մեկն ասաց.

— Դոկտոր Պինգիցեր, ի՞նչ կասեիք սև հովազի մասին։ Նա իսկապե՞ս սրանն է եղել, ինչպես ինքն է ասում։

— Ես քննում էի սրան, ոչ թե սև հովազին,— ասաց դոկտորը։

Մի թղթակից անջատվեց խմբից ու մոտեցավ դոկտոր Պինգիցերին։

— Իսկ ինչպե՞ս բացատրել, որ սև հովազը այս մարդուն չի վնասել,— ասաց թղթակիցը։

— Չգիտեմ,— ասաց դոկտոր Պինգիցերը։

— Որևէ բան այդ մասին չպարզվե՞ց ձեր երկար զրույցից,— ասաց թղթակիցը։

— Ոչ,— ասաց դոկտորը։

— Իսկ ի՞նչ կասեիք սև հովազի մասին, որ արձակ շրջում է քաղաքում,— ասաց թղթակիցը։

— Դա հոգեբուժության խնդիրը չէ,— ասաց դոկտորը։

— Իսկ ո՞ւմ խնդիրն է,— ասաց թղթակիցը։

— Որտեղի՞ց էր այդ սև հովազը։

— Կրկեսից։

— Կրկեսի խնդիրն է,— ասաց դոկտոր Պինգիցերը։

Նա դուրս եկավ սենյակից։

Բոլորը շրջապատեցին դոկտոր Սքետբրին, որին բոլորովին չէին գոհացրել ոչ դոկտոր Պինգիցերի եզրակացությունը, ոչ էլ նրա ձևերը։

ԳԼՈՒԽ 9

Թրեյսին, շրջելով վագրի հետ, ոչ մի օրենք չէր խախտել։

Սակայն նրա արածն այնքան խելքից դուրս ու անհավատալի բան էր, որ թվում էր նաև օրենքից դուրս, համենայն դեպս, բոլորովին անմիտ ու անկիրթ մի արարք։

Միանգամայն պարզ էր, որ նա խելագար է։ Ո՞վ է տեսել, որ նորմալ մարդը փողոցներում շրջի կրկեսից փախած սև հովազի հետ, ասես թե նա ու այդ կենդանին հիանալի հասկացել են իրար։

Ուստի, դոկտոր Պինգիցերի գնալուց հետո, Թրեյսին քննվեց դոկտոր Սքետբրի կողմից, որը անդիմադրելի պահանջ էր զգում մեկնաբանել Թրեյսիի պատասխանները՝ ըստ իր կրթության ու նախապաշարումների։

Դոկտոր Սքետբրը առանց դժվարության, քայլ առ քայլ ապացուցեց, որ Թրեյսին իսկապես խելագար է։ Դժվար բան չէ։ Ում հետ ասես՝ կարելի է անել։

— Այնուհետև,— ասաց դոկտոր Սքետբրը, դիմելով գործի բոլոր մասնակիցներին, այդ թվում նաև ոստիկանության կապիտան Էրլ Հուզինգային, որը միակն էր, որ չէր հավատում դոկտոր Սքետբրի հայտնագործություններին և համառորեն պաշտպանում էր դոկտոր Պինգիցերի եզրակացությունը,— այնուհետև, երբ քննչային հարց տրվեց, թե ինչպե՞ս կվերաբերվեր անորոշ ժամանակ Բելվյուում գտնվելուն՝ ավելի երկարատև ու խորաշնին հոգեբուժական քննության ենթարկվելու նպատակով, նա պատասխանեց, որ կգերադասեր տուն գնալ, բայց եթե ստիպված լինի որոշ ժամանակով գնալ Բելվյու, կաշխատի այդ ժամանակն անցկացնել լավագույն ձևով, ու իրեն զգալ այնտեղ ինչպես տանը ոչ պակաս չափով, քան որևէ այլ տեղում։ Նման վերաբերմունքը թույլ է տալիս կարծելու, որ քննչալը բացի արդեն հայտնի ախտանշաններից, տառապում է նաև նահատակության կոմպլեքսով։ Այդ նմանապես վկայում է հասարակության մտավոր կարողությունների հանդեպ ցուցաբերած նրա խելացնոր մեծամտության ու արհամարհանքի մասին։ Քննչալը ակնհայտորեն մոլորություն է ապրում՝ կարծելով, թե իր վրա չեն տարածվում այն օրենքները, որոնցով առաջնորդվում ու ղեկավարվում են հասարակության մնացած բոլոր անդամները։ Նրա այս կարծիքը ծագել և հետագայում ավելի է հիմնավորվել երևակայական վագրի հետ տևական կապի պատճառով, վագրի, որին նա համարում է իրենը և միայն իրենը, որը, իր իսկ խոստովանությամբ, ունի խոսելու կարողություն, այլ կերպ ասած, ընդունակ է հաղորդակցվելու, սակայն բացառապես իր հետ։ Ըստ իս, ոչ ոք չի կասկածի, որ նա պետք է տեղափոխվի Բելվյու՝ քննության և բուժման։

Այսպիսով, Թոմաս Թրեյսիին հոկտեմբերյան մի հաճելի կիրակի տեղափոխեցին Բելվյու։

Թրեյսին գտավ, որ այնտեղի մարդիկ իսկական խելագարներ են։ Գտավ նաև, որ նրանցից յուրաքանչյուրն ունի վագր. շատ վրդովված,

շատ կատաղած, խորապես վիրավորված վագր, հումորի զգացումն ու երևակայությունը մարած, ազատության սերը, ուրախանալու ձգտումը, հույսը կորցրած մի վագր։

Այնտեղ էր Նիմոյի որդին՝ իր ընկճված ու մեռնող վագրի հետ։ Փիբըրդիի աղջիկն էր այնտեղ իր սարսափահար վագրով, որ անդադար հետ ու առաջ էր անում։ Ռինգերտն ինքն էր այնտեղ՝ հետը մի վագր, որ նման էր հոգնած պառաված շանն։

Եվ Լորա Լյութին էր այնտեղ՝ իր երբեմնի շքեղ վագրուհու հետ, այժմ արդեն ուժասպառ, հյուծված ու խղճալի։

Միայն Թրեյսին էր առանց վագրի։

Թրեյսիի վագրը թաքնվել էր Հիսունհինգերորդ և Հիսունվեցերորդ փողոցների միջև, Մեդիսոն ավենյուի վրա գտնվող Ռուշի, Ռուբելինգի և Ռուանի թաղման բյուրոյի ներքնահարկում։ Մութ ու մեկուսի, մեռելահոտ տեղ էր։ Վագրը թաքնվել էր այն սենյակի տակ, որտեղ Ռուշը, Ռուբելինգը և Ռուանը դիմափոշով, կարմրաներկով ու ժպիտներով տեսք էին տալիս մեռելներին։

Վագրը պառկած էր այնտեղ, վախեցած ու մենակ, որբացած վհատ և մի ցանկություն ուներ՝ մեռնել։

ԳԼՈՒԽ 10

Իմաստ ունի՞ նկարագրել, թե ինչ աղմկություն թողեց Նյու Յորքի բնակիչների վրա Թրեյսիի և նրա վագրի պատմությունը, որի մասին գրվեց բոլոր թերթերի առաջին էջերում, հաղորդվեց ռադիոյով ու հեռուստատեսությամբ, հայտնի ու անհայտ մեկնաբանների կողմից, ըստ որում այդ պատմությունը լրացվում էր կինոկադրերով. թե ինչպես Թրեյսին ու վագրը քայլում են Հինգերորդ ավենյուով, մտնում Սուրբ Պատրիկի եկեղեցին, դուրս գալիս եկեղեցուց ու նաև մի շարք լուսանկարներով, ուր Թրեյսին սուրճ էր խմում դոկտոր Պինգիցերի հետ՝ շրջապատված ոստիկանության, թղթակիցների, հոգեբույժների և այլոց կողմից։

Այս ամենը ազդեց սովորականի պես։

Անմեղ շները, որ տեղ էին փնտրում թեթևանալու, դեմ էին առ-

նում տղամարդկանց, որոնք նրանց տեսնելով՝ լեղաճաք փովում էին գետին, կանայք յուրաքանչյուր ստվերից վժժում էին և շրմփացնում երեխաներին, երբ նրանք ուզում էին փողոց դուրս գալ խաղալու։

Կիրակի երեկոյան ամեն մարդ տանը մնաց, իսկ շատերը՝ նաև երկուշաբթի առավոտյան, քանի որ վագրը տակավին ազատության մեջ էր, իսկ Թրեյսին՝ Բելվյուում։

Թրեյսիին մի գլուխ քննում էին։

Իր հերթին նա էլ տեսավ, որ իրեն քննողները հետաքրքիր մարդիկ են։

Ազատ ժամանակ Թրեյսին այցելեց Լորա Լյութիին, որը ոչ մի կերպ չէր կարողանում հիշել նրան։ Թրեյսին խոսք բացեց Ֆար Ռոքուեյ կատարած իր կիրակնօրյա այցելության մասին, բայց Լորան, գունատ ու թառամած, ոչինչ չէր հիշում։

— Ես վեց հատ փափկած շոկոլադ կերա,— ասաց Թրեյսին։

—Պետք է յոթը ուտեիր,— ասաց Լորան։

— Ինչո՞ւ։

— Մեկ հատով ավելի կլիներ,— ասաց Լորան։— Միշտ էլ հաճելի է, որ մեկ հատով ավելի լինի։ Ես միշտ էլ այդպես եմ համարել։ Ամենքին էլ մեկ հատով ավելի։

— Շոկոլա՞դ,— ասաց Թրեյսին։

— Ինչ էլ որ լինի,— ասաց Լորան։— Մայր, հայր, կյանք, հաջողություն։ Վեցը լավ է, բայց մեկն էլ հետը՝ ավելի լավ։ Մեկն էլ ու էլի մեկն էլ...

— Մի՞թե չես հիշում,— ասաց Թրեյսին,— հայրիկդ գնաց պաղպաղակ բերելու։

— Պաղպաղակը հալվում է,— ասաց Լորան,— ահա թե որն է նրա գաղտնիքը։ Պարզապես հալվում է։

— Լորա,— ասաց Թրեյսին,— նայիր ինձ ու լսիր։

— Հալվող պաղպաղակից ավելի տխուր բան չկա,— ասաց Լորան։

— Դրա ի՞նչն է տխուր, Լորա,— ասաց Թրեյսին,— պաղպաղակը ճենց պիտի հալվի։

— Մի՞թե։

— Իհարկե։

— Իսկ ես չգիտեի,— ասաց Լորան,— ես միշտ այնպես դառը լաց եմ եղել, երբ տեսել եմ, թե ինչպես է պաղպաղակը հալվում։

— Ի՞նչ պաղպաղակ, Լորա։

— Պաղպաղակից շինած աղջիկը, պաղպաղակից շինած տղան,— ասաց Լորան։— Չգիտեի։ Այդքան արցունք թափեցի և իզուր։ Լաց եղա, հա լաց եղա, մինչև ինքս էլ հալվեցի։ Դու հաստա՞տ գիտես։

— Ոչ,— ասաց Թրեյսին,— ոչ։ Ես չգիտեմ, թե ինչ է եղել, բայց ինչ էլ որ եղած լինի, հիմա ինձ լսիր, Լորա։ Վեց տարի առաջ ես կանգնած էի Օտտո Զեյֆանգի մուտքի առաջ։

— Ինչո՞ւ էիր այնտեղ կանգնած,— ասաց Լորան։

— Ես աշխատում էի այնտեղ,— ասաց Թրեյսին,— ես այնտեղ կանգնած զրուցում էի սուրճ համտեսողներ Նիմոյի, Փիբբրդիի ու Ռինգերտի հետ։

— Իսկ ո՞ւր են նրանք հիմա,— ասաց Լորան։

— Նիմոն մեռած է,— ասաց Թրեյսին,— Ռինգերտը այստեղ է, իսկ Փիբբրդին՝ չգիտեմ։ Այսպես, ուրեմն, ես կանգնած էի ու մեկ էլ տեսնեմ՝ Ուորեն-սթրիթով մի գեղեցիկ աղջիկ է անցնում։

— Գեղեցի՞կ,— ասաց Լորան։

— Աշխարհի ամենագեղեցիկ աղջիկը։

— Ո՞վ էր նա։

— Դու էիր, Լորա,— ասաց Թրեյսին։

— Ե՞ս,— ասաց Լորան։— Աշխարհի ամենագեղեցիկ աղջի՞կը։ Սխալված կլինես։

— Ոչ, դու էիր, Լորա։

— Էհ, հիմա, անշուշտ, ես աշխարհի ամենագեղեցիկ աղջիկը չեմ,— ասաց Լորան։

— Ահա հենց այդ մասին էլ ուզում եմ խոսել,— ասաց Թրեյսին։

— Լավ,— ասաց Լորան,— խոսիր։

— Ուզում եմ, որ դու նորից անցնես Ուորեն-սթրիթով։

— Ուզո՞ւմ ես։

— Այո։

— Ինչո՞ւ։

— Չգիտեմ ինչպես արտահայտեմ,— ասաց Թրեյսին։— Ես սիրում եմ քեզ։

— Դրանով ի՞նչ ես ուզում ասել։

— Չգիտեմ։ Երևի... երևի ուզում եմ ասել, որ դու առաջվա պես աշխարհի ամենագեղեցիկ աղջիկն ես։

— Ոչ,— ասաց Լորան։

— Այո՝ ինձ համար,— ասաց Թրեյսին։

— Ոչ,— ասաց Լորան։— Գեղեցիկ լինելը գոռոզություն է։ Անճաշակ բան։ Եվ շատ ավելի տխուր, քան երբ դու սուսուփուս պառկած ես, կարծես մեռած լինես արդեն։

— Դու մեռած չես, Լորա։

— Մեռած եմ։

— Լորա, —ասաց Թրեյսին,— ի սեր աստծո, Լորա, ես սիրում եմ քեզ։

— Ցավում եմ,— ասաց Լորան,— անչափ ցավում եմ, բայց ինձ համար ավելի լավ է մեռած լինել։

Թրեյսին չգիտեր, թե ինչ մտածի։ Մի՞թե իսկապես Լորան ցնորվել է։

Դոկտոր Պինգիցերի նման նա էլ չգիտեր։

Այսպես թե այնպես, Լորան գտնվում էր Բելվյուում։ Ամիսներ շարունակ նա պառկած էր եղել տենդի մեջ և մասնագետների կարծիքով շուտով մեռնելու էր։

Մասնագետներին հայտնի էր, որ իրենք էլ վաղ թե ուշ կմեռնեն, բայց դա չէր անհանգստացնում նրանց, քանի որ հուսով էին, որ իրենք կմեռնեն խելքները գլխին։

ԳԼՈՒԽ 11

Նյու Յորքի տենդային շաբաթն անց էր կենում։

Վագրը առաջվա նման ազատության մեջ էր։ Այսինքն, պարզ ասած, քաղցից ու վախից մեռնում էր այն սենյակի տակ, որտեղ Ռուշը, Ռուբելինգը և Ռուանը զմռսում էին մեռելներին։

Ինչևէ, համաձայն թերթերից ստացվող լուրերի, երկուշաբթի առավոտյան վագրին տեսել էին Հարլեմի՝ երեք, Գրինվիչ Վիլիջի՝ երկու և Բրուքլինի՝ վեց տարբեր տեղերում, իսկ Կալիֆոռնիայի Ֆրեզնո քաղաքում մի տղա քսաներկու տրամաչափի հրացանով սպանել էր մի սև կատվի, որովհետև այդ կատուն բավականին նմանություն էր ունեցել

Թրեյսիի վագրին։ Տղայի լուսանկարը հայտնվեց երկրի գրեթե բոլոր թերթերում. նա կանգնած էր, հպարտորեն բռնած կատվի պոչից։ Նրա աղգանունը Բենինթենդի էր, անունը՝ Սալվատորե։

Երեկոյան Թրեյսիի վագրին, ինչպես արդեն անվանում էին նրան, տեսել էին ամենատարբեր մարդիկ երկրի բոլոր ծայրերում։

Լոնդոնցի մի մարդ տեսել էր նրան Սոհոյում ու «Թայմսին» նամակ գրել, որտեղ բացատրում էր, թե ինչպես էր այդ «արարածը» եկել այդտեղ հասել։ Բացատրությունն անչափ հետաքրքրական էր, ու երևում էր, որ հեղինակի համակրանքը ամբողջովին «արարածի» կողմն էր, ինչպես հաճախ ենք այդ տեսնում անգլիացիների մոտ, համենայն դեպս այնտեղի բարեհոգի խելառների մոտ։

Սիեթլում ձիարշավի մի գրավընկալ, որին ծեծել էին մրցակից խմբի մարդիկ, ոստիկանությանն էր դիմել՝ բողոքելով, թե իր վրա հարձակվել է Թրեյսիի վագրը։

Չիկագոյում մի պանդոկապան սկսել էր ռեկլամել բաժինը քսանհինգ սենթանոց նոր մի խմիչք՝ անունը «Թրեյսիի Վագր»։

Տոլեդոյում խաղալիք արտադրող մի ֆաբրիկատեր հավաքեց իր բոլոր նախագծողներին ու վաճառողներին, և արդեն շաբաթ առավոտյան թավշից Թրեյսիի վագրը պատրաստ էր երեխաների հետ անկողին մտնելու։ Բացի այդ, նա սկսեց արտադրել սվիտր՝ վրան վագրի պատկերն ու անունը, ամեն չափի փչովի «Թրեյսիի Վագրեր» և մի տուփ, որի միջից դուրս է թռչում Թրեյսիի Վագրը և վախեցնում ձեր սիրելիներին։

Ինքը գազանը լավ մրսել էր, իսկ մրսածությունն արագորեն վեր էր ածվում պլևրիտի։ Աչքերը խամրել էին և նրանցից առատորեն դեղին լորձունք էր հոսում։ Քիթը բռնվել էր։ Սպիտակ ատամները պատվել էին փառով, որը մոտալուտ մահվան համ ուներ։

Թրեյսիին շարունակում էին քննել և արդյունքները պատշաճորեն ծանուցվում էին երկրին ու աշխարհին ամեն օր, մյուս հավասարաչափ ուշագրավ լուրերի հետ միասին։

Մի դյուժին, եթե ոչ ավելի, հոգեբույժներ ու լրագրողներ Թրեյսիի և նրա վագրի շնորհիվ դարձան նշանավոր մարդիկ։

Մի ծակամուտ լրագրող հայտնագործեց Թրեյսիի նվիրվածությունը Լորա Լյուիսին և ցնցեց աշխարհը իր պատմությամբ՝ վերնագրված.

Թրեյսին սիրում է Լորային
Վագրի տերը սիրահետում է Բելվյուի գեղեցկուհուն

«Միրրը» թերթը, որի բախտն այնքան էլ չէր բերել Թրեյսիի և նրա վագրի վերաբերյալ նյութերի ու լուսանկարների առումով, ուրիշներից հետ չմնալու համար պահանջեց, որպեսզի անհապաղ քննվի քաղաքի ոստիկանության աշխատանքը և, եթե հարկ է, նույնիսկ հեռացվի նրա պետը՝ Օգբստ Բլայը, քանի որ եթե նա ի վիճակի չի բռնել կամ սպանել մի կաղ վագրի, ապա ինչ օգնություն կարող են ստանալ նրանից Նյու Յորքի քաղաքացիները, եթե քաղաքի վրա ռումբ նետվի։

Այս միտքը իսկույն համակիրներ գտավ մարդկանց շրջանում, որոնք պատրաստ սպասում են, որպեսզի համակրեն այս կամ այն միտքը։

«Միրրը» ոստիկանապետ Բլային ուղղակի հարցման տակ դրեց. «Ե՞րբ կարող եք հավաստիացնել աշխարհի ամենամեծ քաղաքի բնակիչներին, որ Թրեյսիի վագրը բռնված կլինի կամ սպանված, այնպես որ մարդիկ հնարավորություն ունենան առաջվա նման խաղաղ քնելու»։

Հարցը տրվեց հեռագրով։

Բլայը հավաքեց իր ամենախելոք մարդկանց և խնդրեց նրանց պատասխանել հեռագրին։ Մի շարք պատասխաններ եղան, բոլորն էլ անբավարար, որովհետև ոչ մեկը չկարողացավ ասել, թե վագրին ե՞րբ կհաջողվի բռնել կամ սպանել։

— Չգիտեմ,— կուզեր ասել Բլայը, բայց չէր համարձակվում։

Փոխարենը հինգ հարյուր բառից բաղկացած պատասխան հեռագիր կազմվեց և ուղարկվեց «Միրրին»։ Այն տպագրվեց «Միրրի» առաջին էջում «Ամոթ Նյու Յորքի ոստիկանությանը» խորագրի տակ։ «Միրրը» պահանջում էր, որ Բլայը հրաժարական տա։ Թերթը սահմանել էր նաև հինգ հազար դոլարի պարգև այն տղամարդուն, կնոջը կամ երեխային անկախ նրա ռասայական պատկանելիությունից, մաշկի գույնից, դավանանքից կամ հավատից, ով կբերեր Թրեյսիի վագրին։ «Միրրի» խմբագրություն՝ կենդանի կամ մեռած։

Հաջորդ օրը մի մարդ եկավ խմբագրություն, հետը բերելով գլխից խփած մի սև հովազ, և «Միրրը» վերջապես առիթ ունեցավ հանդես գալու սենսացիոն նյութով, որի պակասն այդքան զգացել էր։

Նյութը այն մասին, թե ինչպես սպանվեց Թրեյսիի վագրը, առաքեցին երկրով ու աշխարհով մեկ։

Մի քանի ժամ շարունակ խմբագրությանն հեռախոսը չէր լռում։

Զանգում էին օրվա հերոսին՝ Արտ Փլայլիին, և հիմնականում կանայք։ Նրանցից ոմանք առաջարկում էին իրենց իբրև հարսնացուներ։ Արդեն բանակցություններ էին գնում Արտ Փլայլիին նոր կոստյում գնելու վերաբերյալ, որպեսզի հնարավոր լիներ նրան ներկայացնել թերթի «Նշանավոր մարդիկ» բաժնում, երբ ոստիկանները խմբագրություն բերին Թրեյսիին՝ ճանաչելու վագրի իսկությունը։

Մնացած թերթերից յուրաքանչյուրը մի մեկնաբան և մի լուսանկարիչ էր ապահովել դեպքի վայրում։ Շատ հնարավոր էր, որ ոստիկանության պետը հարվածի տակ էր դնում իր իսկ դիրքերը, բայց, ինչ որ է, արժեր ստուգել ու պարզ պատկերացում կազմել։

«Միրրը» հրաժարվեց թույլ տալ, որ Թրեյսին տեսնի վագրին։

Արտ Փլայլիին առաջարկեցին լուսանկարվել Թրեյսիի հետ իրար ձեռք սեղմելիս, բայց նա արդեն հասկացել էր ինչն ինչոց է և ասաց.

— Հինգից ոչ պակաս։

— Ի՞նչ հինգ,— ասացին։

— Հինգ հարյուր դոլար,— ասաց Արտ Փլայլին։— «Միրրը» կարող է ձրի լուսանկարել։ Ըստ մեր պայմանագրի։ Մնացած բոլոր թերթերը՝ հինգ հարյուրով։

— Դպրոցական թերթ է,— կատակեց լուսանկարիչը, և Արտ Փլայլին, որ երբեք դպրոց չէր հաճախել, իր պարտքը համարեց անվճար սեղմել Թրեյսիի ձեռքը, որի համար «Միրրի» գլխավոր խմբագիրը խիստ կշտամբեց նրան։

Ինչ վերաբերում է Թրեյսիին, ապա նա ամենքի ձեռքն էլ սեղմում էր, հավատալով, որ ամենքն էլ անկեղծ են իր հետ կամ պարզապես այն պատճառով, որ խուսափելն անհնար էր։

«Նյուսը» մեղադրում էր «Միրրին», որ սա մոլորության մեջ է գցում Նյու Յորքի բնակիչներին և որ այդ թերթի տրամադրության տակ գտնվող մեռած վագրը ամենևին էլ Թրեյսիի վագրը չէ։

Մրցակցության ու նախանձի այս ալիքը հասցրեց նրան, որ երկու օր հետո տեղի ունեցավ «Միրրի» վագրի պաշտոնական և հանգամանալից զննությունը Թրեյսիի, գազանի կրկեսային վարժեցնողի և մի խումբ այլևայլ մարդկանց կողմից, որոնց միակ նպատակն էր որևէ կերպ հռչակվելը։

Արարողությունը կարճ տևեց։ Թրեյսին նայեց մեռած սև հովազին, որ պառկած էր հատուկ շինված դագաղի կողքին, որով «Միրրը» մտադիր էր թաղել նրան։ Թրեյսին նայեց հեռվից, սենյակի մյուս ծայրից։

Եվ իսկույն էլ, առանց սպասելու իր հերթին, խոսեց, խանգարելով ծրագրված արարողությունը։

— Դա իմ վագրը չի,— ասաց նա,— դա նույնիսկ հովազ չի, այլ մորթը սև ներկած կատվաձայուն։

Խաբեությանը վերջ տալու համար Արտ Փլայլին ձերբակալվեց, նրա բանկային հաշիվը անմիջապես բռնագրավվեց «Միրրի» կողմից, իսկ իրեն բանտ տարան։ Այստեղ նրան այցելեց «Նյուսի» գլխավոր խմբագիրը, և, բնականաբար, նոր գործարք կնքվեց։ Եթե Փլայլին իր խոստովանությունները վստահում է բացառապես «Նյուսին», «Նյուսը» վճարում է նրան վեց հազար դոլար։ Փլայլին խոստովանեց երեք օր շարունակ, որից հետո հանձնվեց ուղղիչ տուն, քանի որ խոստովանելիս բավական հանգամանալից էր գտնվել և այդպիսով ջրի երես հանել մի շարք նախկին իր ճարպկությունները։ Նա ասաց, որ միշտ ուզեցել է հռչակ ձեռք բերել, և այժմ, երբ վերջապես այդ հռչակը ձեռք է բերում, իմաստ չունի կանգ առնել կես ճանապարհին։

Ջանձրալի կլիներ խորանալ նրա խոստովանությունների մեջ։ Մարդն ուզում էր հռչակվել՝ ահա և բոլորը։

Ռուշի, Ռուբելինգի և Ռուանի թաղման բյուրոյի տակ գտնվելու իններորդ օրը Թրեյսիի վագրը բոլորովին վատ զգաց իրեն։ Այդ գիշեր, հուսահատ, դողէրոցքով բռնված, նա դուրս սողաց իր թաքստոցից և շարժվեց դեպի աղբարկղը, որտեղ գտավ ոսկորներ, մսի ու տարբեր բանջարեղենների մնացորդներ։ Թափթփուկների մեծ մասը նա կամաց-կամաց կրեց իր թաքստոցը։

Մի փոքրիկ տղա, որ գիշերվա երկուսին արթնացել էր հազից ու սպասում էր, մինչև մայրը դեղ կբերի, ասաց մորը, երբ նա հետ եկավ դ՝ողը ձեռքին.

— Մամ, մի տես աղբարկղի մոտ ի՞նչ մեծ կատու է կանգնած։

Մայրիկը նայեց ու արթնացրեց հայրիկին։

Հայրիկը հրացան չուներ, բայց ֆոտոսիրող էր և լուսանկարչական աչարատ ուներ։

Հայրիկը երեք րոպե նստեց պատուհանի առաջ՝ սպասելով, որ վագրը վերադառնա աղբարկղի մոտ։ Բայց երբ վագրը վերադարձավ, հայրիկի դողը բռնեց, և նա ոչ մի կերպ չէր կարողանում ապարատը գործի դնել։

Մայրիկը բարկացած վերցրեց ապարատը նրա ձեռքից ու պարզեց ութամյա տղային։ Տղան որքան կարող էր ֆոկուսի բերեց ապարատը,

չրխկացրեց, և վագրը, լույսը տեսնելուն պես, վեր ցատկեց ու փախավ իր թաքստոցը։

Հայրիկը հագավ շորերը և մութ սենյակում երևակեց նկարը։ Նկարի վրա պատկերված էր վագրի հետույքը։ Հայրիկը Թրեյսիի վագրի հետույքի նկարով գնաց ոստիկանատուն։ Այնտեղ նրան մի ժամ հարցաքննեցին, իսկ առավոտյան կողմ ժամը չորսին հիվանդ վագրը ձայներ լսեց և լույսեր նկատեց։ Նա երկար ժամանակ նայում էր ու ականջ դնում։

Երբ ամեն ինչ խաղաղվեց, վագրը իր թաքստոցից դուրս եկավ քաղաք։

Լուսանկարը և այն ստանալու պատմությունը տպագրվեցին թերթերում հիվանդ տղայի լուսանկարի հետ միասին։ Այդ ամենից հետո տղան ավելի վատացավ։

Նյու Յորքի այն շրջանը, որտեղ ապրում էր տղան, գծագրվեց հատուկ քարտեզագիրների կողմից, և ենթադրություններ էին արվում, թե արդյոք վագրը որտե՞ղ կարող էր թաքնված լինել։

ԳԼՈՒԽ 12

Թրեյսիի հետ Բելվյուում ունեցած մի քանի խաղաղ զրույցներից հետո ոստիկանության կապիտան էրլ Հուզինգան որոշեց ուղղակի գնալ ոստիկանության պետ Բլայի մոտ և ասել նրան իր կարծիքը, անդամ եթե դրա հետևանքով կորցնի աշխատանքը։

— Նա կարող է վագրին գտնել,— ասաց կապիտան Հուզինգան։

— Ինչպե՞ս,— ասաց ոստիկանության պետ Բլայը։

— Դա բարդ է թվում,— ասաց Հուզինգան,— բայց մենք երկար զրուցել ենք նրա հետ և ես գիտեմ, որ այդտեղ ոչ մի բարդ բան չկա։ Նա կարող է այդ անել։

— Ինչպե՞ս,— նորից ասաց Բլայը։

— Նախ և առաջ, —ասաց Հուզինգան,— նա չի ուզում, որ որևէ մեկը իմանա այդ մասին։ Ոչ մի տեղ չգրվի, չնշվի։

— Պարզ է,— ասաց պետը,— գաղտնի կպահենք։

Այս գործը արդեն ձանձրացրել ու հոգնեցրել էր նրան, ու նա սկսել էր իր վաթսունվեց տարիներից ավելի ծեր զգալ իրեն։

— Ուորեն-սթրիթի վրա մի շենք կա, որտեղ առաջ տեղավորված էր Օտտո Զեյֆանգի սուրճի ներմուծման ֆիրման,— ասաց Հուզինգան,— շենքը հիմա էլ նույնությամբ կա, բայց օգտագործվում է այլ նպատակներով։ Այն հիմա ապրանքատուն է։ Թրեյսին ուզում է «Օտտո Զեյֆանգի ֆիրմա» հին ցուցանակի նման մի ցուցանակ սարքվի ու կախվի իր նախկին տեղը։ Հետո ուզում է, որ համտեսման բաժինը վերականգնվի և որ Փիբբրդի, Ռինգերտ ու Շիվլի անուններով մարդիկ նստեն այնտեղ ու սուրճ համտեսեն։ Փիբբրդին ապրում է վարձու սենյակում։ Ռինգերտը Բելվյուում է։ Շիվլին աղջկա հետ ապրում է Բրոնքսում։

— Նրա ինչի՞ն է այդ ամբողջ անմտությունը,— ասաց Բլայը։

— Գիտեմ, որ այս ամենը թվում է անմիտ,— ասաց Հուզինգան,— բայց գիտեմ նաև, որ նա կգտնի վագրին։ Նրան հարկավոր է միայն մեկ օր, և այդ օրը պետք է կիրակի լինի։ Կիրակին հարմար է, որովհետև կիրակի օրը, հատկապես ցերեկով, Ուորեն-սթրիթում մարդ չես գտնի, բացի մի երկու հարբածից։

— այնքան երկար մնացիր Բելվյուում,— ասաց ոստիկանության պետ Բլայը,— որ ինքդ էլ մի քիչ խախտվել ես, բայց, ինչևէ, շարունակիր, ասելիքդ ասա։

— Նա ուզում է, որ պահեստում ամենաքիչը մի հարյուր պարկ սուրճ լինի,— ասաց Հուզինգան։

— Ինչի՞ համար։

— Ժամանակին նա աշխատել է այնտեղ,— ասաց Հուզինգան։— Կիրակի օրը նա այնտեղ կգա առավոտյան ժամը ութին և կսկսի պարկերը կրել։ Փիբբրդին, Ռինգերտը և Շիվլին կլինեն համտեսման բաժնում՝ սուրճ համտեսելիս։ Ժամանակ առ ժամանակ Թրեյսին պարկերը կթողնի և կմիանա նրանց՝ սուրճ համտեսելու։ Կեսօրին նա կընդհատի աշխատանքը, դուրս կգա ու կկանգնի մուտքի մոտ, արևին։ Ուղիղ տասներկուսն անց կես Ուորեն-սթրիթում կհայտնվի Լորա Լյութի անունով մի աղջիկ։ Նա կանգ կառնի Օտտո Զեյֆանգի գրասենյակի առջև։

— Մի՞թե,— ասաց Բլայը։

— Այո,— ասաց Հուզինգան։

— Է, լավ, հետո՞ ինչ,— ասաց Բլայը։

— Նույն վայրկյանին կհայտնվի նաև Թրեյսիի վագրը,— ասաց Հուզինգան։— Թրեյսին թևանցուկ կանի աղջկան, և նրանք միասին կքայլեն Ուորեն-սթրիթով։ Օտտո Զեյֆանգի ֆիրմայից երեք մուտքի վրա կա մի դատարկ պահեստ։ Թրեյսին աղջկա ու վագրի հետ կմտնի այն-

տեղ։ Պահեստի ներսում վանդակ կլինի։ Վագրը կմտնի այդ վանդակի մեջ։ Թրեյսին կփակի վանդակը։ Հետո նրանք աղջկա հետ դուրս կգան պահեստից։

— Հետո դո՞ւրս կգան։

— Այո։

— Շարունակիր,— ասաց ոստիկանության պետ Բլայը,— էլ ի՞նչ կատես։

— Երկու բան պետք է խոստանանք նրան,— ասաց Հուզինգան։— Առաջինը՝ ո՛չ մի խոսք այս մասին։ Ո՛չ մի լուսանկար, նույնիսկ մեր արձանագրության համար։ Դուք և ես կարող ենք դիտել դիմացի շենքից։ Երկրորդ՝ վանդակի միջի վագրը մեր ձեռքն է անցնում, բայց մենք պետք է խոստանանք, որ այդ մասին ոչ ոք չի իմանա։ Եթե վագրը հիվանդ է, մենք պետք է որակյալ բժշկական օգնություն ապահովենք նրա համար, հատուկ ուշադրություն դարձնելով վիրավոր ոտքին։ Առջևի աջ ոտքն է...

— Եվ դու հավատո՞ւմ ես այդ խելառին,— ասաց ոստիկանության պետ Բլայը։

— Այո, սըր։

— Ինչո՞ւ։

— Սրանից տասը օր առաջ դուք ինձ հանձնարարեցիք այս գործը,— ասաց Հուզինգան,— և այդ ամբողջ ժամանակը ես անց եմ կացրել Թրեյսիի հետ։ Այն, ինչ գրում էին թերթերում Լորա Լյութիի մասին, սուտ չէ։ Բժիշկներն ասում էին, որ աղջիկը մեռնում է, և բավական է տեսնեիք նրան, կհամոզվեիք, որ այդպես էլ կա։ Բայց այժմ նա այլևս չի մեռնում։ Պինգիցերն ամեն օր այնտեղ է, զրուցում է նրանց երկուսի հետ, ուզում է հասկանալ, թե բանն ինչ է։ Նա ասում է, որ Բելվյուում գտնվողները բոլորն էլ ինչ-որ ժամանակ իրենց սերը կորցրած մարդիկ են։ Հիվանդանում են նրանք, որոնց համար սերը ամենագլխավորն է։ Նրանցից շատերը մեռնում են, ըստ որում բավական արագ։ Թրեյսին խելագար չէ։

— Իսկ ի՞նչ կասես դոկտոր Սքեթերի և մյուս մասնագետների մասին, որոնք նրան խելագար են համարում,— ասաց ոստիկանության պետը։

— Չգիտեմ,— ասաց Հուզինգան,— նրանց եզրակացություններն էլ են խելքի մոտ թվում։ Ինչպես երևում է, կարելի է տարբեր կերպ մոտենալ նման բաներին։ Պինգիցերն ուսումնասիրում է Թրեյսիի մոտե-

ցումը։ Նա ասում է, որ միշտ էլ հավատացել է այդպիսի մոտեցմանը, մանավանդ, երբ այն կիրառվում է ժամանակին, բայց երբեք չէր տեսել, որ այդ մոտեցումը արդյունք տար այնպիսի մի ծայրաստիճան վիճակում, ինչպիսին Լորա Լյութիի վիճակն էր։ Նա ասում է, որ մարդկանց հետ պետք է լինել համբերատար, պատրաստ սովորելու, որովհետև ամեն բան հնարավոր է, հատկապես երբ հարցը վերաբերում է սիրուն։ Իսկ եթե ասեմ, որ Բելվյուում ծիծաղում են, երևի չհավատաք։

— Ոչ, չեմ հավատա. կամ էլ կմտածեմ, որ դա անառողջ ծիծաղ է,— ասաց Բլայը։

— Դե ուրեմն իմացեք, որ ծիծաղում են և այն էլ ինչպիսի՜ առողջ ծիծաղով,— ասաց Հուզինգան։— Սքետերը և մյուսները տարակուսանքի մեջ են։ Նրանք փորձում են վերջ տալ դրան։ Ամեն օր նոր կանոններ են մտցնում, բայց, միևնույն է, ոչինչ անել չեն կարող։ Նրանք դժգոհ են, որովհետև հիվանդներն իրենց այնպես չեն պահում, ինչպես հարկն է՝ մահճակալներից վեր են կենում, այցելում միմյանց, օգնում իրար, պատմություններ պատմում, պարում, երգում,— այս ամենն անում են ոչ թե խելագարների պես, այլ միանգամայն բնականորեն, քաղաքավարի ու պատշաճ։ Նրանցից շատերը անշուշտ տխուր են, բայց ոչ մյուս մարդկանցից ավելի։— Հուզինգան մի պահ դադար տվեց։— Թրեյսին անպայման կգտնի վագրին։ Իսկ երբ դա կատարվի, մենք գոնե կիմանանք մեր անելիքը, թեկուզև ոչ ոքի ոչինչ չհայտնենք այդ մասին։ Այսպես թե այնպես, մի երկու շաբաթից այս ամբողջ պատմությունը կմոռացվի։ Հը՛, ի՞նչ կասեք։

— Ոչ,— ասաց ոստիկանության պետը,— դա հիմարություն է։ Կատարածվի քաղաքով մեկ։ Ամբողջ Նյու Յորքը կծիծաղի ինձ վրա։

— Այսօր չորեքշաբթի է,— ասաց Հուզինգան,— չորս օրից ամեն ինչ պարզ կլինի։ Թույլ տվեք այս գործը ինձ վրա վերցնեմ։ Եթե ձախողվի, պատասխանատուն ես եմ։ Կասեմ, որ գաղափարը իմն է եղել։ Ամեն ինչ ինքս եմ արել։ Պինգիցերն ինձ հետ է։ Նա էլ է ուզում ներկա գտնվել։

Պետը երկար մտածեց այս ամենի մասին։

— Օ քեյ,— ասաց նա վերջապես,— օ քեյ, ես համաձայն եմ։

— Բայց մենք պետք է պահենք մեր խոստումը,— ասաց Հուզինգան։

— Օ քեյ,— ասաց ոստիկանության պետը,— գործի անցիր։

Եվ կապիտանը, ուրախ վստահ, բայց և միաժամանակ վախը սրտում, գործի անցավ։

ԳԼՈՒԽ 13

Մի պայծառ կիրակնօրյա առավոտ Թրեյսին, բարձրանալով մետրոյի աստիճաններով, դուրս եկավ արևերես։

Նա կանգ առավ՝ արևի շողերով լուսավորված, և աչք ածեց շուրջը, ինչպես վեց տարի առաջ։ Շուրջը քիչ բան էր փոխվել։

Բաուլինգ Գրին Պարկի միջով նա դուրս եկավ Ուորեն-սթրիթ և, նայելով իր ժամացույցին, շտապեց ինչպես առաջներում, որովհետև ժամացույցը ցույց էր տալիս ութից հինգ պակաս։

Ուորեն-սթրիթը ամայի էր։ Կիրակնօրյա շատ ու շատ փողոցների նման նա էլ այնպիսի տեսք ուներ, ինչպես լինում է երազում։

Թրեյսին տեսավ Օտտո Զեյֆանգի ֆիրման առաջվա իր տեղում։ Նա շտապեց դեպի մուտքը և ներս մտավ։ Դիմացի շենքից նրան հետևում էին կապիտան Հուզինգան և ոստիկանության պետ Բլայը։ Դրանից առաջ նրանք տեսել էին, թե ինչպես ներս մտան Փիբբրդին, Ռինդերտը և Շիվլին։

— Դե,— ասաց ոստիկանության պետ Բլայը,— չգիտեմ, թե դուք ինչ կարծիքի եք, բայց իմ կարծիքով Թրեյսին ավելի ցնդած է, քան որևէ մեկի մտքով կարող էր անցնել ու կանցնի։ Ի՞նչ կասեք։

— Դեռ վաղ է այդ մասին դատելը,— ասաց Հուզինգան։— Ինձ հայտնի է, որ ժամը տասներկուսն անց կես Ուորեն-սթրիթում կերևա Լորա Լյուիին, ինչպես վեց տարի առաջ։

— Շատ լավ,— ասաց ոստիկանության պետ Բլայը,— ուրեմն, այդ աշխատանքը, որով Թրեյսին այնտեղ զբաղվելու է, պիտի վագրին դուրս հանի իր թաքստոցից ու բերի «Օտտո Զեյֆանգի» մոտ, այդպե՞ս է։

— Այո։

Ոստիկանական ռադիոն ընդհատեց նրանց։ Հայտնվեց, որ ամեն ինչ հանգիստ է։

— Մի անգամ էլ կրկնենք,— ասաց ոստիկանության պետ Բլայը։— Աղջիկը հագած կլինի դեղին գործած շոր, այո՞։

— Այո,— ասաց Հուզինգան։

— Երևալու է ժամը տասներկուսն անց կեսին, այո՞։

— Այո։

— Թրեյսին կանգնած կլինի մուտքի մոտ, այո՞։

— Այո։

— Թրեյսիին տեսնելուն պես աղջիկը կանգ կառնի, այո՞։

— Այո։

— Հենց այդ պահին էլ կհայտնվի վագրը, այո՞։

— Այո։

— Թրեյսին թևանցուկ կանի աղջկան ու նրա հետ կքայլի Ուորեն-սթրիթով, վագրն էլ Թրեյսիի կողքից, այո՞։

— Այո։

— Երեք մուտք հետո, դատարկ պահեստում, ուր հիմա բոլոր պատերին կենդանիների նկարներ են կախված, դրված կլինի վանդակ, այո՞։

— Այո։

— Նկարներ ո՞րտեղից ճարեցիք,— ասաց Բլայը։

— «Ռեյմոնդ և Ռեյմոնդի» մոտից,— ասաց Հուզինգան։— Կենդանիներ պատկերող աշխարհի ամենահռչակավոր կտավների վերարտադրություններն են։

— Վագրը կմտնի վանդակի մեջ, իսկ Թրեյսին կփակի այն, այո՞,— ասաց ոստիկանության պետը։

— Այո,— ասաց Հուզինգան։

— Պահեստի վերնամասում թաքնված կլինեն մեր մարդկանցից երկու հոգի՝ Սփլայսերը և Սլուն, որոնք հետո մեզ կզեկուցեն, թե ինչ տեսան, այո՞։

— Այո։ Նրանք արդեն այնտեղ են։

— Կապվեք նրանց հետ։

Հուզինգան կապվեց և նրան պատասխանեց Սլուն։ Հուզինգան և Սլուն մի քանի խոսք փոխանակեցին։

— Նրանք պատրաստ են,— ասաց Հուզինգան։

— Ի՞նչ էր, որ արգելեցիր նրան,— ասաց ոստիկանության պետ Բլայը։

— Նա հարցրեց, թե կարո՞ղ է մի քանի լուսանկար հանել,— ասաց Հուզինգան։— Նա չգիտի, թե ինչ է տեսնելու, բայց ապարատը հետն է վերցրել։

— Իսկ գուցե վատ չէ՞ր լինի, եթե նա մի քանի լուսանկար հաներ,— ասաց ոստիկանության պետը։

— Մենք խոստացել ենք այդպիսի բան չանել,— ասաց Հուզինգան։

— Մենք ոստիկանություն ենք,— ասաց ոստիկանության պետ Բլայը։— Հետո ի՞նչ, թե խոստացել ենք։

— Բայց և այնպես, կարծում եմ, չարժե լուսանկարներ հանել,— ասաց Հուզինգան։

— Օ քեյ,— ասաց ոստիկանության պետը։— Եթե մենք բոլորս չենք ցնդել, և նա իսկապես վագրին կմտցնի վանդակ, ապա ուրեմն դրանից հետո նա դուրս կգա պահեստից աղջկա հետ, և նրանք երկուսով կգնան Ուորեն-սթրիթով, այո՞։

— Այո։

— Ո՞ւր են գնալու,— ասաց Բլայը։

— Մեր գործը չի,— ասաց Հուզինգան։— Երևի, զբոսնելու։

— Հենց որ նրանք պահեստից դուրս եկան, մենք ուղղվում ենք այնտեղ՝ Սփլայսերի ու Սլուի ղեկույցն ընդունելու, այո՞։

— Այո։

— Պահեստի հետևում կանգնած կլինի ավտոֆուրգոնը,— ասաց ոստիկանության պետը։— Վագրը վանդակով կփոխադրվի նրա մեջ։ Առաջին իսկ հնարավորության դեպքում վագրը կքննվի, կստանա բժշկական օգնություն, որից հետո ազատ կարձակվի այնտեղ, որտեղ նա չի կարող ոչ ոքի վնասել, այո՞։

— Այո։

— Իսկ դա որտե՞ղ կլինի,— ասաց Բլայը։

— Կենդանու վարժեցնողը վկայել է, որ վագրը ծնվել է գերության մեջ,— ասաց Հուզինգան։— Ծննդյան վայրն է Մեդիսոն Սքվեր Գարդենը։ Թրեյսին խնդրել է, որ վագրը ազատ արձակվի մոտակա լեռներում։

— Ո՞վ ասաց, թե վագրը ապահով կլինի այնտեղ,— ասաց ոստիկանության պետը։

— Մոտակա վայրի լեռներում,— ասաց Հուզինգան,— որտեղ մարդ չի ապրում։

— Ես մարդկանց մասին չէ, որ մտածում եմ,— ասաց Բլայը,— ես մտածում եմ վագրի մասին։ Նա ո՞նց է այնտեղ ապրելու։ Դեմ կառնի որևէ որսորդի և վերջ։

— Դա արդեն բախտի բան է,— ասաց Հուզինգան։

— Թող այդպես լինի, եթե, իհարկե, ամեն ինչ ընթանա քո պատկերացումով,— ասաց ոստիկանության պետը։ Իսկ ի՞նչ ենք անելու, եթե վագրը չհայտնվի։

Կրտսերը նայեց ավագին ու ասաց.

— Դուք ստիպված կլինեք ինձ ազատել աշխատանքից, ուստի ես ինքս հրաժարական կտամ։

— Այս մասին ոչ ոք չգիտի, չէ՞,— ասաց Բլայը։

— Միայն ես և դուք,— ասաց Հուզինգան,— բայց եթե ձախողվի, ես հրաժարական կտամ։

— Իսկ ի՞նչ կպատահի Թրեյսիին և աղջկան, եթե ձախողվի։

— Ես խոստացել եմ դոկտոր Սքեթերին երկուսին էլ հետ վերադարձնել Բելվյու,— ասաց Հուզինգան։

— Դոկտոր Սքեթերը գիտե՞ այս ամենի մասին։

— Ոչ, նրա համար ես բոլորովին ուրիշ բան հնարեցի,— ասաց

Հուզինգան։— Պինգիցերը գիտի։ Այսինքն գիտի, որ Լորա Լյուիթին հանդիպելու է Թրեյսիին ժամը տասներկուսն անց կես, «Օտտո Ջեյֆանզի» մոտ։ Ուրիշ ոչինչ չգիտի։

— Հիմա նա որտե՞ղ է,— ասաց Բլայը։

— Թրեյսին խնդրեց, որ Պինգիցերն էլ նստի համտեսման բաժնում,— ասաց Հուզինգան,— ես տեսա նրան ներս մտնելիս ձեր գալուց մի քանի րոպե առաջ։

— Ի՞նչ է անում այնտեղ,— ասաց Բլայը։

— Թրեյսին ցանկացավ, որ նա էլ ներկա լինի։

— Թրեյսին գիտի՞, որ եթե ամեն ինչ ձախողվի, ինքն ու աղջիկը վերադառնալու են Բելվյու։

— Ոչ,— ասաց Հուզինգան,— հենց դա էլ ինձ անհանգստացնում է։ Ես թաքցրի նրանից։ Կարծում եմ, որ այդպես ավելի լավ կլինի։ Չնայած ինձ վատ եմ զգում այդ մտքից։

Ութն անց կեսին ռադիոյով նորից ասացին, որ ամեն ինչ խաղաղ է։ Ոստիկանության պետը կապվեց իր քարտուղարուհու հետ։

— Երկրորդ անգամ է՝ հայտնում են, որ ամեն ինչ խաղաղ է,— ասաց նա։— Ես ուզում եմ ճիշտն իմանալ, ինչ էլ որ եղած լինի։ Զանգեք ինձ։

Քարտուղարուհին զանգեց.

— Ոստիկանության բոլոր տեղամասերից հայտնում են, որ ոչ մի տեղ ոչինչ չի պատահել։

— Դուք համոզվա՞ծ եք։

— Այո, սըր։

— Նման բան երբևէ եղե՞լ էր,— ասաց ոստիկանության պետը։— Մի ամբողջ ժամվա ընթացքում Նյու Յորքում ոչինչ չպատահի։

— Որքան ես հիշում եմ, չէր եղել,— ասաց քարտուղարուհին։

— Դե,— ասաց Բլայը Հուզինգային,— իսկապես բան է պատահել։ Մի ամբողջ ժամ Նյու Յորքում ոչ մի դեպք, ոչ մի հարբած, ոչ ընտանեկան կռիվ, ոչ մանր գողություն, ամենուրեք անդորր ու հանգիստ։ Այ քեզ բա՜ն։

ԳԼՈՒԽ 14

Թրեյսին անցավ իր նախկին աշխատանքին՝ բարձրացրեց սուրճով լի պարկը, դրեց ուսին, տարավ հիսուն յարդ և իջեցրեց, բայց ոչ նախկին թեթևությամբ։

Հետո մի պարկ էլ բերեց հասցրեց համտեսման բաժնի մոտ, հետո՝ ևս մեկը։ Ամեն անգամ պարկը ցած դնելուց հետո նա ուղում էր ներս մտնել ու սուրճ համտեսել Փիբբրդիի, Ռինգերտի, Շիվլիի և Պինգիցերի հետ, որովհետև լսում էր, թե նրանք ինչպես են խոսում, չնայած չէր կարող հասկանալ, թե ինչի մասին են խոսում։ Սակայն նա գիտեր, որ չարժե ներս գնալ, քանի դեռ ինքն իր գործը թեթևությամբ չի անում, քանի դեռ չի սկսել բավականություն ստանալ դրանից։

Յուրաքանչյուր պարկից հետո նա իրեն հոգնած էր զգում։ Ուսը ճնշող ծանրությունը թվում էր ահռելի։ Ոտքերը մի քանի անգամ ծալվելու վրա էին, չէր հասկանում, թե սա ինչ է. ընդամենը վեց տարի առաջ հանաքի պես էր անում այս գործը։ Իսկ հիմա հազիվ շունչ է քաշում, և ամեն անգամ նոր պարկը վերցնելիս սիրտն սկսում է կատաղորեն բաբախել։

Վերջապես նա կանգ առավ ծայրի պատուհանի մոտ, որ շունչ քաշի, տնտղի դրությունը, մտիկ տա, թե շուրջը ինչ կա։

Դե ինչ, ամեն բան էլի նույնն էր. ասֆալտ, հին աղյուսներ ու քարեր, ներկը թափած տախտակներ, աղբի ամաններ ու ցիրուցան հնոտիք, մի հին ու համառ ծառ, տեղ-տեղ մոլախոտ, բակի հակադիր շինության ցածրիկ, աղյուսե կամար, որի աղյուսներից մի քանիսը թափվել են, երկուսը մինչև հիմա էլ ընկած են գետնին։

Ստիպված էր երկար հանգստանալ. նստել ու նայում էր այդ սիրտ կսկծացնող տեսարանին։ Մի ժամանակ այստեղ ամեն ինչ նոր էր, հույս ներշնչող, լուսավոր։ Բայց այժմ այդ ամենը խղճուկ տեսք ուներ։

Եվ սակայն հաջորդ պարկը տեղ հասցնելուց հետո նա մեծ ցանկություն զգաց նորից տեսնելու այդ ամենը, ինչպես սիրահարն է ձգտում տեսնել իր սիրածին, որը հիվանդ պառկած է անկողնում։

Հինգերորդ պարկը փոխադրելուց հետո, երբ աչքը նորից գցեց պատուհանից դուրս, այդ ամենի մեջ արդեն գեղեցկություն նկատեց, և հաջորդ պարկը եղավ առաջինը, որ նա բարձրացրեց առանց տնքոցի։ Այդ պարկը տարավ հեշտությամբ, իսկ երբ ցած դրեց, ականջին հասավ Պինգիցերի և մյուսների ծիծաղը։

Երբ նորից դուրս նայեց պատուհանից, ծառը նրան գեղեցիկ երևաց։ Նա ժպտաց այն մտքից, թե քանի տարի է այդ ծառը կանգնած այդտեղ։ Անկասկած՝ վեցից ավելի, չէ որ այն ժամանակ էլ կար։ Տերևները կանաչ չէին միայն այն պատճառով, որ քաղաքը ծածկել էր դրանք իր փոշով։ Նա չէր մեծացել, որովհետև արմատների համար հող չուներ և ճյուղերի համար՝ տարածություն, բայց որքան որ աճել՝ աճել էր ու դարձել ծառ։ Ամենայն հավանականությամբ նրա համբերությունը ժա-

մանակ առ ժամանակ վարձատրվում էր որևէ թռչնակի հայտնությամբ, որը ողջունում էր նրան ու թռչում գնում կամ գուցեև մնում էր ու բույն հյուսում։ Ծառը այն ժամանակ էլ կար, ոչ մի կասկած։ Վաղուցվա ծառ է ու հիմա էլ կա՝ բունը կոշտացած, տեղ-տեղ ծեծված, վիրավոր, բայց չնայած դրան տակավին ամուր։

Գնալով պարկերը բարձրացնելն ու համտեսման բաժնի մոտ տանելը ավելի ու ավելի էր հեշտանում։ Իններորդը բարձրացրեց փետուրի պես։

Ժամը մոտավորապես իններն, չնայած մինչև տասներկուսը դեռ շատ գործ կար անելու, Թրեյսին մտավ համտեսման բաժին։

Համտեսողները նստած էին կլոր սեղանի շուրջը, ամեն մեկի առջև՝ մի-մի արծաթե սրճաման, ու Պինգիցերն էլ սպասում էր, որ իր սուրճը նստվածքը տա, զտվի։

— Ահ-հա՛,— ասաց Պինգիցերը,— իսկը ժամանակն է։ Խնդրեմ, սուրճ, իմ առաջարկը, Վիեննայից բերած, վաղուց, շատ վաղուց։

Նա մի գավաթ սուրճ լցրեց Թրեյսիի համար, Թրեյսին վերցրեց գավաթը ու սկսեց համտեսել։ Մի կում արավ, դադար տվեց, հետո նորից համտեսեց։

— Լավն է,— ասաց նա։

— Իմ առաջարկը,— ասաց Պինգիցերը,— Վիեննա։

Թրեյսին լսում էր նրանց խոսակցությունը սենյակը չափչփելով, ինչպես վեց տարի առաջ։ Երբ գավաթը դատարկվեց, պարզեց այն Շիվլիին, և սա լցրեց իր սրճամանից։ Շիվլիի սուրճն էլ էր լավը։

— Դե, ես գնամ իմ գործին,— ասաց Թրեյսին,— դեռ ահագին բան ունեմ անելու։

— Ահ-հա՛,— ասաց Պինգիցերը։— Ջահելություն։ Ջահելության պատրանք։ Գեղեցիկ պատրանք։ Կար ժամանակ Վիեննայում Պինգիցերն էլ ուներ ջահելություն, պատրանք։ Հիանալի ժամանակ, հիանալի ջահելություն, հիանալի պատրանքներ։ Ահ-հա՛։ Հիմա Պինգիցերը յոթանասուներկու տարեկան է, չի ուզում աշխատել, չի ուզում գեղեցիկ պատրանքներ ունենալ։

— Մի քիչ հետո էլի կգամ,— ասաց Թրեյսին։

Նա գնաց ուղիղ դեպի պատուհանը՝ նորից բակը տեսնելու։ Մտածելու շատ բան ուներ, բայց ինչքան ուշ սկսեր մտածել, այնքան լավ, միայն թե ոչ ավելի ուշ, քան մոտակա մեկ-երկու ժամին։ Ժամանակը միշտ էլ հիացրել էր նրան։ Նա գիտեր, որ չի հասկանում այն, բայց գիտեր նաև, որ այն ամենը, ինչ տրվում է քեզ, այն ամենը, ինչ արժեք ունի,— ուղածդ միտքը, ուղածդ ճշմարտությունը,— տրվում է մեկեն։

Եթե կուզես, կարող ես անվերջ սպասել ու սպասել, բայց և կարող ես շարժվել՝ շարժվել դեպի ժամանակի խորքը ժամանակի հետ միասին, տքնել հայտնվելիք մտքի վրա, և հետո հանկարծ շնորհիվ այն բանի, որ տքնել ես մտքի վրա, նա ինքը գալիս հայտնվում է քեզ՝ լիովին, մեկեն, պարզ ու հստակ։

Բայց դու պիտի դանդաղեցնես քո ներքին շարժումը, որպեսզի նորի համար տեղ բացվի։ Դու պիտի ընթացքդ արագացնես և միաժամանակ գրեթե անշարժ մնաս։

Շատ բան ուներ Թրեյսին մտածելու, շատ բան ուներ անելու, իսկ անելիքը սկսվում էր աշխատանքից։ Այն ամենը, ինչ պիտի արվեր,— իսկ անելիքը մեծ էր,— անհրաժեշտ էր սկսել հասարակ աշխատանքից՝ սուրճի պարկեր կրելուց։

Թրեյսին մի պահ կանգ առավ, ժպիտը դեմքին նայելով պատուհանի հետևի թշվառ, բայց և գեղեցիկ տեսարանին ու պատկերացնելով գործի վիթխարությունը, անշտապ, առանց գործի ընթացքն արագացնելու, մտքովն անցկացրեց դրա հետ կապված ամեն մանրուք, հայացքը չկտրելով դիմացի հին շինության ցածրիկ կամարից։

Եվս մի հինգ-վեց պարկ փոխադրեց, նախքան նորից կանգ կառներ պատուհանի մոտ, և այս անգամ միայն մի կարճ հայացք գցեց, քանի որ աշխատանքից արդեն հաճույք էր ստանում և ուզում էր շարունակել այն։ Բայց այդ կարճ պահին նա կարծես ինչ-որ բան տեսավ։ Արդեն հաջորդ պարկն էր տանում, երբ ինքն իրեն հարց տվեց, թե արդյոք ի՞նչ էր, որ նա տեսավ։ Տեսա՞վ, թե պարզապես աչքին երևաց մի հեռավոր պատրանք՝ հնարավորություններով այնքան հարուստ ժամանակներից։

Նա որոշեց, որ ևս մի հինգ-վեց պարկ կտեղափոխի և հետո միայն դադար կտա։ Այս անգամ նա կգնա դեպի հետևի դուռը, բաց կանի, դուրս կգա արտասանդուղք ու այնտեղից կնայի։

Երբ նա ելավ արտասանդուղք ու աչք ածեց բակը, նրան թվաց, թե այդ բանը նորից տեսավ ու սիրտը հրճվանքով լցվեց։ Ինչ էլ որ դա լիներ՝ այստեղ էր, կար։ Իր կողքին էր։ Ինչ-որ տեղ իր կողքին։ Կասկած լինել չէր կարող։

Նա վերադարձավ իր աշխատանքին, տեղափոխեց ևս երեք պարկ։ Հետո կանգնեց պատուհանի մոտ՝ մեջքով դեպի տեսարանը և ականջ դրեց։ Մի երեք րոպե այդպես կանգնած մնաց։ Բակը խաղաղ էր։ Թրեյսին կարծես ինչ-որ բան լսե՞ց, թե չլսեց ու քանի որ հաստատ համոզված չէր, որոշեց, որ չի լսել, ու նորից գործի անցավ։ Յուրաքանչյուր

պարկի հետևից վերադառնալիս մի պահ կանգ էր առնում ու ականջ դնում։ Էլի վեց պարկ փոխադրելուց ու վեց անգամ ականջ դնելուց հետո նա նստեց պարկի վրա. ոչ թե հանգստանալ էր ուզում, այլ ուզում էր տրվել իր սրտում ալիքվող երախտագիտությանը, մոտ ու մտերիմ լինել ամենին, ամենի էությանը, շուրջը եղած ամեն ինչին ուրախանալ, ժպտալ։

Երբ վերջնականապես համոզվեց, որ իսկապես լսում է այդ բառը, չզարմացավ։ Վեր չթռավ։ Ոչ էլ շրջվեց։ Պարզապես կամացուկ կրկնեց բառը։ Մի ակնթարթ հետո նորից լսեց այն, ապա դանդաղ-դանդաղ ոտքի ելավ, բարձրացրեց պարկը, գցեց ուսին ու քայլեց։

Երբ պարկը ցած դրեց ու շրջվեց, տեսավ վագրին։

Նրա տեսքը խղճալի էր, նույնիսկ այդքան հեռվից։ Նա նիհարած էր, հիվանդ, թույլ ու վիրավոր։ Թրեյսին վերադարձավ դեպի պարկերի դարսակը, խուսափելով վագրին նայել, բարձրացրեց մի նոր պարկ ու առաջ շարժվեց։ Իսկ այդ միջոցին վագրը բարձրացավ դարսակի ամենավերևը ու մեկնվեց այնտեղ՝ հանգստանալու ու դիտելու։

Թրեյսին ու վագրը խոսում էին իրար հետ այս անգամ առանց խոսքերի, նույնիսկ անձայն, և սակայն մեկը հասկանում էր մյուսին։

Սրընթաց միտքը հասել էր նշանակետին։

Երբ Թրեյսին վերջին պարկը փոխադրեց, ժամը արդեն տասներեքն անց էր քառորդ։ Սուրճ համտեսողները դուրս էին եկել համտեսման բաժնից ու գնացել երկրորդ նախաճաշի։ Վագրը կանգնեց Թրեյսիի կողքին, և նրանք միասին երկու սանդղաշար ներքև իջան ու հասան դռանը։ Փողոց տանող դուռը տեսնելով, վագրը վախեցավ ու հետ-հետ քաշվեց։ Թրեյսին մի պահ կանգնած մնաց վագրի կողքին՝ ոչինչ չասելով, ապա դուրս գնաց մենակ։ Դուրս գնաց ու կանգնեց մուտքի աստիճանների վրա, իսկ դուռը ճռռալով փակվեց նրա հետևից։

ԳԼՈՒԽ 15

Դիմացի շենքի երկրորդ հարկի սենյակից՝ կապիտան Հուզինգան և ոստիկանության պետ Բլայը նայում էին։

Համաձայն ծրագրի, Թոմաս Թրեյսին կանգնած էր «Օտտո Զեյֆանգի» մուտքի առաջ։

— Ժամը քանի՞սն է,— ասաց Բլայը։

— Տասներկուսն անց կես,— ասաց Հուզինգան։— Ինչ եք կարծում, դա կկատարվի՞։

— Ինչ-որ բան արդեն կատարվել է,— ասաց Բլայը։— Լսո՞ւմ էիր կես ժամը մեկ ռադիոյով հաղորդածը։

— Այո։

— Ոչ մի դեպք ամբողջ չորս ժամվա ընթացքում։

— Այո։ Եվ սակայն կարծում եք դա կկատարվի՞։

— Թեկուզև չկատարվի,— ասաց ոստիկանության պետը։— Նայիր նրան։ Նա խելագար չի՞։

— Խելագար է որ կա,— հանկարծակի ասաց Հուզինգան։— Այս ամբողջ գործն էլ տեղով մեկ խենթություն է։ Ես սխալվեցի։ Սխալ հասկացա։ Կախեցինք ցուցանակը՝ «Օտտո Զեյֆանգ»։ Օտտո Զեյֆանգը երեք տարի է արդեն, ինչ մեռած է։ Տունը հիմա ապրանքային պահեստ է, ոչ թե սուրճի ներմուծման ֆիրմա։ Այսօրն այսօր է, ոչ թե վեց տարի առաջ։ Նա իսկական խելագար է, մի խելագար էլ ես եմ, որ հավատացի, թե ինչ-որ մեկը կարող է վերադարձնել անցյալը, հաղթահարել այն, ինչից ի սկզբանե անտի խորտակվում են մարդկանց սրտերը։ Դա անհնար է։ Անհնար է, և վե՛րջ։ Ես խղճում եմ նրան։ Նա խենթ է։ Նա չգիտի այդ մասին, բայց ստիպված կլինի նորից վերադառնալ Բելվյու աղջկա հետ միասին։ Ես ցավում եմ, պետ, բայց ոչինչ էլ չի կատարվի։ Ես պատրաստ եմ հրաժարական տալու։ Ես ամբողջ սրտով հավատում էի, որ նա կանի այդ։ Խելագարություն էր հավատալը։

— Իսկ ի՞նչ կասես արդեն եղածի վերաբերյալ,— ասաց Բլայը։

— Պատահական զուգադիպություն,— ասաց Հուզինգան։— Եվ հետո, նման բան առաջներում էլ է եղել։ Ես մի առիթով ուսումնասիրում էի հին արձանագրությունները։ 1882 թվականի դեկտեմբեր ամսին եղել է յոթ ժամ, որոնց ընթացքում ոչ մի դեպք չի արձանագրվել։ 1896 թվականի մարտին՝ տասնմեկ ժամ, 1901 թվականի հուլիսին՝ հինգ, 1908 թվականի օգոստոսին՝ ինը։ Նման բաներ առաջներում էլ են եղել։

— Լավ, թող այդպես լինի,— ասաց ոստիկանության պետը,— բայց դու ի՞նչ գիտես, թե այդ նույն ժամանակ էլի ինչ-որ բան չի կատարվել, որի մասին ոչ ոք ոչինչ չի իմացել։ Ուրիշ մի բան, որ մնացել է անհայտ։

— Այսինքն, ձեր ասելով, ինչ-որ բան կկատարվի՞,— ասաց Հուզինգան։

— Իմ կարծիքով՝ ինչ-որ է՝ արդեն կատարվեց,— ասաց ոստիկանության պետ Բլայը։— Իմ կարծիքով, հարկավոր չէ նրանց հետ տանել Բելվյու։

— Ես խոստացել եմ դոկտոր Սքեթրրին,— ասաց Հուզինգան,— մի քանի րոպե հետո ես նրանց հետ կտանեմ ու հրաժարական կտամ։

— Կարիք չկա,— ասաց Բլայը։— Մենք կարող ենք փակել այս գործը։ Շատ անգամ ենք այդպես արել։ Կմնաս պաշտոնիդ։ Կաշխատես։ Ընդունենք, թե գործը ձախողվեց։ Ո՞ւմ պետքն է։

— Իմ,— ասաց Հուզինգան։

Եվ այդ պահին նրանք տեսան Լորա Լյութիին, որը գալիս էր Ուորեն-սթրիթով։

Նրանք տեսան, թե ինչպես Թրեյսին և Լորան հանդիպեցին։ Տեսան, թե ինչպես նրանք ժպտացին մեկմեկու։ Տեսան, թե նրանց շրթունքներն ինչպես են շարժվում։ Տեսան, թե Լորան ինչպես է աստիճաններով բարձրանում Թրեյսիի մոտ։ Տեսան, թե Թրեյսին ինչպես գրկեց նրան։ Տեսան, թե Լորան ինչպես փաթաթվեց Թրեյսիին։ Տեսան, թե ինչպես Թրեյսին մտավ Լորայի թևը, բայց նախքան գնալը հետ դառավ ու կիսաբացեց մուտքի դուռը։ Լրիվ չբացեց, պարզապես մի փոքր ճեղք արավ։

Ու նրանք տեսան, թե ինչպես Թրեյսիի վագրը դուրս եկավ ու կանգնեց Լորա Լյութիի կողքին։

Դա մի սև հովազ էր, որ կաղում էր առջևի աջ ոտքից։ Կաղությունը թե չլիներ, դա ամենազեղեցիկ հովազն էր, որ երբևէ որևէ մեկը տեսել էր։

Նրանք տեսան, թե ինչպես Թրեյսին, Լորա Լյութին և Թրեյսիի վագրը քայլեցին միասին Ուորեն-սթրիթով։ Տեսան, թե նրանք ինչպես մտան պահեստի շենքը, որի պատերին այժմ կախված էին կենդանիների պատկերներ։

Կարճ ժամանակ անց նրանք տեսան, թե ինչպես Թրեյսին ու Լորան դուրս եկան պահեստից և քայլեցին դեպի նավամատույց, որը գտնվում էր Ուորեն-սթրիթի վերջում։

Տեսան, որ վագրը այլևս նրանց հետ չի։

Բլայը և Հուզինգան ցած վազեցին, դուրս թռան փողոց, կտրեցինանցան այն ու մտան պահեստ։ Այնտեղ նրանց սպասում էին Սփլայսերն ու Սլուին կողք-կողքի կանգնած։

— Ձեզանից ո՞վ է Սլուն,— ասաց Բլայը։

— Ես եմ, սըր,— ասաց նրանցից մեկը։

— Շատ բարի,— ասաց Բլայը։— Մանրամասն պատմիր, թե ինչ տեսար։

— Ես տեսա, թե ինչպես մի երիտասարդ ու մի աղջիկ ներս մտան

այստեղ և նայեցին պատերին կախված բոլոր նկարները,— ասաց Սլուն,— հետո տեսա, թե ինչպես նրանք դուրս եկան։

— Ուրի՞շ,— ասաց Բլայը։

— Ուրիշ ոչինչ, սըր։

— Հիմա դու, Սփլայսեր,— ասաց Բլայը,— մանրամասն պատմիր, թե ի՞նչ տեսար։

— Ես տեսա նույնը, սըր,— ասաց Սփլայսերը։

— Համոզվա՞ծ եք։

— Այո, սըր։

— Վերադարձեք ձեր տեղամասերը,— ասաց Բլայը։

Երկու երիտասարդ ոստիկանները գնացին։

— Դե,— ասաց Բլայը Հուզինգային,— ի՞նչ կասես։

— Չգիտեմ,— ասաց Հուզինգան։— Դուք հո տեսա՞ք վագրին, չէ։

— Այո, ես տեսա վագրին,— ասաց Բլայը։

— Դուք դա հենց այնպես չեք ասում, չէ՞,— ասաց Հուզինգան,— դուք հո տեսաք, թե ինչպես նա բաց արեց դուռը, թե ինչպես վագրը դուրս եկավ ու կանգնեց աղջկա կողքին։

— Այո, ես տեսա այդ բոլորը,— ասաց Բլայը։

— Սփլայսերը և Սլուն չեն տեսել վագրին,— ասաց Հուզինգան։

— Ոչ, նրանք չեն տեսել,— ասաց Բլայը։

— Եվ հիմա վագրը չկա,— ասաց Հուզինգան։

— Այո, չկա,— ասաց Բլայը։

— Ի՞նչ եղավ վագրը,— ասաց Հուզինգան։

— Չգիտեմ,— ասաց պետը։

— Դե, իսկ հիմա,— ասաց Հուզինգան,— օրվա մնացած մասը ես կուզենայի հանգիստ անցկացնել, եթե դուք դեմ չեք։

— Դու գործդ վերջացրիր,— ասաց Բլայը։— Ի՞նչ ես մտադիր անել։ Կգնաս բեյսբո՞ل նայելու։

— Ոչ,— ասաց Հուզինգան,— մտադիր եմ կարճ ժամանակով մրտնել Սուրբ Պատրիկի եկեղեցին, իսկ հետո, երևի, տուն գնամ։ Կարոտել եմ կնոջս ու փոքրիկիս։

— Պարզ է,— ասաց ոստիկանության պետը։— Կարող ես գնալ։

Հուզինգան անցավ պահեստի միջով, մեկ առ մեկ դիտելով նկարները, հետո դուրս եկավ ու քայլեց դեպի Սուրբ Պատրիկի եկեղեցին։ Հիմա էլ Բլայը սկսեց նայել նկարները։ Բոլորը նայելուց հետո նա հետ

դարձավ՝ մի վերջին հայացք գցելու այն նկարին, որտեղ պատկերված էր անապատում քնած մի արաբ՝ գլխավերևում կանգնած առյուծի հետ միասին։

Հետո նա էլ դուրս եկավ պահեստից ու քայլերն ուղղեց դեպի Սուրբ Պատրիկի եկեղեցին։

Ահա և ամբողջ պատմությունը Թոմաս Թրեյսիի, Լորա Լյուիսի և վագրի, որը հենց ինքը սերն է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԻԵՍՆԵՐ

Իմ սիրտը լեռներում է (թարգմ. Խ. Դաշտենց) 6
Քո կյանքի ժամերը (թարգմ. Զ. Բոյաջյան) 43
Հեյ, ո՞վ կա (թարգմ. Զ. Բոյաջյան) 135
Սովյալները (թարգմ. Շ. Համամջյան) 151
Տարեկանի արտում (թարգմ. Զ. Բոյաջյանի) 162
Պինգ-պոնգ խաղացողները (թարգմ. Զ. Բոյաջյան) 174
Կոտորածն անմեղաց (թարգմ. Ա. Էմին) 182
Հերսոտած մի գնա (թարգմ. Ա. Էմին) 230

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Իմ անուշ փոքրիկ (թարգմ. Զ. Բոյաջյան) 308
Զեսափիքի ծոցում սպասող առագաստանավը (թարգմ. Զ. Բոյաջյան) 318
Այն հեռավոր գիշերը (թարգմ. Զ. Բոյաջյան) 322
Գողացած հեծանիվը (թարգմ. Շ. Մաթևոսյան) 324
Պատերազմ է հայտարարվել (թարգմ. Կ. Սուրենյան) 327
Կոլիբրին, որը դիմացավ ձմռանը (թարգմ. Մ. Մաքսապետյան) 332
Ջիմ Պատրոսի կռիվը մահվան հետ (թարգմ. Զ. Բոյաջյան) 336
Թրեյսիի վագրը։ Վիպակ (թարգմ. Խ. Հրաչյան, Լ. Բոյամյան) 342

Վիլյամ Սարոյան

Ընտիր երկեր

չորս հատորով

հատոր 2

Պիեսներ, պատմվածքներ

УИЛЬЯМ САРОЯН

Избранные сочинения

в четырех томах

Том 2

Пьесы, рассказы

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1987

Հրատ. խմբագիր՝ Ա. Ս. Հովսեփյան

Նկարիչ՝ Զ. Ե. Գասպարյան

Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան

Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան

Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ИБ № 5710

Հանձնված է շարվածքի 23. 04. 87 թ.։ Ստորագրված է տպագրության 13. 07. 87 թ.։ ՎՖ 00678։ Ֆորմատ 60×81 1/16, թուղթ տպագր. № 1։ Տառատեսակ՝ գրքի սովորական։ Տպագրություն՝ բարձր։ 23,25 պայմ. տպ. մամ., 20,4 հրատ. մամ.+1 ներդիր։ Տպաքանակ 50000։ Պատվեր՝ 1071։ Գինը 2 ռ. 40 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Терьяна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան-10, Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-10, Алавердяна, 65.